Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է բնակչության բժշկական պաշտպանվածության և առողջության պահպանման վիճակը և ներառում է կյանքի, առողջության, անձնական անձեռնմխելիության պաշտպանությունը, բնակչության պաշտպանությունը վարակիչ հիվանդություններից, անընդհատ բուժապահովումը, որակյալ անվճար բուժօգնության ցուցաբերումը, աշխատանքի, մոր և մանկան պաշտպանությունը, առողջ կենսակերպի քարոզումն ու տարածումը, քաղաքացիների մարմնական ու հոգեկան առողջության պահպանումը:

արտաքին անվտանգություն – внешняя безопасность – external security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է արտաքին համաչափ և անհամաչափ սպառնալիքներից պետության, հասարակության, ընտանիքի, անձի պաշտպանվածության վիճակը:

բազմերաշխիք անվտանգության համակարգ – система многогарантийной безопасности – system of multidimensional warranty security

բնապահպանական անվտանգության հայեցակարգ – концепция экологической безопасности – ecological security concept

բնապահպանական անվտանգություն – экологическая безопасность – ecological security, environmental safety

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է հասարակության և անձի բնակչության ու կենսագործու-

նության միջավայրի պաշտպանվածության վիճակը: Ներառում է վերահսկողությունը շրջակա միջավայրի (բնական ռեսուրսների, ջրի, մթնոլորտի, հողի, կենդանական ու բուսական աշխարհի) վիճակի նկատմամբ և այնպիսի միջոցների մշակումը, որոնցով բացառվեն մարդու և հասարակության բնականոն կենսագործունեությանն սպառնացող բնապահպանական ճգնաժամներն ու աղետները:

էթնիկական անվտանգություն – этническая безопасность – ethnic security

Հասարակական կյանքի վիճակ, կայունություն, երբ գոյություն չունեն էթնիկական խտրականություն, ազգային անհանդուրժողություն, իրավունքում որպես գերակայություն չի շեշտվում ազգային պատկանելությունը, և բոլոր ազգությունների նկատմամբ այն կիրառվում է անկողմնակալ և արդարացի կերպով՝ օրենքի տառին ու ոգուն համապատասխան:

էներգետիկ անվտանգություն – энергетическая безопасность – energy security

Տնտեսական անվտանգության կարևորագույն բաղադրիչ, որը բնութագրում է պետության պաշտպանվածությունը այլ պետությունների կողմից էներգակիրների մատակարարումը որպես քաղաքական, տնտեսական և/կամ այլ բնույթի ճնշում գործադրելու միջոց կիրառելու հնարավորությունից: Ներառում է համալիր միջոցներ հուսալի և կայուն էներգամատակարարման ապահովման նպատակով, այդ թվում՝ էներգակիրների տեսակների և դրանց մատակարարման ուղիների տարատեսակացում, իր ունեցած վերականգնվող էներգապաշարների առավելագույն չափով օգտագործում:

թռիչքների անվտանգություն – безопасность полетов – air safety, flight safety

Պայմաններ, որոնց դեպքում թռիչքի կատարմանը չի սպառնում թռիչքային պատահար (թռչող ապարատի լրիվ կամ մասնակի քանդվելը, անձնակազմի անդամների կամ ուղևորների զոհվելը (վիրավորվելը)):

ինժեներաֆիզիկական անվտանգություն – инженерная и физическая безопас-



ность, техническая и физическая безопасность – safety and security

կենսաբանական անվտանգություն – биологическая безопасность – biological security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է կենսաբանական վնասակար ազդեցություն ունեցող գործոնների (սննդամթերք, դեղորայք, սննդային և դիետային հավելումներ, վիրուսներ, բակտերիաներ, պրիոններ, ռադիոակտիվ ազդակներ և մահաբեր կամ առողջությունը քայքայող այլ գործոններ) ներազդումից պաշտպանվածության վիճակը: Ներառում է այդպիսի գործոնների ներազդումը նախականխող միջոցների համակարգը:

կիբեռանվտանգություն – տես *անվտանգություն*՝ *կիբեռնետիկական անվտանգություն*

կիբեռնետիկական անվտանգություն – кибернетическая безопасность, кибербезопасность – cybersecurity

Այն միջոցների, ռազմավարությունների, անվտանգության սկզբունքների, անվտանգության երաշխիքների, ղեկավար սկզբունքների, ռիսկերի կառավարման նկատմամբ մոտեցումների, գործողությունների, մասնագիտական պատրաստման, առաջավոր փորձի, վստահության և տեխնոլոգիաների հավաքածուն է, որոնք կարող են օգտագործվել կիբեռնիզավայրի և կազմակերպության ու օգտագործողի ռեսուրսների պաշտպանության նպատակով:

կոլլեկտիվ անվտանգություն – коллективная безопасность – collective security

Համաշխարհային կամ տարածաշրջանային մասշտաբով կամ որևէ միջպետական կազմակերպության շրջանակներում խաղաղության և անվտանգության պահպանման համակարգ, որն ապահովվում է մասնակից պետությունների համատեղ համաձայնեցված ջանքերով:

համայն հայության անվտանգություն – общеармянская безопасность – world-wide Armenians security

Հայրենիքում, ինչպես նաև այլ պետություններում բնակվող բոլոր հայերի միասնական անվտանգություն:

համընդհանուր անվտանգություն – глобальная безопасность – global security

Անվտանգության տեսակ, պաշտպանվածություն համաշխարհային մասշտաբի վտանգներից, որոնք սպառնում են մարդկության գոյությանը կամ կարող են հանգեցնել մոլորակի վրա կենսագործունեության պայմանների կտրուկ վատթարացման:

հոգևոր անվտանգություն – духовная безопасность – spiritual security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է հասարակության կենսակերտվածքի, պատմության և մշակույթի ավանդույթները, հասարակության բարոյաքաղաքական միասնության մակարդակն արտացոլող ազգային ինքնագիտակցության պաշտպանվածությունը, ինչպես նաև առանց ազգային ինքնությանը վնաս պատճառելու իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ և գաղափարներ ընդունելու ազգի կարողությունը:

ճառագայթային անվտանգություն – радиационная безопасность – radiation safety

միջազգային անվտանգության գործոն – фактор международной безопасности – factor of international security

միջազգային անվտանգության համակարգ – система международной безопасности – international security system

միջազգային անվտանգության ճարտարապետություն – архитектура международной безопасности – international security architecture

միջազգային անվտանգության շահ – интересы международной безопасности – international security interests

միջազգային անվտանգություն – международная безопасность – international security

Միջազգային հարաբերությունների այնպիսի վիճակ, որի դեպքում ապահովվում են պետությունների ու դրանց բլոկների, դաշինքների, միավորումների և ամբողջ համաշխարհային ընկերակցության կենսագործունեությունը, համագործակցությունն ու փոխգործուբ-

յունը՝ տարբեր վտանգներից նրանց կենսականորեն կարևոր շահերի երաշխավորված պաշտպանվածության պայմանով: Նվազեցնում է միջպետական հակամարտությունների մակարդակը և ապահովում աշխարհում ռազմական ու ռազմավարական կայունությունը, ինչպես նաև ընդլայնում է տարբեր պետությունների և ազգերի համագործակցությունը: Նախատեսում է ծագող սպառնալիքների նախականիսման ու վերացման նպատակով միջազգային ռազմապաշտպանական, կազմակերպական ու տեխնիկական ծրագրերի համադասված իրականացում: Ներառում է նաև մեծածավալ ահաբեկչական գործողությունների, բնական ու տեխնածին աղետների, մահաբեր համաճարակների տարածման նախականիսման և/կամ դրանց հետևանքների նվազեցման նպատակով ձեռնարկվող միջոցների համակարգը:

միջուկային անվտանգություն – ядерная безопасность – nuclear safety, nuclear security

նավահանգստի անվտանգության ապահովում – обеспечение безопасности порта – port security

ներքին անվտանգության գործոն – фактор внутренней безопасности – factor of domestic security, factor of internal security

ներքին անվտանգություն – внутренняя безопасность – internal security, domestic security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է ներքին համաչափ և անհամաչափ սպառնալիքներից պետության, հասարակության, ընտանիքի, անձի պաշտպանվածության վիճակը:

պաշտպանական անվտանգություն – оборонная безопасность – defense security  
*Բացատրությունը տես՝ անվտանգություն՝ ռազմական անվտանգություն:*

պարենային անվտանգություն – продовольственная безопасность – food security

Ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, որը բնութագրում է պետության տնտեսության այն վի-

ճակը, երբ ապահովված է երկրի պարենային անկախությունը և բնակչության համար երաշխավորված է ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող, սպառողների առողջության համար անվտանգ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը: Պետության պարենային անկախությունը կենսականորեն կարևոր սննդամթերքի ներմուծման անհնարինության կամ անբավարարության դեպքում և պարենային ձգնաժամի կանխարգելման նպատակով սննդամթերքի տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակի ապահովման հնարավորությունն է:

պետական անվտանգություն – государственная безопасность – state security  
 Ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, որը կապված է պետական ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի հիմքերի, իրավական և կառավարման համակարգերի պաշտպանության հետ:

ռազմական անվտանգություն – военная безопасность – military security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որն ապահովվում է զինված ուժերի և հասարակության այն հաստատությունների վիճակով, որոնց շնորհիվ պետության պաշտպանական հզորությունը պահպանվում է այն անհրաժեշտ մակարդակում, որի դեպքում այլ պետությունների հետ հաստատվում են բարենպաստ հարաբերություններ, և բացառվում է առճակատում ուժի կիրառմամբ: Երաշխավորում է ներքին և արտաքին սպառնալիքներից քաղաքացու, հասարակության, ազգի ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունը ռազմական ուժի կիրառմամբ կամ դրա կիրառման սպառնալիքով:

սահմանային անվտանգություն – пограничная безопасность – border security

Վիճակ, որը բնութագրվում է պետական սահմանի և սահմանամերձ տարածքի, անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությամբ սահմանային ոլորտում հնարավոր և ռեալ

արտաքին ու ներքին սպառնալիքներից:

սահմանների անվտանգության ապահովում – обеспечение безопасности границ – border security

Պետության կողմից իրագործվող միջոցառումների համալիր, որն ուղղված է սահմանների վերահսկմանն ու սահմանային ռեժիմի պահպանմանը:

սոցիալական անվտանգություն – социальная безопасность – social security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է մարդու և քաղաքացու սոցիալական իրավունքների ու ազատությունների երաշխավորված ապահովումը:

տարածաշրջանային անվտանգության գործոն – фактор региональной безопасности – factor of regional security

տարածաշրջանային անվտանգություն – региональная безопасность – regional security

Միջազգային անվտանգության բաղադրիչ, որոշակի տարածաշրջանի սահմաններում գտնվող պետությունների անվտանգության ապահովման նպատակով իրականացվող համաձայնեցված միջոցների համալիր: Միջազգային անվտանգության առումով առավել մեծ նշանակություն ունեն համաեվրոպական, մերձավորարևելյան և ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային անվտանգությունները: Հայաստանի համար տարածաշրջանային անվտանգությունը Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգությունն է:

տեխնիկաֆիզիկական անվտանգություն – տես *անվտանգություն` ինժեներաֆիզիկական անվտանգություն*

տեղեկատվական անվտանգության հայեցակարգ – концепция информационной безопасности – information security concept

տեղեկատվական անվտանգություն – информационная безопасность – information security, INFOSEC

Սուրբելկոի (անհատի, հասարակության) այն վիճակը, որի դեպքում տեղեկույթի և սուրբելկոի փոխազդեցության հետևանքով սուրբելկոի մեջ առա-

ջացած փոփոխությունը սպառնալիք չի հարուցում նրա ֆիզիկական ու հոգեկան առողջության, ինչպես նաև հասարակության ու պետության համար:

տեղեկության անվտանգություն – информация безопасность – information security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է այն վիճակը, որի դեպքում ապահովվում են տեղեկատվության բնագավառում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը, տեղեկատվական միջոցների ու կապուղիների պաշտպանվածությունը, ինչպես նաև տեղեկատվական աղբյուրների մատչելիությունը: Նախատեսում է բնակչության բարոյահայրենասիրական ոգու բարձրացման ուղղությամբ տեղեկատվական միջոցառումներ, ինչպես նաև համալիր միջոցներ հավանական հակառակորդի տեղեկատվական ձեռնարկումներին հակազդեցության կարողությունն ապահովելու նպատակով:

փոխադարձ անվտանգություն – взаимная безопасность – mutual security

քաղաքական անվտանգություն – политическая безопасность – political security

Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է անձի, ընտանիքի, հասարակության, ազգի ու պետության անվտանգությունը նրանց շահերի նկատմամբ արտաքին ու ներքին (ընտանիքի, հասարակության և պետության դեպքում) հակաիրավական ոտնձգություններից: Ապահովվում է արտաքին քաղաքական (դիվանագիտական), ռազմաքաղաքական, տնտեսական, հասարակական, բնապահպանական և այլ բնույթի նպատակաուղղված գործունեությամբ, որի դեպքում արդյունավետ կերպով սահմանափակվում, չեղոքացվում կամ վերացվում են արտաքին ու ներքին սպառնալիքները:

օդանավակայանի անվտանգության ապահովում – обеспечение безопасности аэропорта – airport security

Կազմակերպական և տեխնիկական միջոցառումների համալիր, որոնք ձեռնարկվում են ուղևորներին, օդանավա-

կայանի շինությունները, ուղևորների սպասարկման համակարգերը, ինքնաթիռները ևն հանցավոր նկրտումներից պաշտպանելու նպատակով:

ֆիզիկական անվտանգություն – физическая безопасность – physical security

**անտառահատք** – вырубка – clearing

**անտառուղի** – просека – ride

**անտարբեր** – տես *անփույթ*

**անտեսանելի** – невидимый, незаметный – stealth

անտեսանելի նիշ – невидимый маркер – invisible marker

**անտերնչություն** – безвластие – anarchy, power vacuum

1. Անդեկավար վիճակ, պետ չլինելը:  
2. Տարերայնություն, անկազմակերպվածություն: Պետական իշխանություն, դեկավարում չլինելը, անտերության մատնվածություն:

**անտիկլինալ ծալք** – антиклинальная складка – saddle

**անտիրական տեխնիկա** – бесхозная техника – salvage

**անտոմս ուղևոր** – безбилетный пассажир, «заяц» – stowaway

**անցագիր** – пропуск – pass

**անցաթուղթ** – տես *անցագիր*

**անցակետ** – пропускной пункт – crossing point

սանիտարական անցակետ – санитарный пропускник – sanitary station, sanitary inspection room

Շենքի տարածք՝ շինություն՝ սենք, որը հատուկ սարքավորված կամ հարմարեցված է մարդկանց սանիտարական մշակման, ինչպես նաև նրանց հագուստի ու կոշիկների ախտահանման (վարակազերծման) համար:

**անցատեղ** – 1. переход, 2. տես *գետանց*

– 1. crossing, 2. տես *գետանց*  
Անցնելու (գերազանցապես՝ գետը կամ որևէ ջրային արգելք) տեղ:

**անցարան** – տես *անցատեղ 1*

**անցկալ** – завал – 1. blockage, 2. obstruction

Հակատանկային և հակահետևակային ոչ պայթյունային արգելապատնեշ, որը սովորաբար պատրաստվում է կտրած ծառերից, քարերից, ձյունից և այլ նյութերից ու կիսվում հակառակորդի հավանական երթուղու այն հատվածում, որտեղ արգելքը դժվար է շրջանցել:

**անցկացում** – 1. проведение, 2. прокладка, прокладывание – 1. spending, 2. passing

**անցնել հակառակորդի կողմը** – перейти на сторону противника – defect

**անցուղի** – 1. проход, 2. տես *անցում 1*, 3. подземный ход – 1. pass, passage, 2. տես *անցում 1*, 3. underground passage

1. Տարբեր բնական կամ արհեստական խոչընդոտներ (լեռներ, գետ, անցկալ, ականադաշտ ևն) հաղթահարելու համեմատաբար հարմար և անվտանգ ճանապարհ: 2. Նույնն է՝ *անցում (2)*: 3. Ստորերկրյա անցք՝ մի տեղից մեկ այլ տեղ անցնելու համար (հանքերում, ամրոցներում ևն):

ականազերծված անցուղի – տես *անցուղի՝ անցուղի ականադաշտում*

անցուղի ականադաշտում – проход в минном поле – minefield lane

անցուղիների բացում հրնթացս – проделывание проходов с ходу – hasty breach, hasty breaching

Արագ ձեռքուն՝ անցում հակառակորդի ականապատ դաշտով՝ դրանում բացելով ճանապարհ (արահետ, ուղի) պայթուցիկ նյութերի, պատվարի և ոչ պիտանի մեքենաների հրման միջոցով:

անցուղու ցուցանշան – указатель прохода – marker

բացված անցուղիների անվտանգության ստուգում – проверка безопасности проделанных проходов – proofing

Տարածքի կամ ճանապարհի վերջնամաքում ականներից, ռումբերից ևն:

**անցում** – 1. переход, 2. переправа – 1. crossing, passage, 2. crossing

1. Անցնելը, որևէ տարածքով (գետ, փողոց, լեռնաշղթա ևն) մի կետից մեկ

այլ կետ տեղափոխվելու գործողությունը: 2. Անցնելու տեղը: 3. Մի վիճակից (ֆիզիկական, քաղաքական, սոցիալական, տնտեսական ևն)՝ հասարակարգից՝ համակարգից ևն տեղափոխում՝ փոխադրում մեկ այլ վիճակի՝ հասարակարգի՝ համակարգի ևն:

անցման բացարձակ բարձրություն – абсолютная высота перехода – transition altitude

Բացարձակ բարձրություն, որի վրա կամ որից ցածր ինքնաթիռի գտնվելու դեպքում ուղղաձիգ հարթության մեջ նրա դիրքը որոշվում է դրա հարաբերակցությամբ:

անցման շարակարգ – эшелон перехода – transition level

Թռիչքի այն առավել ցածր շարակարգը, որը կարող է օգտագործված լինել անցման բացարձակ բարձրությունից վեր թռիչքի համար:

անցման շերտ – переходной слой – transition layer

Օդային տարածություն անցման բացարձակ բարձրության և անցման շարակարգի միջև:

անցում ենթածրագիր – уход в подпрограмму – derailing

անցում զինվորական ծառայության – поступление на военную службу – enrollment

Քաղաքացու կարգավիճակի փոփոխում քաղաքացիականից զինվորականի:

անցում յուրային զորքի մարտակարգերով – прохождение через боевые порядки своих войск – passage of lines

Որևէ ջոկատի անցնելը մեկ այլ յուրային ջոկատի դիրքերով:

անցում պահեստային բնագծի – переход на запасной рубеж – alternate bounds

անցում վայրէջքի – տես *վայրէջքամուտ*

անցում վայրէջքի տեսածրային ռադիոտեղորոշիչով – заход на посадку с помощью обзорного радиолокатора – surveillance approach

անցում քաղաքացիական դրության – переход на гражданское положение – resettlement

շարայան անցման տևողություն – время прохождения колонны – pass time

Տվյալ կետի մոտով շարայան առաջին և վերջին մեքենաների անցման ժամանակը:

ստորգետնյա անցում – подземный переход – underpass

վայրէջքի անցման վերջնափուլ – конечный участок захода на посадку – final approach

Վերջնական մոտեցում վայրէջքի համար:

**անցք** – отверстие, дыра – hole

մուտքի անցք – տես *անցք՝ ներթող անցք*

ներթող անցք – выпускное отверстие, входное отверстие – inlet

**անփորձ** – неопытный, новичок – green

**անփոփոխ էություն** – субстанция – substance

**անփութություն** – халатность, небрежность – negligence, inadvertence

**անփույթ** – халатный – negligent

**անուղղելիություն** – непоправимость – irretrievability

**անուշադիրություն** – невнимательность – inattentiveness

Ուշադիր չլինելը, ցրվածությունը՝ որպես հատկություն, բնավորության գիծ:

**անուշադրություն** – невнимание, невнимательность – inattention

1. Ցրվածություն՝ որպես իրավիճակային դրսևորում: 2. Անտարբերություն, անտարբեր վերաբերմունք:

**անօդաչու** – беспилотный – unmanned

անօդաչու թռչող ապարատ – беспилотный летательный аппарат, БПЛА – unmanned aerial vehicle, UAV, unmanned aircraft

**անօրինություն** – беззаконие, беспредел, произвол – lawlessness

**աշխատակազմ** – аппарат – staff

Տվյալ հիմնարկի, կազմակերպության, կառավարման որևէ ոլորտի աշխատողների համախումբ:

**աշխատակարգ** – режим – schedule

Կազմակերպության, հիմնարկի կամ դրանց առանձին ստորաբաժանման աշխատակազմի գործունեության կարգը:

**աշխատակից** – сотрудник – collaborator

**աշխատանք** – работа, функционирование – 1. work, 2. operation

ազատում աշխատանքից – увольнение с работы, освобождение от должности, отстранение от службы – discharge

Աշխատողի ցանկությամբ կամ գործատիրոջ կարգադրությամբ աշխատանքային հարաբերությունների դարձնում:

աշխատանքի գնահատման չափանիշ – критерий оценки работы – measure of performance

աշխատանքի տեղավորում – трудоустройство – job placement

աշխատանք քաղաքացիական իշխանությունների և բնակչության հետ – работа с гражданами властями и населением – civil affairs operations

Ուղղվարչական միջոցառումներ, որոնք զինվորական մարմիններն ու քաղաքացիական կազմակերպությունների հետ կապերի ստորաբաժանումներն իրականացնում են քաղաքացիական վարչության ու բնակչության հետ կապերի հաստատման և ամրապնդման ուղղությամբ:

արձակում աշխատանքից – տես *աշխատանք` ազատում աշխատանքից*

զինտնտեսական աշխատանք – хозяйственные работы – fatigue

Տարածքի, սանհանգույցի մաքրում, խոհանոցային աշխատանքներ ևն:

գորացրվածների տեղավորում աշխատանքի – трудоустройство уволенных из армии – resettlement

ընթացակարգային աշխատանքներ – регламентные работы – routine maintenance

Որոշ տեսակների տեխնիկայի պարբերական տեխնիկական սպասարկում, որի բովանդակությունը, ծավալը և ժամկետները սահմանվում են շահագործական փաստաթղթերով:

թռիչքադաշտային վերականգնողական աշխատանք – аэродромные восстановительные работы – aerodrome damage repair

կապալային աշխատանքների կազմակերպում – организация подрядных работ – contracting

մարտական աշխատանք – боевая работа – 1. operational activities, 2. engagement

Մարտական խնդիրների նախապատրաստմանն ու լուծմանը նպատակաուղղված միջոցառումների համալիր:

մարտական աշխատանքի ռեժիմ – режим боевой работы – battle rhythm

Մարտական պայմաններում հրամանատարի ու շտաբի աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

նորոգումավերականգնողական աշխատանքներ – ремонтно-восстановительные работы – recovery

նորոգումավերականգնողական աշխատանքների համադասող – координатор ремонтно-восстановительных работ – recovery controller

փրկարարական աշխատանքներ – спасательные работы – salvage operations

օգտակար աշխատանք – полезная работа – yield

**աշխատանքային արտահագուստ** – комбинезон – 1. coveralls, overalls, 2. fatigues

Արտադրական կոստյում` բաղկացած մեկ ամբողջություն կազմող տաքատից և բաձկոնից, օգտագործվում է որպես հատուկ արտահագուստ:

**ազատավարձու անձնակազմի աշխատավարձ** – зарплата вольнонаемного персонала – civilian pay

**աշխատող** – работник, сотрудник – employee

**աշխատուժ** – рабочая сила – manpower

աշխատուժի պահանջումը – потребность в рабочей силе – manpower requirements

**աշխարհ** – мир – world



աշխարհի բազմաբևեռ մոդել – много-полюсная модель мира – multipolar world model

Աշխարհակարգի այնպիսի կառուցվածք, որի դեպքում գոյություն ունեն երկուսից ավելի մոտավորապես նույնպիսի հզորությամբ (հաշվեկշռված) ուժային կենտրոններ (մեծ տերություններ կամ ռազմաքաղաքական բլոկներ):

աշխարհի երկբևեռ մոդել – двухполюсная модель мира – two-pole world model

Այնպիսի կառուցվածք, երբ գոյություն ունի երկու ուժային կենտրոն: Այդպես էր, օրինակ, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ գոյություն ուներ երկու բևեռ՝ ԱՄՆ-ն ու ԽՍՀՄ-ը, կամ երկու բլոկ՝ ՆԱՏՕ-ն ու ՎՊԿ-ն:

աշխարհի կողմ – главный румб, сторона света – cardinal point

աշխարհի՝ 1:1000000 մասշտաբի միջազգային քարտեզ – международная карта мира масштаба 1:1000000 – international map of the world

աշխարհի միաբևեռ մոդել – однополюсная модель мира – single-pole world model

Այնպիսի կառուցվածք, երբ գոյություն ունի միայն մեկ տերություն կամ բլոկ, որն օժտված է ավելի մեծ հզորությամբ, քան մնացած բոլոր պետությունները միասին վերցրած: Այդպես էր ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո:

աշխարհի մոդել – модель мира – world model

Աշխարհակարգի պայմանական աշխարհաքաղաքական կառուցվածքը:

կապակցված աշխարհ – связанный мир – connected world

Աշխարհ, որը բաղկացած է երկրների այնպիսի համակցությունից, որտեղ յուրաքանչյուր երկիր բավական կարճ ժամանակահատվածում հասանելի է ցանկացած այլ երկրի տարածքից՝ տրանսպորտային և տեղեկատվական կապերի կամ ռազմական ներգործության միջոցով:

աշխարհազոր – ополчение – voluntary military forces, militia

Զինվորական (ռազմականացված) կազմավորում, որը զորահավաքով ստեղծվում է որպես կանոն զորակոչի ոչ ենթակա քաղաքացիներից (գերազանցապես՝ կամավորության սկզբունքով):

ժողովրդական աշխարհազոր – народное ополчение – militia

աշխարհականություն – секуляризм – secularism

Գաղափարախոսություն, որը մերժում է ցանկացած աստվածաբանական համակարգ ու շրջակա իրականությունը, հասարակությունը և մարդուն մեկնաբանում է բացառապես երկրային կյանքի փորձի հիման վրա:

աշխարհակարգ – миропорядок – world order

Որևէ հասարակական համակարգի, աշխարհի կազմակերպվածքի հիմքում դրված սկզբունքների համախումբը:

աշխարհամարտ – տես *պատերազմ՝ համաշխարհային պատերազմ*

աշխարհայացք – мировоззрение – ideology

աշխարհատարածական – геопро-странственный – geospatial

աշխարհատարածական կապ – геопро-странственная связь – geospatial communication

աշխարհատարածական հետախուզա-կան օպերացիաներ – геопро-странственные разведывательные операции – geospatial intelligence operations

աշխարհատարածական ճարտարագի-տություն – геопро-странственная инже-нерия – geospatial engineering

աշխարհատարածական տեղեկատվա-կան ծառայություններ – геопро-стран-ственные информационные услуги – geo- spatial information and services

աշխարհատարածություն – геопро-стран-ство – geographic space

Աշխարհագրական թաղանթի սահման-ներում աշխարհագրական օբյեկտնե-րի ու երևույթների գոյության ձև, կոնկ-

րետ տարածքում գտնվող և ժամանակի ընթացքում զարգացող աշխարհագրական օբյեկտների միջև գոյություն ունեցող հարաբերությունների համախումբ:

**աշխարհաքաղաքական** – геополитическая – geopolitical

աշխարհաքաղաքական իրադրություն – геополитическая обстановка – geopolitical situation

աշխարհաքաղաքական կառուցվածք – геополитическое устройство – geopolitical structure

**աշխարհաքաղաքականություն** – геополитика – geopolitics

Միջազգային հարաբերությունների տեսության հասկացություն, որը բնորոշում է միջազգային քաղաքական զարգացումների վրա պետության դիրքի տարածքային-տարածական առանձնահատկությունների ազդեցության կոնկրետ պատմական ձևերը:

**աշխարհաքաղաքացիություն** – космополитизм – cosmopolitanism

Համաշխարհային քաղաքացիության գաղափարախոսություն, որը որպես մեկ ամբողջություն վերցրած համայն մարդկության շահերը դնում է առանձին ազգի կամ պետության շահերից վեր և մարդուն դիտում է որպես ազատ անհատի՝ ամբողջ Երկրագնդի սահմաններում:

**աշխարհիկացում** – секуляризация – secularization, deconsecration

1. Պատմագիտության մեջ. որևէ բանի հանում կրոնական, հոգևոր տնօրինությունից և հանձնում աշխարհիկ, քաղաքացիական տնօրինության: 2. Սոցիոլոգիայում. մարդկանց գիտակցության մեջ և հասարակության կյանքում կրոնի դերի նվազումը, գերազանցապես կրոնական ավանդույթներով կարգավորվող հասարակությունից անցում հասարակական կազմակերպվածքի աշխարհիկ մոդելի, որը հիմնվում է դատողական (արտակրոնական) նորմերի վրա:

**աշտարակ** – 1. башня, вышка, 2. башенка, бронебашня, турель – 1. tower, 2. cupola

ազդանշանատու աշտարակ – сигнальная башня – beacon

թռիչքների և վայրէջքների կառավարման աշտարակ – տես *աշտարակ՝ կարգավարական աշտարակ*

կարգավարական աշտարակ – диспетчерская вышка – control tower

**ապասկտիվացում** – инактивация – inactivation

**ապածածկագրիչ** – дешифратор – decoder, decipherer

Ծածկագրված հաղորդագրության (ազդանշանի) ավտոմատ վերծանման (ապակոդավորման) սարք:

**ապածավալում** – 1. свертывание, 2. деэскалация – curtailment, dismantling, winding-up

Գործողությունների ծավալի, մասշտաբի, թափի, ներգրավված ուժերի քանակի կրճատում:

**ապակենտրոնացում** – децентрализация – decentralization

Կառավարման համակարգում կենտրոնական (ղեկավար) օղակի որոշ գործառնությունների փոխանցում (հանձնում) ենթահամակարգերին՝ դրանց որոշակի ինքնուրույնության տրամադրմամբ:

**ապակենտրոնացված կատարում** – децентрализованное исполнение – decentralized execution

Գործողությունների կատարման լիազորությունների փոխանցումը ենթակա հրամանատարներին:

**ապակոդավորում** – декодирование – decoding, deciphering

Կոդավորմանը հակառակ գործողություն (տես *կոդավորում*):

**ապակողմնորոշում** – дезориентация – disorientation

Որևէ բանում ճիշտ կողմնորոշման, որևէ բանի մասին ճիշտ պատկերացման կորուստ կամ դրանցից զրկում, մոլորեցում:

**ապահով** – տես *հուսալի*

**ապահովագիր** – полис – policy



**ապահովագրություն** – страховка – insurance

**ապահովագրում** – страхование – insurance

**ապահովել** – обеспечивать – 1. provide, 2. secure

**ապահովիչ** – 1. предохранитель, предохранительное устройство, 2. предохранительный – 1. safety, safety device, safety lock, 2. preservative

ապահովիչ մոլակ – предохранительная защелка – safety catch

ապահովիչ սարք – տես *ապահովիչ 1*

հալուն ապահովիչ – плавкий предохранитель – safety fuze, fuze

**ապահովություն** – надежность, сохранность – safety

**ապահովում** – обеспечение – 1. support, 2. provision, provisioning

ազգային թիկունքային ապահովում – национальное тыловое обеспечение – national logistic support

անասնաբուժական ապահովում – ветеринарное обеспечение – veterinary support

անմիջական ապահովում – непосредственное обеспечение – close support

ապահովման միջոցներ – средства обеспечения – logistics support

ապահովում սպառազինությամբ – տես *սպառազինում*

առևտրակենցաղային ապահովում – торгово-бытовое обеспечение – commissary and community services

Թիկունքային ապահովման տեսակ, որը կազմակերպվում և իրականացվում է զինվորական ապրանքատեսակներով ու կենցաղային սպասարկմամբ անձնակազմի և զինծառայողների ընտանիքների անդամների պահանջ-մունքների ժամանակին և ամբողջական բավարարման նպատակով:

արտադրական թիկունքային ապահովում – производственное тыловое обеспечение – production logistics

արտադրության գիտատեխնիկական ապահովում – научно-техническое обеспечение производства – research and development support, R&D support

արտաքին ապահովման պայմանագիր – контракт на внешнее обеспечение – external support contract

բնակչահագործական ապահովում – квартирно-эксплуатационное обеспечение – quartering

Թիկունքային ապահովման տեսակ, զորքերի տեղաբաշխման և կենցաղի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի, այլ նյութական միջոցների պահման բնականոն պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների համալիր:

բուժանիտարական ապահովում – медико-санитарное обеспечение – health service support

երկարատև գործողությունների ապահովում և թիկունքային ապահովում – обеспечение длительных действий и тыловое обеспечение – sustainability and logistics

զանգվածային միջոցառումների ժամանակ կարգուկանոնի ապահովում – обеспечение правопорядка во время массовых мероприятий – crowd control

զորաթևերի և կցակետերի ապահովում – обеспечение флангов и стыков – software flank and joint

Օպերատիվ-մարտավարական միջոցառումներ և զորքերի գործողություններ, որոնք նպատակաուղղված են զորամասերի, զորամիավորումների և միավորումների զորաթևերին և դրանց միջև եղած կցակետերին հակառակորդի հանկարծակի հարվածների ու գրոհների բացառմանը, ինչպես նաև մարտական (օպերատիվ) խնդրի կատարման ժամանակ այդ հարվածների և գրոհների հետմղմանը:

ընդհանուր թիկունքային ապահովում – общее тыловое обеспечение – common-user logistics

թիկունքային ապահովման առաջադիր բազավորմամբ օբյեկտ – объект тылового обеспечения передового базирования – forward logistic site

իկունքային ապահովման բազմազգ ինտեգրված ստորաբաժանում – многонациональное интегрированное подразделение тылового обеспечения – Multi-national Integrated Logistics Unit

թիկունքային ապահովման բազմազգ միացյալ կենտրոն – Многонациональный объединенный центр тылового обеспечения – Multinational Joint Logistic Center

թիկունքային ապահովման գծով միջազգային համագործակցություն – международное сотрудничество по тыловому обеспечению – international cooperative logistics

թիկունքային ապահովման գնումային հարցեր – закупочные аспекты тылового обеспечения – acquisition logistics

թիկունքային ապահովման զորամասեր (հիմնարկներ) – части (учреждения) тылового обеспечения – combat service support elements

Զորամասեր (հիմնարկներ), որոնք ներառված են թիկունքային ապահովման (թիկունքի) համակարգում:

թիկունքային ապահովում – тыловое обеспечение, логистическое обеспечение, тыловая поддержка – logistics, logistic support, logistics support

Ուղղակի գործողությունների ապահովման տեսակ, զորքերը մարտական պատրաստության վիճակում պահելու նպատակով նրանց նյութական, տրանսպորտային, կենցաղային և այլ պահանջմունքների բավարարման ուղղված միջոցառումների համալիր: Ներառում է՝ նյութական, տրանսպորտային, ինժեներական-թռիչքադաշտային, օդատեխնիկական, բժշկական, անասնաբուժական, առևտրակենցաղային, բնակչահագործական և ֆինանսական ապահովումները:

թիկունքային ապահովում զորքերի երկարատև գործողությունների ժամանակ – тыловое обеспечение при длительных действиях войск – sustainment

Միջոցառումներ՝ նպատակաուղղված նյութական միջոցների ծախսի և անձնակազմի կորուստների համակշռմանը:

թիկունքային ապահովում՝ համագործակցությամբ – тыловое обеспечение на основе сотрудничества – cooperative logistics

Ներառում է երկրի տարածքում կան նրա սահմաններից դուրս տեղաբաշխված զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների նյութական և տրանսպորտային ապահովումը:

թռիչքադաշտային-տեխնիկական ապահովում – аэродромно-техническое обеспечение – airfield technical service

Այն միջոցառումների համալիրը, որոնք իրականացվում են թռիչքադաշտերում ու վայրէջքի հարթակներում՝ ավիացիոն զորամասերի (ստորաբաժանումների) և առանձին ինքնաթիռների (ուղղաթիռների) թռիչքներն ապահովելու համար:

ինժեներատեխնիկական-ինֆրաստրուկտուրային ապահովում – инженерно-инфраструктурное обеспечение – infrastructure engineering for logistics

Ներառում է զինված ուժերի զարգացման, տեղաբաշխման, բնակավորման, ապահովման և վերատեղաբաշխման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային շինությունների կառուցումը, վերականգնումը, ձեռքբերումը, նորոգումը, սպասարկումը և քանդումը, ինչպես նաև հաղորդակցության ուղիների կառուցումը, վերականգնումն ու սպասարկումը և շրջակա միջավայրի պաշտպանությանը նպաստումը:

ինժեներաթռիչքադաշտային ապահովում – инженерно-аэродромное обеспечение – airfield support

ինժեներական ապահովում – инженерное обеспечение – engineer support, engineering service

Օպերատիվ (մարտական) ապահովման տեսակ, այն ինժեներական (ճարտարագործական) միջոցառումների ու խնդիրների համալիրը, որոնք կատարվում են զորքերի (ուժերի) պատեհաժամ ու ծածուկ առաջընթացման, ծավալման, տարաշարժման ու մարտական խնդիրների կատարման, տարբեր միջոցներով խոցումից նրանց պաշտպանվածության մակարդակի բարձրացման համար բարենպաստ պայ-

մաններ ստեղծելու, ինչպես նաև հա- կառակորդին կորուստներ պատճա- ռելու և նրա գործողությունները դժվա- րացնելու նպատակով:

ինժեներահրթիռային ապահովում – инже- нерно-ракетное обеспечение – rocket engineering support

Այն միջոցառումների համալիրը, որոնք նպատակաուղղված են հրթիռային, զենիթային հրթիռային, հակատանկա- յին հրթիռային և տիեզերական միջոց- ների վրագետնյա համալիրների ար- ծակման կայանքները (սարքերը), հա- տուկ մեքենաները և համակարգերը (սարքավորանքը), ինչպես նաև հրթի- ռային (զենիթահրթիռային) զորքերի հրթիռատեխնիկական զորամասերը կիրառմանը պատրաստ վիճակում պահելուն, նյութական մասով զորքերի (ուժերի) ապահովմանը, վնասված սպառազինության վերականգնմանը:

ինժեներառադիոէլեկտրոնային ապահո- վում – инженерно-радиоэлектронное обе- спечение – software engineering radioelec- tronic

Այն միջոցառումների համալիրը, որոնք նպատակաուղղված են ինչպես ռազ- մական տեխնիկայի ինքնուրույնաբար գործող, այնպես էլ մարտական մի- ջոցների, համալիրների և սպառազի- նության համակարգերի մաս կազմող ռադիոէլեկտրոնային միջոցների աշ- խատանքի կայունության ապահով- մանը:

ինժեներատեխնիկական ապահովում – инженерно-техническое обеспечение – engineering service

ինտեգրված թիկունքային ապահովում – интегрированное тыловое обеспечение – integrated logistic support, ILS

Կառավարային և տեխնիկական պրո- ցես, որի միջոցով ապասարկելիության ու թիկունքային ապահովման գործոն- ները հաշվի են առնվում համակար- գերի (սարքավորանքի) նախագծման փուլում և ամբողջ կենսաշրջանի (շա- հագործման) ընթացքում, ինչի շնորհիվ ժամանակին և շահութաբերորեն կա- տարվում են պլանավորումը, ձեռքբե- րումը, փորձարկումը, ինչպես նաև հրագործվում է թիկունքային ապահով-

ման միջոցառումների ամբողջ համա- լիրը:

իրավաքաղաքական ապահովում – поли- тико-правовое обеспечение – legal support

Այն քաղաքական և իրավական մեխա- նիզմների առկայությունը, որոնցով ա- պահովվում է տվյալ հասարակական- պետական գործընթացի, երևույթի ևն գոյությունն ու զարգացումը:

կադրային ապահովում – кадровое обе- спечение – staffing

համալիր թիկունքային ապահովում – комплексное тыловое обеспечение – integrated logistics support

համալիր պայմանագրային ապահովում – комплексное контрактное обеспечение – contract support integration

Նշված օպերացիոն շրջանում միացյալ ուժերի պայմանագրային ապահովման համադասում և համաժամանակացում:

հիդրոոդերևութաբանական ապահովում – гидрометеорологическое обеспечение – hydrometeorological service

Ջորքերի հատուկ ապահովման տե- սակ, որը ներառում է մարտական գոր- ծողությունների շրջանում օդերևութա- բանական և ջրաբանական պայման- ների մասին տեղեկությունների հավա- քումը և համակողմանի հաշվառումը:

հրթիռատեխնիկական ապահովում – ра- кетно-техническое обеспечение – missile support

հրետանատեխնիկական ապահովում – артиллерийско-техническое обеспечение – artillery technical support

Տեխնիկական ապահովման տեսակ, որը ներառում է ինժեներահրետանա- յին, ինժեներառադիոէլեկտրոնային և ինժեներահրթիռային ապահովումները:

մարտական ապահովում – боевое обе- спечение – combat support

մարտական գործողությունների թիկուն- քային ապահովում – тыловое обеспе- чение боевых действий – combat service support

Մարտական գործողությունների ժա- մանակ թիկունքային ծառայության ա-

պահովում (սնունդով, ռազմամթերքով, վառելիքով ևն):

մարտական օպերացիաների պայմանագրային ապահովում – договорное обеспечение операций – operational contract support

միացյալ թիկունքային ապահովում – объединенное тыловое обеспечение – joint logistics

նյութական ապահովում – 1. տես *մատակարարում* 1, 2. материальное обеспечение – 1. տես *մատակարարում* 1, 2. logistics, force sustainment

Թիկունքային ապահովման տեսակ, զորքերի ամենօրյա կենսագործունեության և մարտական գործունեության համար անհրաժեշտ նյութական պահանջմունքի բավարարման նպատակով խաղաղ և պատերազմական ժամանակ իրագործվող միջոցառումների համալիր:

նյութատեխնիկական ապահովման շրջան – район материально-технического обслуживания – maintenance area

նյութատեխնիկական ապահովման պլանավորում – планирование материально-технического обеспечения – materiel planning

նյութատեխնիկական ապահովում – материально-техническое обеспечение – logistics, logistic support

*(ռազմ.)* Ապրանքանյութական արժեքների գնման, պահեստներում պահման և բաշխման գծով այն միջոցառումների համալիրը, որոնք նպատակաուղղված են ըստ իրենց նախանշանակման խնդիրների կատարմանը զորքերի և ուժերի մշտական պատրաստության պահպանմանը և իրագործվում են բոլոր տեսակների ամենօրյա ու մարտական գործունեության ասպարեզում:

որոնողափրկարարական ապահովում – поисково-спасательное обеспечение – search and rescue

ՌՕՌԻ-ում և ՈՕՌԻ-ում իրագործվող մարտական ապահովման տեսակ, որը ներառում է՝ ԹԱ-երի և նավերի անձնակազմի մատակարարում վթարային-փրկարարական միջոցներով ու պատրաստում այդ միջոցների օգտա-

գործմանը, որոնումային ու փրկարարական աշխատանքներում ներգրավվող անձնակազմի պատրաստում, հատկացված ուժերի ու միջոցների հերթապահության կազմակերպում, աղետի ենթարկված ԹԱ-երի ու նավերի որոնման կազմակերպում և իրականացում, դրանց օգնության ցուցաբերում և այլն:

պարենային ապահովում – продовольственное обеспечение, продовольственное довольствие – food and rations

Նյութական ապահովման տեսակ, միջոցառումների համալիր, որոնք նպատակաուղղված են զորքերի (ուժերի) պահանջմունքների բավարարմանը սննդամթերքով, խարով, պարենային ծառայության տեխնիկայով ու գույքով, ինչպես նաև անձնակազմի կերակրման կազմակերպմանն ըստ հաստատված բաժնաչափերի:

չափաբանական ապահովում – метрологическое обеспечение – metrological support

ՊՆ տրանսպորտային ապահովման համակարգ – система транспортного обеспечения МО – Defense Transportation System

Ազգային տրանսպորտային ենթակառուցվածքի այն մասը, որը պաշտպանության նախարարության շրջանակներում զբաղվում է քաղաքացիական հարցերով:

ռադիոնavigացիոն ապահովում – радионавигационное обеспечение – radio navigational support

ռազմաբժշկական ապահովում – военномедицинское обеспечение – medical support

Բուժծառայության իրագործած միջոցառումների համալիր, որը խաղաղ ժամանակ ուղղված է գինված ուժերի անձնակազմի առողջության պահպանման բնագավառում առավել առաջավոր արդյունքների ձեռքբերմանը, իսկ պատերազմական ժամանակ՝ վիրավորներին ու հիվանդներին բուժօգնության պատեհաժամ ցուցաբերմանը, նրանց մարտունակության արագ վերականգնմանն ու շարք վերադարձմանը:

ռազմական գործողությունների ապահովում – обеспечение военных действий – military action support

Մարտական պատրաստության վիճակում զորքերի (ուժերի) պահման, նրանց մարտունակության պահպանման և առաջադրված խնդիրների հաջող և պատեհաժամ կատարման համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով իրականացվող միջոցառումների համալիր, որը ներառում է՝ օպերատիվ (մարտական) ապահովումը, տեխնիկական ապահովումը, թիկունքային ապահովումը և ռազմաբժշկական ապահովումը:

ռազմական շինարարության իրավական ապահովում – правовое обеспечение военного строительства – legal support of military development

Այն իրավական նորմերի համախումբը, որոնք կարգավորում են ռազմական շինարարության ընթացքում ծագող իրավահարաբերությունները:

սանիտարաբուժական ապահովում – санитарно-медицинское обеспечение – medical and health service support

սեռային իրավահավասարության ապահովում – обеспечение гендерного равенства – equal treatment

Համալիր միջոցառումներ օրենսդրական-նորմատիվային ոլորտում՝ նպատակաուղղված տղամարդկանց և կանանց գործնական իրավունքների հավասարեցմանը:

վարչատնտեսական ապահովում – административно-хозяйственное обеспечение – service support

տարերային աղետների ժամանակ բժշկական ապահովման ազգային համակարգ – национальная система медицинского обеспечения при стихийных бедствиях – National Disaster Medical System

Արտակարգ իրավիճակներին արձագանքող բուժապահովման ծառայությունների (պաշտպանության, ներքին գործերի անվտանգության, առողջապահության և այլ նախարարությունների, գերատեսչությունների, գործակալությունների կազմի մեջ մտնող) համադասված համագործակցությունը:

տեխնիկական ապահովում – техническое обеспечение – maintenance, technical support

Ռազմական գործողությունների ապահովման տեսակ, այն միջոցառումների համալիրը, որոնք իրագործվում են ռազմական տեխնիկայով, զինամթերքով, ռազմատեխնիկական զույքով զորքերի (ուժերի) ապահովման, ռազմական տեխնիկայի արդյունավետության ու շահագործման հուսալիության մեծացման, վնասման դեպքում դրա արագ վերականգնման (նորոգման) ու շարք վերադարձման նպատակով:

տեղաերկրաբաշխական ապահովում – топогеодезическое обеспечение – topogeodesic support, topogeodetic survey

Օպերատիվ (մարտական) ապահովման տեսակ, առաջադրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ տեղաերկրաբաշխական տվյալների պատրաստման և շտաբներին ու զորքերին հասցման գծով միջոցառումների համալիր:

տեղական ռեսուրսներով ապահովում – обеспечение местными ресурсами – local support

Ապահովում, որը կատարվում է ի հաշիվ տվյալ տեղի՝ վայրի՝ շրջանի ռեսուրսների:

տեղեկատվական ապահովում – информационное обеспечение – information support

1. Տեղեկույթի մշակման ու վերլուծության մասնագիտացված կենտրոնների գործունեությունը՝ նպատակաուղղված խաղաղարարական օպերացիայի կազմակերպման և իրագործման համար պատասխանատու պաշտոնատար անձանց, մարմիններին ու կառույցներին տեղեկույթով ապահովմանը, ինչպես նաև այդ օպերացիայի ընթացքի և արդյունքների մասին հասարակության իրազեկմանը: 2. Ավտոմատացված համակարգում. տեղեկույթի դասակարգման ու կողավորման միասնական համակարգի, փաստաթղթերի և տեղեկույթային զանգվածների միօրինակացված համակարգի համախումբը:

տեղեկության ապահովում – информационное обеспечение – information support

տեղեկույթի հոսքի կառավարման ապահովում – обеспечение управления информацией (потоками информации) – information management support

տրանսպորտային ապահովում – транспортное обеспечение – transport facilities

Թիկունքային ապահովման տեսակ, միջոցառումների համալիր, որն ուղղված է բոլոր տեսակի փոխադրամիջոցներով զինվորական ստորաբաժանումների, զորամասերի ու զինվորական բեռների տեղափոխման կազմակերպմանն ու իրագործմանը և ներառում է հաղորդակցության ուղիների նախապատրաստումը, շահագործումը, տեխնիկական պաշտպանությունը, վերականգնումը, ինչպես նաև փոխադրամիջոցների նախապատրաստումը:

փոխադարձ ապահովում – взаимное обеспечение – mutual support

Երկու կամ ավելի պաշտպանական դիրքերի, հրանոթների կամ խմբավորումների՝ միմյանց օգնելով կրակ վարելու կարողությունը, փոխադարձ կրակային աջակցություն:

օպերատիվ թիկունքային ապահովում – оперативное тыловое обеспечение – consumer logistics

օպերատիվ (մարտական) ապահովում – оперативное (боевое) обеспечение – combat support

Յուրային զորքերի (ուժերի), սպառազինության ու ռազմական տեխնիկայի կիրառման համար բարենպաստ պայմանների ստեղծման, ինչպես նաև հակառակորդի զորքերի (ուժերի) և սպառազինության կիրառման արդյունավետության նվազեցման նպատակով բոլոր տեսակի օպերացիաներում (մարտական գործողություններում) պլանավորվող, կազմակերպվող ու իրագործվող օպերատիվ, օպերատիվ-մարտավարական (մարտավարական) միջոցառումների համալիր: Հիմնական տեսակներն են՝ հետախուզությունը, հոգեբանական պայքարը, ռադիոէլեկտրոնային պայքարը, քողարկումը, ինժեներական ապահովումը, ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանությունը, տեղաերկրաբաշխական ապահովումը, ուղեվարական

ապահովումը, հիդրոտեղնութաբանական ապահովումը, իսկ մարտավարական օղակում՝ նաև պահպանությունը:

օպերացիաների թիկունքային ապահովում – тыловое обеспечение операций – operational logistics

ֆինանսական ապահովում – финансовое обеспечение – finance support

Միջոցառումների համալիր, որոնք կազմակերպվում և իրագործվում են դրամական միջոցների նկատմամբ զորքերի (ուժերի) ունեցած պահանջունքի լիակատար բավարարման համար:

«Ապաչ» – «Апач» – “Apache”, АН-64  
Ամերիկյան մարտական հարվածային ուղղաթիռ:

ապապաշարում – снятие осады – relief

ապապատնեշում – разграждение, устранение препятствий – obstacle clearing

ապապետականացում – денационализация – denationalization, privatization  
Պետական ունեցվածքի մասնավորեցում:

ապառազմականացում – 1. демилитаризация, 2. демобилизация – 1. demilitarization, 2. demobilization

1. Ջինաթափում, միջազգային պայմանագրով արգելում պետությանն ունենալ զինված ուժեր և ռազմական արդյունաբերություն, ինչպես նաև որևէ տարածքի միջազգային-իրավական ռեժիմ, որով արգելվում է խաղաղ ժամանակ այն օգտագործել ռազմական նպատակներով: 2. Պետության զինված ուժերի և տնտեսության փոխադրում պատերազմական դրությունից խաղաղ պայմանների:

ապասարում – демонтаж – dismantling

ապաստան – 1. убежище, 2. кров – shelter, asylum, refuge

1. Վտանգից կամ դժվարություններից պատսպարան: 2. Հովանավոր, պաշտպան: 3. Պատսպարան, որտեղ մարդ ազատ է հալածանքից՝ հետապնդումից ևն:

հուսալի ապաստան – надежное убежище, «тихая гавань» – safe haven



քաղաքական ապաստան փնտրող (անձ) – ищущий политического убежища – asylum seeker

**ապաստարան** – убежище – shelter, asylum

1. Ապաստանելու տեղ, ապաստան:
2. Ամրացված տեղ, որը հարմարեցված է անհատական պաշտպանության միջոցներ չկրող մարդկանց երկարատև գտնվելու համար և պաշտպանում է ոչ միջուկային զենքի ներգործությունից, ինչպես նաև կարող է սարքավորված լինել միջուկային, քիմիական և կենսաբանական զենքի կողմնակի գործողություններից պաշտպանող պատնեշով:

«ապաստարանների ավերիչ» – «разрушитель бункеров» – bunker buster

Պաշտպանված ստորերկրյա օբյեկտների ավերման համար նախատեսված մեծ հզորությամբ ավիառումբ:

բնական ապաստարան – природное укрытие, естественное укрытие – natural concealment

Բնական միջոցներ և տեղական առարկաներ, որոնք կարող են զորքը, տեխնիկան և զույքը պաշտպանել հակառակորդի խոցման ու հետախուզության միջոցներից և վատ եղանակից:

թեթև կամարավոր պողպատե ապաստարան – легкое сводчатое стальное убежище – light elephant steel shelter

պառկած մարտիկի համար ապաստարան – убежище для лежащего бойца – prone shelter

**ապատեղեկատվություն** – дезинформация – misinformation, disinformation

Օպերատիվ (ռազմավարական) քողարկման եղանակ, որի էությունը յուրային զորքերի, դրանց խմբավորման, կազմի, սպառազինության, մարտունակության, տեղաբաշխման, գործողությունների պլանի և այլ տվյալների վերաբերյալ կեղծ տեղեկությունների կանխատեսված տարածումն է՝ հակառակորդին մոլորեցնելու նպատակով, ընդհանրապես՝ որոշակի նպատակներով կեղծ տեղեկությոթի տարածում:

վերահսկվող ապատեղեկատվություն – контролируемая дезинформация – controlled information

**ապատեղեկացում** – տես *ապատեղեկատվություն*

**ապատեղեկույթ** – дезинформация – misinformation, disinformation

Որոշակի նպատակով տարածվող կեղծ տեղեկույթ, աղավաղված տեղեկություններ:

**ապարատ** – аппарат – apparatus

1. Սարք, տեխնիկական սարքվածքների մի դասի անվանումը (օրինակ՝ հեռախոս, հեռուստացույց, հրթիռ և օդանավ, բատիսկաֆ և այլն): 2. Մարդու օրգանների համախումբ, որոնք կատարում են որևէ հատուկ գործառույթ (շնչառական և այլն): 3. Որևէ թեմային, աշխատությանը, ժողովածուին վերաբերող տեղեկատու և մեկնաբանական նյութ, գործիքակազմ:

թռչող ապարատ – самолет, воздушное судно, летательный аппарат – aircraft

թռչող ապարատի համար անհրաժեշտ նվազագույն մակերես – минимальная площадь для летательного аппарата – minimum aircraft operating surface

թռչող ապարատների տարաբաշխման գոտի – зона рассредоточения ЛА – aircraft dispersal area

Թռիչքադաշտի՝ թռիչքային գոտու մակերեսի ընդարձակում՝ կանգնած թռչող ապարատներն իրարից հեռացնելու և հակառակորդի կողմից դրանց խոցումը դժվարացնելու նպատակով:

լողացող ապարատ – տես *նավ*

լուսանկարչական ապարատի ժապավենակոճ – кассета фотоаппарата – camera magazine

հասկացութատերմինաբանական ապարատ – понятийно-терминологический аппарат – conceptual and terminological apparatus

հեռակառավարվող թռչող ապարատ – телепилотируемый летательный аппарат, ТПЛА – remotely piloted vehicle, RPV

հետախուզական թռչող ապարատ – разведывательное воздушное судно – reconnaissance aircraft

մարդավարական թռչող ապարատ – տես *ապարատ` օդաչուավոր թռչող ապարատ*

մարտական անօդաչու թռչող ապարատ – боевой беспилотный летательный аппарат, ББЛА – unmanned combat aerial vehicle, UCAV

մարտունակ թռչող ապարատ – боеспособный летательный аппарат – combat available aircraft

որոնողափրկարարական թռչող ապարատ – поисково-спасательный летательный аппарат – search-and-rescue aircraft

Թռչող ապարատ, որը նախանշանակված է որոնողափրկարարական գործառնություններ կատարելու համար:

տորպեդային ապարատ – торпедный аппарат – torpedo tube, torpedo tube mount

Նավի (վերջրյա կամ ստորջրյա) սարք, որը հնարավորություն է տալիս ջրում տորպեդներ արձակելու:

օդային բարձով ապարատ – аппарат на воздушной подушке – air cushion vehicle

Տրանսպորտային կամ մարտական միջոցներ, որոնք ջրի կամ ցամաքի մակերևույթի վեր պահվում են օդի պվելցուկային ճնշման շնորհիվ:

օդաչուավոր թռչող ապարատ – пилотируемый летательный аппарат – manned aircraft

**ապարատորդ** – аппаратчик – apparatchik

**ապարատչիկ** – տես *ապարատորդ*

**ապարատուրա** – аппаратура – equipment

Ապարատների («ապարատ» բառահոդվածի 1-ին իմաստով) համախումբ, որն է լաբորատորիայի, արտադրամասի սարքավորանքը:

գատորոշման ապարատուրա – аппаратура распознавания – recognition equipment

Ապարատուրա, որը նախանշանակված է շարժվող նշանակետերի (գերազանցապես օդատիեզերական օբյեկտների) տեսակն ու պետական պատկա-

նելությունը որոշելու, այլ նշանակետերից տարբերելու համար:

**ապափուլայնացում** – расфазировка – dephasing, misphasing

Փուլայնության (փուլերի համընկնման) խախտում:

**ապաքինում** – տես *առողջացում 2*

**ԱՊՀ** – տես *Անկախ Պետությունների Համագործակցություն*

**ԱՊՀ երկրների ռազմական համագործակցության համադասման շտաբ** – Штаб по координации военного сотрудничества стран СНГ – Military Cooperation Headquarters of the Commonwealth of Independent States

**ապստամբ** – повстанец, инсургент – rebel, insurgent

Զինված ապստամբության մասնակից, ապստամբական շարժման անդամ:

ապստամբների դեմ պայքար – տես *հակաապստամբական գործողություններ*

**ապստամբություն** – восстание – rebellion, revolt, uprising

Կազմակերպված զանգվածային ելույթ ընդդեմ իշխանության կամ օտարերկրյա տիրապետության:

զինված ապստամբություն – вооруженное восстание – armed insurrection

**ապրանք** – 1. товар, 2. продукт – 1. goods, 2. product, 3. item

առաջին անհրաժեշտության ապրանքներ – продукты первой необходимости – essential supply, essential cargo

արգելված ապրանքների մաքսանենգություն – контрабанда запрещенных товаров – smuggling of prohibited goods

ռազմական մաքսանենգ ապրանքներ – военная контрабанда – contraband of war

Միջազգային իրավունքում. նյութեր և առարկաներ, որոնք պատերազմող կողմը արգելում է չեզոք պետությանը կամ նրա քաղաքացիներին տեղափոխել՝ մյուս պատերազմող կողմին մատակարարելու համար:



**ապրանքամանային նավթամթերք** – тарные нефтепродукты – packaged petroleum product

**ապօրինություն** – տես *անօրինություն*

**աջաթևյան** – правофланговый – right-flanking

**աջակցող ուժեր և միջոցներ** – поддерживающие силы и средства – support

**աջակցություն** – поддержка – support

անմիջական աջակցության շրջան – район непосредственной поддержки – close support area

անմիջական աջակցության տանկ – танк непосредственной поддержки – intimate support tank

Տանկ, որը օպերացիայի որոշակի փուլում ամրակցված է հետևակային դասակին և մարտական գործողությունների ժամանակ հավասարապես մարտնչում է դասակի հետ:

անմիջական աջակցություն – непосредственная поддержка – direct support, close support, local support

1. Աջակցություն, որը ցույց է տալիս տվյալ կազմավորմանը չլրակցված կամ նրա հրամանատարությանը չենթարկվող ստորաբաժանումը: 2. Ռազմածովային. գործողություններ, որոնք կապված են որևէ զորամիավորումն այլ (սովորաբար դրա մարտավարական ենթակայության տակ գտնվող) զորամասերով ծածկապաշտպանելու հետ:

արյան դոնոր – տես *արյունատու*

արյան խումբ – группа крови – blood group, blood type

արյան փոխներարկում – переливание крови, трансфузия крови – blood transfusion

**արյունազեղում** – кровоизлияние – hemorrhage, haemorrhage

**արյունախում** – տես *արյունռուշտ*

**արյունահեղություն** – кровопролитие, кровавая баня, массовое убийство – bloodshed, bloodbath

**արյունահոսել** – кровоточить, истекать кровью – bleed

**արյունահոսություն** – 1. кровотечение, 2. տես *արյունահեղություն* – 1. bleeding, hemorrhage, 2. տես *արյունահեղություն*

**արյունատու** – донор крови – blood donor

**արյունաքամվել** – տես *արյունահոսել*

**արյունռուշտ** – кровожадный, кровавый – bloodthirsty

**արշավ** – 1. кампания, 2. поход, 3. экспедиция – 1. campaign, 2. incursion, 3. expedition

1. Որևէ կարևոր նպատակի հասնելու համար կատարվող հաջորդական միջոցառումների համախումբ: 2. Բանակի (նավատորմի) գործողություններ, որոնք ներառում են զորքի (նավերի) տեղաշարժ մեծ հեռավորություններով, ներխուժում հակառակորդի տարածք, մարտերի և ճակատամարտերի մղում, պատերազմի շրջան (ռազմարշավ) կամ ամբողջ պատերազմ, ներկայումս կիրառվում է ՌԾՈՒ-ի առնչությամբ: 3. Մարդկանց խմբի, ջոկատի ուղևորություն որևէ հատուկ (հետազոտական, ռազմական և այլն) առաջադրանքով:

ընտրական արշավ – избирательная кампания – election campaign

քաղաքական արշավ – политическая кампания – political campaign

քայքայիչ արշավ – подрывная кампания – subversive campaign

քարոզչական արշավ – 1. информационная кампания, 2. пропагандистская кампания – 1. information campaign, 2. propaganda campaign

**արշավագոր** – տես *ուժեր՝ ռազմարշավային ուժեր*

**արշավային** – походный – field

արշավային կաթսա – походный кухонный котел – dixie

արշավային կերակրաման – походный котелок – dixie

արշավային մահճակալ – походная кровать, складная кровать, раскладушка – camp-bed

**արշավանք** – 1. поход, 2. нашествие – 1. incursion, 2. invasion

1. Տես *արշավ* 2: 2. Ռազմական ներխուժում ավարառության նպատակով:

խաչակրաց արշավանք – крестовый поход – Crusade

**արորիկ** – сошка – bipod

«Արչեր» – «Арчер» – “Archer”

Խորհրդային արտադրության «օդ-օդ» դասի մերձագործ հրթիռ:

**արսենալ** – տես *զինանոց*

**արտագրոհ** – вылазка – sortie

Պաշարված կայազորի ուժերի մի մասի հանկարծակի հարձակումը պաշարող զորքերի վրա՝ հետախուզման, գերեվարման, պաշարողական տեխնիկայի զավթման կամ ոչնչացման, պաշարողական կառույցների ավերման և նպատակով:

**արտադրանք** – 1. изделие, 2. продукция – 1. product, 2. production

1. Արտադրության առանձին արդյունք:  
2. Տնտեսության որևէ ճյուղի, ամբողջ տնտեսության կամ առանձին արհեստավոր վարպետների աշխատանքի արդյունքների ամբողջություն:

սերիական արտադրանք – серийное изделие – off-the-shelf item

Որոշակի տիպի արտադրություն, որը բնութագրվում է պարբերաբար կրկրնվող խմբաքանակներով պատրաստ կամ նորոգվող արտադրանքի անվանացանկի սահմանափակությամբ և թողարկման համեմատաբար մեծ ծավալներով:

ստանդարտացված արտադրանք – стандартизованное изделие – standardized product

Ստանդարտով հաստատված պարամետրներով արտադրանք:

օգտագործման համար պատրաստ պետական արտադրանք – готовое для использования государственное изделие – government off-the-shelf

**արտադրման ժամանակահատված** – время на производство – production lead time

Պատրաստման պայմանագրի ստորագրման և պահեստ ընդունման ժամանակների միջև եղած ժամանակահատվածը:

**արտադրողականություն** – производительность – 1. throughput, 2. productivity

1. Միավոր ժամանակում կատարված աշխատանքի ծավալը. արտադրության՝ աշխատողի՝ արքավորանքի ևն

արդյունավետության ցուցիչ: 2. Միավոր ժամանակում արտադրանք (վերջնական կամ միջանկյալ) տալու կարողություն:

**արտաթռիչք** – 1. вылет, 2. самолето-вылет – 1. sortie 2. sortie (of aircraft), 3. operation flight

Որևէ տեղից՝ օդանավակայանից, հրազենի փողից ևն թռչելով դուրս գալը:

արտաթռիչք կանչով – вылет по вызову – on-call mission

մարտական արտաթռիչք – боевой вылет, полетное задание – mission

**արտածում** – вывод – derivation

արտածման հեռավորություն – дистанция выноса – offset distance

Երկրաշարժագիտության մեջ. ցնցման աղբյուրի և ընդունիչի միջև եղած հեռավորությունը:

**արտահանում** – экспорт, вывоз – export  
Ապրանքների դուրսհանում պետության սահմաններից՝ այլ պետություններում վաճառելու կամ օգտագործելու նպատակով:

**արտահաշվեկշռային հոդվածներ** – забалансовые статьи – off-balance sheet items

**արտանետիչ** – катапульта – ejector

**արտանետվածք** – 1. выброс, 2. выхлоп – 1. emission, 2. exhaust

1. Արտադրական պրոցեսների ընթացքում գազերի և այլ թռչող չափամասերի բացթողում (հիմնականում՝ ոչ կանխամտածված) մթնոլորտ: 2. Մեքենայի/շարժիչի արտանետած գազերը:

**արտանետում** – 1. выброс, 2. տես *ինքնանետում* – 1. emission, issue, release, 2. տես *ինքնանետում*

հանովի կողային սարքավորանքի արտանետում – выстреливание съёмного бортового оборудования – ejection

**արտաշրջանային ձևավորում** – зарамочное оформление – border break

Քարտեզագրության մեջ. այն բոլոր ստանդարտացված գրառումները, որոնք տեղադրվում են քարտեզի էջին՝

բուն քարտեզի պատկերից դուրս (ազատ դաշտում):

**արտապատկեր** – отображение – 1. coverage, 2. plot

**արտապատկերում** – տես *արտացոլում*

**արտասահմանյան** – иностранный – foreign, alien

Արտասահմանյան լեգեոն – Иностраннный легион – Foreign Legion

Ֆրանսիայի ցամաքային զորքերի կազմի մեջ ընդգրկված զորամիավորում, որն ստեղծվել է 1831 թ. մարտի 9-ին Լուի-Փիլիպոս թագավորի հրամանով և կազմվում է արտասահմանցիներից կամ որպես այդպիսին ներկայացողներից:

Արտասահմանյան լեգեոնի լեգեոնական – легионер Иностранного легиона – legionnaire

**արտասահմանցի** – иностранец, чужеземец – foreigner, alien

արտասահմանցի աշխատող – иностранный работник – foreign service national

**արտասողոսկում** – просачивание с вражеской территории – exfiltration

Գործողություններ՝ կապված շրջափակումից ծածուկ դուրս գալու, հակառակորդի կողմից դեպի յուրային դիրքեր ռազմաձակատային գիծն անցնելու հետ:

**արտասորում** – տես *առաքում 3*

**արտացոլում** – отображение – representation

**արտաքին** – 1. внешность, 2. внешний – 1. appearance, 2. exterior, 3. foreign, external, alien

արտաքին հիշողություն – внешняя память – bulk storage

Հիշողություն, որն իրագործվում է մայր մեկուսատախտակի (ալատայի) նկատմամբ արտաքին հիշող սարքերով, որոնցում տեղեկությոն պահվում է տարբեր սկզբունքներով:

**արտաքնոց** – сортир – latrine

**արտերկրայնություն** – экстерриториальность – extraterritoriality

Օտարերկրյա պաշտոնատար անձանց ազատում գտնվելու երկրի իրավագործությունից, նախատեսում է օտարերկրյա ներկայացուցիչների (հիմնարկների) անձի և գույքի անձեռնմխելիություն, իրենց պետության հետ ազատ հաղորդակցվելու իրավունք, տեղի դատարաններին անընդդատություն, իրենց պետության դրոշը կախելու իրավունք և այլն: Այս առավելություններից օգտվում են նաև հատուկ թույլտվությամբ այլ պետության տարածքում գտնվող զորամասերն ու ինքնաթիռները և նրա նավահանգիստներում գտնվող ռազմանավերը:

**արևաազդանշանիչ** – гелиограф – heliograph

**արևագրիչ** – гелиограф – heliograph

**արևեյան** – восточный – 1. east, 2. eastern

**արևեյան արսցիս** – восточная абсцисса – easting

**Արևեյան բլոկ** – տես *Վարշավայի պայմանագրի կազմակերպություն*

**Արևեյան Եվրոպա** – Восточная Европа – Eastern Europe

Այն պետությունները, որոնք «Սառը պատերազմի» տարիներին ԽՍՀՄ դաշնակիցներն էին՝ Բուլղարիա, Չեխոսլովակիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Հարավսլավիա:

**արևելք** – восток – east

**Արևմտաեվրոպական միություն** – Западноевропейский союз – Western European Union

**արևմտյան** – западный – western, westerly

1. Դեպի արևմուտք նայող, արևմուտքում գտնվող: 2. Արևմուտքին բնորոշ, արևմուտքից տարածվող:

արևմտյան ուղղությամբ շարժվող – движущийся в западном направлении – westbound, westwards

**արևմուտք** – запад – west

**ացետատ** – ацетат, уксуснокислая соль – acetate

**ացետատային մոմաթուղթ** – ацетатная калька – acetate

**ափ** – берег – coast

զառիվայր ափ – обрывистый берег – bluff coast

ափ դուրս գալ – выйти на берег – land

**ափամերձ** – береговой, прибрежный – 1. coastal, 2. offshore

**ափափողոց** – տես *ափնուղի*

**ափհանիչ** – десантно-высадочный – amphibious

ափհանիչ միջոց – 1. десантно-высадочное средство, штурмовой катер, 2. амфибийно-десантное средство – 1. assault craft, 2. amphibian

ափհանիչ նավ – десантный корабль – amphibious assault ship (multipurpose)

ափհանիչ նավեր – корабли морского десанта – amphibious shipping

ափհանիչ նավերի ջոկատ – отряд десантных кораблей – amphibious squadron

**ափհանում** – 1. высадка, 2. высадка морского десанта – 1. debarkation, 2. beach landing, landing

1. Նավերից մարդկանց (ուղևորներ, տեղափոխվող զորք, նավի անձնակազմ են) դուրսբերում ցամաք: 2. Ղեսանտավորման տարատեսակ, դեսանտային օպերացիայի փուլ, որի ժամանակ զորքը և տեխնիկան փոքր ափհանիչ նավերից դուրս են գալիս անմիջականորեն ափ, իսկ մեծ ափհանիչ նավերից ափհանման շրջանում տեղափոխվում են ափհանիչ միջոցներ (նավակներ, մակույկներ, ուղղաթիռներ են), որոնցով հասցվում են ափ:

ափհանման ելքային բնագիծ – исходный рубеж десантирования – line of departure

ափհանման երթուղի – маршрут следования десантно-высадочных средств к берегу – boat lane

Ափհանող նավի համար նախատեսված ուղի, որն սկսվում է ծովափից:

ափհանման ժամանակացույց – график высадки – debarkation schedule

ափհանման խմբի հրամանատար – командир десантно-высадочной группы – landing group commander

ափհանման խումբ – десантная группа – landing group

ափհանման կառավարման խումբ – группа управления высадкой десанта – amphibious control group

ափհանման հատվածի լայնություն – фронт участка высадки – beach width

ափհանման հատվածի հետախուզում – разведка участка высадки – beach survey

ափհանման միջոցի տարողունակություն – вместимость десантного средства – boat space

ափհանման միջոցների օգտագործման պլան – план использования десантно-высадочных средств – amphibious vehicle employment plan

ափհանման նախադրոհային փուլ – предштурмовой этап высадки десанта – assault phase

Ափհանման փուլ, որի ընթացքում հիմնական ուժերը հասնում են նպատակակետին:

ափհանման նավահանգիստ – порт высадки – port of debarkation

ափհանման նավակների խումբ – группа десантных лодок – boat group

Ղեսանտային նավերի հիմնական կազմը:

ափհանման շրջան – район высадки десанта – amphibious assault area

Օպերացիոն շրջանի այն մասը, որում իրականացվում է դեսանտային ուժերի ափհանումը:

ափհանման պլան – план высадки десанта – plan for landing

Ափհանման ժամանակ՝ այն բոլոր փաստաթղթերը, որոնք պարունակում են նավից դեպի ափ ափհանվող զորքի շարժման վերաբերյալ մանրամասն հրահանգներ:

ափհանման տեղ – место высадки десанта – landing site

ափհանման ցուցադրում – демонстрация высадки десанта – amphibious demonstration



Օպերացիա, որի ժամանակ զորքերը նմանարկում են ափհանման օպերացիան՝ հակառակորդի ուշադրությունը իրական ափհանման շրջանից շեղելու կամ անրացված դիրքերից հեռացնելու նպատակով:

ափհանման քարտեզ – десантная карта – amphibious chart

ափհանման օպերացիա – морская десантная операция – amphibious operation  
Ռազմաձևատային օպերացիայի (նավատորմի օպերացիայի) կամ ռազմավարական օպերացիայի բաղադրիչ մաս. ա) հակառակորդի զբաղեցրած տարածք ծովային դեսանտի ափհանման և ափին մարտական խնդիրների կատարման նպատակով կատարվող գործողություններ, որոնք փոխհամաձայնեցված են ըստ նպատակի, խնդիրների ու ժամանակի և իրագործվում են միասնական մտահղացմանը համապատասխան, բ) ցամաքային զորքերի և նավատորմի ուժերի զորամիավորումների համատեղ օպերացիա, որն իրագործվում է ՋՈՒ-ի այլ տեսակների և այլ զորատեսակների հետ փոխգործառնությամբ:

ափհանման օպերացիայի պլանավորում – планирование морской десантной операции – amphibious planning

ծովային դեսանտի ափհանման կառավարման խումբ – группа управления высадкой морского десанта – amphibious group

Ծովային դեսանտային ուժերի կազմի մեջ մտնող ստորաբաժանում, որը ներառում է հրամանատարին ու նրա շտաբը և նախանշանակված է դիվիզիայի մակարդակով ծովային դեսանտի մարտական գործողությունների բոլոր փուլերում լրակցված զորամասերի օպերատիվ կառավարման (հրամանատարության կատարման) համար:

օժանդակ ափհանում – вспомогательная высадка – subsidiary landing

ափնուղի – набережная – quay, quayside

աուդիտ – аудит, ревизия – audit

աուդիտոր – аудитор – auditor

Աուդիտ կատարող անձ:

աուդիտորների միացյալ խումբ – объединенная группа аудиторов – joint group of auditors

աուդիտորների միջազգային խորհուրդ – международный совет аудиторов – international board of auditors

աուտոսրսինգ – տես պայմանագիր՝ արտաքին մատակարարի հետ պայմանագրի կնքում

աքցանի մեջ առնում – захват в клещи – pincer movement

Հակառակորդի վրա միաժամանակյա գրոհ երկու հակադիր կողմերից:

## Բ (ԲԵՆ)

Բ-2 «Սպիրիտ» – Б-2 «Спирит» – В-2 “Spirit”

Ամերիկյան սակավանկատելի ծանր ռազմավարական ռմբակոծիչ:

բաբան (պտմ.) – катапульта – catapult

բազաժ – багаж – baggage

բազա – база – base

1. Մատակարարմամբ, պահպանմամբ ու սպասարկմամբ զբաղվող կազմակերպություն, հիմնարկ: 2. Որևէ բանի գոյության հիմքը և պայմանը, զարգացման հենքը:

ապահովման առաջադիր բազա – передовая операционная база – advanced operations base

ապահովման բազա – база обеспечения – 1. base of operations, 2. logistics base

Տարբեր պետությունների ՋՈՒ-երի թիկունքի կազմում գործող հաստիքային կամ ոչ հաստիքային հիմնարկ, որն զբաղվում է նյութական ապահովմամբ:

թիկունքային բազա – тыловая база – logistic base

մատակարարման բազա – база снабжения – supply base



Ջորջի որոշակի խմբավորման մատակարարման համար հատկացվող նյութական միջոցների ընդունման, պահման և առաքման համար նախատեսված զորամասերի ու հիմնարկների համախումբ:

միացյալ թիկունքային բազա – объединенная тыловая база – common pool

միջակա բազա – промежуточная база – intermediate base

մոբիլիզացիոն բազա – мобилизационная база – mobilization base

նյութատեխնիկական ապահովման ժամանակավոր բազա – временная база материально-технического обеспечения – emergency operating base

Սահմանափակ ժամանակահատվածում որևէ տարածքում գործող (տվորաբար՝ նավատորմի) նյութատեխնիկական ապահովման բազա:

նորմատիվային բազա – нормативная база – legal base

Համակարգի, նրա առանձին ենթահամակարգերի ու օղակների գործունեությունը կարգավորող օրենսդրական, նորմատիվ ակտերի, ղեկավար հրահանգների ու կատարողական-բաշխողական փաստաթղթերի համախումբ:

պաշտպանական-արդյունաբերական բազա – оборонно-промышленная база – defense industrial base

ռազմածովային ուժերի թիկունքային ապահովման առաջադիր բազա – передовая база тылового обеспечения военно-морских сил – naval advanced logistic support site

սպառազինության ու տեխնիկայի պահման բազա – база хранения вооружения и техники – weapons storage site

փոխաբեռնման բազա – перевалочная база – transfer site

փոխաբեռնման պահեստային ծովային բազա – запасная морская перевалочная база – alternate water terminal

Հարաբերականորեն փոքր տարածքով և բնակավայրերից հեռու գտնվող

ջրային (ծովային) տերմինալ՝ նախատեսված 2–5 նավերի միաժամանակյա կանգառման համար և կապված օդային, երկաթուղային, ավտոմայրուղային, գետային հաղորդակցության ուղիների հետ:

օպերացիոն բազա – տես *թիկունք՝ օպերատիվ թիկունք 2*

Գործող զորամիավորումների գոտում թիկունքային տարածք, որը ռազմատնտեսական ու օպերատիվ-տեխնիկական տեսակետից սարքավորված է զորքերի օպերացիաների ապահովման համար: Ներկայումս ՌԴ-ում օգտագործվում է «օպերատիվ թիկունք» տերմինը, իսկ այլ արտասահմանյան պետություններում «օպերացիոն բազա» տերմինն օգտագործվում է միայն հեռավոր ՌԳԹ-ում գործող արշավազորի առնչությամբ:

**բազավորում** – базирование – 1. basing, stationing, 2. deployment

Տեղաբաշխման տարածքի, այնտեղ գտնվող մասնագիտական ենթակառուցվածքի (հաղորդակցության ուղիներ, կապի ցանց, նյութական միջոցների և զույքի պահեստներ, զորակայաններ, նորոգման արհեստանոցներ, ռազմածովային զորակայաններ, նավահանգիստներ ու նավանորոգարաններ, թռիչքադաշտեր (վրագետնյա, տախտակամածային), հանգարներ, զանազան կառույցներ) օգտագործումը ցամաքային, նավատորմային, ավիացիոն զորամասերի ու զորամիավորումների տեղաբաշխման, մարտական պատրաստության, խաղաղ պայմաններում ամենօրյա գործունեության և պատերազմների ժամանակ մարտական գործողությունների վարման արդյունավետ ապահովման համար:

առաջադիր բազավորում – передовое базирование – forward stationing

տախտակամածային բազավորմամբ ավիագունդ – авиаполк морского базирования, авиаполк палубного базирования – carrier air wing, carrier air group

**բազիսային տարի** – базисный год – base year

Տերմին, որն օգտագործվում է այն դեպքում, երբ ծրագրի արժողությունը որոշվում է ըստ ընթացիկ տարվա արժեքային արտահայտման:

**բազմագործառուրթային** – տես *բազմաֆունկցիոնալ*

**բազմազանեցում** – диверсификация – diversification

1. Համախմբում առկա բազմազանության չափը: 2. Ուսկերից պաշտպանվելու մեթոդ, որի հիմքում դրված է օգտագործվող ֆինանսական գործիքների տեսակների, ռեսուրսների (առաջին հերթին՝ էներգակիրների) աղբյուրների, արտադրատեսակների, ներդրումների օբյեկտների այլազանության ապահովումը՝ որևէ մեկ սուբյեկտից կախվածության աստիճանը նվազեցնելու նկատառումով:

**բազմազգ** – многонациональный – multinational, combined

1. Տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված: 2. Տարբեր ազգերի համար նախանշանակված:

բազմազգ բրիգադ – многонациональная бригада – multinational brigade

բազմազգ դոկտրին – многонациональная доктрина – multinational doctrine

բազմազգ զինվորական թվակազմ – многонациональный воинский контингент – combined force

բազմազգ զորավարժություն – многонациональные учения – multinational exercise

բազմազգ զորքերի (ուժերի) օպերացիա – операция многонациональных войск (сил) – combined operation, multinational operation

բազմազգ թիկունքային ապահովում – многонациональное тыловое обеспечение – combined logistic support (NATO), multinational logistics (US)

Բազմազգ ուժերի թիկունքային (նյութատեխնիկական) ապահովման համար երկու կամ ավելի պետությունների (որևէ ռազմական դաշնադրության անդամների) կողմից որոշակի ռեսուրսների միավորում՝ հետագայում համա-

դասող մարմնի որոշմամբ օգտագործելու նպատակով:

բազմազգ ինտեգրված բուժսանիտարական ստորաբաժանում – многонациональное интегрированное медико-санитарное подразделение – Multinational Integrated Medical Unit

բազմազգ կազմ – многонациональный состав – multinational staff

բազմազգ կազմավորում – многонациональное формирование – multinational formation, combined task-force

բազմազգ միացյալ (միջտեսակային) ուժերի օպերացիա – операция многонациональных объединенных (межвидовых) сил, многонациональная объединенная (межвидовая) операция – combined joint operation

բազմազգ միացյալ (միջտեսակային) օպերատիվ-մարտավարական խումբ – многонациональная объединенная (межвидовая) оперативно-тактическая группа – combined joint task force, CJTF

Մինչև կորպուս թվաքանակով ժամանակավոր կազմավորում, որը որպես բաղադրատարրեր ներառում է ցամաքային, ավիացիոն և ռազմածովային զորամասեր ու ստորաբաժանումներ և նախանշանակված է հատուկ իրադրություններում գործելու համար:

բազմազգ միացյալ (միջտեսակային) օպերատիվ-մարտավարական կազմավորում – многонациональное объединенное (межвидовое) оперативно-тактическое формирование – combined joint task force, CJTF

բազմազգ ուժեր – многонациональные силы – multinational force

բազմազգ ուժերի զորավարժություն – учение многонациональных сил – combined exercise

բազմազգ ուժերի (զորքերի) խմբավորում – группировка многонациональных сил (войск), объединенные союзные силы – combined force

Խմբավորում, որը կազմված է երկու և ավելի դաշնակից պետությունների տրամադրած կազմավորումներից:

բազմազգ ուժերի հրամանատար – ко-мандующий многонациональными силами – multinational force commander

բազմազգ օպերատիվ-մարտավարական խմբի մարտական գործողությունների շրջան – տես *գոտի` համատեղ մարտավարական գործողությունների գոտի*

**բազմակարծություն** – плюрализм – pluralism

Կարծիքների, հայացքների, ուղղությունների, կուսակցությունների ևն բազմազանություն` որպես հասարակական կազմակերպվածքի սկզբունքներից մեկը:

**բազմակենտրոնություն** – полицентризм – polycentrism

1. Քաղաքականության մեջ. հասկացություն, որը բնութագրում է արդի աշխարհի բազմակի քաղաքական կառուցվածքը, որի սուբյեկտները հանդես են գալիս որպես ուժի և զարգացման պետութենական կերպով ինքնիշխան կենտրոններ: 2. Մարդաբանության մեջ. տեսություն, ըստ որի` մարդկային ռասաները ծագել են տարբեր տեսակների նախամարդուց` Երկրագնդի տարբեր շրջաններում:

**բազմակողմանի** – տես *ունիվերսալ 2*

բազմակողմանի հարցերով բաժանմունք – секция по многосторонним вопросам – Multilateral Affairs Section

**բազմանպատակ** – տես *բազմանպատակային*

**բազմանպատակային** – многоцелевой – multipurpose

Ջանազան նպատակների ծառայող, տարաբնույթ խնդիրներ լուծելու ունակ:

**բազմապիսություն** – разнообразие – variety

Համակարգի թվային բնութագրիչ, որը չափվում է նրա նկատելի վիճակների թվի լոգարիթմով: Անհրաժեշտ բազմապիսության օրենքով` կառավարող օբյեկտի բազմապիսությունը պետք է լինի ոչ պակաս, քան կառավարվող համակարգինը:

**բազմաֆիզիոգրանցիչ** – полифизиограф, полиграф – poligraph

Սարք, որի նախանշանակումն է հարցաքննության կամ հատուկ քննազրույցի ժամանակ տրվող հարցերին մարդու պատասխանների հարաբերական ճշմարտացիության որոշումն ըստ ստուգվողի հոգեբանական ու ֆիզիոլոգիական վիճակի (արյան ճնշում, շնչառության և սրտի խփոցների հաճախականություն, քրտնարտադրություն ևն):

**բազմաֆունկցիոնալ** – многофункциональный – multirole

**բազմիշխանություն** – полиархия – polyarchy

Քաղաքական համակարգ, որը հիմնված է ընտրողների աջակցության համար մղվող պայքարում տարբեր խմբերի բաց քաղաքական մրցակցության վրա:

**բազուկա** – базака – bazooka

Ամերիկյան ռեակտիվ հակատանկային նռնականետ:

**բաժանագիծ** – межа – boundary

**բաժանմունք** – տես *մասնաձյուղ*

համագործակցության ծրագրերի բաժանմունք – Секция программ сотрудничества – Collaborative Programs Section

**բաժին** – 1. отдел, 2. раздел – 1. section, branch, 2. section, part

գնումների և մատակարարման բաժին – отдел закупок и снабжения – Procurement and supplies section

Երկրների հետ հարաբերությունների և քաղաքականության բաժին – Отдел по вопросам отношений со странами и политики – Country Relations and Political Affairs Section

թիկունքային ապահովման համադասման համագորային բաժին – общевойсковой отдел координации тылового обеспечения – Joint Logistics Coordination Cell

ինժեներատեխնիկական նախագծերի իրացման բաժին – отдел реализации инженерно-технических проектов – engineering implementation section

ծրագրերի կառավարման բաժին – отдел управления программами – Program Control Section

ծրագրերի և ռազմական համագործակցության բաժին – отдел программ и военного сотрудничества – program and defense cooperation section

հակաօդային պաշտպանության բաժին – отдел противовоздушной обороны – Air Defense Section

Ճգնաժամային կարգավորման քաղաքականության բաժին – Отдел политики кризисного регулирования – Crisis Management Policy Section

մամուլի և զանգվածային լրատվության միջոցների բաժին – отдел прессы и средств массовой информации – Press and Media Section

պաշտպանական համագործակցության բաժին – отдел оборонного сотрудничества – Defense Cooperation Section

սովորական սպառազինությունների վերահսկման բաժին – отдел контроля за обычными вооружениями – conventional arms control implementation section

տեխնոլոգիական նախագծերի իրացման բաժին – отдел реализации технологических проектов – technology implementation section

քաղաքացիական արտակարգ պլանավորման բաժին – отдел гражданского чрезвычайного планирования – Civil Emergency Planning Section

օդային երթևեկության կառավարման բաժին – отдел управления воздушным движением – air traffic control section

օդային տարածքի վերահսկման բաժին – отдел контроля воздушного пространства – airspace control sector

օպերատիվ-հետախուզական բաժին – оперативно-розыскной отдел – investigation and intelligence unit

իրավապահական քրեական ստորաբաժանում, որն զբաղվում է անհետ կորած կամ իրավախախտում կատարած անձանց որոնմամբ՝ հետախուզմամբ:

**բաժնաչափ** – доза – dose

առավելագույն թույլատրելի բաժնաչափ – максимально допустимая доза – maximum permissible dose

բաժնաչափի հզորություն – мощность дозы – radiation dose rate

կլանված բաժնաչափ – поглощенная доза – absorbed dose

ճառագայթահարման բաժնաչափ – доза облучения – radiation dose

ճառագայթահարման թույլատրված սահմանային բաժնաչափ – указанная предельно допустимая доза облучения – operational exposure guide

Առաջադրանքի կատարման ժամանակ ստորաբաժանման անձնակազմի ճառագայթահարման այն առավելագույն չափը, որը նախանշված է ղեկավար փաստաթղթում:

ճառագայթման հավասար բաժնաչափերի գիծ – линия равных доз радиации – dose rate contour line

Քարտեզի, գրաֆիկի կամ տեղագրական քարտեզի վրա պատկերված կետագծային գիծ, որը միացնում է ճառագայթման միևնույն արժեքն ունեցող կետերը:

ճառագայթման վտանգավոր բաժնաչափ – опасная доза облучения – acute radiation dose

**բաժնաչափիչ** – дозиметр – dosimeter

Ռադիոակտիվությունը չափող սարք:

թաղանթային բաժնաչափիչ – пленочный дозиметр – film badge

**բաժնաչափություն** – дозиметрия – dosimetry

1. Ռադիացիայի աստիճանի չափումը:
2. Ռադիացիայի աստիճանի չափման սարքավորումներն ու տեխնիկան:

**բաժնաչափում** – տես *բաժնաչափություն*

**բաժնետոմս** – акция – stock

**բալաստաբեռ** – груз-балласт – flatted cargo

**բալիստիկ** – баллистический – ballistic

1. Չգաբանությանը՝ բալիստիկային վերաբերող, հատուկ:
2. Հրթիռների վերաբերյալ. դրանց այն զինատեսակը, որը թռիչքի մեծ մասը կատարում է բալիստիկական հետագծով, դրա տարատեսակն է միջմայրցամաքային հրթի-

ըն՝ 5500 կմ-ից ավելի հեռահարությամբ:

**բալիստիկա** – տես *ծգաբանություն*

**բալիստիկական** – տես *բալիստիկ*

բալիստիկական բնութագրեր – баллистические характеристики – ballistic characteristics, ballistic performance

**բախազնում** – перкуссия – percussion

Հիվանդի օրգանների հետազոտում ըստ ձայնի, որն առաջանում է մարմնի մակերևույթին մատներով կամ մրձիկով թեթևակի հարվածելու հետևանքով:

**բախարգել** – буфер – buffer

Երկու հակամարտող կողմերի միջև խաղաղապահ ուժերով վերահսկվող ասիմանված տարածք (գոտի)՝ դրանց բախումը կանխելու համար: Ընդհանուր առմամբ՝ երկու հակամարտ ուժերի միջև գտնվող տարածական արգելք՝ պատնեշ:

բախարգելի ստեղծման օպերացիա – операция по созданию буферной зоны – interposition operation

**բախում** – столкновение, соударение – 1. collision, clash, 2. impact

1. Իրար դիպչելը՝ զարկվելը՝ հարված հասցնելը: 2. Հարված: 3. Անմիջական մարտական շփում հակառակորդ կողմերի ռազմական կազմավորումների միջև: 4. Վեճ, ընդհարում, կռիվ:

**բաղադրանյութ** – композит, композиционный материал – composite

**բաղադրատարր** – компонент – component

1. Որևէ բանի բաղադրյալ մասը: 2. Զինված ուժերի որոշակի տեսակի (ցամաքային, ռազմածովային, ռազմաօդային, տիեզերական-հրթիռային) զորամասերն ու ստորաբաժանումները, որոնք որպես բաղադրիչ կազմակերպական միավոր մտնում են միջտեսակային (համազորային) կազմավորման կազմի մեջ:

բաղադրատարրի հրամանատար – командир компонента – component commander, service commander

ցամաքային բաղադրատարր – сухопутный компонент – land component, ground component

Միջտեսակային (համազորային) զորամիավորման (միավորման) կազմի մեջ մտնող ցամաքային ուժերը:

ցամաքային զորքերի հատուկ օպերացիաների բաղադրատարր – компонент специальных операций сухопутных войск – army special operations component

օդային բաղադրատարր – авиационный компонент – air component

Պենտագոնում և ՆԱՏՕ-ում. 1. Ամբողջ օդային ուժերն ու միջոցները՝ անձնակազմը, թռչող ապարատները, տեխնիկական սպասարկման օբյեկտները ևն, որոնք գտնվում են տարածաշրջանային, ենթատարածաշրջանային կամ միավորված ավիացիոն հրամանատարության հրամանատարի ենթակայության տակ: 2. Ռազմական գործողությունների այն մասը, որին մասնակցում են ավիացիայի ուժերն ու միջոցները: 3. Փոքրածավալ հակամարտությունների գոտում՝ բազմազգ օպերատիվ ուժերի ավիացիայի ուժերն ու միջոցները, որոնք գտնվում են իրենց հրամանատարի ենթակայության տակ, բոլոր օդանավերը՝ անկախ այն բանից, թե որ ուժերին են պատկանում՝ ռազմաօդային, ռազմածովային, թե ցամաքային:

օպերատիվ բաղադրատարր – оперативный компонент – task component

օպերացիային աջակցման բաղադրատարր – компонент поддержки операции – operations support element

ԱՄՆ-ում. տարր, որը գտնվում է Միացյալ ուժերի հետախուզության տնօրինության հակահետախուզության կազմում և պատասխանատու է բոլոր օպերացիաներին ու ծառայություններին աջակցման համար:

**բաղադրյալ** – композитный, композиционный – composite

**բաղադրություն** – տես *կազմ 1*

**բաղդատում** – 1. сравнение, сопоставление, 2. сверка, сличение – 1. collation, 2. reconciliation

1. Համենատարբերություն: 2. Որևէ բանի նմանությունը հիմք ընդունելով՝ ստուգելը (մասնավորապես՝ ֆինանսական հաշվետվության բաղադրատու): 3. Հետախուզական տվյալների մշակման գործընթացում. այն փուլը, երբ միևնույն առարկայի վերաբերող երկու կամ ավելի խմբավորված փաստաթղթերի կամ հարողագրությունների բովանդակությունները առադրվում են:

**բանալի** – ключ, код – key

կողպեքի բանալի – ключ от замка – key

**բանալիական** – տես *առանցքային*

**բանակ** – армия – 1. army, 2. armed forces (of a nation)

1. Օպերատիվ միավորում, որը բաղկացած է մի քանի զորամիավորումներից և տարբեր զորատեսակների, հատուկ զորքերի ու թիկունքի առանձին զորամիավորումներից և զորամասերից, որոնք նախանշանակված են օպերատիվ խնդիրներ լուծելու համար: 2. ա) Պետության ՋՈՒ-ի ամբողջությունը, բ) ՋՈՒ-ի մաս (առանց ՌԾՈՒ-ի), գ) միայն ցամաքային զորքերը (ԱՄՆ), դ) մարտնչող սոցիալական խմբերի զինված կազմավորում:

ապստամբական բանակ – повстанческая армия – rebel army, insurgent army

առանձին բանակ – отдельная армия – independent army

Ցամաքային զորքերի համազորային օպերատիվ միավորում, որը մտած է ռազմաճակատի (բանակների խմբի) կամ զինվորական օկրուգի կազմի մեջ և խնդիրներ է կատարում ինքնուրույն օպերացիոն ուղղության վրա, ենթարկվում է ՌԳԹ գլխավոր հրամանատարին կամ գերագույն հրամանատարությանը:

բանակի թիկունքային շրջան – тыловой район армии – army support area

բանակի հետ տեղափոխվող քաղաքացիական անձ – гражданское лицо, следующее вместе с армией – camp-follower

բանակի շարքերն ընդունել – зачислить в армию – muster

բանակների խումբ – группа армий – army group

Բրիտանական հռենոսյան բանակ – Британская рейнская армия – British Army of the Rhine

գործող բանակ – действующая армия – field army

դաշտային բանակ – полевая армия – field army

Ցամաքային զորքերի հիմնական օպերատիվ (ՆԱՏՕ-ում՝ հիմնական մարտավարական) միավորումը, որը ներառում է 2-4 բանակային կորպուս, հրետանային բրիգադ, տանկային խումբ և այլն:

զանգվածային բանակ – массовая армия – mass army

Բազմաքանակ զինված ուժեր, որոնց պետությունը սովորաբար ծավալում է պատերազմի ժամանակ՝ պահեստազորից քաղաքացիների (զինապարտների) զգալի զանգվածների ներգրավմամբ: Խաղաղ ժամանակ ՋՈՒ-ն սովորաբար պահվում է կրճատ կազմով՝ կադրային կազմակերպվածքով:

կադրային բանակ – кадровая армия – standing army

Մշտական կանոնավոր բանակ (ՋՈՒ), որն ստեղծվել է գործում է կադրային համակարգի (կադրային կազմակերպվածքի) սկզբունքով՝ խաղաղ ժամանակ կրճատ կազմով:

կանոնավոր բանակ – регулярная армия – regular army

մշտական բանակ – постоянная армия – standing army

Պաշտպանության բանակ – Армия обороны – Defense Army

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Իսրայելի Պետության զինված ուժերի անվանումը:

ջախջախված ու նահանջող բանակ – разгромленная и отступающая армия – rout

վարձու բանակ – наемная армия – mercenary army

օդային բանակ – воздушная армия – Air Force



**բանակային** – армейский – army

Բանակին վերաբերող, բանակին հատուկ:

բանակային խմբավորում – армейская группировка, группировка войск – army force, army grouping

բանակային քահանա – военный священник, капеллан – chaplain

**բանակաշինություն** – տես *զինված ուժեր՝ զինված ուժերի շինարարություն*

բանակաշինության կառավարման համընդհանուր համակարգ – տես *ՋՈՒ՝ ՋՈՒ-ի շինարարության կառավարման համընդհանուր համակարգ*

**բանակատեղի** – տես *ճամբար*

**բանակցություն** – переговоры – negotiation

Կողմերի հաղորդակցում՝ որևէ հարցի վերաբերյալ երկուստեք ընդունելի համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

խաղաղ բանակցություններ – мирные переговоры – peace talks

հաշտության բանակցություններ – տես *բանակցություն՝ խաղաղ բանակցություններ*

նախապատրաստական բանակցություններ – տես *բանակցություն՝ նախնական բանակցություններ*

նախնական բանակցություններ – предварительные переговоры, прелиминарные переговоры – preliminary negotiations, preparatory negotiations

**բանաձև** – резолюция – resolution

**բանավոր թարգմանիչ** – устный переводчик – interpreter

**բանդ** – տես *ամբարտակ*

**բանդիտ** – бандит, разбойник – bandit, gangster

**բանդկազմավորում** – տես *զինյալ՝ զինյալ խումբ*

**բանել** – работать – operate, act

**բանելակարգ** – режим – mode

Տեխնիկական միջոցների, կառույցների գործունեության ճշգրիտ սահմանված կարգ:

էլեկտրոնային միջոցների անջատման բանելակարգ – режим отключения электронных средств – electronic silence

Վիճակ, երբ բոլոր ձառագայթող էլեկտրոնային սարքերը (կամ դրանց մի մասը) անջատվում են հակառակորդի հետախուզության համար աննկատ մնալու նպատակով:

ինքնաբավության բանելակարգ – режим самодостаточности – mode of self-sufficiency

Համակարգի հատկություն, երբ նա իր գործունեությամբ բավարարում է իր հիմնական պահանջմունքները՝ առանց արտաքին հավելյալ միջոցների ներգրավման:

ինքնաթիռի վերթիռի բանելակարգ – режим подъема самолета – climb mode

օպտիմալ բանելակարգով հեռագնացություն – дальность хода в оптимальном режиме, дальность хода при данном запасе топлива и экономичной скорости – endurance distance

Այն առավելագույն հեռավորությունը, որը կարող է ցամաքային, ջրային կամ օդագնացային մեքենան անցնել խնայողական հաստատուն արագությամբ՝ առանց լրալիցքավորման:

օպտիմալ բանելակարգով շարժման տևողություն – время движения в оптимальном режиме – endurance time

Այն ժամանակը, որը կարող է ծախսել հաստատուն արագությամբ լողացող նավը՝ ի հաշիվ իր լրիվ լցված վառելիքի:

**բանկ** – банк – bank

**բանորսություն** – выведывание информации в ходе беседы – elicitation intelligence

Տեղեկությունների ձեռքբերում այնպես, որ հարցաքննվողը կամ հարցաքննվողները չեն էլ կռահում, թե ինչ պատճառով են իրենց հարցուփորձ անում:

**բանտ** – тюрьма – prison



**բանտախոց** – тюремная камера – cell

**բանտարկյալ** – заключенный – prisoner

այլատեսակ բանտարկյալ – задержанный, который содержится в тюрьме Вооруженных сил США, но не является военным заключенным – other detainee

Բանտարկյալ, որը գտնվում է ԱՄՆ-ի ՋՈՒ-ի բանտում, սակայն զինվորական կալանավոր չէ:

**բանտարկություն** – тюремное заключение, заключение под стражу – custody, imprisonment, confinement

խիստ բանտարկություն – заключение под строгий арест – close arrest

**բաշխում** – распределение – distribution

1. Որոշ օբյեկտների միջև բաժանելը՝ յուրաքանչյուրին առանձին մաս հատկացնելով: 2. Տեղադրում ըստ ժամանակի կամ հաջորդականության: 3. Արտադրական հարաբերություններով պայմանավորված բաժանում՝ պատրաստի արտադրանքի տարածում հասարակության մեջ: 4. Փուլային տարածությունում հավանականության խտություն (նաև՝ բաշխման ֆունկցիա):

արդյունաբերական և ֆինանսական մասնակցության բաժինների բաշխում – распределение долей промышленного и финансового участия – work/cost distribution

բաշխման ելակետ – пункт отправления – point of origin

1. Մարտական գործողությունների ծավալման սկզբնակետ: 2. Արտաթրիչքի վայր:

բաշխման խողովակագիծ – канал распределения – distribution pipeline

բաշխման կետ – распределительный пункт – distribution point

բաշխման համակարգ – система распределения – distribution system

բաշխման պատասխանատու – ответственный по сбыту – distribution manager

Մարտական հրամանատարի իրավասության շրջանակներում տեղաբաշխում կատարող անձ:

բաշխման պլան – план распределения – distribution plan

բաշխում բնակարաններով – размещение по квартирам – billet

էլեկտրամագնիսական ալիքների սպեկտրի համատեղ բաշխում – совместное распределение спектра электромагнитных волн – joint electromagnetic spectrum management operations

համատեղ բաշխում – совместное распределение – joint distribution

ֆոնդերի բաշխում – распределение фондов, перечисление фондов – allotment

**բավարարում** – 1. довольствие, 2. удовлетворение – allowance

1. Պահանջների՝ պահանջումների գոհացում, մատակարարում, ապահովում: 2. Ջինժառայողների սննդային, իրային և դրամական ապահովում:

դրամական բավարարում – денежное довольствие – 1. military pay, 2. pay and allowances

պարենային բավարարում – տես *ապահովում՝ պարենային ապահովում*

վճարում ըստ դրամական բավարարման վկայականի – выплата зарплаты по аттестату – allotment

**բատիսկաֆ** – батискаф – submersible

**բար** – бар – bar

Ճնշման միավոր:

**բարդույթ** – комплекс – complex

Առանձին հոգեկան պրոցեսների միավորում մեկ ամբողջության մեջ, որը տարբեր է իր տարրերի գումարից, չգիտակցված կազմավորում, որը պայմանավորում է գիտակցության կառուցվածքը և ուղղվածությունը:

ստոկհոլմյան բարդույթ – стокгольмский синдром – Stockholm Syndrome

Հոգեբանական հակազդում վախին ու ստրեսին, ինչի հետևանքով պատանդը (զոհը) տոգորվում է համակրանքով դեպի իր բռնավորը:

**բարեխոսել** – տես *պաշտպանություն՝ պաշտպանության տակ առնել*

«**Բարետ**» – «Барет» – “Barrett”

Ամերիկյան 0,5 մատնաչափ (12,7 մմ) տրամաչափի դիպուկահարական հրացան:

**բարեփոխում** – տես *վերափոխում*

անվտանգության ապահովման հատվածի բարեփոխում – տես *վերափոխում` անվտանգության ապահովման հատվածի վերափոխում*

ժողովրդավարական բարեփոխում – տես *վերափոխում` ժողովրդավարական վերափոխում*

պաշտպանական բարեփոխում – տես *վերափոխում` պաշտպանական վերափոխում*

**բարիկադ** – баррикада – barricade

**բարձրագույն** – высший – supreme

**բարձրաթռչնություն** – высота полета – absolute height, flight altitude, flight height

Թռչող ապարատի գտնվելու կետի հեռավորությունն ուղղաձիգով գրոյական հարթությունից. բացարձակ` ծովի մակերևույթից, իրական` երկրի մակերևույթից:

**բարձրակետ** – 1. высшая точка, 2. точка кульминации – 1. height, 2. culminating point

**բարձրահասություն** – потолок – ceiling  
Այն առավելագույն բարձրությունը, որին կարող է հասնել թռչող ապարատը՝ ըստ իր տեխնիկական հնարավորությունների:

**բարձրաչափ** – высотомер – altimeter  
Թռչող ապարատի թռիչքի բարձրությունը տարբեր եղանակներով չափող սարքերի խմբի ներկայացուցիչ:

**բարձրաչափություն** – альтиметрия, высотометрия – altimetry  
Կիրառական երկրաչափության բաժին, որն զբաղվում է բարձրությունների (այդ թվում և անմատչելի) չափմամբ:

երանգային բարձրաչափություն – տես *գունավորում` բարձրաչափական գունավորում*

ռադիոտեղորոշումային բարձրաչափություն – радиолокационная высотометрия, радарная альтиметрия – radar altimetry  
Թռչող ապարատի բարձրությունը ռադարով չափելու եղանակ՝ հարաբերականորեն հարթ մակերևույթի կիրառմամբ:

**բարձրավանդակ** – տես *սարահարթ*

**բարձրացում** – 1. набор высоты, подъем, 2. возвышение – 1. climb, 2. elevation, 3. lift

**բարձրության** – высотный – altitude, altitudinal, high altitude

բարձրության խոռոչ – высотная мертвая зона – altitude hole

Ուղիորդարձաչափի էկրանին առաջացած մեռյալ գոտի:

բարձրության հապաղում – высотная задержка; задержка развертки в индикаторе кругового обзора для устранения сигналов, обусловленных мешающими отражениями от земной поверхности – altitude delay

Ժամանակային հապաղում, որն ստեղծվում է ռադիոտեղորոշիչի ազդանշանի հաղորդման պահի և ցուցասարքով հետևման սկզբնապահի միջև, որպեսզի շրջանային տեսածրման ցուցասարքում նվազեցվի բարձրության խոռոչի մեծությունը:

**բարձրություն** – высота – height

անցաթիռի բարձրություն – высота пролета – overhead clearance

Գետնի կամ ջրային մակերևույթի և դրանց վերևում գտնվող ինչ-որ խոչընդոտի միջև եղած նվազագույն հեռավորությունն ուղղաձիգով:

բարձրության թվանիշ – отметка высоты – spot elevation, spot height

Քարտեզի վրա ստուգիչ կետ, որի բարձրությունը նշված է:

բարձրության դեկ – руль высоты – elevator

բարձրության տվիչ – датчик высоты – altitude datum

բարձրության փոփոխման արագաչափ – տես *փոփոխաչափ*

բարձրություն ըստ խտության – высота по плотности – density altitude

Որոշակի բարձրության համապատասխանող օդի խտություն:

բարձրություն ըստ ճնշման – տես բարձրություն՝ ճնշաչափական բարձրություն

բարձրություն ծովի մակերևույթից – абсолютная высота, высота над уровнем моря – altitude, elevation

բացարձակ բարձրություն – տես բարձրություն՝ բարձրություն ծովի մակերևույթից

գործիքային շտկված բարձրություն – տես բարձրություն՝ ճշգրտված բարձրություն

կրիտիկական բարձրություն – критическая высота, расчетная высота – critical altitude

Գետնից բարձր գտնվող երևակայական հարթություն, որից վեր օդանավը կամ ռեակտիվ հրթիռը դադարում են նորմալ բանելուց:

հատույթի բարձրություն – տես հավասարագծերի միջև հեռավորություն

ճնշաչափական բարձրություն – барометрическая высота, высота по давлению – pressure-altitude, barometric altitude

Ըստ մթնոլորտային ճնշման հաշվարկված բարձրություն:

ճշգրտված բարձրություն – уточненная высота – calibrated altitude

մեծ բարձրություն – большая высота – high altitude

Պայմանական՝ 1000 մ-ից մեծ բարձրություն:

նետման բարձրություն – высота сбрасывания – release altitude

ինքնաթիռի թռիչքի բարձրություն, որում կատարվում է հրթիռի արձակում, ռմբանետում, քարշաճոպանով ամրացված թիրախի անջատում են:

նվշած առավելագույն բարձրություն – наибольшая высотная отметка – maximum elevation

նվազագույն անվտանգ բարձրություն – минимальная безопасная высота – minimum safe altitude, safety height

Թռիչքի այն նվազագույն բարձրությունը, որից ցածր թռչելը վտանգավոր է տարբեր բարձունքների կամ վրագետնյա այլ խոչընդոտների առկայության պատճառով:

նվազագույն բարձրությամբ թռիչքի համակարգ – система полета на минимальной высоте – terrain clearance system

Համակարգ, որի շնորհիվ ինքնաթիռը կարող է շարժվել այն նվազագույն բարձրությունն ունեցող հարթության մեջ, որտեղ չի կարող բախվել որևէ վրագետնյա խոչընդոտի:

ռմբանետման բարձրություն – высота бомбометания – bombing height

ցածրաթռչնության նվազագույն բարձրություն – минимальная высота снижения – minimum descent altitude

օպտիմալ բարձրություն – оптимальная высота – optimum height

**բարձունք** – 1. высота, возвышенность, 2. холм – 1. elevation, 2. hill

իշխող բարձունք – командная высота – commanding height

Շրջակա տեղանքին տիրապետող բարձունք, որից դիտվում են շրջապատի կարևոր տարրերը:

**բարոյալքություն** – տես բարոյալքում

**բարոյալքում** – деморализация – demoralization

Բարոյական ոգու, կարգապահության, բարոյականության անկում, բարոյական քայքայում, ինչի հետևանքով անձնակազմը կորցնում է անհրաժեշտ բարոյահոգեբանական հատկությունները, պատերազմի զրկանքները կրելու կարողությունը, հակվում է պայքարը դադարեցնելուն, անձնատուր լինելուն:

**բարոյական դաստիարակություն** – нравственное воспитание – morale education

**բարոյական երկչտություն** – տես վախկոտություն՝ բարոյական վախկոտություն

**բարոյակրոնական դաստիարակություն** – морально-религиозное воспитание – character guidance

**բարոյահոգեբանական** – морально-психологический – moral and psychological

բարոյահոգեբանական ապահովում – морально-психологическое обеспечение – psychological and moral support

Ռազմական (մարտական) գործողությունների ապահովման հիմնական տեսակներից մեկը. այն միջոցառումների համալիրը, որոնք նպատակաուղղված են բանակի բարոյական ոգին, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակն ու կարգապահությունը, զինվորական կարգուկանոնը բարձր մակարդակով ձևավորելուն ու պահպանելուն, զինվորական կոլեկտիվները համախմբելուն և հակառակորդի տեղեկատվաքարոզչական ազդեցությանը հակազդեցություն գործելուն:

բարոյահոգեբանական գործոն – морально-психологический фактор – moral and psychological factor

բարոյահոգեբանական կայունություն – морально-психологическая устойчивость – moral and psychological stability

Անհատի կամ կոլեկտիվի որոշակի հոգեկան հատկությունների ու որակների համախումբ, որի շնորհիվ օրգանիզմն անզամ անբարենպաստ գործոնների պայմաններում պահպանում է համարժեք և արդյունավետ կենսագործունեության կարողությունը:

բարոյահոգեբանական պատրաստում – морально-психологическая подготовка – moral and psychological training, moral and psychological preparation

Ստորաբաժանումներում, զորամասերում կազմակերպվող միջոցառումների համակարգ, որոնք նպատակաուղղված են անձնակազմի մեջ խաղաղ ու պատերազմական ժամանակ պարտականությունները հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ բարոյական, հոգեբանական և ռազմամասնագիտական հատկությունների ձևավորմանը:

բարոյահոգեբանական վիճակ – морально-психологическое состояние – moral and psychological condition

Անձնավորության, կոլեկտիվի որակական որոշակիություն, որը բնութագրում է հոգեկան պրոցեսների, կոլեկտիվում միջանձնային հարաբերությ-

յունների ուղղվածությունն ու դինամիկական, հանդես է գալիս որպես բանակի հոգևոր ներուժի և բարոյական ոգու կոնկրետ ձևի դրսևորում և իրացում, զորքերի մարտական կարողությունների կարևոր բնութագիր:

**բացազատում** – развертывание – deployment

Երթային վիճակից տեխնիկական միջոցի (կայան, սարք, գործիք և այլն) բերում աշխատանքային վիճակի:

տեղորոշումային կայանի բացազատում – развертывание локационной станции – local station deployment

**բացարձակապաշտական հավակնություն** – абсолютная претензия – absolute pretension

**բացարձակապաշտություն** – абсолютизм – absolutism

Ցանկացած փիլիսոփայական համակարգ կամ ցանկացած հավատամք, որոնք պնդում են, թե ճանաչողությունը կամ որևէ այլ հատկություն բացարձակապես հավաստի և անսխալական են:

**բացարձակապետություն** – абсолютная монархия, абсолютизм – absolute monarchy, absolutism

Միապետական կառավարման ձև, որը մոտ է դիկտատուրայի, և որի դեպքում ամբողջ պետական (օրենսդիր, գործադիր, դատական, ռազմական), իսկ երբեմն նաև հոգևոր (կրոնական) իշխանությունը կենտրոնացված է միապետի ձեռքում:

**բաց երկինք** – открытое небо – open skies

Օդային տարածության միջազգային իրավական ռեժիմ, որը սահմանված է զինաթափման պայմանագրերի կատարումը վերահսկելու նպատակով և նախատեսում է միմյանց համար իրենց օդային տարածքը բացելու մասին պայմանավորված պետությունների տարածքներում տեղի ունեցող ռազմական գործունեության վերահսկման նպատակով զենք չկրող ինքնաթիռների թռիչքներ:

**բաց քաղաք** – открытый город – open city

Մեծ կորուստներից խուսափելու համար հակառակորդին առանց մարտերի հանձնված քաղաք:

**բացակ** – просвет, зазор – clearance, airspace

**բացակա** – отсутствующий – absent

**բացառում** – исключение – elimination

**բացասական** – отрицательный – negative

**բացատ** – поляна – clearing

**բացարկում** – отвод – challenge

**բացարձակ մեծամասնություն** – абсолютное большинство – absolute majority

Ընդհանուր թվի (ծայների, տեղերի ևն) 50 %-ը գոնե մեկ հաշվարկային միավորով գերազանցող թիվ:

**բացթողում** – 1. отпускание, сбрасывание, 2. упущение, 3. пропуск, 4. отпуск – 1. release, dumping, 2. omission, 3. passing, 4. release

**բացովի դարձակ** – раздвижной ключ – adjustable wrench

**բաք** – бак, цистерна – tank

վայրնետովի բաք – сбрасываемый бак – drop tank

Ինքնաթիռի վառելիքի լրացուցիչ բաք, որը դատարկվելուց հետո կարող է դեմ նետվել:

վառելիքային բաք – топливный бак – tank

**բեկակալ** – лубок, шина – splint

**բեկում** – 1. перелом, 2. преломление, рефракция – 1. turning point, 2. refraction

բեկման կետ – տես *շրջադարձ` շրջադարձի կետ*

**բենզապոմպ** – бензонасос – bowser

**բենզատար** – бензовоз – fuel tanker

Մեքենա, որը նախատեսված է բենզին տեղափոխելու համար:

**բենզին** – бензин – petrol, gasoline

ավիացիոն բենզին – авиационный бензин, авиабензин – aviation gasoline, AVGAS

**բեռ** – груз – 1. cargo, 2. load

ապաեզրաչափքային բեռ – негабаритный груз – oversized cargo

Բեռ, որի եզրաչափքերը չեն համապատասխանում հաստատված մեծություններին:

առանձնակի կարևոր ու շտապ բեռ – особенно важный и срочный груз – immediately vital cargo

առաջնադաս բեռ – груз первой очереди – essential cargo

արժեքավոր բեռ – ценный груз – valuable cargo

արտաեզրաչափքային բեռ – груз завышенного габарита – oversized cargo

Սահմանվածից մեծ եզրաչափքով բեռ:

բեռի արտաքին կախոց – внешняя подвеска груза – sling

բեռի դուրսշարտում – выбрасывание груза за борт – jettison

Աղետի ժամանակ բեռի` ինքնաթիռից, մեքենայից, նավից ևն վայրնետքը:

բեռների արագավայրնետք – скоростное сбрасывание грузов – high velocity drop

Վայրնետք, որի դեպքում վայր նետվող առարկաների արագությունը մեծ է 10 մ/վրկ-ից և փոքր` ազատ անկման դեպքի համար հաշվարկված արագությունից:

բեռների արտածգում – выброска грузов (с вытягиванием из фюзеляжа) с помощью вытяжных парашютов – extraction drop

Բեռների նետում ինքնաթիռից` արտածգիչ պարաշյուտների կիրառմամբ:

բեռների մատակարարման նշանակված օր – назначенная дата поставок грузов – required delivery date

բեռներն առաքման պատրաստող ստորաբաժանում – подразделение подготовки грузов к отправке – cargo deployment function

զանգվածային բեռ – массовый груз – bulk

զինվորական բեռ – воинский груз – military cargo

Սպառազինությունը, ռազմական տեխնիկան և այլ նյութական միջոցներ, որոնք նախատեսված են զորքի համար և ընդունված են տարբեր տեսակի փոխադրամիջոցներով տեղափոխելու համար:

ընդհանուր բեռ – генеральный груз – general cargo

Փաթեթավորված հատով բեռ՝ ապրանք (արտադրանք):

ծանր բեռ – тяжелый груз – heavy-lift cargo

ծանր բեռների իջեցում – выброска тяжелых грузов – heavy drop

Բեռների պարաշյուտային իջեցման համակարգ:

հատուկ բեռ – специальный груз – special cargo

հետադարձ բեռ – обратный груз – return load

Անձնակազմ և/կամ բեռ, որը տվյալ փոխադրամիջոցով պետք է վերադառնա:

մատակարարական բեռների շարժի սխեմա – схема движения снабженческих грузов – supply chain flow

ոչ հաստիքային բեռ – нештатный груз – non-unit-related cargo

Բեռ, որը չի վերաբերում՝ պատկանում տվյալ ստորաբաժանմանը:

պայթյունավտանգ բեռ – взрывоопасный груз – explosive cargo

Արկեր, հրթիռներ, ռումբեր, հրետանային ռազմամթերք ևն:

սահմանափակ վտանգավորությամբ ավիաբեռ – ограниченно опасный авиагруз – restricted dangerous air cargo

Բեռ, որի փոխադրման ժամանակ անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ նախագրուշական միջոցներ:

սահմանվածից մեծ եզրաչափերով բեռ – տես բեռ՝ արտաեզրաչափային բեռ

ստանդարտ բեռ – стандартный груз – standard load

Նախապես սահմանված չափեր ու կշիռ ունեցող կողավորված կամ համարակալված բեռ:

վտանգավոր բեռ – опасный груз – dangerous cargo, hazardous cargo

փաթեթավորված բեռ – пакетированный груз – unitized load

օգտակար բեռ – полезный груз – payload

**բեռնաթափման-անցաթողման ունակություն** – разгрузочно-пропускная способность – clearance capacity

Նավահանգստի կարողությունը՝ արտահանելու ժամանող բեռները:

**բեռնախցիկ** – 1. багажник, 2. багажное отделение – 1. carrier, 2. boot

**բեռնակիր** – носильщик – redcap

**բեռնահարթակ** – տես բեռնային տակդիր

**բեռնաճոպան** – грузовой строп – cargo sling

**բեռնամփոփ** – контейнер – container, pod, shelter

Բազմաշրջանառու ստանդարտացված հարմարանք՝ բեռները ավտոմեքենաներով, երկաթուղով, օդանավերով, ծովային նավերով և այլ փոխադրամիջոցներով փոխադրելու և մի միջոցից մեկ այլ միջոցի մեքենայացված եղանակով տեղափոխելու համար:

ընդհանուր օգտագործման բեռնամփոփ – контейнер общего пользования – common-use container

կասետային բեռնամփոփ – кассетный контейнер – dispenser

Օդային փոխադրումներում կիրառվող սարք կամ բեռնարկը, որը նախատեսված է ռազմամթերք տեղափոխելու և իջեցնելու համար:

**բեռնամփոփատար** – контейнеровоз – containership

**բեռնամփոփավորում** – контейнеризация – containerization

**բեռնասայլակ** – տես սայլակ 2



**բեռնատար** – տես *ավտոմեքենա՝ բեռնատար ավտոմեքենա*

**բեռնատարողունակություն** – грузоместимость – bale cubic capacity

Բեռնատար փոխադրամիջոցի այն տարածքը, որը կարող է օգտագործվել բեռներ տեղադրելու համար:

**բեռնատեղ** – տես *բեռնախցիկ*

**բեռնարգելանք** – տես *էմբարգո*

**բեռնարկղ** – տես *բեռնամփոփ*

**բեռնացանց** – грузовая сеть – cargo net

**բեռնափոխադրում** – грузоперевозка – traffic, cargo transportation

արտակարգ բեռնափոխադրում – транспортировка спецгруза – exceptional transport

Երկաթուղային տերմինաբանության մեջ. այնպիսի բեռի տեղափոխում, որի չափը, քաշը կամ պատրաստումը հատուկ դժվարություն են առաջացնում:

բեռնափոխադրման տեխնիկական ուղեկցում – техническое сопровождение перевозки – technical escort

Տեխնիկական որակավորում ունեցող և համապատասխան կերպով հանդերձված անձ, որն ուղեկցում է կարևոր և գաղտնիություն պահանջող բեռի տեղափոխումը:

բեռնափոխադրումների վերահսկման կետ – пункт контроля грузовых перевозок – choke-point

**բեռնափոկ** – տես *բեռնաճուպան*

**բեռնվածություն** – տես *բեռնվածք*

անվանական բեռնվածություն – номинальная нагрузка – rated load

**բեռնվածք** – нагрузка – load

թույլատրելի աշխատանքային բեռնվածք – допустимая рабочая нагрузка – safe working load

թույլատրելի բեռնվածք – допустимая нагрузка – allowable load

մարտական բեռնվածք – боевая нагрузка (ЛА) – combat load, war load

ռմբային բեռնվածք – бомбовая нагрузка – bomb load

Խոցման ռմբակոծիչ միջոցների այն զանգվածը, որը կրում է ինքնաթիռը:

օգտակար բեռնվածք – полезная нагрузка – payload

**բեռնում** – погрузка – 1. embarkation, 2. loading

բեռնման-բեռնաթափման աշխատանքներ – погрузочно-разгрузочные работы – materials handling

Ուղանական գույքի տեղափոխում:

բեռնման-բեռնաթափման գծով ավագ – старший по погрузочно-разгрузочным работам – loadmaster

Անձնակազմի անդամ, որը պատասխանատու է ինքնաթիռի բեռնման/բեռնաթափման համար:

բեռնման ենթախումբ – погрузочная подгруппа – embarkation unit

Ջինվորական անձնակազմի և նրան պատկանող զենքի ու տեխնիկայի ժամանակավորապես կազմավորված միավոր, որը նախանշանակված է միևնույն տրանսպորտային ստորաբաժանման նավերով տեղափոխման:

բեռնման կետ – погрузочный пункт – loading point

բեռնման շրջան – տես *նստեցում՝ նստեցման շրջան*

բեռնման պլան – план погрузки – loading plan, load plan

Փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է հրահանգներ զինվորական անձնակազմը և նրան պատկանող զենքն ու տեխնիկան բեռնելու կազմակերպման, պաշարների ու տեխնիկայի քանակակազմի, ավտոճանապարհներով, երկաթուղով, օդային կամ ծովային ուղիներով տեղափոխության ժամանակացույցի, փոխաբեռնման կետերի և համապատասխան գործողությունների կատարման վերաբերյալ:

բեռնման վայր – пункт погрузки – pick-up point

բեռնվածության բաշխիչ – распределитель нагрузки – load spreader



Բեռի տակդիր՝ ճնշումը նվազեցնելու համար:

բեռնումը վերահսկող խումբ – группа контроля за погрузкой – load control group

տակդիրներով բեռնում – погрузка на поддонах – palletized unit load

տարաբաշխված մարտական բեռնում – рассредоточенная боевая погрузка – combat spread loading

Միևնույն զորամասի զորքի ու տեխնիկայի տեղափոխում մի քանի փոխադրամիջոցներով:

տարածաօպտիմալ բեռնում – пространственно-оптимальная погрузка – administrative loading

Նյութական միջոցների բեռնում տեխնոլոգիական պահանջների հաշվառմամբ, որպեսզի բեռնվածքը լինի հնարավորինս հավասարաչափ և զբաղեցնի ամբողջ մակերեսը:

**բեռնունակություն** – грузоподъемность – carrying capacity, load capacity

Առավելագույն զանգվածը, որը տվյալ փոխադրամիջոցը որոշակի պայմաններում կարող է բարձրացնել, տեղափոխել կամ փոխադրել:

օդային փոխադրամիջոցի բեռնունակություն – грузоподъемность авиационного транспорта – airlift capability

**բժիշկ** – врач, доктор – doctor

շտապօգնության բժիշկ – врач скорой помощи – first responder

Առաջին բժշկական օգնություն ցույց տվող բժիշկ:

«Բժիշկներ առանց սահմանների» – «Врачи без границ» – “Médecins Sans Frontières”, MSF, Doctors Without Borders

**բժշկական** – 1. տես բուժական, 2. врачебный – 1. տես բուժական, 2. medical

1. Բժշկությանը, բուժմանը վերաբերող, բուժամակարգին պատկանող: 2. Բժշկին հատուկ, վերաբերող:

բժշկական զննում – տես բուժզննում

բժշկական ստորաբաժանում – տես բուժ-ստորաբաժանում

բժշկական քննություն – медобследование – medical examination

**բժշկություն** – медицина, врачевание – medicine

1. Բուժման արվեստ՝ գիտություն, բժշկում: 2. Բժիշկ լինելը:

կանխարգելիչ բժշկություն – профилактическая медицина – preventive medicine

Գործողություններ՝ նպատակաուղղված վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը արգելելուն կամ դրա հնարավորությունը նվազեցնելուն:

ռազմա-քաղաքացիական բժշկություն – военно-гражданская медицина – civil-military medicine

**բիծ** – пятно – spot

**բինտ** – бинт – bandage

**բիոնիկա** – бионика – bionics

Կենսաբանությանն ու տեխնիկային սահմանակից գիտություն, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների կազմակերպման ու գործունեության սկզբունքները՝ այդ հիմքի վրա նոր տեխնիկական համակարգեր ստեղծելու նպատակով:

**բիպլան** – биплан – biplane

Մեկը մյուսի վերևում տեղադրված երկու թևեր ունեցող ինքնաթիռ:

«Բլեկհոուկ» – «Блэкхоук» – “Blackhawk” UH-60

Ամերիկյան տրանսպորտային ՌԷՀ-60 ուղղաթիռ (բռց. «Սև շահեն»):

**բլինդաժ** – блиндаж – blindage, blind, dugout

Խրամատի կողքին արված ապաստարան, փակ տիպի դաշտային ամրաշինական կառույց, որը, սակայն, ի տարբերություն ապաստարանից (տես ապաստարան), չի պաշտպանում քիմիական և կենսաբանական զենքերի ներգործությունից:

**բլոկ** – блок, объединение – bloc

ռազմաքաղաքական բլոկ – военно-политический блок – political-military block

**բլոկ կետ** – տես ուղեպահակետ

«Բլոուփայպ» – «Блоупайп» – “Blowpipe”  
Բրիտանական արտադրության «երկիր-օդ» դասի հրթիռ:

**ԲԼՈՒ-82 «Դեյզի քատեր»** – БЛУ-82  
«Дейзи Каттер» – “Daisycutter” BLU-82

Ամերիկյան արտադրության ռումբ, որը նախատեսված է գետնի մակերեսից բարձր պայթելու և ուղղաթիռներին խանգարող ծառերը տապալելու համար:

**բլուր** – տես *բարձունք*

**բյուջե** – бюджет – budget

Որոշակի ժամանակաշրջանի համար պետության, կազմակերպության կամ ընտանիքի (առանձին անհատի) եկամուտների և ծախսերի ենթադրական հաշվարկում:

բյուջեի բաշխում – распределение бюджета – resource allocation

բյուջեի թափանցիկություն – «прозрачность» бюджета – budget transparency

բյուջեի կազմում – составление бюджета – budgeting

Ֆինանսական կառավարման բաղադրիչներից, որի նախանշանակումն է տնտեսավարող սուբյեկտի կողմից իր ֆինանսական միջոցների օպտիմալ բաշխումն ըստ նպատակի և ժամանակի:

բյուջեի կազմում ըստ ռեսուրսների – составление бюджета по ресурсам – resource budgeting

բյուջեի կարգադրիչ – распорядитель бюджета – budget manager

պետական բյուջե – государственный бюджет – state budget

Պետության եկամուտների և ծախսերի բաշխագրումը ձևակերպող փաստաթուղթ, որը կազմվում է սովորաբար մեկ օրացուցային տարվա համար:

ռազմական բյուջե – военный бюджет – military budget

Պետական բյուջեի այն մասը, որը ծախսվում է ռազմական (պաշտպանական) կարիքների վրա:

քաղաքացիական բյուջե – гражданский бюджет – civil budget

ՆԱՏՕ-ում. կենտրոնակայանի ղեկավար քաղաքական մարմինների աշխատանքի ապահովման համար նախատեսված բյուջե:

**բյուջեական հայտագիր** – бюджетная заявка – budget request

**բյուջեավորում** – տես *բյուջե՝ բյուջեի կազմում*

**բյուջետային հայտագիր** – տես *բյուջեական հայտագիր*

**բյուրո** – տես *գրասենյակ*

**բնագավառ** – տես *ոլորտ*

**բնագիծ** – рубеж – limit

անվտանգ հեռավորության բնագիծ – рубеж безопасного удаления – minimum range line

բնագծի ամրացում – закрепление рубежа – line consolidation

Հակառակորդից գրավված և մարտավարական ու օպերատիվ տեսակետից ձեռնադրված բնագծի նախապատրաստում պաշտպանությանը:

զխավոր պաշտպանական բնագիծ – главный оборонительный рубеж – main line of resistance

ելքային կրակային բնագիծ – исходный огневой рубеж – initial firing position

իրազեկույցների ներկայացման բնագիծ – рубеж отправки донесений – report line

Գիծ, որին հասնելու դեպքում պետք է այդ մասին զեկուցել հրամանատարությանը:

լույսերի անջատման բնագիծ – рубеж отключения света – light line

Նշագիծ, որից այն կողմ տեխնիկային հրահանգվում է անջատել լույսերը:

ծավալման բնագիծ – рубеж развертывания – deployment line

կործանիչների օդանավային բնագիծ – рубеж подъема истребителей – fighter takeoff line

Տեղանքում պայմանական գիծ, որին հակառակորդի օդային նշանակետերի հասնելու պահին կործանիչներին

տրվում է շարժիչները գործարկելու հրաման:

կրակային բնագիծ – огневой рубеж – firing line

Տեղանքի հատված (պայմանական գիծ), որտեղ ծավալվում են տանկային, մոտոհրաձգային (հետևակի մարտական մեքենաներով) ստորաբաժանումները (զորամասերը), որպեսզի ուղիղ նշանառությամբ կրակով կասեցնեն հակառակորդի տանկերի ու հետևակի գրոհը (հակագրոհը):

համադասված կրակի բնագիծ – рубеж координированного огня – coordinated fire line

հետախուզման բնագիծ – տես *բնագիծ՝ վերադարձի բնագիծ*

հետիոտացման բնագիծ – рубеж спешивания – dismount line

Տեղանքում պայմանական գիծ (գոտի), որին հասնելով՝ մոտոհրաձգային ստորաբաժանումները վայր են իջնում ՀՄՄ-ներից (ԶՓՂ-ներից)՝ գրոհի բնագիծ հետիոտն շարակարգով դուրս գալու համար:

հրապատնեշի բնագիծ – рубеж огневого вала – fire barrage line

Տեղանքում պայմանական գիծ, որի երկայնքով կրակապատնեշի համակարգում նախապատրաստվում և կատարվում է հրետակոծություն:

մարտի (ձակատամարտի) մեջ զորամուտի բնագիծ – рубеж ввода в бой (сражение) – battle commitment line

միջանկյալ բնագիծ – промежуточный рубеж – phase line

Երևակայական գիծ, որը համարվում է հաշվարկման կետ կամ նպատակակետ:

միջուկային անվտանգության բնագիծ – рубеж ядерной безопасности – nuclear safety line

Միջուկային պայթյունի կենտրոնից անվտանգ հեռավորության շրջանը:

պաշտպանական բանակային բնագիծ – армейский оборонительный рубеж – army defensive line

ջրային բնագծի շրջան – район речного рубежа – riverine area

ռադիոտեղորոշումային հայտնաբերման բնագիծ – рубеж радиолокационного обнаружения – radar fence

օդային նշանակետերի ոչնչացման բնագիծ – рубеж уничтожения воздушных целей – fuval-endurance limited air target destruction line

օպերատիվ բնագիծ – оперативный рубеж – line of operation

**բնագրաբնույթություն** – аутентичность – authenticity

Իրական՝ բնագրային՝ բնագրին նույնական՝ համապատասխան լինելը:

բնագրաբնույթության հաստատում – տես *իսկություն՝ իսկության հաստատում*

**բնական առանձնահատկություն** – природная особенность – natural feature

Բնորոշ բնական լանդշաֆտը՝ լեռներ, տափաստաններ, գետեր, լճեր ևն:

**բնակավայր** – населенный пункт – inhabited locality

գյուղական բնակավայր – сельское поселение – countryside

**բնակարան** – տես *կացարան*

գաղտնայցի բնակարան – տես *բնակարան՝ գաղտնի բնակարան*

գաղտնի բնակարան – конспиративная квартира – safe house

1. Վայր, որտեղ պահում են այլ երկրից փախած կամ այն անձանց, որոնք պետք է խուսափեն լայն շփումներից:  
2. Հետախուզության գործակալների հանդիպավայր բնակարան:  
3. Գաղտնի ոստիկանությանը պատկանող բնակարան, որտեղ պահվում ու հարցաքննվում են ոչ պաշտոնապես ձերբակալված անձինք:

տեղավորել բնակարաններում – տես *բնակավորել*

**բնակավորել** – расквартировывать, размещать по квартирам – billet

**բնակիչ** – житель – inhabitant

**բնակչություն** – население – population  
Տվյալ տարածքում բնակվող մարդկանց ամբողջությունը՝ համախումբը:

բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտ – объект, обеспечивающий жизнедеятельность населения – vital utility services

բնակչության շարժ – миграция населения – migration  
Մարդկանց տեղափոխություն, վերաբնակություն:

բնակչության պահանջմունքներ – потребности населения – civil requirements  
Զինված հակամարտության կամ խաղաղարարական օպերացիայի ժամանակ բնակչության կենսապահովման պահանջմունքները:

բնակչության ռազմական պատրաստում – военная подготовка населения – military training of the population

խաղաղ բնակչություն – мирное население – civilian population  
Միջազգային իրավունքում. անձինք, որոնք չեն պատկանում պատերազմող կողմերի ՁՈՒ-երին և անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին (կիրառվում է նաև «քաղաքացիական բնակչություն» տերմինը):

պատերազմին քաղաքացիական բնակչության պատրաստվածություն – подготовленность гражданского населения к войне – civilian preparedness for war

քաղաքացիական (խաղաղ) բնակչություն – гражданское (мирное) население – civilian population, civilians

**բնաջնջել** – истреблять, опустошать, косить – decimate, slaughter

**բնաջնջված** – истребленный – destroyed

**բնաջնջում** – истребление, искоренение – extermination

1. Հիմքից ոչնչացում, իսպառ վերացում: 2. Կոտորելը, ոչնչացնելը:

**բնավորություն** – характер – character

**բնութագիր** – характеристика – characteristics

Մարդու, առարկայի, երևույթի, գործընթացի առանձնահատկությունները բնորոշող մեծությունների համակարգ:

թռիչքատեխնիկական բնութագրեր – летно-технические характеристики – characteristics performance

մարտական բնութագիր – боевая характеристика – military characteristic

մարտավարատեխնիկական բնութագրեր – тактико-технические характеристики – specification, operational characteristics, performance

Կոնկրետ ռազմական չափանիշներ, որոնց պետք է համապատասխանի այս կամ այն տեսակի տեխնիկան, որպեսզի կատարվեն համապատասխան շահագործական պահանջները:

չափազանգվածային բնութագիր – массогабаритная характеристика – mass and size characteristics

ֆիզիկական բնութագիր – физическая характеристика – physical characteristics

**բնութագրային առանձնահատկություն** – характерная особенность – character, specific

**բնութագրիչ** – характеристика – specifier

Բնութագրերի կոնկրետացված ընտրանք:

թռիչքատեխնիկական բնութագրիչներ – летно-технические характеристики – performance

մարտավարատեխնիկական բնութագրիչներ – тактико-технические характеристики – specification, operational characteristics, performance

նշանակետի ռադիոտեղորոշումային բնութագրիչներ – радиолокационные характеристики цели – target radar characteristics

**բնույթ** – характер – character

**ԲՇՄ** – տես *մաս՝ բնակշահագործման մաս*

**բշտիկ** – волдырь – blister

**բոժոժավորում** – коконизация – co-cooning

**բոյ** – տես *հասակ*

**բոց** – пламя – flame

**բոցամարիչ** – пламегаситель – flash eliminator, flash suppressor

**բոցամուղի ծայրափողակ** – сопло форсунок – injector nozzle

Այրման խցիկ ներցայտող հեղուկ վառելիքի ցնցման համար սարքի (բոցամուղ) խողովակի նեղացող ծայր կամ կրնաձև խողովակավոր ազուցվածք (ծայրափողակ, սոպլո), որը արտահոսող շիթին ուղղություն և արագություն է հաղորդում:

**բոցավառելիություն** – воспламеняемость – inflammability

**բոցավառիչ** – воспламенитель – igniter, initiator, fuze

**բոցավառում** – воспламенение – ignition

սեղմումային բոցավառում – воспламенение от сжатия – compression ignition

սեղմումային բոցավառումով շարժիչ – двигатель с воспламенением от сжатия – compression ignition engine

**բոցման** – боцман – boatswain, bosun

**բջիջ** – клетка – cell

**բռնաբարություն** – изнасилование – assault

**բռնագնում** – реквизиция – requisition

Պետական կամ զինվորական իշխանության կողմից քաղաքացիների ունեցվածքի հարկադրական օտարումը վարձի դիմաց (ի տարբերություն բռնագրավումից) կամ որոշ ժամանակով:

**բռնագործածում** – տես *անգարիա*

**բռնագրավում** – конфискация – confiscation, seizure

Ղատական իշխանության որոշմամբ գույքի (ունեցվածքի), թանկարժեք իրերի, արժեթղթերի ևն խլում հօգուտ պետության:

**բռնագավթում** – оккупация – occupation

Մի պետության զորքի կողմից մեկ այլ պետության տարածքի կամ դրա մասի ժամանակավոր գրավում՝ այդտեղ տվյալ զորքի բարձրագույն հրամանատարական ատյանների վարչական իշխանության հաստատմամբ:

ռազմական բռնագավթում – военная оккупация – military occupation

օտարերկրյա բռնագավթում – иностранная оккупация – foreign occupation

**բռնակ** – ручка, рукоять, черенок – handle

**բռնակցել** – аннексировать – annex

**բռնակցում** – аннексия – annexation

Մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքի կամ դրա մասի բռնի միացում (զավթում), օտար պետության սահմաններում ազգության բռնի պահում, մի պետության ինքնիշխանության ապօրինի տարածում այն տարածքների վրա, որոնք ենթակա են միջազգային հանրության համատեղ օգտագործման (բաց ծով, տիեզերք ևն): Միջազգային իրավունքով դիտվում է որպես ագրեսիա:

**բռնահարում** – хватание – snatch

**բռնելաձև** – տես *բռնում 1*

**բռնիչ** – держатель – carrier

**բռնկիչ** – запал – igniter, blasting cap, fuze

Պայթուցիկ լիցքի (զերագանցապես ինժեներական ականի և ձեռքի նռնակի) ճայթումը հարուցող միջոց, հիմնականում բաղկացած է լինում մետաղական կամ պլաստմասսե պարկուճում տեղադրված բոցավառիչ-հրապատիճից և ճայթիչ-հրապատիճից:

բռնկիչի շղթա – цепь запала – firing circuit, firing mechanism

ինքնառչնչացվող բռնկիչ – самоуничтожающийся запал – self-destroying fuze

**բռնկվել** – вспыхнуть, разразиться – break out

**բռնկում** – вспышка – flare, flash

**բռնություն** – насилие, применение силы – violation, violence

բռնության բռնկում – вспышка насилия – outbreak of violence

բռնության զանգվածային գործողությունների ճնշման օպերացիա – операция по подавлению массовых актов насилия – mass atrocity response operations

բռնության նվազագույն կիրառում – минимальное применение насилия – use of minimum force

բռնություն ընտանիքում – насилие в семье – 1. (*հրավ.*) domestic violence, 2. (*հոգեբ.*) family violence

ռազմական բռնություն – военное насилие – military violence

Ռեալ կամ հնարավոր հակառակորդի վրա գործադրվող հարկադրիչ ազդեցություն, որն իրագործվում է ռազմական ուժի միջոցով:

սեռական բռնության դատական փորձաքննության համար հավաքածու – набор для судебной экспертизы сексуального насилия – sexual assault forensic examination kit

սեռական բռնության դեպքերին արձագանքման գծով համադասող – координатор по реагированию на случаи сексуального насилия – sexual assault response coordinator

սեռական բռնության կանխման և դրան արձագանքման ծրագիր – программа предотвращения сексуального насилия и реагирования на него – sexual assault prevention and response program

**բռնում** – 1. хватка, 2. տես *որսում* – 1. snatch, 2. տես *որսում*

«**Բրեդլի**» – «Бредли» – “Bradley”

1980-ական թվականների ամերիկյան արտադրության հետևակի մարտական մեքենա:

**բրիգադ** – бригада – 1. brigade, 2. naval tactical command, 3. air force tactical command

Մի շարք երկրների զինված ուժերի ամենափոքր մարտավարական զորամիավորումը, որը կարող է մտնել

ավելի խոշոր զորամիավորումների կազմի մեջ կամ լինել առանձին զորային միավոր, ըստ մարտական կազմի՝ գտնվում է գնդի և դիվիզիայի միջև:

արշավագորային բրիգադ – экспедиционная бригада – expeditionary brigade

բրիգադի շտաբի օպերատիվ-հետախուզական բաժնի պետ – начальник оперативно-разведывательного отдела штаба бригады – brigade major

Հայկական հավաքական բրիգադ – Армянская сводная бригада – Armenian composite brigade

շարժուն վիրաբուժական բրիգադ – мобильная хирургическая бригада – mobile army surgical unit

**բրիգադային** – бригадный – brigade

բրիգադային մարտական խումբ – бригадная боевая группа – brigade combat team

**բրիգադիր** – бригадир – brigadier

**բրիտանական** – британский – British

**բրիտանացիներ** – британцы – British

**բուժական** – медицинский – medical

Բուժմանը վերաբերող, հատուկ:

բուժական հիմնարկ – медицинское учреждение – medical facility

**բուժապահովում** – медицинское обеспечение, медобеспечение – medical support, medical services

թիկունքային բուժապահովում – медицинское тыловое обеспечение – medical logistics support

**բուժզննում** – медицинский осмотр, медосмотр – health screening

Բուժմիջամտությունների համալիր, որոնք իրականացվում են ախտաբանական վիճակների, հիվանդացությունների և դրանց զարգացման ռիսկերի վաղ հայտնաբերման նպատակով:

**բուժխնամք** – медицинский уход – medical care



**բուժճառայություն** – медицинская служба, медслужба – medical service

բուժճառայությունների պատրաստություն – готовность медицинских служб, готовность медслужб – medical preparedness

**բուժճառայություններ** – медицинские услуги, медуслуги – medical services

բուժճառայությունների մատակարար – поставщик медицинских услуг – health care provider

**բուժկանխարգելում** – медицинская профилактика, медпрофилактика – medical prophylaxis

Պետական, հասարակական, բժշկական միջոցառումների համալիր, որոնք ուղղված են հիվանդացության կանխմանը, մարդկանց առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, լինում է առաջնային և երկրորդային, կոլեկտիվ և անհատական:

**բուժկետ** – медицинский пункт, медпункт – medical post, medical and casualty facility

դաշտային բուժկետ – полевой медпункт – field ambulance

**բուժհետազոտում** – медицинское освидетельствование – medical examination

Ջորակոչվող քաղաքացիների կամ զինձառայողների հետազոտություն՝ ռազմաբժշկական փորձաքննության կարգով, նրանց առողջական վիճակի և ֆիզիկական զարգացածության ուսումնասիրություն և գնահատում՝ զինձառայությանը, կոնկրետ զորատեսակում ծառայությանը, ռազմակրթական հաստատություն ընդունվելուն, հեռավոր շրջաններում ծառայությանը (ընտանիքի անդամների համար՝ բնակությանը), ռազմահաշվառումային մասնագիտությանը ուսմանը (ծառայությանը) պիտանիությունը որոշելու, բուժման, պարտականությունների կատարումից ազատման անհրաժեշտությունը պարզելու և այլ նպատակներով:

**բուժհետախուզություն** – медицинская разведка – medical intelligence

**բուժհիմնարկ** – տես *բուժական՝ բուժական հիմնարկ*

**բուժհսկողություն** – медицинский надзор, медицинское наблюдение – medical surveillance

**բուժմաս** – медицинская часть, медчасть – medical and casualty facility

**բուժապասարկում** – 1. медицинское обслуживание, 2. տես *բուժճառայություններ*, – 1. medical service, 2. տես *բուժճառայություններ*

**բուժատորաբաժանում** – медицинское подразделение – medical unit

**բուժտարահանվող հիվանդներ և վիրավորներ** – эвакуируемые больные и раненые – medical evacuees

Հիվանդներ ու վիրավորներ, որոնք ենթակա են տարահանման կամ գտնվում են տարահանման փուլում:

**բուժտարահանում** – медицинская эвакуация, медэвакуация – medical evacuation, casualty evacuation, CASEVAC

Վիրավորների ու հիվանդների դուրսբերում ռազմական գործողությունների վարման շրջանից կամ արտակարգ իրավիճակի օջախից, կատարվում է ըստ փուլերի և հանգրվանների:

ավիացիոն բուժտարահանման կառավարման խումբ – группа управления авиамедэвакуацией – aeromedical evacuation control team

ավիացիոն բուժտարահանման կառավարման կենտրոն – центр управления авиамедэвакуацией – aeromedical evacuation control center

ավիացիոն բուժտարահանման համակարգ – система авиамедэвакуации – aeromedical evacuation system

ավիացիոն բուժտարահանման օպերացիաների ղեկավար – руководитель операциями по медэвакуации – aeromedical evacuation operations officer

ավիացիոն բուժտարահանում – авиационная медэвакуация, авиамедицинская эвакуация – aeromedical evacuation

ավիացիոն բուժտարահանումը համակարգող սպա – офицер, координирую-



щий авиамедэвакуацию – aeromedical evacuation coordinating officer

բուժտարահանման համգրվան – этап медицинской эвакуации – medical evacuation stage

Բուժտարահանման համակարգում բացառված բուժկետերի և մասնագիտացված հիմնարկների հաջորդակառությունը:

բուժտարահանման փուլ – этап медицинской эвакуации – medical evacuation stage

Բուժտարահանման համակարգում ցուցաբերվող բուժօգնության տեսակների հաջորդակառությունը:

մարտավարական ավիացիոն բուժտարահանում – тактическая аэромедицинская эвакуация – tactical aeromedical evacuation

մեծածավալ ավիացիոն բուժտարահանում – տես *բուժտարահանում՝ ռազմավարական ավիացիոն բուժտարահանում*

ռազմավարական ավիացիոն բուժտարահանում – стратегическая аэромедицинская эвакуация – strategic aeromedical evacuation

Վիրավորների և/կամ հիվանդների՝ շատ մեծ թվաքանակով տեղափոխում գանգվածային վիրավորման (մարտադաշտ) կամ հիվանդության բռնկման օջախից թիկունքային (տվյալ օջախից դուրս գտնվող) բուժհիմնարկներ:

տակտիկական ավիացիոն բուժտարահանում – տես *բուժտարահանում՝ մարտավարական ավիացիոն բուժտարահանում*

**բուժտեսակավորում** – медицинская сортировка – triage, medical triage

Վիրավորների (տուժածների) և հիվանդների բաժանում խմբերի՝ ըստ կոնկրետ իրադրությունում միջոցառումների առաջնահերթության, նույնատիպության ու կարիքի:

**բուժցուցում** – медицинское показание, медпоказание – indication

**բուժքննություն** – տես *բժշկական՝ բժշկական քննություն*

**բուժօգնություն** – медицинская помощь, медпомощь – medical aid, medical care

Վիրավորների ու հիվանդների կյանքի պահպանման և առողջության արագ վերականգնման նպատակով իրականացվող միջոցառումների համալիր, որը ներառում է՝ տեղում *ինքնօգնություն (փոխօգնություն)* կամ կրտսեր բուժանձնակազմի կողմից ցուցաբերվող *առաջին օգնություն*, միջին բուժաշխատողի կողմից (սովորաբար՝ ստորաբաժանումում) ցուցաբերվող *մինչբժշկական օգնություն*, զորամասում ընդհանուր մասնագիտությամբ բժշկի կողմից ցուցաբերվող *առաջին բժշկական օգնություն*, բուժօռնաբանական զորամասերի ու հիմնարկների վիրաբույժների ու թերապևտների կողմից ցուցաբերվող *որակավոր բուժօգնություն*, հոսպիտալներում մասնագետ բժիշկների (ակնաբույժ, նյարդավիրաբույժ և այլն) կողմից ցուցաբերվող *մասնագիտացված բուժօգնություն*:

անհապաղ բուժօգնություն – экстренная медицинская помощь – emergency medical treatment, emergency medical aid

Ցուցաբերվում է տարբեր բնույթի վիրավորումների, հանկարծակի սուր հիվանդությունների, քրոնիկական հիվանդությունների սրման դեպքերում, երբ կա հիվանդի կյանքի համար սպառնալիք:

անհետաձգելի բուժօգնություն – неотложная медицинская помощь – urgent medical aid

Ցուցաբերվում է տարբեր բնույթի վիրավորումների, հանկարծակի սուր հիվանդացությունների, քրոնիկական հիվանդությունների սրման դեպքում, երբ հիվանդի կյանքին ակնառու վտանգ չի սպառնում:

անհրաժեշտ բուժօգնություն – необходимая медицинская помощь – essential care

մասնագիտացված բուժօգնություն – специализированная медицинская помощь – expert specialized medical aid, expert care

Բուժկանխարգելիչ միջոցառումների համալիր, որոնք բժիշկներն իրագործում են մասնագիտացված բուժհիմ-

նարկներում կամ բաժանմունքներում, որոնք հանդերձավորված են հատուկ բուժախտորոշիչ սարքերով ու սարքավորանքով:

շտապ բուժօգնություն – скорая медицинская помощь – first responder care

Առաջին հրատապ բժշկական օգնությունը հիվանդին/վիրավորին՝ բուժհիմնարկ տարահանելուց առաջ:

որակավոր բուժօգնություն – квалифицированная медицинская помощь – qualified medical aid

Բուժկանխարգելիչ միջոցառումների համալիր, որոնք բուժհիմնարկներում ու կազմավորումներում իրագործում են լայն պրոֆիլի բժշկները (վիրաբույժներ, թերապևտներ) վիրավորների (խոցվածների, հիվանդների) կյանքը պահպանելու, բարդությունների զարգացումը կանխելու, անհրաժեշտության դեպքում՝ հետագա տարահանմանը պատրաստելու նպատակով:

**բուլդոզեր** – бульдозер – bulldozer

**բույլ** – տես *փունջ*

**Բունդեսվեր** – Бундесвер – Bundeswehr

Գերմանիայի Ղաշնային Հանրապետության Ջինված ուժերը:

**բևեռային տրամագիր** – полярная диаграмма, местоположение в полярных координатах – polar plot

**բևեռային ուղեծիր** – полярная орбита – polar orbit

## Գ (ԳԻՄ)

**գագաթ** – 1. пик, вершина, 2. տես *վերտեքս* – 1. peak, 2. տես *վերտեքս*

Թեք լանջերով լեռան սուր կատար:

**գագաթնաժողով** – саммит – summit, summit meeting

**գագաթնակետ** – 1. пик, вершина, 2. кульминация, 3. տես *բարձրակետ* – 1. peak, 2. culmination, 3. տես *բարձրակետ*

Որևէ փուլաշրջանի, զարգացման պրոցեսի առանձին փուլ, որը բնորոշվում է

հիմնական ցուցիչի (պարամետրի) առավելագույն արժեքով:

**գազ** – газ – gas

արցունքաբեր գազ – слезоточивый газ, лакриматор – lacrimator, tear gas

**գազագերծում** – дегазация – degassing, outgassing, degasification

Օբյեկտների և տեղանքի մակերևույթից գազային թունավոր նյութերի հեռացման (քայքայման, չեզոքացման) նպատակով իրագործվող միջոցառումներ:

**գալիք տարի** – будущий год – then year

**գալյուն** – гальюн – heads

Նավի զուգարան:

**գաղափարախոսական մշակում** – идеологическая обработка – character guidance

**գաղափարախոսություն** – идеология – ideology

ռազմական գաղափարախոսություն – военная идеология – military ideology

**գաղթ** – տես *բնակչություն՝ բնակչության շարժ*

**գաղթական** – 1. տես *միգրանտ*, 2. տես *փախտական*

1. Անձ, որը, հատելով արտաքին կամ ներքին վարչատարածքային սահմանները, տեղափոխվել է այլ վայր՝ այնտեղ մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու նպատակով: 2. Պատերազմի, ռազմական գործողությունների, բռնության, հետապնդումների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքով կամավոր կերպով կամ իշխանությունների կարգադրությամբ իր պետությունը լքած անձ:

**գաղթականություն** – беженство – refugeism

1. Գաղթականների՝ գաղթածների ամբողջությունը: 2. Պատերազմի կամ այլ պատուհասի պատճառով բնակիչների զանգվածային հեռացումը հարազատ վայրերից:

**գաղթավայր** – տես *գաղութ*

**գաղտնագրանյութ** – шифровальный материал, криптографическое средство – cryptomaterial

Բոլոր նյութերը (ներառյալ՝ փաստաթղթերը, սարքերը և հարմարանքները), որոնք պարունակում են գաղտնագրային տեղեկույթ և անհրաժեշտ են գաղտնագրման և ապագաղտնագրման, հեռուստահաղորդակցության իսկության պարզման ժամանակ:

**գաղտնագրել** – зашифровывать (передать), шифровать – scramble

**գաղտնագրություն** – криптография – cryptography

Տեղեկույթի գաղտնիության (կողմնակի անձանց կողմից ծանոթանալու անհնարինության) և բնագրաբնութային (ամբողջականության և հեղինակային իսկության) ապահովում, ինչպես նաև գիտություն այդ ապահովման մեթոդների մասին:

**գաղտնագրում** – шифрование – encryption, enciphering, encoding

Բաց տեքստի վերածում որոշակի ավզորիթմով գրված գաղտնագրի:

ազդանշանի գաղտնագրում – шифрование сигнала – signal encryption

գաղտնագրման բաժնի պետ – начальник шифровального отдела – chief of cipher section

գաղտնագրման տեխնիկա – шифровальная техника – cryptographic equipment

1. Գաղտնագրման համար օգտագործվող սարքավորանք, ապարատուրա:
2. Գաղտնագրման համար կիրառվող հնարների ամբողջությունը, գործողության եղանակը:

**գաղտնազերծված** – рассекреченный – unclassified

**գաղտնազերծում** – рассекречивание – declassification

Գաղտնիության գրիֆի հանում՝ այդ գրիֆով պայմանավորված պահանջների վերացմամբ:

**գաղտնալսել** – подслушивать, тайно прослушивать – eavesdrop, listen

**գաղտնալսում** – подслушивание – eavesdropping, listening

Հետախուզության եղանակ, որը ներառում է ձայնային ու ռադիոալիքների որսում և, անհրաժեշտության դեպքում, վերծանում:

գաղտնալսման կետ – пост подслушивания – listening post

գաղտնալսման սարք – прибор для подслушивания – line intercept apparatus

գաղտնալսման սարքի միացման կետ – տես *որսում՝ որսման կետ*

**գաղտնապահ** – хранящий секреты, доверенный – confidential

**գաղտնապահոց** – тайник – cache

լրտեսական գաղտնապահոց – тайник (для агентурной связи) – dead letter-box, mail drop

**գաղտնի** – 1. секретный, конфиденциальный, не подлежащий разглашению, 2. тайный, скрытый, 3. нелегальный – 1. confidential, 2. classified, 3. covert, 4. clandestine

գաղտնի դրդապատճառներ – տես *ծածուկ՝ ծածուկ դեկավար թելեր*

գաղտնի կերպով հետևել – тайно следить, выслеживать – shadow

գաղտնի հարց – конфиденциальный вопрос – sensitive issue

գաղտնի տեղեկությունների հրապարակում – разглашение секретных сведений – unauthorized disclosure of classified information

հույժ գաղտնի – совершенно секретно – secret

«հույժ գաղտնի» – «совершенно секретно» (гриф) – top secret

Դրոշմագիր, որը դրվում է փաստաթղթի վրա՝ այդ փաստաթղթի պահման, հանձնման, ծանոթացման որոշակի կարգի ու սահմանափակումների սահմանմամբ:

նչ գաղտնի – несекретный – unclassified

**գաղտնիություն** – секретность, конфиденциальность – secrecy, confidentiality

գաղտնիության աստիճանի նվազեցում – снижение секретности – downgrading

գաղտնիության գրիֆ – տես *գաղտնիություն` գաղտնիության մակագիր*

գաղտնիության դրոշմագիր – տես *գաղտնիություն` գաղտնիության մակագիր*

գաղտնիության մակագիր – гриф секретности – security classification

Փաստաթղթի վրա կատարվող նշագրում (մակագրություն, դրոշմ և այլն), որով մատնանշվում է դրանում պետական և ռազմական գաղտնիք ներկայացնող տեղեկությունները գաղտնի պահելու սահմանված աստիճանը:

գաղտնիության ռեժիմ – режим секретности, категория защиты – security classification, security procedure

**գաղտնիք** – секрет – secret

պետական գաղտնիք ներկայացնող տեղեկությունների պաշտպանություն – защита сведений, составляющих государственную тайну – protection of state secrets

ռազմական գաղտնիք – военная тайна – military secret

Ռազմական բնույթի տեղեկություններ, որոնք ենթակա չեն հրապարակման` տարածման:

**գաղութ** – колония – colony

1. Որևէ երկրի այն վայրը, որտեղ ապրում են գաղթականները, գաղթավայր: 2. Նոր երկրում հաստատված գաղթականների ամբողջությունը: 3. Որևէ պետության կողմից գավթված և շահագործվող երկիր: 4. Գաղութացված երկրի բնակչությունը: 5. Կալանավորների հավաքավայր` աշխատանքով նրանց ուղղման համար: 6. Անչափահաս հանցագործների, անօթևան երեխաների հավաքավայր` ուղղման, դաստիարակության և նպատակով:

**գաղութաբնակ** – колонист, поселенец – colonist

**գաղութային** – колониальный – colonial

**գաղութատիրություն** – колониализм – colonialism

1. Այլ պետությունների ու ժողովուրդների նկատմամբ զարգացած արդյունաբերական պետությունների գերիշխանության համակարգը 16–20-րդ դարերում: 2. Անօրինական կերպով այլ ժողովուրդների (էթնիկական խմբերի) տարածքն իր կազմում ներառած և այդ էթնոսների ազատագրական ձգտումները բռնությամբ ճնշող պետության իրավաքաղաքական համակարգը:

**գամում** – фиксация – immobilization

**գավառ** – տես *ծայրամաս*

**ԳԲՈՒ-15** – ГБУ-15 – GBU-15

Ամերիկյան սահասավառնող կառավարելի ռումբ:

**Գեյգերի հաշվիչ** – счетчик Гейгера – Geiger counter

Ճառագայթման մակարդակի չափման սարք:

**գեներալ** – генерал – general

բանակի գեներալ – генерал армии – general of the army (US)

բրիգադային գեներալ – бригадный генерал – brigadier general

բրիգադի գեներալ – տես *գեներալ` բրիգադային գեներալ*

գեներալ-գնդապետ – генерал-полковник – colonel general

գեներալ-լեյտենանտ – генерал-лейтенант – lieutenant general

գեներալ-մայոր – генерал-майор – major general

եռաստղանի գեներալ – трехзвездный генерал – three-star general

երկաստղանի գեներալ – двухзвездный генерал – two-star general

հանձնակատար-գեներալ – генерал по поручениям – general errands, general on the instructions

մեկաստղանի գեներալ – однозвездный генерал – one-star general

Արևմտյան պետությունների բանակներում՝ բրիգադի գեներալ, հայկական (նաև ժամանակին՝ խորհրդային, այժմ՝ ռուսաստանյան) բանակում՝ գեներալ-մայոր:

քառաստղանի գեներալ – четырёхзвездный генерал – four-star general, full general

**գեներալ-ադյուտանտ** – генерал-адъютант – adjutant-general

Ռուսաստանում. (այտմ.) պալատական աստիճան, որը սովորաբար շնորհվում էր կայսեր շքախմբում ներգրավված գեներալ-լեյտենանտներին և լրիվ գեներալներին, ԱՄՆ-ի բանակում. ա) շտաբի վարչական ու շարային մասի պետ, բ) բանակի վարչաշարային վարչության պետ:

**գեներալիտետ** – տես կազմ՝ գեներալական կազմ

**գեներալներ և ծովակալներ** – տես սպա՝ բարձրագույն սպաներ

**գեներատոր** – генератор – generator  
Մեխանիկական էներգիան էլեկտրականի փոխակերպող մեքենա:

**Գեորգիյան խաչ** – Георгиевский крест – Cross of St. George

**գետ** – река – river

գետերի միախառնման տեղը – место слияния рек – confluence

գետի հոսանքով ցած – вниз по течению – downstream

գետի մարտանցում – форсирование реки, форсирование водной преграды – assault river crossing

**գետանց** – переправа, перевоз – crossing, ferry

1. Ջորջերի կողմից ջրային արգելքի (գետ, ջրանցք, լիճ, խորշ, նեղուց, ջրամբար և այլն) հաղթահարում:
2. Ջրային արգելքի հաղթահարման համար սարքավորված տեղ (կարող է ունենալ և բնական ծագում՝ ծանծաղուտ):

գետանցի հատված – участок форсирования – crossing area

**գետանցում** – տես անցում 2

գետանցում՝ մարտով – տես գետ՝ գետի մարտանցում

գետանցում ծանծաղուտով – переход вброд – wading crossing

գետանցում հրնթաց – форсирование с ходу – hasty crossing

Ջրային արգելքների հապճեպ հատումը՝ ձեռքի տակ եղած միջոցներով, առանց նախապես պատրաստվելու:

**գետաշրջան** – տես բնագիծ՝ ջրային բնագծի շրջան

**գետափ** – речное побережье – bank

**գետին** – земля – ground

գետինն գամել (կրակով) – пригвоздить, прижать – pin down

Հակառակորդի վրա բացել այնպիսի կրակ, որ նա ստիպված լինի անշարժանալ, մնալ տեղում, կաթվածահար լինել:

գետնից կտրված – оторвавшийся от земли – airborne

գետնից կտրվելու կետ – точка отрыва от земли – take-off point

**գետնախուց** – землянка – dugout  
Խրամատի կողքին արված ապաստարան:

**գետնահեռվություն** – клиренс – clearance  
Ավտոմեքենայի կենտրոնական մասի ամենացածր կետի և հենքային մակերևույթի միջև եղած հեռավորությունը:

**գետնանցք** – штольня – tunnel

**գետտո** – гетто – ghetto  
Առանձնացված թաղ հրեաների կամ ռասայական խտրականության ենթարկվող ժողովուրդների համար:

**գերագույն** – верховный – 1. supreme, 2. general

**Գերագույն գլխավոր հրամանատար** – Верховный главнокомандующий – Supreme Commander

Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար – Верховный главнокомандующий

Вооруженными силами Республики Армения – Supreme Commander of the Armed Forces of the Republic of Armenia

**Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմական** – ставка Верховного Главнокомандования – Supreme High Command General Headquarters

**գերազանցող** – превосходящий – superior

**գերազանցություն** – 1. превосходство, 2. отличие – 1. superiority, 2. honors, distinction

գերազանցություն ծովում – превосходство на море – maritime superiority

գերազանցություն կիբեռտարածությունում – превосходство в киберпространстве – cyberspace superiority

գերազանցություն օդում – превосходство в воздухе – air superiority

կրակային գերազանցություն – огневое превосходство – fire superiority

մարտական գերազանցություն – боевое отличие – battle honor

ռազմական գերազանցություն – военное превосходство – military superiority

տեղային գերազանցություն – локальное превосходство – local superiority

Գերազանցություն (թվային, դիրքային ևն), որը ձեռք է բերվել մարտադաշտի տվյալ հատվածում:

տեղեկատվական գերազանցություն – информационное превосходство – information superiority

**գերակայություն** – տես *առաջնահերթություն*

**գերակշռող** – превалирующий – commanding

**գերակշռում** – 1. перевес, превалирование, 2. տես *գերազանցություն 1* – 1. preponderance, 2. տես *գերազանցություն 1*

գերակշռում օդային ուժերում – перевес в воздушных силах – air superiority

**գերատեսչություն** – տես *նախարարություն 1*

պաշտպանական գերատեսչության բաղադրատարրեր – компоненты оборонного ведомства – Department of Defense components

Պետության պաշտպանական կառույցի բաղկացուցիչ մասերը: ԱՄՆ-ում՝ Պաշտպանության քարտուղարի գրասենյակը, ռազմական վարչությունները, Շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահը, մարտական հրամանատարությունները, պաշտպանության նախարարության Գլխավոր վերահսկիչի գրասենյակը, պաշտպանության նախարարության գործակալությունները, դաշտային կազմակերպվածքի մարմինները և ՊՆ կազմի մեջ մտնող մյուս բոլոր կազմավորումները:

պաշտպանական գերատեսչություն – оборонное ведомство – Department of Defense, Defense Department, DOD

ռազմական գերատեսչություն – военное ведомство – Military Department

**գերբեռնվածություն** – перегрузка – overload

**գերեզմանատուն** – տես *գերեզմանոց*

**գերեզմանոց** – кладбище – cemetery

**գերեվար** – захвативший в плен, (уст.) пленитель – captor

**գերեվարող** – տես *գերեվար*

**գերեվարում** – пленение, захват пленного – captivity, capture of hostages, capture of prisoners of war, capture

Պատերազմի ժամանակ հակառակորդի կողմից կոմբատանտների կամ այլ անձանց, որոնց վրա տարածվում է ռազմագերության ռեժիմը, բռնում և պահում ազատագրության մեջ:

**գերեվարումից խուսափած անձ** – избежавший пленения – evader

Հակառակորդի թիկունքում շրջափակման մեջ եղած մարդ, որը խուսափել է գերի ընկնելուց:

**գերի** – пленник, пленный – captive



գերի վերցնող – տես *գերեվար*

գերու ազատում՝ խոսքի դիմաց – освобождение пленного на слово – parole

ստուգողական գերի – контрольный пленный – identification prisoner

Ռազմագերի, որը գերեվարված է եղած հետախուզական տվյալները հաստատելու (ճշտելու) կամ էլ դիմակայող խմբավորումում տեղի ունեցած փոփոխությունները պարզելու համար:

**գերլցում** – переполнение, перелив – flood

**գերծանծաղուտ** – сверхмалые глубины – very shallow water  
Ջրային տարածք, որի խորությունը չի անցնում 10 մ-ից:

**գերծայնային** – 1. сверхзвуковой, 2. гиперзвуковой – 1. supersonic, 2. hypersonic

**գերսառում** – տես *թերջերմություն*

**գերտերություն** – сверхдержава – superpower

**գերություն** – плен – captivity

գերությունից փախած – бежавший из плена – escapee

**գթասրտություն** – տես *ողորմածություն*

**գժտայնություն** – конфликтность – conflictness

Գժտվող լինելը, գժտության հակված մարդ, անձնավորության ինտեգրալային հատկություն, որն արտահայտում է միջանձնային հակամարտությունների մեջ նրա մտնելու հաճախականությունը:

**գժտություն** – конфликт – conflict

Անձնային-հասարակական հարաբերություններում հակասությունների դրսևորում, վեճ, ընդհարում՝ հոգեկանի մակարդակում (այդ թվում նաև ներքին բախում՝ անձնավորության ներաշխարհում):

միջանձնային գժտություն – межличностный конфликт – interpersonal conflict

Հաղորդակցման կամ համագործակցության հարաբերություններում հակընկերների միջև փոխադարձ գիտակց-

ված թշնամական գործողություններ՝ վերաբերմունք՝ վարք:

ներանձնային գժտություն – внутрилично-стный конфликт – intrapersonal conflict

Անձնավորության վիճակ, երբ նա ունի հակասական և միմյանց բացառող շարժառիթներ, արժեքներ ու նպատակներ, որոնք տվյալ պահին չի կարողանում հաղթահարել և ընտրել վարքի գերակայություններ:

**գիծ** – 1. линия, 2. тире (в азбуке Морзе) – 1. line, 2. dash

1. Մակերևույթի սահման, որն ունի միայն մեկ չափողականություն (երկարություն) և սահմանվում է որպես շարժվող կետի հետք կամ երկու մակերևույթների հատման տեղ: 2. Մորզեի այբուբենի հիմնական նշաններից մեկը:

արտադրական գիծ – производственная линия – train

Մեկը մյուսի հետևից շարված սարքավորանք՝ ըստ արտադրական գործողությունների հաջորդականության:

էլեկտրական գիծ – электрическая линия, электролиния – power line

ճակատային գիծ – линия фронта, передовая линия – front line, line of battle

Ռազմաձակատում զորքի զբաղեցրած առաջնային դիրքը:

մեկնարկման գիծ – стартовая линия – start line, SL

ներքին օպերացիոն գծեր – внутренние операционные линии – interior lines

Պատերազմական ռազմավարություն, որը հիմնվում է այն գաղափարի վրա, թե որոշակի տարածության մեջ տեղաշարժի գծերն ավելի կարճ են, քան այդ տարածությունից դուրս գտնվողները: Այս ռազմավարության կիրառումը շրջապատված ուժերին կարող է հնարավորություն տալ ձեռնարկելու իրենց շրջապատող ուժերի վրա մի շարք հանկարծակի հարձակումներ՝ շարվելով բավականաչափ արագ ու անկանխատեսելի կերպով, ինչի հետևանքով շրջապատող ուժերն ստիպված կլինեն նահանջել:



նշանառության գիծ – տես *գիծ՝ դիտոցման գիծ*

սահմանազատիչ գիծ – демаркационная линия – line of demarcation, demarcation line

տարաբաժանման գիծ – линия разведения – line of separation

ուժային գիծ – силовая линия – line of action

օրերի փոխման միջազգային գիծ – տես *գիծ՝ օրվա ժամանակի միջազգային սահմանազատիչ գիծ*

օրվա ժամանակի միջազգային սահմանազատիչ գիծ – международная демаркационная линия суточного времени, международная линия смены дат – International Date Line

**գիշերակայք** – бивак – bivouac

**գիչկա** – տես *փրկանավակ*

**գիտաժողով** – научная конференция – scientific conference

Գիտական գործունեության կազմակերպման ձև, որի դեպքում հետազոտողները ներկայացնում և քննարկում են իրենց աշխատանքները և աշխատությունները:

**գիտափորձ** – эксперимент, опыт – experiment

**գիտակցականություն** – сознательность – consciousness

Գիտակից՝ հասկացող՝ ըմբռնող լինելը, նման հատկություն դրսևորելը:

**գիտակցություն** – сознание – consciousness

**գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակում** – научно-исследовательская и опытно-конструкторская разработка, НИОКР – research and development, R&D

Ռազմական բնագավառում՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր նմուշների ստեղծմանն ուղղված հետազոտությունների ու մշակումների հիմնական ձևը:

**գիտաճյուղ** – տես *գիտություն՝ գիտության ճյուղ*

ռազմական գիտաճյուղ – военная дисциплина – military discipline

**գիտելիք** – знание – knowledge

**գիտություն** – 1. наука, 2. տես *իմացություն* – 1. science, 2. տես *իմացություն*

գիտության ճյուղ – отрасль науки, научная дисциплина – branch of science, science discipline

Որևէ գիտության ինքնուրույն բնագավառ:

գիտության ոլորտ – область науки – studies

**գիրք** – книга – book

**գլխեր** – տես *սահանավ*

**գլխամաս** – головная часть – nose cone, fore end

1. Որևէ բանի սկզբնավորման, առջևի, վերևի (կառավարող) մասը: 2. Նավի, գնացքի, հրթիռի և այլ սարքվածքների առջևի կամ վերին մասը:

անհատական ուղղորդմամբ մարտագլխիկների տրոփվող գլխամաս – разделяющаяся головная часть с боеголовками индивидуального наведения – multiple independently targetable reentry vehicle, MIRV

**գլխային հեռախոս** – головной телефон – headset

**գլխապան** – տես *սաղավարտ*

**գլխավոր** – главный – 1. main, decisive, 2. general

գլխավոր ջանք – главное усилие – main effort

գլխավոր հորիզոնամաս – տես *աշխարհ՝ աշխարհի կողմ*

գլխավոր հրամանատարի ռազմակայան – ставка главного командующего – general headquarters, GHQ

գլխավոր ուղղություն – главное направление – principal direction, main direction

Այն ուղղությունը, որով զարգանում են օպերացիայում պլանավորված մարտական գործողությունները:

**գլխավորել** – տես *ղեկավարել*

**գլխարկ** – головной убор – head-dress  
 դաշտային գլխարկ – полевая фуражка – forage cap

կայազորային գլխարկ – пилотка – garrison cap

Ջինժառայողների թեթև համազգեստային գլխարկ:

հուսարական գլխարկ – гусарский кивер – busby

**գլխարկանիշ** – кокарда, значок на военной фуражке – cockade, cap badge

Համազգեստի (զինվորական) գլխարկի վրա տեղադրվող սահմանված տեսակի տարբերանշան:

**գլորաթռչիք** – бочка, двойной переворот через крыло – roll

**գլուխ** – 1. голова, 2. տես *դեկավար* – 1. head, 2. տես *դեկավար*

**գծագիր** – 1. чертеж, 2. график – 1. plan, scheme, 2. chart

**գծագրական** – 1. графический, 2. чертежный – graphic

**գծագրություն** – տես *գրաֆիկա*

**գծային** – линейный – guide

Ջինժառայող, որին զորահանդեսի կամ շարային ստուգատեսի ժամանակ հանձնարարվում է նշել զորամասերի շարվածքի գծերը, ինչպես նաև հանդիսավոր երթով զորքերի անցնելու գծերը և ստորաբաժանումների միջև հեռավորությունը:

**գծայնացում** – տես *հավասարեցում*

**գծանավ** – տես *նավ` գծային նավ*

**գծանշում** – разметка – marking

**գծանց** – переезд – railroad crossing  
 Երկաթգծի հետ ճանապարհի հատման տեղը:

**գծաշար** – строй в линию – line abreast formation

**գծաշարվել** – выстраиваться в линию – line up

**գծապատկեր** – схема – plot, scheme

ընթացիկ օդային իրադրության գծապատկեր – տես *օդագծապատկեր*

մոնաթղթե գծապատկեր – схема на кальке – overlay, trace

**գծով շարվել**– տես *գծաշարվել*

**ԳՀԽ** – տես «*Գործընկերություն հանուն խաղաղության*»

ԳՀԽ ծրագրով պլանավորում և վերլուծություն – Процесс планирования и анализа по программе PPM – PpP Planning and Review Process

«Գործընկերության» մեխանիզմ, որը նպաստում է ՆԱՍՕ-ի անդամ պետություններում բանակաշինության այնպիսի պլանավորմանը, որի արդյունքը լինի ՆԱՍՕ-ի ՄՁՈՒ-ի և գործընկեր պետությունների ուժերի ու միջոցների օպերատիվ համատեղելիության (վոխ-գործելիության) աստիճանի էական բարձրացումը:

**ԳՀԽ համադասման և աջակցման բաժին** – Отдел координации и поддержки PPM – PpP Coordination and Support Section

**ԳՀԽ ուսումնական կենտրոն** – учебный центр PPM – PpP Training Center

**գմբեթ** – купол – cupola

**գյուտ** – տես *հայտնագործություն*

**գնահատական** – оценка – estimate

Գործող և ճանաչող սուբյեկտի համար տվյալ առարկայի, երևույթի, գործընթացի նշանակալիության որոշված հարբերական չափը:

բարձր գնահատական – տես *գնահատանք*

շահագործական գնահատական – эксплуатационная оценка – operational estimate

**գնահատանք** – оценка, придание ценности – appreciation

**գնահատում** – оценка, оценивание – 1. assessment, 2. appreciation, 3. evaluation

Գործող և ճանաչող սուբյեկտի համար տվյալ առարկայի, երևույթի, գործընթացի նշանակալիության որոշումը, մասնագետի, փորձագետի կարծիքի (անհատական կամ կոլեկտիվ) հիման վրա պրոբլեմի գնահատականի ստացումը հետագայում որոշում ընդունելու (ընտրություն կատարելու) համար:

«այո–ոչ» սկզբունքով գնահատում – оценка «да–нет», оценка «идет–не идет» – go no-go

Համակարգի կամ դրա որևէ բաղադրիչի արդյունավետության գնահատման չափանիշ:

գործառնության վնասի գնահատում – оценка функционального ущерба – functional damage assessment

Նշանակետի՝ իր առաջադրանքի կատարման գործառնության կամ կատարողական հնարավորությունները նվազեցնելուն կամ վերացնելուն նպատակաուղղված արդյունքի գնահատում:

թիկունքային ապահովման գնահատում – оценка тылового обеспечения – logistic assessment

կարևոր միջոցների և ենթակառուցվածքների գնահատում – оценка важнейших средств и инфраструктур – criticality assessment

կիրառելիության գնահատում – оценка применимости – feasibility assessment

«համապատասխանում է–չի համապատասխանում» սկզբունքով գնահատում – տես *գնահատում՝ «այո–ոչ» սկզբունքով գնահատում*

հարձակողական գործողությունների գնահատում – оценка атакующих действий – attack assessment

Հարձակման փաստացի կամ հնարավոր բնույթի ու խնդիրների կամ նպատակների գնահատում:

հետախուզական գնահատում – разведывательная оценка – intelligence estimate

մարտական վնասների գնահատում – оценка результатов боевого воздействия – battle damage assessment

միջուկային խոցման աստիճանի գնահատում – оценка степени ядерного поражения – nuclear damage assessment

նյութական վնասների գնահատում – оценка материального ущерба – physical damage assessment

շահագործական գնահատում – эксплуатационная оценка – operational evaluation

ռազմավարական գնահատում – стратегическая оценка – strategic assessment

Ռազմավարական գնահատումը, գերազանցապես, երկու հակամարտող կողմերի (յուրային և հավանական հակառակորդի) անվտանգային համակարգերի համեմատական վերլուծությունն է:

սկզբնական գնահատում – первоначальная оценка – initial assessment

սպառնալիքների և խոցելիության գնահատում – оценка угроз и уязвимости – threat and vulnerability assessment

Հակասահաբեկչության մեջ, տվյալ օբյեկտի համար սպառնալիքների և խոցելիության վերլուծությունների զուգակցում:

ստրատեգիական գնահատում – տես *գնահատում՝ ռազմավարական գնահատում*

վնասվածության բնույթի և աստիճանի գնահատում – оценка характера и степени повреждений – damage assessment

տարածքի կամ իրավիճակի գնահատում արագ զննմամբ – оценка территории или ситуации путем быстрого осмотра – coup d’oeil

տեխնիկական գնահատում – техническая оценка, техническая экспертиза – technical evaluation

տեղանքի գնահատում – оценка местности – estimate of terrain

օպերացիայի ծածուկության աստիճանի գնահատում – оценка степени обеспечения скрытности операции – operations security assessment

**գնային առումով մատչելիություն** – доступность по цене – affordability

**գնացք** – поезд, состав – train

գնացքի բեռնաթափում – выгрузка из поезда – detraining

իջեցում գնացքից – высадка из поезда – detraining

**գնդակ** – 1. пуля, 2. мяч – 1. bullet, 2. ball  
1. Հրաձգային զենքից արտանետվող խոցիչ տարր, հրազենում մտնում է փամփուշտի կազմի մեջ, ոչ հրազենում (օրինակ՝ օդամղային զենք)՝ համ-

դես է գալիս որպէս առանձին սպար-վող տարր: 2. Խաղերի համար գնդա-յին պիտույք:

արագալաց գնդակ – высокоскоростная пуля – high velocity bullet

Մեծ արագութեամբ թռչող գնդակ:

գնդակների պահունակ – магазин пуль – magazine

Հրազենում. հատուկ սարք, որը նախատեսված է փամփուշտները (կրակոցները) տեղաբաշխելու և հրաձգութեան ժամանակ դրանք հերթով տեղադրման գծին հասցնելու համար:

գնդակների ցրում – разброс пуль – delivery error

Տվյալ զինատեսակի կիրառման ժամանակ հանդիպող շեղում թիրախից:

դում-դում տեսակի գնդակ – пуля типа дум-дум – dum-dum bullet

Գնդակ, որը կենդանի օրգանիզմում հեշտությամբ ծավալվում՝ բացվում կամ տափակում է՝ ըստ այդմ նրան պատճառելով ծանր վնասվածքներ:

գրահախար գնդակ – бронебойная пуля – armor-piercing bullet

լուսածրիչ գնդակ – трассирующая пуля – tracer bullet, tracer

հրկիզող գնդակ – зажигательная пуля – incendiary bullet, incendiary round

պլաստիկ գնդակ – пластиковая пуля – plastic bullet

ռետինե գնդակ – резиновая пуля – rubber bullet

Գնդակ, որը ոստիկանությունն օգտագործում է ցուցարարներին ցրելու համար:

**գնդակադիմացկուն** – пуленепробиваемый – bulletproof

**գնդակադիմացկունություն** – пуленепробиваемость – bulletproof

Որևէ առարկայի, պատրաստվածքի ևն հատկությունը դիմանալու գնդակի հարվածին առանց էական քայքայման:

**գնդակահարել** – расстрелять – shoot

**գնդակոծություն** – обстрел – shooting

**գնդակոծում** – տես *գնդակոծություն*

**գնդային** – 1. полковой, 2. сферический, 3. шаровой – 1. regimental, 2. spherical, 3. ball

գնդային ավագ – полковой старшина – sergeant major

գնդային բուժկետ – полковой медицинский пункт, полковой медпункт – regimental aid post

Վիրավորներին ու հիվանդներին՝ նախքան նրանց տարահանումը, բուժօգնություն ցույց տալու մասնագիտացված կետ:

գնդային զինվորական ոստիկանություն – полковая военная полиция – regimental police

**գնդապետ** – полковник – colonel, Col.

Մեծ թվով պետություններում ավագ սպայի զինվորական կոչում (աստիճան):

**գնդառանցքակալ** – шарикоподшипник – ball-bearing

**գնդացիր** – пулемет – machine gun

Խմբային ավտոմատ հրաձգային զենք, որը նախատեսված է հատուկ հենարանից կրակելու համար և կրակում է այնքան ժամանակ, քանի ձգանը քաշած է: Մարտական հնարավորություններով՝ հեռահարությամբ և ինտենսիվությամբ, գերազանցում է այլ տեսակի հրաձգային զենքերը:

արագագործ գնդացիր – скорострельный пулемет – chain-gun

Գատլինգի գնդացիր – пулемет Гатлинга – Gatling gun

գնդացրի կրակարուն – տես *գնդացիր՝ գնդացրի կրակային դիրք*

գնդացրի կրակային դիրք – огневая позиция пулемета, пулеметное гнездо – machine gun emplacement

գնդացրի հաստոց – станок пулемета – machine gun carrier

զենիթային գնդացիր – зенитный пулемет – anti-aircraft machinegun

զույգած գնդացիր – спаренный пулемет – coaxial machine gun, coupled machine gun

ընդհանրական գնդացիր – единый пулемет – general purpose machine gun

Այնպիսի համապիտանի գնդացրի հայեցակարգ, որը հնարավոր լինել օգտագործել և՛ որպես երկձիղ նեցուկով թեթև ձեռքի գնդացիր, և՛ որպես հետևակային կամ զենիթային հաստոցով հաստոցային գնդացիր, և՛ որպես տանկերի ու ՄՄ-ների զույգված կամ առանձին կայանքներում կիրառվող տանկային գնդացիր:

թեթև գնդացիր – легкий пулемет, ручной пулемет – light machine gun

համաժամանակացված գնդացիր – синхронизированный пулемет, синхронизированная авиапушка – synchronized gun

Ինքնաթիռի վրա տեղակայված գնդացիր (թնդանոթ), որը հատուկ սարքի (համաժամիչ) միջոցով այնպես է կրակում, որ գնդակները խուսափեն պտուտակի թևերի հետ բախումից:

հաստոցային գնդացիր – станковый пулемет – heavy machine gun

ձեռքի գնդացիր – տես *գնդացիր՝ թեթև գնդացիր*

մեծ տրամաչափի գնդացիր – крупнокалиберный пулемет – large-calibre machine gun

**գնդացրային** – пулеметный – machine gun

գնդացրային խրամաբջիջ – пулеметная ячейка – machine gun pit

գնդացրային ջոկ – пулеметное отделение – machine gun squad

**գնդացրորդ** – пулеметчик – machine gunner, gunner

**գնդիկ** – տես *գունդ 3*

**գնի և օգուտի հարաբերակցություն** – соотношение цены и выгоды – value for money

**գնորդ** – покупатель – customer

**գնում** – 1. закупка, 2. покупка – 1. procurement, 2. purchase

գնման գին – закупочная цена – procurement price

Գնի տեսակ, որը կիրառվում է պետության կողմից մեծածախ գնումների ժամանակ:

գնման ժամանակահատված – время на закупку – procurement lead time

Գնումների գործողություններն սկսելու և պահեստ ընդունելու ժամանակների ընդմիջակայքը:

գնման պատվեր – заказ на закупку – purchase order

գնումների բաժին – отдел закупок – purchasing office

Բանակի մատակարարման գործընթացները կառավարող ու վերահսկող կառույց:

գնումների մասնագետ – специалист по закупкам – procurement officer

գնումների պրակտիկա – практика закупок – acquisition practice

ՆԱՏՕ-ի գնումների խումբ – группа НАТО по практике закупок – NATO Group on Acquisition Practices

գնում տեղական շուկայում – закупка на местном рынке – local purchase

ընդհանուր գնումներ – совместные закупки – common purchasing

ընդհանուր գնումների գծով ներկայացուցիչ – представитель по общим закупкам – general purchasing agent

համատեղ գնումներ – տես *գնում՝ ընդհանուր գնումներ*

հատուկ իրավիճակում գնումների կազմակերպում – организация закупок в особой обстановке – contingency contracting

հատուկ իրավիճակում գնումներ կատարելու պայմանագիր – договор о закупках в особой обстановке – contingency contract

պաշտպանական գնումներ – оборонные закупки – defense procurement

պաշտպանական գնումների գծով ցուցումնագիր – директива по оборонным закупкам – defense procurement directive

ռազմական գնումներ – տես *գնում՝ պաշտպանական գնումներ*

ռազմական գնումների կանոններ – практика военных закупок – procurement policy

ռազմական գնումների մասին լրացում – дополнение о военных закупках – procurement appendix

Օպերացիայի պլանին կցվող հավելված, որում նշվում են գնման ենթակա անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները:

սպառազինության և ռազմական տեխնիկայի գնումներ – закупки вооружений и военной техники – materiel procurement

**գոյապահպանելիություն** – выживаемость – survival

**գոյապահպանում** – выживание – survival

գոյապահպանման դանակ – нож выживания – survival knife

գոյապահպանման դասընթաց – курсы по выживанию – survival course

գոյապահպանման դպրոց – школа выживания – survival, evasion, resistance, and escape

Մեկուսացված անձնակազմի գործողություններ, որոնք նա ձեռնարկում է մինչև յուրայինների վերահսկողության տակ վերադարձը՝ իր առողջության, շարժունության, անվտանգության և արժանապատվության պահպանման նպատակով:

գոյապահպանման եղանակներ ու հնարներ – способы и приемы выживания, тактика и техника выживания – survival techniques

գոյապահպանման լրակազմ – комплект выживания – survival kit

գոյապահպանման համակարգ – система выживания – survival system

գոյապահպանման պայքարածն և տեխնիկա – տես *գոյապահպանում` գոյապահպանման եղանակներ ու հնարներ*

գոյապահպանում մարտական պայմաններում – выживание в боевых условиях – combat survival

**գոյունակություն** – живучесть, жизнеспособность – survivability, viability

Ձորքի (ուժերի) և ռազմական տեխնիկայի կարողությունը՝ պահպանելու կամ արագ վերականգնելու իր մարտունակությունը, ապահովվում է առաջին հերթին հաստատուն կառավարմամբ, ուժերի և միջոցների պատեհաժամ ապակենտրոնացմամբ և զորքերի տեղաբաշխման շրջանների փոփոխմամբ, քողարկմամբ, զանգվածային խոցման զենքերից ուժերի և միջոցների պաշտպանությամբ, ուժերի ու միջոցների ռեզերվի ստեղծմամբ և այլ միջոցների կիրառմամբ:

**գոտեմարտ** – схватка – fight, engagement  
Երկու հակադիր ուժերի միջև բախում, պայքար, կռիվ:

անսպասելի գոտեմարտ – неожиданная схватка – encounter

**գոտեպնդվել** – крепиться, бодриться – brace

**գոտի** – 1. пояс, ремень, 2. зона, пояс, 3. տես *շերտ 1* – 1. belt, strap, 2. zone, area, 3. տես *շերտ 1*

1. Որևէ ընդհանուր հատկանիշով կամ որևէ նպատակի ծառայող վայր, տարածություն: 2. Որևէ բանով բնորոշվող տեղ, վայր, տարածություն:

ալբախության գոտի – зона прибоа – surf zone

անմիջուկազեն գոտի – безъядерная зона – nuclear-free zone

Տարածք, որտեղ արգելվում է միջուկային զենքի փորձարկում, արտադրություն, տեղաբաշխում, պահում, տեղափոխում և կիրառում:

անվտանգ գոտի – безопасная зона – safety zone

Տարածք (ցամաքային, ջրային կամ օդային), որը հատկացված է յուրային ինքնաթիռների, վրաջոյա նավերի, սուզանավերի կամ ցամաքային ուժերի ոչ մարտական գործողությունների համար:

անվտանգության գոտի – зона безопасности – security zone, safety area



1. Դիրքերը շրջապատող ցամաքային տարածք, որը ծածկապաշտպանված է տվյալ դիրքերն զբաղեցնող զորամասի զենքի համակարգերով, դիտման տեխնիկական միջոցներով և պարեկային գործողություններով: 2. Տարածք, որում ձեռնարկվում են անվտանգության լրացուցիչ միջոցներ, օրինակ՝ նավահանգիստը շրջապատող ջրային տարածությունը: 3. Ուղղաթիռադաշտի որոշակի գոտի, որը շրջապատում է վայրէջքի անցման վերջնական փուլի գոտին և զուրկ է խոչընդոտներից, բացի այն խոչընդոտներից, որոնք անհրաժեշտ են օդազնացության համար:

անվտանգության գոտիներ – ремни безопасности – harness, safety belts

Հատուկ հարմարանք, որը կտրուկ (վթարային) արգելակումների ժամանակ անձնակազմին և ուղևորներին պաշտպանում է ուժեղ բախումից:

անվտանգության միացյալ գոտի – объединенная зона безопасности – joint security area

անտեսանելի գոտի – տես *տարածություն մեռյալ տարածություն 1*

ապահովման գոտի – полоса обеспечения – secure zone

Տեղանքի շերտաշրջան, որը զորամիավորումն ստեղծում է պաշտպանության առջևի գծից առաջ, որպեսզի հակառակորդին մոլորեցնի իրական պաշտպանական դիրքի ու կառուցվածքի հարցում, ստիպի նրան նախապես բացահայտել իր հարձակողական մտադրությունները: ԱՄՆ-ում և այլ երկրներում՝ ծածկապաշտպանության գոտու մաս:

ապառազմականացված գոտի – демилитаризованная зона – demilitarized zone

Գոտի, որտեղ զինված ուժերի տեղակայումն արգելված է որևէ պայմանագրով:

առանձնակի կարևորության գոտի – зона особой значимости, зона особого внимания – area of interest

Շրջան, որը ընթացիկ կամ հեռանկարում մարտական գործողությունների նպատակների տեսակետից հրամանատարի համար առանձնակի նշանա-

կալից է և ներառում է նրան հատկացված հետևյալ գոտիները՝ մարտական ներգործության, մարտական գործողությունների և/կամ պատասխանատվության ու դրանց հարակից գոտիները:

առաջնային գոտի – передовая зона – forward area

Ճակատային տարածք. հակառակորդի դիրքերին մոտիկ տարածք կամ հակառակորդի հետ շփման գոտի:

առափնյա գոտի – прибрежная зона – coastal zone, foreshore

Ափի երկայնքով ձգվող ջրային և ցամաքային տարածքի հատված:

ավիացիայի գործողությունների համադասման գոտի – зона координации действий авиации, район координации полетов авиации – airspace coordination area

ավիացիայի և նավատորմի փոխգործության գոտի – зона взаимодействия авиации и флота – air surface zone

արգելական գոտի – воспрещенная зона – denied area

Վտանգավոր գոտի, տարածք, որը վերահսկվում է հակառակորդի կողմից:

արգելապատնեշների գոտի – зона заграждений – obstacle zone

Տեղանքի հատված, որը սարքավորված է ճարտարագործական շինություններով ու միջոցներով՝ հակառակորդի առաջխաղացումը դժվարացնելու, դանդաղեցնելու կամ ժամանակավորապես դադարեցնելու և յուրային զորքերի համար նրան պարտություն հասցնելու հնարավորություն ստեղծելու նպատակով:

արգելափակոցային գոտում ուղեբացում – вскрытие полосы заграждений – reduction

արգելված գոտի – запретная зона – prohibited area

Պետության տարածքի կամ ներքին ջրերի վերևում գտնվող, սահմանված չափերի օդային տարածություն, որի սահմաններում ինքնաթիռների թռիչքներն արգելված են:

արձակման գոտի – зона пуска, район пуска – launch area



արտածգմամբ բեռնաթափման գոտի – зона доставки грузов – extraction zone  
Գոտի, որտեղ բեռները պարաշյուտների կիրառմամբ տեղ են հասցվում՝ ցածր բարձրությունից նետմամբ:

բախարգելիչ գոտի – буферная зона – buffer zone  
Որպես բախարգելի ծառայող գոտի՝ տարածք:

բացառիկ տնտեսական գոտի – исключительная экономическая зона – exclusive economic zone

Տարածքային ջրերին հարակից ջրային տարածք, որը չի գերազանցում 200 ծովային մղոնը՝ հաշվված այն հիմնագծից, որը վերցված է որպես տարածքային ջրերի չափման սկզբնագիծ:

բեռնման գոտի – погрузочная зона – loading site

բրիգադի թիկունքային ապահովման գոտի – полоса тылового обеспечения бригады – brigade administration area

երթևեկության գոտի – полоса движения – lane

զգեսնման գոտի – зона приземления, зона касания – touchdown zone

1. Անփոփոխ թևերով ինքնաթիռների համար. վազբուղու առաջին 1000 մ հաշվված էջքի շեմից: 2. Ուղղաթիռների և կոնվերտոպլանների համար. ուղղաթիռային հարթակի կամ թռիչքուղու այն մասը, որն օգտագործվում է վայրէջքի համար:

թիկունքային գոտի – тыловая полоса – rear zone

թռիչքների համար արգելված գոտի – зона, запретная для полетов – no-fly zone

լռության գոտի – зона молчания, зона тишины – dead space, blind spot  
Ռադիոհեռարձակման գոտում գտնվող տարածք, որտեղ ալիքները չեն որսվում արգելքների պատճառով:

խաղաղության գոտի – зона мира – zone of peace  
Տարածաշրջան, որտեղ շահագրգիռ կողմերի միջև ձեռք բերված համաձայ-

նությանը համապատասխան ձեռնարկվում են այնպիսի միջոցներ, որոնք նպատակաուղղված են պետությունների փոխադարձ անվտանգության, խաղաղ գոյակցության և համակողմանի համագործակցության ապահովմանը:

խոչընդոտների գոտի – штурмовая полоса, полоса препятствий – assault course  
Ուսումնական նպատակներով ստեղծված գոտի՝ սարքավորված զանազան խոչընդոտներով և արգելապատնեշներով, և նախատեսված դրանք հեշտությամբ հաղթահարելու հմտություններ ձևավորելու համար:

խոչընդոտներից ազատ գոտի – տես գոտի՝ օդային մոտեցումների գոտու հատված

խոչընդոտների ուսումնական գոտի – учебная полоса препятствий, дорожка с препятствиями – obstacle course

ծավալման գոտի – зона развертывания, район развертывания – area of deployment

ծովեզրյա գոտի – береговая полоса – beach

կործանիչով խոցման գոտի – зона поражения истребителем – fighter engagement zone

հակամարտող կողմերի տարանջատման գոտի – տես գոտի՝ ուժերի տարանջատման գոտի

հակամարտող ուժերի տարանջատման գոտի – зона разъединения конфликтующих сторон – area of separation  
Շահագրգիռ կողմերի համաձայնությամբ որոշված տարածք, որի սահմաններից հակամարտող կողմերի ուժերը դուրս են բերվել այնպիսի շրջաններ, որոնց միջև եղած հեռավորությունը բացառում է որևէ կողմի հիետակրծման կամ այլ սպառազինության կիրառման հնարավորությունը:

հակամարտության գոտի – зона конфликта – conflict area  
Տարածք, որտեղ անմիջականորեն ծավալվում են հակամարտային գործընթացները:

հակաօդային պաշտպանության նույնականացման գոտի – зона идентификации противовоздушной обороны – air defense identification zone

Հաստատված սահմաններով օդային տարածք, որում պահանջվում է արագ կերպով որոշարկել, տեղորոշել և վերահսկել թռչող ապարատը:

համատեղ մարտական գործողությունների գոտի – зона совместных боевых действий, район боевых действий многонациональной оперативно-тактической группы – joint operations area

համատեղ վերահսկվող գոտի – совместно контролируемая зона – joint security area

Կոնկրետ շրջան, որը միացյալ ուժերի հրամանատարը սահմանում է, որպեսզի հեշտացվի համատեղ օպերացիաներին աջակցող համատեղ զորակայանների և դրանց միացնող հաղորդակցության ուղիների պաշտպանությունը:

հատուկ նշանակության գոտի – տես *գոտի՝ առանձնակի կարևորության գոտի*

հետազննման գոտի – տես *գոտի՝ հետևման գոտի*

Շրջան, որում նշանակետերի հետազննումը կատարվում է մեկ ՌՏԿ-ով:

հետախուզական պատասխանատվության գոտի – зона разведывательной ответственности – area of intelligence responsibility

Հրամանատարին հատկացված տարածք, որտեղ նա պատասխանատու է հետախուզական տվյալների ձեռքբերման և հաղորդման համար:

հպման գոտի – տես *գոտի՝ զգեստնման գոտի*

ՀՕՊ-ի գոտու թռիչքանցման միջանցք – коридор пролета зоны ПВО – traverse level

Ըստ բացարձակ և հարաբերական բարձրությունների սահմանված գոտի, որով շարժվելով ինքնաթիռը իրավունք ունի հատելու ՀՕՊ-ի պատասխանատվության գոտին:

ՀՕՊ-ի մերձագործ ու փոքր հեռահարությամբ միջոցներով խոցման գոտի – зона

поражения средств ПВО ближней и малой дальности – short-range air defense engagement zone

ՀՕՊ-ի միջոցների անսահմանափակ գործողության գոտի – зона неограниченного действия ПВО – air defense action area

Շրջան և դրա վերևում գտնվող օդային տարածք, որտեղ յուրային ինքնաթիռները կամ «մակերևույթ–օդ» դասի հրթիռները սովորաբար ունեն, բացառությամբ որոշակի պայմանների առկայության դեպքի, գործելու գերակայություն:

մարտական ներգործության գոտի – зона боевого воздействия – area of influence

Շրջան, որտեղ զորքերի (ուժերի) հրամանատարը կարող է անմիջականորեն ներգործել մարտական գործողությունների ընթացքի վրա՝ սովորաբար իր հրամանատարության կամ օպերատիվ ենթակայության տակ գտնվող կրակային աջակցության համալիրների տարաշարժման կամ կիրառման միջոցով:

մարտական ներգործության միջոցների հասանելիության գոտի – зона досягаемости средств боевого воздействия – battle space

Տարածության այն հատվածը, որտեղ սպառազինության տվյալ համակարգը (համալիրը) կարող է խոցել տրված նշանակետը:

մեծ ինտենսիվությամբ օդային երթևեկության կառավարման գոտի – зона управления воздушным движением высокой интенсивности – high-density airspace control zone

Օդային տարածության վերահսկման պլանով կամ հրամանով սահմանված տարածք, որում կենտրոնացված գործում են մեծ թվով տարատեսակ զենքեր և օդային տարածքի օգտագործողներ:

մեռյալ գոտի – տես *տարածություն մեռյալ տարածություն 3*

ոչ կրակակոծելի գոտի – необстреливаемая зона – no-fire area

Գոտի, որտեղ կրակակոծումը արգելված է:

չեզոք գոտի – нейтральная зона – neutral zone

Տարածք, որն ըստ միջազգային պայմանագրի չի կարող լինել ռազմական գործողությունների վայր կամ ռազմական օպերացիաների բազա:

պաշտպանված գոտի – տես *տեղ՝ ծածուկ տեղ*

պաշտպանության գլխավոր գոտի – главная полоса обороны – home defense line, main line of defense

Պաշտպանության գոտու (տես *գոտի՝ պաշտպանության գոտի*) գլխավոր տարրը:

պաշտպանության գոտի – полоса обороны – defense area, defensive position

Տեղանքի շերտ, որը նախանշանակված է զորամիավորման ուժերով պաշտպանությանը հետևյալ նպատակներով. դիրքային պաշտպանության ժամանակ՝ հակառակորդին պարտության մատնելու, հարձակումը հետ մղելու և տեղանքի կարևոր բնագծերն ու շրջանները պահելու, տարաշարժուն պաշտպանության ժամանակ՝ դեպի խորք շարակարգված բնագծերի հաջորդական պաշտպանությամբ հարձակվող հակառակորդին պարտության մատնելու:

պատասխանատվության գոտի – зона ответственности – area of responsibility

1. Տեղանքի որոշակի հատված, որտեղ հրամանատարը լիազորված է պլանավորելու և իրագործելու օպերացիաներ: 2. Եվրոպայում ՆԱՏՕ-ի յուրաքանչյուր ռազմավարական կամ տարածաշրջանային հրամանատարությանն անրագրված աշխարհագրական գոտի: 3. Ռազմածովային տերմինաբանությունում. հակառակորդի զբաղեցրած տարածքի նախապես դրոշված հատված, որտեղ աջակցման նավերը պատասխանատու են նախատեսված կամ չպլանավորված նշանակետերի դիտման ու խոցման համար:

պատնեշների գոտի – полоса заграждений – obstacle belt

պլաստիկ ձևախախտման գոտի – зона пластической деформации – plastic zone

Պայթյունից առաջացած ձագարահորի շուրջ եղած գոտին:

ռադիոտեղորոշումային կայանի տեսանելիության գոտի – տես *գոտի՝ ռադիոտեղորոշումային հայտնաբերման գոտի*

ռադիոտեղորոշումային հայտնաբերման գոտի – зона радиолокационного обнаружения, зона видимости радиолокационной станции – radar coverage

Որոշակի չափերի օդային տարածություն, որում տվյալ կայանն ի վիճակի է հայտնաբերելու նշանակետեր:

ռադիոտեղորոշումային նշանացուցման գոտի – зона радиолокационного целеуказания – radar-target indication zone

սահմանափակ կրակային գոտի – зона ограниченного огня – controlled firing area

Գոտի, որում հրետանին կրակ է վարում այնպիսի վերահսկվող պայմաններում, ինչպիսիք են, օրինակ, թռչող ինքնաթիռի համար վտանգի բացառումը ևն:

սահմանափակ մուտքի գոտի – зона ограниченного доступа – restricted area

Օդային տարածություն, որտեղ թռչքները սահմանափակված են որոշակի պայմաններով:

սպառազինությունների համար արգելված գոտի – зона, запрещенная для вооружений – weapons exclusion zone

սպառազինությունների սահմանափակման գոտի – зона ограничения вооружений – weapons limitation zone

սպասման գոտի – зона ожидания – holding zone

Տեղանքի (ծովի) տվյալ շրջանի վերևում գտնվող օդային տարածություն, որը նախանշանակված է թռչող սպարատների (դրանց խմբերի) գտնվելու համար այն դեպքերում, երբ դրանց առաջադրանքները պետք է ձգրտվեն, դրանք պետք է սպասեն հաստատված երթուղու կամ վայրէջքի անցնելու թույլտվության:

ստուգողական-տեղեկատվական գոտի – контрольно-информационная зона – advisory area

վայրնետման գոտի – зона выброски – drop zone

Նշանակված գոտի, որում կատարվում է օդադեսանտային զորքի, տեխնիկայի, սպառազինության կամ մատակարարման առարկաների վայրնետում, որտեղ իջեցվում են օդադեսանտային ուժերը, տեխնիկան և ռազմական գույքը:

վտանգավոր գոտի – опасная зона – danger area

Օդային տարածք, որը կարող է ժամանակ առ ժամանակ վտանգավոր լինել այն հատող որևէ օդանավի համար:

վերահսկվող գոտի – контролируемая зона – control area

վնասման գոտի – зона повреждений – damage area

Կենդանի օրգանիզմի կամ տեխնիկական միջոցի այն հատվածը, որն արտաքին ազդեցության հետևանքով վնասվել է:

տարանջատման գոտի – зона разделения – separation zone

Երկու հակամարտ օբյեկտների (կողմերի, ուժերի ևն) միջև ստեղծվող չեզոք գոտի (երբեմն՝ զբաղեցրած տարանջատող ուժերով):

տարանցման գոտի – транзитная зона – transit zone

Միջազգային օդանավակայանի հատված, որը գտնվում է անձնագրային ստուգման կետերի հետևում, որտեղ հայտնվում է տարանցմամբ տվյալ օդանավակայանն այցելած ուղևորը:

ուղղաձիգ վայրէջքի գոտի – зона вертикальной посадки – vertical landing zone

Գետնին նշված հատուկ շրջան (տարածություն), որը նախատեսված է ուղղաձիգ վերթիռով ու վայրէջքով ինքնաթիռների նստեցման և օդ բարձրացման համար:

փակ գոտի – закрытая зона – closed area

Ցամաքային, ջրային կամ օդային տարածություն, որտեղ տեղաշարժը ժամանակավորապես կամ մշտական հիմունքով արգելված է:

քայքայման գոտի – зона разрушения – rupture zone

օդային մոտեցումների գոտու հատված – участок полосы воздушных подходов; полоса, свободная от препятствий – clearway

Թռիչքուղու վերջում գտնվող օդային տարածքի ուղղանկյուն հատված, որը գտնվում է համապատասխան լիազորություններով օժտված մարմնի (պա-

տասխանատու անձի) հսկողության տակ և նախատեսված (նախապատրաստված) է, որպեսզի ինքնաթիռը անվտանգ կերպով կատարի վերընթաց շարժման առաջին փուլը՝ մինչև որոշակի բարձրության հասնելը:

**գործ** – 1. дело, 2. дело, досье, папка – 1. affair, 2. matter, 3. task, 4. dossier, file

գաղտնիացված գործ – засекреченное дело – classified matter

գործերի կառավարչություն – управление делами – administration

գործերի վիճակ – положение дел – posture

դատական գործ – судебное дело – case

կրոնական գործեր – религиозные дела, дела религий – religious affairs

գործի համառոտ շարադրանք – краткое изложение дела – brief

հանրային գործեր – общественные дела – public affairs

հանրային գործերի գնահատում – оценка общественных дел – public affairs assessment

հասարակական գործեր – տես *գործ՝ հանրային գործեր*

պետական գործեր – государственные дела – public affairs

**գործադիր** – исполнительный – executive

գործադիր ներկայացուցիչ – исполнительный представитель – executive agent

**գործադուլ** – забастовка, стачка – strike

Որևէ պահանջի կատարման համար աշխատանքի կոլեկտիվ կազմակերպված դադարեցում:

**գործածում** – տես *օգտագործում*

**գործակալ** – агент – agent

Մարդ, որը վարժեցված է հետախուզական կամ հակահետախուզական նպատակներով որոշակի տեղեկույթի ձեռքբերման կամ դրան աջակցելուն:

գաղտնի գործակալ – секретный агент, шпион – spook

գնումների գծով գլխավոր գործակալ – генеральный агент по закупкам – principal agent

ՆԱՏՕ-ի համակարգում. պետություն կամ կազմակերպություն, որն սպառազինությունների գնման ժամանակ հանդես է գալիս որպես պետությունների խմբի վարչական ներկայացուցիչ:

կրկնակի գործակալ – двойной агент – double agent

հավաքագրորդ գործակալ – агент-вербовщик – spotter

Գործակալ կամ նշանակված ծպտյալ անձ, որը որոնում և գնահատում է հետախուզության համար արժեքավոր պաշտոններ զբաղեցնող անձանց:

հետախուզական տեղեկությունների աղբյուրների հետ աշխատելու համար գործակալների ընտրազատում – отбор агентов для работы с источниками разведывательной информации – screening

Անհատի կամ անհատների խմբի գնահատում, որը կատարվում է, որպեսզի որոշվի նրանց համապատասխանությունը տեղեկություններ կորզելու պահանջներին ու նախապես որոշված չափանիշներին (կերպարին) և ներառում է հետախուզական արժեք ներկայացնող տեղեկություններին տիրապետող անձի իմացության ոլորտի, առնչությունների և նրա նկատմամբ հնարավոր մտեցումների հնարների որոշում ու գնահատում:

«ննջող» գործակալ – «спящий» агент, «крот» – sleeper

Գործակալ, որը շատ լավ գաղտնիացված է, ստեղծել է լեզալ վիճակ և թաքնվել է՝ պատրաստ լինելով առաջին իսկ ազդանշանով անցնելու հետախուզական կամ դիվերսիոն գործունեության:

**գործակալություն** – 1. агентство, 2. ведомство, служба – 1. agency, 2. institution, agency

1. Հետախուզական միավորում, կազմակերպություն, որը նախանշանակված է տեղեկույթ հավաքելու և մշակելու համար: 2. Ներկայացուցչական հիմնարկ, ներկայացուցչություն, ավելի մեծ

հիմնարկի բաժանմունք, որը տնօրինում է տվյալ տարածաշրջանում դրանց գործերը, կատարում որոշակի շրջանով դրանց առաջադրանքները: 3. Հին և միջնադարյան Հայաստանում. որևէ բնագավառ կառավարող արքունական վարչություն (սպարապետություն, հազարապետություն, մաղխագություն ևն):

արժեքավորող գործակալություն – эвально-вационное ведомство – evaluation agent

Համատեղ փորձարկման/փորձաքննության պլանավորման, համակարգման և արդյունքների գնահատման համար պատասխանատու գործակալություն:

Կենտրոնական հետախուզական գործակալություն – Центральное разведывательное управление, ЦРУ – Central Intelligence Agency

ԱՄՆ-ում. արտաքին հետախուզության և հակահետախուզության գլխավոր մարմինը:

հետախուզական գործակալություն – разведывательное агентство, разведывательный орган – intelligence agency

հետախուզական գործունեության ոլորտ – разведывательная дисциплина – intelligence discipline

տուժածներին օգնություն ցույց տվող գործակալություն – агентство (НПО) по оказанию помощи пострадавшим – relief agency

օժանդակ գործակալություն – տես *ծառայություն՝ օժանդակ ծառայություն*

**գործակից** – коэффициент – coefficient, factor

թուլացման գործակից – коэффициент ослабления – attenuation factor

ինտենսիվության գործակից – коэффициент интенсивности – intensity factor

հարաբերակցական գործակից – коэффициент корреляции – correlation factor

ուժեղացման գործակից – коэффициент усиления – amplification coefficient

Տեխնիկական միջոցների (սարքերի, ապարատների ևն) բնութագրիչ, որը ցույց է տալիս դրանց ելքային ու մուտ-

քային արժեքների հարաբերությունը (օրինակ՝ լարման, հզորության են):

**գործակցելիություն** – տես *փոխգործելիություն*

մարտավարական օղակի ուժերի և միջոցների գործակցելիություն – интероперабельность сил и средств тактического звена – battlefield interoperability

**գործակցություն** – տես *փոխգործություն*

**գործառել** – տես *գործողություն՝ գործողություն կատարել*

**գործավար** – делопроизводитель – clerk

**գործարկել** – 1. задействовать, 2. приводить в движение – 1. enable, employ, 2. activate

1. Գործողության մեջ դնել: 2. Շարժման մեջ դնել:

**գործարկիչ** – пускатель – trigger

Սարք կամ որևէ մեխանիզմ (բնական կամ ձեռակերտ), որն աշխատելով գործողության մեջ է դնում այլ սարքի (ապարատի են) կամ սկզբնավորում է որևէ բնական պրոցես:

**գործարկում** – 1. задействование, 2. запуск, инициирование, 3. տես *շահագործում՝ շահագործման հանձնում*, 4. пуск – 1. employment, 2. initiation, 3. տես *շահագործում՝ շահագործման հանձնում*, 4. launch, launching

1. Շահագործման հանձնում, գործի գցում: 2. Տեխնոլոգիական պրոցես, որը տեղի է ունենում արձակման կայանքում (ԱԿ) ու հրթիռում և հանգեցնում է ԱԿ-ի նկատմամբ հրթիռի շարժման:

**գործել** – տես *բանել*

**գործելակերպ** – образ действий, манера – line of action

**գործընկերություն** – партнерство – partnership

Գործընկերության անհատական ծրագիր – Индивидуальная программа партнерства – Individual Partnership Program

Գործընկերության գործողությունների անհատական պլան – տես *Անհատական*

*գործընկերության գործողությունների ծրագիր*

գործընկերության նպատակներ – цели партнерства – partnership goals

«Գործընկերություն հանուն խաղաղության» – «Партнерство ради мира», PPM – Partnership for Peace, PfP

ՆԱՏՕ-ի և գործընկեր պետության միջև երկկողմ գործնական համագործակցության ծրագիր, որի շնորհիվ գործընկեր պետությունները կարող են ՆԱՏՕ-ի հետ զարգացնել անհատական հարաբերություններ՝ ինքնուրույն կերպով որոշելով այդ համագործակցության գերակա ուղղությունները (ոլորտները):

«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիր – Программа «Партнерство ради мира» – Partnership for Peace Program

«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի մասնակից պետությունների օպերացիա՝ ՆԱՏՕ-ի ղեկավարությամբ – операция стран-участниц программы «Партнерство ради мира» под руководством НАТО – NATO-led Partnership for Peace operation

ռազմավարական գործընկերություն – стратегическое партнерство – strategic partnership

**գործիք** – 1. инструмент, 2. орудие – 1. tool, instrument, 2. implement

կտորիչ գործիքների լրակազմ – комплект инструментов для разломки – demolition tool kit

**գործիքակազմ** – инструментарий – instruments

Տվյալ ոլորտում կիրառվող միջոցների, եղանակների, հնարների ամբողջությունը:

**գործիքարան** – инструментарий – instruments

Տվյալ պրոբլեմի լուծման՝ տվյալ նպատակին հասնելու միջոցները, եղանակները, հնարները:

**գործող** – действующий – active

**գործողություն** – действие, акт – 1. act, action, 2. operation



անթաքույց գործողություններ – открытые действия – overt operation

անհանգստացնող գործողություններ – беспокоящие действия – harassment, disturbing actions

Մարտական գործողություններ, որոնց նպատակն է ուժասպառ անել, բարոյալքել հակառակորդին, ձախողել նրա պատրաստույթը հարձակմանը, վերախմբավորումը, ինժեներական աշխատանքները և այլն: Այդ գործողություններից են՝ պարբերական կրակակոծումները, հրետանու հաջորդական կրակը, ինքնաթիռների փոքր խմբերով իրագործվող ավիացիոն հարվածները ևն:

ապահովող գործողություններ – обеспечивающие действия – supporting operations

Միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են մարտական գործողությունների նշանակված շրջաններում (պատասխանատվության գոտիներում) գործերի (ուժերի) հիմնական խմբավորումների մշտական մարտական պատրաստության (մարտունակության) ու ռազմական գործողությունների ապահովմանը: Ներառում են՝ հետախուզություն, ՋԽՁ-ից անձնակազմի պաշտպանություն, ռադիոէլեկտրոնային պայքար, ինչպես նաև գործերի պահպանություն, քողարկում և ինժեներական ծածկապաշտպանություն:

ավիացիայի գործողություններ կանչով – տես *արտաթռիչք՝ արտաթռիչք կանչով* Թռիչքադաշտում կամ օդում հերթապահության վիճակում գտնվող ավիացիոն ստորաբաժանումների կամ զորամասերի անցումը նոր հայտնաբերված օբյեկտների ոչնչացման, լրահետախուզման, սուզանավերի և այլ ռազմական տեխնիկայի որոնման ևն մարտական խնդիրների կատարմանը կառավարման կետերից ուղարկված կանչերով:

ավիացիայի մարտավարական գործողություններ – тактические действия авиации – tactical air operation

գործողության ժամկետ – срок действия – currency

գործողության շառավիղ – 1. радиус действия, 2. տես *հեռահարություն* – 1. range,

radius of action, action radius, scope, 2. տես *հեռահարություն*

1. Այն առավելագույն տարածությունը, որը կարող է անցնել վառելիքով լրիվ լիցքավորված նավը կամ ինքնաթիռը և առանց լրալիցքավորման վերադառնալ իր ելակետը: 2. Տես *հեռահարություն* (սահմանումը):

գործողության ոլորտ – сфера действия, охват – incidence

Այն ընդգրկույթը, որի վրա տարածվում է ազդեցությունը:

գործողություն կատարել – оперировать, совершать действия – handle

գործողություններ զինյալների դեմ – действия против боевиков – counter-guerrilla warfare

գործողությունների ինքնավարություն – автономность действий – independence

Համակարգի կամ դրա մի մասի կարողությունը՝ գործելու կամ պահպանելու իր գոյությունը առանց լրացուցիչ լիցքավորման՝ համարման՝ մատակարարման ևն (առանց մարդկային, նյութական, էներգետիկ ևն ռեսուրսների լրացման) կամ առանց ընթացիկ կառավարման, այսինքն՝ ինքնուրույն կերպով:

գործողությունների համախումբ – совокупность действий – activity

գործողությունների հաստատված կարգ – установленный порядок действий – standing operating procedure, standard operating procedure

գործողությունների սահմանափակ գոտի – ограниченная зона действий – restricted operations area

Օդային տարածության հատված, որում որոշ մասնակիցների ռազմական ներկայությունը սահմանափակված է:

գործողությունների սահմանափակում – ограничения в действиях – operational limitation

գործողություններ հակակառավարական զինված կազմավորումների դեմ – действия против антиправительственных вооруженных формирований, борьба



против незаконных вооруженных формирований – counterinsurgency warfare

խորքային արգելիչ գործողություններ – воспреещающие действия по объектам в глубине обороны противника – deep interdiction

Հակառակորդի պաշտպանության խորքում՝ ըստ օբյեկտների ձեռնարկվող արգելիչ գործողություններ:

կանոնավոր մարտական գործողություններ – систематические боевые действия – systematic combat actions

Չորքերի (ուժերի) մարտական գործողությունների տեսակ. կիրառվում է ՌՇՈՒ-ի և ՌՕՈՒ-ի ուժերի ձեռնարկած օպերացիաների ընդմիջակայքում սահմանափակ նպատակներով՝ հակառակորդի վրա անընդմեջ ազդեցություն գործելու, նրա գործողությունները կաշկանդելու և նրան կորուստներ պատճառելու համար:

կաշկանդող գործողություն – сковывающее действие – holding action

Գործողություն (հարձակում), որը ձեռնարկվում է հակառակորդին հարձակումից հետ պահելու կամ դիրքերից նրա տեղաշարժը կանխելու նպատակով:

հակաականային գործողություններ – противоминные действия – countermine operation

հակապստամբական գործողություններ – противоповстанческие действия, борьба против повстанцев – counterinsurgency, COIN

հակապստամբական գործունեություն – противоповстанческая деятельность – counterinsurgency warfare

հակադարանային գործողություն – противозасадное действие – antiambush drill

Միջոցառումների համալիր, որոնց նպատակն է յուրային ստորաբաժանումները (գորամասերը) զերծ պահել դարանից հանկարծակի հարձակումից (այդ թվում՝ կրակային):

հակապարտիզանական գործողություններ – антипартизанские действия – counter-guerrilla warfare

հակառակորդի ավիացիայի դեմ հարձակողական գործողություններ – наступательные действия против авиации противника – offensive counterair

հակառակորդի հնարավոր գործողություններ – возможные действия противника – enemy capabilities

հակառակորդի ջախջախմանը կողմնորոշված ռազմական գործողություններ – военные действия, ориентированные на разгром противника – force-orientated mission

Վճռական ռազմական գործողություններ, որոնք պլանավորվում են հակառակորդի հնարավորինս մեծ ուժերը ձեղքմամբ, թևանցմամբ, շրջափակմամբ, ծուղակմամբ, կառավարման համակարգի քայքայմամբ կամ այլ հնարով արագորեն ջախջախելու համար:

համատեղ գործողություն – совместное действие – unified action

Կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների համաձայնեցված գործունեություն՝ ջանքերի միասնության ապահովման նպատակով:

հատուկ իրավիճակում ձեռնարկվող գործողությունների պլան – план действий в особой обстановке – contingency plan, sequel

հատուկ մեթոդների կիրառմամբ վարվող մարտական գործողություններ – боевые действия с применением специальных методов – unconventional warfare

հարձակողական զսպիչ գործողություններ – наступательные сдерживающие действия – aggressive delay

հարվածային գործողություն – ударное действие – shock action

մահաբեր գործողություն – убойное действие – casualty-producing effect

Կենդանի օրգանիզմի վրա գնդակի կամ հրետանային արկի (ականի, նռնակի, ռումբի) բեկորի խոցիչ ազդեցությունը:

մարտական գործողություններ – боевые действия – combat operations, tactical operations

1. Առաջադրված մարտական (օպերատիվ) խնդիրների կատարման ժամանակ ՋՈՒ-ի բոլոր տեսակների գորամիավորումների, գորամասերի, ստորաբաժանումների կազմակերպված գործողությունները: 2. Օպերացիայի շրջանակում կամ օպերացիաների միջև մի քանի հաջորդաբար ծագող օպերատիվ, օպերատիվ-մարտավարական, մարտավարական խնդիրների լուծման համար ՋՈՒ-ի տեսակների գորամիավորումների օպերատիվ կիրառման ձև:

մարտական գործողություններ արկտիկական պայմաններում – боевые действия в арктических условиях – arctic warfare

Ռազմական օպերացիաներ, որոնք տեղի են ունենում Արկտիկայի և Անտարկտիկայի շրջաններում:

մարտական գործողությունների գոտի – зона боевых действий – area of operations, zone of action, combat zone

Ռազմական գործողությունների շրջանի մաս, որն անհրաժեշտ է մարտերի և օպերացիաների վարման, դրանց վարչաթիկունքային ապահովման համար, և որտեղ ծավալվում (բազավորվում) ու մարտական գործողություններ են վարում մարտավարական (օպերատիվ-մարտավարական) օղակի ցամաքային կազմավորումները, ինչպես նաև ավիացիոն և ՀՕՊ-ի ուժերն ու միջոցները:

մարտական գործողությունների ժամանակ որոնում և փրկություն – поиск и спасение в ходе боевых действий – combat search and rescue

մարտական գործողությունների շրջանի դիտում – наблюдение за районом боевых действий – battlefield surveillance

մարտական գործողությունների վարման անընդհատություն – непрерывность ведения боя – continuity of operations

Ռազմական գործողությունների կամ առաջադրանքի կատարման ժամանակ հաջողության հասնելու համար անհրաժեշտ գործառույթների, խնդիրների և/կամ պարտականությունների իրականացման անընդհատության աստիճանը կամ վիճակը: Ներառում է՝ հրամանատարի գործառույթներն ու

պարտականությունները, ինչպես նաև նրա անմիջական ղեկավարությամբ գործող շտաբի և այլ ենթակաների կողմից կատարվող օժանդակ գործառույթներն ու պարտականությունները:

մարտական հոգեբանական գործողություններ – боевые психологические действия – battlefield psychological activities

Ծրագրված հոգեբանական գործողություններ՝ որպես մարտական գործողությունների բաղկացուցիչ մաս, հոգեբանական ճնշում կիրառելու համար:

մոլորեցնող գործողություն – введение в заблуждение – deception action

շեղող գործողություն – отвлекающее действие – diversion

Գլխավոր՝ հիմնական գործողությունից հակառակորդի ուշադրությունը շեղելու նպատակով ձեռնարկվող գործողություն:

ռազմական գործողություններ – военные действия – military operations, military action

1. Կողմերի ընդդիմամարտությունը պատերազմում: 2. Քաղաքական և ռազմական նպատակների հասնելու համար ՈԳԹ-ում ՋՈՒ-ի տեսակների ուժերի ու միջոցների, ռազմավարական և օպերատիվ խմբավորումների կազմակերպված կիրառումը:

ռազմական գործողությունների ապահովում – обеспечение военных действий – military action support

Մարտական պատրաստության մեջ զորքերի (ուժերի) պահման, նրանց մարտունակության պահպանման և առաջադրված խնդիրների հաջող և պատեհաժամ կատարման համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով իրականացվող միջոցառումների համալիր, որը ներառում է՝ օպերատիվ (մարտական) ապահովումը, բարոյահոգեբանական ապահովումը, տեխնիկական ապահովումը, թիկունքային ապահովումը և բժշկական ապահովումը:

ռազմական գործողությունների դադարեցում – прекращение военных действий – cessation of hostilities

1. Կողմերի զինված պայքարի ավարտ՝ պայմանավորված պատերազմի, զինված հակամարտության ավարտմամբ: 2. Սովորաբար պատերազմող կողմերի միջև զինադադարի կնքման հետևանքով մարտական գործողությունների ու կրակի ժամանակավոր դադարեցում ամբողջ ռազմաձևակառուցում կամ նրա որևէ հատվածում:

ռազմական գործողությունների թատերաբեմի ներսում – տես *ներռազմաթատերաբեմային*

ռազմական գործողությունների համադասում – координация военных действий – warfare coordination

Զինված ուժերի խմբավորումների ջանքերի փոխհամաձայնեցում ընդհանուր նպատակներին հասնելու համար:

ռազմական գործողությունների շրջան – зона военных действий – war zone

ռազմական գործողությունների օպերատիվ մակարդակ – оперативный уровень военных действий – operational level of war

ռազմական գործողություններ պահանջող հատուկ իրավիճակ – особая обстановка, требующая осуществления военных действий – contingency

ռազմական գործողություններում ստեղծված ծայրաստիճան վտանգավոր իրադրություն – крайне опасная обстановка в ходе военных действий – emergency in war

Պատերազմական պայմաններում ծագած արտակարգ իրավիճակ:

վարել ռազմական գործողություններ – вести военные действия – operate

ցուցադրական գործողություններ – демонстративные действия – demonstration

Զորքերի (ուժերի) ռազմական և այլ բնույթի գործողություններ, որոնց նպատակն է առաջիկա մարտական գործողությունների բնույթի, զլխավոր հարվածի ուղղության (ուժերի կենտրոնացման) մասին կեղծ պատկերացումների ստեղծումը:

ուղղորդված էներգիայի զենքի կիրառմամբ մարտական գործողություններ – боевые действия с применением оружия

направленной энергии – directed-energy warfare

Լազերային սարքերի, ուղղորդված էներգիայի ճառագայթման սարքերի և դրանց հակամիջոցների կիրառմամբ վարվող մարտական գործողություններ:

օպերատիվ գործողությունների կատարման ստանդարտ – стандарт осуществления оперативных действий – operational performance standard

**գործոն** – фактор – factor

Որևէ գործընթացի, երևույթի շարժիչ ուժը, պատճառը, դրանցում առկա որևէ էական հանգամանք, որը պայմանավորում է դրանց բնույթը:

անորոշության գործոն – фактор неопределенности – uncertainty factor

խցիչ գործոն – поражающий фактор – damaging factor

մարդկային գործոն – человеческий фактор – human factor

որոշիչ գործոններ – определяющие факторы – governing factors

պատերազմում աշխարհագրական գործոն – географический фактор в войне – geographical factor in the war

սահմանափակող գործոն – ограничительный фактор – limiting factor

1. Գործոն կամ պայման, որը ժամանակավորապես կամ մշտապես խանգարում է առաջադրանքի կատարմանը: 2. Համատեղ օպերացիաների պլանավորման գործում. վերադաս հրամանատարության կողմից հրամանատարությանը ներկայացվող պահանջներ, որոնք արգելում են որոշակի գործողություններ՝ սահմանափակելով գործելու ազատությունը:

սոցիոմշակութային գործոն – социо-культурный фактор – sociocultural factor

վճռորոշ գործոններ – решающие факторы – decisive points

Պլանավորման մեջ կարևոր ենթակառուցվածքները, տեղանքի առանձնահատկությունները, զորամասերի մարտական հնարավորությունները ևն, որոնք հաշվի են առնվում թիրախների ընտրության ժամանակ:

**գործվածք** – ткань – material, fabric

**գործուղել** – 1. командировать, откомандировать, 2. прикомандировать – 1. send on mission, second, 2. attach

**գործուղվածություն** – прикомандирование – attachment

**գործուղում** – командирование, командировка – secondment

**գործունեություն** – деятельность – activity

գործունեության մասշտաբ – масштаб деятельности – volume of activity

գործունեության տեսակ – տես *գրադմունք*

դիվերսիոն գործունեություն – диверсионная деятельность – sabotage

Դիվերսանտի (տես *դիվերսանտ 1, 2*) գործունեությունը:

թմրամիջոցների հետ կապված վերահսկելի միջազգային գործունեություն – контролируемая международная деятельность, связанная с наркотическими средствами – international narcotics activities

Թմրանյութերի օրինական շրջանառության գծով միջազգային արտոնագրված գործունեություն:

հակադիվերսիոն գործունեություն – контрдиверсионная деятельность – countersabotage

համատեղ գործունեություն – տես *համագործակցություն*

հատուկ գործունեություն – специальная деятельность – special activities

չթույլատրված գործունեություն – несанкционированная деятельность – unauthorized activities

վարչաթիվունքային գործունեություն – административно-тыловая деятельность – administration

վարչատնտեսական գործունեություն – административно-хозяйственная деятельность – administration

1. Մարտավարությանը և ռազմավարությանը չվերաբերող բոլոր ռազմական հարցերով իրականացվող կառավարային և կատարողական գործունեություն՝ գերազանցապես թիկունքային ապահովման և կադրերի կառավարման ոլորտներում: 2. Ջորամասերի և ստորաբաժանումների ներքին կառավարում:

քարոզչական հոգեբանական գործունեություն հակառակորդից գրավված տարածքում – пропаганда среди гражданского населения на занятой территории противника – psychological consolidation activities

Ճգնաժամային կամ պատերազմական իրադրությունում ձեռնարկված պլանավորված հոգեբանական գործունեություն հակառակորդից գրավված և յուրային վերահսկողության տակ անցած տարածքի քաղաքացիական բնակչության մեջ այնպիսի ցանկալի վերաբերմունք ձևավորելու համար, որը նպաստեր յուրային ռազմական նպատակներին և հրամանատարության օպերացիոն ազատությանը:

քայքայիչ գործունեություն – подрывная деятельность, диверсия – subversion

ֆինանսատնտեսական գործունեություն – финансово-хозяйственная деятельность – financial and economic activities

Ռեսուրսները, ներառյալ՝ ֆինանսական, արդյունքի վերածելու գործընթաց:

**գվարդիա** – гвардия – guard

Լավագույն՝ ընտրյալ զորք (զորամաս, զորամիավորում, նավ):

Ազգային գվարդիայի պահեստազոր – резерв Национальной гвардии – Inactive National Guard

**գվարդիական** – 1. гвардейский, 2. гвардеец – 1. guardian, 2. guardsman

1. Գվարդիային առնչվող, հատուկ, նաև՝ Հայրենական մեծ պատերազմի շրջանում ռեակտիվ հրետանու («Կատյուշա») կազմավորումների անվանումը (գվարդիական ականանետային զորամաս): 2. Գվարդիական կազմավորման զինծառայող:

**գրագիր** – писарь – clerk

**գրադիենտ** – градиент – gradient

**գրանցահամար** – տես *գրանցում` գրանցման համար*

**գրանցամատյան** – журнал записей – register

**գրանցում** – регистрация – registration

գրանցման համար – регистрационный номер – registration number

**գրառում** – запись – record

պաշտոնական գրառում – տես *արձանագրություն*

**գրասենյակ** – офис, бюро, контора, канцелярия – office

**գրաստ** – вьючное животное – pack-animal

**գրավել** – տես *գավթել*

**գրավում** – 1. захват, 2. овладение – 1. capture, captivity, 2. occupation

1. Ուժով տիրելը, տիրանալը: 2. Նշանակետի հայտնաբերումից հետո ռադիոտեղորոշումային և այլ բռնիչ միջոցների մարտահաշվարկների կամ հետևող համակարգերի գործողությունների հաջորդականությունը դրա հետագա ուղեկցումն ապահովելու համար:

կարևոր օբյեկտների գրավում – захват важных объектов – capture of important objects

**գրատ** – шинель – great coat

**գրացուցանակ** – транспарант – banner

**գրաքննիչ** – цензор – censor

**գրաֆիկ** – график – plot

**գրաֆիկա** – графика – graphic

**գրաֆիկական** – տես *գծագրական*

**գրգռականություն** – возбудимость – inflammability

**գրգռիչ** – 1. раздражитель, 2. տես *հարուցիչ* – 1. irritant, 2. տես *հարուցիչ*

**գրգռում** – 1. раздражение, 2. возмущение – irritation

մագնիսական գրգռում – магнитное возмущение – magnetic variation

**գրոհ** – 1. атака, 2. штурм – 1. attack, assault, 2. storm, assault

Հակառակորդին ոչնչացնելու նպատակով մարտակարգով ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների, ինչպես նաև առանձին նավերի, ինքնաթիռների ու դրանց խմբերի դեպի հակառակորդի դիրքեր սլացիկ, նպատակաուղղված և անընդհատ շարժումը, որն ուղեկցվում է ինտենսիվ կրակի վարմամբ:

անհույս գրոհ – безнадежная атака – suicide attack

Գրոհ, որը ձեռնարկվում է ուժերի կատարյալ անհավասարության պայմաններում՝ մահը գերությունից նախընտրելու մտայնությամբ:

առաջանցիկ գրոհ – упреждающий удар – spoiling attack

Հարձակում, որը ձեռնարկվում է գրոհի պատրաստվող հակառակորդի վրա՝ նրա հարձակումը կանխելու և ծախսելու համար:

ավիացիոն գրոհ – տես *հարձակում` օդային հարձակում*

արագ գրոհ – быстрая атака – hasty attack

գրոհի ժամանակ առաջնետում – бросок вперед в атаке – momentum

գրոհի կրակային պատրաստում – огневая подготовка атаки – fire preparation for assault

Գրոհին անմիջականորեն նախորդող՝ հակառակորդի կրակային խոցման շրջան, որը ներառում է հրետակոծություն, հրթիռային, ավիացիոն և այլ միջոցներով հասցվող հարվածներ:

գրոհի հրետանային աջակցություն – артиллерийская поддержка атаки – artillery support of attack

Գրոհի կրակային աջակցության բաղադրիչ, յուրային զորքի գրոհի սկզբում և ընթացքում հրետանու վարած մարտական գործողությունները, որոնք ներառում են հարձակվող ուժերի ճակատի աջև և թևերում հակառակորդի անընդմեջ կրակային խոցումը՝ նրանց

անդադար առաջխաղացումն ապահովելու նպատակով:

գրոհի հրետանային պատրաստում – артиллерийская подготовка атаки – artillery preparation of assault

Գրոհի կրակային պատրաստման բաղադրիչ, հրետանու մարտական գործողություններ, որոնք անմիջականորեն նախորդում են զորքերի գրոհին և կատարվում են նախապես կազմակերպված հրետակոծմամբ՝ հակառակորդի հրետանային և այլ կրակային միջոցների, կենդանի ուժի խոցման, պաշտպանական կառույցների ավերման նպատակով՝ նրան դիմադրելու հնարավորությունից զրկելու համար:

գրոհի վերջնամասի կառավարում – управление завершающей фазой атаки – terminal attack control

Գրոհող ինքնաթիռի տարաշարժումը և զենքի կիրառումը կառավարելու լիազորություն:

գրոհ վրազետնյա նշանակետի վրա – атака наземной цели – ground attack

գրոհ ուղղորդմամբ – атака по наведению – vectored attack

Գրոհ, որի ժամանակ զենքի կրողը չունի թիրախի հետ շփում, այլ այդ շփումը պահպանում է ստորաբաժանումը, որն էլ կրողին իր ուղղորդմամբ հասցնում է զենքի կիրառման կետը:

թևային գրոհ – фланговая атака – flanking attack

Կողային հարձակում, հարձակում հակառակորդի կողային դիրքերի ուղղությամբ:

կեղծ գրոհ – ложная атака – feint

կրկնական գրոհի առաջարկություն – предложение о повторной атаке – reattack recommendation

Գնահատական, որը բխում է մարտական վնասների և զինամթերքի արդյունավետության գնահատումներից, և որի հիման վրա հրամանատարին ներկայացվում է առաջարկություն՝ կրկին գրոհելու թիրախի վրա:

հոգեբանական գրոհ – «психическая» атака – psychological attack

Գրոհ, որը նախատեսված է պաշտպանվող հակառակորդի ահաբեկման,

նրա հոգեկանի կտրուկ և ուժեղ ապակայունացման, դիմադրության կամքի ճնշման համար:

ճակատային գրոհ – фронтальная атака, лобовая атака – frontal attack

սվինային գրոհ – штыковая атака – bayonet assault, bayonet charge

սրընթաց գրոհ – стремительная атака – charge, rush

տեղեկատվական գրոհ – информационная атака – information attack

Տեղեկության գրոհի բաղադրիչ, ապատեղեկության տարածմամբ բնակչության և զինված ուժերի անձնակազմի վրա նպատակային բարոյահոգեբանական ազդեցություն գործելու համար կատարվող գործողություն:

տեղեկության գրոհ – информационная атака – informative attack

Ըստ տևողության ու նպատակների՝ սահմանափակ, բայց մեծ ինտենսիվությամբ գործողություն, որն իրականացվում է տեղեկության դաշտում հակառակորդի տեղեկության համակարգերը, տեղեկության շտեմարանները շարքից հանելու կամ դրանց զգալի վնաս պատճառելու, դրանց մեջ ապատեղեկույթ ներմուծելու, խաղաղ բնակչության և զինված ուժերի անձնակազմի վրա նպատակային բարոյահոգեբանական ազդեցություն գործելու համար:

օդադեսանտային գրոհ – воздушно-десантная атака – airborne assault

**գրոհային** – 1. տես *զինամարտիկ*, 2. штурмовой – 1. տես *զինամարտիկ*, 2. attack, assault

գրոհային ինքնաթիռ – штурмовик – attack aircraft, ground-attack aircraft

Մարտական ինքնաթիռ, որը նախանշանակված է փոքր չափերի ու շարժուն վրազետնյա (ծովային) նշանակետերը փոքր և սահմանային փոքր բարձրություններից խոցելու համար:

գրոհային ռազմանավակ – տես *ափհանիչ*՝ *ափհանիչ միջոց*



**գրոհաջոկատ** – штурмовой отряд – storm-troops, assault troops, shock troops

ժամանակավոր կազմավորում, որը նախանշանակված է ամրացված շրջանի վրա հարձակման, քաղաքում, լեռներում և այլ պայմաններում մղվող մարտերի ժամանակ լավ ամրացված առանձին հենակետերը, դիմադրության օջախները, ամրակառույց կրակակետերը և այլ կարևոր օբյեկտներ գրավելու և ոչնչացնելու (մեկուսականիտելու) նպատակով ձեռնարկվող գրոհի համար:

**գրոհել** – տես *հարձակվել* 1

**գրպանի ազդանշանիչ լապտերիկ** – карманный сигнальный фонарик – miniflare

**գրպանի լապտերիկ** – карманный фонарь – flashlight

**գրություն** – официальное письмо, записка, письменное сообщение – official letter, missive

բացատրական գրություն – пояснительная записка – explanatory note

Գծագրական փաստաթղթի տեքստային հավելված, որը բովանդակում է լրացումներ (բացատրություններ, հաշվարկներ, այլ տեղեկություններ, որոնք հնարավոր չէ արտահայտել գծագրորեն):

մերկացման մասին գրություն – извещение о компроментации, извещение о разоблачении – burn notice

Հետախուզական (գաղտնի) գործակալությունից այլ գործակալություններին կատարվող տեղեկացում այն մասին, որ մի շարք պատճառներով տվյալ անհատը (խումբը) վստահության արժանի չէ:

**գումակ** (*հնգ.*) – обоз – wagon train, train, baggage

Նյութական միջոցների տեղափոխման, պահման և առբերման խնդիրներ կատարող, ձիաքարշ միջոցներով հանդերձավորված ստորաբաժանումների հավաքական անվանումը:

**գումարտակ** – батальон – battalion

Ցամաքային, օդադեսանտային և այլ զորքերի, ծովային հետևակի հիմնա-

կան մարտավարական ստորաբաժանումը, մտնում է գնդի կամ բրիգադի կազմի մեջ և բաղկացած է երեք կամ ավելի վաշտից:

արշավագորային գումարտակ – экспедиционный батальон – expeditionary unit

գումարտակի ավագ – батальонный старшина – sergeant major

երթային գումարտակ – маршевый батальон – draft (march) battalion

Պատերազմի ժամանակ ստեղծվող ժամանակավոր գումարտակ, որն ուղարկվում է գործող բանակի համարման համար:

գրահատանկային գումարտակ – бронетанковый батальон – tank battalion, armored battalion

հրաձգային գումարտակ – стрелковый батальон – rifle battalion

մոտոհետևակային գումարտակ – мотопехотный батальон – mechanized battalion

մոտոհրաձգային գումարտակ – мотострелковый батальон – motorized infantry battalion

տանկային գումարտակ – տես *գումարտակ*՝ *գրահատանկային գումարտակ*

**գումարտակային** – батальонный – battalion

**գույն** – цвет – color

**գույք** – 1. տես *ունեցվածք* 1, 2. инвентарь – 1. տես *ունեցվածք* 1, 2. stock

Ամենօրյա գործածության տնտեսական (կենցաղային) կամ արտադրական նախանշանակման առարկաների համախումբը:

անշարժ գույք – недвижимость, недвижимое имущество – real estate

անշարժ գույքի գծով խորհրդարկիչ խումբ – консультационная группа по недвижимости – real estate advisory team

բոլոր զորատեսակներին անհրաժեշտ ռազմական գույք – военное имущество, необходимое для всех родов войск – common item



գույքի փոխանցման պատվեր-կարգազիր – наряд-заказ на передачу имущества – material release order

ռազմական գույք – военное имущество – military property, stores, materiel, assets

տեղափոխելի գույք – возимое имущество – baggage

**գույքահամար** – инвентарный номер, складской номер – stock number

Գույքացուցակում տվյալ առարկային տրված համարը՝ դրա շարժի վերահսկումը հեշտացնելու համար:

**գույքացուցակ** – инвентарная опись, инвентарь – inventory

**գունավորում** – раскраска – infill

Քարտեզագրության մեջ. քարտեզի դրև է մասը գույնով լցնելը:

բարձրաչափական գունավորում – гипсометрическая окраска, тональная гипсометрия – hypsometric tinting, elevation tint, altitude tint

Քարտեզում բարձրությունները ցույց տալու համար կիրառվող գունավորում:

պաշտպանական գունավորում – защитная окраска – 1. protective coloration, 2. dazzle paint

քողարկիչ գունավորում – տես *քողագունավորում*

**գունդ** – 1. полк, 2. ядро, 3. шар, клубок – 1. regiment, 2. shot, 3. ball

Մեծ թվով պետությունների ՋՈՒ-ում հիմնական մարտավարական և վարչատնտեսական միավորը, որը միջանկյալ դիրք է զբաղեցնում գումարտակի և բրիգադի (դիվիզիայի) միջև, կարող է մտնել զորամիավորումների կազմի մեջ կամ լինել առանձին:

առանձին մոտոհրաձգային գունդ – отбельный мотострелковый полк – motorized rifle regiment

գնդի բուժառայության պետ – начальник медицинской службы полка, начальник медслужбы полка – regimental medical officer

գնդի գնդապետ – полковник полка – colonel of the regiment

գնդի հրամանատար – командир полка – regimental commander

գրահատանկային գունդ – бронетанковый полк, танковый полк – armored regiment

հետևակային գունդ – пехотный полк – infantry regiment

պարեկապահակային գունդ – патрульно-постовой полк – patrol regiment

սահմանապահ զորքերի սահմանապահ գունդ – пограничный полк пограничных войск – border guards regiment

տանկային գունդ – տես *գունդ՝ գրահատանկային գունդ*

## Դ (ԴԱ)

**Դ-30** – Д-30 – D-30

Խորհրդային արտադրության 122-մմ հաուրից:

**դադար** – 1. покой, 2. տես *ընդհատում 1* – 1. dwell, rest, sleep, 2. տես *ընդհատում 1*

**դադարեցում** – 1. տես *ընդհատում 2*, 2. прекращение, 3. приостановка – 1. տես *ընդհատում 2*, 2. stopping, cessation, check, 3. dwell

կրակի դադարեցում – прекращение огня – cease fire

1. Ռազմական գործողությունների դադարեցման կամ ընդհատման ձև, որի հիմնական նպատակն է տեղային զինադադարի պայմանների ապահովումը: Կրում է ըստ ժամանակի, տարածության ու նպատակների սահմանափակ բնույթ (վիրավորների հավաքում ու փոխանակում, բանազնացների ուղարկում ևն): 2. Սահմանված հրամանով հրաձգության դադարեցում զորավարժարաններում, հրաձգարաններում ևն:

**դադարում** – 1. остановка, 2. прекращение – 1. cessation, stopping, 2. dwell

**դադարք** – привал – halt

**դաժանություն** – жестокость – atrocity

**դամբարան** – погребение, захоронение – burial

**դանակահարում** – удар ножом, удар кинжалом – stab

**դանդաղ այրվող հրահաղորդիչ** – медленно горящий огнепровод – safety fuze

**դանդաղեցում** – замедление – 1. drag, 2. delay

Բնական ուժ՝ սարք՝ հարմարանք ևն, որը նվազեցնում է շարժման արագությունը, պրոցեսի (գործընթացի) զարգացման՝ ընթացքի տեմպը:

**դաշինք** – տես *միություն*

դաշինքի առիթ – казус федерис – casus foederis

Հանգամանքներ, որոնք պետությանը պարտադրում են, համաձայն ռազմական դաշինքի մասին իր կնքած պայմանագրի, մտնել պատերազմի մեջ, որն արդեն վարում է իր դաշնակիցը, կամ սկսել պատերազմ՝ ի պաշտպանություն իր դաշնակցի:

ռազմական դաշինք – военный альянс, военный союз – military alliance

Պետությունների՝ պայմանագրային հիմունքներով և ռազմական (ռազմաքաղաքական) նպատակներով ստեղծված միություն:

**դաշնագիր** – տես *պայմանագիր՝ դաշնային պայմանագիր*

**դաշնադրային** – коалиционный – coalition, allied

Պաշտպանությանը վերաբերող՝ հատուկ:

**դաշնադրություն** – коалиция – coalition

Պետությունների ժամանակավոր ռազմաքաղաքական դաշինք, որն ստեղծվում է դաշնադրային պատերազմների նախապատրաստման և վարման նրապատկով: Ռազմական դաշնադրության շրջանակներում սովորաբար նախատեսվում է մասնակից պետությունների տնտեսական, քաղաքական և բուն ռազմական գործունեության համադասում, իսկ երբեմն նաև՝ ընդհանուր հրամանատարության ներքո դաշնադրային ՋՈՒԲ-ի ստեղծում:

ռազմական դաշնադրություն – военная коалиция – military coalition

**դաշնակից** – союзник – ally

**դաշնակցային** – союзнический – allied

դաշնակցային օպերացիա – союзническая операция – alliance operation

**դաշնակցել** – быть союзником – ally

դաշնադրային խմբավորում – коалиционная группировка – coalition grouping

**դաշտ** – поле – field

անտեսանելիության դաշտ – поле невидимости – dead ground

Հակառակորդի տեսադաշտից դուրս գտնվող տարածք:

իրավական դաշտ – правовое поле – legal field

Իրավական կարգավորման մեխանիզմ, որը ներառում է այսպես կոչված հատուկ իրավաբանական միջոցներ՝ իրավական նորմերը, իրավահարաբերությունները, իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների իրացման ակտերը, իրավակիրառման ակտերը:

չեզոք դաշտ – нейтральная полоса – no-man's-land

1. Հակառակորդի և յուրային առաջադիր կետերի (դիրքերի) միջև եղած տարածությունը: 2. Չեզոք միջազգային գոտի: 3. Խրամատների միջև եղած տարածությունը:

ռազմի դաշտ – տես *դաշտ՝ մարտի դաշտ*

**դաշտային** – полевой – field

դաշտային ռազմաինժեներական գործ – полевое военно-инженерное дело – field engineering

դաշտային խոհանոց – полевая кухня – field kitchen

**դաշույն** – 1. кинжал, 2. кортик – 1. dagger, 2. cutlass

**դաշունահարում** – տես *դանակահարում*

**դասալիք** – дезертир – deserter

**դասալքել** – дезертировать – desert, go over the hill

**դասալքություն** – дезертирство – desertion

Ջինժառայողի (զինապարտի՝ ուսումնական հավաքի կամ զորահավաքի ժամանակ) կողմից զորամասի կամ ծառայության վայրի միտումնավոր ինքնակամ լքումը կամ զինծառայությունից խուսափելու նպատակով զինվորական ծառայության չներկայանալը: Ըստ տարբեր պետությունների օրենսդրության՝ որակվում է որպես հանցագործություն:

**դասակ** – взвод – platoon

Վաշտի, մարտկոցի ստորաբաժանում: Առանձին դասակները կարող են մտնել զորամասերի, զորամիավորումների, վարչությունների, հիմնարկների կազմի մեջ:

դասակի հրամանատար – командир взвода – platoon commander

դասակի սերժանտ – сержант взвода – platoon sergeant

հակատանկային դասակ – противотанковый взвод – antitank platoon

**դասակարգում** – классификация, классифицирование – classification

զուգահեռ դասակարգում – параллельная классификация – parallel classification

Դասակարգում, որի դեպքում սովորական ռազմափոխադրումային միջոցները դասակարգվում են իրենց բնութագրիչների և այն վազոնային հարթակների պարամետրների հաշվառմամբ, որոնց վրա են տեղադրվում:

**դասավորում** – 1. построение, построение войск, 2. տես *դիրքավորում* – 1. distribution, 2. տես *դիրքավորում*

Ջորքի շարում որևէ նպատակով՝ մարտի, երթի, տարաշարժի ևն:

զորքի դասավորում – տես *դասավորում 1*

խմբավորման օպերատիվ դասավորում – оперативное построение группировки – operational disposition of a force

Օպերացիան (մարտական գործողությունները) վարելու համար տեղանքում խմբավորման զորքի (ուժերի) և միջոցների տեղաբաշխումը որոշակի համակարգով:

մարտական դասավորում – боевое построение – order of battle, combat formation

**դասընթաց** – курсы – course

1. Որևէ գիտության կամ նրա առանձին մասի ամբողջությունը ներկայացնող ուսումնական առարկա: 2. Որևէ առարկայի ամբողջական շարադրանքը, դասագիրք: 3. Որևէ նեղ մասնագիտություն տվող ուսումնական ժամանակավոր հաստատություն:

դասընթացների մասնակից – տես *ունկընդիր՝ դասընթացի ունկընդիր*

վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ – курсы переподготовки и повышения квалификации – retraining and skills enhancement courses

**դավադրություն** – заговор – plot

**դավաճան** – предатель, изменник – traitor

Նա, ով դավաճանություն է կատարում, մատնիչ:

**դավաճանություն** – 1. предательство, измена, 2. տես *անհավատարմություն*, 3. տես *երդմնազանցություն* – 1. betrayal, treason, treachery, 2. տես *անհավատարմություն*, 3. տես *երդմնազանցություն*

1. Թշնամու կողմն անցնելը, թշնամուն կենսականորեն կարևոր գաղտնի տեղեկույթի հաղորդումը, իր գործընկերների մատնումը՝ հակառակորդի ծեռքը հանձնումը: 2. Իր խոսքը չպահելը, պարտքը՝ պարտավորությունը՝ երդումը չկատարելը: 3. Իրավական կամ բարոյական նորմերով կարգավորվող որոշակի հարաբերությունների համակարգի (ամուսնական, ընկերական, գաղափարական, կուսակցական ևն) խախտումը:

**դավանանք** – 1. кредо, 2. տես *դավանություն 1*, 3. догмат – 1. credo, 2. տես *դավանություն 1*, 3. tenet

կրոնական դավանանք – տես *դավանություն*

**դավանություն** – 1. вероисповедание, конфессия, 2. տես *դավանանք 1* – 1. religious beliefs, 2. տես *դավանանք 1*

**դատողականություն** – տես *ողջամտություն*

**դարան** – засада – ambush

1. Մարտական գործողություններ վարելու եղանակ, որի էությունը հետևյալն է. ստորաբաժանումը (խումբը, ուղղաթիռը, տանկը և այլն), նախապես թաքնվելով մի հարմար տեղում, հանկարծակի հարձակվում է այդ տեղին մոտեցող հակառակորդի վրա: 2. Նման խնդիր կատարող ստորաբաժանում (խումբ, ուղղաթիռ, տանկ):

դարան մտնել – տես *դարանակալել*

**դարանագործություն** – засада – ambush  
Դարան սարքելը, դարան դնելը:

**դարանակալ** – засада – ambush, ambush patrol

Դարանում թաքնված զինվոր, խումբ, կրակային միջոց են:

**դարանակալել** – 1. устроить засаду, засечь в засаде, 2. տես *դարանել* – 1. ambush, 2. տես *դարանել*

**դարանել** – затаиваться – lie up

**դարձերես** – обратная сторона – reverse

**դարձյակ** – вертлюг – saddle

**դարձուկային** – револьверный – revolving

Պտտվող, դարձվող:

**դարսվածք** – տես *շարվածք*

**դելտա** – дельта – delta

Եռանկյունաձև գետաբերան:

**դեղամիջոց** – лекарство – medicine

**դեղարկղ** – аптечка, аптечка первой помощи – first aid kit

անհատական դեղարկղ – индивидуальная аптечка, походная аптечка – individual first-aid kit

Զինծառայողի բուժփնթոգնության միջոցների հավաքածու:

անհատական դեղարկղի գոտեպայուսակ – подсумок для индивидуальной аптечки – individual medical pouch

առաջին բուժօգնության դեղարկղ – տես *դեղարկղ*

տրանսպորտային դեղարկղ – транспортная аптечка – vehicular first-aid kit

**«դեղնակտուց»** – салага – crap-hat

Փորձառություն չունեցող զինվորին, հիմնականում՝ նորակոչիկին, տրվող արհամարհական մականուն:

**դեմք** – лицо – face

Մարդու գլխի դիմացի՝ առջևի մասը:

**դեմպինգ** – демпинг – dumping

Էկոնոմիկայում. արտաքին շուկայում ապրանքների վաճառք ներքին շուկայական գներից ցածր գներով (կարող են նույնիսկ լինել ինքնարժեքից ցածր)՝ մրցակիցներին դուրս մղելու և արտաքին շուկան զավթելու նպատակով:

**դենոնսացում** – денонсация – denunciation

Պետության կողմից որևէ գործողություն դադարեցնելու կամ պայմանագրից հրաժարվելու հայտարարություն:

**«Դեպի վե՛ր»** – «Уровень больше!» – “Սը!”

Հրետանային տերմին, որը նշանակում է, որ թիրախն իրականում ավելի բարձր է գտնվում, քան այն կետը, որն ընտրվել է որպես կողմնորոշիչ:

**դեպոզիտ** – депозит – deposit

Դրամական միջոցներ կամ արժեթղթեր (բաժնետոմսեր, փոխառություններ), որոնք պահվում են վարկային հիմնարկներում (բանկեր, դրամարկղներ ևն) և ենթակա են դրանք տեղադրած անձին վերադարձման՝ որոշակի պայմանների տեղի ունենալուց հետո:

**դեպք** – 1. случай, 2. տես *իրադարձություն* – 1. case, 2. տես *իրադարձություն*

**դեսանտ** – десант – landing force, landing troops

Հատուկ պատրաստված և մարտական խնդիրների կատարման համար հակառակորդի տարածք ինքնաթիռներով (ուղղաթիռներով) իջեցված կամ ծովային նավերով ավիանաված, ինչպես նաև դրա համար նախանշանակված զորք:

դեսանտի երկրորդ շարակարգ – второй эшелон десанта – assault follow-on echelon, follow-on echelon

դեսանտի պատրաստման շրջան – район подготовки десанта – mounting area

ծովային դեսանտ – տես *գորք՝ ասիհանվող գորք*

ծովային դեսանտի տեղափոխում – перевозка морского десанта – amphibious lift

օդային դեսանտ – տես *իջազոր*

**դեսանտային** – десантный – 1. amphibious, 2. landing

Դեսանտին վերաբերող՝ հատուկ:

**դեսպան** – посол – ambassador

**դեսպանատուն** – посольство – embassy

**դեսպանորդ** – посланник – envoy

**դեսպանություն** – посольство – embassy

**դետալ** – деталь – detail

դետալի ռեսուրս – ресурс детали – component life

**դետեկտոր** – детектор – detector

**դետեկտում** – տես *հայտնաբերում*

**դետք** – дозор – patrol, watch

Ցամաքային զորքերում. զորային հետախուզության կամ երթային պահակախմբի մարմին, որին երթ կատարող կամ մարտական գործողություններ վարող ստորաբաժանումներն ու զորամասերն ուղարկում են հակառակորդի, տեղանքի, ճառագայթային ու քիմիական իրադրության վերաբերյալ տեղեկություններ հայթայթելու կամ հակառակորդի հայտնվելու (հարձակվելու) մասին յուրային զորքերին զգուշացնելու նպատակով:

հետախուզական դետք – разведывательный дозор – reconnaissance patrol

ռադիոտեղորոշումային դետք – радиолокационный дозор – radar picket

Ռադիոտեղորոշումային կայանից որոշակի հեռավորության վրա կայանած և ռադիոտեղորոշումային սարքերով օժտրված մեքենա, նավ կամ այլ միջոց,

որը հնարավորություն է տալիս մեծացնելու ՌՏԿ գործողության շառավիղը:

օդային դետք – воздушный дозор – air picket

**դեր** – роль – role

**դերակարգություն** – номер роли – role number

Բուժսարքավորանքի դասակարգում ըստ հնարավորությունների:

**դերծովակալ** – контр-адмирал – rear admiral

Մեծ թվով երկրների ռազմածովային ուժերում բարձրագույն սպաների առաջին զինվորական կոչումը (համապատասխանում է զորային գեներալ-մայորի կոչման):

**դեֆոլիանտ** – дефолиант – defoliant, Agent Orange

Տերաթափող քիմիական նյութ, որն ԱՄՆ-ն օգտագործել է Վիետնամի պատերազմում:

**դժբախտ պատահար** – несчастный случай – accident

**դժբախտություն** – տես *հարված՝ ճակատագրի հարված*

**դժգոհ մարդ** – недовольный, инакомыслящий – disaffected person

1. Իշխանություններից դժգոհ կամ նրանց դեմ տրամադրված մարդ: 2. Իշխանություններին ոչ հավատարիմ:

**դժվար** – трудный – heavy

**դիակ** – труп – corpse

**դիակապուտություն** – мародерство – looting

**դիակապուտ** – мародер – looter

**դիապարկ** – мешок для трупа – body bag

**դիապոզիտիվ** – диапозитив – diapositive

**դիաֆրագմա** – диафрагма – diaphragm

**դիզել** – дизель, дизельный мотор – diesel, diesel engine

**դիզելային** – дизельный – diesel

**դիմադրել** – 1. сопротивляться, 2. давать отпор – 1. resist, 2. fight back, repulse

**դիմադրողականություն** – сопротивляемость – resistance

**դիմադրություն** – сопротивление – 1. resistance, 2. opposition

դիմադրության բնագիծ – рубеж сопротивления – line of resistance

դիմադրության շարժում – движение сопротивления – resistance movement, resistance

Ազգային-ազատագրական շարժում, որը 1939–1945 թթ. ծավալվեց հիտլերյան Գերմանիայի և նրա դաշնակիցների զավթած տարածքներում, ինչպես նաև նացիստական բլոկի պետություններում: Առանձնակի մեծ թափ էր ստացել Ֆրանսիայում, Հարավսլավիայում, Իտալիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հունաստանում, Չինաստանում, Ալբանիայում:

դիմադրությունների կամրջակ – мост сопротивления – bridge

**դիմակ** – маска – mask

1. Ստվարաթղթից կամ կտորից պատրաստված մակադրակ՝ չճանաչված լինելու նպատակով երեսը կամ դրավերին մասը փակելու համար: 2. Արտաքին շնչառական օրգանները (քիթ, բերան) տարբեր ախտահարումներից (թունավոր գազեր, փոշի ևն) պաշտպանող՝ կտորից կամ թանգիֆից պատրաստված դիմակալ:

պաշտպանական դիմակ – защитная маска – protective mask

պաշտպանիչ դիմակ – տես *դիմակ՝ պաշտպանական դիմակ*

**դիմակալ** – забрало – visor

Սաղավարտի շարժական մաս՝ դեմքը պաշտպանելու համար:

**դիմակայել** – противостоять – oppose

**դիմակայություն** – противостояние, оппозиция – opposition

**դիմապակի** – տես *հողմապակի*

դիմապակու ցուցասարք – индикатор на лобовом стекле – head-up display  
Ճակատային ապակու վրա ինքնաթիռի սարքերի ցուցմունքը արտացոլող ցուցասարք:

**դիմապանակ** – տես *դիմակալ*

«Դիմացի՛ր» – «Держись!» – “Brace!”

**դիմացկունություն** – прочность – 1. strength, 2. durability

**դիմում** – просьба, обращение – application

**դինամիտ** – динамит – dynamite

Նիտրոգլիցերինի և լցանյութերի (պիրոքսիլին (հրաբամբակ), դինիտրոգլիկոլ և այլն) հիմքի վրա ստեղծված փշրտող պայթուցիկ նյութ:

**դիպուկահար** – снайпер – sniper

Հատուկ ուսումնավարժված հրաձիգ, որը կատարելապես տիրապետում է դիպուկ կրակելու, քողարկվելու և դիտելու վարպետությանը:

**դիսպանսերացում** – диспансеризация – clinical examination

**դիվանագիտական անձեռնմխելիություն** – дипломатический иммунитет – diplomatic immunity

Հատուկ իրավունքներ, արտոնություններ, որոնցով օժտվում են օտարերկրյա դիվանագետներն իրենց առաքելության կատարման պետության տարածքում:

**դիվանագիտություն** – дипломатия – diplomacy

գաղտնի դիվանագիտություն – тайная дипломатия – backchannel diplomacy

կանխիչ դիվանագիտություն – превентивная дипломатия – preventive diplomacy

հանրային դիվանագիտություն – публичная дипломатия, общественная дипломатия – public diplomacy

1. Գործողություններ, որոնք նպատակաուղղված են երկարատև հարաբերությունների ձևավորմանը, արտա-

սահմանում յուրային պետության արժեքների և հաստատությունների ավելի լավ ըմբռնման ապահովմանը և ազգային արտաքին քաղաքականության շահերի պաշտպանությանը՝ արտասահմանում հասարակական կարծիքի տրամադրվածության ուսումնասիրության, դրա իրազեկման և այն ձևավորողների վրա համապատասխան ներգործության ճանապարհով: 2. Խաղաղաշինության ոլորտում. քաղաքացիական կազմակերպությունների այն ջանքերը, որոնք նպատակաուղղված են հանրային գործերի և արտաքին քաղաքական ձեռնարկումների միջոցով խորացնելու վերակառուցման անհրաժեշտության, օրենքի գերակայության և քաղաքացիական պատասխանատվության ըմբռնումը:

**դիվերսանտ** – диверсант – saboteur, diversionist

Հատուկ պատրաստված մարդ, որը. 1. հակառակորդի թիկունքում զբաղվում է հաղորդակցությունների, կապի հանգույցների ու գծերի, զորքի կառավարման համակարգի աշխատանքի խաթարմամբ, ռազմական, արդյունաբերական և այլ օբյեկտներ շարքից հանելով, կենդանի ուժի և ռազմական տեխնիկայի ոչնչացմամբ, հակառակորդի զորքի ու բնակչության վրա բացասական բարոյահոգեբանական ներգործությամբ: 2. Որպես ծայրահեղական կազմակերպության անդամ՝ զբաղվում է պետության ներքին քաղաքական, տնտեսական, բարոյահոգեբանական, բնապահպանական և այլ իրադրությունների ապակայունացմամբ:

**դիվերսիա** – 1. диверсия, 2. տես *գործունեություն՝ քայքայիչ գործունեություն* – 1. diversion, sabotage, 2. տես *գործունեություն՝ քայքայիչ գործունեություն*

Հակառակորդի թիկունքում հատուկ պատրաստված ստորաբաժանումների (խմբերի) կամ առանձին անձանց գործունեությունը՝ նպատակաուղղված հաղորդակցությունների, կապի գծերի ու հանգույցների, ռազմական, արդյունաբերական և այլ օբյեկտների շարքից հանելուն, զորքերի կառավարման համակարգի գործունեության խաթարմա-

նը, կենդանի ուժի ու ռազմական տեխնիկայի ոչնչացմանը, հակառակորդի զորքերի ու բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա բացասական ներգործությանը:

**դիվիզիա** – дивизия – division

Երկու կամ ավելի բրիգադից կամ գնդից կազմված մարտավարական զորամիավորում:

դիվիզիայի թիկունքային ապահովման հրամանատարություն – командование тылового обеспечения дивизии – divisional support command, DISCOM

իջազորային դիվիզիա – տես *դիվիզիա՝ օդադեսանտային դիվիզիա*

հետևակային դիվիզիա – пехотная дивизия – infantry division

օդազորային դիվիզիա – воздушно-штурмовая дивизия, ВШД – air assault division

օդադեսանտային դիվիզիա – воздушно-десантная дивизия, ВДД – airborne division

**դիվիզիական** – дивизионный – divisional

**դիվիզիոն** – дивизион – 1. battalion (in artillery or missile forces), 2. navy group

1. Հրետանու, հրթիռային ու զենիթահրթիռային զորքերի հիմնական կրակային և մարտավարական ստորաբաժանումը: 2. 3-րդ և 4-րդ դասի միատեսակ նավերի մարտավարական միավորում:

**դիվիզիոնային** – дивизионный – battalion

**դիտախուզում** – рекогносцировка – reconnaissance

Հակառակորդի և տեղանքի ակնադիտական ուսումնասիրություն, որը կատարում է անձամբ հրամանատարը (իր շտաբի սպաների ներգրավմամբ), որպեսզի ստանա որոշման ընդունման կամ դրա ճշտման համար անհրաժեշտ տեղեկություններ: Կատարվում է նաև որքերի հնարավոր դիրքավորման շրջանները (բնագծերը), դրանց առաջնղման երթուղիները ուսումնասիրելու, տեղագրական քարտեզները լրացնելու և ուղղելու նպատակներով:



**դիտակ** – տես *դիտակորդ*

**դիտակետ** – տես *կետ` դիտման կետ*

շարժական դիտակետ – подвижный наблюдательный пункт – observation post vehicle

օժանդակ դիտակետ – вспомогательный наблюдательный пункт – auxiliary observation point

**դիտանկյուն** – տես *դիտում` անկյուն` դիտման անկյուն*

**դիտանոց** – տես *աշտարակ*

**դիտասարքեր** – տես *դիտում` դիտման միջոցներ*

**դիտարկում** – 1. наблюдение, 2. տես *քըննարկում* – 1. observation, 2. տես *քննարկում*

1. Նկարագրական հետազոտական մեթոդ, ուսումնասիրվող օբյեկտի վարքի նպատակաուղղված և կազմակերպված ընկալում ու գրանցում: 2. Քննում, քննարկում:

**դիտակորդ** – зрительная труба, подзорная труба – telescope

**դիտելիություն** – տես *նկատելիություն*

**դիտողական ընկալում** – зрительное восприятие – vision

**դիտորդ** – 1. наблюдатель, 2. տես *առաջադետ* – 1. observer, monitor, 2. spotter, 3. տես *առաջադետ*

1. Զինծառայող` նշանակված հակառակորդին, յուրային զորքի գործողություններին հետևելու, տեղանքը, եղանակը ուսումնասիրելու համար: 2. Առանձին պետությունների զինվորական կամ քաղաքացիական անձնակազմից նշանակվող անձինք, որոնք միջազգային կազմակերպությունների որոշմամբ կամ միջպետական պայմանավորվածության համաձայն ուղարկվում են զինված հակամարտության կարգավորման աշակցելու կամ ռազմական գործունեության ոլորտում համաձայնության (համաձայնագրի) կատարումը վերահսկելու համար:

առաջավոր դիտորդ – передовой наблюдатель – forward observation officer, forward observer

հսկիչ դիտորդ – наблюдатель-контролер – monitor

քիմիական իրադրության դիտորդ – наблюдатель за химической обстановкой – chemical sentry

օդային դիտորդ – воздушный наблюдатель – air observer

Ինքնաթիռի անձնակազմի անդամ, որը պարտավոր է զննել օդային տարածքը` հակառակորդի օդային հարձակման միջոցները հայտնաբերելու համար:

**դիտոց** – визир – sight

Սարք, որը նախատեսված է դիտոցային գիծը (օպտիկական առանցքը) դիտորդի ընտրած` հեռվում գտնվող կետի ուղղության հետ միատեղման համար (օրինակ` հրազենի նշանոցը):

օպտիկական դիտոց – оптический визир – optical sight

**դիտոցում** – визирование – sighting

դիտոցման գիծ – линия визирования – boresight

**դիտվող ծրագիծ** – տես *նշանակետ` դիտվող նշանակետ*

**դիտում** – наблюдение – 1. observation, 2. surveillance

Ուշադրությամբ ու քննական հայացքով նայելը, հետևելը, տեսնելը, իմանալը:

ականապատնեշային գործողությունների դիտում – наблюдение за минно-заградительными действиями – minewatching

առաջավոր դիտում – передовое наблюдение – forward observation

դիտման կազմակերպում – организация наблюдений – track management

Սահմանված ընթացակարգ, որով հրամանատարը ճշգրիտ կերպով որոշում է յուրային և հակառակորդի ստորաբաժանումների դիրքը և ապահովում այդ տեղեկության փոխանցումը վերադաս և ստորադաս հրամանատարներին:

դիտման կետ լավ տեսաժիրով – пункт наблюдения с хорошим обзором – vantage point

դիտման միջոցներ – средства наблюдения – surveillance capabilities

դիտման տվյալներ – данные наблюдения – surveillance data

դիտման ուղղաթիռ – вертолет наблюдения – observation helicopter

ծովային տարածքի դիտում – տես *ծովադիտում*

ծովում դիտում – наблюдение в море – sea surveillance

մշտական դիտում – постоянное наблюдение – persistent surveillance

օդային դիտման ծառայության սպա – офицер службы воздушного наблюдения – air surveillance officer

օդային դիտում – воздушное наблюдение, наблюдение за воздушным пространством – air surveillance

օդերևութաբանական դիտում – метеорологическое наблюдение – meteorological watch

Թռիչքի ընթացքում թռիչքուղու երկայնքով՝ ամբողջ շրջանում և վերջնամասում եղանակային պայմանների գնում և հաղորդում շահագրգիռ կազմակերպությունների՝ համապատասխան առաջարկություններով հանդերձ:

**դիտունակություն** – наблюдательность – watchfulness, observancy, oversight  
Սակավ նկատելի մանրամասնությունները տեսնելու ունակություն:

**դիրեկտիվ** – տես *ցուցումնագիր*

**դիրիժաբլ** – дирижабль – dirigible, airship

**դիրք** – 1. позиция, 2. положение, 3. поза – 1. position, 2. status, 3. pose, posture  
1. Չորքի կողմից պատեհաժամորեն կամ մարտի ընթացքում զբաղեցրած և մարտական գործողությունների վարման համար սարքավորված տեղ: 2. Տեղադրություն, դրվածք: 3. Հասարակության կամ ծառայության մեջ մարդու գրաված տեղը՝ աստիճանը: 4. Կեց-

վածք՝ ձև, որ ընդունում է մարմինը կամ նրա մի մասը որոշակի պահի: 5. Որևէ հարցում ունեցած կողմնորոշում՝ սկզբունքային տեսակետ՝ մոտեցում: 6. Վիճակ, դրություն:

առանցքային դիրք – ключевая позиция, ключевой пост – key position

Կարևոր դիրք, պաշտոն, որը չի կարող թափուր լինել, երբ երկրում պատերազմ է կամ արտակարգ իրադրություն:

գրավված դիրքի ամրացում – укрепление захваченной позиции – consolidation of position

դիրքի գրավում – занятие позиции – occupation of position

ելման դիրք – 1. стартовая позиция, 2. исходное положение – 1. starting position, reference position, 2. initial position, forming-up place, attack position

1. Դիրք (կեցվածք)՝ տեղ, որը որևէ օբյեկտ զբաղեցնում (ընդունում) է նախքան գործողություն սկսելը: 2. Այն վերջին դիրքը, որն զբաղեցնում են զորքերը հարձակման (հակահարձակման) անցնելու համար:

լրացուցիչ կրակային դիրք – дополнительная огневая позиция – supplementary fire position

հատիչ դիրք – отсечная позиция – blocking position

Դիրք, որն ստեղծվում է դեպի զորաթևեր հակառակորդի տարածմանը խոչընդոտելու, կրակային պարկեր ստեղծելու, հակառակորդի զորամասերը դեպի կրակով ծածկապաշտպանված արգելափակոցներ ուղղելու նպատակով, ծառայում է նաև որպես նախապատրաստված բնագիծ հակառակորդի գրոհը տեղից կրակով հետ մղելու և նրան վճռորոշ թևային հակահարվածներ հասցնելու համար:

հարմար դիրք – удобная позиция – vantage point

պաշտպանական դիրքերի ամրացում – տես *ամրաշինություն*

պառկած կրակելու դիրք – положение для стрельбы лежа – prone position

**դիրքավորում** – дислокация, расположение войск, диспозиция – disposition

1. Տարածքում հրամանատարության ենթակայության տակ գտնվող զորամիավորումների տեղակայում իրենց հատկացված վայրում: 2. Նավերի դասավորում որևէ հերթագայությամբ: 3. Օդանավերի մարտական դասավորություն:

վաղորոք դիրքավորում – заблаговременное дислоцирование – pre-position

**դիրքափոխում** – перебежка – bound

Զինծառայողի (ստորաբաժանման) դիրքի փոփոխությունը մեկ կրակային կամ պաշտպանված դիրքից մեկ այլ դիրքի:

**դիրքորոշում** – տես կողմնորոշում 3

1. Որևէ բանի նկատմամբ իր դիրքի, գործողությունների, վերաբերմունքի որոշում, կողմնորոշում: 2. Որևէ բանի նկատմամբ ունեցած տեսակետ, վերաբերմունք, գնահատում:

**դիֆերենտ** – տես երկայնաթեքություն

**դիֆոսգեն** – дифосген – diphosgene, superpalite

Անգույն հեղուկ, ուժեղ հեղձիչ և գրգռիչ ազդեցությամբ թունավոր նյութ:

**դոյակ** – տես ամրոց

**դյուրաբոցավառ** – легко воспламеняющийся – flammable

**դյուրընկալություն** – восприимчивость, чувствительность – susceptibility

**դոկտոր** – доктор – doctor

Մի շարք երկրներում՝ բարձրագույն գիտական աստիճանը:

**դոկտրին** – доктрина – doctrine

1. Հիմնարար սկզբունքների համակարգ, որոնցով ի շահ ազգային նպատակների առաջնորդվում են պետությունն ու նրա ղեկավար մարմինները: 2. Ուսմունք, վարդապետություն:

արտաքին քաղաքական դոկտրին – внешнеполитическая доктрина – political doctrine

Արտաքին քաղաքական գործունեության նպատակների, խնդիրների և բնույթի,

թի, ինչպես նաև դրա իրականացման ու ապահովման եղանակների վերաբերյալ պետությունում ընդունված պաշտոնական տեսակետների համակարգ:

դոկտրինի հանգուցային տարր – ключевой элемент доктрины – key doctrine element

Միացյալ օպերացիաների հիմնական հայեցակարգ, սկզբունք կամ գաղափար:

իրավական դոկտրին – правовая доктрина – legal doctrine

Որոշ պետություններում իրավունքի, նրա դրույթների մասին տեսակետների, պատկերացումների համակարգ, որը շարադրվել է տվյալ բնագավառում առավել մեծ հեղինակություն վայելող մասնագետների կողմից:

միացյալ դոկտրին – объединенная доктрина – joint doctrine

ԱՄՆ-ում. փաստաթուղթ, որում ներկայացված են այն հիմնարար սկզբունքները, ըստ որոնց կատարվում է ՁՈՒ-ի կիրառման ղեկավարումը՝ ընդհանուր նպատակին հասնելուն միտված համատեղ գործողությունների համադասման համար, և որում նկարագրվում են հիմնական տերմինները, մարտավարությունը, հնարներն ու ընթացակարգերը:

միացյալ դոկտրինի պլանավորման խորհրդատվություն – конференция по планированию объединенной доктрины – Joint Doctrine Planning Conference

պաշտպանական դոկտրին – оборонная доктрина – defense doctrine

ռազմական դոկտրին – военная доктрина – military doctrine

Հիմնարար սկզբունքների համակարգ, որոնցով ի շահ ազգային նպատակների առաջնորդվում են ՁՈՒ-ն կամ նրա որևէ մասը, պետությունում (պետությունների դաշնադրությունում) քաղաքական նպատակներով ռազմական բռնության միջոցների օգտագործման, ռազմական խնդիրների բնույթի ու դրանց լուծման եղանակների, ռազմական շինարարության հիմնական ուղղությունների վերաբերյալ տվյալ շրջանի համար ընդունված պաշտոնական տեսակետների համակարգ:

**դող** – шина – tire

**դողածածկան** – покрывка – tire

**դրագուն** – драгун – dragoon

Ծանր հեծելագորային, որը կարող էր կռվել նաև որպես հետևակային:

«**Դրագունով**» – «Драгунов» – Dragunov  
7,62-մմ խորհրդային դիպուկահարական ակոսավոր հրացան:

**դրական** – положительный, позитивный – affirmative

«**Դրակոն**» – «Дракон» – Dragon  
Ամերիկյան հակատանկային կառավարվող հրթիռ:

**դրամաշրջանատություն** – денежное обращение – currency

**դրամատուն** – տես *բանկ*

**դրդապատճառ** – побуждение – incentive

**դրդել** – 1. побудить, 2. տես *հրահրել 1* – 1. actuate, stimulate, 2. տես *հրահրել 1*

**դրդիչ** – տես *սադրիչ*

**դրդում** – 1. побуждение, 2. տես *սադրանք* – 1. inducement, 2. տես *սադրանք*

**դրժում** – нарушение – breach, violation, break

խոստումի, պայմանի խախտում, դավաճանություն, ուրացում:

**դրոն** – дрон (радиоуправляемый самолет) – drone

Փոքր անօդաչու ռադիոհեռակառավարվող ինքնաթիռ, որն օգտագործվում է հետախուզական նպատակներով:

**դրոշ** – знамя, флаг, стяг – flag, banner, ensign

Պետության, նրա ՋՈՒ-ի, տարբեր հիմնարկների, միջազգային կազմակերպությունների ու միությունների, մարզական ընկերությունների, որոշ պաշտոնատար անձանց պաշտոնական տարբերանշան. ծողին ամրացված քառակուսի կամ ուղղանկյուն կտոր՝ սահմանված չափերի, գունավորմամբ ու նշաններով (զինանշան, խորհրդանշան, մակագրություն):

եռագույն դրոշ – տես *եռագույն*

կենդանակերպ դրոշ – зооморфное знамя – zoomorphic banner, zoomorphic flag

Կենդանու (իրական կամ երևակայական՝ վիշապ, արծվառյուծ ևն) տեսք ունեցող դրոշ:

**դրոշակ** – տես *զինադրոշ*

**դրոշակակիր** – знаменосец – ensign

**դրոշմված քայլվածք** – печатный шаг, гусиный шаг, шаг почетного караула – goose-step

**դրոսել** – дроссель – choke

**դրություն** – 1. положение, 2. տես *վիճակ 1* – 1. position, place, 2. տես *վիճակ 1*

արտակարգ դրության համար հաստիքացուցակ – штатное расписание на период чрезвычайного положения – emergency establishment

Արտակարգ իրավիճակում տարբեր միավորումների մեջ մարդկանց վերաբաժանում ըստ ժամանակացույցի:

արտակարգ դրություն – 1. чрезвычайное положение, 2. տես *իրավիճակ՝ արտակարգ իրավիճակ* – 1. state of emergency, national emergency, 2. տես *իրավիճակ՝ արտակարգ իրավիճակ*

Պետությունում կամ նրա առանձին շրջաններում որոշակի ժամկետով մտցվող հատուկ իրավական ռեժիմ՝ կապված ստեղծված արտակարգ իրադրության հետ, որը պայմանավորված է սոցիալ-քաղաքական, տնտեսական, ազգային, կրոնական և այլ հակասությունների կտրուկ սրման շրջանում հասարակության ու պետության ձգնաժամային վիճակով, ինչպես նաև բնական ու մարդածին բնույթի արտակարգ իրավիճակներով:

զգաստ դրություն – основная стойка, по стойке смирно – position of attention

մարտական դրություն – боевое положение – 1. firing position (gun), 2. armed and ready (e.g. fuze), 3. standby state (e.g. of a mine)

Մարտական համակարգերի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի, ինչպես նաև դրանց տարրերի լիակա-

տար պատրաստություն մարտական խնդրի կատարմանը (մարտական կիրառմանը):

մարտական դրությունում ոչ շփումային ականի գտնվելու ժամանակը – տես *ալկան՝ ազդեցության նկատմամբ ականի զգայունության շրջան*

շահեկան դրություն – выгодное положение – vantage point

ռազմական դրություն – военное положение – martial law

Հատուկ իրավական ռեժիմ, որը արտակարգ իրադրությունում (պատերազմ, ապստամբություն և այլն) երկրում կամ նրա մի մասում մտցնում է պետության բարձրագույն իշխանությունը:

ռազմական դրություն մտցնելը – введение военного положения – introduction of martial law

**դրույթ** – положение – statement, clause  
Որևէ գիտական (տեսական) փաստաթղթում բովանդակվող կարևոր պնդում, հանգուցային միտք:

հայեցակարգային դրույթ – концептуальное положение – conceptual statement

**դրույք** – оклад – base pay

դիսկոնտային դրույք – дисконтная ставка – discount rate

Տոկոսադրույք՝ ենթադրվող ծախսերի ընթացիկ արժեքի հաշվարկման համար:

զեղչատոկոսային դրույք – տես *դրույք՝ դիսկոնտային դրույք*

**դրուսշարտում** – տես *արտանետում*

**դրուս արձնել** – вырваться (из окружения) – break out

**դրուսբերում** – 1. вывод, 2. вынос, 3. выведение – 1. withdrawal, 2. carrying out, 3. taking out, leading out

դաշնադրային ուժերի դրուսբերում Իրաքից – вывод коалиционных сил из Ирака, вывод союзнических сил из Ирака – withdrawal of Allied forces from Iraq

դրուսբերման հասված – участок выведения, восходящая фаза – ascent phase

Բալիստիկ հրթիռի կամ տիեզերանավի թռիչքի այն փուլը, որն սկսվում է արձակումից հետո և ավարտվում է բարձրագույն կետին հասնելուց առաջ:

դրուսբերում մարտական կազմից – вывод из боевого состава – decommissioning

**դրուսնդում** – вытеснение – dislodgement

դրուսնդում դիրքերից – вытеснение с позиций – dislodgement of the position

## Ե (ԵՉ)

**ԵԱՀԿ** – տես *Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն*

ԵԱՀԿ գործող նախագահ – Действующий председатель ОБСЕ – OSCE Chairman-in-Office

ԵԱՀԿ նախարարական խորհուրդ – министерский совет ОБСЕ – OSCE Ministerial Council

**եզրագիծ** – տես *ուրվագիծ*

**եզրագծային լույսեր** – габаритные огни, огни периметра зоны посадки – perimeter lights

**եզրակացություն** – вывод, заключение – conclusion

**եզրաչափքային լույսեր** – габаритные огни – perimeter lights

**եզրապատ** – парапет – parapet

**ելակետ** – 1. начальная точка, 2. տես *մեկնակետ* – 1. initial point, 2. տես *մեկնակետ*

1. Վայրէջքի գոտու մոտ գտնվող օդային ստուգողական կետ, որից սկսվում է ուղղաթիռի անհատական (միայնակ) թռիչքը դեպի նախապես որոշված վայրէջքի հարթակ: 2. Որևէ գործողություն սկսելու նախնական դիրք:

**ելակետային** – տես *սկզբնական*

Ելակետային լուսանկարի լուծունակություն – разрешающая возможность исходного фотоснимка – interpretability

Լուսանկարի համապատասխանությունը տվյալ տեսակի նշանակետի համար ներկայացվող որակական և մասշտաբային պահանջներին:

Ելակետային տվյալներ – исходные данные – initial data

**Ելուստ** – 1. выступ, клин, 2. вывод, 3. блистер, 4. аппендикс (аэроштата) – 1. salient, 2. salience, projection, 3. blister, 4. appendix

1. Ռազմաձևատային գծի հատված, որը, լինելով ցցված, ավելի մոտ է հակառակորդի ձևատային գծին, քան մնացած մասը, կամ մխրձվում է դրա մեջ: 2. Էլեկտրական սարքի ցցված մաս՝ հաղորդիչ, որը ծառայում է տվյալ սարքը էլեկտրական շղթային միացնելու համար: 3. Փոխադրամիջոցի իրանից ցցված մաս՝ շրջոսիչ կամ որևէ սարքի պաշտպանիչ պատյան: 4. Օդապարիկի ստորին անցքը, որն օժտված է գործվածքային ձկափողով և ծառայում է գազով լցնելու կամ ազատ թռիչքի ժամանակ ընդարձակվող գազի դուրս գալու համար:

**Ելուստային** – блистерный – blister

**Ելքային ատյան** – исходная инстанция – originator

**Ելքային կրակագիծ** – տես *բնագիծ՝ ելքային կրակային բնագիծ*

**Եկամուտ** – доход – revenue

Նյութական արժեք կամ դրամական միջոց, որն ստացվել է որևէ գործունեության հետևանքով՝ որոշակի ժամանակահատվածում:

գալիք եկամուտ – доходы будущих периодов – deferred income

**Եկամտահարկ** – подоходный налог – income tax

պրոգրեսիվ եկամտահարկ – прогрессивный подоходный налог – graduated income tax

Հարկման եղանակ, երբ հարկի արդյունավետ դրույքը հարկման ենթակա

հիմքի (բազիսի) աճման համեմատ աճում է:

**Եկեղեցական** – церковный – church

**Եկեղեցի** – 1. церковь, храм, 2. տես *դավանություն 1* – 1. church, temple, 2. տես *դավանություն 1*

բողոքական եկեղեցի – протестантская церковь – Protestant Church

կաթոլիկական եկեղեցի – տես *եկեղեցի՝ կաթոլիկ եկեղեցի*

կաթոլիկ եկեղեցի – католическая церковь – Catholic Church

Հռոմի կաթոլիկ եկեղեցի – Римско-католическая церковь – Roman Catholic Church

ուղղափառ եկեղեցի – православная церковь – Orthodox Church

**Եղանակ** – 1. способ, 2. погода – 1. way, mode, 2. weather

ռազմական (մարտական) գործողությունների եղանակներ – способы военных (боевых) действий – operational methods

Ի շահ ռազմական գործողությունների նպատակներին հասնելուն իրագործվող օպերատիվ և մարտական խնդիրների լուծման համար ուժերի և միջոցների կիրառման կարգն ու հնարները:

**Եղբայրասպանություն** – братоубийство – fratricide

Յուրայինների կողմից թյուրիմացության պատճառով զնդակծությունից զոհվելը:

**Եղբայրացում** – братание – fraternization  
Հակառակորդի հետ բարեկամացում, ընկերական հարաբերությունների հաստատում:

**Եղեռն** – տես *ցեղասպանություն*  
Հանցագործություն, ոճիր:

**Ենթադատություն** – подсудность – jurisdiction

Տվյալ դատարանի վարույթին ենթակա:

**Ենթադրվում է խոցված** – предполагается сбитым – probably destroyed



**Ենթադրվում է վայր գցված** – տես *Ենթադրվում է խոցված*

**Ենթազինամթերք** – суббоеприпас – submunition

Ցանկացած զինամթերք, որն իր խնդիրը կատարելու համար անջատվում է հիմնական (կասետային) զինամթերքից, երբեմն կոչվում է ռումբ (*бомба; bomblet*), եթե արծակվում է օդում, կամ նռնակ (*граната; granade*), եթե արծակվում է գետնից:

**Ենթակա** – 1. подлежащий, 2. подчиненный – 1. liable, 2. subordinate, subaltern

Ենթակա զորամաս – подчиненная часть – subordinate command

Ենթակա միացյալ հրամանատարություն – подчиненное объединенное командование, объединенное субкомандование – subordinate unified command, subunified command

**Ենթակայություն** – 1. подчинение, 2. подчиненность – 1. subordination, obedience, 2. inferiority

Որևէ մեկից, որևէ բանից կախվածություն, հրամանները, կարգադրությունները կատարելու պարտականություն:

Ենթակայության կարգ – порядок подчинения – command relationships

Հրամանատարների փոխադարձ պատասխանատվություն, ինչպես նաև օպերատիվ լիազորություններ, որոնք նրանք ստանում են ըստ ստորակարգության, և որոնք հետագայում հանդես են գալիս որպես մարտական հրամանատարություն, օպերատիվ ենթակայություն, մարտավարական կառավարում կամ աջակցություն:

Ենթակայությանը հանձնման բնագիծ – рубеж передачи в подчинение – handover line

Ենթակայության փոփոխման պահը – время изменения подчинения – change of operational control

Այն ամսաթիվն ու ժամը, երբ զորքի կամ զորամիավորման հրամանատարը փոխարինվում է մեկ ուրիշով:

Ժամանակավոր ենթակայության տակ դնել – տես *գործուղել 2*

օպերատիվ ենթակայություն – оперативное подчинение – operational control, control

**Ենթակապալ** – субподряд – subcontracting

**Ենթակապալառու** – субподрядчик – subcontractor

**Ենթակառուցվածք** – инфраструктура – infrastructure

Տնտեսական կամ քաղաքական կյանքի ընդհանուր կազմակերպվածքի բաղադրամասեր, որոնք ունեն ստորադաս, օժանդակ բնույթ և ապահովում են ամբողջ տնտեսական (քաղաքական) համակարգի բնականոն գործունեությունը: Ջինված ուժերում՝ այն բոլոր մշտական կառույցները, որոնք անհրաժեշտ են օպերացիաների իրագործման ու ապահովման համար:

բաց բանալիների հավաստագրման ենթակառուցվածք – инфраструктура сертификации открытых ключей – public key infrastructure

Ենթակառուցվածքի վերականգնում – восстановление инфраструктуры – rehabilitation of infrastructure

Ենթակառուցվածքի և զինվորական կադրերի ՆԱՏՕ-ի կոմիտե – Комитет НАТО по инфраструктуре и военным кадрам – Infrastructure and Defense Manpower Committee

Ենթակառուցվածքի օբյեկտների շահագործման ծառայություն – Служба эксплуатации объектов инфраструктуры – Infrastructure and Facilities management

Երկկողմ ենթակառուցվածք – двусторонняя инфраструктура, билатеральная инфраструктура – bilateral infrastructure

Ենթակառուցվածք, որը վերաբերում է ՆԱՏՕ-ի երկու անդամների և ֆինանսավորվում է նրանց միջև եղած փոխհամաձայնությամբ:

կարևոր ենթակառուցվածքների պաշտպանություն – защита важнейших объектов – critical infrastructure protection



կարևոր պաշտպանական ենթակառուցվածք – важнейшая оборонная инфраструктура – defense critical infrastructure

կենսականորեն կարևոր ազգային ենթակառուցվածք ու միջոցներ – национальные ключевые инфраструктура и средства – national critical infrastructure and key assets

ռազմական ենթակառուցվածք – военная инфраструктура – military infrastructure

**Ենթակառուցվածքի ծրագիր** – Программа инфраструктуры – Infrastructure Program

Անվտանգության ապահովման մեջ ՆԱՏՕ-ի ծրագրի նախկին անվանումը:

**Ենթակարգություն** – субординация – subordination

**Ենթահողմային** – подветренный – downwind

Քամու ուղղությանը հակառակ:

**Ենթամիավոր** – субъединица – subunit

**Ենթապատասխանատվություն** – տես *հաշվետվողականություն*

**Ենթասաղավարտ** – подшлемник – balaclava, cap-comforter

Բրդյա գլխարկ՝ ցուրտ եղանակին սաղավարտի տակից հագնելու համար:

**Ենթասպա** – прапорщик, унтер-офицер – warrant officer, ensign, petty officer, non-commissioned officer

Որոշ պետությունների զինված ուժերում զինվորական կոչում՝ սերժանտների (ավագների) և սպաների միջև:

թիկունքային ապահովման ավագ ենթասպա – старший прапорщик по тыловому обеспечению – company quartermaster sergeant

Ենթասպաների դպրոց – школа прапорщиков – school for ensigns and warrant officers

**Ենթարկվել** – подчиняться – obey

**Ենթարկում** – подчинение – obedience

**Եռագույն** – триколор, трехцветный флаг – tricolor

**Եռոտանի** – треножник, тренога – tripod

**Եռնիտրոտոլուոլ** – тринитротолуол, тротил – trinitrotoluene, TNT

**ԵՍՁՈՒ պայմանագիր** – տես *Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիր*

**Եվրամիություն** – տես *Եվրոպական Միություն*

**Եվրոպական Միություն** – Европейский Союз, Евросоюз, ЕС – the European Union, EU

Եվրոպական վերպետական կազմակերպություն, որին անդամ պետությունները փոխանցել են իրենց որոշ ինքնիշխանական գործառնություններ:

**Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն** – Организация по безопасности и сотрудничеству в Европе, ОБСЕ – Organization for Security and Cooperation in Europe, OSCE

Միջազգային անվտանգային կազմակերպություն, որը հովանավորում է սպառազինությունների վերահսկման, զինաթափման, փոխադարձ վստահության և անվտանգության ամրապնդման միջոցների ձեռնարկման, հակամարտությունների կարգավորման հարցերով բանակցությունները, իրականացնում է խաղաղության վերականգնման ու պահպանման օպերացիաներ: Մասնավորապես՝ ԵԱՀԿ Մինսկի խումբն ստանձնել է Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում միջնորդի դեր:

**Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիր** – Договор об обычных вооруженных силах в Европе, ДОВСЕ – Treaty on Conventional Armed Forces in Europe, CFE

**Երդմնագիր** – տես *երդում*

**Երդմնազանցություն** – 1. клятвопреступление, 2. нарушение присяги – 1. perjury, oath breaking, 2. violation of oath

Երդման խախտում, երդումը չկատարելը:

**երդում** – присяга – oath of enlistment, oath of allegiance

Որևէ ծառայության անցնելու, որոշակի կարգավիճակ ստանալու ժամանակ տրվող պաշտոնական և հանդիսավոր խոստում, հավաստում:

երդման դրժում – տես *երդմնագանցություն*

**երեսկալ** – տես *դիմակալ*

**երեսն ի վայր** – ничком – prone

**երեսպատման սալ** – облицовочная плита – plating

**երթ** – марш – march

Մարտական մեքենաներով, փոխադրամիջոցներով կամ հետևակային շարայունով զորքերի կազմակերպված տեղաշարժ՝ մարտական խնդիրը կատարելու պատրաստ վիճակում սահմանված ժամանակին նշանակված շրջան (բնագիծ) հասնելու համար:

արագացված երթ – форсированный марш – forced march

հանդիսավոր երթ – торжественный марш – march in review

հետիոտն երթ – марш в пешем строю – foot march

սրընթաց երթ – марш-бросок – quick march

Ցամաքային զորքերի վազիկ տեղաշարժ փոքր հեռավորության վրա՝ վաղօրոք դրված կամ հանկարծակի ծագած մարտական խնդիրը կատարելու համար, սովորաբար կատարվում է հետիոտն, արագացված տեմպով (քայլքի և վազքի հերթագայմամբ):

ուսումնական երթ – учебный марш, маршевая подготовка – route march

**երթակարգ** – տես *կարգ՝ երթային կարգ*

Զինծառայողների, ստորաբաժանումների, զորամասերի, նավերի, ինքնաթիռների՝ կանոնադրությամբ սահմանված տեղաբաշխում համատեղ երթային շարժման համար, երբ ստորաբաժանումը շարված է շարայան ձևով (շարքում 1, 2, 3 կամ 4 հոգի), իսկ ստորաբաժանումները շարված են

մեկը մյուսի հետևից՝ սահմանված հեռավորությունների վրա:

**երթային** – маршевый – marching

**երթաշարք** – походный строй – march formation, route formation

Շարք, որում ստորաբաժանումը դասավորված է շարայունով, կամ շարայուններում ստորաբաժանումները դասավորված են մեկը մյուսի հետևից՝ կանոնադրությամբ կամ հրամանատարի սահմանած հեռավորությունների վրա:

**երթարշավ** – движение в походном порядке – route march

**երթաքայլել** – маршировать – parade

**երթ-զորաշարժ** – марш-маневр – maneuver march

Զորքերի վերախմբավորման տեսակ, զորքի տեղաշարժ երթային կարգով, որը կատարվում է մինչև մարտական գործողությունների սկիզբը հակառակորդի նկատմամբ ավելի բարենպաստ դիրք զբաղեցնելու, անհրաժեշտ խրմբավորում ստեղծելու կամ զորքը հակառակորդի հարվածի տակից դուրս բերելու նպատակով:

**երթուղավորում** – маршрутизация – routing

Տեղեկույթը, բեռները, ուղևորներին տեղ հասցնելու համար առավել նպատակահարմար ուղու որոշումը՝ ընտրությունը:

**երթուղի** – 1. маршрут, 2. трасса – 1. route, itinerary, 2. track

Զորքի (ուժերի), ավիացիայի և փոխադրամիջոցների շարժման սահմանված (նշանակված) ճանապարհ, ուղի:

երթուղու ականազերծում – разминирование маршрута – route clearance

երթուղու բնութագիր – характеристика маршрута – route classification

երթուղու թողունակություն – пропускная способность маршрута – route capacity

երթուղու հատված – отрезок маршрута – stage

երթուղու հետախուզում – разведка маршрута, разведка пути – route reconnaissance

երթուղու փոփոխում – изменение маршрута – diversion

Ստորջրյա ականապատման տարբերակում վտանգավոր ուղուց շեղում դեպի կողմնակի անվտանգ ուղի:

թռիչքի երթուղի – маршрут полета – flight route

Ինքնաթիռի տեղափոխման նախապես որոշված ուղին՝ միջանկյալ վայրէջքների տեղի և ժամանակի նշմամբ:

նվազագույն ռիսկով երթուղի – маршрут с минимальным риском – minimum-risk route

ստիպված լինել փոխել երթուղին – быть вынужденным поменять маршрут – re-route

օդային երթուղի – воздушный маршрут – air route

օպերատիվ երթուղի – оперативный маршрут – operational route

Ցամաքային ճանապարհ, որը հատկացված է հրամանատարությանը՝ հատուկ օպերացիա իրագործելու համար:

**երթևեկություն** – движение – traffic

թռիչքադաշտային երթևեկություն – аэродромное движение – aerodrome traffic

ճանապարհային երթևեկության նշան – знак дорожного движения – regulatory sign

երթևեկության կարգավորման կետ – регулировочный пункт – control point

Երթուղու վրա գտնվող կետ, որում տեղակայված անձնակազմը երթևեկության մասին տեղեկություններ է հաղորդում և կարգավորում այն:

երկշարայուն երթևեկություն – двухконтное движение – double flow route

Ճանապարհ, որով երթևեկությունը կատարվում է երկու շարքով՝ հանդիպական ուղղություններով:

**երիզ** – 1. տես *ժապավեն*, 2. кайма – 1. տես *ժապավեն*, 2. fringe

**երկաթգիծ** – տես *երկաթուղի*

երկաթգծի թողունակություն – пропускная способность железной дороги – railway line capacity

Երկաթուղու կարողությունը միավոր ժամանակում (սովորաբար՝ մեկ օրվա ընթացքում) սպասարկելու որոշակի թվով փոխադրումներ:

**երկաթուղային** – железнодорожный – railway, railroad

**երկաթուղի** – железная дорога, железнодорожный путь – railway, railroad

**երկակնյա** – տես *հեռադիտակային*

**երկայնաթեքություն** – дифферент – pitch, tip

Նավագնացության մեջ. նավի, ծանրության կենտրոնով անցնող հորիզոնական հարթության նկատմամբ նրա երկայնական առանցքի շեղվածությունը, այսինքն՝ քթի և խելի ընկղմվածությունների տարբերությունը:

**երկայնաճոճում** – тангаж – pitch

Ինքնաթիռավարության մեջ. ինքնաթիռի երկայնական առանցքի դիրքը հորիզոնական հարթության նկատմամբ:

**երկարաճիտ կոշիկ** – сапог – boot

**երկեղջյուր** – погатка – catapult, slingshot

**երկիր** – Земля – the Earth

Արեգակնային համակարգության՝ Արեգակից հաշվված երրորդ մեծ մոլորակը, որի վրա ապրում է մարդկությունը:

**երկիր** – страна – country, land

երկրի խորքը – տես *երկիր՝ երկրի ներքին շրջաններ*

երկրի մակերևույթ – поверхность земли – ground

երկրի ներքին շրջաններ – внутренние районы страны, глубь страны – interior

«ուղարկող երկիր» – «направляющая» страна – sending nation

ՆԱՏՕ-ի անդամ պետություն, որն իր գործը (ուժերը) ուղարկում է այլ երկիր՝ այնտեղ տեղաբաշխման համար և հայցում է այդ երկրի աջակցությունը

**Երկճյուղավորում** – развилка, Т-образность – fork

**«Երկնագույն բերետներ»** – «голубые береты» – Blue Berets

ՄԱԿ-ի խաղաղարար ուժերը:

**Երկշարք դասավորություն** – двухшеренное построение – double file

Մարդկանց կամ մեքենաների երկու գուգահեռ շարք՝ իրար հետևից շարված:

**Երկրաբաշխական հենացանց** – опорная геодезическая сеть – ground control

Ճշգրիտ չափումների համակարգ, որն օգտագործվում է Երկրի մակերևույթի կետերի միջև հեռավորությունները, ուղղությունների և բարձրությունների միջև տարբերությունները որոշելու համար:

**Երկրաբաշխություն** – геодезия – geodesy

**Երկրագունդ** – տես *Երկիր*

**Երկրատեղեկութաբանություն** – геоинформатика, геоматика – geomatics

**Երկրաշարժ** – землетрясение – earthquake

Ստորգետնյա ցնցումներ, Երկրի մակերևույթի տատանումներ, որոնք առաջանում են երկրակեղևում կամ Երկրի վերին միջնապատյանում (մանտիա) տեղի ունեցող հանկարծակի տեղաշարժերի կամ խզումների հետևանքով և առաձգական տատանումների ձևով փոխանցվում մեծ հեռավորությունների վրա:

Երկրաշարժի բուժսանիտարական հետևանք – медико-санитарное последствие землетрясения – medical and sanitary consequences of an earthquake

Երկրաշարժի հետևանքով առաջացած վնաս՝ բնութագրվող սանիտարական կորուստներով, որոնց մեծությունը հիմնականում կախված է երկրաշարժի ինտենսիվությունից, բնակչության տեղաբաշխումից (բաց տեղանք, շենքեր), այն շենքերի տիպից, որոնցում գտնվում էր բնակչությունը, փակ վնասվածքների գերակշռությունից, խոցվածների մեծամասնության՝ փլվածքների տակ

գտնվելուց, երկրաշարժի գոտում հոգեկան խանգարումների առաջացումից, ավանդական հիվանդությունների ընթացքի ծանրացումից, բնակչության կենսապահովման համակարգերի խաթարումից, վարակիչ հիվանդությունների տարածմանը հանգեցնող անբարենպաստ պայմաններից, բնակչության բուժկանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային ապահովման գործող համակարգի խաթարումից, երկրաշարժի օջախում եղած բուժկանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային հիմնարկների հնարավորություններին բուժսանիտարական հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքների ծավալի անհամապատասխանությունից:

Երկրաշարժի օջախ – очаг землетрясения – earthquake center

հարուցված երկրաշարժ – տես *Երկրաշարժ՝ մակածված երկրաշարժ*

մակածված երկրաշարժ – наведенное землетрясение, техногенное землетрясение, индуцированное землетрясение – induced earthquake, triggered off earthquake

Երկրաշարժ, որի գործարկումը մարդու գործունեության հետևանք է:

տեխնածին երկրաշարժ – տես *Երկրաշարժ՝ մակածված երկրաշարժ*

**Երկրորդական** – второстепенный – subordinate

**Երկփող** – двуствольный – twin-barrelled

**Երկֆենիլամինաքլորարսին** – дифенил-аминохлорарсин – diphenylaminochloroarsine, DM

Արցունքաբեր գազ:

**Երկֆենիլցիանարսին** – дифенилцианарсин – diphenylcyanoarsine, DC

Փսխում հարուցող թունավոր նյութ:

**Երկֆենիլքլորարսին** – дифенилхлорарсин – diphenylchloroarsine, DA

Փսխում հարուցող թունավոր նյութ:

**Եֆրեյտոր** – ефрейтор, рядовой первого класса – private first class

**Ձ (ՁԱ)**

**զամբյուղ** – гондола, корзина – basket

**զայրույթ** – раздражение – irritation

**զանգված** – масса – mass

**զանգվածաբար ոչնչացնել** – տես *բնաջնջել*

**զանգվածային** – массовый – mass

զանգվածային կոտորած – տես *արյունահեղություն*

**զանգվածայնություն** – массовость – mass

**զանգվածեղ** – массиванный – mass

**զանգվածներ** – массы – the masses

**զանցանք** – проступок – misdemeanor  
Թեթև հանցանք:

**զառիթափ** – крутизна, круча – 1. bluff, 2. cliff

**զառիվեր** – տես *վերելք՝ կտրուկ վերելք*

**զառիվերակ** – эскарп, крутой откос – escarpment

**զավթել** – захватывать, занимать – occupy

**զավթիչ** – захватчик – invader, occupant  
Նա, ով բռնի կերպով տիրանում է որևէ բանի, նվաճող (գերազանցապես՝ մեկ այլ պետության տարածքի և բնակչության):

**զավթողագործություն** – экспансия – expansion

Առանձին պետության, ժողովրդի, մշակույթի կամ կենսաբանական տեսակի բնակության տարածքի կամ ազդեցության ոլորտի տարածքային, աշխարհագրական կամ այլ բնույթի ընդարձակում: Ռազմական՝ զինված ճանապարհով օտար տարածքների զավթում ուրիշ ժողովուրդներին քաղաքական և տնտեսական առումով ստրկացնելու, նրանց հողերը բռնակցելու, իր ռազմական-ռազմավարական վիճակն ամրապնդելու, ազդեցության ոլորտներն ընդարձակելու նպատակով:

**զավթում** – захват – seizure, capture  
Որևէ բանի նկատմամբ տիրապետության բռնի հաստատում, տիրում, տիրացում:

տարածքների զավթում – захват территории – takeover, capture of a territory  
Մի պետության կողմից մեկ այլ պետության տարածքի (ամբողջությամբ կամ մասամբ) բռնի գրավում՝ զինված ուժի կիրառությամբ:

**զարդանկար** – տես *նախշ*

**զարին** – зарин – Sarin, GB  
Նյարդակաթվածահարական թունավոր նյութ:

**զարկանի քաշում** – взведение ударника – arming

**զարմանք** – удивление – surprise

«**Զբաղեցնել մարտական դիրքերը**» – տես «*Մարտի՛*»

«**Զբաղեցնել տեղերը**» – տես «*Մարտի՛*»

**զբաղմունք** – занятие, профессия – occupation, trade

**զգայարար** – сенсор – sensor

մանրաչափացված զգայարար – миниатюризированный сенсор – miniaturized sensor  
Շատ փոքր չափերի հասցված զգայարար:

**զգայունականություն** – տես *ընկալունակություն*

**զգայունակություն** – տես *դյուրընկալություն*

**զգայուն հարց** – деликатный вопрос – sensitive issue

**զգեստնում** – տես *վայրէջք 2*

**զգոն** – бдительный, настороженный – alert

**զգոնություն** – 1. бдительность, 2. տես *ուշադիրություն* – 1. vigilance, 2. տես *ուշադիրություն*

Արթնություն, զգաստություն, աչալրջություն, սպառնալիքները ժամանակին նրկատելու և սթափ գնահատելու կարողություն, զորքի (ուժերի) մարտական պատրաստության գործոններից մեկը. բարոյահոգեբանական հատկություն:

զինծառայողի զգոնություն – бдительность военнослужащего – vigilance of serviceman

թռիչքուղու լույսեր – огни взлетно-посадочной полосы – runway lights

թռիչքուղու մոտակա ծայրը – ближний конец взлетной полосы – approach end of runway

թռիչքուղու տեսանելիության գոտի – зона видимости взлетно-посадочной полосы – runway visual range

նվազագույն թռիչքուղի – минимальная взлетная полоса – minimum operating strip

թռչնաբախում – столкновение самолета с птицей – bird-strike

Թռչունի և օդանավի բախումն օդում:

թռուցիկ – листовка – leaflet

թվակազմ – контингент – contingent

1. Մարդկանց՝ որևէ տեսակետից համասեռ խումբ, կարգ: 2. Որոշակի նպատակի համար սահմանված առավելագույն չափը, նորմը:

թվանիշ – цифра – figure

թվաքանակ – численность – strength

ընդհանուր թվաքանակ – общая численность – total personnel strength

Ռազմական գործողությանը մասնակցող անձնակազմի ընդհանուր թիվը:

թրթռամեղմիչ – տես *թափամեղմիչ*

թրթուր – гусеница – caterpillar (track)

Հողակապով միացված օղակներից (թրթուրահողներից), կազմված պարփակ ժապավեն, որը կիրառվում է մակերևույթի հետ տարբեր տեսակի շարժական տեխնիկական միջոցների հպումն ու դրանց շարժումն ապահովելու համար:

թրթուրահող – трак – track

թուլացում – 1. затухание, ослабление, 2. ослабление, уменьшение – 1. attenuation, 2. weakening

թուլություն – слабость – inferiority

**թույլատրելիություն** – разрешенность, допустимость – acceptability

**թույլատրում** – տես *թույլտվություն*

**թույլտվածք** – допуск – allowance

**թույլտվություն** – 1. разрешение, 2. разрешение, позволение, 3. санкция, разрешение, 4. допуск – 1. permit, clearance, 2. permission, allowance, 3. authorization, sanitation, 4. security clearance

1. Որևէ բան անելու իրավունք տվող փաստաթուղթ: 2. Որևէ բան անելու իրավունք տալը, արտոնում: 3. Հնարավորության ընձեռում: 4. Գաղտնի տեղեկություն ծանոթանալու, դրանից օգտվելու իրավունք:

երթանցման թույլտվություն – путевка – movement credit

Կարգադրագիր, որը տրվում է մեկ կամ մի քանի մեքենայի՝ որոշակի ժամանակահատվածում ճանապարհի վերահսկվող հատվածով հրահանգված կանոններին համապատասխան շարժվելու համար:

թռիչքի թույլտվություն – разрешение на взлет – take-off clearance

թույլտվության քարտ – карточка допуска – security certificate

կարգավարական թույլտվություն – диспетчерское разрешение – air traffic control clearance

նշանակետերի խոցման վերջնական թույլտվություն – окончательное разрешение на поражение целей – final clearance for the targets

մուտքի թույլտվություն – допуск – admission

պետական գաղտնիքներին ծանոթանալու թույլտվություն – допуск к государственным секретам – certificate of security clearance

վայրէջքի կամ թռիչքանցման դիվանագիտական թույլտվություն – разрешение через дипломатические каналы на посадку или пролет – diplomatic authorization

Որևէ օդային տարածք մտնելու կամ վայրէջք կատարելու իրավունք, որը

կառավարությունների մակարդակով ստացվել է դիվանագիտական ճանապարհով:

**թույն** – яд, ядовитое вещество – 1. toxic, toxin, 2. venom

**թունավոր** – токсический, токсичный, ядовитый – 1. toxic, 2. venomous

**թունավորություն** – токсичность – toxicity

**թունել** – туннель – tunnel

**թուր** – сабля, шашка – saber

**թև** – 1. крыло, 2. տես *գորաթև*, 3. տես *ափաթև* – 1. wing, 2. տես *գորաթև*, 3. տես *ափաթև*

Թռչող ապարատի տանող մակերևույթը, որն ստեղծում է հիմնական ամբարձիչ ուժը, ինչպես նաև թռիչքի ժամանակ ապահովում է կայունությունն ու կառավարելիությունը:

անշարժ թևով թռչող ապարատ – ЛА с неподвижным крылом – fixed-wing aircraft  
եռանկյունաձև թև (օդանավի) – треугольное крыло – delta wing

**թևային** – 1. фланговый, 2. տես *գորաթևային* – 1. flanker, 2. տես *գորաթևային*

Ջորաթևի (զինաշարքի ևն) վերջին միավորը՝ զինվոր, ստորաբաժանում, տեխնիկական միջոց ևն:

**թևանցում** – фланговый обход – flank round, flank bypass, wing bypass

Տարաշարժի տեսակ, որի նպատակն է ծածուկ շրջանցել հակառակորդի թևը և նրան հարվածել թիկունքից:

**թևատրեզ** – нарукавная нашивка – hash mark

## Ժ (ԺԵ)

«Ժ» ժամ – час «Ч», время «Ч» – H-hour  
ժամ, երբ սկսվում կամ պետք է սկսվի օպերացիան կամ զորավարժությունը:

«Ժ+» ժամ – время «Ч+» – F-hour

Օդային օպերացիա սկսելու ժամ:

«Ժ» ժամանակ – տես «Ժ» ժամ

**Ժամակարգավորիչ** – таймер – timer  
 Հարմարանք, որը գործարկում է որևէ պրոցես կամ երևույթ նախապես որոշված (նախադրված) պահին:

**Ժամանակ** – время – time  
 Գրինվիչի ժամանակ – տես *ժամանակ՝ համաշխարհային ժամանակ*

Ժամանակի ռեալ մասշտաբ – реальный масштаб времени – real time

Ժամանակի տվիչ – датчик времени – timer

Ժամանման ժամանակը – время прибытия – time of arrival

Ժամանման պլանավորված ժամանակ – плановое время прибытия – estimated time of arrival

խաղաղ ժամանակ – мирное время – peacetime

համաձայնեցված համաշխարհային ժամանակ – всемирное координированное время – Coordinated Universal Time

համաշխարհային ժամանակ – всемирное время, гринвичское время – Universal Time, Zulu time, Greenwich Mean Time, GMT

մերձիրական ժամանակ – квазиреальное время – near real time

Ժամանակի մասշտաբ, որը մոտ է ռեալ (իրական) ժամանակին:

պարունակության կիսանվազման ժամանակը – период полувыведения из атмосферы – half-residence time

Այն ժամանակը, որի ընթացքում զենքի կիրառման հետևանքով մթնոլորտ արտանետված ռադիոակտիվ նյութերի կոնցենտրացիան նվազում է երկու անգամ:

քվազիրեալ ժամանակ – տես *ժամանակ՝ մերձիրական ժամանակ*

**Ժամանակաշրջան** – период – period

բազիսային ժամանակաշրջան – տես *ժամանակաշրջան՝ հիմքային ժամանակաշրջան*

**Ժամանակաչափ** – хронометр – chronometer

**Ժամանակավոր արտածառայություն** – временная служба в иностранных ВС – loan service

Պատրաստում ստանալու կամ ռազմական փորձաքննություն կատարելու համար զինծառայողների ժամանակավոր գործուղում բարեկամ պետության գործեր:

**Ժամանակավոր կազմացրում** – временное расформирование – inactivation

**Ժամանակացույց** – график, расписание – schedule

**Ժամանման վերջնաժամկետ** – дата самого позднего прибытия – latest arrival date

**Ժամապահ** – часовой – sentry, watch, sentinel

Պահակ՝ պահակազորային, որն ստանձնում է իր պարտականությունների կատարումը պահակակետում:

Ժամապահի աշտարակ – вышка часового – sangar

Ժամապահի համար ռազմական օբյեկտի տրանզիտը սարքավորված աշտարակաձև ամրաշեն դիրք:

**Ժամկետային** – срочный – fixed-date

**Ժայռ** – տես *քարակ*

**Ժանտախտ** – чума – plague, pestilence

**Ժապավեն** – 1. тесьма, лента, 2. повязка, 3. пояс, ремешок, 4. пленка – 1. band, 2. patch, 3. strip, 4. film

Ժապավենի նեգատիվ – негатив пленки – negative photo plane

ինֆրակարմիր ժապավեն – инфракрасная пленка – infrared film

Ժապավեն, որը դուրազգայուն է ինֆրակարմիր ճառագայթման նկատմամբ:

**Ժապավենային** – ленточный – belt-fed

**Ժխտում** – отрицание – denial

**Ժողով** – собрание – assembly

թուցիկ ժողով – летучка, планерка – brief meeting

**Ժողովում** – տես *հավաքում 1, 2*

**Ժողովուրդ** – народ – people

հասարակ ժողովուրդ – простонародье, плебс – commonality

### Ի (ԻՆԻ)

«**Ի զե՛ն**» – 1. «К оружию!», 2. «В ружье!» – 1. “To arms!”, 2. “Take arms!”

«**Իգլ**» – «Игл» – “Eagle”  
Չորրորդ սերնդի ամերիկյան \$-15 կործանիչ ինքնաթիռ, բռց. «Արծիվ»:

«**Իգլա-1**» – «Игла-1» – “Gimlet”  
Խորհրդային նախագծի՝ «Երկիր-օդ» դասի հրթիռով կրովի զենիթահրթիռաչին համալիր (բռց. «Ասեղ»):

**Իմացություն** – 1. знание, 2. познание – 1. cognisance, 2. cognition  
1. Իմանալը, տեղյակ լինելը: 2. Կեցության արտացոլումը մտածողության մեջ, օբյեկտիվ աշխարհի ճանաչողությունը:

Իմացության անհրաժեշտություն – необходимость знания – need to know  
Չափանիշ, որն օգտագործվում է գաղտնի տեղեկույթի հետ աշխատանքներում, ըստ որի՝ այդ տեղեկույթը պահպանող աշխատողն իրավունք ունի այդ տեղեկույթը տրամադրելու մեկ այլ անձի միայն այն դեպքում, երբ համոզված է, որ այդ տեղեկույթը տվյալ անձին անհրաժեշտ է իր պաշտոննական պարտականությունները կատարելու համար:

**Իմպուլս** – импульс – 1. pulse, impulse, 2. momentum  
Որևէ գործողության դրդում, խթանում, որևէ գործողության պատճառ:

էլեկտրամագնիսական իմպուլս – электромагнитный импульс – electromagnetic pulse  
1. Որոշակի վերջավոր ժամանակահատվածում էլեկտրական լարման կամ հոսանքի ուժի ցայտքում: 2. Միջուկային պայթյունի ժամանակ՝ կարճատև էլեկտրամագնիսական դաշտ, որն առաջանում է որպես շրջապատող միջավայրի ատոմների հետ գամմա-

ճառագայթման ու արձակվող նեյտրոնների փոխազդեցության արդյունք:

**ինդիկատորային թուղթ** – индикаторная бумага, реактивная бумага – detector paper

**ինդուկցիա** – տես *մակածություն*

**իներտ** – տես *պասիվ*

**իներցիա** – инерция – momentum

**ինսորսինգ** – инсорсинг, передача на внутренний подряд – insourcing  
Ինչպես ձեռնարկության ստորաբաժանումներին, այնպես էլ արտաքին հակընկերներին մասնագիտական ծառայություններ մատուցող ինքնավար կառուցվածքային միավորների (ընկերությունների) ստեղծում:

**ինստիտուտ** – институт – institute  
1. Որոշակի բնագավառների համար մասնագիտական կադրեր պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատություն: 2. Որոշակի թեմատիկայով գիտահետազոտական աշխատանքներ կատարող գիտական կազմակերպություն:

գիտահետազոտական ինստիտուտ – научно-исследовательский институт – research institute

Խաղաղության պրոբլեմների հետազոտման ստոկհոլմյան միջազգային ինստիտուտ – Стокгольмский международный институт исследования проблем мира – Stockholm International Peace Research Institute, SIPRI

ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ – институт стратегических исследований – institute for strategic studies

Ուզմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ – Международный институт стратегических исследований – International Institute for Strategic Studies

**ինտեգրալի հաշվում** – տես *ինտեգրում 1*

**ինտեգրել** – интегрировать, объединять – integrate



**ինտեգրում** – 1. интегрирование, вычисление интеграла, 2. интеграция – integration

1. Մաթեմատիկական ինտեգրալի որոշում: 2. Մասերը միացնելը, միավորելը՝ կազմելով մեկ ամբողջություն:

**ինտենսիվ** – интенсивный, сильный – heavy

**ինտերն** – интерн – intern

**ինտերպոլ** – Интерпол – Interpol

**ինտերվենցիա** – интервенция – intervention

1. Մի կամ մի քանի պետությունների բռնի միջամտություն այլ պետության ներքին գործերին կամ երրորդ պետության հետ հարաբերություններին՝ նպատակաուղղված նրա տարածքի զավթմանը, նրա նկատմամբ իր (իրենց) գերակայության հաստատմանը, նրա տնտեսական ենթարկմանը, տարբեր տեսակի արտոնությունների ձեռքբերմանը ևն: Լինում է զինված, տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական: 2. Կանխամտածված միջամտություն գործերի հաստատված դրվածքին կամ գործընթացին:

զինված ինտերվենցիա – вооруженная интервенция – armed intervension

ռազմական ինտերվենցիա – военная интервенция – military intervention

Պետության (ժողովրդի) ներքին գործերին այլ պետության անմիջական կամ անուղղակի միջամտություն՝ խարդսխված ՁՈՒ-ի վրա, ինչով խախտում կամ բացահայտ կերպով վտանգվում է այդ պետության ինքնիշխանությունը:

**ինքնագնաց** – самоходный, самодвижущийся – self-propelled

**ինքնաթիռ** – аэроплан, самолет – airplane, aeroplane, plane

Օդից ծանր թռչող ապարատ, որը նախատեսված է քարշուժ ստեղծող ուժակայանքի և անրողինամիկական ամբարձիչ ուժ ստեղծող թևի օգնությամբ մթնոլորտում թռիչքներ կատարելու համար:

առաջագնաց ինքնաթիռ – головной самолет – pathfinder

առաջավարական ինքնաթիռ – ведущий самолет – lead aircraft

Ինքնաթիռների զույգի կամ փոքր խմբի (սովորաբար՝ 3-4) ղեկավարի ինքնաթիռը:

գրոհային ինքնաթիռ – самолет-штурмовик – attack aircraft, ground-attack aircraft

գրոհիչ ինքնաթիռ – տես *ինքնաթիռ՝ գրոհային ինքնաթիռ*

դիտորդ ինքնաթիռ – самолет-наблюдатель – spotter plane, spotter aircraft

ինքնաթիռի արտագլորում թռիչքուղու սահմանից դուրս – выкатывание самолета за пределы взлетно-посадочной полосы – overshoot

ինքնաթիռի բեռնաթափում – выгрузка из самолета – deplanement

ինքնաթիռի դիրքն օդում – положение самолета в воздухе – attitude

ինքնաթիռի խցիկածածկոց – фонарь кабины – canopy

Օդաչուական խցիկի թափանցիկ մասը, որը անձնակազմին և ուղևորներին պաշտպանում է օդի հանդիպական հոսանքից, եղանակային պայմաններից և աղմուկից՝ ապահովելով մեծ տեսածիր:

ինքնաթիռի կառավարման փոխանցում – передача управления самолетом – aircraft handover

Ինքնաթիռի ղեկավարման փոխանցումը մեկ ղեկավարողից մյուսին:

ինքնաթիռի կմախք – остов самолета – airframe

ինքնաթիռի կողմնային տեսածրման ՌՏԿ – бортовая самолетная РЛС бокового обзора – side-looking airborne radar

ինքնաթիռի հարթ տակնոց – плоский поддон для самолета – aircraft flat pallet

ինքնաթիռի ստուգազննում – осмотр самолета – aircraft inspection

ինքնաթիռին անրացված խցիկ – прикрепленная к самолету камера – panoramic camera



Խցիկ, որը լուսանկարահանումներ է կատարում թռիչքի և դրան ուղղահայաց ուղղությամբ:

ինքնաթիռի նպատակային սարքավորանք – целевое оборудование – aircraft mission equipment

Օդանավի լրացուցիչ սարք, որն անհրաժեշտ է կոնկրետ մարտական առաջադրանքի կատարման համար:

ինքնաթիռի վերապլացք – крутой взлет, «свеча» – aircraft scrambling

ինքնաթիռի ուղեւրահ – салон самолета – cabin

ինքնաթիռի ուղևորասրահ – տես *ինքնաթիռ` ինքնաթիռի ուղեւրահ*

ինքնաթիռի փոփոխակում – модификация самолета, модифицирование самолета – aircraft modification

Փոփոխություն օդանավի ֆիզիկական պարամետրներում:

ինքնաթիռների օդակ – звено самолетов – flight of aircraft

լցավորիչ ինքնաթիռ – самолет-заправщик – tanker

կրկնաթև ինքնաթիռ – տես *բիպլան*

հարվածային ինքնաթիռ – ударный самолет – strike aircraft

Մարտական ինքնաթիռ, որը նախանշանակված է վրագետնյա և վրաջրային ու ստորջրյա նշանակետերի վրա խոցման ավիացիոն միջոցներով ազդեցություն գործելու համար:

հեռաթռիչ տրանսպորտային ինքնաթիռ – транспортный самолет большой дальности полета – long-range transport aircraft

հեռահար ռադիոտեղորոշումային հայտնաբերման և ուղղորդման ինքնաթիռ – самолет дальнего радиолокационного обнаружения и наведения – early-warning aeroplane

Կարավարման շարժուն ավտոմատացված համակարգի բաղկացուցիչ մաս. սարքավորվում է տարբեր նշանակետերի հեռահար հայտնաբերման, որսման և ուղեկցման ՌՏԿ-ով, այդ նշանակետերի ընթացիկ կորդինատ-

ների հաշվարկման ու վրագետնյա հրամանատարական կետերի հետ ծածկագրված կապի միջոցներով և:

մարտական ինքնաթիռի փոխսպասարկման պահանջ – требование взаимного обслуживания боевого самолета – operational aircraft cross-servicing requirement

ՆԱՏՕ-ում. ՆԱՏՕ-ի հրամանատարի սահմանած պահանջ, ըստ որի` նշված թռիչքարանք կամ նավը պետք է կատարեն տվյալ թռիչքարանին կամ նավին չամրագրված ինքնաթիռների սպասարկում:

միաշարժիչ ինքնաթիռ – одномоторный самолет – single-engine airplane

ռեակտիվ ինքնաթիռ – реактивный самолет – jet

Ռեակտիվ շարժիչով ինքնաթիռ:

ստորաբաժանման ինքնաթիռ – самолет подразделения – unit aircraft

Այն ինքնաթիռները, որոնք թռիչքային առաջադրանքի կատարման համար կցված են միևնույն ավիացիոն ստորաբաժանմանը:

ստորաբաժանման մի խումբ ինքնաթիռներ – группа самолетов подразделения – unit aircraft

ստրատեգիական տրանսպորտային ինքնաթիռ – стратегический транспортный самолет – strategic transport aircraft

տակտիկական տրանսպորտային ինքնաթիռ – тактический транспортный самолет – tactical transport aircraft

տրանսպորտային ինքնաթիռ – տես *միջոց` օդային տրանսպորտային միջոց*

ուղղաձիգ վերթիռով և վայրէջքով ռեակտիվ ինքնաթիռ – реактивный самолет с вертикальным взлетом и посадкой – jump-jet

ուղղաձիգ և/կամ կարճ վերթիռով ու վայրէջքով ինքնաթիռ – самолет вертикального и/или короткого взлета и посадки – vertical or short take-off and landing aircraft  
Թևի փոփոխվող երկրաչափությամբ ինքնաթիռ, որի շարժիչները հնարավորություն են տալիս անմիջապես տեղից օդ բարձրանալու` առանց թափավազ-

քի կամ շատ կարճ թափավազքից հետո:

ուսումնական ինքնաթիռ – учебный самолет – trainer

**ինքնամփոփություն** – замкнутость, необщительность – social withdrawal

**ինքնանետիչ** – катапульта, катапультируемое кресло – catapult, ejection seat, ejector seat

Նստատեղ ինքնաթիռի մեջ, որը հնարավորություն է տալիս օդաչուին և/կամ անձնակազմի անդամներին լքելու վնասված ինքնաթիռը, օդաչուի աթոռի ավտոմատ արտանետման մեխանիզմ:

ինքնանետիչ համակարգ – катапультирная система, система катапультирования – ejection system

Համակարգեր, որոնց կիրառման դեպքում հնարավոր է ինքնաթիռի նստատեղին կամ նստատեղերին նստած մարդկանց առանձին կամ միասին դուրս նետել ինքնաթիռից:

**ինքնանետում** – катапультирование – ejection

Հատուկ սարքերի (ինքնանետիչ ևն) միջոցով վթարված ինքնաթիռից օդաչուի՝ անձնակազմի անդամի դուրսնետում:

ինքնանետման բազկաթոռ – տես *ինքնանետիչ*

հաջորդական ինքնանետման համակարգ – система последовательного катапультирования – sequenced ejection system

**ինքնաշխատ** – տես *ավտոմատ 2*

**ինքնառնչացում** – տես *ինքնաչեզոքացում*

**ինքնաչեզոքացում** – самоликвидация, самонейтрализация – sterilization

**ինքնաչեզոքացուցիչ** – самоликвидатор, самонейтрализатор – sterilizer

**ինքնապաշտպանություն** – самооборона – self-defense

Մարդու, էթնիկական խմբի, ժողովրդի, ազգի, պետության՝ ագրեսիայից իրեն պաշտպանելու բնական իրավունքի իրագործումը:

**ինքնավարություն** – автономия – autonomy

1. Ինքնակառավարում, պետության որևէ մասին սահմանադրությամբ տրված իրավունք՝ ինքնուրույն կերպով իրականացնելու պետական իշխանության կամ կառավարման որոշակի գործառնություններ: 2. Համակարգի կարողությունը՝ ինքնուրույնաբար կատարելու իր հիմնական գործառնությունները՝ առանց արտաքին աղբյուրներից լրացուցիչ ռեսուրսներ ստանալու:

**ինքնատիրապետում** – самообладание, владение собой – self-control

ինքնատիրապետման կորուստ – потеря самообладания – breakdown

**ինքնիշխանություն** – суверенитет – sovereignty

Երկրի ներսում պետական իշխանության գերակայություն ամբողջ տարածքում և նրա անկախություն միջազգային հարաբերություններում:

**ինքնություն** – самость – identity

Իրեն բնորոշ գծերի ամբողջությունը, որը տվյալ անհատի հոգեբանական կերտվածքի և խորքային կենտրոնի արտացոլումն է:

**ինքնուղղորդվող** – самонаводящийся – homing

**ինքնուղղորդում** – самонаведение – homing guidance

ակտիվ ինքնուղղորդում – активное самонаведение – active homing guidance

ինքնուղղորդման գլխիկ – головка самонаведения – homing head

Խոցման միջոցի (հրթիռ, տորպեդ, ավիառումբ, արկ) ավտոմատ սարք, որն ապահովում է այդ միջոցի ինքնուրույն ուղղորդումը դեպի որոշակի նշանակետ:

ինքնուղղորդման լազերային գլխիկ – лазерная головка самонаведения – laser seeker

Ինքնուղղորդման համակարգ, որում կիրառվում է լազերային ճառագայթումը:

ինքնուղղորդման սարք – устройство самонаведения – homing adaptor

կիսաակտիվ ինքնուղղորդում – полуактивное самонаведение – semi-active homing guidance

Ուղղորդման համակարգ, որում դեպի նշանակետ հրթիռի ուղղորդումը կատարվում է որևէ այլ աղբյուրով (ոչ հրթիռի և ոչ նշանակետի, այլ գլխավորապես՝ հրթիռի կրողի) նշանակետի ճառագայթահարման ժամանակ նշանակետից անդրադարձած ճառագայթման միջոցով:

պասիվ ինքնուղղորդում – пассивное самонаведение – passive homing guidance

Ինքնուղղորդման համակարգ, որն օգտագործում է նշանակետի առաքած ճառագայթումը:

**ինքնուրույն** – самостоятельный, автономный – independent

**ինքնուրույնություն** – самостоятельность – independence

**ինֆրակարմիր** – инфракрасный – infrared

Կարմիր տիրույթի ճառագայթումից ավելի երկար ալիքի ճառագայթում (ավելի փոքր հաճախականությամբ), որը բնորոշ է տաք մարմիններին (ջերմային ճառագայթում):

**ինֆրաձայնային** – инфразвуковой – subsonic

Ինֆրաձայնին՝ 20 Հց-ից ցածր հաճախականությամբ մեխանիկական տատանումներին, վերաբերո՝ հատուկ:

**իշխանություն** – 1. власть, 2. տես նախարարություն 2 – 1. power, authority, 2. տես նախարարություն 2

Որևէ մեկին կամ որևէ բան իր կամքին ենթարկելու, նրա գործողությունները տնօրինելու իրավունք և հնարավորություն:

գործադիր իշխանություն – исполнительная власть – executive power, the Executive

Պետությունում կառավարման գործառույթներ իրականացնող մարմինների համակարգ:

դատական իշխանություն – судебная власть – judicial power, the judiciary

Պետության անունից վարչական կամ քրեական հարկադրանք կիրառող մարմինների համակարգ:

իշխանության իրականացում – осуществление власти – exercise of power

իշխանության կառուցվածք – структура власти – power structure

իշխանության հաստատություն – институт власти – institute of power, institution of power

իշխանության ճյուղեր – ветви власти – branches of power

ժողովրդավարական հասարակարգում դրանք են՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, այժմ դրանց ավելացվում է նաև չորրորդը՝ զանգվածային լրատվությունը, կամ տեղեկատվությունը, ընդսմին այդ ճյուղերը միմյանցից անկախ են:

լեգալ իշխանություն – легальная власть – legal power

ներկայացուցչական իշխանություն – представительная власть – representative power

ժողովրդի կողմից իր ընտրովի ներկայացուցիչներին խստիվ սահմանված ժամկետով տրամադրված լիազորությունների համախումբ:

տեղական իշխանություն – местная власть – local power

օրենսդիր իշխանություն – законодательная власть – legislative power

Պետական իշխանության ճյուղ, որի հիմնական գործառույթը պետության օրենքների ընդունումն է:

օրինական իշխանություն – легитимная власть, законная власть – legitimate power, legitimate authority

**իշխանություններ** – власти – power, authorities

քաղաքացիական իշխանություններ – гражданские власти – civil authorities

**իշխել** – господствовать, повелевать – command

1. Իշխանություն վարել: 2. Տիրապետել, տիրել: 3. Տիրապետող լինել: 4. Բարձր լինել, բարձրանալ

**իշխող** – господствующий, командный – commanding

իշխող դիրք – командная позиция – dominating position

**իշխում** – տես *գերակշռում*

**իոնոլորտ** – ионосфера – ionosphere  
Մթնոլորտի գոտի, որն ուղղաձիգ ուղղությամբ ձգվում է 50-80-ից մինչև 1000 կմ:

**իպրիտ** – иприт, горчичный газ – Levenstein Mustard, Mustard gas, H (H-gas), yperite

**իջազոր** – воздушный десант – airborne forces, airborne task forces

առաջին շարակարգի իջազոր – десантные войска первого эшелона – landing force

իջազորի երկրորդ շարակարգ – второй эшелон воздушного десанта – follow-up echelon, follow-up forces

իջազորի ռազմահենադաշտ – плацдарм десанта – airhead

իջազորի ուղղորդման զինախումբ – команда наведения воздушного десанта – airborne pathfinder team

պարաշյուտային իջազոր – парашютный десант – paratroops

**իջազորային** – 1. парашютист-десантник, воздушный десантник, 2. տես *օդադեսանտային* – 1. paratrooper, 2. տես *օդադեսանտային*

**իջակետ** – 1. точка посадки, место приземления, 2. место падения – 1. landing point, 2. point of impact, impact point

**իջահարթակ** – площадка сброса – air-drop platform

**իջեցնովի դուռ** – опускная дверь – trap-door

**իջվածք** – տես *վայր՝ ցածրադիր վայր*

**իսկություն** – подлинность – authenticity, identity

իսկության հաստատում – установление подлинности – authentication

իսկությունը պարզել – устанавливать подлинность – authenticate

**իր** – տես *առարկա*

ջարդված իրեր – поломанные предметы – breakage

**իրագործում** – 1. տես *կատարում 1*, 2. տես *իրականացում*

**իրադարձություն** – событие – event

առանձնահատուկ իրադարձություն – особое событие – special event

Միջազգային կամ ներքին իրադարձություն, մրցույթ, գործունեություն, հանրահավաք, ևն, որն իր էությամբ կամ նորմատիվ ակտով կամ իշխանության լիազոր մարմնի կարգադրությամբ պաշտպանության նախարարությունից պահանջում է անվտանգության, ապահովության և/կամ որևէ տեսակի նյութատեխնիկական ապահովման գործում աջակցություն կամ օգնություն:

զլխավոր իրադարձությունների ցուցակ – список главных событий – main event list

իրադարձության տեղի ունենալու ժամանակը – время наступления события – event time

իրադարձությունների մատրից – матрица событий – event matrix

Տվյալ տարածքում ակնկալվող իրադարձությունների հաջորդական շարք:

**իրադրություն** – обстановка – 1. situation, 2. condition

1. Այն երևույթների, գործընթացների ու պայմանների համախումբը, որը ձևավորվել է տվյալ տեղում: 2. Այն գործոնների ու պայմանների համախումբը, որոնց առկայությամբ իրագործվում է օպերացիայի (մարտի) նախապատրաստումն ու վարումը:

անորոշ իրադրություն – неопределенная обстановка – uncertain environment

անվտանգ իրադրություն – безопасная обстановка, безопасная среда – secure environment

բարենպաստ իրադրություն – տես *պայման՝ բարենպաստ պայմաններ*

էլեկտրամագնիսական իրադրություն – электромагнитная обстановка – electromagnetic environment

իրադրության գնահատում – оценка обстановки – estimate of the situation, appreciation of the situation, situation assessment

Մարտական գործողությունների նախապատրաստման ու վարման վրա ազդող գործոնների ու պայմանների ուսումնասիրություն ու վերլուծություն:

իրադրության ռազմավարական գնահատում – стратегическая оценка ситуации – strategic estimate of the situation

իրադրության սխեմա – схема обстановки – situation template

Հակառակորդի պարզված կամ ենթադրյալ տեղաբաշխման պատկեր:

իրադրության ստրատեգիական գնահատում – տես *իրադրություն՝ իրադրության ռազմավարական գնահատում*

իրադրության քարտեզ – карта обстановки – situation map

կենսաբանական իրադրություն – биологическая обстановка – biological situation

հետախուզական իրադրություն – разведывательная обстановка, оперативная обстановка – intelligence picture

հորիզոնական իրադրության արտացոլում – отображение горизонтальной обстановки – horizontal situation display

էլեկտրոնային ցուցասարքով առաջադրանքին առնչվող ուղեվարական տեղեկության, ընթացքային տվյալների արտացոլում, ընդամին ռադարից ստացվող տեղեկության ու պատկերը կա՛մ վրադրվում են քարտեզին, կա՛մ ներկայացվում որպես առանձին պատկեր:

հրամանատարի կողմից իրադրության գնահատում – оценка обстановки командиром (командующим) – commander's estimate of the situation

Հրամանատարն այս գնահատումը կատարում է նախքան մարտական գործողությունների նախնական պլանի կազմումը:

ճառագայթաբանական իրադրություն – радиологическая обстановка – radiological environment

Այն միջավայրի վիճակը, որում կան ռադիոակտիվ նյութերի տրոհման արգասիքներ:

մարտական իրադրության անորոշություն – неясность боевой обстановки – fog of war

Խառնաշփոթ մարտադաշտում, որը ծագում է ծխամածության, աղմուկի, տեղեկության պակասի հետևանքով:

մարտական իրադրություն – боевая обстановка – combat situation, fighting situation

մարտավարական իրադրություն – тактическая обстановка – tactical situation

որոշարկված նշանակետերով իրադրության արտացոլում – отображение обстановки с опознанными целями – recognized picture

ռադիոէլեկտրոնային իրադրություն – радиоэлектронная обстановка – electronic situation

ռազմաքաղաքական իրադրություն – военно-политическая обстановка – political-military situation

քիմիական իրադրություն – химическая обстановка – chemical environment

քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական և միջուկային իրադրություն – химическая, биологическая, радиологическая и ядерная обстановка – chemical, biological, radiological, and nuclear environment

օպերատիվ իրադրության միասնական պատկեր – единая картина оперативной обстановки – common operational picture

օպերատիվ իրադրություն – 1. оперативная обстановка, 2. տես *իրադրություն՝ հետախուզական իրադրություն* – 1. operational environment, 2. տես *իրադրություն՝ հետախուզական իրադրություն*

**իրագեկիչ** – 1. информатор, 2. информатор, осведомитель – 1. informer, 2. informant

Տեղեկություններ սովող, տեղեկության պահովող, սովորաբար գործածվում է բացասական երանգով՝ լրտես:

**իրազեկվածություն** – компетентность – awareness, competence

Լավատեղյակություն, քաջատեղյակություն, իրադարձության, երևույթի կամ գործընթացի մասին համակարգված ու սպառնիչ տեղեկություններ ունենալը:

**իրազեկում** – оповещение – notification

Տեղեկություններով, տվյալներով ապահովում:

հասարակայնության իրազեկման պասիվ քաղաքականություն – пассивная политика информирования общественности – passive public information policy

Հասարակական ուշադրությունը որևէ բանի նկատմամբ չսրելու քաղաքականություն:

մարտավարական իրազեկում – тактическое предупреждение, тактическое оповещение – tactical warning

**իրազեկույց** – донесение – dispatch

1. Մարտական կամ ծառայողական հաշվետվական-տեղեկատվական փաստաթուղթ, որը մշակում են շտաբը կամ կառավարման այլ մարմին վերադաս հրամանատարին (պետին) կամ շտաբին որոշակի տեղեկություններ հաղորդելու համար: 2. (զին.) Որևէ տեղեկության ծառայողական հաղորդում վերադասին: 3. Որևէ իրադարձության՝ դեպքի՝ պատահարի (գերագանցապես՝ կատարված հանցագործության կամ դրա նախապատրաստման) մասին հաղորդում իշխանություններին:

թիկունքային ապահովման մասին իրազեկույց – донесение по тыловому обеспечению – logistic reporting

իրազեկույց հակառակորդի հրետանու գործողությունների մասին – донесение о действиях артиллерии противника – shelling report

Հաշվետվություն հակառակորդի ձեռնարկած հրետակոծությունների մասին, որում պարունակվում են տեղեկություններ կիրառված զենքի տրամաչափի, արկերի տեսակի, հրետակոծման ուղղության, սկսման ժամանակի ու տևողության, կրակի տեսակի ու խտության, հրետակոծման շրջանի մասին են:

հակառակորդի հայտնաբերման մասին իրազեկույց – донесение об обнаружении противника – contact report, amplifying report, initial contact report

հետախուզական իրազեկույց – разведывательное донесение – intelligence report

հետախուզատեղեկատվական իրազեկույց – информационно-разведывательное донесение – intelligence information report

մարտական իրազեկույց – боевое донесение – battle message, special report

Վերադաս շտաբ ներկայացվող հաշվետվական-տեղեկատվական փաստաթուղթ, որում սովորաբար հաղորդվում են որոշակի ժամանակահատվածում մարտական խնդրի կատարման արդյունքները՝ ռազմական իրադրության, գործողությունների գնահատման, հետագա ձեռնարկումների մասին որոշման, անհրաժեշտության դեպքում՝ մարտական խնդրի կատարման համար աջակցության մասին խնդրանքի շարադրմամբ:

շտապ իրազեկույց – срочное донесение – spot report

տեղեկատվական իրազեկույց – информационное донесение – information report

**իրան** – 1. корпус, остов, 2. торс, туловище – 1. frame, body, 2. torso, body

1. Շենքի, նափի, մեքենաների և նման այլ կառույցների հենարան հանդիսացող մասը, կմախք: 2. Մարդու մարմինն առանց գլխի և վերջույթների:

**իրականացում** – осуществление – implementation

Որևէ ծրագրի, նախագծի, մտավոր կառույցի վերածում իրականության, մարմնացում, առարկայացում:

**իրապարկ** – вещевой мешок – pack

**իրավագիտակցություն** – правосознание – legal awareness, legal conscience, legal consciousness

Հասարակական գիտակցության ձև, հայացքների, գաղափարների համակցություն, որն արտահայտում է անհատի, մարդկային խմբի, սոցիալական խավի, հանրույթի վերաբերմունքը իրա-



վունքի, օրինականության, արդարադատության նկատմամբ:

**իրավագրություն** – юрисдикция – jurisdiction

**իրավախախտում** – правонарушение – breach, offense, contravention

Օրենքով կամ այլ նորմատիվային ակտով սահմանված կանոնների խախտում՝ գործողությամբ (օրենքով կամ ակտով արգելված գործողության կատարում) կամ անգործությամբ (նախատեսված պարտավորության անտեսում):

**իրավական** – правовой – legal

Իրավունքին առնչվող, իրավունքին հատուկ:

իրավական դաստիարակություն – правовое воспитание – legal education

ԶՈՒ-ում. զինծառայողների գիտակցության ու վարքի վրա կատարվող նպատակաուղղված ներգործություն, որպեսզի նրանք ձեռք բերեն այնպիսի արժեքային կողմնորոշումներ, շարժառիթներ և դիրքորոշումներ, որոնց շնորհիվ ձգտեն կյանքի ցանկացած իրավիճակում գործելու համաձայն քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները սահմանող և զինվորական գործունեությունը կանոնակարգող նորմերի:

Իրավական, պայմանագրային և ֆինանսական հարցերով կոմիտե – Комитет по правовым, контрактным и финансовым вопросам – Legal, Contracts and Finance Committee

իրավական ռեժիմ – правовой режим – legal procedure

Գործունեության այս կամ այն ոլորտը կարգավորող կանոնների համախումբը:

**իրավակարգ** – порядок – law and order, legal order

Գործող իրավունքի հիման վրա ձևավորված հասարակական հարաբերությունների համակարգ:

**իրավակիրառում** – правоприменение – enforcement

Կազմակերպարավական ձևի պետական գործունեություն՝ նպատակաու-

ղղված իրավական հանձնարարականների կենսագործմանը:

**իրավակիրարկում** – правоприменение – law enforcement

Իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց իշխանական-կազմակերպական գործունեությունը, որն իրականացվում է ընթացակարգային-դատավարական կարգով և ներկայացնում իրավունքի նորմերի կիրառման ժամանակ կոնկրետ սուբյեկտների կամ կյանքի կոնկրետ դեպքերի համար իրավական նորմերի անհատականացում:

**իրավահաջորդություն** – правопреемство – legal succession

Իրավունքների փոխանցում իրավահարաբերությունների մի սուբյեկտից մյուսին, ընդսմին այդ ժամանակ փոփոխվում են ոչ թե իրավահարաբերությունները, այլ միայն դրանց սուբյեկտը:

**իրավահարաբերություն** – правоотношение – legal relationship

Իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններ, որոնց մասնակիցները իրավունքների ու պարտականությունների կրողներ են:

**իրավասուբյեկտություն** – правосубъектность – legal personality

Անձի ունակությունը՝ ունենալու և անմիջականորեն կամ իր ներկայացուցիչների միջոցով իրագործելու իրավունքները և իրավաբանական պարտականությունները, այսինքն՝ հանդես գալու որպես իրավահարաբերությունների մասնակից:

**իրավասություն** – компетенция, обладание правом – competence, jurisdiction

Որևէ մարմնի, պաշտոնատար անձի՝ օրենքով սահմանված լիազորությունների (իրավունքների, պարտականությունների) ամբողջությունը:

համադասելու իրավասություն – полномочия по координации – coordinating authority

**իրավարար** – арбитр, третейский судья – umpire

**իրավիճակ** – ситуация – situation



ազգային մասշտաբի արտակարգ իրավիճակ – чрезвычайная ситуация национального масштаба – national emergency

արտակարգ իրավիճակ – чрезвычайная ситуация – emergency situation, emergency

Որոշակի տարածքում տիրող իրադրություն, որն ստեղծվել է վթարի, վտանգավոր բնական երևույթի, աղետի ևն հետևանքով և կարող է հանգեցնել կամ հանգեցրել է մարդկային զոհերի, նրանց առողջության, բնական միջավայրի վնասմանը, նյութական կորուստների:

արտակարգ իրավիճակի շտաբ – штаб чрезвычайных ситуаций – incident command

արտակարգ իրավիճակի օջախ – очаг чрезвычайной ситуации – emergency center

արտակարգ իրավիճակների բժշկություն – медицина катастроф – emergency medicine, disaster medicine

արտակարգ իրավիճակներին պատրաստության գծով համադասող սպա – офицер-координатор по готовности к чрезвычайным ситуациям – emergency preparedness liaison officer

Արտակարգ իրավիճակներում քաղաքացիական ծառայություններին ռազմական գերատեսչության կողմից ցուցաբերվող օգնության համար պատասխանատու սպա:

ներքին արտակարգ իրավիճակ – внутренняя чрезвычайная ситуация – domestic emergency, major disaster

Պետությունում տեղի ունեցող իրադարձություններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ բնակչության բարեկեցության վրա, օրինակ՝ ջրհեղեղ, երկրաշարժ, հրդեհ, հրաբխի ժայթքում, ինչպես նաև ահաբեկչական հարձակում, քաղաքացիական հուզումներ, մեծ վթարներ ևն:

**իրավունակություն** – правоспособность – legal capacity

Օրենքով նախատեսված և թույլատրված իրավունքներ և պարտականություններ ունենալու անձի ունակությունը:

**իրավունք** – право – law

Վարքագծի համընդհանուր պարտադիր կանոնների (նորմերի) համախումբ, որը սահմանում կամ թույլատրում է պետությունը:

ապաստանի իրավունք – право убежища – right of asylum

Պետության իրավունքը՝ թույլ տալու իր տարածք մուտք գործել և այնտեղ բնակվել արտերկրի այն քաղաքացիներին, որոնք իրենց երկրում ենթարկվում են հետապնդումների քաղաքական, ազգային-ազատագրական, կրոնական, գիտական և այլ գործունեության պատճառով: Չի տարածվում այն անձանց վրա, որոնք մեղադրվում են միջազգային (այդ թվում՝ ռազմական) և քրեական հանցագործությունների կատարման մեջ:

իրավունքի գերակայություն – верховенство права, верховенство закона – rule of law

Իրավական ուսմունք, ըստ որի՝ ոչ ոք (ոչինչ) օրենքից վեր չէ, բոլորն օրենքի առջև հավասար են, ոչ ոք չի կարող պետության կողմից ենթարկվել պատժի, եթե չի խախտել օրենքը, այն էլ՝ միայն օրենքով սահմանված կարգով:

ծովային իրավունք – морское право – law of the sea

կենսաթոշակային ապահովման իրավունք – право на пенсионное обеспечение – pension entitlement

հետապնդման իրավունք – право преследования – right of a pursuit

Միջազգային ծովային իրավունքի նորմ, որը կանոնակարգում է մերձափնյա պետության նավերի (ԹԱ-ների) կողմից այդ պետության ջրային տարածքների ռեժիմը խախտած օտարերկրյա նավերի հետապնդումը և բաց ծովում կալանումը:

հրաժարում իրավունքից – отказ *զիջում*

մարդու իրավունքներ – права человека – human rights

մարդու իրավունքների խախտում – нарушение прав человека – violation of human rights, abuse of human rights

միջազգային ատոմային իրավունք – международное атомное право – international nuclear right

միջազգային իրավունք – международное право – international law

Օտարերկրյա տարրերի մասնակցությամբ իրավահարաբերությունների և այդ հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի համախումբը:

միջազգային ծովային իրավունք – международное морское право – international law of the sea

միջազգային մարդասիրական իրավունք – տես *հակամարտություն՝ զինված հակամարտությունների միջազգային իրավունք*

միջազգային օդային իրավունք – международное воздушное право – international air law

նախադեպային իրավունք – прецедентное право – case law

Անգլոսաքսոնական իրավահամակարգի հիմնական տարրը. միջնադարյան Անգլիայում պատմականորեն ձևավորված իրավական համակարգ, որի բնութագրական հատկանիշն այն է, որ օրենքները կարգավորում են հարաբերությունների առանձին ոլորտներ և չեն կազմում միասնական համակարգ, և այն, ինչ չի կարգավորվում օրենքներով, ինչպես դրանց մեկնաբանություններն ու կիրառումը կատարվում են ըստ դատական նախադեպի: Բաղկացած է երկու ճյուղից՝ ընդհանուր իրավունք (common law) և արդարության իրավունք (law of equity):

սովորության իրավունք – обычное право – common law

Վարքի (սովորույթների) այն չգրված կանոնների համախումբը, որոնք հասարակության մեջ ձևավորվել են բազմակի ավանդական կիրառման հետևանքով և թույլ են տրվել պետության կողմից:

վարչական իրավունք – административное право – administrative law

Հանրային իրավունքի բաժին, որը վերաբերում է պետական կառավարման մարմինների իրավունքներին ու դրանց կիրառման ընթացակարգերին:

քաղաքացիական իրավունք – гражданское право – civil law

Քաղաքացիների և նրանց ստեղծած իրավաբանական անձանց օրինական

շահերի իրականացման և հասարակության մեջ տնտեսական հարաբերությունների կազմաերկայման նպատակով գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի համախումբ:

**իրատուպրակ** – տես *իրապարկ*

**իրարանցում** – переполох, суматоха – confusion, turmoil

**իրացում** – реализация – implementation, realization

1. Մտահղացման իրագործում, արդյունքի ստացում: 2. Սպառում, վաճառք: 3. Յուրացում, օգտագործելի դարձնելը: 4. Գործադրում, կիրառում:

## L (ԼՅՈՒՆ)

**լազ** – лаз – log

Արագությունն ու անցած ճանապարհը չափելու նավային սարք:

**«L» ժամ** – час «L», час «Л» – L-hour

1. Ծավալման համադասման ժամանակը: 2. Տեղափոխման համար իջագործի վայրէջքի ժամանակը: 3. Ջորէջքային և օդաշարժուն օպերացիաներում. այն ժամանակը, երբ հարվածային ուղղաթիռների շարակարգի առաջին ուղղաթիռը դիպչում է կամ պետք է դիպչի գետնին:

**լազեր** – лазер – laser

Միագույն կոհերենտ լույսի աղբյուր:

CO<sub>2</sub> լազեր – տես *լազեր՝ ինֆրակարմիր ածխաթթվային լազեր*

ինֆրակարմիր ածխաթթվային լազեր – инфракрасный углекислый лазер, CO<sub>2</sub> лазер – infrared CO<sub>2</sub> laser

Ինֆրակարմիր տիրույթի գերիզոր գազային լազեր, որի ակտիվ տարրը ածխաթթու գազն է:

**լազերային** – лазерный – laser

1. Լազերին առնչվող, լազերին հատուկ: 2. Լազերով աշխատող:

լազերային գծային տեսածրման համակարգ – система лазерного линейного сканирования – laser linescan system

լազերային նշանացույց – лазерный целеуказатель – laser target designator, laser designator

լազերային նշանացույց-հեռաչափ – лазерный целеуказатель-дальномер – laser pointer-rangefinder

Նշանակետի մասին տեղեկությունների ստացման և առանց տեղանքում անմիջական չափումների դրա հեռավորության որոշման համար նախատեսված սարք, որի գործողությունը հիմնված է լազերային ճառագայթման կիրառման վրա:

լազերային նշանացուցման համակարգ – система лазерного целеуказания – laser target designating system

**լայնությունների հյուսիսային տարբերություն** – нордовая разность широт – northing

**լանջ** – 1. склон, скат, покатость – 1. slope, 2. incline

**լաստանավ** – паром – ferry

**լավ առողջություն** – хорошее здоровье, здоровый образ жизни – wellness

Առողջ կենսակերպի հայեցակարգ, որը հիմնված է ֆիզիկական ու հոգևոր առողջության, ճիշտ սնման, խելացի ֆիզիկական ծանրաբեռնվածությունների և վատ սովորություններից հրաժարման զուգակցման վրա:

**լար** – 1. проволока, металлическая проволока, 2. տես *քուղ* – 1. wire, 2. տես *քուղ*

**լարափակոց** – проволочное заграждение – wire entanglement

**լարինգոֆոն** – ларингофон – throat microphone

**լարվածություն** – 1. напряженность, 2. интенсивность, напряжение – 1. tension, 2. intensity

հարաբերություններում լարվածության պարպում – разрядка напряженности в отношениях – defuse

Մարդկանց՝ կազմակերպությունների՝ պետությունների (պետությունների դաշինքների) միջև ծագած հակասությունների սրության նվազում (նվազեցում),

հակամարտային իրավիճակի հարթում (հարթեցում):

մարտական լարվածություն – боевое напряжение – combat intensity

1. Մարտական գործողությունների ինտենսիվության աստիճանը, որը բնութագրվում է որոշակի ժամանակահատվածում կողմերի ակտիվությամբ, լուծվող խնդիրների թվով, օգտագործվող ուժերի ու միջոցների քանակով և կորուստների ծավալով: 2. Ավիացիայում. որոշակի ժամանակահատվածում (օր, գիշեր, շուրջօր ևն) մարտական խնդիրների կատարման նպատակով մեկ ինքնաթիռի (ուղղաթիռի՝ ստորաբաժանման՝ զորամասի ևն) համար սահմանված մարտական արտաթռիչքների թիվը:

**լեգալացում** – легализация, узаконение – legalization, authorization

1. Օրինականացում, օրինական ուժի տրում, անցում լեգալ վիճակի: 2. Միջազգային իրավունքում. օտար պետությունում տրված փաստաթղթի խկության և իրավաբանական ուժի հաստատում:

**լեգալություն** – легальность – legality  
Օրինականացվածություն, օրենքով թույլտվածություն:

**լեգենդ** – легенда – legend

լեգենդով լուսանկար – տես *լուսանկար՝ լուսանցագրով լուսանկար*

**լեգեոն** – легион – legion

**լեգեոնական** (*պտմ.*) – легионер (*ист.*) – legionary

«**Լեկլերկ**» – «Леклерк» – “Leclerc”  
1990-ական թթ. ֆրանսիական հիմնական մարտական տանկ:

**լեյտենանտ** – лейтенант – lieutenant  
Մեծ թվով պետությունների ՁՈՒ-ում կրտսեր սպաների զինվորական կոչում, համապատասխանում է դասակի հրամանատարի կոչմանը:

ավագ լեյտենանտ – старший лейтенант – senior lieutenant, first lieutenant (*US*), lieutenant (*Brit.*)

կրտսեր լեյտենանտ – младший лейтенант – second lieutenant, junior lieutenant

**լենդ-լիզ** – ленд-лиз – lend-lease

2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կողմից իր դաշնակիցներին պատերազմ վարելու համար անհրաժեշտ սպառագինության, զինամթերքի, փոխադրամիջոցների, արդյունաբերական սարքավորանքի, նավթամթերքի, հոււնքի, սննդամթերքի, տեղեկույթի և ծառայությունների տրամադրում փոխհատուցման կամ վարձակալության սկզբունքով:

**«Լենդրովեր»** – «Лендровер» – “Land-rovers”

Բրիտանական ամենագնաց ավտոմեքենա:

**«Լեոպարդ»** – «Леопард» – “Leopard”

Գերմանական հիմնական մարտական տանկ:

**լեռնաբերձություն** – высокогорье – high-land

Ծովի մակերևույթից 2500 մ-ից բարձր գտնվող տեղանք:

**լեռնակատար** – гребень горы – ridge

**լեռնանցք** – перевал, горный проход – pass

**լեփ** – տես *գառիվերակ*

**լիազորագիր** – доверенность – letter of authorization

**լիազորագերծում** – дезавуирование – disavowal

Հայտարարություն վստահված անձի գործողությունների հետ համաձայն չլինելու կամ նրան հետագայում իր անունից գործելու իրավունքից զրկելու կամ որևէ բանից իր հրաժարվելու մասին, ինչպես նաև հրաժարում նախկինում որևէ մեկի արած հայտարարություններից, դատողություններից ևն:

**լիազորություն** – полномочие – 1. authority, 2. commission, 3. power

1. Մեկին տրված որևէ կարգի իրավունք՝ ներկայացնելու մեկ ուրիշին կամ գործելու նրա անունից: 2. Գործողությունների՝ գործունեության իրավունք:

անմիջական վերահսկման լիազորությամբ օժտված – наделенный полномочием непосредственного контроля – direct liaison authorized

լիազորությունների աստիճանաբարձրացում – повышение полномочий – step-up  
Ընթացակարգ, որի շնորհիվ կառավարման ու վերահսկման լիազորությունները ամբողջ կազմակերպությունից փոխանցվում են նրա մի ստորաբաժանմանը՝ որևէ կառուցվածքային տարրի: Ռազմական ոլորտում ձեռնարկվում է առաջխաղացման ժամանակ, երբ հրամանատարության կամ շտաբի որևէ ստորաբաժանում արագ կերպով տեղափոխվում է նոր վայր և մինչև հիմնական մասի ժամանելը կատարում է նրա բոլոր պարտականությունները:

**լիազորությունների շրջան** – круг полномочий – terms of reference

լիազորությունների տրամադրում – предоставление полномочий, наделение полномочиями – authorization

լիազորությունների փոխանցում – делегирование полномочий – delegation of authority

Հրամանատարի կողմից իր լիազորությունները ենթակա հրամանատարին մասամբ հանձնելը:

ծերբակալելու լիազորություն – условия, в которых блюститель закона имеет право арестовать – powers of arrest

վերաբաշխման լիազորություն – полномочия по перераспределению – reallocation authority

ՆԱՏՕ-ում. հրամանատարի տված լիազորություններ՝ կատարելու վերաբաշխում:

**լիաներդաշնակեցում** – слаживание – interoperability

մարտական լիաներդաշնակեցում – боевое слаживание – 1. unit cohesion, 2. interoperability

Ստորաբաժանման (զորամասի, զորամիավորման) կազմում գինժառայողների ուսուցում (վարժեցում) մարտում գործառնության խնդիրների կատարման ժամանակ համաձայնեցված հա-

մատեղ գործողություններ կատարելու և խմբային զենք ու տեխնիկա օգտագործելու համար:

**լիայրում** – выгорание – burn-out

**լիզինգ** – финансовая аренда, лизинг – financial lease

**լիսեռ** – вал – shaft, barrel

**լիտեր** – литер – rail warrant

Շառայողին ձրի երկաթուղային տոմս տրամադրող փաստաթուղթ:

**լիրք** – насыпь – bank

**լիցք** – заряд – charge

ակտիվ լիցք – активный заряд – initial charge

արկակազմիչ լիցք – տես *միջուկ՝ հարվածային միջուկ*

արտանետիչ լիցք – 1. вышибной заряд, 2. заряд на выброс – 1. expelling charge, 2. cratering charge

1. Վառողային լիցք, որն ապահովում է լիցքերի կամ հրատեխնիկական տարրերի նետում որոշված բարձրության: 2. Պայթուցիկ լիցք, որը տեղադրվում է գետնի մեջ համապատասխան խորության վրա՝ պայթեցնելու և անցք բացելու համար:

երկարածիչ լիցք – удлиненный заряд – Bangalore torpedo

Երկայնական պայթեցնող լիցք՝ նախանշանակված ականադաշտերում ու մետաղալարե արգելափակոցներում անցողիներ բացելու համար:

էլեկտրական լիցք – электрический заряд – charge

լիցքի բոցավառման միջոց – средство воспламенения заряда, средство инициирования взрыва – primer

լիցքի հզորություն – мощность заряда – yield

կուտակային լիցք – кумулятивный заряд – hollow charge

հարուցիչ լիցք – инициирующий заряд, пороховой заряд – priming charge

մարտական լիցք – боеголовка, боезаряд – warhead

Հրթիռի, արկի, տորպեդի կամ այլ զինամթերքի մաս, որը նախանշանակված է խոցիչ ազդեցություն գործելու համար:

միջուկային լիցքի հզորություն – мощность ядерного заряда – nuclear yield

նվազեցված լիցք – уменьшенный заряд, пониженно-боевой заряд – reduced charge

Արկ, որի լիցքը սովորական արկերի համեմատությամբ նվազեցված է, ինչի հետևանքով նրա սկզբնական արագությունն ու հեռահարությունը ավելի փոքր են:

նվազ մարտական լիցք – տես *լիցք՝ նվազեցված լիցք*

պայթեցման երկարածիչ լիցք – տես *ական՝ ձողացից ական*

պայթեցման լիցքի խցիկ – камера для подрывного заряда – demolition chamber

Որևէ կառուցում՝ շենքի մեջ, պայթուցիկների տեղադրման տեղ:

պայթեցման լիցք կառուցի տարրերը կոտրելու համար – подрывной заряд для перебивания элементов конструкции – cutting charge

պայթեցմանը պատրաստ լիցք – заряд, готовый к взрыву – primed charge

վառողային լիցք – տես *լիցք՝ հարուցիչ լիցք*

ուղղորդված լիցք – направленный заряд – shaped charge

**լիցքաթափված** – разряженный – made safe

**լիցքակայան** – зарядная станция – charging point, filler point

«**Լիցքավորե՛լ**» – «Заряжай!» – “Load!”

**լիցքավորող** (*հրետ.*) – заряжающий (*арт.*) – loader

«**Լիցքավորումը դադարեցնե՛լ**» – «Прекратить заряжание!» – “Cease loading!”

**լծակ** – рычаг – leverage

**լծորդվածություն** (կապի միջոցների ևն) – сопряженность – interoperability

**լճացում** – застой, стагнация – stagnation

Տնտեսության վիճակ, որը բնութագրվում է արտադրության և առևտրի զարգացման երկարատև կանգառմամբ՝ ուղեկցված գործազուրկների թվի աճմամբ, աշխատավարձի և բնակչության կենսամակարդակի նվազմամբ:

**լյուիզիտ** – люизит – Lewisite

**լոզունգ** – տես *նշանաբան 2*

**լողակ** – плавник – fin

**լողունակություն** – տես *լողունություն*

**լողունություն** – плавучесть – buoyancy, floatation, floatability

Տեխնիկական միջոցի ունակությունը տեղափոխվելու ջրային միջավայրում՝ իր հիմնական հատկությունների պահպանմամբ:

**լոքսոդրոմ** – локсодромия – loxodrome

Գնդային կամ պտտման այլ մակերևույթին անցկացված գիծ, որը միջօրեականները հատում է միևնույն անկյան տակ:

**լրատվական** – տես *տեղեկատվական*

Լրատվությանը վերաբերող, լրատվությանն առնչվող:

**լրատվություն** – տես *տեղեկատվություն*

Հասարակության իրազեկման համար նախատեսված ընդհանուր նախանշանակման տեղեկույթ:

**լրիվ փուլաշրջան** – полный цикл, «конец к концу» – end-to-end

Մարտավարական պլանի սկզբից մինչև ավարտը, գործողության մեկնարկային կետից մինչև հրամանատարի կողմից նախատեսված գործողության ավարտը՝ ընդհուպ մինչև մարդկանց և նյութատեխնիկական պաշարների վերադարձ:

**լրվելը** – заедание – stoppage

**լռություն** – тишина, безмолвие – silence

**լսարան** – аудитория – 1. audience, 2. lecture hall

1. Դասախոսություններ կարդալու համար կահավորված դահլիճ: 2. Այդ

դասախոսությունները լսող մարդկանց խումբը: 3. Մարդկանց համախումբ, որի անդամներին է ուղղված նրանց բոլորի համար ընդհանուր զանգվածային հաղորդակցային միջոցը, ընդսմին նրանք միմյանց հետ փոխգործում են նվազագույն չափով կամ բացարձակապես չեն փոխգործում:

արտաքին լսարան – внешняя аудитория – external audience

Տվյալ պետության համար արտերկրի հասարակությունը:

թիրախային լսարան – տես *լսարան՝ նպատակային լսարան*

ներքին լսարան – внутренняя аудитория – internal audience

Պետության բնակչության (հասարակության) այն մասը, որը տվյալ խնդիրների լուծման համար պետք է ենթարկվի հատուկ տեղեկատվահոգեբանական ազդեցության:

նպատակային լսարան – целевая аудитория – target audience

Մարդկանց խումբ, որի վրա ազդեցություն գործելու համար է նախատեսված տվյալ հաղորդումը՝ քարոզչությունը՝ գովազդը ևն:

**լսելիություն** – слышимость – hearing

**լսողություն** – слух – hearing

**լսում** – слушание – listening

**լսումներ** – слушания – hearings

Խորհրդարանում արտաքին և ներքին քաղաքականության կարևոր հարցերի քննարկման կազմակերպական ձև, որի դեպքում ներգրավվում են պաշտոնատար անձինք, փորձագետներ և հասարակայնությունը:

**վլացում** – мытье, очистка – ablution

**լրաբեր** – вестник – messenger

**լրալիցքավորում** – дозаправка – refuel

լրալիցքավորման կետ – пункт дозаправки – refuelling point

լրալիցքավորման սարքավորանք – дозаправочное оборудование – refuelling equipment

լրալիցքավորում հրնթացս – дозаправка в пути – refueling on the move

լրալիցքավորում օդում – заправка самолета в воздухе – air refueling, air-to-air refueling

լրալիցքավորում նավահետքային եղանակով – дозаправка топливом кильватерным способом – astern refueling

Բաց ծովում վառելիքով լիցքավորման եղանակ, որի դեպքում լիցքավորվող նավերը տեղաբաշխվում են լիցքավորող նավի խելի հետևում:

օդային լրալիցքավորման ժամանակ կիրառվող սարք – устройство, используемое при дозаправке в воздухе – basket

օդանավի լրալիցքավորում – дозаправка самолета – aircraft replenishing

օդում ինքնաթիռի լրալիցքավորում վառելիքով – дозаправка самолета топливом в воздухе, дозаправка самолета топливом в полете – air-to-air refueling

Օդում մի ինքնաթիռի վառելիքային պաշարների լրացում այդ նպատակով հատուկ սարքավորված ծանր ինքնաթիռից:

օդում լրալիցքավորման համակարգ – система дозаправки в воздухе – in-flight refueling system

օդում լրալիցքավորման որոշված ժամանակ – контрольное время дозаправки в воздухе – air refueling control time

օդում լրալիցքավորման սկզբնակետ – начальная точка дозаправки в воздухе – air refueling initiation point

օդում լրալիցքավորման ստուգողական կետ – контрольная точка дозаправки в воздухе – air refueling control point

օդում լրալիցքավորման վերահսկիչ խումբ – контролирующая группа дозаправки в воздухе – air refueling control team

**լրալցում** – пополнение – replenishment

**լրակցել** – придать – attach

Մարտական խնդիրների կատարման ժամանակ համագործակցող զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների ուժեղացման նպատակով

դրանց հրամանատարների ենթակայության տակ դնել լրացուցիչ զորամասեր, ստորաբաժանումներ:

**լրակցում** – придание, передача во временное подчинение – attachment

Մարտական խնդրի, առաջադրանքի կատարման ժամանակ ստորաբաժանումների, զորամասերի ժամանակավոր ենթարկումը համագործակցող զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների հրամանատարներին՝ նրանց ենթակա կազմավորումներն ուժեղացնելու համար:

**լրահամալրում** – доукомплектование – regeneration

Ուժերի և ենթակառուցվածքի եղած կառույցների լիամասշտաբ կամ մասնակի շարքի մեջ պատեհաժամորեն մտցնելը, անձնակազմի թվաքանակի, սպառազինության, տեխնիկայի ու պաշարների վերականգնումը մինչև նախապես նշանակված մակարդակը:

**լրահետախուզում** – доразведка – final reconnaissance, supplementary reconnaissance

Ստեղծված իրադրության մասին առկա կարևոր, բայց հակասական տվյալների ստուգում, ինչպես նաև հակառակորդի դիրքերի, գործողությունների և մտադրությունների մասին լիարժեք և հավաստի տվյալների հայթայթում:

**լրացում** – восполнение, пополнение – replenishment

**լրացուցիչ** – дополнительный – supplementary

**լրաուժ** – подкрепление, силы усиления – reinforcing force

զորահավաքով գումարվող լրաուժ – мобилизуемые силы подкрепления – mobilizable reinforcing force

ՆԱՏՕ-ում ուժեղացման պլանավորման տերմին. ցանկացած ուժ, որն առայժմ չկա, սակայն ՆԱՏՕ-ի պատվերով կամ որևէ այլ եղանակով նախանշանակվում է զորահավաքից հետո ՆԱՏՕ-ի զորքերի ուժեղացման համար:



տարածաշրջանային լրաուժ – региональные силы подкрепления – regional reinforcing force

**լրաուժի պետություն** – государство подкрепления – reinforcing nation

Պետություն, որը ՆԱՏՕ-ին տրամադրում է լրաուժ:

**լրտես** – лазутчик – spy

Միջազգային իրավունքում անձ, որը, գործելով գաղտնի կերպով կամ շինծու պատրվակով, պատերազմող կողմերից մեկի գործողությունների շրջանում հավաքում կամ փորձում է հավաքել ռազմական բնույթի տեղեկություններ՝ հակառակ կողմին դրանք հաղորդելու նպատակով: Չունի ռազմագերու կարգավիճակ ստանալու իրավունք:

**լրտեսել** – шпионить – spy

**լրտեսություն** – шпионаж – espionage

Պետության պետական կամ ռազմական գաղտնիք հանդիսացող, ինչպես նաև այլ տեղեկությունների փոխանցումը (հաղորդումը) օտար պետությանը կամ որևէ կազմակերպության (գործակալական ցանցի)՝ այդ պետության անվտանգությանն ի վնաս օգտագործելու նպատակով:

**լրամաս** – казенная часть, казна – breach  
Հրազենի փողի հետին մասը, որտեղից նետվող տարրը (փամփուշտ, արկ) մտնում է փողի մեջ:

**լրանավ** – տես *տանկեր*

**լրանք** – заправка – refill

Վառելիքի պահանջմունքի և դրանով ապահովվածության հաշվարկման մատակարարական միավոր:

**լրավորում** – заправка – refueling

Տեխնիկայի բաքերի մեջ վառելիք լցնելու գործընթաց:

լրավորման խողովակապատուկ – зарядочный штуцер – charging point, filler point

Թռիչքի մեջ գտնվող ինքնաթիռը որևէ անհրաժեշտ պաշարով (թթվածին, օդ, հիդրավլիկ հեղուկ ևն) լրավորելու հարմարանք:

**լցովի հեղուկ նավթամթերք** – наливной нефтепродукт – bulk petroleum product

**լցում** – заполнение – infill

**լուծարում** – տես *կազմալուծում*

լուծարման ծախսեր – затраты по выбытию – cost of disposal

**լուծողունակություն** – разрешающая способность – resolution

Երկու իրար մոտ սպեկտրային գծերը տարբերելու օպտիկական սարքի կարողությունը:

**լուծում** – 1. решение, 2. разрешение – 1. solution, 2. resolution

միջազգային վեճերի խաղաղ լուծում – мирное разрешение международных споров – peaceful settlement of international disputes

**լուծույթ** – раствор – solution

«**Լույսերը հանգցնե՛լ**» – «Гасить свет!» – “Lights out!”

Հրաման, որով պետք է լույսերը հանգցվեն և ամեն շարժում դադարեցվի:

**լուսաբանում զանգվածային լրատվության միջոցներում** – освещение в средствах массовой информации – media coverage

**լուսածորում** – флуоресценция – fluorescence

**լուսածրիչ** – трассер – tracer

Հրետանային արկերում (զնդակներում, հակատանկային կառավարվող հրթիռներում) կիրառվող հատուկ սարք, որը դրանց հետագիծը դարձնում է տեսանելի:

**լուսակայում** – экспозиция – exposure

**լուսանկար** – фотоснимок – photograph

արբանյակային լուսանկար – спутниковая фотография, космический снимок – satellite photograph

լուսանցագրով լուսանկար – фотоснимок с легендой – annotated print

Լուսանկար, որի վրա բացատրական մանրամասները նշված են բառերով կամ խորհրդանշաններով:

տեղագրորեն կապակցված համահավաք լուսանկար – топографически привязанный сводный фотоснимок – controlled mosaic

Լուսանկարներից կազմված տեղագրական լուսանկարչական պլան, օդալուսասարվածք:

տիեզերական լուսանկար – տես *լուսանկար` արբանյակային լուսանկար*

**լուսանկարաչափություն** – фотограмметрия – photogrammetry

Գիտատեխնիկական գիտաճյուղ, որն զբաղվում է օբյեկտների լուսանկարներով դրանց ձևի, չափերի, դիրքի և այլ պարամետրների որոշմամբ:

**լուսանկարի ընթերցում** – чтение фотографии – photographic reading

Լուսանկարներում բնական կամ մարդածին երևույթների նշագրում՝ առանց լուսանկարչական ներկայացման կիրառման:

**լուսանկարչություն** – фотографирование – photography

ապաքողարկիչ լուսանկարչություն – фотографирование для выявления замаскированных объектов – camouflage detection photography

Լուսանկարչություն, որի միջոցով բացահայտվում է թողարկումը:

ավիացիոն քարտեզագրական լուսանկարչություն – авиакартографическое фотографирование – air cartographic photography

**լուսավորություն** – освещение – illumination

անդրադարձված լուսավորություն – отраженное освещение – illumination by reflection

անմիջական լուսավորություն – прямое освещение – direct illumination

Անմիջականորեն լույսի աղբյուրից (լուսարձակից կամ հրատեխնիկական միջոցից) արձակված ճառագայթների ուղղում օբյեկտի վրա:

արհեստական լուսավորություն – искусственное освещение – illumination

լուսավորություն միջակա գոտում – освещение в промежуточной полосе – intermediate area illumination

լուսավորություն ցրված լույսով – освещение рассеянным светом – illumination by diffusion

ցրված լուսավորություն – диффузное освещение – diffusion illumination, diffused lighting

**լուսավորում** – освещение – lighting, illumination

ընդմիջարկումներով լուսավորում – освещение с интервалами – intermittent illumination

Լուսավորման արկերով ընդհատուն լուսավորում՝ կանոնավոր ժամանակամիջոցներում:

թույլ լուսավորում – слабое освещение – reduced lighting

կանոնակարգված լուսավորում – регламентированное освещение – normal lighting

Մեքենաների այնպիսի լուսավորում, որը համապատասխանում է կանոնակարգված պահանջներին:

**լուսարձակ** – прожектор – searchlight

**լուր** – 1. весть, 2. слух – 1. news, 2. rumor  
1. Տեղեկություն, հաղորդում որևէ մեկի կամ որևէ մի բանի մասին: 2. Խոսակցություն՝ չստուգված տեղեկություն:

կեղծ լուրեր – ложные слухи – deception story

**լուցկի** – 1. спичка, 2. спички – match

**լքած** (պահակակետը, ընտանիքը ևն) – покинувший (пост, семью и т. д.) – deserter

**լքել** – оставить, покинуть – abandon

**լքված** – покинутый, брошенный – deserted, abandoned

## Խ (խԵԵ)

**խաբեություն** – 1. обман, 2. տես *փչոց* – 1. cheaf, 2. տես *փչոց*

խաբեության միջոցներ – средства обмана – deception means

Լինում են երեք տեսակի՝ ֆիզիկական, տեխնիկական և վարչական:

խաբեության նպատակ – цель обмана – deception objective

**խաբկանք** – տես *խաբում*

**խաբում** – обман – deception

**խազմարար** – бунтовщик, участник беспорядков – rioter

**խաթարում** – нарушение – breach

տեղեկության բլոկի հաղորդման խաթարում – нарушение передачи блока информации – intermission of the information transmission

**խախտում** – нарушение – 1. violation, break, 2. disruption, 3. breakdown

1. Համակարգի (կառույցի) կամ նրա որևէ մասի թուլացում: 2. Դրժում: 3. Սահմանված կարգի, ընթացակարգի, պայմանների խանգարում, խաթարում:

ենթակարգության խախտում – нарушение субординации – insubordination

երկրի օդային տարածության խախտում – нарушение воздушного пространства страны – violation of a country's airspace

Չթույլատրված ներխուժում որևէ պետության օդային տարածք:

կարգապահական խախտում – дисциплинарное нарушение – disciplinary offense

հոգեկան հավասարակշռության խախտում – нарушение психического равновесия – mental imbalance

**խակի** – хаки – khaki

**խաղ** – игра – game

ռազմական խաղ – военная игра – wargame

Ջորջի, հրամանատարության և շտաբների համար կազմակերպվող ուսումնավարական միջոցառում, որն իրագործվում է ըստ նախապես մշակված սցենարի, պատերազմը՝ ռազմական օպերացիան՝ ռազմարշավը մոդելավորող խաղ՝ ռազմավարությունն ուսումնասիրելու և ստուգելու համար:

ռազմավարական խաղ – стратегическая игра – strategic game, wargame

Տարբեր մակարդակների ղեկավար կազմերի համար մասնագետների կողմից որոշակի քաղաքական, տնտեսական և մասշտաբային հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու համար և համապատասխան սցենարով կազմված մոդելավորումային խաղ՝ հմտությունների զարգացման կամ պրոբլեմային հարցի օպտիմալ լուծումը գտնելու նպատակով՝ հետագա փորձագիտական գնահատումներով:

**խաղաղաշինություն** – миростроительство – peace building

Խաղաղ վիճակի կերտում, հաշտության հաստատում. գործունեություն, որն իրականացվում է հակամարտության ավարտից հետո՝ խաղաղության համար ամուր հիմքերի ստեղծման նպատակով և կատարվում է գլխավորապես հաստատութենական ոլորտում:

հետհակամարտային խաղաղաշինություն – постконфликтное миростроительство – post-conflict peacebuilding

Գործողություններ, որոնք նպատակաուղղված են այն կառույցների հայտնաբերմանն ու դրանց աջակցմանը, որոնք միտված են հակամարտության կրկնությունից խուսափելու նպատակով խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը:

**խաղաղապահ** – миротворец, поддерживающий мир – peacekeeper

խաղաղապահ թվակազմ – миротворческий контингент – peacekeeping contingent

**խաղաղապահական** – по поддержанию мира – peacekeeping

խաղաղապահական գործունեություն – деятельность по поддержанию мира – peacekeeping activities

խաղաղապահական օպերացիա – операция по поддержанию мира – peacekeeping operation, peace support operation  
Միջազգային կազմակերպության (սովորաբար՝ ՄԱԿ-ի) կողմից չեզոք ռազմական ուժի ծավալում զինված հակամարտության մեջ ներգրավված կողմերի ընդհարման գոտում՝ նրանց միջև հետագա ընդհարումները կանխելու կամ որևէ մեկի ագրեսիվ նկրտումները սաստելու նպատակով:

**խաղաղապահություն** – поддержание мира – peacekeeping  
Գլխավորապես ՄԱԿ-ի կողմից չեզոք զինված ուժի ծավալում այն տարածքում, որտեղ առկա է կամ հավանական է երկու կողմերի զինված բախումը՝ յուրաքանչյուր կողմի ռազմական գործողությունները կանխելու կամ հետագայում թույլ չտալու համար:

խաղաղապահության հոգեբանական միջոցառումներ – психологические мероприятия по поддержанию мира – peace support psychological activities

**խաղաղապաշտ** – пацифист – pacifist  
Պացիֆիզմի կողմնակից:

**խաղաղապաշտություն** – пацифизм – pacifism  
Հակապատերազմական շարժման ուղղություններից մեկը, գաղափարախոսություն, քաղաքականություն և հասարակական շարժում, որոնք սկզբունքորեն դեմ են պատերազմներին՝ որպես բացարձակ չարիքի:

**խաղաղարար** – 1. миротворец, 2. миротворческий – 1. peacemaker, 2. peacemaking  
1. Խաղաղարարությանը վերաբերող, առնչվող: 2. Խաղաղարարությամբ զբաղվող:

խաղաղարար բրիգադ – миротворческая бригада – peacemaking brigade

խաղաղարար թվակազմ – миротворческий контингент – peacemaking contingent

**խաղաղարարական** – տես *խաղաղարար 2*

խաղաղարարական առաքելություն – миротворческая миссия – peacemaking mission

Խաղաղարարական գործունեություն վարելու պարտավորություն, մտադրություն:

խաղաղարարական օպերացիա – миротворческая операция – peacemaking operation, peace operation

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կամ ՄԱԿ-ի հովանու ներքո գործող անվտանգային տարածաշրջանային կազմակերպությունների որոշմամբ ու ղեկավարությամբ իրականացվող գործողություններ, որոնք ձեռնարկում են հատուկ ստեղծվող խաղաղարար ուժերը ռազմական հակամարտության գոտում զինված պայքարի կանխման, տեղափակման կամ դադարեցման նպատակով:

**խաղաղարարություն** – миротворчество – peacemaking

ՄԱԿ-ի, տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև առանձին պետությունների արտաքին քաղաքական նախաձեռնությունները՝ նպատակաուղղված միջազգային խաղաղության ամրապնդմանը կամ վերականգնմանը, ինչպես նաև երկրի ներսում պատերազմող կողմերին հաշտության մղելու նրանց ջանքերը:

կոշտ խաղաղարարություն – жесткое миротворчество – robust peacekeeping

ՄԱԿ-ի խաղաղարարական օպերացիաներում. Ախ-ի թույլտվությամբ մարտավարական մակարդակում ուժի կիրառում՝ քաղաքացիների կյանքը վտանգող կամ խաղաղության հաստատմանը խոչընդոտող տարրերին ճնշելու նպատակով:

**խաղաղություն** – мир – peace

1. Ժողովուրդների, պետությունների, վերջիններիս մեջ էթնիկական կամ սոցիալական խմբերի միջև այնպիսի հարաբերություններ, որոնք բնորոշվում են պատերազմ, զինված պայքար չլինելով և խարսխվում են անմիջական

զինված բռնության չդիմելու քաղաքական ուղեգծի վրա: 2. Մարտնչող կողմերի միջև պատերազմի դադարեցման և հաշտ հարաբերությունների հաստատման մասին համաձայնագիր, հաշտության պայմանագիր:

անջատ խաղաղություն – сепаратный мир – separate peace

խաղաղության խորհրդաժողով – мирная конференция – peace conference

խաղաղության պայմանագիր – տես *պայմանագիր` հաշտության պայմանագիր*

խաղաղության պարտադրման օպերացիա – операция по принуждению к миру – peace enforcement operation

Դիվանագիտական կամ ռազմական գործողություններ, որոնք նպատակն է զինված հակամարտության կողմերին հարկադրաբար մղել ուժի կիրառումից հրաժարման:

խաղաղության պարտադրում – принуждение к миру – enforcement, peace enforcement

Գործողություններ, որոնք միջպետական կամ ներպետական զինված հակամարտությունը դադարեցնելու նպատակով իրականացնում է (են) առանձին պետություն (մի խումբ պետություններ):

հաստատուն խաղաղություն – прочный мир – lasting peace

**խաղաղ գոյակցություն** – мирное сосуществование – peaceful coexistence

Միջազգային հանրության պետությունների ու ժողովուրդների միջև հարաբերությունների ձևավորման սկզբունք, որով բացառվում է ռազմական բռնության կիրառումը:

**խաղաղ լողանցում** – мирный проход – innocent passage

**խայծ** – приманка – come-on

**խայծահավ** – подсадная утка – decoy (*փխբ.*) Ասդրիչ, որին հանձնարարվում է վստահություն ձեռք բերել և այդպիսով կարևոր տեղեկությո կորզել:

**խանգարում** – 1. помеха, 2. нарушение, расстройство – 1. hindrance, obstacle, 2. breakdown

1. Համակարգի (սարքի, ապարատի, տեխնիկական միջոցի) բնականոն գործունեության խաթարում: 2. Նման խաթարման բնական կամ արհեստական պատճառը, խաթարիչ:

աղմկային խանգարում – шумовая помеха – noise hindrance

արգելապատնեշային խանգարում – заградительная помеха, широкополосная помеха – barrage jamming

երկու զգայարարների միջև խանգարումների առաջացման կանխում – предотвращение помех между двумя сенсорами – prevention of mutual interference

էլեկտրամագնիսական խանգարումներ – электромагнитные помехи – electromagnetic interference

էլեկտրամագնիսական միջամտություն, որը ձեռնարկվում է էլեկտրոնային սարքավորանքի վրա ներգործելու համար:

լայնատիրույթ խանգարում – տես *խանգարում` արգելապատնեշային խանգարում*

խանգարումների վերահաղորդիչ – ре-транслятор помех – repeater-jammer

ծածկապատնեշային խանգարում – заградительная помеха – barrier hindrance

կազմակերպված խանգարում – организованная помеха – organized hindrance

հոգեկան գործառույթների խանգարում – нарушение психических функций – impairment of mental functions

հոգեկան խանգարում – психическое расстройство – mental impairment

մթնոլորտային խանգարումներ – атмосферные помехи – static

նշանառվական խանգարում – прицельная помеха – sighting hindrance

ռադիոէլեկտրոնային խանգարում – радиоэлектронная помеха – radiointerference

ռադիոուղեվարական կայանների խանգարումներ – помехи радионавигационных станций – meaconing

Ռադիոուղեվարական միջոցների ռադիոէլեկտրոնային ճնշում՝ հակառակորդի ռադիոփարոսի ազդանշանների ընդունման և վերաճառագայթման միջոցով:

սահուն խանգարում – скользкая помеха – sliding hindrance

տեղումներում կատարվող ստատիկ պարպումներով պայմանավորված խանգարում – помеха из-за статических разрядов в осадках – precipitation static

փոխադարձ խանգարումների կանխում – предотвращение взаимных помех – prevention of mutual interference

**խանգարումադրիչ** – постановщик помех – noise jammer

Տեխնիկական սարք (միջոց), որը խանգարումներ է առաջ բերում հակառակորդի էլեկտրոնային միջոցների համար (ռադիոտեղորոշումային կայանքներ, հրամանատվական համակարգեր, որոշիչ-ուղղորդիչ ապարատուրա ևն):

**խանգարումակայունություն** – помехоустойчивость – noise immunity, electromagnetic vulnerability

էլեկտրոնային համակարգի կարողությունը՝ արտաքին խանգարումների առկայությանը պահպանելու իր գործառության որակը, երբ չկան այդ համակարգի գործողության կամ կառուցվածքի սկզբունքներին չվերաբերող լրացուցիչ պաշտպանական միջոցներ:

**խանգարումապաշտպանվածություն** – помехозащищенность – interference protection, interference immunity

էլեկտրոնային համակարգի կարողությունը՝ արտաքին խանգարումների առկայությանը պահպանելու իր գործառության որակը, երբ կան համակարգի գործողության կամ կառուցվածքի սկզբունքներին չվերաբերող լրացուցիչ պաշտպանական միջոցներ:

**խանգարումաստեղծում** – создание помех – jamming

**խանդակ** – овраг, балка – ravine

**խանութ** – магазин – store

զինառի խանութ – տես *զինվորական՝ զինվորական խանութ*

զինառի կայազորային խանութ – гарнизонный военторговый магазин – post exchange

**խաչմերուկ** – 1. տես *կետ՝ հատման կետ*, 2. скрепление дорог, перекресток – 1. տես *կետ՝ հատման կետ*, 2. crossroads

**խառնաշփոթություն** – 1. տես *անկարգություն*, 2. сумбур, беспорядочность – 1. տես *անկարգություն*, 2. randomness

**խառնարան** – кратер – crater

**խարամթերում** – фуражировка – forage

**«խարանված երկիր»** – «выжженная земля» – scorched earth

Յուրային ենթակառուցվածքների, ռետուրների ևն ոչնչացում այն նպատակով, որ հակառակորդը դրանց չտիրանա:

**խարիսխ** – якорь – anchor

Հարմարանք լողացող առարկաները (նավ, նավակ, լաստ, ական) տեղում պահելու համար:

**խարսխական** – якорная мина – moored mine

Լողունակ ական, որը ջրի տակ է մնում շնորհիվ ամրացված խարսխի:

**խարսխակայան** – якорная стоянка, рейд – anchorage, roadstead

նավահավաքման համար խարսխակայան – якорная стоянка для сбора судов – assembly anchorage

**խարսխավոր լողան** – бакен – beacon

**խարսխել** – заякорить, бросить якорь – anchor

**խափանում** – 1. поломка, неисправность, 2. отказ в работе, 3. пресечение – 1. breakdown, breakage, 2. failure, 3. suppression

մինչև խափանում միջին աշխատատևություն – среднее время наработки на отказ – mean time between failure

Աշխատանքի ընթացքում ինքնաբերական խափանումների միջև եղած կանխատեսական միջին ժամանակը:

**խել** – корма, хвостовая часть – stern

«խելացի» ռումբ – «умная» бомба, управляемая бомба – smart bomb

«խելացի պաշտպանություն» – «умная оборона» – smart defense

**խեղաթյուրում** – տես *աղավաղում*

**խեղում** – калечение, увечье – mutilation

**խեցի** – раковина – shell

**խզակոթ** – приклад (оружия) – butt, butt-stock

Հրածգային զենքի հարմարանք՝ կրակոցի ժամանակ այն ուսին սեղմելու և զենքի հնարավորինս հասանելի անշարժությունն ապահովելու համար:

**խզվածք** – разрыв – 1. gap, 2. breach

Կտրվածություն, ձեղքվածություն, ընդհատություն:

**խզում** – разрыв, прерывание – breaking off

ձեղքում, ընդհատում:

**խթան** – стимул – incentive

**խթանել** – տես *դրդել*

**խթանիչ** – стимулятор – stimulants

**խթանում** – стимулирование – stimulation, provision of incentive

բարոյական խթանում – моральное стимулирование – moral incentives

խթանման մեխանիզմ – механизм стимулирования – incentive mechanism

նյութական խթանում – материальное стимулирование – material incentives

ֆինանսական խթանում – финансовое стимулирование – financial incentives

**խիզախ** – отважный – valourous

**խիզախություն** – отвага – valor

Ջինվորի բարոյահոգեբանական և մարտական հատկանիշ, որը դրսևորվում է համարձակ, վճռական խոյանքի, մարտում կամ այլ բարդ իրավիճակում անհողողող տոկունության, դժվարությունների խելամիտ, ճարպիկ ու կշռադատված հաղթահարման, հակառակորդին իր կամքի հանդուգն պարտադրման ձևով:

**խլաթում** – осечка – misfire

Երևույթ, երբ կրակելու համար բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո կրակոց տեղի չի ունենում:

**խլարար** – глушитель, звукоглушитель – silencer, muffler

Հարմարանք, որը նվազեցնում է կրակոցի, շարժիչի աշխատանքի ձայնը:

**խլում** – выхватывание – snatch

**խճանկար** – мозаика – mosaic

լուսագծապատկերների խճանկար – мозаичная фотосхема – mosaic

**խճողում** – տես *խցանում*

**խմբակցություն** – 1. фракция, 2. տես *թայֆա* – 1. group (parliamentarian), 2. clan

**խմբավորված** – сгруппированный – combined

**խմբավորում** – группировка – grouping, group

Գալիք գործողությունների մտահղացմանը համապատասխան՝ ՌԳԹ-ում (ռազմավարական, օպերացիոն ուղղություններում կամ որևէ շրջանում) ՋՌԻ-ի տարբեր տեսակների, տարբեր զորատեսակների, հատուկ զորքերի, ինչպես նաև թիկունքի ծավալված այն միավորումները, զորամիավորումները, զորամասերը, որոնք նախանշանակված են օպերացիայում (մարտական գործողություններում) կատարելու մարտական խնդիրներ:

ավիացիոն խմբավորում – авиационная группировка – air grouping

բախարգելիչ գոտում գտնվող խմբավորում – группировка в буферной зоне – interposition force



հարվածային խմբավորում – ударная группировка – attack force

օդացամաքային շարժունակ խմբավորում – наземно-воздушный эшелон – air-land task force

օպերատիվ-մարտավարական խմբավորում – оперативно-тактическая группировка, тактическая группа – task force

**խմբիշխանություն** – олигархия – oligarchy

1. Քաղաքական վարչակարգ, որի ժամանակ իշխանությունը կենտրոնացած է քաղաքացիների համեմատաբար փոքրաթիվ խմբի ձեռքում, ընդամին այդ խմբի անդամներն իրենց անձնական շահերը դնում են հասարակական շահերից վեր: 2. Այդպիսի խումբը կարող է լինել նաև ֆինանսատնտեսական:

մրցակցային խմբիշխանություն – конкурентная олигархия – competitive oligarchy  
խմբիշխանության համակարգ, որի դեպքում իշխանության է գալիս որոշակի խումբ, որը հաղթում է օրինական մրցակցային պայքարում (ընտրություններ են):

**խմելու** – питьевой – potable

խմելու ջուր – питьевая вода – drinking water, potable water

**խնամակալություն** – опека – custody

**խնամարկյալ** – подопечный, иждивенец – dependent, immediate family

Այլ անձից (ֆիզիկական կամ իրավաբանական, ներառյալ՝ պետությունը) երկարատև կամ մշտական նյութական կամ դրամական օժանդակություն ըստացող մարդ, որի եկամուտի հիմնական մասը այդ օգնությունն է: Տարբեր երկրներում ըստ ազգային օրենսդրության այդ թվակազմին են դասվում տարբեր պայմանների բավարարող անձինք:

**խնայողական արագություն** – экономичная скорость – endurance speed

Հաստատուն արագություն, որի դեպքում ապահովվում է տարածության յուրաքանչյուր միավորն անցնելու համար վառելիքի նվազագույն ծախսը, կամ որի դեպքում տրված քանակությամբ

յամբ վառելիքի օգտագործման դեպքում ապահովվում է անցած առավելագույն տարածությունը:

**խնայողություն** – տես *խնայում*

**խնայում** – экономия, сбережение – conservation

կյանքի խնայում՝ անձնատրության դեպքում – տես *ողորմածություն*

**խնդիր** – задача – task

բարդ խնդիր – сложная задача, трудное задание – challenge

խնդիրներ առաջադրելու լիազորություն – полномочие ставить задачи – tasking authority

ՆԱՏՕ-ի օպերացիաներում. կառույցի կամ անհատի իրավունք՝ տալու առաջադրանքներ միջոցների, ռեսուրսների և անձնակազմի վերաբերյալ:

խնդիրների առաջադրման մարմին (ՆԱՏՕ) – орган постановки задач (НАТО) – tasking authority (NATO)

խնդիրների կատարման հիմնական մեթոդներ – основные методы выполнения задач – operational procedures

խնդրի կատարման արդյունքների քննարկում – разбор результатов выполнения задачи – after-action review, exercise review

խնդրի կատարման վերաբերյալ հարցում – запрос на выполнение задачи – tasking request

խնդրի հիմնավորում – обоснование задачи – mission statement

խնդրի ձևարկում – формализация задачи – formalization of the task

խնդրի պարզորոշում – уяснение задачи – mission analysis

Օպերացիայի (մարտի) որոշում կայացնելիս հրամանատարի աշխատանքի սկզբնական փուլը:

հետախուզության մարտական խնդիրներ – боевые задачи разведки – reconnaissance and surveillance missions

հիմնական խնդիր – основная задача – primary objective

մարտական խնդիր – боевая задача – combat mission, battle task

խնդիր, որը տրվում է զորքերին (ստորաբաժանմանը, զորամասին, զորամիավորմանը, երբեմն՝ խմբին կամ առանձին զինծառայողի) մարտում (օպերացիայում) մինչև սահմանված ժամկետը որոշակի նպատակի հասնելու համար:

մարտական խնդրի խորություն – глубина боевой задачи – depth of (combat) mission

Այն հեռավորությունը, որի վրա հակառակորդի պաշտպանության առջևի եզրից գտնվում է այն բնագիծը, որի գրավմամբ պետք է ավարտվի առաջադրված մարտական խնդրի կատարումը:

մարտավարական խնդիր – тактическая задача – tactical task

Մարտում ստորաբաժանման, զորամասի, զորամիավորման առջև դրվող խնդիրը:

միջանկյալ խնդիր – промежуточная задача – implied task

մոտակա խնդիր – ближайшая задача – initial objective

վարչական խնդիր – административная задача – administrative task

տիպային մարտական խնդիրների առաջադրում – постановка типовых боевых задач – notional tasking

փոխզործելիության ռազմական խնդիր – военная задача по интероперабельности, военная задача по оперативной совместимости – military task for interoperability

օպերատիվ համատեղելիության ռազմական խնդիր – տես *խնդիր՝ փոխզործելիության ռազմական խնդիր*

**խնդրագիր** – տես *դիմում*

**խնդրադրում** – постановка задачи – tasking

խնդրի պայմանների ճշգրիտ ձևակերպում՝ մուտքային և ելքային տեղեկույթի նկարագրությամբ հանդերձ:

խնդրադրման կարգ – порядок постановки задач – tasking order

**խնդրահարույց հարց** – տես *հարց՝ վիճելի հարց*

**խնդրանք** – просьба – request

օգնության խնդրանք – просьба о помощи – request for assistance

**խոլերա** – холера – cholera

**խոհանոց** – кухня – kitchen

դաշտային խոհանոց – полевая кухня, походная кухня – field kitchen, canteen, mobile kitchen

Շարժական հարմարանք՝ դաշտային պայմաններում ճաշ պատրաստելու համար:

երթային խոհանոց – տես *խոհանոց՝ դաշտային խոհանոց*

շարժական խոհանոց – տես *խոհանոց՝ դաշտային խոհանոց*

**խողովակ** – труба – pipe, tube

արտանետիչ խողովակ – выхлопная труба – exhaust pipe

ջրահեռացման խողովակ – дренажная труба – culvert

**խողովակաշար** – трубопровод – pipeline

գլխավոր խողովակաշար – магистральный трубопровод – main

խողովակաշարի անցում – переход трубопровода – crossing point

**խոյաթոնիչ** – пикирование – diving

Թռիչք, որի ժամանակ ինքնաթիռը շարժվում է վայրընթաց՝ թեքության միևնույն անկյունով. եթե այն 45<sup>0</sup>-ից փոքր է, ապա խոյաթարումը կոչվում է սակավաթեք, եթե 45<sup>0</sup>-ից մեծ է՝ կտրուկ:

**խոնջություն** – утомление – fatigue

Հոգնություն, ուժերի սպառման զգացում:

**խոչոր** – крупный, массивный – 1. large, 2. heavy, massive

**խոչորահատիկ վառող** – крупнозернистый порох – large-grain powder

**խոչորացում** – 1. укрупнение, 2. увеличение – 1. consolidation, 2. merging, blow up

**խոչտանգում** – пытка – torture

**խոչընդոտ** – տես *արգելք 1*

խոչընդոտների թռիչքանցման համակարգ – система облета препятствий, система предотвращения столкновения с наземными препятствиями – terrain avoidance system

խոչընդոտների հետախուզում – разведка препятствий – obstacle intelligence

խոչընդոտների վերացում – տես *ապապատնեշում*

ճանապարհային խոչընդոտ – дорожное заграждение – road block

մարտավարական խոչընդոտներ – тактические препятствия – tactical obstacles

խոչընդոտներ, որոնց ստեղծման նրպատակն է խաթարել հակառակորդի մարտակարգը, նրան ուղղել դեպի ցանկալի շրջան, գամել կրակակոծվող դիրքերում, կասեցնել նրա ճեղքումը ևն:

**խոչընդոտել** – препятствовать – bar

**խոչընդոտում թմրանյութերի ներկրմանը** – препятствование ввозу наркотиков – drug interdiction

**խոռոչ** – полость, впадина – hole, breach, rupture

բարձրության խոռոչ – высотная мертвая зона – altitude hole

Ռադիոբարձրաչափի էկրանին առաջացած մեռյալ գոտի:

**խոսասարք** – переговорное устройство – intercommunication device, talkback

**խոտ** – фураж – forage

**խոտորում** – 1. տես *շեղում 1*, 2. аберрация, 3. деривация – 1. տես *շեղում 1*, 2. aberration, 3. drift

1. Շեղում նորմից, խախտում՝ սխալ՝ սխալանք: 2. Ձգաբանությունում. բալիստիկական հետազոտվ շարժման ժամանակ նետման հարթությունից պրտովող արկի (գնդակի) պարբերական կողմնային շեղումը հոլովակային ազդեցության հետևանքով:

**խորագնում** – зондирование – probe

էլեկտրոնային գլխիկով խորագնում – зондирование электронной головкой – electronic probing

**խորամանկություն** – хитрость, уловка – ruse, stealth

խորամանկությամբ գերազանցել – տես *տարաշարժ՝ գերազանցել տարաշարժում*

**խորաչափ** – лот – lot

Նավից օվկիանոսի, ծովի, գետի խորությունը չափելու ուղեվարական սարք:

**խորաչափել** – измерять глубину лотом – lead

**խորացված երկխոսություն** – углубленный диалог – enhanced dialogue

**խորհրդաժողով** – конференция – conference

խորհրդաժողովների կազմակերպման ծառայություն – служба организации конференций – Conference Services

խորհրդաժողովների սպասարկման բաժին – отдел обслуживания конференций – Conference Support Section

սպառազինությունների գծով ազգային գերատեսչությունների ղեկավարների խորհրդաժողով – конференция руководителей национальных ведомств по вооружениям – Conference of National Armament Directors, CNAD

**խորհրդական** – советник – advisor, counselor

միացյալ զորախմբի հրամանատարի՝ ռազմահինժեներական հարցերով զխավոր խորհրդական – главный советник командующего объединенной группой войск по военно-инженерным вопросам – joint force engineer

**խորհրդական դեսպանորդ** – советник-посланник – counsellor-minister

Դիվանագիտական պաշտոն, դեսպանության երկրորդ դեմքը: Փոքրաթիվ դեսպանություններում մնան պաշտոն կարող է չլինել:

**խորհրդակցություն** – совещание – consultation

նախնական խորհրդակցություն – предварительное совещание – pre-initial planning conference

խորհրդակցություն վարժանքներն սկսելուց առաջ:

պլանավորողների գլխավոր խորհրդակցություն – главное совещание планировщиков – main planning conference

Զորավարժությունը պլանավորող խմբի գլխավոր հավաքը՝ զորավարժության ծրագիրը վերջնամշակելու համար:

**խորհրդակցում** – տես *խորհրդակցություն*

**խորհրդային** – советский – Soviet

խորհրդային զորքերի դուրսբերում Աֆղանստանից – вывод советских войск из Афганистана – withdrawal of the Soviet troops from Afghanistan

**խորհրդային Միության մարշալ** – Маршал Советского Союза – Marshal of the Soviet Union

**խորհրդային Միություն** – տես *խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն*

**խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն** – Союз Советских Социалистических Республик, Советский Союз – Union of Soviet Socialist Republics, the USSR

Պետություն, որը գոյություն է ունեցել 1922 – 1991 թթ., և որի կազմում է եղել Հայաստանը՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

**խորհրդանիշ** – эмблема, символ – emblem, insignia, symbol

Առարկա կամ գործողություն, որը ծառայում է որևէ հասկացության՝ վերացական երևույթի համար իբրև պայմանական նշան:

**խորհրդատվություն** – տես *խորհրդարկում*

**խորհրդատու** – տես *խորհրդական*

խորհրդատու իրավաբան – юридический советник – legal adviser

**խորհրդարան** – парламент – parliament

Իշխանությունների տարանջատմամբ պետություններում բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմինը: Կարող է լինել մեկ կամ երկու պալատանի:

խորհրդարանի անդամ – член парламента – member of Parliament, MP

**խորհրդարանականություն** – парламентаризм – parliamentarism

Հասարակության պետական կառավարման համակարգ, որի ժամանակ հստակ կերպով տարանջատված են իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի գործառույթները՝ խորհրդարանի գերակա դիրքով, քանի որ նա է նշանակում կառավարությունը խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցության անդամներից, և այդ կառավարությունը հաշվետու է խորհրդարանին:

**խորհրդարկու** – консультант – consultant

**խորհրդարկություն** – տես *խորհրդարկում*

**խորհրդարկում** – консультация – consulting, consultation

**խորհրդարկում, հրամանատարություն և կառավարում** – консультация, командование и управление – consultation, command and control, C3

**խորհուրդ** – совет – advice

Եվրաստանյան գործընկերության խորհուրդ – Совет Евроатлантического партнерства, СЕАП – Euro-Atlantic Partnership Council, EAPC

ՆԱՏՕ-ի մարմին, բազմակողմանի համաժողով, որն ստեղծվել է ՆԱՏՕ-ի հետ ՆԱՏՕ-ի կազմի մեջ չմտնող եվրոպական ու Եվրոպային հարող ասիական տարածաշրջանների պետություն-

ների հարաբերությունները լավացնելու նպատակով:

խորհուրդ տալ – советовать – advise

**խորություն** – глубина, глубь – depth

մեծ խորություն – տես *ջուր` խոր ջուր*  
200 մ-ից ավելի խորություն:

փոքր խորություն – տես *ծանճաղուտ*

**խորք** – տես *խորություն*

**խոցելի** – уязвимый – vulnerable

Վատ պաշտպանված, այնպիսին, որում հեշտ է գտնել թուլություն, թերություն:

խոցելի դիրք – уязвимая позиция – vulnerable position

խոցելի շրջան – уязвимый район – vulnerable area

**խոցելիություն** – уязвимость – vulnerability

Ձեռքով հեշտությամբ վիրավորվելու ենթակա, թույլ, վատ պաշտպանվածություն:

խոցելիության գնահատում – оценка уязвимости – vulnerability assessment

կրիտիկական խոցելիություն – критическая уязвимость – critical vulnerability

Վլաուզկիցի ծանրության կենտրոնի առավել խոցելի տարրը կամ պահանջ-մունքը:

ստրատեգիական խոցելիություն – տես *ռազմավարական` ռազմավարական խոցելիություն*

**խոցում** – տես *նշանախոցում*

անուղղակի նշանառության խոցման միջոց – средство поражения непрямого наведения – indirect-fire weapon, indirect weapon

Ձեռք, որն օգտագործվում է փակ դիրքերից հրաձգության համար:

խոցման աստիճան – степень поражения – 1. damage level, 2. degree of injury

Շարքից դուրս եկած անձնակազմի, ռազմական տեխնիկայի, շինությունների թվի հարաբերությունը ամբողջ եղա-

ծին: Սովորաբար արտահայտվում է տոկոսներով:

խոցման գոտի – зона поражения, зона разлета осколков – kill zone

խոցման հաշվարկված կետ – расчетная точка попадания – desired point of impact

խոցման հավանականություն – вероятность поражения – defeat probability

Թվային մեծություն, որը բնութագրում է հրաձգության (հրետակոծության, ռմբակոծության) տրված պայմաններում նշանակետի խոցման հնարավորությունը, միակի (կետային) նշանակետերի խոցման արդյունավետության ցուցանիշ: Արտահայտվում է 0–1 (0–100 %) տիրույթի թվերով:

խոցման միջոց – средство поражения – means of destruction

խոցման միջոցների առերում մինչև նշանակետ – доставка средств поражения до цели – delivery of means of destruction to the target

Ռումբերի և այլ նմանատիպ զինամթերքի տեղափոխում (հրթիռով, ինքնաթիռով ևն) այն վայրը, որտեղ նախատեսված է դրա կիրառումը:

խոցման միջոցների հաշվարկիչ – расчетчик средств поражения – weaponeer

Արևմտյան բանակներում` անձ, որն ավարտին է հասցնում պարտադիր ուսուցումը` նպատակաուղղված տվյալ նշանակետի վրա ցանկալի ազդեցություն գործելու համար մահաբեր կամ ոչ մահաբեր միջոցների քանակի ու տեսակի որոշմանը:

խոցման միջոցների հաշվարկում – расчет средств поражения – weaponeering

Տրված նշանակետին սահմանված վնաս պատճառելու համար մահաբեր կամ ոչ մահաբեր միջոցների տեսակի ու քանակի որոշում:

խոցման շառավիղ – радиус поражения – damage radius

Ծովային ականապատման ժամանակ նավից դեպի ականը եղած այն միջին հեռավորությունը, որի դեպքում կարող է տեղի ունենալ պայթյունը:

խոցման չափանիշ – критерий поражения – injury criteria

համակցված խոցում – комбинированное поражение – multiple damage

Մարդու, տեխնիկայի, կառույցի, նյութական միջոցի վրա զինամթերքի պայթյունի մի քանի գործոնի միաժամանակյա ազդեցությունը:

համատարած խոցման գոտի – зона сплошного поражения – complete destruction zone

Տեղանքի հատված, որտեղ զինամթերքի պայթյունի հետևանքով խոցվում է նշանակետերի 70 %-ը:

համատեղ խոցման գոտի – зона совместного поражения – joint engagement zone

Որոշված սահմաններով օդային տարածք, որտեղ հակաօդային պաշտպանության բաղադրյալ համակարգերը («մակերևույթ-օդ» դասի հրթիռները և օդանավերը) մշտապես պատրաստ են օդային սպառնալիքի հետմղմանը:

հրթիռային խոցման շրջան – зона ракетного поражения – missile engagement zone

մարտական համալիրով խոցման գոտի – зона поражения боевым комплексом – weapon engagement zone

Որոշակի չափերով օդային տարածություն, որում նշանակետերի խոցումը կատարվում է կոնկրետ մարտական համալիրով:

ցածրաբաժիչ հրթիռներով խոցման գոտի – зона поражения маловысотными ракетами – low-altitude missile engagement zone

ՀՕՊ-ում. որոշակի չափերի օդային տարածություն, որի սահմաններում գեներալ կիրառման պատասխանատվությունը կապված է «երկիր-օդ» դասի փոքր ու միջին հեռագործությամբ հրթիռների հետ:

խոտվարար – мятежник, участник военного мятежа – mutineer

խոտվություն – мятеж – mutiny

Երկրում իշխանության մարմինների դեմ ռազմական խմբավորման զինված ելույթը՝ ընդհուպ մինչև նրանց բռնի տապալումը:

խոտվության հրահրում – подстрекательство к мятежу – sedition

ռազմական խոտվություն – военный мятеж – act of mutiny

խոտվություն, որը ձեռնարկում են զինվորականները՝ քաղաքական իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու համար:

ԽԱՀՄ – տես *խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն*

խստավարժեցում – муштра, муштровка – drill

խստիվ սահմանված գին – жестко фиксированная цена – firm fixed price

խսացում – сгущение – infill

խտրարարություն – сегрегация – segregation

խտություն – плотность – density

1. *Ծավալային խտություն.* մարմնի զանգվածի հարաբերությունը նրա ըզբաղեցրած ծավալին:
2. *Մակերևութային խտություն.* մեծության հարաբերության բաշխումն ըստ մակերեսի:
3. *Գծային խտություն.* մեծության բաշխումն ըստ երկարության:
4. *Հոսքի խտություն.* միավոր մակերեսով միավոր ժամանակում անցնող նյութի՝ առարկաների քանակությունը:

աապատակման խտություն – плотность налета – density of air raids

Հակառակորդի այն ինքնաթիռների (ԱԹԱ-ների), հրթիռների, տիեզերական հարձակման միջոցների թիվը, որոնք միավոր ժամանակում մտնում են ՀՕՊ-ի զորամասի կամ զորքերի խմբավորման սահմանները: Կարող է դիտարկվել նաև որևէ ուղղության, գոտու և նկատմամբ:

արգելապատնեշների խտություն – плотность заграждений – obstruction density

կրակի խտություն – плотность огня – density of fire

խոցման խտություն – плотность поражения – destruction density

Հրետանային կրակով նշանակետի խոցման (ճնշման կամ ոչնչացման) հուսալիության կարևոր բնութագրերից մեկը:

նշանակետերի հոսքի խտություն – плотность потока целей – density of raids

ռմբակոծման խտություն – плотность бомбового удара – bombing density

տանկերի խտություն – плотность танков – tank density

ուժերի և միջոցների խտություն – плотность сил и средств – density of forces and equipment

**խրախուսել** – поощрять, побуждать – incite

**խրախուսիչ պարգևատրում** – поощрительное вознаграждение – incentive fee

**խրախուսում** – поощрение – incentive

**խրամ** – 1. траншея, 2. ров – 1. trench, 2. cutting

հակատանկային խրամ – противотанковый ров – antitank ditch

**խրամատ** – окоп – trench, foxhole

Բաց տիպի ամրաշինական կառույց կրակի վարման և հակառակորդի խոցիչ միջոցներից յուրային կենդանի ուժի ու ռազմական տեխնիկայի պաշտպանության համար:

բջջային խրամատ – տես *հրաձգային բջջախրամատ*

խրամատի պատի ամրացում – укрепление стены окопа – revetting

խրամատ փորել – рыть окоп, шанцевать – entrench

հրաձգային խրամատ – стрелковый окоп – fire trench, slit trench

պառկած կրակելու խրամատ – окоп для стрельбы лежа – prone trench

**խրամատային** – окопный, траншейный, шанцевый – trench, trench-digging

խրամատային գործիք – шанцевый инструмент – digging tool, entrenching tool, pioneer tool

խրամատային ոտնաթաթ – траншейная стопа, влажная конечность – trench foot, immersion foot

**խրամատավորում** – окапывание – entrenching

**խրամուղի** – траншея – trench

Բաց տիպի ամրաշինական կառույց, որն ունի միակողմանի կամ երկկողմանի հողապատնեշով ու հրաձգային և այլ բջիջներով (հարթակներով) օժտված երկայնաձիգ խրամատի տեսք:

հաղորդակցման խրամուղի – ход сообщения, соединительная траншея – communication trench

**խրտվիլակ** – чучело-обманка – dummy

**խցանում** – 1. загромождение, закупорка, 2. засорение – 1. obstruction, clog, 2. stoppage

**խցափակիչ** – заглушка – choke

**խցիկ** – 1. камера, 2. кабина – 1. chamber, 2. cabin, cab, cockpit

բարձր ճնշումային խցիկ – гипербарическая камера, кессон повышенного давления – hyperbaric chamber, compression chamber

Ստորջրյա աշխատանքների համար ստեղծված հատուկ խցիկ:

թերճնշումային խցիկ – гипобарическая камера – hypobaric chamber

խցիկի ապահերմետիկացում – разгерметизация кабины – cabin decompression

խցիկի տրամաչափում – калибровка камеры – camera calibration

խցիկի օպտիկական առանցք – оптическая ось камеры – camera axis

Օկուլյարի օպտիկական կենտրոնով անցնող աներևույթ գիծ:

ջրասուզական խցիկ – водолазная камера – diving chamber

օդալուսանկարչական խցիկի արագագործություն – быстродействие аэрофотоаппарата – camera cycling rate

**խուզաթռիչք** – бреющий полет – hedgehopping flight

**խուզարկու շուն** – ищейка – tracker dog

**խուզարկում** – обыск – search



խուզարկման օրդեր – ордер на обыск – search warrant

**խումբել** – տես *ներխումբել*

**խումճապ** – паника – panic

Առանձին մարդու, մարդկանց խմբի կամ զանգվածի հոգեբանական վիճակ, որն ի հայտ է գալիս իրական կամ երևակայական վտանգի ազդեցության հետևանքով և բնորոշվում է ծայրահեղ հուզախռոշվությամբ, իրադրությունն սթափ ու ճիշտ գնահատելու և ըստ դրա նպատակահարմար կերպով գործելու ընդունակության կորստյամբ:

**խումբ** – 1. Գրուպա, 2. տես *զինախումբ*  
– 1. group, 2. տես *զինախումբ*

Շահերի, գաղափարների, մասնագիտությունների, գործունեության, նպատակների ընդհանրությամբ միավորված մարդկանց բազմություն: Նույն նպատակին ծառայող կամ միևնույն հատկանիշն ունեցող առարկաների, երևույթների, նյութերի խմբավորում:

աշխատանքային խումբ – рабочая группа – working group

արգելապատնեշող խումբ – группа заграждения – barrage works group

բանակների խումբ – группа армий – army group

բրիգադային մարտական խումբ – бригадная боевая группа – brigade combat team

գումարտակային մարտավարական խումբ – батальонная тактическая группа – battalion task force

դեսանտային գումարտակային խումբ – батальонная десантная группа – battalion landing team

Ղեկավարող օպերացիաներում հետևակային գումարտակ՝ համալրված անհրաժեշտ մարտական և ծառայողական միավորներով:

դիվերսիոն-հետախուզական խումբ – диверсионно-разведывательная группа – special tactics team

զննիչ խումբ – досмотровая группа – inspection party

զորքերի խումբ – группа войск – group of troops, group of forces

թիկունքային ապահովման շարժունակ խումբ – мобильная группа тылового обеспечения – mobile support group

խաղաղապահության ասպարեզում համագործակցության գծով հատուկ խումբ – специальная группа по сотрудничеству в поддержке мира – Ad Hoc Group on Cooperation in Peacekeeping, AHG

խառն ինքնաթիռատուղաթիռային հարվածային խումբ – смешанная самолетно-вертолетная ударная группа – joint air attack team

խափանիչ խումբ – տես *ուժեր՝ խափանիչ ուժեր*

ծովադեսանտային օպերատիվ խումբ – амфибийная оперативная группа – amphibious task force

կալիչ խումբ – группа захвата – snatch squad

կաշկանդող խումբ – сковывающая группа – holding force

Ջորամիավորման (զորամասի) մարտակարգի տարր, որը նախանշանակված է օժանդակ ուղղության վրա գործելու, հակառակորդին կաշկանդելու և նրան գլխավոր ուղղության վրա ուժեր տեղափոխելու հնարավորությունից զրկելու համար:

կենտրոնական վերլուծական խումբ – центральная аналитическая группа – central analysis team, analysis staff

խումբ, որը մեծամասշտաբ զորավարությունների անցկացման ժամանակ ստեղծվում է ՆԱՏՕ-ի երկու ռազմավարական հրամանատարությունների ներկայացուցիչներից:

Կոսովոյում անվտանգությանն աջակցության խումբ – группа оказания содействия безопасности в Косово – Kosovo Security Assistance Group

հատուկ օպերացիաների կապի խումբ – команда связи специальных операций – special operations liaison element

հարվածային ավիակրային խումբ – авианосная ударная группа – carrier battle

group, carrier strike group, carrier striking force

հարվածային խումբ – маневренный кулак, ударная группа – mass of maneuver  
Ձորամիավորում, որը սովորաբար գրտնրվում է պահուցում, որպեսզի հարված հասցնի հակառակորդի անպաշտպան գորաթևին կամ այլ թույլ կետի:

ճնշիչ խումբ – группа подавления – suppression group, neutralization group

մարտական գործողությունների ժամանակ որոնման ու փրկության ապահովման օպերատիվ խումբ – оперативная группа по обеспечению поиска и спасения в ходе боевых действий – combat search and rescue task force

մարտավարական խումբ – тактическая группа – task force

մարտավարական մարտական խումբ – тактическая боевая группа – tactical combat force

մեծ ռիսկայնությամբ խումբ – группа повышенного риска – high-risk personnel

միջտեսակային մարտավարական խումբ – межвидовая тактическая группа – joint task force

Մեծ միացյալ խմբավորում՝ կազմված զինված ուժերի տարբեր տեսակներից և ձևավորված որոշակի առաջադրանքի կամ որոշակի արշավի անցկացման համար:

միջուկային պլանավորման խումբ – группа ядерного планирования – Nuclear Planning Group

նահանգների վերականգնման խումբ – группа восстановления провинций – provincial reconstruction team

Աֆղանստանի որևէ նահանգում կայունություն, բնակչության անվտանգությունն ապահովող և այլ ծառայություններ մատուցող ժամանակավոր կազմակերպություն:

նավաբեռնման խումբ – погрузочная группа – embarkation group

Չինվորական անձնակազմի ժամանակավոր վարչական կազմավորում, որը

պաշարների ու սարքավորումների մի խմբաբանակով բարձրանում է նավ, բեռնման ավարտից հետո կազմալուծվում է:

նորոգումատարահանման խումբ – ремонтно-эвакуационная группа – emergency recovery group

շրջապատված խումբ – окруженная группа – cut-off group

որոնողափրկարարական խումբ – поисково-спасательная команда – search-and-rescue team

պաշտպանական բարեփոխումների և համագործակցության գծով աշխատանքային խումբ – Рабочая группа по оборонным реформам и сотрудничеству – working group on Defense Reform and Cooperation

ռազմական օգնության ցուցաբերման հարցերով խորհրդարկիչ խումբ – консультативная группа по вопросам программы оказания военной помощи – military assistance advisory group

ռազմատեղեկատվական աջակցության միացյալ օպերատիվ խումբ – объединенная оперативная группа военно-информационной поддержки – joint military information support task force

սպառազինության և ռազմական տեխնիկայի կենսաշրջանի կառավարման խումբ – Группа управления жизненным циклом вооружения и военной техники – Life Cycle Management Group

վաշտային խումբ – ротная группа – company team

ԱՄՆ-ի բանակում. ժամանակավոր մարտավարական խումբ, որը բաղկացած է հետևակային և տանկային վաշտերից:

տարաշարժուն խումբ – маневренная группа – maneuver element

տեսչական խումբ – инспекционная группа – inspection team

փոխադրվող խումբ – транспортируемая группа – movement group

փոխադրումների և տրանսպորտի գծով խորհրդարկիչ խումբ – консультативная группа по перевозкам и транспорту –

Movement and Transportation Advisory Group

քաղաքի պայմաններում որոնման ու փրկման խումբ – группа поиска и спасения в городских условиях – urban search and rescue team

օդային բաղադրատարրի համադասող խումբ – группа координации воздушного компонента – air component coordination element

օդային փոխադրումների ծավալման շարժունակ խումբ – мобильная группа развертывания воздушных перевозок – mobile air movements team

օպերատիվ խումբ – оперативная группа – task group

օպերատիվ-հետախուզական խումբ – оперативно-диверсионная группа – special tactics team

օպերատիվ միջոցների ձեռնարկման համար պատասխանատու հերթապահ խումբ – дежурная группа, ответственная за принятие оперативных мер – initial response force

Այն ստորաբաժանումը, սովորաբար՝ զինվորական ուսիկանության, որն առաջինը հայտնվում է ահաբեկչական գործողությունների շրջանում:

օպերատիվ տարաշարժուն խումբ – оперативная маневренная группа – operational manoeuvre group

օպերացիաների վարման միացյալ զինվորա-քաղաքացիական օպերատիվ խումբ – объединенная военно-гражданская оперативная группа по проведению операций – joint civil-military operations task force

**խումնապահում** – хранение навалом – bulk storage

**խուրձ** – տես *փունջ*

**խուց** – камера – chamber

այրման խուց – камера сгорания, топка – combustor

## Ծ (ԾԱ)

**ծագում** – происхождение – origin

**ծալովի** – складной – collapsible

ծալովի մահճակալ – տես *արշավային՝ արշավային մահճակալ*

**ծախս** – 1. расход, издержки, 2. трата, расход – 1. cost, 2. expenditure

ապասարման ծախսեր – расходы на демонтаж – dismantling costs

Հնացած ռազմական տեխնիկայի ապասարման վրա կատարված ծախսեր:

ընդհանուր ծախսեր – общие затраты – shared costs

լրացուցիչ ծախսեր – дополнительные издержки – incremental costs

ծախսերի աճման գործակից – коэффициент роста издержек – cost escalation factor

ծախսերի ամփոփիչ նախահաշվարկ – сводная смета расходов – consolidated estimate of expenditure

ծախսերի առաջացման տեղ – место возникновения затрат – cost center

ծախսերի արդյունավետության վերլուծություն – анализ эффективности затрат – cost-effectiveness analysis

ծախսերի արդյունավետություն – эффективность затрат – cost-effectiveness

ծախսերի նվազարկում – минимизация затрат – cost-minimization

ծախսեր և եկամուտ – расходы и доходы – costs and revenues

ծախսի լիմիտ – лимит расхода – limit of expenditure

հաստված ծախսեր – фиксированные расходы – fixed cost

ծախսի վերջնասահման – տես *ծախս՝ ծախսի լիմիտ*

ձեռքբերման ծախսեր – затраты на приобретение – cost of acquisition

Ծախս, որը կատարվում է որևէ բան ձեռք բերելու համար:

նախահաշվային ծախսեր – сметные издержки – baseline costs

չնախատեսված ծախսեր – непредвиденные расходы – incidental expenses

պաշտպանական ծախսեր – оборонные расходы – defense expenditure

ռազմական ծախսեր – военные расходы – military spending, military expenditure

վրադիր ծախսեր – накладные расходы – overhead

փոխհատուցման ծախսեր – компенсационные затраты – offset costs

օգտահանման վրա կատարվող ծախսեր – затраты на утилизацию – disposal costs

ֆինանսական ծախսերի բաժնեմաս – доля финансовых затрат – cost-share

**ծախսերի և օգուտների հարաբերակցություն** – соотношение затрат и выгод – cost-benefit

**ծախսման նորմ** – норма расхода – consumption rate

**ծածկագիր** – 1. шифр, 2. шифровка, шифротекст – 1. cipher, 2. cipher, cipher message, ciphertext  
1. Գաղտնի հաղորդագրությունների պայմանական գրային նշանների համակարգ: 2. Այդպիսի նշաններով զրրված հաղորդում: 3. Այդպիսի նշաններով գրված:

**ծածկագրություն** – տես *գաղտնագրություն*

**ծածկագրում** – տես *գաղտնագրում*

խոսակցության ծածկագրում – шифрование речи – voice encryption

**ծածկանուն** – кодовое название – nickname

**ծածկապաշտպանական ավիախումբ** – տես *պարեկ՝ մարտական օդային պարեկ*

**ծածկապաշտպանություն** – прикрытие – cover, coverage

Ծածկելով պաշտպանելը, պատսպանելը:

ավիացիոն ծածկապաշտպանություն – авиационное прикрытие – air cover

Կործանիչ ավիացիայի հիմնական խնդիրներից մեկը, որի նպատակն է հակառակորդին թույլ չտալ իր օդային հարձակման միջոցներով հարվածներ հասցնել ցամաքային ու ծովային ուժերին, թիկունքի օբյեկտներին և/կամ վարել օդային հետախուզություն:

զենիթային ծածկապաշտպանություն – зенитное прикрытие – fire-power umbrella

Կրակային վտանգի տակ գտնվող գոտի:

ծածկապաշտպանության բանակ – армия прикрытия – covering force, covering army  
Պետության ԶՈՒ-ի մաս, որը նախապես ծավալվում է սահմանային գոտում՝ հակառակորդի հանկարծակի հարձակումը հետ մղելու, ՌԳԹ-ում գլխավոր ուժերի կենտրոնացումն ու ռազմավարական ծավալումն ապահովելու և ռազմական գործողություններում դրանք կազմակերպված ձևով ներգրավելու համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով:

ծածկապաշտպանության բնագիծ – рубеж прикрытия – screen line

ծածկապաշտպանության գոտի – зона прикрытия – covering force area

Պաշտպանական զորքերի գործողությունների գոտի:

ծածկապաշտպանության զորքեր – տես *ծածկապաշտպանություն՝ ծածկապաշտպանության ուժեր*

ծածկապաշտպանության ուժեր – силы прикрытия, войска прикрытия – covering force

1. Հիմնական խմբավորումից անջատ գործող զորային կազմավորում, որի նպատակն է ծածկապաշտպանվող խմբավորման վրա հակառակորդի հարձակումը կանխելու համար նրա դեմ մարտական գործողությունների վարումը, նրա զսպումը, կազմալուծումը և մոլորեցումը: 2. Զորամասեր կամ հատկացված ստորաբաժանում-

ներ, որոնք ապահովում են ավելի մեծ խմբավորման պահպանումը՝ դիտման, հետախուզության, պաշտպանական կամ հարձակողական մարտերի վարման միջոցով, ինչպես նաև այդ տեսակի մարտական գործունեության զուգակցմամբ:

հակաօդային ծածկապաշտպանություն – противовоздушное прикрытие – cover-age

ՀՕՊ-ի և ՀՀՊ միջոցներով վրագետնյա օբյեկտների պաշտպանություն հակառակորդի օդային հարձակման միջոցներից:

**ծածկող** – прикрывающий – protective

**ծածկոց** – 1. навес, тент, 2. капот (двигателя) – 1. canopy, 2. bonnet

թեթև գիշերային ծածկոց – легкая накидка для ночевки – poncho liner

**ծածկույթ** – 1. покрытие, 2. чехол, 3. տես շղարշ 2 – 1. coating, 2. cover, 3. տես շղարշ 2

ծածկույթի շառավիղ – радиус приккрытия – coverage radius

**ծածուկ** – скрытый – obscure

ծածուկ դեկավար թելեր – тайные пружины, тайные механизмы управления – wire

ծածուկ տեղ – укрытая зона – defiladed area

ծածուկ օպերացիա – тайная операция – clandestine operation

Կառավարական մարմինների (գործակալությունների) օպերացիա, որն իրականացվում է այնպես, որ պահպանվի դրա իրագործման գաղտնիությունը, ի տարբերություն գաղտնի օպերացիայից (covert operation – секретная операция), որի դեպքում հիմնական գաղտնիությունը կապված է նպատակների հետ:

**ծածուկություն** – скрытность – security

1. Կողմնակի մարդկանց համար աննկատելիություն՝ անտեսանելիություն: 2. Կողմնակի մարդկանցից թաքուն՝ գաղտնի լինելը:

օպերացիայի ծածուկության ապահովում – обеспечение скрытности проведения операции – operations security

Հակառակորդից օպերացիային վերաբերող տեղեկույթը գաղտնի պահելուն ուղղված միջոցառումների համալիր:

օպերացիաների ծածուկության խոցելիություն – уязвимость скрытности операций – operations security vulnerability

Մի իրավիճակ, երբ յուրային զորքերի գործողությունների հետևանքով հակառակորդը կարող է օգտագործել օպերացիայի ծածուկության ցուցիչները և ստանալ տեղեկույթ, որը նրան կօգնի կայացնելու ճիշտ և արդյունավետ որոշում:

օպերացիաների ծածուկության միջոցների իրագործման ստուգում – проверка соблюдения мер скрытности операций – operations security survey

օպերացիաների ծածուկության պլանավորման գծով հրահանգագիր – руководство по планированию скрытности операций – operations security planning guidance

օպերացիայի ծածուկության ցուցիչ – показатель скрытности операции – operations security indicator

Յուրային զորքերի ակներև գործողություններ կամ բաց աղբյուրների տեղեկություններ, որոնք հակառակորդը կարող է միաբերել և վերլուծել՝ ավելի կարևոր տեղեկույթ ստանալու համար: Դրանք են՝ ապաքողարկիչ նշանները, այլ տեղեկույթի հետ կապը, դիտարկումների ու տեղեկույթի հիման վրա ընդհանուր պատկերի ստեղծման հնարավորությունը, ցայտունությունը, դիտելիության երկարատևությունը:

օպերացիայի ծածուկությունն ապահովող հակամիջոցներ – контрмеры для обеспечения скрытности операции – operations security countermeasures

**ծակատ** – пробоина – 1. (ավտոմեք.) hole, gash, 2. (ավ.) rupture, hole, 3. (ծով.) breach

Ուզմանական տեխնիկայում (ինքնաթիռ, ծովային նավ, տանկ և այլն) պինդ մարմնի (հրթիռ, արկ, տորպեդ,

ժայռ և այլն) հարվածից առաջացած պատռվածք:

**ծակատունակություն** – пробивающая способность – penetrating capacity, penetration capability, penetrability

Պատնեշը ծակելու խոցիչ տարրի կարողությունը: Կախված է պատնեշի նյութից, կառուցվածքից և խոցիչ տարրի հատկություններից:

**ծաղիկ** – տես *ծաղկախտ*

**ծաղկախտ** – оспа – smallpox, variola

**ծայրակետ** – конечный пункт, конечная станция – terminal

**ծայրահեղականություն** – 1. экстремизм, 2. радикализм – 1. extremism, ultraism, 2. radicalism

1. Անհատի կամ խմբի հակվածություն ծայրահեղ հայացքների և գործողությունների: Արգելված ծայրահեղ եղանակներով սոցիալ-քաղաքական, կրոնական, ազգային նպատակներին հասնելու տեսություն և պրակտիկա: 2. Ծայրահեղ՝ անզիջում՝ անվերապահ հավատարմություն որևէ գաղափարի, տեսության, տեսակետի:

**ծայրահեղ անհրաժեշտություն** – крайняя необходимость – emergency

**ծայրամաս** – 1. периферия, окраина, 2. провинция – 1. periphery, 2. country

**ծայրասարքերի կառավարում** – управление оконечными устройствами – terminal control

Համակարգում որպես ծայրամասային սարք միացված տեխնիկական միջոցների աշխատանքի ուղղորդում:

**ծայրից ծայր** – տես *լրիվ փուլաշրջան*

**ծանծաղուտ** – мелководье, малая глубина – shallow water, bar, beach, ford

ծանծաղուտով շարժվելու կարողություն – способность двигаться по мелководью – shallow fording capability

**ծանր** – тяжелый – heavy

ծանր հանցագործություն – տես *մահապատիժ՝ մահապատժի արժանի*

**ծանրություն** – тяжесть – load

ծանրության կենտրոն – центр тяжести – center of gravity

Կլաուզկիցի տերմին, որը նշանակում է գլխավոր հարվածի օբյեկտ, հիմնական ջանքերի կենտրոնացման կետ, ՆԱՏՕ-ի ռազմական պլանավորման ելադրույթներից մեկը:

**ծանուցագիր** – извещение – notification

**ծանուցել** – տես *տեղեկացնել*

**ծառայողական անփութություն** – служебная халатность – dereliction of duty

**ծառայողահետախուզական շուն** – служебно-розыскная собака – sniffer dog

**ծառայություն** – 1. служба, 2. տես *զինվորական ծառայություն*, 3. служба, специальный род войск, 4. службы, 5. заслуга, 6. услуга – 1. service, duty, 2. տես *զինվորական ծառայություն*, 3. branch, corps, 4. utilities, 5. services, 6. services, facilities

1. Պաշտոնական պարտականություն: 2. Կառավարման այն հաստիքային մարմինների ու զինվորական կազմավորումների համակարգը, որոնք նախանշանակված են ըստ իրենց մասնագիտացման ապահովելու և սպասարկելու զորքերը (ուժերը): 3. Ջորամասերում ամենօրյա ծառայողական գործունեությունը: 4. Հրամանատարների և շտաբների կողմից կազմակերպվող և իրագործվող այն միջոցառումների համալիրը, որոնք նպատակաուղղված են զորքերի (ուժերի) կողմից իրենց խնդիրների հաջող կատարման ապահովմանը: 5. Որևէ կառույցի, տնտեսության օժանդակ շենքերը, բնակարանի մասնագիտացված օժանդակ բաժինները: 6. Արվեստի՝ գիտության կամ հասարակության կենսագործունեության որևէ այլ բնագավառում կատարած արդյունավետ գործունեությունը: 7. Մեկին որևէ օգուտ բերող կամ օգնություն հանդիսացող գործունեություն:

այլընտրանքային ծառայություն – альтернативная служба – alternative service

Ծառայություն առանց գենքի. քաղաքացիների պարտադիր պետական



ծառայություն, որը փոխարինում է զինվորական ծառայությանը և կիրառվում է մեծ թվով այն պետություններում, որտեղ պահպանվում է համընդհանուր զինապարտությունը:

այլընտրանքային քաղաքացիական ծառայություն – альтернативная гражданская служба – alternative community service, alternative civilian service

Քաղաքացիների պարտադիր հատուկ քաղաքացիական ծառայություն, որը համաձայն օրենսդրության՝ փոխարինում է զինվորական ծառայությանը, ծառայություն առանց զենքի:

անասնաբուժական ծառայություն – ветеринарная служба – veterinary service, veterinary corps

Ջորքի թիկունքային ապահովման տեսակ, զորամասերի մշտական տեղաբաշխման վայրերում անասնաբուժասանիտարական և անասնաճարակային իրադրության բարելավմանը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից անձնակազմի պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցառումների համալիր:

անվտանգության ծառայություն – служба безопасности, охрана – security service, security

արձակում զինվորական ծառայությունից – увольнение с военной службы – discharge from military service, discharge

Օրենքով սահմանված կարգով զինծառայողի ազատում ՋՈՒ-ում հետագա ծառայությունից:

արտակարգ ծառայության աշխատող – работник экстренной службы – first responder

բանավոր թարգմանության ծառայություն – Служба устного перевода – Interpretation Service

գաղտնի ծառայություն – тайная служба – secret service

- 1. Ծառայություն, որը մատուցվում է թաքուն կերպով՝ գաղտնիաբար:
- 2. (սով. հոգն.) Հետախուզական և/կամ հակահետախուզական ծառայություն (կազմակերպություն, հիմնարկ, գործակալություն ևն), որը ծածուկ կերպով կատարում է գաղտնի առաջադրանք-

ներ՝ հակառակորդին (ինչպես արտաքին, այնպես էլ ներքին) թաքուն կերպով վնաս պատճառելու նպատակով (դիվերսիոն, քաղաքական-քարոզչական, բացահայտիչ ևն օպերացիաներ):  
3. ԱՄՆ-ում. դաշնային ծառայություն, որն ի սկզբանե զբաղվում էր դրամանենգության դեմ պայքարով, այժմ՝ նաև ԱՄՆ-ի Նախագահի անձի պաշտպանությամբ:

ընդունում զինվորական ծառայության – зачисление на военную службу – enlistment

Քաղաքացիների ներառում զինծառայողների կատեգորիայում, վերագրում զինծառայողների դասին:

ընդունում պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության – набор на военную службу по контракту – professional recruitment

թիկունքային ապահովման ծառայություններ ըստ գործառության նախանշանական – службы тылового обеспечения по функциональному назначению – Logistic Functional Services

թռիչքադաշտային ծառայություն – տես ծառայություն՝ ինժեներաթռիչքադաշտային ծառայություն

ժամկետային զինվորական ծառայություն – военная служба по призыву, срочная военная служба – military service, conscription service

Ընդհանուր զինապարտություն ունեցող պետություններում ՋՈՒ-ի համալրման հիմնական եղանակը, երբ զորակոչային տարիքի քաղաքացիներն օրենքով սահմանված ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն են անցնում պետության ՋՈՒ-ում:

ինժեներաթռիչքադաշտային ծառայություն – инженерно-аэродромная служба – airfield service

ՌՕՈՒ-ի և ՋՈՒ-ի այլ տեսակների ավիացիայի թիկունքի ծառայություն, որը նախանշանակված է ռազմական գործողությունների և ավիացիոն զորամասերի մարտական պատրաստման ինժեներաթռիչքադաշտային ապահովման համար:



իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող սպաների ցուցակ – список офицеров, находящихся на действительной военной службе – active list

իսկական զինվորական ծառայություն – действительная военная служба – active duty, active service

Ծառայությունը ՋՈՒ-ում՝ ի հակադրումն ծառայությանը պահեստազորում:

իսկական ծառայության սպա – տես *սպա՝ կադրային սպա*

իրային ծառայություն – вещевая служба – stores service

Թիկունքի ծառայություն, որը նախատեսված է զորքերի (ուժերի) իրային ապահովման համար:

կամավոր զինվորական ծառայություն – военная служба в добровольном порядке, добровольная военная служба – voluntary military service

համբարակային ծառայություն – интендантская служба – quartermaster’s service

Թիկունքի ծառայություն, որն զբաղվում էր զորքերի ապահովմամբ պարենով, անասնակերով, իրային և գումակատնտեսական գույքով, ինչպես նաև անձնակազմի բնակավորմամբ ու կենցաղսպասարկմամբ: Ներկայումս պահպանվել է Ավստրիայում, Իսպանիայում ևն:

հետախուզական ծառայություն – разведывательная служба, служба разведки – intelligence service

ճամբարային ծառայություն – лагерная служба – camp duty, camp service

Ճամբարներում զորքերի գտնվելու ժամանակ կազմակերպվող ներքին ծառայություն:

ճշգրիտ դիրքորոշումային ծառայություն – служба точного позиционирования – service of precise positioning

Համընդհանուր դիրքորոշումային համակարգի (GPS) ծառայություն, որն ունի խիստ սահմանափակ թվով օգտվողներ, գերազանցապես՝ ԱՄՆ-ի և նրա դաշնակից պետությունների ՋՈՒ-երը, քանի որ ապահովում է մեծ ճշգրտություն:

մարտական ծառայություն – боевая служба – combat service, combat duty

Միջոցառումներ և գործողություններ, որոնք խաղաղ ժամանակ կատարվում են հակառակորդի հանկարծակի հարձակումը կանխելու, նրա հարվածը թուլացնելու կամ ձախողելու նպատակով:

ներքին ծառայություն – внутренняя служба – routine garrison duty, routine garrison service

Ծառայողական գործունեության տեսակ, որի նպատակն է զորամասերում, շտաբներում, հիմնարկներում ևն ներքին կարգուկանոնի և զինվորական կարգապահության պահպանումը՝ մըշտական մարտապատրաստությունը, անձնակազմի ուսուցումը և այլ խնդիրների կազմակերպված կատարումը, զինծառայողների առողջության պահպանումն ապահովելու համար:

շտաբային ծառայություն – штабная служба – staff duty

որոնողափրկարարական ծառայություն – поисково-спасательная служба – Search-and-Rescue Service

Հատուկ ծառայություն ՈՏՈՒ-ում, ՈՕՈՒ-ում, ՀՕՊ-ում, որը նախանշանակված է որոնողափրկարարական ապահովման համար:

պայմանագրային զինվորական ծառայություն – военная служба по контракту – military contract service

Քաղաքացիների կամավոր զինվորական ծառայություն որոշակի ժամկետով կնքվող պայմանագրի հիման վրա, որոշ պետություններում՝ ՋՈՒ-ի համալրման միակ եղանակը:

պայմանագրային ծառայության ժամկետ – срок службы по контракту – enlistment

պայմանագրային ծառայության հավաք – տես *ծառայություն՝ ընդունում պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության*

պարեկային ծառայություն – патрульная служба – patrol duty

1. Ջորջի մարտական գործունեության տեսակ, որն իրականացվում է պարեկման միջոցով՝ տեղանքի շրջանների (գո-

տիների), օդային ու ծովային տարածքի ծածկապաշտպանության, տարբեր օբյեկտների պահպանման, հակառակորդի գործողությունների վերահսկման և այլ նպատակներով: 2. Կայազորային պարեկների ծառայություն:

պարտադիր զինվորական ծառայություն – обязательная военная служба – national service

Զինվորական ծառայություն, որն իրականացվում է համընդհանուր զինապարտության նորմի հիմքի վրա՝ զորակոչով:

պարտադիր զինվորական ծառայությունից խուսափող անձ – лицо, уклоняющееся от военной службы – draft-dodger

Անձ, որը հրաժարվում է զորակոչով զինվորական ծառայության անցնելուց՝ չունենալով հիմնավոր (օրենքով սահմանված) պատճառներ:

ռազմաբժշկական ծառայություն – военно-медицинская служба – military medical service

ստանդարտ դիրքորոշումային ծառայություն – служба стандартного позиционирования – standard positioning service

Համընդհանուր դիրքորոշումային համակարգի (GPS) ծառայություն, որից կարող է օգտվել ցանկացած մարդ: Ունի ավելի մեծ սխալ, քան ճշգրիտ դիրքորոշումային ծառայությունը, որն սպասարկում է ԱՄՆ-ի ՋՈՒ-ին:

տարկետում զինվորական ծառայությունից – отсрочка от военной службы – deferment, military service deferment

Առանձին կարգերի քաղաքացիների զորակոչի ժամկետի՝ օրենքով սահմանված տեղափոխում ավելի ուշ ժամանակի:

տեխնիկական ծառայության պետ – начальник технической службы – maintenance officer

տեղագրական ծառայություն – топографическая служба – topographic service

տրանսպորտային ծառայություն – транспортная служба – transportation service

ՋՈՒ-ի մարմինների և ստորաբաժանումների համակարգ, որի հիմնական գործառույթն է զորքի, մարդկանց և տար-

բեր նախանշանակման ռազմական բեռների (ՄՈՏ, զինամթերք, սննդամթերք ու հանդերձանք և այլն) տեղափոխումը:

ցամաքային փոխադրումների ընդհանուր ծառայություն – общая служба наземных перевозок – common-user land transportation

փոխադրումների ծառայություն – служба перевозок – transportation service

փոստային և սուրհանդակային ծառայություն – почтовая и курьерская служба – postal and courier services

ՋՈՒ-ում փոստային-սուրհանդակային կապի մարմինների ու ստորաբաժանումների (հանգույցների, կայանների) համակարգ, ներառում է նաև շտաբների ու կառավարման այլ մարմինների միջև կազմակերպված գաղտնի ու փոստային առաքումների առբերման երթուղիները:

օդային երթևեկության կառավարման ծառայություն – служба управления воздушным движением – air traffic control service

օժանդակ ծառայություն – вспомогательная служба, вспомогательное агентство – support agency

օպերատիվ ծառայություն – оперативная служба – operational service

**Ծառայություններ** – տես *հարմարություններ*

**Ծառացում** – кабрирование – pitching, noseup

Ինքնաթիռի (ուղղաթիռի) վերընթաց շարժում ուղղաձիգ հարթության մեջ՝ իր վայր նետած ռումբերի ազդեցությունից (վնասից) զերծ մնալու համար:

**Ծառափակոց** – засека – abatis

Կտրված ծառերից կառուցված պատնեշ:

**Ծավալում** – 1. развертывание, 2. эскалация – 1. deployment, 2. escalation

1. ՋՈՒ-ն պատերազմական դրության փոխադրելու, պատերազմի վարման համար ՋՈՒ-ի խմբավորումներ ստեղծելու և պատերազմին անմիջական պատրաստումն ավարտելու ուղղությամբ

միջոցառումների համալիր: 2. Ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների վերադասավորում: 3. Տես *ուժգնացում*:

զորահավաքային ծավալում – мобилизационное развертывание – strategic deployment on mobilization, mobilization deployment

թիկունքային բազայի ծավալում – развертывание тыловой базы – base development

ծավալման առաջին շարակարգի զորամասեր (ստորաբաժանումներ) – части (подразделения) первого эшелона развертывания – designated units

ծավալմանը զորամասի (ստորաբաժանման) պատրաստության աստիճան – степень готовности части (подразделения) к развертыванию, готовность к развертыванию – deployability posture

ծավալման հիմնական բնագիծ – основной рубеж развертывания – general deployment position

ծավալման շրջան – տես *գոտի՝ ծավալման գոտի*

ծավալման պլանավորում – планирование развертывания – deployment planning

ծավալման օպերատիվ զորակայան – оперативная база развертывания – deployment operating base

Պատերազմական իրադրությունում զորքի տեղակայման օպերատիվ ճամբար:

ծավալում մարտակարգի – развертывание в боевой порядок – enter a combat formation

ծավալումն ապահովող ուժեր – силы обеспечения развертывания – enabling force

մարտական ծավալման կետ – пункт боевого развертывания – point of employment

մարտական ծավալման վայր – տես *ծավալում՝ մարտական ծավալման կետ*

մոբիլիզացիոն ծավալում – мобилизационное развертывание – 1. activation, 2. strategic deployment on mobilization, mobilization deployment

1. Հրամանով անցում ակտիվ ծառայությանը: 2. Միջոցառումների համակարգ, որոնք իրագործվում են ՋՌԻ-ն, հիմնարկները պլանաչափ կերպով պատերազմական ժամանակի կազմակերպվածքի ու հաստիքային թվաքանակի փոխադրելու համար:

ուժերի փուլային ծավալման ժամանակացույց – график поэтапного развертывания сил – time-phased force and deployment list  
Օպերացիայի պլանի հավելված, որում նշվում են համալրող ուժերն ու միջոցները, դրանց փոխադրման ելակետերն ու ժամանման վայրերը:

ուժերի փուլային ծավալման տվյալներ – данные о поэтапном развертывании войск – time-phased force and deployment data

Ջորամասերին չամրագրված բեռների և անձնակազմերի, ինչպես նաև դրանց տեղափոխման մասին տվյալներ, որոնք անհրաժեշտ են օպերացիայի պլանի, օպերացիայի հրամանի մշակման կամ հերթական շրջափոխության համար:

**ծես** – տես *արարողություն*

**ծիսական** – տես *արարողական*

**ծիսակատարություն** – ритуал – ceremonial

**ծխագլանիկ** – дымовая шашка – smoke box

**ծխանոնակ** – дымовая граната – smoke grenade

**ծխափամփուշտ** – дымовой патрон – smoke cartridge

**ծխաքող** – дымовая завеса – smoke screen

**ծխելադադար** – перекур – smoke break

**ծով** – море – sea

բաց ծովում – в открытом море – offshore

գերիշխանություն ծովում – տես *տիրապետություն՝ տիրապետություն ծովում*

ծովի բալանություն – балльность моря – sea state

Ծովային տուրբուլենտության աստիճան, սովորաբար գնահատվում է 0–9 սանդղակով՝ ըստ ալիքների միջին բարձրության:

ներքին ծով – внутреннее море, замкнутое море – inland sea

**ծովագնացություն** – мореплавание – shipping

**ծովադիտում** – наблюдение за морем; наблюдение за морем как пространством – sea surveillance

**ծովախորշ** – морская бухта – bay

**ծովածոց** – залив, морской залив – gulf

նեղ ծովածոց – узкий морской залив – inlet

**ծովակալ** – адмирал – admiral  
Մեծ թվով պետությունների ՌԾՈՒ-ում բարձրագույն սպաների նավատորմային զինվորական կոչում:

**ծովակալություն** – адмиралтейство – Admiralty

1. Ռազմածովային նախարարություն Մեծ Բրիտանիայում (մեծատառ.): 2. Առանձին ծովային թատերաբեմի համար ռազմական նավաշինության հիմնական կենտրոն:

**ծովահենություն** – пиратство, морское пиратство – piracy, maritime piracy

Ծովային ավազակություն, մասնավոր կամ պետական նավերի կողմից բաց ծովում առևտրական կամ այլ նավերի ապօրինի կալում, թալանում կամ խրտակում:

**ծովային** – 1. моряк, 2. морской, военноморской, флотский – 1. sailor, seaman, marine, 2. naval, maritime

ծովային մղոն – морская миля – nautical mile, sea mile

ծովային սահաիրթիռ – противокорабельная ракета, летящая на предельно малой высоте – sea skimmer

Ծովի մակերևույթից մի քանի մետր բարձրությամբ թռչող հրթիռ:

**ծովափ** – 1. морское побережье, 2. морской берег, взморье – 1. coast, 2. beach

**ծովեզր** – տես *ծովափ 2*

**ծովուղի** – տես *ուղի՝ ծովային ուղի*

**ծուխ** – дым – smoke

**ծուղակ** – ловушка – decoy

## Կ (ԿԵՆ)

**կաբելտով** – кабельтов – cable length  
Երկարության միավոր. ծովային մղոնի տասներորդ մասը՝ 185,2 մ:

**կադետ** – кадет – cadet  
Պատանի, որը սովորում է միջնակարգ ռազմաուսումնական հաստատությունում կամ ռազմական ուսումնարանում:

**կադր** – кадр – 1. cadre, 2. frame  
1. Զորքի մշտական՝ կայուն ռազմավարժեցված մասը, որը խաղաղ պայմաններում չի զորացրվում և դառնում է զորակոչով, զորահավաքով ևն համարված ավելի մեծ զորամասի միջուկը: 2. Կազմակերպության մասնագիտական գործունեությանը մասնակցող, պատրաստված աշխատողներից յուրաքանչյուրը: 3. Առանձին լուսանկար, լուսանկարչական և տեսաժապավենին, հեռուստաէկրանին եղած միակի պատկեր:

կադրերի ամրացում – закрепление кадров, уменьшение текучести кадров – staff retention

կադրերի գլխավոր վարչություն – Главное управление кадров – Main Personnel Directorate

կադրերի հոսունության նվազեցում – տես *կադր՝ կադրերի ամրացում*

կադրերի մաղում – отсеив кадров – personnel screening

Կադրերի և ֆինանսների տնօրինություն – Директорат по кадрам и финансам – Human and Financial Resources Directorate

պաշտպանության համակարգի քաղաքացիական ծառայության կադրեր – кадры гражданской службы системы обороны – cadres of the defense system civil service

սպայական կադրեր – офицерские кадры – officer corps

**կադրային** – кадровый – 1. cadre, personnel, 2. regular, active, 3. trained, skilled

Կադրին՝ կադրերին վերաբերող՝ առընչվող

**կադրեր** – տես կազմ՝ կադրային կազմ

**կազմ** – 1. состав, 2. корпус, состав – 1. composition, 2. personnel, staff, corps

գեներալական կազմ – генералитет – the generals, flag officers

զորամասի մարտական և թվային կազմ – боевой и численный состав части – unit strength

Յուրային կամ հակառակորդի զորամասի (զինվորական ստորաբաժանման) անձնակազմի թվաքանակը, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի և սպառազինության քանակը, նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը:

թռիչքային կազմ – летный состав – flight personnel

Վվիացիայում. անձնակազմի այն մասը, որն ստացել է թռիչքային պատրաստում, բժշկաթռիչքային հանձնաժողովի եզրակացության համաձայն պիտանի է թռիչքային աշխատանքի համար և անմիջականորեն մասնակցում է թռիչքներին:

լրաուժի առանձնահատուկ կազմ – особый состав войск усиления – ad hoc reinforcement force package

Ուժեղացման ուժերի այնպիսի կազմ, որը նախատեսված չէ հատուկ մշակված կամ տիպային տարբերակներով, այլ ընտրվում է համաձայն իրադրությանը պայմանավորված համալրման պահանջների:

կադրային կազմ – кадровый состав – cadre, regular personnel, staff, cadres

1. Տվյալ կազմակերպության, կազմավորման, հիմնարկի ևն բոլոր աշխատողները, որոնք ներառված են հաստիքացուցակում: 2. Որևէ պրոֆեսիո-

նալ, սոցիալական խմբի՝ կարգապահ և ակտիվ աշխատանքի համար միանգամային պիտանի կազմ:

կրտսեր հրամանատարական կազմ – младший командный состав – noncommissioned officers (NCOs)

Ենթասպաների, սերժանտների հավաքական խումբը:

կրտսեր սերժանտական կազմի զինծառայող – военнoслужаший младшего сержантского состава – junior non-commissioned officer

Սերժանտական կազմի զինծառայող, սերժանտ (զբաղեցնում է կրտսեր հրամանատարի պաշտոն):

կցագրային կազմ – приписной состав – reservists designated for service

Այն քաղաքացիները, որոնք գտնվում են պահեստազորում և նախապես կցագրված են զորամասերին (հատուկ կազմավորումներին)՝ պատերազմի ժամանակ այնտեղ ծառայելու համար:

մարտական կազմ – боевой состав – organizational strength

մարտական ու թվային կազմ և տեղաբաշխում – боевой и численный состав и дислокация – order of battle

Ռազմական կազմավորման անձնակազմի, ստորաբաժանումների և ռազմական տեխնիկայի նույնականությունը, թվաքանակը, հրամանատարական կառուցվածքը և տեղաբաշխումը:

մշտական կազմ – постоянный состав, штат – permanent staff

Ռազմատուժանական հաստատությունների, դասընթացների, դպրոցների, ուսումնական զորամասերի (ստորաբաժանումների) հաստիքացուցակում մշտապես գտնվող ղեկավար, դասախոսական, վարչական, ինժեներատեխնիկական, հրահանգչային, սպասարկող և այլ կազմեր:

ներառում մարտական կազմում – введение в боевой состав – activation

շարքային կազմ – рядовой состав – rank and file

սերժանտական կազմ – сержантский состав – sergeant grade

Կրտսեր հրամկազմի՝ սերժանտներ, ավագներ, ենթասպաներ, հավաքական անվանումը:

սպայական կազմ – офицерский корпус, офицерский состав, офицерство – officer corps, officers

Պետության զինվորական կադրերի հիմնական մասը, այն անձանց (քաղաքացիների) վարչաիրավական կարգը, որոնք ունեն ռազմական կամ ռազմամասնագիտական կրթություն, և որոնց շնորհվել է սպայի զինվորական կոչում:

քանակական կազմ – численный состав – strength

**կազմալուծում** – 1. տես *տրոհում 2*, 2. дезорганизация, 3. расформирование, роспуск – 1. տես *տրոհում 2*, 2. disorganization, 3. disbandment

1. Բաժանում բաղադրիչների, տարրալուծում: 2. Ցրում, վերացում: 3. Միասնության խախտում, քայքայում:

ժամանակավոր կազմալուծում – տես *ժամանակավոր կազմացրում*

**կազմակերպական միավոր** – организационная единица – element, organizational unit

**կազմակերպվածք** – организационное устройство, организация – organizational structure, organization

(*ռազմ.*) Այնպիսի կառուցվածք, որի դեպքում ապահովվում են առավել նպատակահարմար կազմը, զորատեսակների և զինատեսակների առավել օպտիմալ հարաբերակցությունն ու զուգակցումը, բարձր մակարդակի մարտական պատրաստությունը և մարտական գործողություններ վարելու կարողությունը:

պաշտպանական կազմակերպվածք – оборонная организация – defense organization

**կազմակերպություն** – организация – organization

գիտահետազոտական կազմակերպություն – научно-исследовательская организация – scientific research organization

զլխամասային կազմակերպություն – головная организация – umbrella organization

գնահատող կազմակերպություն – оценивающая организация – assessment agent

լիազորված կազմակերպություն – уполномоченная организация – qualifying entity

ԱՄՆ-ում. հասարակական կազմակերպություն, որին պաշտպանական գերատեսչությունն արտակարգ դեպքերում աջակցում է օրենսդրական ակտերով ևն:

Կենտրոնական եվրոպական խողովակաշարի կառավարման կազմակերպություն – Организация управления центральноевропейским трубопроводом – Central Europe Pipeline Management Organisation

Համագործակցության շանհայյան կազմակերպություն – Шанхайская организация по сотрудничеству – Shanghai Cooperation Organization

հասարակական կազմակերպություն – неправительственная организация, общественная организация – non-governmental organization, NGO

Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն – Организация Североатлантического договора, НАТО – North Atlantic Treaty Organization, NATO

Միգրացիայի միջազգային կազմակերպություն – Международная организация по миграции – International Organization for Migration

միջազգային անվտանգային կազմակերպություն – международная безопасностная организация – international security organization

միջազգային կազմակերպություն – международная организация – international organization

միջկառավարական կազմակերպություն – межправительственная организация – intergovernmental organization

ոչ կառավարական կազմակերպություն – տես *կազմակերպություն՝ ոչ պաշտոնական հասարակական կազմակերպություն*



ոչ պաշտոնական հասարակական կազմակերպություն – неофициальная неправительственная организация – nonmandated nongovernmental organization

ոչ պետական կազմակերպություն – տես *կազմակերպություն՝ հասարակական կազմակերպություն*

պաշտոնապես ճանաչված հասարակական կազմակերպություն – официально признанная неправительственная организация – mandated nongovernmental organisation

պետական կազմակերպություն – государственная организация – governmental organization

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն – Международная организация гражданской авиации – International Civil Aviation Organization, ICAO

օտարերկրյա հետախուզական կազմակերպություն – организация иностранной разведки – foreign intelligence entity

**կազմակերպում** – организация – organization

Կազմակերպելը, կազմակերպվելը:

**կազմավորում** – 1. формирование, образование, 2. воинское формирование – 1. forming, formation, 2. formation

1. Ստեղծում, ձևավորում, կազմում:  
2. Ջորային միավոր՝ ստորաբաժանում, զորամաս ևն:

անօրինական զինված կազմավորում – незаконное вооруженное формирование – illegal armed formation

Մարդկանց զինված խումբ, որը կազմակերպվել է առանց գործող օրենսդրության նորմերի պահպանման և պետության կողմից վերահսկելի չէ:

անօրինական զինված կազմավորումների գործողություններ – действия незаконных вооруженных формирований – insurgency

դիվերսիոն-հետախուզական կազմավորում – диверсионно-разведывательное формирование – sabotage and reconnaissance formation

ոչ օրինական զինված կազմավորման անդամ – член незаконного вооруженного формирования – unlawful combatant

Ահաբեկիչ կամ ռազմական գործողություններ վարող այլ անձ, որը չի պատկանում որևէ պետության կանոնավոր զինված ուժերին և չի ենթարկվում ընդունված պատերազմական կանոններին:

պատերազմական ժամանակի համար ստեղծվող հատուկ կազմավորում – специальное формирование, создаваемое на военное время – wartime special formation

**կազմատուվի** – տես *քանդուկ*

**կազմություն** – 1. տես *կազմ 1*, 2. տես *կառուցվածք 1* – 1. տես *կազմ 1*, 2. տես *կառուցվածք 1*

1. Նյութի ֆիզիկական և քիմիական կառուցվածքը: 2. Բաղադրություն, համակարգի տարրերի ամբողջությունը: 3. Կազմակերպություն:

**կաթսա** – котел, мешок – cul-de-sac

**կաթուցիչ** – капельница – drip  
Կաթիլային ներարկման սարք:

**կալակ** – оправка – chuck

**կալան** – штатив – tripod

**կալանավորել** – տես *կալանել*

**կալանավորման ենթակա** – подлежащий аресту – arrestable

**կալանավորված (անձ)** – арестованный – detainee

**կալանդ** – бандаж – bandage

**կալանել** – арестовывать – arrest

**կալանում** – арест – arrest, detention

կալանման միջազգային օրդեր – международный ордер на арест – international arrest warrant

**կալանք** – տես *կալանում*

կալանք դնելը – наложение ареста – seizure

կալանքի սանկցիա – տես *կալանք՝ կալանքի օրդեր*



կալանքի օրդեր – ордер на арест – arrest warrant

տնային կալանք – домашний арест – house arrest, open arrest

«Կալաշնիկով» – տես *Կալաշնիկովի ավտոմատ*

**Կալաշնիկովի ավտոմատ** – автомат Калашникова, «Калашников» – “Kalashnikov”, АК-47

7,62 մմ տրամաչափի խորհրդային ԱԿ-47 ավտոմատ:

**կալսաշղթա** – цеп – flail

Տանկի կամ զրահապատ մեքենայի առջևում ամրացված պտտվող շղթա, որը նախատեսված է ակնհայտ ճանապարհը մաքրելու համար:

**կալնում** – 1. захват, 2. տես *որսում 1* – 1. seizure, capture, 2. տես *որսում 1*

Գործողությունների (օպերացիաների) հաջորդականություն, որոնց նպատակն է նշանակետը բռնելը (որսալը), ուղեկցելը:

կառավարվող կալնում – управляемый с базы перехват – controlled interception

Մի օդանավի կողմից հակառակորդի օդանավի գրավման գործողություն, որը վերահսկվում է գետնի վրա գտնվող կայանից:

**կալում** – տես *կալնում*

կալման կողային ռադիոտեղորոշումային համակարգ – бортовая радиолокационная система перехвата – airborne interception equipment

Կրակի կառավարման համակարգ, որը ներառում է որսիչ կործանիչի կողային ռադիոտեղորոշումային սարքավորանքը:

կալման վրագետնյա կառավարում (վրագետնյա ռադիոտեղորոշիչով) – наземное управление перехватом – ground controlled interception, GCI

օդային նշանակետի կալում անմիջական ուղղորդմամբ (գետնից) – перехват воздушной цели при непосредственном наведении (с земли) – close-controlled air interception

**կալվածք** – տես *տիրույթ*

**կախակետ** – точка крепления – tie down point

Բեռը կամ տրանսպորտային միջոցից, կամ նրա ներսում կախելու համար նախատեսված հարմարանք:

**ԿԱՀ** – տես *համակարգ՝ կառավարման ավտոմատացված համակարգ*

**կաղապարվածք** – 1. муляж, 2. манекен – dummy

Առարկայի (ռազմական տեխնիկայի, մարդու, շինության) արտաքին ձևը և տեսքը ճշգրտորեն վերարտադրող կաղապար, որ կիրառվում է հակառակորդին մոլորեցնելու համար:

**կամապաշտություն** – волюнтаризм – voluntarism, libertarianism

1. Փիլիսոփայության մեջ. իդեալիստական փիլիսոփայության ուղղություն, որը բնության և հասարակության զարգացման գործում հիմնական դերը վերագրում է աստվածային կամ մարդկային կամքին, բացառում է օբյեկտիվ օրինաչափությունն ու անհրաժեշտությունը: 2. Քաղաքականության մեջ և հասարակական կյանքում. կամայական որոշումներ, որոնք անտեսում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող պայմանները և օրինաչափությունները:

**կամավոր** – 1. добровольный, 2. доброволец, вольноопределяющийся – 1. voluntary, 2. volunteer

Իր կամքով՝ առանց հարկադրանքի որևէ պարտավորություն ստանձնած, պատերազմի ժամանակ իր կամքով զինվորագրված անձ:

**կամարածալք** – տես *անտիկլինալ ծալք*

**կամրջակ** – мостик – bridge

դիմադրությունների կամրջակ – мост сопротивления – bridge

նավապետի կամրջակ – капитанский мостик – bridge

**կամրջատեղադրիչ** – мостокладчик – bridgelayer

տանկային կամրջատեղադրիչ – танковый мостоукладчик – Armored Vehicle Launched Bridge

Բրիտանական զրահամեքենա՝ ծալվի կամրջով:

**կամուրջ** – мост – bridge, crossing

ժամանակավոր կամուրջ – временный мост – emergency bridge

կամուրջ չորահովտի վրայով – տես *ուղանցույց*

հետիոտն կամուրջ – пешеходный мост – footbridge

Փոքր կամուրջ միայն հետիոտների համար:

օդային կամուրջ – воздушный мост – air-lift

**կայազոր** – гарнизон – garrison

1. Զորամասեր, ռազմաուսումնական հաստատություններ և հիմնարկներ, որոնք մշտապես կամ ժամանակավորապես տեղաբաշխված են բնակավայրում կամ դրանից դուրս և զորքերի ծառայության հարցերով ենթարկված են միասնական հրամանատարությանը: 2. Որևէ ամրացված շրջանում, ամրոցում (բերդում) կամ այլ առանձին պաշտպանական ամրաշինական կառույցում տեղաբաշխված զորք (զորամաս, ստորաբաժանում):

կայազորի զորքեր – войска гарнизона – garrison force

Բոլոր ստորաբաժանումները՝ նախանշանակված տվյալ զորակայանի կամ տեղանքի պահպանման, ռազմական օբյեկտների պաշտպանության համար:

**կայազորային քաղաք** – гарнизонный городок – garrison town

Քաղաք, որում տեղակայված են զորքեր՝ մշտական հիմունքներով:

**կայան** – станция – station

1. Որոշակի գիտահետազոտական, տեխնիկական և այլ աշխատանքներ կատարող հիմնարկ, հաստատություն, հատուկ մասնագիտական գիտական համալիր, ինչպես նաև որոշակի նպատակի ծառայող բարդ տեխնիկական համալիր: 2. Կանգնելու, կանգառելու տեղ:

զաղտնալսման կայան – станция подслушивания – monitoring station

հետևման վերգետնյա կայան – наземная станция слежения – above-ground tracking station

Ռադիոալիքներով, օպտիկական կամ այլ միջոցներով նշանակետեր որոնող և դրանց դիրքը (կոորդինատները) որոշող կայան, որը գտնվում է գետնի մակերևույթից վեր:

հրանոթային ուղղորդման կայան – станция орудийной наводки, СОН – fire control radar

հրթիռների ուղղորդման կայան – станция наведения ракет – missile guidance station

որման կայան – станция перехвата – intercept station

ռադիոտեխնիկական հետախուզության և ակտիվ ռադիոէլեկտրոնային ճնշման ավտոմատ կայան – автоматическая станция радиотехнической разведки и активного радиоэлектронного подавления – automatic search jammer, search jammer

ռադիոուղղորդիչ կայան – радиопеленгаторная станция – radio range station

Վրագետնյա ռադիոուղեվարական կայան՝ դեպի օբյեկտ ուղղությունը որոշելու համար:

ռադիոուղղորդիչ կայանների ցանց – сеть радиопеленгаторных станций – fixer network, fixer system

ռադիոտեղորոշումային կայան – радиолокационная станция, РЛС, радиолокатор, радар – radar

ռադիոտեղորոշումային կայանների ցանցի ստեղծում – организация сети РЛС – radar netting

ՌՏԿ-ների միավորում միասնական ցանցում՝ ավելի մանրամասն ու լիարժեք տեղեկություններ ստանալու համար:

ռադիոտեղորոշումային կայանով ուղղորդվող – наводимый РЛС – radar guided

ՍՌՏ կամ զինամթերք, որի ուղղորդումը կատարվում է ՌՏԿ-ի միջոցով:

վազոնների տեսակավորման կայան – сортировочная станция – marshalling yard

վառելաքսանյութերի կայան – станция ГСМ – POL point

վերջին կայան – տես *վայր՝ նախանշանակման վայր*

վրագետնյա ունկնդրիչ կայան – наземная подслушивающая станция – ground eavesdropping station

Գետնի վրա տեղակայված կայան, որը նախանշանակված է հակառակորդի տեղեկատվությունը որսալու, կապի գծերով կամ անմիջականորեն ձայնով հաղորդվող տեղեկությոթ գաղտնալսելու համար:

տրոպոսֆերային կապի կայան – станция тропосферной связи – tropospheric communication station

ուղեծրային կայան – орбитальная станция – orbital station

օժանդակ ռադիոտեղորոշումային կայան – вспомогательная радиолокационная станция – gap-filler radar

Ուղար, որն օգտագործվում է ի լրումն հիմնական ռադարի՝ ոչ լրիվ տեսադաշտի գոտիներում:

**կայանատեղ** – парковка – park

այինդ ծածկույթով կայանատեղ – стоянка с твердым покрытием – hard stand

Բետոնապատ հարթակ ավտոմեքենայի կամ ինքնաթիռի կայանման համար:

**կայանել** – парковать – park

**կայանք** – установка – installation, plant

ավիափոխադրելի կայանք – авиатранспортная установка – air transportable unit

արձակման կայանք – пусковая установка – launcher, missile launcher, rocket launcher

Հրթիռային համալիրի կառուցվածքային սարքավորանք, որը նախատեսված է հրթիռը պատրաստության անհրաժեշտ աստիճանում պահելու, նախամեկնարկային պատրաստումն իրականացնելու և արձակելու համար:

արձակման հորանային կայանք – шахтная пусковая установка – silo launcher

զենիթային զնդացրային կայանք – зенитная пулеметная установка, ЗПУ – antiaircraft machine gun installation

զենիթային ինքնագնաց կայանք – зенитная самоходная установка, ЗСУ – antiaircraft self-propelled mount

ինքնագնաց հրետանային կայանք – самоходная артиллерийская установка, САУ – self-propelled artillery installation

Ինքնագնաց հրետանային հրանոթ՝ մարտում տանկերի և հետևակի անմիջական հրետանային ուղեկցման և աջակցման համար:

հակատանկային հրթիռների արձակման ձեռքի կայանք – ручная установка для запуска противотанковых ракет – medium antitank weapon

շարժիչային կայանք – двигательная установка – propelling system

ռեակտիվ հրետանային կայանք – реактивная артиллерийская установка – multiple rocket launcher, MRL

փոխադրված ինքնագնաց կայանք – տես *արձակում՝ արձակման շարժունակ կայանք*

**կայարան** – вокзал – station

բեռնաթափման կայարան – выгрузочная станция – railhead

Նախանշանակման երկաթուղային կայարան, որտեղ կատարվում է փոխադրվող զորքերի իջեցում կամ բեռնաթափում:

**կայուն** – устойчивый, стойкий – sustainable, durable

**կայունարար** – стабилизатор – 1. stabilizer, balancer, 2. fin

Սարք, հարմարանք՝ որևէ ապարատի, միջոցի (ինքնաթիռ, նավ, սուզանավ, ռումբ, արկ ևն) կայունություն տալու, կայունացնելու համար:

**կայունացում** – стабилизация – stabilization

Որևէ բան կայուն վիճակի բերելը, կայունացնելը:

**կայուն զարգացում** – устойчивое развитие – sustainable development

Փոփոխությունների գործընթաց, երբ բնական պաշարների շահագործումը, ներդրումների ուղղվածությունը, գիտատեխնիկական զարգացման կողմնորոշումը, անձնավորության զարգացումը և հաստատութենական փոփոխությունները ներդաշնակորեն փոխհամաձայնեցված են և ամրապնդում են ներկայիս ու ապագայի ներուժը մարդկանց պահանջունքների և ձգտումների բավարարման համար:

**կայունություն** – 1. устойчивость, 2. стойкость – 1. sustainability, stability, 2. persistency

Համակարգի էական հատկությունների երկարատև պահպանում կա՛մ նրա վրա զգալի բացասական ներգործություն չլինելու հետևանքով, կա՛մ երկար ժամանակաընթացքում նման ներգործությունների նկատմամբ համակարգի հաստատունության ապահովման շնորհիվ:

թիկունքային ապահովման կայունություն – устойчивость тылового обеспечения – logistic sustainment

մարտական կայունության պլանավորման մոդուլ – модуль планирования боевой устойчивости – sustainment planning module

նյարդահոգեկան կայունություն – нервно-психическая устойчивость – mental balance

քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական և միջուկային կայունություն – химическая, биологическая, радиологическая и ядерная устойчивость – chemical, biological, radiological, and nuclear sustain

Ակտիվազերծում և բուժգործունեություն՝ նպատակաուղղված մարտունակության վերականգնմանն ու ռազմական օպերացիայի շարունակմանը:

**«կանաչ բերետներ»** – «зеленые береты» – Green Berets

ԱՄՆ-ի բանակի հատուկ նախանշանակման ուժեր:

**կանաչ-շագանակագույն** – տես *խակի*

**«Կանգ ա՛ն»** – «Стой!» – “Halt”

**կանգառ** – остановка – halt

**կանգաշարժ** – выбег – stopway

**կանգառում** – остановка – stop

**«Կանգնի՛ր»** – «Стоп!» – “Halt!”

**կանխադրություն** – установка – preset

Այն պարամետրների արժեքները, որոնց նախապես բերվում է սարքը գործարկման համար:

**կանխապատրաստում** – инициализация – initalization

Որևէ բանի (սարք, ապարատ, համակարգչային ծրագիր ևն) նախապատրաստում աշխատանքի, սկզբնական պարամետրների որոշում:

**կանխատեսում** – прогнозирование – forecast, forecasting, foresight

Ռազմաքաղաքական իրադրության, ՋՈՒ-ի, ռազմական տեխնիկայի և ռազմարվեստի զարգացման հավանական հեռանկարների որոշում:

կանխատեսում ռազմական գործում – прогнозирование в военном деле – military foresight

Կանխագուշակման տեսակ. ռազմաքաղաքական իրադրության, ՋՈՒ-ի, ռազմական տեխնիկայի և ռազմական արվեստի զարգացման հավանականային հեռանկարների որոշում:

կանխատեսում և գնահատում – прогнозирование и оценка – forecasting and assessment

ռադիացիոն իրադրության կանխատեսման համար քանու ուղղության և ուժի տրամագիր – диаграмма направления и силы ветра для прогнозирования радиационной обстановки – fallout wind vector plot

**կանխարգելիչ** – профилактический – preventive

**կանխարգելում** – профилактика – prophylaxis, prevention

Այն միջոցառումների համալիրը, որոնք նպատակաուղղված են որևէ բանի վիճակի, աշխատունակության, կենսու-

նակության պահպանմանը, վատթարացումից, մաշումից զերծ պահելուն:

**Կանխիչ** – превентивный – preventive

**Կանխում** – предотвращение, предупреждение – prevention

Նախօրոք ծեռնարկված միջոցառումների շնորհիվ սպառնալիքի վերացում, որևէ բանի իրագործման արգելակում, խանգարում:

արտակարգ իրավիճակների կանխում – предупреждение чрезвычайных ситуаций – prevention of emergency situations

Բժշկության և առողջապահության ծառայության ճյուղ, որն ուսումնասիրում է բնական, տեխնածին և մարդածին աղետների բուժսանիտարական հետևանքները, մշակում դրանց վերացման սկզբունքներն ու կազմակերպումը, կազմակերպում և մասնակցում է արտակարգ իրավիճակի շրջանում իրականացվող բուժտարահանումային, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային համալիր միջոցառումներին, ինչպես նաև բուժսանիտարական գույքով ապահովմանը:

հանցագործության կանխում – предотвращение преступления – crime prevention

**Կանոն** – правило, канон – rule, canon, principle

երկու անձանց կանոն – правило двух лиц – two-person rule

Համակարգ, որն արգելում է անհատի՝ միջուկային զենքի կառավարումը. միջուկային զենքի հետ որևէ գործողություն կատարելու համար պահանջվում է առնվազն երկու մարդու մասնակցություն:

**Կանոնագիրք** – 1. տես *կանոնադրություն*, 2. устав, наставление – 1. տես *կանոնադրություն* 1, 2. directions, instructions

կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք – устав гарнизонной и караульной служб – garrison and guard duty regulations, charter of garrison and patrol services

կարգապահական կանոնագիրք – дисциплинарный устав – disciplinary regulations

ներքին ծառայության կանոնագիրք – устав внутренней службы – barracks regulations

Կանոնագիրք, որը սահմանում է զինծառայողների ընդհանուր իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, զնդի (բրիգադի) մակարդակով հրամանատարների (պետերի) և հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները, ինչպես նաև ներքին կանոնակարգի, մարտական հերթապահության (մարտական ծառայության) կազմակերպման ու կրման կանոնները ևն:

**Կանոնադրություն** – устав, положение – 1. military manual, military regulations, 2. manual, regulations

(*ռազմ.*) Պաշտոնական նորմատիվ իրավական փաստաթղթեր, որոնք պարունակում են զորքերի մարտական և ամենօրյա գործունեության վերաբերյալ հիմնական դրույթները, սահմանում են զինծառայողների ընդհանուր ու պաշտոնական պարտականությունները և իրավունքները, նրանց փոխհարաբերությունները, ներքին, կայազորային ու պարեկային ծառայության կարգը և զինվորական ծառայության ու կենցաղի այլ կողմեր, բովանդակում են մարտական գործողությունների նախապատրաստման, վարման ու ապահովման, զորքերի կառավարման, զենքի ու ռազմական տեխնիկայի մարտական կիրառման, ինչպես նաև մարտական պատրաստման հարցերով ղեկավար ցուցումներ:

բաժնի կանոնադրություն – положение об отделе – department regulations

դաշտային կանոնադրություն – տես *կանոնադրություն՝ մարտական կանոնադրություն*

կայազորային ծառայության կանոնադրություն – устав гарнизонной службы – garrison regulations

կարգապահական կանոնադրություն – տես *կանոնագիրք՝ կարգապահական կանոնագիրք*

մարտական կանոնադրություն – боевой устав, полевой устав – field manual, training regulations

ներքին ծառայության կանոնադրություն – տես *կանոնագիրք՝ ներքին ծառայության կանոնագիրք*

շարային կանոնադրություն – строевой устав – 1. drill regulations, 2. drill and ceremonies regulations

պահակային ծառայության կանոնադրություն – устав караульной службы – guard regulations

**կանոնակարգ** – регламент – regulations, rules of procedure, order

1. Գործունեության կարգը կարգավորող կանոններ: 2. ժողովի, նիստի, խորհրդաժողովի, գիտաժողովի վարման կարգը:

**կանոնավոր** – регулярный – regular

ոչ կանոնավոր – нерегулярный, иррегулярный – irregular

**կանոնավորում** – տես *կարգավորում 2*

**կանչ** – вызов, зов – call

Հրավիրելը, հրավեր ուղարկելը, ձայն տալը:

**կաշեգոտի** – տես *գոտի 1*

**կաշեփոկ** – ремень – 1. strap, 2. harness

**կաշկանդում** – сковывание – immobilization

Գործելու՝ շարժվելու՝ մտածելու՝ խոսելու ևն ազատության սահմանափակում:

**կապ** – 1. связь, 2. сношение, взаимоотношение, 3. տես *ժապավեն 2*, 4. отношение, касательство – 1. link, connection, communication, 2. relation, 3. տես *ժապավեն 2*, 4. reference

Ձորքերի (ուժերի) կառավարման ապահովման հիմնական միջոցը, զորքերի (ուժերի) և զենքի կառավարման համակարգերում տեղեկության հաղորդում և ընդունում:

անվտանգ կապ – տես *կապ՝ պաշտպանված կապ*

ավիացիայի հետ գործակցային կապի սպա – офицер связи взаимодействия с авиацией – air liaison officer

բարձրախոս կապ – громкоговорящая связь – loud-speaker communication

գործակցային կապ – связь взаимодействия – liaison

գործակցային կապի աշխատող – сотрудник по связи взаимодействия – liaison officer

գործակցային կապի խումբ – группа связи взаимодействия – ground liaison team  
Վրագետնյա և օդային զորամասերի ու վրագետնյա շտաբի ենթակամների միջև կապի համար պատասխանատու ցամաքային խումբ:

գործակցային կապի համադասման ստորաբաժանում – подразделение координации связи взаимодействия – liaison coordination element

գործակցային կապի մեխանիզմներ – механизмы связи взаимодействия – liaison arrangements

գործակցային կապի սպա – офицер связи взаимодействия – ground liaison officer  
Ցամաքային ուժերի հրամանատարին կից գործող սպա, որն ապահովում է նրա կապը ծովային կամ ավիացիոն աջակցող ուժերի հետ:

լարային կապ – проводная связь – wire, wire-communication

կապեր հասարակայնության հետ – связи с общественностью – public relations, public affairs, public outreach

Հանրության (հասարակայնության) հետ անհատի, կազմակերպության (պետական մարմնի, առևտրային ընկերության, հասարակական կազմակերպության ևն) տեղեկության փոխանակման կառավարում՝ նպատակաուղղված իրենց համար բարենպաստ հասարակական կարծիքի՝ վերաբերմունքի ձևավորմանը:

կապեր քաղաքացիական կազմակերպությունների հետ – связи с гражданскими организациями – civil affairs  
Ռազմական օպերացիայի խնդիրների կատարման համար զինվորական հրամանատարության գործունեությունը՝ նպատակաուղղված իշխանության քաղաքացիական մարմինների, ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների և հասարակայնության հետ կապերի հաստատմանը:

«Կապը կտրվել է» – «Связь потеряна» –  
“Contact lost”

կապի անվտանգության ապահովման միջոցներ – средства обеспечения безопасности связи – communications security material

կապի անվտանգություն – безопасность связи – communications security

կապի արբանյակ – спутник связи – communications satellite

կապի զաղտնիացում – засекречивание связи – scrambling, security classifying

կապի գործող արբանյակ – активный спутник связи – active communications satellite

կապի դաշտային հանգույց – полевой узел связи – field communications center

կապի ընդհանուր օգտագործման ցանց – сеть связи общего пользования – common-user network

կապի ծածուկություն – скрытность связи – signal security

կապի կենտրոն – центр связи – communication center, signals center

Կազմակերպություն, որը սովորաբար պատասխանատու է հաղորդագրությունների կենտրոն, զաղտնագրման կենտրոն, հաղորդող և ընդունող կայաններ ներառող կապի միջոցների աշխատանքի կառավարման ու վերահսկման համար:

կապի համակարգ – система связи – communication system

ԶՈՒ-ում, գորամիավորումում, գորամասում կապի միջոցների և ուժերի միավորում օպերացիայում (մարտում) և առօրյա գործունեության մեջ զորքերը (ուժերը) հուսալիորեն կառավարելու համար:

կապի հանգույց – узел связи – communication center

Կապի օպերատորի այն տեխնիկական միջոցների համախումբը, որոնք ապահովում են կապի ծառայությունների մատուցում և միակցում ընդհանուր օգտագործման ցանցին:

կապի հաստատում – установление связи, установление контактов – contact

կապի հրամանատվական ցանց – командная сеть связи – command net

կապի միջոց – средство связи – communications equipment

կապի մտտոցիկլավար – տես *մտտոցիկլավար տուրհանդակ*

կապի պետ – начальник связи – communications officer, signals officer

կապի ռադիոտեխնիկական միջոցների աշխատանքի ծածուկության ապահովում – обеспечение скрытности работы радиотехнических средств связи – signal security

կապի ռազմական համակարգ – տես *կապ՝ պաշտպանության նախարարության կապի համակարգ*

կապի վրագետնյա գիծ – наземная линия связи – land-line

կապի տեղական ցանց – местная сеть связи – local communications net

կապի ցանց – сеть связи – communications network

կրկնորդվող կապ – дублируемая связь – duplicated connection

հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատող – сотрудник отдела по связям с общественностью – public relations officer

հասարակայնության հետ կապերի հաստատում – установление связей с общественностью – public outreach

Ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության միջոցներից՝ նպատակաուղղված ԶՈՒ-ն հասարակայնության համար բաց՝ թափանցիկ դարձնելուն:

հասարակայնության հետ կապերի ղեկավարում – руководство связями с общественностью – public affairs guidance

հասարակայնության հետ կապի պահպանման միացյալ խումբ – объединенная группа по поддержке связи с общественностью – Joint Public Affairs Support Element



հեռագրային կապ – телеграфная связь – telegraph, telegraph communications

հեռուստակոդային կապ – телекодовая связь – data communications, telecode communications

Երկուական կամ այլ կոդով կոդավորված տեղեկույթի հաղորդում և ընդունում: Նման տեղեկույթը նախատեսված է ԷՀՄ-ով մշակման համար կամ արդեն դրանով մշակված է:

հեռուստաչափական կապ – телеметрическая связь – telemetry link, telemetering communications

հեռուստատեսային կապ – телевизионная связь – television communications

մայրուղային ռադիոռելեային կապ – магистральная радиорелейная связь – the main radio-relay communication

մարտավարական կապ – тактическая связь – tactical communications

ներքին երկկողմ կապի համակարգ – система внутренней двусторонней связи – intercom

պաշտպանված կապ – защищенная связь – secure communications

ռազմավարական կապ – стратегическая связь – strategic communications

ռադիոհեռախոսային կապ – радиотелефонная связь – radiotelephony, wireless telephone communication

ռոկադային կապ – рокадная связь – lateral communications

սուրհանդակավիսուտային կապ – почтовое-фельдъегерская связь – postal-courier communication

տիեզերական կապ – космическая связь – space communication

ցամաքային կապ – сухопутная связь – land communication

օպերատիվ կապ – оперативная связь – operational communication

**կապալ** – подряд – contract

զլխավոր կապալ – генеральный подряд – prime contract

կապալով կազմակերպվող թիկունքային ապահովման վերաբերյալ հավելվածներ – приложения о тыловом обеспечении, организуемом по подряду – contracting support annexes

Օպերացիայի պլանի հավելված, որը վերաբերում է մատակարարների միջոցով կատարվող նյութատեխնիկական ապահովմանը:

**կապալառու** – 1. подрядчик, 2. подрядный – 1. contractor, 2. contracting

զլխավոր կապալառու – генеральный подрядчик – prime contractor

կապալառու կազմակերպության ղեկավար – руководитель подрядной организации – head of contracting activity

Պայմանագրի պայմանների կատարման համար պատասխանատու պաշտոնյա:

կապալառուների կառավարում – управление подрядчиками – contractor management

կապալառուների ներկայացուցիչներ, որոնք լիազորված են ուղեկցելու զորքին – представители подрядчика, уполномоченные сопровождать войска – contractors authorized to accompany the force

կապալառուների ներկայացուցիչներ, որոնք լիազորված չեն ուղեկցելու զորքին – представители подрядчика, не уполномоченные сопровождать войска – contractors not authorized to accompany the force

**կապակցում** – привязка – connection

Որևէ բանի հարաբերակցում՝ պայմանավորում մեկ այլ բանով, դրա պարամետրների՝ բնութագրիչների որոշում ըստ մեկ այլ բանի պարամետրների:

լուսանկարչական կապակցում – фотограмметрическая привязка – photogrammetric control

**կապան** – տես *նեղոց*

**կապաշար** – տես *տրցակ*

**կապավոր** – связист – signaler, signalman  
ՋՈՒ-ի կապի համակարգում ծառայող զինվորական:

**կապիտալ** – 1. капитал, 2. տես *հիմնական* – 1. capital, equity, 2. տես *հիմնական*

բաժնետիրական կապիտալ – акционерный капитал – stock, storage, supply

կապիտալի արտահոսք – տես *դրամական միջոցների ելք*

**կապիտալիզմ** – капитализм – capitalism  
Հակադարձ կոնի ձև ունեցող տարածություն, որը գտնվում է անմիջականորեն որոշ տեսակների ռադիոփարոսների վերևում, և որում այդ ռադիոփարոսի ազդանշանները լսելի չեն կամ թույլ լսելի են:

**կոնապտույտ** – прецессия – precession

թվացյալ կոնապտույտ – кажущаяся прецессия – apparent precession

**կոնվենցիա** – конвенция – convention

Միջազգային պայմանագրի տեսակ:

ռազմական կոնվենցիա – военная конвенция – military convention

ծովային կոնվենցիա – морская конвенция – sea convention

Ռազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի չկիրառելու մասին կոնվենցիա – Конвенция о неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества – Convention on the Non-Applicability of Statutory Limitation to War Crimes and Crimes against Humanity

**կոնվերտոպլան** – конвертоплан – tilt rotor aircraft

Ռոտորաձիգ վերթիռով ինքնաթիռ:

**կոնտուզիա** – контузия – concussion, contusion, shell shock

**կոորդինատներ** – координаты – coordinates

աշխարհագրական կոորդինատներ – географические координаты – geographic coordinates

աշխարհագրական կոորդինատների համաշխարհային համակարգ – всемирная система географических координат – World Geographic Reference system, georef

բևեռային կոորդինատներ – полярные координаты – polar coordinates

բևեռային կոորդինատներով տեղանշում – տես *բևեռային տրամագիծ*

դեկարտյան կոորդինատներ – տես *կորդորդինատներ՝ ուղղանկյուն կոորդինատներ*

կոորդինատների պայմանական ելքային սկզբնակետ – условная исходная точка начала координат – false origin

ուղղանկյուն կոորդինատներ – прямоугольные координаты, декартовы координаты – cartesian coordinates

ուղղանկյուն կոորդինատների համակարգ – система прямоугольных координат – grid coordinate system

ուղղանկյուն կոորդինատների ռազմագիտական համակարգ – военная система прямоугольных координат – military grid reference system

ուղղորդիչ կոորդինատներ – направляющие координаты – polar coordinates

1. Երկչափանի կոորդինատային համակարգ, որում հարթության վրա յուրաքանչյուր կետի տեղադրությունը որոշվում է երկու արժեքներով՝ բևեռային անկյունով և բևեռային շառավղով:
2. Դիտորդից (ճշտորդից) մինչև թիրախ եղած հեռավորությունը, ուղղությունը և ուղղաձիգ ուղղումը:

**կոչ** – 1. призыв, 2. տես *կանչ* – 1. appeal, call, 2. տես *կանչ*

1. Հրավեր, կանչ: 2. Ջանգվածներին ուղղված զրավոր կամ բանավոր դիմում, հորդոր:

**կոչնակ** – տես *ռադիոկանչ*

հիմնական կոչնակ – տես *հիմնական պայմանական*

**կոչում** – звание, чин – rank

1. Պաշտոնապես շնորհվող անվանում, որ բնորոշում է գործունեության որևէ բնագավառի կամ պաշտոնական դիրքի որակավորումը: 2. Այս կամ այն ծառայության համար տրվող պատվավոր անվանում, պարգևատրության ու խրախուսանքի ձևերից մեկը:

ավագ սպայական կոչում – старшее офицерское звание – field rank

- Ցանկացած կոչում, որը բարձր է կապիտանից և ցածր գեներալից:

արտահերթ կոչում (առանց դրույքի փոփոխման) – внеочередное звание – brevet

զինվորական կոչման վաղաժամկետ շնորհում – досрочное присвоение воинского звания – accelerated promotion

կոչման բարձրացում – повышение в звании, присвоение очередного воинского звания – promotion

կոչման իջեցում – понижение в звании – demotion

հերթական զինվորական կոչման շնորհում – տես *կոչում՝ կոչման բարձրացում*

պատվավոր կոչում – почетное звание – honorary title

սպայական կոչում – звание офицера, офицерский чин – commission

ցածր կոչումներ – младшие звания – junior ranks

**կոռնետ** – корнет – cornet

Հեծելազորային գնդի կրտսեր լեյտենանտ:

**կոտորած** – резня, бойня – massacre

**կոտորակ** – дробь – shot

**կոտորակառումբ** – шрапнель – shrapnel

**կորդիտ** – кордит, бездымный порох – cordite, smokeless powder

**կործանել** – губить – destroy

**կործանիչ** – 1. истребитель, 2. истребительный – 1. fighter, 2. exterminatory

1. Հակառակորդի թռչող սպարաուներն օդում ոչնչացնելու համար նախատեսված մարտական ինքնաթիռ, օգտագործվում է նաև վրագետնյա նշանակետերի խոցման և օդային հետախուզության համար: 2. Կործանիչի գործառնությունները վերաբերող, կործանող:

գրոհային կործանիչ – истребитель-штурмовик – ground-attack fighter

լավ եղանակի շուրջօրյա կործանիչ – круглосуточный истребитель, действующий при хорошей погоде – clear weather air defense fighter



կործանիչների կառավարման օպերատոր – оператор управления истребителями – fighter controller

Օդային երթևեկության հրահանգիչ, որն զբաղվում է կործանիչ ինքնաթիռների գործողությունների կարգավորմամբ:

կործանիչին ուղղորդող թռչող ապարատ – летательный аппарат – корректировщик истребителя – fighter direction aircraft

կործանիչների գրոհ վրագետնյա նշանակետի վրա – атака истребителей на наземную цель – fighter ground-attack

կործանիչների պահպանախումբ – эскорт истребителей – fighter escort

կործանիչների՝ վրագետնյա նշանակետերի որոնման ու ոչնչացման գործողություններ – действия истребителей по поиску и уничтожению наземных целей – fighter sweep

կործանիչներով ծածկապաշտպանություն – прикрытие истребителями – fighter cover

Որոշակի տարածքի պաշտպանություն՝ հակառակորդի օդային գործողությունները կործանիչ ինքնաթիռներով հետ մղելու նպատակով:

հակաօդային պաշտպանության ամենեղանակյա կործանիչ – всепогодный истребитель противовоздушной обороны – all weather air defense fighter

Կործանիչ ինքնաթիռ այնպիսի սարքավորանքով ու զենքով, որոնք հնարավորություն են տալիս օդային մարտին մասնակցելու՝ անկախ եղանակային պայմաններից կամ օրվա ժամից:

հեռահար ծածկապաշտպանության կործանիչներ – տես *պարբեկ՝ մարտական արգելապատնեշային օդային պարբեկ*

մարտավարական կործանիչ – тактический истребитель – tactical fighter

միսեղանի կործանիչ – одноместный истребитель – single-place fighter, single-seat aircraft

որսիչ կործանիչ – истребитель-перехватчик – interceptor, fighter interceptor

ռազմաձակատային կործանիչ – фронтовой истребитель – front-line fighter

ռեակտիվ կործանիչ – реактивный истребитель – jet fighter

տակտիկական կործանիչ – տես *կործանիչ՝ մարտավարական կործանիչ*

ցերեկային կործանիչ – дневной истребитель – day air defense fighter

Կործանիչ ինքնաթիռ, որը զինված է այնպիսի սարքավորանքով, որ կարող է մարտի մեջ մտնել միայն ցերեկային լույսով, այն էլ եղանակի լավ տեսանելիության պայմաններում:

**կործանում** – гибель, падение, завоевание – fall, downfall

**կորպուս** – корпус – corps

Օպերատիվ-մարտավարական (բարձրագույն մարտավարական) զորամիավորում, շատ պետություններում ընդունված՝ օպերատիվ օդակում զորքերի կազմակերպման ձև, կարող է մտնել ավելի խոշոր միավորումների կազմի մեջ կամ լինել առանձին:

բանակային կորպուս – армейский корпус – army corps

կորպուսի թիկունքային ծառայություն – тыловая служба корпуса – corps support command

կորպուսին լրակցված զորք – приданные корпусу войска – corps troops

Հայկական բանակային կորպուս – Армянский армейский корпус – Armenian army corps

Հայկական զինված կազմավորում (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. օգոստոս), որի ստորաբաժանումները թուրքերի դեմ կռիվներում հատկապես աչքի են ընկել 1918 թ. Մայիսյան հերոսամարտերում (Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա):

տանկային կորպուս – танковый корпус – tank corps

օդատիեզերական ռազմարշավային կորպուս – аэрокосмический экспедиционный корпус – air and space expeditionary task force

«**Կորսար**» – «Корсар» – «Corsair»

Էյ-7 ամերիկյան գրոհիչ օդանավ (բռց. «Շովախեն»):



**կորվետ** – корвет – corvette

**կորուստ** – 1. потеря, 2. տես *վնաս 1* – 1. loss, 2. casualty, 3. տես *վնաս 1*

Պատերազմի (ռազմական հակամարտության) հետևանքով ընդդիմամարտող կողմերի կրած վնասները:

անդառնալի կորուստ – безвозвратная потеря – permanent loss, irretrievable loss  
Մարտունակությունն ընդմիջտ կորցրած զինծառայողները, վերականգնման ոչ ենթակա ՍՈՏ-ն և այլ նյութատեխնիկական արժեքներ:

ժամանակավոր կորուստ – временная потеря – temporary loss

1. Կիրավորվածության (հիվանդության) պատճառով արձակուրդ (պահեստազոր) արձակվածներ: 2. Որևէ հատկությունից (տեսողություն, հիշողություն, մածուցիկություն, հոսունություն ևն) ժամանակավոր զրկում:

մարտական կորուստ – боевая потеря – combat loss

Անմիջականորեն մարտական գործողությունների հետևանքով առաջացած կորուստներ:

մարտում կրած կորուստի համալրում – восполнение потери в бою – battle casualty replacement

Ճակատամարտում վիրավորված կամ սպանված զինվորին փոխարինում մեկ այլ զինվորով:

**կորուստներ** – потери – 1. casualties, 2. attrition

զանգվածային կորուստներ – массовые потери – mass casualty

կորուստների մակարդակ – уровень потерь – casualty rate

կորուստների տոկոս – процент потерь – attrition rate

կորուստների ցուցակ – список потерь – list of casualties

մարտական կորուստներ – боевые потери – combat losses, battle casualties, attrition

Մարտական գործողությունների ժամանակ կամ դրանց հետևանքով շարքից դուրս եկած (սպանված, մահացած կամ վիրավորված) զինծառայողներ:

մարտում կրած կորուստներ – 1. потери в бою, 2. տես *կորուստ` մարտական կորուստներ* – 1. losses in battle, battle casualty, 2. տես *կորուստ` մարտական կորուստներ*

Մարդկային, ինչպես նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների կորուստները մարտական գործողությունների ժամանակ կամ դրանց հետևանքով:

ոչ մարտական կորուստներ – небоевые потери – nonbattle casualties

Ոչ մարտական իրադրություններում առաջացած կորուստներ:

պատերազմական կորուստներ – տես *կորուստ` ռազմական կորուստներ*

ռազմական կորուստներ – военные потери – war losses, military losses

սանիտարական կորուստներ – санитарные потери – temporary casualties

Անձնակազմի ժամանակավոր (վերադառնալի, վերականգնելի) կորուստներ հիվանդությունների կամ վիրավորումների հետևանքով, որոնցից ապաքինվելով` զինծառայողները կարող են շարք վերադառնալ:

ուղեկից կորուստներ – сопутствующие потери – collateral damage

Ուղեկից գործողությունների ժամանակ սպանված կամ վիրավորված քաղաքացիական անձիք:

**կոփում էլեկտրամագնիսական ազդեցության նկատմամբ** – электромагнитная закалка – electromagnetic hardening

Էլեկտրամագնիսական էներգիայի ազդեցության անցանկալի հետևանքներից զորքի, կառույցների, սարքավորանքի ևն պաշտպանությանն ուղղված քայլերի համալիր:

**կտտանք** – տես *խոշտանգում*

**կտրում** – отрезание – cut off

«Կրա՛կ» – «Огонь!» – «Fire!»

Հրաձգություն սկսելու հրաման:

**կրակ** – огонь – fire

1. Այրվող նյութի` առարկայի շուրջը շիկացած գազերը, բոց, հուր: 2. Հրա-

ծգություն: 3. Հրդեհ: 4. Լուսավորություն, լույս:

անընդհատ կրակ – непрерывный огонь – sustained fire, continuous fire

Հրածգություն, որը կատարվում է հնարավորինս կարճ ժամանակամիջոցներում՝ գրեթե զենքի արագագործությամբ:

անհանգստացնող կրակ – беспокоящий огонь – harassing fire, disturbing fire

Դանդաղ տեմպով և սահմանափակ թվով կրակային միջոցներով ու զինամթերքով վարվող հրածգություն, որի նպատակն է հյուծել հակառակորդին:

անշարժ արգելապատնեշային կրակ – неподвижный заградительный огонь – final protective fire, FPF

Հրետանու կրակի տեսակ. նախապես որոշված, դիտակետից ամփոջականորեն դիտվող բնագծերում մեծ խտությամբ կրակապատնեշի ստեղծում՝ հակառակորդի հետևակի և/կամ տանկերի գրոհը (հակագրոհը) հետ մղելու նպատակով:

ապակենտրոնացված կրակ – распределенный огонь – distributed fire

ավերիչ կրակ – огонь на разрушение – destruction fire

արգելապատնեշային կրակ – заградительный огонь, огневая завеса – barrage fire, blocking fire

Հրետանու և հրածգային զենքի հրածգության տեսակ. հարձակվող տանկերի և հրետանու, տորպեդանավակների, ծովային դեսանտի ափհանիչ միջոցների շարժվող ալիքների կամ հակառակորդի թռչող ապարատների ճանապարհին արկերի պայթյուններով, թափվող գնդակներով մեկ կամ միաժամանակ մի քանի բնագծերում ստեղծված կրակի պատնեշ, որը լինում է անշարժ կամ շարժական:

արգելիչ կրակ – 1. огонь на воспреещение, 2. տես *կրակ նախազգուշացնող կրակ* – 1. interdiction fire, 2. տես *կրակ նախազգուշացնող կրակ*

Կրակ, որը արձակվում է որևէ գոտու կամ կետի վրա, որպեսզի հակառակորդը չկարողանա գրավել այդ գոտին կամ կետը:

գնդացրային կրակ – пулеметный огонь – machine gun fire

«Ղադարեցնել կրակը» – «Прекратить огонь!» – 1. “Check firing!”, “Cease fire!”, 2. “Hold fire!”

1. Հրածիզների, հրետանու կրակը դադարեցնելու հրաման: 2. ՀՕՊ-ում. կրակը դադարեցնելու հանկարծակի հրաման: Ընդամին արդեն արձակված հրթիռները պետք է որսալ (եթե տեխնիկապես հնարավոր է):

դաշունային կրակ – кинжальный огонь – close range fire, short range fire, raking fire

Գնդացիրներից, առանձին հրանոթներից, ՀՄՄ-ներից կամ տանկերից մոտ տարածության վրա հանկարծակի արձակված կրակ:

դիմահար կրակի հեռավորություն – տես *հրածգություն՝ ուղիղ նշանառությամբ հրածգության հեռավորություն*

դիպուկ կրակ – меткий огонь – adjusted fire

դիպուկահարական կրակ – снайперский огонь – sniper fire

երկայնական կրակ – продольный огонь, анфиладный огонь – 1. enfilade fire, 2. raking fire

1. Հրածգություն որևէ օբյեկտի՝ թիրախի (ինչպիսին է, օրինակ, հակառակորդի զորային շարասյունը) երկայնքով: 2. Հրածգություն հակառակորդի նավի երկայնքով:

զենիթային կրակ – зенитный огонь – flak

ընդհատ կրակ – прерывистый огонь – intermittent fire

թևային կրակ – фланговый огонь – flanking fire

Նշանակետի (հակառակորդի մարտավարգի) թևերին բացված կրակ:

լուսավորող կրակ – осветительный огонь – illumination fire

խաչաձև կրակ – перекрестный огонь – crossfire, interlocking arcs of fire

Մի նշանակետի վրա առնվազն երկու ուղղություններից վարվող կրակ:

խափանարար կրակ – обездвживающий огонь – disabling fire

Նավի՝ մեքենայի վրա ուղղված հրետանային կրակ, որի նպատակն է դրանց շարժիչը շարքից հանել՝ հնարավորինս քիչ վնաս տալով:

խոցելու կրակ – տես *կրակ՝ խոցիչ կրակ*

խոցիչ կրակ – огонь на поражение, стрельба на поражение – fire for effect, hit to kill

1. Կրակի տեսակ, որը կիրառվում է նշանակետը (թիրախը) ոչնչացնելու նպատակով. զինված պայքարի՝ ինքնապաշտպանության ծայրահեղ ձև, նշանառվական կրակ, երբ անձնական կամ շրջապատի անվտանգության համար անհրաժեշտ է ոչնչացնել հակառակորդին: Որպես կանոն՝ կրակակոծվում են կենսականորեն կարևոր կետերը: 2. Որսիչ հրթիռի հատկություն՝ մարտագլխիկը ոչնչացնելու ի հաշիվ կինետիկ էներգիայի:

«խոցիչ կրակ» – «Огонь на поражение!» – “Fire for effect”, “Shoot to kill!”

Հրաման, որը նշանակում է, որ նշանառությունը բավարար մակարդակի է, և պետք է կրակել՝ նշանակետը խոցելու (ոչնչացնելու) համար:

խոցիչ կրակի ուսումնամարտեցում – обучение стрельбе на поражение – shoot-to-kill training

ծածկապաշտպանական կրակ – огневое прикрытие – covering fire

Հրետանու և այլ միջոցների կրակով ստորաբաժանումների գործողություններին աջակցության, ինչպես նաև զորաթևերի և զորքերի կցատեղերի պաշտպանության եղանակ:

ծածկապաշտպանություն կրակով – տես *կրակ՝ ծածկապաշտպանական կրակ*

կենտրոնացված կրակ – сосредоточенный огонь – concentrated fire

1. Հրետանային կրակի տեսակ, երբ մի կամ մի խումբ նշանակետերի վրա կրակում են միաժամանակ մի քանի մարտկոց, դիվիզիոն կամ նավեր: 2. Հրազենային զենքի կրակի տեսակ, երբ մեկ կամ մի քանի նշանակետի վրա միաժամանակ կրակ են արձակում մի քանի զնդացրով, նռնակա-

նետներով, մեկ կամ մի քանի դասակ (վաշտ):

կրակ ավտոմատ զենքից – огонь из автоматического оружия – automatic fire

կրակ բացելու թույլտվություն – разрешение на открытие огня – engagement authority

Ըստ նախապես համաձայնեցված և թույլտրված կանոնների, ընթացակարգերի և պայմանների զենք ու ռադիոէլեկտրոնային միջոցներ կիրառելու թույլտվություն:

կրակ բացելու թույլտվություն տալու լիազորություն – полномочие дать открытие огня – engagement authority

Լիազորություն, որը տալիս է միացյալ ուժերի հրամանատարը ենթակա հրամանատարին՝ մարտն սկսելու հրամանը կայացնելու համար:

կրակ բացելու հրաման – приказ на открытие огня – initial fire request, initial fire order

կրակ դիտումով – տես *կրակ՝ ճշգրտելի կրակ*

կրակի անարգել բացում – свободное открытие огня – weapons free

Օդային պաշտպանությունում. հրաման, ըստ որի՝ զենքերը կարող են կիրառվել ցանկացած թիրախի նկատմամբ, եթե հստակ կերպով պարզված չէ, որ այն յուրային է:

կրակի բանելակարգ – режим огня – fire mode, rate of fire

Կրակի վարման որոշակի ժամանակամիջոցում հրազենից կատարվող կրակոցների այն առավելագույն թույլատրելի թիվը, որի դեպքում զենքի նյութական մասը, հրաձգության ճշգրտությունն ու անվտանգությունը որևէ կորուստ չեն կրում:

կրակի բացման արգելում – запрещение открытия огня – weapons hold

ՀՕՊ-ում. մարտական միջոցների կառավարման հրաման, որով դրանց գործարկումը թույլատրվում է միայն ինքնապաշտպանության նպատակով կամ համապատասխան հրամանով:

կրակի բացման սահմանափակում – ограничение открытия огня – weapons tight

Օդային պաշտպանությունում. մարտական միջոցների կառավարման հրաման, որով դրանք կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ թիրախը որոշարկվել է որպես հակառակորդին պատկանող:

կրակի դադարեցում – прекращение огня – cease fire

Սահմանված ձևի հրամանով հրաձգության դադարեցում զորավարժարաններում, հրաձգարաններում, մարտի դաշտում ևն:

կրակի դիտում – огневое наблюдение, наблюдение за огнем – surveillance of fire

Կրակային ասպատակությունների միջև վարվող հրետակոծություն, որի նպատակն է կասեցնել նշանակետերի գործունեության վերսկսումը:

կրակի երկար ժամանակ պահպանվող տեմպ – выдерживаемый длительное время темп стрельбы – sustained rate of fire

կրակի կառավարման գորահրաման – команда управления огнем – fire control order

կրակի կառավարման կետ – пункт управления огнем – fire direction center

Հրամանատարական կետի բաժին, որը բաղկացած է հրետանավորներից, կապի անձնակազմից ու սարքավորանքից, և որի միջոցով հրամանատարը կատարում է կրակի ուղղորդում կամ վերահսկում: Կենտրոնը ժամանակին և արդյունավետ կերպով ապահովում է կրակի մարտավարական ու տեխնիկական կառավարում՝ որպես աջակցություն ընթացող օպերացիային:

կրակի կառավարման համակարգ – система управления огнем – fire-control system

Տեխնիկական միջոցների ու տվիչների համալիրը միավորող ավտոմատացված համակարգ, որն ապահովում է նշանակետերի որոնում, հայտնաբերում ու որոշարկում, սպառազինության նախապատրաստում հրաձգության, դրան ուղղորդում և նշանակետի խցման խնդրի լուծում:

կրակի կառավարման ռադիոտեղորոշումային կայան – РЛС управления огнем – fire control radar

կրակի կառավարում – управление огнем – fire control

կրակի համադասման շրջան – зона координации огня, район координации огня – fire coordination area

կրակի համադասում – огневая связь – coordination of fire

Մարտում հարևան ստորաբաժանումների կամ կրակային միջոցների փոխադարձ կրակային աջակցություն:

կրակի համակարգ – система огня – fire system, fire plan

Պաշտպանության կազմակերպման (կառուցման) տարր. համաձայն պաշտպանական մարտի մտահղացման՝ բոլոր տեսակների սովորական զենքի տեղաբաշխում ու կիրառում՝ հակառակորդին պաշտպանության մատույցներում, առջևի գծի առջև, զորաթևերում և պաշտպանության մեջ մխրձման ժամանակ արդյունավետ ու համադասված կերպով խոցելու համար:

կրակի հաջորդական կենտրոնացում – последовательное сосредоточение огня – successive concentration

կրակի հաջորդական կենտրոնացման բնագիծ – рубеж последовательного сосредоточения огня – line of progressive fire concentration

Տեղանքում պայմանական գիծ, որն անցնում է հենակետերով, հակատանկային միջոցներով, կառավարման կետերով և այլ նշանակետերով (օբյեկտներով), որոնց ուղղությամբ կրակի հաջորդական կենտրոնացման համակարգում կատարվում է հրետակոծում փողային հրետանիով և ակնանետներով:

կրակի ճշգրտման կապի ցանց – сеть связи корректирования огня – spot net

Առանձին տեսակի մասնագիտացված կապ:

կրակի ճշգրտում – корректирование огня, корректировка стрельбы – spotting, adjustment of fire, fire adjustment

կրակի ճշտորդ – коррективный огонь – spotter

Հատուկ նշանակված զինծառայող, որը տեղանքի վրա (որևէ բարձրադիր կետից) կամ թռչող ապարատից կատարում է հակառակորդի հրետանային հետախուզում, նշանավորման ու խոցիչ կրակի վարման ժամանակ ռադիոկապով ճշգրտում է կրակը, հետևում է յուրային զորքերի գործողություններին:

կրակի պլանային աղյուսակ – плановая таблица огня – schedule of fire

կրակի պլանավորում – планирование огня – fire plan

Ներառում է՝ կրակային խնդրի ծավալների որոշում, կրակային հնարավորությունների գնահատում, ստորաբաժանումների միջև խնդիրների բաշխում, դրանց կատարման հաջորդականության ու մեթոդների որոշում, անհրաժեշտ փաստաթղթերի մշակում, ինչի նպատակն է՝ ապահովել ստորաբաժանման (զորամասի) հրազենի կիրառման համադասվածությունն ու արդյունավետությունը:

կրակի ռադիոտեղորոշումային կառավարում – радиолокационное управление огнем – radar fire control

կրակի սահմանափակման բնագիծ – рубеж ограничения огня – restrictive fire line

Միմյանց մոտեցող բարեկամական ուժերի միջև հաստատված գոտի, որտեղ զոհերից խուսափելու համար կրակակոծությունն արգելված է:

կրակի սահմանափակ վարման շրջան – зона ограниченного ведения огня – restrictive fire area

կրակի սահմանափակ վարման պլան – план ограниченного ведения огня – restrictive fire plan

կրակի վարման կարգ – порядок ведения огня – rules for engagement

կրակի վարման հայտագիր – заявка по ведению огня – call for fire

կրակի տարաբաշխում – распределение огня, рассредоточение огня – fire distribution, fire coordination

կրակի տարաշարժում – маневр огнем, огневой маневр – maneuver by fire

կրակի տեղափոխում – перенос огня, перемещение огня – transfer of fire, shifting of fire

1. Մի նշանակետի վրա վարվող կրակի դադարեցում և մեկ այլ նշանակետի կրակակոծում՝ առանց կրակային դիրքը փոխելու: 2. Խոցիչ կրակ վարելու համար նախադրումների որոշման մեթոդ. տվյալների որոշում հենանիշներով նշանավորմամբ կամ որևէ այլ նշանակետի կրակակոծմամբ: 3. Տեղափոխում՝ հեռավորության անփոփոխության պայմանով, որպեսզի նշանակետը կրակակոծման ենթարկվի ամբողջ լայնությամբ, եթե այն այնքան մեծ է, որ ցրմամբ դա չի ապահովվում:

կրակի քարտ – карточка огня – fire capabilities chart

Գրաֆիկական փաստաթուղթ, որում հրամանատարը նշում է բոլոր կողմնորոշիչները և կրակային միջոցից դրանց հեռավորությունը (մետրերով կամ նըշանոցի բաժանումներով), ինչպես նաև ուղղությունը (հյուսիս-հարավ):

կրակ՝ հարձակման բնագծից – огонь с рубежа атаки – assault fire

կրակ փակ դիրքերից – огонь с закрытых позиций, стрельба с закрытых позиций – indirect fire

Հրածգություն, որի ժամանակ կրակային միջոցները կրակակոծում են անմիջականորեն չերևացող նշանակետերը:

հակամարտկոցային կրակ – контрбатареиный огонь – counterbattery fire

Հրետանային կրակ հակառակորդի կրակային դիրքերը ճնշելու համար:

հակառակորդի ազդու կրակ – տես *կրակ՝ հակառակորդի արդյունավետ կրակ*

Հակառակորդի արդյունավետ կրակ/զնդակոծություն, որից շատ զոհեր են լինում:

հակառակորդի արդյունավետ կրակ – эффективный огонь противника, действительный огонь противника – effective enemy fire

հաճախաձիգ կրակ – беглый огонь – running fire

Ստորաբաժանման (մարտկոց, դիվիզիոն ևն) հրետանային կրակի խտության մեծացման եղանակ, երբ հրանոթները կրակում են ոչ թե միասին՝ համազարկով, այլ առանձին-առանձին՝ ըստ պատրաստության, կիրառվում է գերազանցապես կրակային ասպատակումների և մարտի դաշտում մեծ շարժունակությամբ ու լավ պաշտպանված նշանակետերի (տանկեր ևն) ճնշման ժամանակ:

հաճախարձակ կրակ – частый огонь – rapid fire

Անընդհատ իրար հաջորդող կրակոցներ:

համադասված լուսավորիչ կրակ – координированный огонь на освещение – coordinated illumination fire

Խոցիչ կրակ վարելու համար փոխհամաձայնեցված հրաձգություն լուսավորիչ և մարտական արկերով:

համազարկային կրակ – залповый огонь – volley fire, salvo fire

Հրետանային կրակ, որի դեպքում հրաձգության համար նշանակված բոլոր հրանոթները կրակ են արձակում միաժամանակ՝ նույն հրամանով:

համազարկային կրակի ռեակտիվ համակարգ – реактивная система залпового огня, РСЗО – multiple launch rocket system, MLRS

Սպառազինության համալիր, որը ներառում է բազմալիցք արձակման կայանք և ռեակտիվ արկեր (չկառավարվող հրթիռներ, ռեակտիվ խորթային ռումբեր), ինչպես նաև օժանդակ միջոցներ (փոխադրիչ կամ փոխադրիչ-լիցքավորող մեքենա ևն):

համատեղ կրակ – совместный огонь – joint fires

Կրակ, որը համադասված գործողությունների ժամանակ ուժերի գործարկման ընթացքում վարում են երկու կամ ավելի բաղադրատարր՝ հաջողության ապահովման նպատակով ցանկալի ազդեցություն գործելու համար:

համատեղ կրակի ճշտորդ – корректировщик совместного огня – joint fires observer

հանդիպական կրակ – встречный огонь – counterfire

Հակառակորդի կրակին ի պատասխան արձակվող կրակ:

հաջորդական կրակ – методический огонь – deliberate fire, continuous fire

Հրաձգության տեսակ, երբ հրամանից հետո յուրաքանչյուր կրակոց կատարվում է հավասար ժամանակամիջոցներով:

հավերժ կրակ – вечный огонь – eternal flame

Ջոհված հերոսների և նրանց գործած սխրանքների մասին հուշը հավերժացնող խորհրդանշան:

հրնթացս կրակ – огонь с ходу – assault fire

հոծ կրակ – 1. массированный огонь, 2. տես *հրդեհ՝ մեծ հրդեհ* – 1. massed fire, 2. տես *հրդեհ՝ մեծ հրդեհ*

Հրետանային կրակի տեսակ. այն միաժամանակ վարում են համազորային զորամիավորման կամ նավախմբի բոլոր հրանոթները կամ դրանց մեծ մասը՝ հակառակորդի մեկ կամ մի քանի օբյեկտները (փոքր մակերեսով տարածքը) կարճ ժամանակում վճռակա՛նապես խոցելու նպատակով:

հրասանդային կրակ – мортирная стрельба – high angle fire

Հրաձգություն, որը կատարվում է բարձրացման մեծ՝ 45°-ից ավելի, անկյուններով:

հրետանային կրակ – артиллерийский огонь – artillery fire, shellfire

հրետանային կրակի կանչում – вызов артиллерийского огня – call for fire

ճակատային կրակ – фронтальный огонь – frontal fire

Կրակի տեսակ, երբ կրակային միջոցները կրակ են վարում նշանակետի (հակառակորդի մարտակարգի) ճակատին ուղղահայաց ուղղությամբ:

ճնշիչ կրակ – огонь на подавление, подавляющий огонь – suppression fire, neutralization fire

ձշգրիտ կրակ – точный огонь – adjusted fire

ձշգրտելի կրակ – корректируемый огонь, огонь с наблюдением – observed fire

յուրախոցիչ կրակ – огонь по своим – friendly fire

Թյուրիմացաբար յուրային զորքի կամ տեխնիկայի կրակակոծում:

նախազգուշացնող կրակ – предупредительный огонь, огонь на воспреещение – nondisabling fire

Կրակ, որը խոչընդոտում է հակառակորդի մոտենալուն՝ առանց նրան կորուստներ պատճառելու:

նշանակործիչ կրակ – տես *նշանակործում*

նշանակործված կրակ – пристрелянный огонь – adjusted fire

շարժական արգելապատնեշային կրակ – подвижный заградительный огонь, ПЗО – creeping barrage

չերևացող նշանակետերի կրակակոծում – огонь по ненаблюдаемым целям – unobserved fire

Կրակ, որի ժամանակ պայթյունները կամ խոցման կետերը չեն երևում:

պատասխան կրակ – ответный огонь – return fire

Հակառակորդի ձեռնարկած կրակակոծմանն ի պատասխան կատարվող հրաձգություն:

պլանային կրակ – плановый огонь – prearranged fire, scheduled fire

Կրակ, որը տրված ժամանակահատվածում արձակվում է տրված նշանակետերի վրա:

ուղիղ նշանառությամբ ավերիչ կրակ – огонь на разрушение прямой наводкой – assault fire

ուղիղ նշանառությամբ կրակ – огонь прямой наводкой – direct fire

Հակատանկային հրետանու, տանկերի, ՀՄՄ-ների, ուղղաթիռների, զրահամարտանավակների կրակի վարման հիմնական եղանակը, երբ բաց դիրքից հրանոթն ուղղորդվում է անմիջականորեն նշանակետի վրա:

օժանդակ նավային կրակ – вспомогательный корабельный огонь – continuous fire  
Նավերի կրակային աջակցության հրաձգություն:

օժանդակ պաշտպանական կրակ – вспомогательный оборонительный огонь – defensive fire

**կրակաբաշխում** – огонь по площади – distribution

Կրակի պլանաչափ բաշխում՝ նշված մակերեսը ձակատող կամ խորությամբ վերածածկելու համար:

**կրակախոցել** – застрелить – shoot

Հրազենով սպանել կամ վիրավորել:

**կրակակետ** – огневая точка – weapons emplacement

Հատուկ սարքավորված կամ հարմարեցված դիրքում տեղադրված կրակային միջոցի (հրետանային, հրաձգային ևն) պայմանական անվանումը:

գնդացրային կրակակետ – пулеметная огневая точка – machine gun nest

**կրակակոծել մեկ առ մեկ** – перестрелять – pick off

**կրակակոծություն** – 1. обстрел, 2. տես *հրաձգություն* – 1. fire, firing, 2. տես *հրաձգություն*

Միևնույն նշանակետի, օբյեկտի վրա հրաձգային զենքով, հրետանիով, հրթիռներով, ավիացիայով և այլ կրակային միջոցներով կրակ տեղալը:

կրակային միջոցների ճնշմանն ուղղված կրակակոծություն – огонь на подавление огневых средств – counterfire

Հրետանու (ակնանետների) կամ այլ միջոցների կրակով հակառակորդի կրակակետերի ճնշում կամ ոչնչացում:

**կրակակոծում** – տես *կրակակոծություն*

երկարատև կրակակոծում – длительный обстрел – sustained fire

խուզաթռիչքային կրակակոծում – обстрел с бреющего полета – strafing

Խուզաթռիչք կատարող ինքնաթիռից վրազետնյա նշանակետերի գնդակոծում հրազենով:

կրակակոծման գոտի – зона обстрела – sector of fire



Տեղանքի հատված, որը նշանակվում է կրակային միջոցներով (հրանոթ, զնդացիր, տանկ, ՀՄՄ, նռնականետ ևն) հակառակորդին ուղիղ նշանառությամբ խոցելու համար:

կրակակոծման եզրագիծ – граница обстрела – limit of fire

Այն սահմանագիծը, որից այն կողմ արկերը չեն կարող թռչել:

կրակակոծման կառավարում – управление стрельбой – engagement control

կրակակոծման հատված – сектор обстрела – arc of fire

կրակակոծման շրջան – полоса обстрела – field of fire, fire area

կրակակոծման պլանը փոփոխել – изменить план огневого обстрела – modify

կրակակոծում դեպի խորք – տես *սանրակրակ դեպի խորք*

կրակակոծում խուզաթռիչքի վիճակից – տես *կրակակոծում՝ խուզաթռիչքային կրակակոծում*

հորիզոնական կրակակոծման տիրույթ – диапазон горизонтального обстрела – traverse range

շրջանաձև կրակակոծում – круговой обстрел – all-angle fire, all-around fire

Հորիզոնական հարթության մեջ կրակային միջոցով (ստորաբաժանման կրակային միջոցներով) ցանկացած ուղղությամբ կրակ վարելու հնարավորություն:

միաժամանակյա կրակակոծում – одновременный обстрел – simultaneous engagement

Հակառակորդի նշանակետերի վրա միաժամանակյա գրոհ զենիթահրթիռային համալիրների և կործանիչ ավիացիայի ուժերով:

յուրայինների կրակակոծում – обстрел своих – blue on blue

**կրակահերթ** – очередь – burst

**կրակամարտ** – огневой бой – fire fight, engagement

հեռահար կրակամարտ – дальний огневой бой – long-range fire fight

խոցման հեռահար միջոցների (այդ թվում՝ գերձզորիտ զենքի) մարտական կիրառման ձև:

**կրակային** – огневой – fire, firing

Կրակին վերաբերող, կրակակոծմանն առնչվող:

կրակային ասպատակման ժամանակը – время огневого налета – time on target

կրակային դիտում – տես *կրակ՝ կրակի դիտում*

կրակային դիրք – огневая позиция – 1. emplacement, 2. firing position, fire position

Տեղանքի հատված՝ տեղամաս, որը նախապատրաստված է զբաղեցման և/կամ զբաղեցված է հրանոթներով, ականանետներով, զնդացիրներով, ՀՄՄ-ներով և այլ կրակային միջոցներով, ինչպես նաև հրետանիով, տանկային ստորաբաժանումներով՝ կրակ վարելու համար:

կրակային դիրքի ավագ – офицер огневой позиции, старший офицер батареи – gun position officer

կրակային խնդիր – огневая задача – fire mission, fire task

Հակառակորդի խոցման կամ մարտական գործողությունների ապահովման խնդիր, որը լուծվում է կրակի վարմամբ (հրաձգությամբ):

կրակային խոցում – огневое поражение – fire for effect

Հակառակորդի ոչնչացում (ձնշում) տարբեր զինատեսակների կրակով, հրթիռային զորքերի, ավիացիայի և հետախուզակրակային համալիրների հարվածներով՝ սովորական և հրձիգ զինամթերքի կիրառմամբ: Իրագործվում է օպերացիայի (մարտի) ամբողջ ընթացքում:

կրակային կարգապահություն – огневая дисциплина, дисциплина стрельбы – fire discipline

Կրակի վարման ժամանակ տրված հրահանգների ճշգրիտ կատարման, զինամթերքի ծախսման (վատնումից խուսափելու համար) ինքնավերահսկման կարողություն:

կրակային կարողություն – огневые возможности – fire capabilities

Այն կրակային խնդրի ծավալը, որը կարող է որոշակի ժամանակում կամ հաստատված քանակությամբ զինամթերքով կատարել ստորաբաժանման, զորամասի, զորամիավորման կամ զորքերի (ուժերի) խմբավորման կրակային միջոցների որոշակի կազմը:

կրակային հակապատրաստում – огневая контрподготовка – counterpreparation fire  
Հրետանային պատասխան՝ հակառակորդի հրետանային նախապատրաստության դեմ պատասխան հրետանային հարված:

կրակային հարված – огневой удар – fire attack

կրակային հզորություն – огневая мощь – firepower  
Ոչ պաշտոնական տերմին. գենքի նմուշների (համալիրների, համակարգերի), առանձին տեսակների մարտական տեխնիկայի (տանկեր, ՀՄՄ-ներ ևն) և ՋՌԻ-ի տեսակների ու զորատեսակների կազմավորումների հնարավորությունները՝ հակառակորդին կրակով (հարվածով) պարտության մատնելու տեսակետից:

կրակային միջոցի մարտական տեղադիրք – боевое положение огневого средства – firing position, fire position  
Կրակային միջոցի (հրանոթ, զնդացիր ևն) տեղը ռազմական տեխնիկայում (տանկ, ՀՄՄ, ՋՓԴ, ինքնաթիռ ևն):

կրակային շղթա (պայթուցիչի) – огневая цепь, огнепровод – explosive train

կրակային պատրաստում – огневая подготовка – 1. preparation fire, 2. shooting training

1. Հակառակորդի կրակային խոցման փուլ. հակառակորդի դիրքերի հրետակոծում, հրթիռային, ավիացիոն և այլ միջոցներով հասցվող հարվածներ, որոնք անմիջականորեն նախորդում են հարձակմանը և ձեռնարկվում են հակառակորդի դիրքերը թուլացնելու համար: 2. Մարտական պատրաստման առարկա. անձնակազմի և ստորաբաժանումների ուսումնավարժեցում գենքի կիրառմանը՝ մարտում նշանակետերը խոցելու համար:

«կրակային պարկ» – «огневой мешок» – killing area

Տարածք, որն ընտրված է հակառակորդի ուժերը ոչնչացնելու համար:

կրակային օղակ – огневое звено – fire-team  
4 հոգուց բաղկացած հետևակային միավոր:

կրականետում – отстрел – jettison

կրակապատնեշ – огневое заграждение, огневая завеса – fire barrage, fire barrier  
Հաճախակի հրաձգությամբ, զնդակների, ականների, արկերի պայթյուններով ստեղծված արգելք:

կրակափորձում – отстрел – colibration fire

Հրազենի որևէ բնութագրիչի որոշում դրա փորձնական կամ սերիական նըմուշով կատարված հրաձգության արդյունքներով:

կրակաքարտ – տես *կրակ՝ կրակի քարտ*

կրակել – стрелять – shoot, shooting

«Կրակն ավարտվեց» – «Стрельбу закончил!» – “Rounds complete”

Ջեկույց, որում հրետանիում հրամանատարին տեղեկացնում են, որ խոցիչ կրակ վարելու համար հատկացված բոլոր արկերը (ականները, զնդակները) կրակված են:

կրակոց – 1. выстрел, 2. стрельба, 3. տես *զինամթերք՝ հրետանային զինամթերք* – 1. shot, 2. firing, shooting, 3. տես *զինամթերք՝ հրետանային զինամթերք*

1. Հրազենում նետիչ լիցքի պայթյունային փոխակերպում (այրում), որն օգտագործվում է արկեր (ականներ, նռնակներ, զնդակներ) նետելու համար: 2. Հրանոթից (հրետանային, ականանետային) կրակելու համար նախանշանակված զինամթերք:

անարկ կրակոց – холостой выстрел – blank round

իներտ հանդերձանք ունեցող արկով կատարված ուսումնական կրակոց – учебный выстрел снарядом с инертным снаряжением – inert round

ինքնաբերական կրակոց – непроизвольная стрельба – negligent discharge, accidental discharge

կրակոցի լրակազմ – տես *կրակոց՝ հանդերձված կրակոց*

կրակոցի հեռավորություն – տես *հեռահարություն՝ կրակի հեռահարություն*

կրակոցի (պայթյունի) բոցավառումը տեսնելու և ձայնը լսելու միջև ժամանակը – промежуток времени между вспышкой и звуком выстрела (взрыва) – flash-to-bang time

կրակոցի բոցավառումը տեսնելու և ձայնը լսելու պահերի միջև եղած ժամանակային տարբերությունը՝ պայմանավորված լույսի ու ձայնի արագությունների միջև հաստատուն տարբերությամբ. դա հնարավորություն է տալիս որոշելու կրակի արձակման հեռավորությունը:

կրակոցների կիտվածություն – кучность стрельбы – accuracy of fire, grouping

Ջենքի հատկություն՝ միևնույն պայմաններում կրակելու դեպքում արկերի (գնդակների, հրթիռների ևն) վրագետնյա կամ օդային պայթյունները, դրանցից առաջացած ծակատները խմբավորելու սահմանափակ մակերեսի վրա (սահմանափակ տարածությունում):

հանդերձված կրակոց – комплект выстрела, снаряженный выстрел – complete round

միակի կրակոց – одиночная стрельба, выстрел – single round firing

նախազգուշացնող կրակոց – предупредительный выстрел – warning shot

պատահական կրակոց – случайный выстрел – negligent discharge

ուղիղ կրակոց – прямой выстрел – grazing fire

կրակոց, որի դեպքում արկի (գնդակի, նռնակի ևն) հետագիծը չի բարձրանում ավելի, քան նշանակետի տրված բարձրությունն է:

**կրակում** – производство выстрела – firing

**կրակ ու տարաշարժ** – огонь и маневр – fire and maneuver

Մարտավարական տեղաշարժ, երբ մի զինվորը՝ մեքենան՝ ստորաբաժանումը տեղաշարժվում է, իսկ մյուս զինվորը՝ մեքենան՝ նրան ապահովում է պաշտպանական կրակով:

**կրեյսեր** – крейсер – cruiser

Մեծ օվկիանոսային ռազմանավ:

կրեյսերական արագություն – крейсерская скорость – cruising speed

Ինքնաշարժ ապարատի (ավտոմեքենա, ինքնաթիռ, նավ ևն) շարժման օպտիմալ արագությունը:

**կրիչ** – носитель – carrier

**կրթություն** – образование – education

միջազգային ռազմական կրթություն և վարժանք – международное военное образование и обучение – international military education and training

Օտարերկրյա զինվորական անձնակազմի ուսուցման ամերիկյան ծրագիր:

միջազգային ռազմական կրթություն և ուսումնավարժեցում – տես *կրթություն՝ միջազգային ռազմական կրթություն և վարժանք*

**կրիտիկական հնարավորություններ** – критические возможности – critical capability

Վլաուզկիցի ծանրության կենտրոնի հզորությունը:

**կրծքանշան** – нагрудный знак, значок – badge, insignia

«**Կրծքին ա՛ն**» – «На грудь!» – “Port arms!”

«**Կրծքին ա՛ն**» դրություն – положение «На грудь» – “Port arms!”

**կրկնակ** – տես *կրկնօրինակ*

**կրկնորդում** – дублирование – redundancy

**կրկնություն** – 1. повтор, 2. տես *կրկնում* – 1. rehearsal, 2. տես *կրկնում*

**կրկնում** – повторение – repeat

**կրկնօրինակ** – дубликат – duplicate

**կրճատել** – сокращать – reduce

**կրճատում** – сокращение – reduction

**կրնկակոխ հետապնդում** – преследование по пятам – hot pursuit

Հակառակորդի (մասնավորապես՝ ահաբեկիչների, պարտիզանների) հետապնդում թարմ հետքերով:

**կրոն** – религия – religion

**կրոնական** – религиозный – religious

կրոնական հավատալիքներ – религиозные верования – religious beliefs

կրոնական մոլեռանդություն – религиозный фанатизм – religious fanaticism

Կրոնական գործունեությամբ ծայրաստիճան տարվածություն, որն ուղեկցվում է կրոնի՝ երկրպագության պաշտամունքի վերածմամբ և համախոհների միջավայրում իր «եսի» տարրալուծմամբ: Կարող է արտահայտվել կրոնական առաջնորդների պահանջով (հանուն կրոնի) ցանկացած զոհողություն կամ հանցագործություն կատարելու պատրաստակամության ծայրահեղ վտանգավոր ձևերով:

կրոնական պահանջմունքների բավարարում – удовлетворение религиозных потребностей – religious support

Զինծառայողներին բանակային քահանայի ցուցաբերած կրոնական աջակցությունը:

**կրոնապետություն** – теократия – theocracy

Քաղաքական կառավարման ձև, որի դեպքում աշխարհիկ իշխանությունը պատկանում է հոգևոր առաջնորդին և հոգևոր դասին, իսկ իշխող գաղափարախոսությունը՝ որն է կրոնական ուսմունքն է:

**կրոնասեր** – религиозный – religious

**կրովի** – переносной, носимый – man portable, portable

կրովի մահճակալ – տես *մահճիկ*

**կրտսեր** – младший – junior

«Կրուզ» – «Круг» – Ganef

Միջին-մեծ հեռահարությամբ, ռադիոտեղորոշիչ սարքով կառավարվող «երկիր-օդ» դասի խորհրդային հրթիռ:

**կցագրում զորակոչային տեղամասին** – տես *հաշվառում՝ զորակոչային հաշվառում*

**կցակետ** – стык – junction

**կցաշինություն** – пристройка – annex

**կցել** – приложить, присоединить – attach

**կցորդ** – атташе – attaché

1. Դիվանագիտական աշխատողի պաշտոն կամ կարգ: 2. Ղեկավարությանը կամ ներկայացուցչությանը կից գործուղված անձ՝ հատուկ հարցեր ուսումնասիրելու և իր պետության համապատասխան գերատեսչությունը ներկայացնելու համար:

բանակային կցորդ (ԱՄՆ) – տես *կցորդ՝ ռազմական կցորդ*

պաշտպանության գծով կցորդ – атташе по обороне – defense attaché

ռազմածովային կցորդ – военно-морской атташе – naval attaché

ռազմական կցորդ – военный атташе – military attaché

Ընդհանուր ռազմական, ինչպես նաև ցամաքային զորքերի հարցերով կցորդ:

ռազմաօդային կցորդ – военно-воздушный атташе – air force attaché

**կցվածք** – стык – joint

**կցում** – приложение – annex

«Կուբ» – «Куб» – “Gainful”

Խորհրդային նախագծի՝ փոքր-միջին հեռահարությամբ «երկիր-օդ» դասի Կ-12 հրթիռ:

**կուսակցություն** – партия – party

**կուտակ** – завал – obstruction

**կուտակային էֆեկտ** – кумулятивный эффект, кумуляция – cumulative effect

Պայթյունի կենտրոնացված գործողությունը տրված ուղղությամբ:

**կուտակում** – 1. накопление, 2. наращивание, 3. скопление – 1. cumulation,

accumulation, build-up, 2. increase, build-up, 3. mass

մեծածավալ կուտակում – стратегическое сосредоточение – strategic concentration

ուժերի և միջոցների կուտակում – наращивание сил и средств – build-up

**կուտակվածություն** – скопление – collection

**կուտեր** – куттер – cutter

**կուրսանտ** – курсант – cadet, officer cadet, student


1. Քաղաքացի, որն անցել է զինվորական ծառայության, ընդունվել է ռազմաուսումնական հաստատություն կամ սովորում է ուսումնական կազմավորումում: 2. Ռազմաուսումնական հաստատությունում սովորող և սպայական կոչում չունեցող զինծառայողի զինվորական կոչում:

արագացված սպայական պատրաստման դասընթացների կուրսանտ – курсант ускоренной офицерской подготовки – officer candidate

սպայական դպրոցի կուրսանտ – курсант офицерской школы – officer candidate

**կևլար** – кевлар – Kevlar

Առածգական սինթետիկ թելիկի ապրանքանիշ, այս տեսակի թելիկն օգտագործվում է գնդակադիմացկուն բաձկոնների, ավտոդողերի, մարտական հանդերձանքի ևն արտադրության համար:



**հագուստ** – одежда – dress

հերմետիկ պաշտպանիչ հագուստ – герметическая защитная одежда – impermeable protective clothing

պաշտպանիչ հագուստ – защитная одежда – protective clothing, NBC suit, noddy suit

Հատուկ պատրաստված կամ մշակված հագուստ՝ նախատեսված ֆիզիկական միջավայրի ծայրահեղ փոփոխությունների, աշխատանքի վտանգավոր պայմանների, հակառակորդի գործո-

ղությունների հետևանքով առաջացող վտանգից անձնակազմին պաշտպանելու համար:

**հածանավ** – крейсер – cruiser

թեթև հածանավ – легкий крейсер – light cruiser

ծանր ավիակիր հածանավ – тяжелый авианесущий крейсер – aircraft-carrying heavy cruiser

ՌԴ ՌՇՈՒ-ի հատուկ կառուցվածքի ավիակիր ռազմանավ, որը նախանշանակված է հակառակորդի վրաջրյա ռազմանավերը, նավերն ու սուզանավերը որոնելու և ոչնչացնելու, վրագետնյա օբյեկտները ավիացիոն ու հրթիռային հարվածների ենթարկելու, հեռավոր ծովային (օվկիանոսային) շրջաններում և ծավալման ու մարտական պարեկման երթուղիներում ռազմանավային ուժերի ու ռազմավարական նախանշանակման ստորջրյա հրթիռակիր հածանավերի խմբավորումների մարտական կայունությունն ապահովելու, այլ խնդիրներ լուծելու համար:

հրթիռակիր ստորջրյա հածանավ – ракетный подводный крейсер – attack submarine, SSN

հրթիռային ստորջրյա հածանավ – տես *հածանավ` հրթիռակիր ստորջրյա հածանավ*

**հակաական** – контрмина – countermine

**հակաականային տակնոց** – противоминный поддон – mine pan

Փոխադրամիջոցների տակ ամրացվող մետաղյա թերթ՝ ականների պայթյունից պաշտպանելու համար:

**հակաահաբեկչություն** – контртерроризм, антитерроризм – 1. counterterrorism, 2. antiterrorism

1. Գործողություններ, որոնք անմիջականորեն ուղղված են ահաբեկչական ցանցերի դեմ և, անուղղակիորեն՝ համաշխարհային ու տարածաշրջանային միջավայրների վրա համապատասխան ազդեցություն գործելով՝ դրանք այդ ցանցերի նկատմամբ անհաշտելի դարձնելուն: 2. Պաշտպանական միջոցառումների համալիր՝ նպատակաուղղված ահաբեկչական ձեռնարկումների նկատմամբ անհատի և

նյութական արժեքների խոցելիության նվազեցմանը, ներառյալ՝ տեղական ռազմական ու քաղաքացիական ուժերով անհապաղ զսպումը:

**հակաապակողմնորոշում** – контрдезорientация – counterdeception

**հակազագ** – противогаз – respirator, gas mask

հակազագի զտիչ տուփ – патрон противогаса – canister

**հակազաղութատիրություն** – антиколонизализм – anticolonialism

**հակազրոհ** – контратака – counterattack  
Պաշտպանվող զորքերի զրոհ հարձակվող զորքերի վրա, որը ձեռնարկվում է պաշտպանության մեջ մխրձված հակառակորդի ջախջախման և պաշտպանության լիովին կամ մասնակի վերականգնման նպատակով:

**հակադարձ** – տես *հակառակ*

**հակազդականություն** – реактивность – reactivity, responsiveness

Շրջակա միջավայրի ազդեցությանը ամբողջական կենսագործունեության փոփոխմամբ պատասխանելու օրգանիզմի հատկությունը:

**հակազդեցություն** – противодействие, реакция – 1. reaction, 2. opposition

հակազդեցություն ագրեսիային – противодействие агрессии – counteraggression

հակազդեցություն դիտմանը – противодействию наблюдению – countersurveillance

Հակառակորդի հսկողական և դիտողական գործունեության դեմ ուղղված միջոցներ:

հակազդեցություն տեղեկութահոգեբանական ներգործությանը – противодействию информационно-психологическому воздействию – resistance to information and psychological warfare

Միջոցառումների համալիր, որոնք իրականացվում են հակառակորդի տեղեկութահոգեբանական ներգործությունը լիովին չեզոքացնելու կամ գոնե

հետևանքները նվազեցնելու նպատակով:

**հակազդում** – реагирование, реакция – reaction

արագ հակազդման ուսուցում – обучение быстрому реагированию – immediate action drill

պաշտպանական հակազդում – защитная реакция – protective reaction

**հակաթույն** – антидот – antidote

Դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են մարդու կամ կենդանու օրգանիզմի վրա թույների և թունավոր նյութերի ազդեցությունը կանխելու կամ վերացնելու համար:

**հակահարձակում** – контрнаступление – counter-offensive, counterattack

Առանձնահատուկ տեսակի հարձակում, որը պաշտպանվող զորքը ձեռնարկում է հակառակորդի հարձակման ընթացքում կամ դրա հետմղումից հետո՝ նպատակ ունենալով հակառակորդի հարձակվող խմբավորումների ջախջախումը, նրա հարձակման ձախողումը, նախկին դրության վերականգնումը և հարձակողական օպերացիային անցնելու համար պայմանների ստեղծումը:

**հակահարված** – 1. контрудар, 2. отпор – 1. counterstrike, counterblow, 2. repulse

Պաշտպանական օպերացիայում ռազմաձակատի (բանակների խմբի, բանակի) զորքերի հարվածը, որը հասցվում է պաշտպանությունը ձեղքած հակառակորդի խմբավորումը ջախջախելու, նախկին դիրքը վերականգնելու և հակահարձակման (հարձակման) անցնելու համար պայմաններ ստեղծելու նպատակով:

**հակահարված տալ** – 1. наносить контрудар, 2. давать отпор – 1. mount a counterstrike, 2. fight back

**հակահետախուզական** – контрразведывательный – counterintelligence

հակահետախուզական ապահովում – контрразведывательное обеспечение – counterintelligence support

Օտարերկրյա հետախուզության լրտեսական, դիվերսիոն և այլ բնույթի գործողություններից, միջազգային ահաբեկչական կազմակերպությունների ծեռնարկումներից պաշտպանությանը նպատակաուղղված հակահետախուզական գործունեության վարում:

հակահետախուզական գործողություններ – контрразведывательные действия – counterintelligence operations

Ակտիվ գործողություններ, որոնք նպատակաուղղված են արտասահմանյան հետախուզության և ահաբեկիչների գործունեության հայտնաբերմանը, բացահայտմանը, չեզոքացմանը և/կամ գապմանը:

հակահետախուզական գործունեություն – контрразведывательная деятельность – counterintelligence activities

Անվտանգության պետական ծառայության և/կամ նրա առանձին ստորաբաժանումների, ինչպես նաև այդ մարմինների ու ստորաբաժանումների պաշտոնատար անձանց գործունեությունը, որն իրականացվում է հակահետախուզական գործողությունների միջոցով, և որի նպատակն է բացահայտել, կանխել, կասեցնել օտար պետությունների հատուկ ծառայությունների ու կազմակերպությունների հետախուզական և այլ բնույթի գործունեությունը, որը միտված է տվյալ պետությանը վնաս պատճառելուն: Ներառում է՝ օպերատիվ, քննչական, տեղեկույթի հավաքման, վերլուծության ու մշակման և այլ գործառնությունների իրականացում:

հակահետախուզական խնդիրների առաջադրման մարմին – орган постановки контрразведывательных задач – counterintelligence operational tasking authority

հակահետախուզական հետաքննություն – контрразведывательное расследование – counterintelligence investigation

Այն փաստերի պաշտոնական կանոնավոր որոնում և հայտնաբերում, որոնց միջոցով հնարավոր է պարզել, թե արդյոք տվյալ անձը (անձինք) ներգրավված է (են) տվյալ պետության ազգային շահերին վնասելուն կամ այլ պետության առավելության ապահովմանը միտված գործունեության մեջ:

**հակահետախուզություն** – контрразведка – 1. counterintelligence, 2. counterespionage, 3. security service

1. Հատուկ ծառայությունների գործունեությունը այլ պետությունների համապատասխան մարմինների հետախուզական (լրտեսական) գործունեության կանխման նպատակով, 2. Մարմին (բաժին, կառույց), որի հիմնական գործառնությամբ նման գործունեությունն է:

**հակահրթիռ** – տես *հրթիռ` որսիչ հրթիռ*

հակահրթիռի ուղղորդման համակարգ – система наведения противоракеты – interceptor guidance system

հակահրթիռների արձակման դիրք – стартовая позиция противоракет – interceptor launch position

հակահրթիռների մարտալրակազմ – боевой комплект противоракет, боекомплект противоракет – interceptor combat load

**հակահրթիռային** – противоракетный – antimissile missile

Հակահրթիռային պաշտպանության ապահովման ծրագիր – Программа обеспечения противоракетной обороны – Defense Support Program

**հակաճառագայթային պաշտպանակ** – антирадиационная защита – shielding

**հակաճառում** – возражение – rejoinder

**հակամարտաբանություն** – конфликтология – conflictology

Գիտություն, որն ուսումնասիրում է ցանկացած մակարդակի հակամարտության ծագման, զարգացման, լուծման (ավարտման) օրինաչափությունները:

**հակամարտայնություն** – конфликтность – conflictness

Այն բանի հավանականությունը, որ իրադրությունը կվերաճի հակամարտության:

**հակամարտություն** – конфликт – conflict

Հակադիր շահերի, տեսակետների բախում, լուրջ հակասություն, վեճ: *Քաղաքական ոլորտում*. միմյանցից իշխանական լիազորություններ կամ ռեսուրսներ վիճարկող երկու և ավելի կողմերի



(խմբերի, պետությունների, անհատների) մրցակցային փոխզդրծության տարատեսակ (և արդյունք): *Ռազմական ռիդրտում*. միջպետական կամ ներպետական հակասությունների լուծում ռազմական բռնության երկուստեք կիրառմամբ:

աշխարհաքաղաքական հակամարտություն – геополитический конфликт – geopolitical conflict

առավել հավանական հակամարտություն – наиболее вероятный конфликт – most probable conflict

զինված հակամարտության զսպում – сдерживание вооруженного конфликта – deterrence of armed conflict

զինված հակամարտություն – вооруженный конфликт – armed conflict

Պետությունների կամ դրանցում սոցիալական հանրությունների միջև որոշակի եղանակով տեղի ունեցող զինված ընդդիմամարտություն, որը տնտեսական, քաղաքական, ազգային-էթնիկական և այլ հակասությունների լուծման նպատակով ծավալվում է յուրաքանչյուր հակամարտողի կողմից ռազմական ուժի սահմանափակ կիրառմամբ:

զինված հակամարտությունների միջազգային իրավունք – международное право в период вооруженных конфликтов – law of armed conflict

Զինված հակամարտության շրջանում պետությունների միջև հարաբերությունները կարգավորող միջազգային-իրավական նորմերի համակարգ. նպատակն է՝ պատերազմների վարման բարբարոսական եղանակների ու մեթոդների կիրառման սահմանափակումը, դրանց զոհերի պաշտպանությունը և այդ նորմերի խախտման համար պատասխանատվության սահմանումը:

էթնոքաղաքական հակամարտություն – этнополитический конфликт – ethnopolitical conflict

ծածուկ հակամարտություն – латентный конфликт, скрытый конфликт – latent conflict

հակամարտության լուծում – разрешение конфликта – conflict solution

հակամարտության կանխում – предотвращение конфликта – conflict prevention

հակամարտության կարգավորում – урегулирование конфликта – settlement of a conflict

միջազգային հակամարտություն – международный конфликт – international conflict

ներպետական հակամարտություն – внутригосударственный конфликт – intrastate conflict

նվազ ինտենսիվությամբ հակամարտություն – конфликт низкой интенсивности – low-intensity conflict

ռազմական հակամարտություն – военный конфликт – military conflict

Գերազանցապես գործածվում է պետությունների միջև զինված հակամարտության առնչությամբ:

սահմանային հակամարտություն – пограничный конфликт – border conflict

Հարևան պետությունների սահմանագծին դրանց քաղաքացիների կամ սահմանապահ կազմավորումների բախում: Հաճախ լինում է զինված և վերաճում խոշոր ռազմական բախումների: Սովորաբար լուծվում է սահմանապահական ներկայացուցիչների միջոցով կամ դիվանագիտական եղանակով:

սառեցված հակամարտություն – замороженный конфликт – frozen conflict

տարածաշրջանային հակամարտություն – региональный конфликт – regional conflict

տեղային հակամարտություն – локальный конфликт – local conflict

տեղայնացված հակամարտություն – տես *հակամարտություն՝ տեղափակված հակամարտություն*

տեղափակված հակամարտություն – локализованный конфликт – localized conflict

Հակամարտություն, որը ձեռնարկված միջոցների շնորհիվ ամփոփվել է նեղ աշխարհագրական սահմաններում և չի ստանում հետագա զարգացում:

ցածր ինտենսիվությամբ հակամարտություն – տես *հակամարտություն՝ նվազ ինտենսիվությամբ հակամարտություն*

քաղաքական հակամարտություն – политический конфликт – political conflict

**հակամիջոց** – контрмера – 1. countermeasure, 2. retaliation

Հակառակ միջոց, որևէ բանի դեմ ձեռնարկված միջոցառում:

էլեկտրաօպտիկական ինֆրակարմիր հակամիջոց – տես *հակամիջոց՝ օպտիկաջերմացուցային հակամիջոց*

ռադիոհաճախականային հակամիջոց – радиочастотное контрсредство – radio frequency countermeasures

Ռադիոալիքների տիրույթում աշխատող ցանկացած սարք, որը խաթարում է հակառակորդի ռադիոմիջոցների աշխատանքը՝ նվազեցնելով դրանց արդյունավետությունը:

օպտիկաջերմացուցային հակամիջոց – оптико-тепловизорное контрсредство – electro-optical-infrared countermeasure

1. Օպտիկական-ինֆրակարմիր տիրույթում գործող նյութ, որը նվազեցնում է հակառակորդի հրթիռների ճշգրիտ ուղղորդման և զգայարարական համակարգերի արդյունավետությունը, 2. էլեկտրաօպտիկական ինֆրակարմիր տեխնոլոգիայի կիրառմամբ գործող սարք, որն օգտագործվում է հակառակորդի ակտիվությունը խանգարելու համար, հատկապես բարձր ճշգրտության կառավարվող զենքերը և զգայարարական համակարգերը շարքից հանելու համար:

**հականախապատրաստում** – контрподготовка – counterpreparation

Հարձակման պատրաստվող հակառակորդի գլխավոր խմբավորմանը հասցվող հրթիռային, հրետանային և ավիացիոն զանգվածեղ հարված՝ հարձակումը կանխելու կամ թափը կոտրելու նպատակով:

**հականյարդակաթվածահարույց հարեր** – таблетки антидотов нервно-паралитических ОБ – nerve agent pre-treatment set, NAPS

Հարեր, որոնք պետք է որոշակի պարբերականությամբ ընդունել քիմիական վտանգից պաշտպանվելու համար:

**հակապատերազմական** – антивоенный – antiwar

Պատերազմի դեմ ուղղված, պատերազմին հակառակ:

**հակառազմական** – տես *հակապատերազմական*

**հակառազմամոլություն** – антимилитаризм – antimilitarism

Սպառազինությունների աճման, ռազմական բռնության գաղափարախոսության ու պրակտիկայի դեմ ուղղված գաղափարների ու հասարակական շարժումների համախումբ:

**հակառակ** – 1. обратный, 2. տես *հետևի* – 1. reverse, 2. տես *հետևի*

հակառակ զառիվայր – տես *թեքություն՝ հակառակ թեքություն*

հակառակ կողմը – տես *դարձերես*

հակառակ ուղղությամբ շարժում – տես *շարժում՝ հետադարձ շարժում*

**հակառակորդ** – противник – 1. adversary, 2. enemy

Ախտյան, թշնամի, ոսոխ, պատերազմում հակառակ կողմի (պետության, պետությունների դաշնադրության) անվանումը, նրա զորքերի ընդհանուր անվանումը:

էլք հակառակորդի տարածքից – выход с территории противника – evasion and escape

հակառակորդի ապակողմնորոշում – տես *հակառակորդ՝ հակառակորդի խաբում*

հակառակորդի առաջավոր դիրքեր – передовые позиции противника – enemy lines

Հակառակորդի շարքերը, հակառակորդի ձակատային գիծը:

հակառակորդի գործողությունների դժվարացում – затруднение действий противника – interdiction

հակառակորդի գործողությունների մեկուսականխում – блокирование действий противника – area interdiction operation

Օպերացիա՝ նպատակաուղղված կոնկրետ տարածքում հակառակորդի օպերացիաներին խոչընդոտելուն:

հակառակորդի գործողություններին խոչընդոտում մարտադաշտում – препятствование действиям противника на поле боя – battlefield interdiction

Մարտական գործողություններ (*սով. ռմբակոծություն*), որոնց նպատակն է խանգարել հակառակորդին՝ իրագործելու իր մարտական պլանները, կաշկանդելու նրա տարաշարժը, նախապատրաստումը գրոհի (հակագրոհի) ևն:

հակառակորդի խաբում – обман противника, введение противника в заблуждение, дезориентация противника – deception

հակառակորդի կապի հետախուզում – разведка неприятельской связи – communications intelligence

հակառակորդի կառավարման համակարգի կազմալուծում – дезорганизация системы управления противника – command and control warfare

հակառակորդի կողմից նվաճում – տես *կործանում*

հակառակորդի կոմբատանտ – տես *հակառակորդ՝ հակառակորդի ռազմիկ*

հակառակորդի հիմնական օբյեկտների վերաբերյալ տվյալների ժողովածու – сборник данных по основным объектам противника – basic encyclopedia

հակառակորդի միջմայրցամաքային հրթիռների հարձակման մասին վաղ իրազեկման համակարգ – система раннего оповещения об атаке вражеских баллистических ракет – ballistic missile early warning system

հակառակորդի մոլորեցման միջոցառումների բացատրագիր – объяснительная записка к плану мероприятий по введению противника в заблуждение – deception story

հակառակորդի մոլորեցում – տես *հակառակորդ՝ հակառակորդի խաբում*

հակառակորդից պոկվելը – отрыв от преследования – evasion and escape

հակառակորդի ռազմիկ – комбатант противника – enemy combatant

հավանական հակառակորդ – вероятный противник – potential enemy

**հակասառիչ** – антифриз – antifreeze compound

**հակասառցապատիչ** – տես *սարք՝ հակասառցապատիչ սարք*

**հակասուզանավային** – противолодочный – antisubmarine

Սուզանավերի դեմ ուղղված, սուզանավերի գործողություններին խոչընդոտող:

**հակատանկային** – противотанковый – antitank, antiarmor

հակատանկային կարճասյուն – надолб – dragon's teeth

Բետոնե սյուներ, որոնք օգտագործվում են որպես տանկերի դեմ արգելքներ:

**հակատարաշարժ** – контрманевр – countermove

**հակաուժ** – контрсила – counterforce

Պատասխան հարված հասցնելու համար անհրաժեշտ ուժեր և միջոցներ:

**հակաօդային** – противовоздушный, зенитный – antiaircraft

**Հակաօդային պաշտպանության և օդային տարածքի օգտագործման կազմակերպման տնօրինություն** – Директорат по противовоздушной обороне и организации использования воздушного пространства – Air Defense and Aerospace Management Directorate

**հակընկեր** – контрпартнер – counterparty

1. Ընկերովի թղթախաղում. մյուս զույգը: 2. Սոցիալական գործընթացում. գործընկեր, որն ունի տվյալ գործընթացի զարգացման նկատմամբ հակառակ նպատակային կողմնորոշումներ: 3. Առհասարակ՝ գործընկերային հարաբերությունների մյուս կողմը:

**հակում** – 1. склонение, 2. склонность – 1. declination, 2. depression, 3. inclination

զրոյական մագնիսական հակման գիծ – изогна нулевого магнитного склонения, линия нулевого магнитного склонения – agonic line

կորդինատային ցանցի մագնիսական հակում – магнитное склонение координатной сетки – grid magnetic angle, grid variation

Դեպի կորդինատային ցանցի հյուսիս և մագնիսական հյուսիս ուղղությունների միջև եղած անկյունային տարբերությունը:

մագնիսական հակման փոփոխություն – изменение магнитного склонения – magnetic variation

մագնիսական հակում – магнитное склонение – declination, magnetic declination, magnetic variation

**հաղթադիրք** – ключевая позиция – key position, vital ground

**հաղթական** – победоносный, победный – victorious

**հաղթակետ** – տես *հիմնակետ*

**հաղթահարում** – преодоление – overcoming

արգելապատնեշների և խոչընդոտների հաղթահարում – преодоление заграждений и препятствий – obstacle negotiation

վարակված գոտիների հաղթահարում – преодоление зон заражения – crossing of a contaminated area

**հաղթանակ** – победа – victory

**հաղթող** – победитель – victor

**հաղթություն** – տես *հաղթանակ*

**հաղորդագրություն** – сообщение письменное сообщение – message, dispatch

1. Գրավոր հաղորդում որևէ բանի մասին, գրավոր հայտարարություն: 2. Այն, ինչ հաղորդվում է հաղորդագրով, հաղորդագրի բովանդակությունը:

«կայծակ» հաղորդագրություն – сообщение-«молния» – flash message, flash signal

Առաջնահերթության կարգ, որը տրվում է հակառակորդի հարձակմանը վերաբերող և մարտական-օպերատիվ հաղորդագրություններին, որոնք պետք է հասցեատիրոջը հանձնվեն 10 րոպեի ընթացքում:

Կեղծ հաղորդագրություն – ложное сообщение – dummy message

Ուղերձ, որն արվել է իր բովանդակության հետ կապ չունեցող այլ նպատակով, շինծու ուղերձ:

հաղորդագրություն օդաչուների համար – извещение для пилотов – notice to airmen

Նախքան օդային օպերացիայի սկիզբը օդաչուներին տրամադրվող տեղեկությունների ցանկ:

հաղորդագրությունների հաղորդման ռազմական համակարգ – военная система передачи сообщений – defense message system

Համակարգչային, ծրագրային, գործընթացային, սարքավորումների և անձնակազմի աշխատանքը՝ հաղորդագրությունները տեղ հասցնելու համար:

ձևարկված տեքստային հաղորդագրություն – формализованное текстовое сообщение – formatted message text

շտապ հաղորդագրություն – срочное сообщение – immediate message

Առաջնահերթության կարգախումբ, որը տրվում է այն հաղորդագրություններին, որոնք վերաբերում են ազգային ու բազմազգ ուժերի կամ բնակչության անվտանգության վրա լուրջ ազդեցություն գործող իրավիճակներին, և պահանջում է հասցեատիրոջ անհապաղ արձագանքը:

ոչ ձևարկված տեքստային հաղորդագրություն – неформализованное текстовое сообщение – free form message text

Կամայական ձևով լրացված տեքստով հաղորդագրություն, սովորաբար՝ ձեռքով գրված կամ սևագիր:

**հաղորդակ** – привод – transmission

**հաղորդակցություն** – 1. коммуникация, общение, контакт, 2. տես կապ 1, 3. сообщение, коммуникация, 4. տես *հաղորդում* 2, 5. տես *ուղի՝ հաղորդակցության*

*ուղի* – 1. communication, contact, 2. տես կապ 1, 3. traffic, 4. տես *հաղորդում* 2, 5. տես *ուղի` հաղորդակցության ուղի*

1. Փոխադարձ միջանձնային հարաբերություններ, շփումներ, 2. Կապի միջոցներով իրազործվող հարաբերակցություն, կապ, 3. Երթևեկություն, գնալ-գալը, 4. Մտքերի` տեղեկույթի` փոխանակություն` հաղորդում, հաղորդագրություն, 5. հաղորդակցության ուղի:

**հաղորդակցում** – տես *հաղորդակցություն* 1, 2, 3, 4

**հաղորդուղի** – 1. канал информации, 2. тракт – 1. channel, 2. conduit, information channel

1. (ընդ.) Տեղեկույթի հաղորդման ուղի: 2. (ամեր.) Ռազմական մոլորեցման բնագավառում` դեպի կեղծ նշանակետ տանող տեղեկատվական կամ հետախուզական ուղի:

**հաղորդում** – 1. передача, 2. сообщение – 1. transmission, 2. message, communication

1. Տարբեր միջոցներով տեղեկույթի գրավոր կամ բանավոր փոխանցում մեկ անձից (խմբից, կազմակերպությունից և այլն) մեկ այլ անձի (խմբի, կազմակերպության և այլն): 2. Հաղորդվող տեքստը:

հաղորդման անվտանգություն – безопасность передачи – transmission security

հաղորդման ծածուկություն – скрытность передачи – transmission security

տեղեկույթի հաղորդման ռադիոկենտրոն – радиоцентр передачи информации – radio communication center

տեղեկույթի համատեղված հաղորդում – совмещенная передача информации – concurrent information transfer, joint information transfer

Արբանյակային ուղեվարական համակարգերից ստացվող ազդանշաններ, որոնցում համատեղված են արբանյակի շարժման պարամետրները և հեռաչափության համար անհրաժեշտ տրվյալները:

տեղեկույթի հորիզոնական հաղորդում – горизонтальная передача информации – cross tell, communication horizontal

1. Տեղեկույթի փոխանցում մի ստորաբաժանումից մյուսը` միևնույն կազմակերպության սահմաններում: 2. Տեղեկույթի փոխադարձ հաղորդում միևնույն օպերատիվ համակարգում:

տեղեկույթի ռելեային հաղորդում – релейная передача информации – relateral tell

տվյալների հաղորդման գաղտնիություն – конфиденциальность передачи данных – emission security

Հաղորդակցական անվտանգության բաղադրիչ, որը ներառում է կարևոր նշանակություն ունեցող տեղեկույթի արտահոսքի բացառումը ծածկագրման և հեռահաղորդակցական գործընթացում:

փակ հաղորդում – закрытая передача – closed-circuit television

Հաղորդում, որը նախատեսված չէ լայն հրապարակման` հասարակության լայն շրջանների համար:

քողարկված հաղորդում – скрытая передача – hidden transmission

**հաճախականային համաձայնեցում** – частотное согласование – frequency deconfliction

Ռադիոհաճախականային սպեկտրի օպտիմալ օգտագործման կազմակերպական միջոցառումները:

**հաճախականություն** – частота – frequency

Միավոր ժամանակում կատարվող տատանումների թիվը:

բարձր հաճախականություն – высокая частота – high frequency

խանգարումնարգելված հաճախականություն – запретная частота – taboo frequency

Յուրային հաճախականություն, որի վերախանգարումներ ստեղծելը կամ այլ կանխամտածված ներգործություններ կատարելը արգելված է:

ճառագայթման հաճախականություն – частота излучения – frequency of radiation

Ընդհանրապես, էլեկտրամագնիսական ալիքի և, մասնավորապես, ճառագայթման կարևոր բնութագրիչներից մեկի` E (կամ H) վեկտորի տատանումների թիվը միավոր ժամանակում, որից էա-

պես կախված են ալիքի հատկությունները (հաճախականությունը հակադարձ համեմատական է ալիքի երկարությանը՝  $v=c/\lambda$ ):

միջանկյալ հաճախականություն – промежуточная частота – intermediate frequency

շատ բարձր հաճախականություն – очень высокая частота – very high frequency, VHF

Հաճախականությունների 41–230 ՄՀց տիրույթ, այսինքն՝ հեռուստատեսային հեռարձակման մետրային տիրույթ:

պաշտպանված հաճախականություն – защищенная частота – protected frequency

Հաճախականություն, որը բարեկամական պետությունների ռադիոճնշիչ ծառայություններն ընտրողաբար չեն ձընշում:

ռադիոդիտման հաճախականություն – частота радионаблюдения – guarded frequency

Հաճախականություն, որով կատարվում է գաղտնալսում, չխլացվող հաճախականություն:

ցածր հաճախականություններ – низкие частоты – low frequency

ուլտրաբարձր հաճախականություն – ультравысокая частота, УВЧ – ultra high frequency, UHF

**հաճախորդ** – клиент – customer

**համարնակեցում** – синойкизм – synoecism

Նախկինում ինքնուրույն մի քանի բնակավայրերի՝ քաղաքների ծուլում՝ միացում՝ մեկ քաղաքի ստեղծմամբ (հին աշխարհում):

**համագործակցել** – сотрудничать – collaborate

**Համագործակցություն** – Содружество, Содружество наций – Commonwealth of Nations

Համագործակցություն, կամ Բրիտանական համագործակցություն. Մեծ Բրիտանիայի և նախկինում նրա գաղութների, իսկ այժմ՝ անկախ պետությունների միջև համագործակցություն: Այդ պետություններից շատերը պահպանել

են իրենց բանակների կազմավորման բրիտանական մոդելը:

Ազգերի համագործակցություն – տես *Համագործակցություն*

**համագործակցություն** – сотрудничество – cooperation

Համատեղ գործունեություն, որի շնորհիվ բոլոր մասնակիցներն ստանում են որևէ օգուտ:

անվտանգային համագործակցություն – безопасное сотрудничество, сотрудничество в области безопасности – security cooperation

դավաճանական համագործակցություն – коллаборационизм – collaboration

համագործակցության իրավապայմանագրային դաշտ – договорно-правовое поле сотрудничества – legal field of cooperation, legal framework of cooperation

համագործակցություն անվտանգության բնագավառում – տես *համագործակցություն՝ անվտանգային համագործակցություն*

համագործակցություն զինվորականների միջև – сотрудничество между военными – military-to-military cooperation

համագործակցություն սպառազինությունների բնագավառում – տես *համագործակցություն՝ ռազմատեխնիկական համագործակցություն*

համագործակցություն սպառնալիքների նվազեցման նպատակով – сотрудничество по снижению угроз – threat reduction cooperation

մերձսահմանային համագործակցություն – приграничное сотрудничество – transborder cooperation

միջազգային համագործակցության ասպարեզ – арена международного сотрудничества – arena of international cooperation

միջազգային համագործակցություն – международное сотрудничество – international cooperation

միջգերատեսչական համագործակցություն – межведомственное сотрудничество,



межведомственное взаимодействие – interagency cooperation

ռազմական համագործակցություն – военное сотрудничество – military cooperation, military-to-military cooperation

ռազմատեխնիկական համագործակցություն – военно-техническое сотрудничество, сотрудничество в области вооружений – armaments cooperation

ռազմաքաղաքական համագործակցություն – военно-политическое сотрудничество – military-political cooperation

ռազմա-քաղաքացիական համագործակցություն – военно-гражданское сотрудничество – civil-military cooperation

Համագործակցություն, որի նպատակն է հրամանատարության առջև դրված խնդիրների լուծման գործում նրան աջակցելը:

վերսահմանային համագործակցություն – трансграничное сотрудничество – transborder cooperation

**համագումար** – տես *ժողով*

**համադասող** – 1. координатор, 2. координирующий – 1. coordinator, 2. coordinating

1. Նա (անձ կամ կազմակերպություն, կառույց են), ով կատարում է համադասում: 2. Համադասմամբ զբաղվող, նման գործառույթներ կատարող:

գլխավոր համադասող – главный координатор – officer of primary responsibility

համադասող կազմակերպություն – организация-координатор – coordinating agency

համադասող մարմին – координирующий орган, координирующая инстанция – coordinating authority

համադասող պաշտպանական մարմին – координирующий оборонный орган – defense coordinating element

**համադասում** – координация – coordination

1. Համաձայնեցում, համապատասխանեցում (հասկացությունների, գործողությունների, որևէ բանի բաղադրիչների են): 2. Կառավարման համակարգի

բոլոր օղակների աշխատանքի համաձայնեցվածության ապահովում:

համադասման պլան – план координации – coordination plan

միջգերատեսչական համադասման համատեղ խումբ – совместная межведомственная координационная группа – joint interagency coordination group

միջգերատեսչական համադասում – межведомственная координация – interagency coordination

միջկազմակերպական համադասում – межорганизационная координация – interorganizational coordination

**համադասված** – координированный – coordinated

**համադրում** – синтез, синтезирование – synthesis

1. Գիտական հետազոտության հիմնական մեթոդներից. առարկայի ճանաչում որպես մեկ ամբողջի՝ դրա մասերի՝ բաղադրատարրերի միասնության մեջ (հակառակն է վերլուծությանը): 2. Ավելի պարզ նյութերից ավելի բարդ միացությունների ստացում:

**համազարկ** – залп – salvo

Բոլոր կրակային միջոցներով միաժամանակյա կրակոց (արձակում):

հրետանային համազարկի զանգված – масса артиллерийского залпа – weight of fire

Ամբողջ հրետանային զորամասի (զորամիավորման, խմբավորման) մի կրակոցով (արձակմամբ) արտանետված հրետանային արկերի (ականների) ընդհանուր զանգվածը:

նշանախոցիչ համազարկ – накрывающий залп – straddle

**համազգեստ** – обмундирование, установленная форма одежды – uniform

Կանոնադրություններով, հրամաններով են սահմանված ձևի հատուկ ըզգեստ, որ կրում են կոնկրետ կազմակերպության անդամները, սովորաբար՝ զինվորականները:



ամենօրյա զինվորական համազգեստ – повседневное обмундирование – barrack dress

ամենօրյա համազգեստ – повседневная форма одежды – service dress

համազգեստի մաքրում – чистка обмундирования – bull

համազգեստի պատիվ – տես *մեկուսախմբային ոգի*

ներկաքողարկումային համազգեստ – камуфляжная форма – battledress utilities

քիմպաշտպանության համազգեստ – костюм химзащиты – splash suit

**համազգեստավորում** – обмундирование – outfitting  
 Ջինծառայողների ապահովում համազգեստով:

**համազետեղում** – соразмещение – collocation  
 Երկու կամ ավելի ջոկատների, ստորաբաժանումների, կազմակերպությունների համատեղ ֆիզիկական տեղաբաշխումը միևնույն, հատուկ սահմանված տեղում:

**համազորային** – общевойсковой – combined arms  
 ՋՈՒ-ի բոլոր տեսակները, բոլոր զորատեսակները միավորող, դրանց բոլորի համար ընդհանուր:

համազորային զորամիավորում – общевойсковое соединение – combined arms team

համազորային խմբավորում – общевойсковая группировка – combined-arms force

համազորային պահուց – общевойсковой резерв – combined arms reserve, general reserve

համազորային պատրաստման առարկա – предмет общевойсковой подготовки – all-arms training subject

համազորային պատրաստում – общевойсковая подготовка – all-arms training  
 Ընդհանուր պատրաստում, բոլոր տեսակի ՋՈՒ-ի զինծառայողների (ստորաբաժանումների) ուսումնավարժեցում՝ ուսուցման համառազմական ա-

ռարկաների գծով, որոնց իմացությունն անհրաժեշտ է բոլոր մասնագիտությունների զինծառայողներին:

մատակարարման համազորային առարկաներ – общевойсковые предметы снабжения – common supplies

**համաժամանակացում** – синхронизация – synchronization  
 Տարբեր իրադարձությունների՝ պրոցեսների ևն համապատասխանեցում ըստ ժամանակի (հաճախականության, ազդանշանի):

**համաժամանակացված ավիաթնդանոթ** – տես *զնդացիր՝ համաժամանակացված զնդացիր*

**համաժամանակյա** – синхронный – concurrent

**համալարում** – տես *կարգաբերում*

**համալիր** – комплекс – complex  
 Մեկ միասնություն կազմող առարկաների, զործողությունների, երևույթների կամ հատկությունների զուգակցում, համախումբ:

բազմանպատակային հրթիռային համալիր՝ ուսին հենելով կրակելու համար – многоцелевой ракетный комплекс для стрельбы с упора в плечо – shoulder-launched multipurpose assault weapon

զենիթահրթիռային համալիր, ՋՀՀ – зенитно-ракетный комплекс, ЗРК – air defense missile system, anti-aircraft missile system

Օդային նշանակետերի խոցման համար նախանշանակված հրթիռային համալիր, ներառում է՝ կառավարվող զենիթային հրթիռներ (սովորաբար՝ թևավոր, պինդ վառելիքով), արձակման կայանքներ, զենիթային կառավարվող հրթիռի ուղեկցման սարքավորանքով համալրված՝ նշանակետի հայտնաբերման, զատորոշման և ուղեկցման կայաններ:

զենիթային հրետանային համալիր – зенитный артиллерийский комплекс – anti-aircraft cannon system

կրովի զենիթահրթիռային համալիր – переносной зенитно-ракетный комплекс,

ПЗРК – man-portable air defense system, MANPADS, portable anti-aircraft missile system, Shoulder-fired air defense weapon  
 Ձենիթափթիռային համալիր, որն իր եզրաչափքերով ու զանգվածով նախատեսված է, որ դրանք կարողանա տեղափոխել իր վրա զինծառայողը:

հակահրթիռային համալիր – противоракетный комплекс – interceptor system

«HOT» հակատանկային հրթիռային համալիր – противотанковый ракетный комплекс «HOT» – high subsonic, optically guided, tube fire

Երկրորդ սերնդի ֆրանս-գերմանական ծանր հակատանկային հրթիռային համալիր, որը եղել է ավելի քան 20 երկրների ցամաքային զորքերի սպառազինության մեջ (որոշ երկրներում կիրառվում է մինչ այսօր): Այն կիրառվել է 1991 թ. «Փոթորիկ անապատում» օպերացիայում և 2011 թ. Լիբիայում՝ ֆրանսիայի կողմից:

հետախուզակրակային համալիր – разведывательно-огневой комплекс, POK – reconnaissance and fire system

հետախուզահարվածային համալիր – разведывательно-ударный комплекс, PУK – surveillance and attack system

հրամանատվաչափողական համալիր – командно-измерительный комплекс – command test system, command and measurement complex

Միջոցների ու ծառայությունների համախումբ, որոնց օգնությամբ կատարվում է տիեզերանավերի (կրող հրթիռների և տիեզերական օբյեկտների) թռիչքի կառավարում Երկրից:

հրթիռային համալիր – ракетный комплекс – missile system

Գործառնություններն փոխկապված մարտական ու տեխնիկական միջոցների համախումբ, որը ներառում է հրթիռներ, դրանց արձակման կայանք, հրթիռների կառավարման միջոցներ, արձակման կայանքի տեղափոխման ու լիցքավորման միջոցներ ևն:

ՀՕՊ-ի մերձագործ համալիր – комплекс ПВО ближнего действия – short-range air defense

նավահանգստային համալիր – портовый комплекс – port complex

պաշտպանական արդյունաբերական համալիր – оборонно-промышленный комплекс – defense-industrial complex, military-industrial complex

Այն գիտահետազոտական, փորձարկումային կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների համախումբը, որոնք կատարում են ռազմական և հատուկ տեխնիկայի, հանդերձանքի, զինամթերքի ևն մշակում և թողարկում:

վրագետնյա բազավորմամբ շարժունակ հրթիռային համալիր – мобильный ракетный комплекс наземного базирования – land-based mobile missile complex

փոքր շառավղով գործողությամբ ՀՕՊ-ի համալիր – комплекс ПВО малого радиуса действия – short-range air defense խոցման փոքր շառավղի ունեցող ՀՕՊ-ի վրագետնյա համալիր, որը օդային նշանակետերը խոցում է հրթիռներով կամ հրետանային կրակով:

**համալրում** – 1. комплектование, пополнение, 2. пополнение – 1. manning, recruitment, 2. augmentation

Կազմի քանակային լրացում մինչև անհրաժեշտ (սահմանված) չափը:

երթային համալրում – маршевое пополнение – marching completion, marching replenishment

համալրման անձնակազմ – личный состав пополнения – filler personnel

համալրում արտատարածքային սկզբունքով – комплектование по экстерриториальному принципу – away-from-home manning principle

Անձնակազմով զորքի (ուժերի) համալրում ի հաշիվ այն զորակոչային թվակազմի, որը բնակվում է զորամասերի ու զորամիավորումների տեղաբաշխման (կազմավորման) վայրերի մոտակայքում:

համալրում տարածքային սկզբունքով – комплектование по территориальному принципу – manning on a territorial principle

Անձնակազմով զորքի (ուժերի) համալրում ի հաշիվ այն զորակոչային թվակազմի, որը բնակվում է զորամասերի ու զորամիավորումների տեղաբաշխման (կազմավորման) շրջաններից դուրս:

**համախմբել** – տես *միավորել*

**համախմբվածություն** – տես *միասնություն*

**համախմբում** – консолидация – consolidation

**համախորագիծ** – изобата – depth contour, depth curve

**համախտանիշ** – синдром – syndrome

ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ – синдром приобретенного иммунодефицита, СПИД – acquired immunodeficiency syndrome, AIDS

սուր ճառագայթային համախտանիշ – острый радиационный синдром – acute radiation syndrome

**համակարգ** – система – system

1. Օրինաչափորեն միմյանց հետ կապված տարրերի (առարկաների, երևույթների, տեսակետների, սկզբունքների, գիտելիքների և այլն) բազմություն, որը ներկայացնում է որոշակի ամբողջական գոյացություն, միասնություն: 2. Կարգ, որը պայմանավորված է որոշակի կապի մեջ գտնվող մասերի պլանաչափ, ճիշտ դասավորությամբ, գործողությունների խիստ հաջորդականությամբ: 3. Որևէ բանի կառուցվածքի ձևը, եղանակը, կազմակերպվածքը: 4. Հասարակարգ: 5. Խնդիրներով միմյանց շատ մոտ և կազմակերպորեն մեկ ամբողջություն կազմող տնտեսական միավորների, հիմնարկների համախումբ, ինչպես նաև միևնույն նպատակի ծառայող կառույցների, շինությունների, մեքենաների, մեխանիզմների համախումբ: 6. Կենդանի օրգանիզմի՝ որոշակի միասնություն ներկայացնող և ընդհանուր ֆունկցիայով միավորված հյուսվածքների, օրգանների, դրանց մասերի համախումբ: 7. Տեխնիկական կառուցվածքը, սարքվածքը: 8. Ֆիզիկական մեծություններ

րի հիմնական և ածանցյալ միավորների համախումբ:

ազգային հաղորդակցական համակարգ – система национальных коммуникаций – National Communications System

անհատական տեղորոշումային համակարգ – персональная локационная система – personal locator system

աստղաուղեվարական համակարգ – астронавигационная система – astronavigation system, celestial navigation system

Թռչող ապարատի կողային սարքավորանքի միջոցներ, որոնք նախանշանակված են երկրային լուսատուների տեղադրության միջոցով թռչող ապարատի տեղադիրքի կորդինատները որոշելու համար:

ավիացիոն ռմբանշանառման համակարգ – система авиационного бомбоприцеливания – bomb sighting system

ավիափոխադրումների համընդհանուր կատարողական համակարգ – Глобальная исполнительная система авиaperевозок – Global Air Transportation Execution System

ավտոմատացված կառավարման տեղեկատվական համակարգ – система автоматизированного командования и управления – Automated Command and Control Information System

ավտոմատ որոշարկման համակարգ – система автоматического опознавания – automated identification system

արբանյակային կապի ռազմական համակարգ – военная система спутниковой связи – Defense Satellite Communications System

արբանյակային ուղեվարական համակարգ – навигационная спутниковая система – satellite navigation system

արբանյակների համակարգ – система спутников – constellation

Միևնույն հարթության վրա գտնվող արբանյակների խմբավորում մի համակարգում:

եղած նյութական միջոցների և ռեսուրսների պահանջարկի մասին տեղեկույթի փոխանակման համակարգ – Система об-

мена информацией об имеющихся материальных средствах и потребностях в ресурсах – Stock Holding and Asset Requirements Exchange, SHARE

զենքի համակարգ – система оружия – weapon system, weaponry

Մեկ կամ մի քանի տեսակի զենքերի համակցություն՝ իրենց հանդերձանքով, նյութերով, սպասարկման միջոցներով, սպասարկող անձնակազմով, առքերման միջոցներով ևն:

զենքի համակարգի հատկացում – выделение систем оружия, выделение средств поражения – weapons assignment

Օդային պաշտպանությունում. ընթացակարգ, որի պարագայում զենքը և զինանթերքը հանձնվում են զենքի ավիացիոն համակարգերի ուղղորդման սպաներին՝ իրենց առաջադրանքը կատարելիս դրանք կիրառելու համար:

զենքի և ռազմական տեխնիկայի համակարգ – системы оружия и военной техники – weapon and equipment system

ընկերակցական համակարգ – товарищеская система – buddy-buddy system

Կենսաձև, որտեղ ընկերները հոգ են տանում միմյանց մասին և պաշտպանում իրար:

ըստ ձեռքբերման փաստացի արժեքի հաշվառման համակարգ – система учета по фактической стоимости приобретения – historical cost method

իներցիալ ուղեվարական համակարգ – инерциальная навигационная система – inertial navigation system

կապի և տեղեկատվության համակարգ – система связи и информации – communication and information system, CIS

կառավարման ավտոմատացված համակարգ – автоматизированная система управления, АСУ – Automated Command and Control System, ACCS

Կառավարման համակարգի մաս. էլեկտրոնային համակարգ, որում կառավարման օբյեկտի արդյունավետ գործառնման համար անհրաժեշտ տեղեկության հավաքումը, մշակումը և հաղորդումը կատարվում են կառավարման մարմինների գործառնությունների ի-

րականացման համար նախանշանակված հաշվողական ու հատուկ տեխնիկայի կիրառմամբ:

կառավարման և իրազեկման համակարգ – система управления и оповещения – control and reporting system

Համակարգ, որը բաղկացած է հայտնաբերման ռադիտեղորոշումային կայանների շղթայից, կառավարման կենտրոններից ու դիտորդ կազմակերպություններից, ինչպես նաև անհրաժեշտ կապի ցանցից և նախատեսված է. ա) օդային փոխադրամիջոցների մասին վաղ նախազգուշացման, հետևման և ճանաչման, ինչպես նաև մակերևութային միջոցներին հետևման համար, բ) ակտիվ օդային պաշտպանության բոլոր տեսակի միջոցների վերահղված համար:

կենսապահովման համակարգ – система жизнеобеспечения – life support system, life sustaining system

կենսապահպանման համակարգ – система жизнеобеспечения – survival system

Կենտրոնական Եվրոպայում խողովակաշարերի համակարգ – система центрально-европейских трубопроводов – Central Europe Pipeline System

կոմունալ համակարգ – коммунальная система – utility

հակահրդեհային համակարգ – противопожарная система – fire-control system

հակահրթիռային պաշտպանության համընդհանուր համակարգ – глобальная система ПРО – global ballistic missile defense

հակաօդային պաշտպանության նախազգուշացման գունային համակարգ – цветная система предупреждения противовоздушной обороны – air defense warning condition

հաճախականությունների բաշխման համակարգ – система распределения частот – frequency management

համընդհանուր դիրքորոշումային համակարգ – глобальная система позиционирования, система спутниковой навигации «Джи-Пи-Эс» – Global Positioning System, GPS

հայտնաբերման և կրակի կառավարման միացյալ ռադիոտեղորոշումային համակարգ – объединенная радиолокационная система обнаружения и управления огнем – joint surveillance and targeting attack radar system

հայտնաբերման և մարտավարական կառավարման համակարգ – система обнаружения и тактического управления – detection and tactical control system

հաշվարկման տարբերակված համակարգ – տես *ինքնարժեքի, ծախսերի հաշվարկում ըստ գործունեության տեսակների*

հաշվեկշռված ցուցանիշների համակարգ – система сбалансированных показателей – balanced scorecard

հեռուստատեսության փակ համակարգ – տես *հեռուստատեսություն՝ անհաղորդ հեռուստատեսություն*

հետախուզության համակարգ – система разведки – intelligence system

հիպերբոլական ռադիոնուղեվարական համակարգ – гиперболическая радионавигационная система – hyperbolic navigation system

հրթիռամիջուկային հարվածի մասին նախազգուշացման համակարգ – система предупреждения о ракетно-ядерном ударе – nuclear-missile attack warning system

«Մայլս» համակարգ – система «Майлс» – multiple integrated laser engagement system, MILES

Նշանակետի խոցման բազմանպատակային համալիր լազերային համակարգ:

Մարտական գործողություններին աջակցման համընդհանուր համակարգ – Глобальная система поддержки боевых действий – Global Combat Support System-Joint

մասնագիտացված հաշվողական համակարգ – специализированная вычислительная система – specialized computer system

մարտական կառավարման ավտոմատացված համակարգ – տես *կառավարում՝ գործերի կառավարման ավտոմատացված համակարգ*

*րում՝ գործերի կառավարման ավտոմատացված համակարգ*

միացյալ տեղեկատվական համակարգ – объединенная информационная система – joint information system

միջգրահատեխնիկական համակարգչային տեղեկատվական համակարգ – межбронетехническая компьютерная система – intervehicular information system

Ամերիկյան համակարգչային համակարգ, որը, հարմարեցված լինելով մարտական զրահապատ մեքենաներին, ցույց է տալիս ստորաբաժանման բոլոր մեքենաների գտնվելու վայրը, տվյալներ վառելիքի և մարտապաշարների մասին, ինչպես նաև ունի էլեկտրոնային հաղորդագրություններ և հրամաններ փոխանցելու հնարավորություն:

միջտեսակային օպերացիաների ռազմավարական պլանավորման համակարգ – система стратегического планирования межвидовых операций – joint strategic planning system

նշանաբաշխման համակարգ – система распределения целей – system of target distribution

որոնողանշանառական համակարգ – поисково-прицельная система – target search and track system

Միջոց, որի նախանշանակումն է նշանակետերի հայտնաբերումն ու որոշարկումը, դրանց կորդինատների ու շարժման պարամետրների որոշումը, ինչպես նաև այդ նշանակետերին խոցման միջոցների ուղղորդման համար տվյալների հաշվարկումը:

պաշտպանական համակարգի ռազմավարական բնույթ – стратегический характер оборонной системы – strategic nature of defense system

ռադիոնուղեվարական համակարգ – радионавигационная система – radio navigation system

ռելիեֆակրկնիչ համակարգ – система огибания рельефа – terrain following system

Համակարգ, որն օդաչուին կամ ինքնաղեկասարքին հնարավորություն է տալիս թռիչքի ժամանակ պահպանե-

լու գետնից միևնույն նվազագույն հեռավորությունը՝ կրկնելով ռելիեֆը:

վաղ իրազեկման համակարգ – система раннего оповещения – early warning system

վտանգավոր համակարգ – опасная система – safety-critical system

Համակարգ, որի վթարը կամ անսարքությունը կարող է հանգեցնել լուրջ հետևանքների՝ ընդհուպ մինչև մահ, սարքավորանքի շարքից դուրս գալը, բնապահպանական աղետ են:

վրագետնյա խոչընդոտների հետ բախման կանխման համակարգ – տես *համակարգ՝ խոչընդոտների թռիչքանցման համակարգ*

վրագետնյա տիեզերական համակարգեր – наземные космические системы – space asset

տեղեկատվական համակարգ – информационная система – information system

Համակարգ, որն ապահովում է տեղեկույթի պահպանումը և օգտատերերի տեղեկույթ ստանալու հնարավորությունը:

տեղեկատվահեռահաղորդակցային համակարգ – информационно-телекоммуникационная система – communication system

տեղեկույթի հավաքման և վերլուծության համակարգ – система сбора и анализа информации – information collection and analysis system

տիեզերական բազավորմամբ ինֆրակարմիր դիտման համակարգ – система инфракрасного наблюдения космического базирования – space-based infrared system

Համակարգ, որը նախատեսված է ինֆրակարմիր տիրույթում տիեզերական դիտումների համար:

տիեզերական բազավորմամբ համակարգեր – системы космического базирования – space asset

տրանսպորտի կառավարման համընդհանուր համակարգ – глобальная система управления транспортом – global transportation management

տիեզերական ուղեվարական համակարգ – космическая навигационная система – astronavigation system

ցամաքային զորքերի և ավիացիայի համագործակցությունն ապահովող համակարգ – система обеспечения взаимодействия сухопутных войск и авиации – army air-ground system

ցամաքուղային համակարգ – дренажная система – drainage system

ուղեվարության արբանյակային համակարգ – спутниковая система навигации – satellite navigation, SATNAV

ուղղորդիչ-ուղեվարական համակարգ – прицельно-навигационная система – aiming navigation system

ԹԱ-ի կողային համակարգ, որը նախանշանակված է գեների կիրառման և ուղեվարման խնդիրների համալիր լուծման համար:

ուղղորդման լազերային համակարգի բլոկ – блок лазерной системы наведения – laser guidance unit

ուղղորդման կիսավտոմատ հրամանատվական համակարգ – полуавтоматическая командная система наведения – semi-automatic command line of sight

Հրթիռի ուղղորդման համակարգ, որում օպերատորը հրթիռի արձակումից հետո վերահսկում է նրա թռիչքը մինչև թիրախին դիպչելը:

փոխադրումային համակարգ – транспортная система – transportation system

ԱՄՆ-ում. պետության բոլոր ցամաքային, ջրային և օդային ճանապարհներն ու փոխադրամիջոցները, որոնցով կատարվում են ՋՈՒ-ի փոխադրումները և մատակարարումը առկա և հնարավոր ՈԳԹ-ում:

փորձագիտական համակարգ – экспертная система – expert system

օդային հրամանատվության և կառավարման համակարգ – система воздушного командования и управления – Air Command and Control System

ՆԱՏՕ-ի մշակվող համակարգ, որը գտնվում է ներդրման փուլում և փոխարինելու է ներկայիս ՀՕՊ-ի համակարգը՝ ավիացիայի խնդիրների կա-



տարման հետ մեկտեղ ապահովելով մարտական թռիչքների պլանավորման ու խնդիրների առաջադրման գործառույթների կատարումը:

օդային տարածքի վերահսկման համակարգ – система контроля за воздушным пространством – airspace control system

օդային տեղափոխումների համապետական համակարգ – общегосударственная система воздушных перебросок – National Air Mobility System

ԱՄՆ-ում. քաղաքացիական և ռազմական կարողությունների ու կազմակերպությունների լայն և ամբողջական համակարգ, որն ապահովում է համընդհանուր արագ օդափոխադրումներ:

օդացամաքային օպերացիաների համակարգ – система воздушно-наземных операций – air-ground operations system

օդում բախումների կանխման համակարգ – система предупреждения столкновений в воздухе – traffic collision avoidance system

օդում լիքքավորման համակարգ – система дозаправки в воздухе – in-flight refueling system

օպերատիվ կառավարման համընդհանուր համակարգ – глобальная система оперативного управления – Global Command and Control System

ֆինանսական հաշվետվության միջազգային համակարգ – международная система финансовой отчетности – international accounting

**համակարգային** – системный – system

համակարգային խեղում – системная деструкция – system destruction

Որևէ համակարգի հիմնական սկզբունքների խաթարում, գլխավոր օրինաչափությունների խախտում:

**համակարգաստեղծ հասկացություն** – системообразующее понятие – system term

Հասկացություն, որը հանգուցային է տվյալ համակարգը վերլուծելու, գնահատելու, ներքին օրինաչափությունները հասկանալու համար:

**համակշռող զգեստ** – высотный компенсирующий костюм – pressure suit

**համակշռում** – 1. компенсация, 2. տես *փոխհաշվանցում* – 1. compensation, 2. տես *փոխհաշվանցում*

Փոխհատուցելը, պակասը լրացնելը, տեղը հանելը:

փոխադարձ համակշռում – взаимная компенсация – netting

**համակցված** – комбинированный – combined

**համահարաբերակցություն** – корреляция – correlation

1. Առարկաների, երևույթների կամ հասկացությունների հարաբերակցություն, համապատասխանություն, փոխկապվածություն, փոխկախվածություն: 2. Մաթեմատիկական վիճակագրությունում. հասկացություն, որով նշագրվում է երևույթների միջև եղած կապը, եթե դրանցից մեկը մյուսները պայմանավորող պատճառների թվում է, կամ եթե կան այդ երևույթների վրա ներգործող ընդհանուր պատճառներ: 3. Իրականում կամ ռադիոտեղորոշումային համակարգով դիտվող օբյեկտի և նախօրոք դրա մասին ստացված տեղեկության նույնականացում:

**համահարաբերակցում** – տես *համահարաբերակցություն*

**համաձայնագիր** – соглашение – agreement

Պայմանագրի տեսակ, փաստաթուղթ, որում կողմերը ամրագրում են որևէ հարցի վերաբերյալ իրենց ձեռք բերած համաձայնությունը:

անիրավասու համաձայնագիր – неправомочный договор – unauthorized commitment

Համաձայնագիր, որը պարտադիր իրականացման ենթակա չէ միայն այն պատճառով, որ այն կնքած անձը համապատասխան իրավասություն չի ունեցել:

ընդհանուր համաձայնագիր – общее соглашение – “umbrella” agreement

համաձայնագիր մատակարարումների և փոխադարձ սպասարկումների մասին –



соглашение о поставках и взаимном обслуживании – acquisition and cross-servicing agreement

համաձայնագիր ուժերի կարգավիճակի մասին – соглашение о статусе сил – status-of-forces agreement

Երկկողմ կամ բազմակողմ համաձայնագիր, որով սահմանվում է բարեկամական պետության տարածքում գտնվող ՆԱՏՕ-ի ՄՁՈՒ-ի զորամասերի (ստորաբաժանումների) կարգավիճակը:

նախնական համաձայնագիր – preliminary agreement

Համաձայնագիր, որում շարադրվում են այն գլխավոր սկզբունքներն ու դրույթները, որոնք հիմք են ծառայում հետագա հիմնական պայմանագրի համար:

շրջանակային համաձայնագիր – рамочное соглашение – framework agreement

Պայմանագիր, որում ընդհանուր գծերով նշվում են համաձայնագրի դրույթները՝ նախնական պայմանները, որոնք ենթակա են հետագայում՝ հիմնական պայմանագրի մշակման ժամանակ, ճշգրտման:

ռազմավարական սպառազինությունների սահմանափակման համաձայնագիր – соглашение по ограничению стратегических вооружений – strategic arms limitation agreement

սպառազինությունների վերահսկման համաձայնագիր – договор о контроле над вооружениями – arms control agreement

ստանդարտացման համաձայնագիր – соглашение по стандартизации – standardization agreement

տարանցման համաձայնագիր – соглашение о транзите, соглашение о транзитном следовании – transit agreement

ՆԱՏՕ-ի և ՌԴ-ի միջև համաձայնագիր՝ ՌԴ վրագետնյա ուղիներով ՆԱՏՕ-ի ոչ մահաբեր բեռների փոխադրման մասին:

տեխնիկական համաձայնագիր – техническое соглашение – technical agreement

համաձայնագրի հոդվածի կիրառում – применение статьи соглашения – invocation of article of agreement

համաձայնեցված – согласованный, координированный – coordinated

համաձայնություն – 1. согласие, 2. консенсус, 3. տես *պայմանավորվածություն* – 1. agreement, approval, 2. consensus, 3. տես *պայմանավորվածություն*

1. Համամիտ՝ համակարծիք լինելը, առարկություն չունենալը: 2. Համերաշխություն, միաբանություն: 3. Հավանություն: 4. Կազմակերպությունների, պետությունների դաշինք՝ միավորում որևէ համատեղ գործողության համար:

ընդհանուր համաձայնություն – общее соглашение – mutual agreement

Բոլոր կողմերի համաձայնությունը (մասնավորապես՝ պայմանագրի պայմանների վերաբերյալ):

համաձայնություն քաղաքացիական իշխանությունների հետ կապերի մասին – соглашение о связях с гражданскими властями – civil affairs agreement

ՌԺԺԵ-ի գտնվելու երկրի իշխանության քաղաքացիական մարմինների և այդ ուժերի հրամանատարության միջև ձեռք բերված համաձայնություն:

համաճարակ – эпидемия – epidemy, pestilence

համամասնություն – паритет – parity

1. Կողմերի հավասարություն, միևնույն դիրք՝ վիճակ: 2. Օրենսդրորեն սահմանվող հարաբերակցություն:

գնողունակության համամասնություն – паритет покупательной способности – purchasing power parity

ռազմական համամասնություն – военный паритет – military parity

համայնապատկեր – տես *տեսարան*

համայնապատկերային տեսախցիկ – панорамная камера – panoramic camera

համայնքային – общинный – communal

համաներում – амнистия – amnesty

**Համաշխարհային պարենային ծրագիր**  
– Международная продовольственная программа, МПП – World Food Programme

**համաշխարհայնացում** – տես *համընդհանրացում*

**համաչափ քայք** – мерный шаг, движение в ногу – cadence

**համապատասխանեցում** – տես *հարմարեցում*

**համապիտանի** – универсальный – multi-purpose

Այն, ինչը կարելի է օգտագործել տարբեր նպատակներով, հարմար է օգտագործման տարբեր համակարգերում:

**համառոտագրել** – аннотировать – annotate

**համառոտագրություն** – аннотация – annotation

**համասեռություն** – однородность, гомогенность – homogeneity

**համաստեղություն** – созвездие – constellation

**համատեղ** – 1. совместный, 2. տես *ընդհանուր* – 1. joint, communal, combined, 2. տես *ընդհանուր*

համատեղ հետապնդում – совместное преследование – combined pursuit

համատեղ հրատարակություն – совместное издание – joint publication

համատեղ նստեցում – совместная погрузка – unit loading, tactical loading

Իրենց տեխնիկայով հանդերձ ստորաբաժանումների նստեցում միևնույն փոխադրամիջոցը:

համատեղ օգտագործում – совместное использование – shared use

Անհատույց կարգով կամ հատուցման վերաբերյալ պայմանավորվածությունների հիման վրա ՆԱՏՕ-ին պետությունների հատկացրած ու տրամադրած ռեսուրսների օգտագործում:

**համատեղելիություն** – совместимость – 1. compatibility, 2. interoperability

էլեկտրամագնիսական համատեղելիություն – электромагнитная совместимость – electromagnetic compatibility

օպերատիվ համատեղելիություն – տես *փոխգործելիություն*

**համարակետ** – позиция – heading, course  
Որևէ ցանկում առանձնացված տող՝ կետ՝ խումբ, որին տրված է հերթական համար:

**համարձակ** – смелый, бесстрашный – daring

**համարձակություն** – смелость – daring  
Զինվորի բարոյահոգեբանական և մարտական հատկանիշ, որը դրսևորվում է նրա անվախության, վտանգավոր իրավիճակներում արդյունավետ կերպով գործելու, կյանքի համար վտանգներ կայացնող առաջադրանքները կատարելու նրա պատրաստակամության ու կարողության ձևով:

**համափոխարինելիություն** – взаимозаменяемость – interchangeability  
Փոխադարձաբար միմյանց տեղն զբաղեցնելու, մյուսի գործառույթները կատարելու կարողություն:

**համբարակ (պտմ.)** – интендант – quartermaster, commissary

**համեմատություն** – տես *բաղդատում*

**համերկրացի** – տես *հայրենակից*

**համընդհանրացում** – глобализация – globalization

Քաղաքակրթական գործընթաց, որը բնորոշվում է ամենուրեք միևնույն քաղաքակրթական մոդելի հաստատմամբ (արժեքային համակարգ, պետական-հասարակական կազմակերպվածք, սոցիալ-տնտեսական հարաբերություններ) և ազգային տարբերությունների վերացմամբ:

**համընդհանուր** – глобальный – global  
1. Համաշխարհային, համամոլորակային, համամարդկային: 2. Տվյալ սահմաններում՝ համատարած, ընդհանուր, վճռորոշ:

համընդհանուր բաշխում – глобальное распределение – global distribution

**համընկնող** – совпадающий – concurrent

**համիշխանություն** – синархия – synarchy

Պատկերացում, ըստ որի՝ աշխարհն իր բազմազանությամբ հանդերձ մի բարեկազմ օրգանիզմ է, որում առանձին ձևերը տեղաբաշխված են ըստ մշտապես խորացող անվերջ համադրման աստիճանակարգային օրենքի: Հասարակական-պետական բնագավառում մերժում է իշխանության քաղաքական կենտրոնացման, բազմամակարդակ աստիճանակարգային կենտրոնացված բյուրոկրատական կառույցների ստեղծման ձգտման և դրանով իսկ տարբեր ոլորտներում ամենաանշան որոշումներն անգամ խիստ վերահսկողության ենթարկման գաղափարը, քանի որ աշխարհի կառուցվածքի նման միօրինակացումը կսահմանափակի նրա ազատության աստիճանների թիվը և կխաթարի անձնավորության անկաշկանդ զարգացումը:

**համհարզ** – адъютант – aide-de-camp, ADC, adjutant

Ծառայողական և այլ հանձնարարությունների կամ շտաբային աշխատանքի կատարման համար պետին ենթակա սպայի (ենթասպայի, միջմանի) պաշտոն:

**Հայաստանի Հանրապետության Նախագահ** – Президент Республики Армения – President of the Republic of Armenia

Ներկայումս ՀՀ բարձրագույն ղեկավարը, որը նաև պետության ԶՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատարն է (այժմ ՀՀ-ն կիսանախագահական կառավարմամբ ժողովրդավարական պետություն է):

**հայացք** – 1. взгляд, 2. взгляд, мнение – 1. look, 2. view

**հայեցադաշտ** – поле зрения – field of fixation, visual field

Այն տարածությունը, որը տեսանելի է ամբողջ հնարավոր ծավալով աչքերի տեղաշարժման և գլխի անշարժության դեպքում:

**հայեցակարգ** – концепция – concept

1. Տեսակետների համակարգ, երևույթների, պրոցեսների (գործընթացների, կենսընթացների) այս կամ այն ըմբռնումը: 2. Որևէ ստեղծագործության, գիտական աշխատության միասնական, որոշիչ մտահղացումը, գլխավոր (առանցքային) գաղափարը՝ միտքը:

համատեղ գործողությունների հայեցակարգ – концепция совместных действий – joint doctrine

համատեղ հայեցակարգ – совместная концепция – joint concept

մարտավարական ավիացիայի կիրառման հայեցակարգ – концепция применения тактической авиации – tactical air doctrine

պաշտպանական քաղաքականության հայեցակարգ – концепция оборонной политики – concept of defense policy

ռազմարդյունաբերական համալիրի զարգացման հայեցակարգ – концепция развития военно-промышленного комплекса – concept of military-industrial complex development

ռազմաբժշկական հայեցակարգ – военно-медицинская концепция – military medical concept

ռազմական հայեցակարգ – военная концепция – military concept

ռազմական շինարարության հայեցակարգ – концепция военного строительства – military development concept

«Սահմանափակ միջուկային պատերազմի» հայեցակարգ – доктрина «Ограниченной ядерной войны» – «Limited nuclear war» doctrine

Հայեցակարգ, որը բովանդակում է սահմանափակ պատերազմներում միջուկային զենքի կիրառման սկզբունքները:

օպերատիվ ներուժի մեծացման հայեցակարգ – концепция повышения оперативного потенциала – operational capabilities concept

**հայտ** – заявка – request

**հայտարարագիր** – декларация – manifest

ինքնաթիռի կամ գնացքի բեռի և ուղևորների ցուցակ:

**հայտարարություն** – 1. заявление, 2. декларация – 1. declaration, proclamation, 2. manifest

բեռնային հայտարարություն – грузовой манифест – ocean manifest

հայտարարություն մտադրությունների մասին – заявление о намерениях – statement of intent

Փաստաթուղթ, որը հրապարակվում է՝ կապված «ընդունող» երկրին աջակցության մասին համաձայնության հետ:

պաշտոնական հայտարարություն – прокламация, официальное объявление – proclamation

**հայտարարում** – объявление – proclamation

**հայտնաբերում** – 1. обнаружение, детектирование, 2. выявление, открытие – 1. acquisition, detection, 2. warning, 3. discovery

միջուկային պայթյունների հայտնաբերման միջոցներ – средства обнаружения ядерных взрывов – nuclear explosion detection system

պայթյունավտանգ առարկաների հայտնաբերում – տես *հետախուզում՝ պայթյունավտանգ օբյեկտների հետախուզում*

վաղ հայտնաբերում կողային միջոցներով – дальнейшее обнаружение бортовыми средствами – airborne early warning

Հակառակորդի օդատիեզերական հարձակման միջոցների հայտնաբերում ինքնաթիռներում տեղադրված հեռավոր հայտնաբերման հատուկ սարքերով:

**հայտնագործություն** – изобретение, открытие – invention

**հայտնագործում** – обнаружение, открытие – detection

**հայտնել** – сообщить – inform, report

**հայրենադարձ** – репатриант – returnee

**հայրենադարձություն** – репатриация – repatriation

Ռազմագերիների, տեղահանվածների, փախստականների, արտագաղթածների կամ նրանց սերունդների վերադարձը հայրենիք (նաև՝ պատմական):

**հայրենակից** – соотечественник, земляк – compatriot

**հայրենասեր** – патриот – patriot

**հայրենիք** – отечество, отчизна, родина – homeland, motherland, fatherland

1. Նախնիների՝ դարերով ապրած երկիրը: 2. Ծննդավայր:

հայրենիքի անվտանգություն – безопасность отечества – homeland security

Հասկացություն, որն ԱՄՆ-ում լայն տարածում ստացավ 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո և նշանակում է ահաբեկչության, մեծ աղետների և այլ արտակարգ իրավիճակների նկատմամբ պետության խոցելիության նվազեցմանն ուղղված համաձայնեցված համապետական ջանքեր:

**հայրիշխանություն** – патриархат – androcracy

Հասարակություն, որում գերակա դիրքը պատկանում է տղամարդկանց:

**հանգամանք** – обстоятельство – case

**հանգար** – ангар – hangar

Հատուկ սարքավորված շինություն (սենք) ինքնաթիռների և ուղղաթիռների պահման, տեխնիկական սպասարկման և նորոգման համար:

**հանգիստ** – отдых – rest

հանգիստ և ուժերի վերականգնում – отдых и восстановление сил – rest and recuperation

**հանգրվան** – 1. տես *ապաստան՝ ապաստան 1*, 2. этап – 1. տես *ապաստան՝ ապաստան 1*, 2. stage

1. Ապահով տեղ, վտանգներից ազատ տեղ: 2. Ջրքերի շարժման ճանապարհին կետ, որտեղ նրանց տրվում են գիշերելու տեղ, պարեն, անասնակեր ևն: 3. Ըստ բուժտարահանման փուլերի՝ բուժիմնարկներ, որտեղ վիրավորներին ու հիվանդներին տրվում

են համապատասխան օգնություն ու բուժում:

խաղաղ հանգրվան – տես *ապաստան՝ հուսալի ապաստան*

**հանգույց** – узел – 1. junction, node, 2. tangle (of problems), 3. (*ժով.*) knot

1. Մի քանի համասեռ ձգայնական առարկաների (կապուղի, հաղորդակցության ուղի, պարան են) խաչման (միացման) տեղ՝ վայր: 2. Խճճվածություն, կնճիռ: 3. Նավատորմում. արագության միավոր, 1 հանգույց = 1 ծով. մղոն/ժ=1856 մ/ժ:

**հանգուցակապ** – узел – knot

**հանգուցակետ** – ключевая точка – key point

**հանգուցանշան** – ключевой символ – key symbol

Հոգեբանական օպերացիաներում. պարզ, հաճախ կրկնվող ներշնչման տարրեր (ռիթմ, նշան, գույն են), որոնք անմիջական ազդեցություն են գործում նպատակային լսարանի վրա և ստեղծում են բարենպաստ իրավիճակ հոգեբանական թեմայի ընկալման և յուրացման համար:

**հանդարտիչ** – տես *թափամեղմիչ*

**հանդես** – 1. представление, 2. журнал – 1. magazine, 2. spectacle

1. Մշակութային զանգվածային միջոցառում (երեկոյթ, համերգ, ներկայացում են): 2. Պարբերական հրատարակություն, պարբերագիրք, պարբերամատյան:

**հանդերձանք** – экипировка – outfit, equipment

1. Ջինվորականին անհրաժեշտ՝ իր վրա կրովի հագուստի, զինավառության և այլ իրերի ամբողջությունը: 2. Որևէ կառույցի (գործարան, ձեռնարկություն են), տեխնիկական ապարատի (նավ, ինքնաթիռ, տանկ են) գործունեության համար անհրաժեշտ սարքավորանքի, գույքի, իրերի ամբողջությունը:

բնութագրական հանդերձանք – характеристическое оснащение – signature equipment

Հանդերձանքի առարկաներ, որոնք ցույց են տալիս, թե ինչ բնույթ և էություն ունի այն ստորաբաժանումը, որին դրանք պատկանում են:

թռիչքային հանդերձանք – летное снаряжение – flight gear

Օդանավի անձնակազմի արտահագուստը թռիչք կատարելիս:

հանդերձանքի տեղափոխման թեթևացված մոդուլային համակարգ – облегченная модульная система переноски снаряжения – Modular Lightweight Load-bearing Equipment

մարտական հանդերձանք – боевая выкладка – fighting order

**հանդերձավորված մեքենայի զանգված** – снаряженная масса машины – net weight

**հանդերձում** – 1. экипировка, оснащение, 2. снаряжение – 1. equipping, equipment, 2. outfitting

1. Ջինվորականի ապահովում հանդերձանքի իրերով: 2. Որևէ կառույցի (գործարան, ձեռնարկություն են), տեխնիկական ապարատի (նավ, ինքնաթիռ, տանկ են) գործունեության համար անհրաժեշտ սարքավորանքով, գույքի՝ իրերի ամբողջությամբ ապահովում:

**հանդիպածամ** – время встречи, время randevu – rendezvous time

(*ռազմ.*) Ջորամասերի, ռազմանավերի և հանդիպելու՝ միևնույն տեղում հավաքվելու նախապես որոշված՝ նշանակված ժամանակը:

**հանդիպակաց** – противолежащий – adverse

**հանդիպատեղ** – место встречи, randevu – rendezvous

(*ռազմ.*) Ջորամասերի, ռազմանավերի և հանդիպման՝ հավաքի՝ միանալու նախապես որոշված՝ նշանակված տեղը:

**հանդիպում** – встреча – 1. meeting, 2. rendezvous

անսպասելի հանդիպում – неожиданная встреча – encounter

Օպերատիվ հետախուզության տեսակ, միջոցառումների համախումբ, որոնք կազմակերպում են հատուկ նախանշանակման միավորումների շտաբները, զորամիավորումները, զորամասերը, ստորաբաժանումները, և որոնց նպատակներն են հակառակորդի մասին տեղեկությունների ստացումը, հատուկ միջոցառումների իրագործումը և օգնությունը պարտիզանական շարժման կազմակերպման գործում: Հիմնական խնդիրներն են. միջուկային հարձակման միջոցների, հետախուզահարվածային համալիրների, ռեզերվների, զորքերի կազմավորումների, կառավարման կետերի, թռիչքադաշտերի, ռազմաօդային և ռազմածովային զորականների, օպերատիվ թիկունքի օբյեկտների և այլ կարևոր օբյեկտների մասին տեղեկությունների հայթայթումը, նրա գործողությունների ու մտադրությունների բնույթի, ինչպես նաև ՌԳԹ (օպերացիայի շրջանի) օպերատիվ սարքավորման պարզումը:

հատուկ հետախուզություն և դիտում – специальная разведка и наблюдение – special reconnaissance and surveillance

հետախուզության աշխատանքի մեթոդներ – методы работы разведки – tradecraft

հետախուզության ապահովման միացյալ ստորաբաժանում – объединенное под-

разделение обеспечения разведки – joint intelligence support element

հետախուզության գծով հավելված – приложение по разведке – intelligence annex  
Գործողությունների պլանի փաստաթղթի՝ հետախուզական տվյալներ պարունակող հավելված:

Հետախուզության կապի միացյալ համընդհանուր համակարգ – Объединенная глобальная система связи разведки – Joint Worldwide Intelligence Communications System

*ԱՄՆ-ում*. փոխկապված համակարգչային ցանցերի համակարգ, որը կառավարում է ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության հետախուզական վարչությունը:

հետախուզություն բաց աղբյուրների հիման վրա – разведка по открытым источникам – open source intelligence

հետախուզություն մարտադաշտում – разведка на поле боя – intelligence preparation of the battlespace

հետախուզություն տեխնիկական միջոցներով – տես *հետախուզություն՝ տեխնիկական հետախուզություն*

հրետանային հետախուզություն – артиллерийская разведка – artillery intelligence

ծայնային հետախուզություն – տես *հետախուզություն՝ ակուստիկ հետախուզություն*

ճառագայթային հետախուզություն – радиационная разведка – radiation reconnaissance, radiation detection

մանրէաբանական հետախուզություն – бактериологическая разведка – bacteriological intelligence

մարտավարական հետախուզություն – տես *հետախուզություն՝ զորային հետախուզություն*

միկրոալիքային հետախուզություն – տես *հետախուզություն՝ ռադիոջերմային հետախուզություն*

միջուկային զենքի բնագավառում կատարվող հետախուզություն – разведка в сфере ядерного оружия – nuclear intelligence

պաշտպանական հետախուզություն – оборонная разведка – defense intelligence, defense reconnaissance

ռադիոէլեկտրոնային հետախուզության մարտավարական համակարգ – тактическая система радиоэлектронной разведки – tactical electronic reconnaissance system, TERC

ռադիոէլեկտրոնային հետախուզություն – радиоэлектронная разведка – electronic reconnaissance

ռադիոչափական հետախուզություն – радиометрическая разведка – radiometric reconnaissance

ռադիոջերմային հետախուզություն – радиотепловая разведка, микроволновая разведка – radioheat reconnaissance

ռադիոտեխնիկական հետախուզություն – радиотехническая разведка – electronic reconnaissance

Տեխնիկական հետախուզության տեսակ, որի գործունեությունը հիմնված է ռադիոճառագայթող միջոցների մասին տվյալների (աշխատանքային հաճախականություններ, հրթիռների զրոյական ուղղորդման կայանների և նշանակետին ուղղման համակարգերի արձակած ինպուլսների հաճախականություն ու տևողություն) և դրանց սպասարկած օբյեկտների մասին տեղեկության հավաքման ու հետագա համակարգման համար ռադիոհորսման միջոցների օգտագործման վրա:

ռադիոտեղորոշումային հետախուզություն – радиолокационная разведка – radar intelligence

ՌՏԿ-ներից ստացվող տեղեկությունների հավաքում:

ռազմածովային հետախուզություն – военно-морская разведка – naval intelligence

Ուզմական հետախուզության խորհուրդ – Совет по военной разведке – Military Intelligence Board

ԱՄՆ-ի ՊՆ հետախուզության բարձրագույն մարմինը՝ հետախուզական գործակալություն (մարմին), որը որոշում է պաշտպանական գերատեսչության հետախուզական քաղաքականությունը և ծրագրային առաջնահերթությունները:

ռազմական հետախուզություն – военная разведка – military intelligence

Ուազմական հետախուզությունն ընդհանուր առմամբ կենտրոնանում է արտասահմանյան երկրների և կազմակերպությունների (ներառյալ՝ ոչ պետական դերակատարների) ռազմական կարողությունների և այլ պրոբլեմների վրա, որոնք կարող են ազդել յուրային պետության պաշտպանական ներուժի կամ բազմազգ ռազմական օպերացիայի վրա: Այս տեսակի հետախուզությունը սովորաբար զուգորդվում է երկարաժամկետ պլանավորման հետ և փորձում է որոշարկել և մշտազնել ազգային անվտանգության վրա ազդեցություն գործող միտումները, որպեսզի հեշտացվի սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Ուազմական հետախուզությունը հարմարեցվում է պաշտպանական համակարգի խնդիրներին և ներառում է տվյալների զեկուցում ընտրված օտարերկրյա ռազմական ուժերի կազմակերպվածքի, գործողությունների, ենթակառուցվածքի և հնարավորությունների մասին:

ռազմավարական հետախուզություն – стратегическая разведка – strategic intelligence

ռազմաօդային հետախուզություն – военно-воздушная разведка – air force intelligence

սանիտարահակահամաճարակային հետախուզություն – санитарно-противоэпидемическая разведка – sanitary and epidemic intelligence

տեխնիկական հետախուզություն – техническая разведка, разведка техническими средствами – technical intelligence

տեղագրական հետախուզություն – топографическая разведка – topographic intelligence

տիեզերական հետախուզություն – космическая разведка – space reconnaissance

քիմիական հետախուզություն – химическая разведка – chemical detection, chemical reconnaissance

օդալուսանկարչական հետախուզության մեթոդի ընտրություն – выбор метода аэрофоторазведки – cover search

օդալուսանկարչական հետախուզություն – аэрофоторазведка – air photographic reconnaissance

օդային հետախուզություն – воздушная разведка – aerial reconnaissance, air reconnaissance

օպերատիվ-մարտավարական հետախուզություն – оперативно-тактическая разведка – tactical intelligence, tactical reconnaissance

Մարտավարական մակարդակի օպերացիաների պլանավորման համար անհրաժեշտ տվյալների՝ տեղեկությունների ձեռքբերման՝ ստացման նպատակով իրագործվող հետախուզություն:

օպտիկական հետախուզություն – оптическая разведка – optical reconnaissance

օտարերկրյա հետախուզություն – иностранная разведка – foreign intelligence

**հետախուզում** – разведка, рекогносцировка – intelligence, reconnaissance

1. Հետախուզության իրագործում:
2. Տեղանքում մարտի (օպերացիայի) կազմակերպման հրամանատարի աշխատանքի բաղկացուցիչ մաս. տեղանքի և հակառակորդի զննում, որը շտաբի սպաների ներգրավմամբ կատարում է անձամբ հրամանատարը՝ որոշում ընդունելու համար անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով:

ականային հետախուզում – минная разведка – mine reconnaissance

Միջոցառումների և գործողությունների համալիր, որը նպատակաուղղված է ուժերի բազավորման շրջանում, տեղաշարժման երթուղիներում և մարտական գործողությունների շրջաններում ականային իրադրության պարզմանը:

եղանակի հետախուզում – разведка погоды, метеорологическая разведка – weather reconnaissance

զորային հետախուզում – войсковая разведка – reconnaissance, army reconnaissance

ինժեներական հետախուզում – инженерная разведка – engineer reconnaissance

ծովադեսանտային հետախուզում – морская десантная разведка – amphibious reconnaissance

կենսաբանական հետախուզում – биологическая разведка – biological reconnaissance

Խոցման հատուկ (կենսաբանական) միջոցների կիրառմանը հակառակորդի պատրաստման վերաբերյալ տվյալների հայթայթումը և ուսումնասիրությունը, դրանց կիրառման փաստի, միջոցների և եղանակների պարզումն ու հակառակորդի կիրառած կենսաբանական միջոցի (ազդանյութի) տեսակի, ախտահարման կամ հարուցիչների տարածման օջախների, համաճարակային վտանգի պահպանման հավանական տևողության որոշումը:

հետախուզում կրակով – разведка огнем – reconnaissance by fire

Կրակակոծում, որի նպատակն է հակառակորդին ստիպել բացահայտել իր դիրքերը:

հետախուզում մարտով – разведка боем – reconnaissance in force, developing attack

Հետախուզման նպատակով մղվող մարտական գործողություններ:

հրետանային գործիքային հետախուզում – артиллерийская инструментальная разведка – artillery observation

ծայնային հետախուզում – звуковая разведка – sound ranging

Հակառակորդի չդիտվող կրակող հրետանային մարտկոցների (հրանոթների, հրետանային արծակման կայանքների, ականանետների ևն) մասին տեղեկությունների ձեռքբերում՝ ըստ դրանց կրակոցների ձայների:

նախնական հետախուզում – предварительная разведка – initial reconnaissance  
պայթյունավտանգ օբյեկտների հետախուզում – разведка взрывоопасных объектов, обнаружение взрывоопасных предметов – explosive ordnance reconnaissance

ջրագրական հետախուզում – гидрографическая разведка – hydrographic reconnaissance

ջրարգելի հետախուզում – разведка водной преграды – water obstacle reconnaissance

ուղեգծային հետախուզում – путевая разведка – line search

Հետախուզում, որը կատարվում է հաղորդակցման յուրահատուկ ուղիների՝ երկաթգծի, ճանապարհների, ջրային ուղիների երկայնքով՝ շարժվող նշանակետեր և ընդհանրապես ակտիվություն հայտնաբերելու նպատակով:

օդային հետախուզում – տես *հետախուզություն*՝ *օդային հետախուզություն*

**հետախույզ** – разведчик – scout

**հետաձգված վճարում** – отсроченный платеж – deferred payment

**հետաձգում** – отсрочка – postponement

**հետաճ** – деградация – degradation

**հետապնդել** – преследовать – pursue

**հետապնդող** – преследователь – shadower

**հետապնդում** – погоня, преследование – pursuit

հետապնդման կոր – кривая погони – curve of pursuit

Կործանիչ ինքնաթիռի կողմից թիրախին հետապնդելու հետագիծ:

**հետաքննություն** – расследование, следствие, дознание – investigation, inquiry, inquest

Հանցագործության քննում, որը կատարվում է զորամասի հրամանատարի (հետաքննչական մարմնի) որոշմամբ՝ հետաքննիչ սպայի կողմից քրեակատարողական օրենսգրքի պահանջների պահպանմամբ:

հետաքննություն վարող սպա – офицер, ведущий дознание – investigating officer

**հետաքննում** – расследование, дознание – investigation

**հետաքրքրություն** – интерес – interest  
Շահեկանություն, շահագրգռվածություն, իմանալու ցանկություն:

**հետգլորք** – откат – recoil

Կրակոցից հետո հրանոթի շարժումը հակառակ ուղղությամբ:

«Հետ դա՛րձ» – «Кругом!» – “About turn!”

**հետխաղացում** – 1. տես *հետքաշում*, 2. տես *նահանց*

Ջորքերի (ուժերի) կողմից կանխամտածված կամ ակամա հեռացում գբաղեցրած բնագծերից (շրջաններից) և դրանց տեղափոխում՝ հակառակորդի գերակշռող ուժերի հարվածի տակից դուրս բերելու և հետագա գործողությունների համար ավելի նպաստավոր դիրք գրավելու համար: Կարող է լինել. 1) հակառակորդի հետ շփում չլինելու պայմաններում, 2) հակառակորդի հետ շփման պայմաններում (սկսվում է մարտից դուրսբերմամբ):

**հետկանչում** – отозвание, отзыв – recall

**հետհարված** – отдача – recoil, kick

Հրազենի շարժումը կրակոցի ժամանակ, որ տեղի է ունենում վառողային զազերի առաջացրած ուժի ազդեցությամբ:

**հետմղում** – отражение – repulse

գրոհի հետմղում – отражение атаки – repulse

հակահարվածի (հակահարձակման) հետմղում – отражение контрудара (контратаки) – repulse

**հետ մնացած** (զինվոր, նավ) – отставший – straggler

**հետնագնաց** – 1. ведомый, ведомый самолет, 2. ведомый, летчик ведомого самолета – 1. supporting aircraft, 2. wingman

1. Ջուլգով թռիչքների ժամանակ՝ երկրորդ, հետևից գնացող ինքնաթիռ: 2. Այդ ենթակա ինքնաթիռի օդաչուն:

հետնագնաց ինքնաթիռ – տես *հետնագնաց 1*

հետնագնաց ինքնաթիռի օդաչու – տես *հետնագնաց 2*

**հետնարտածում** – ретрополяция – back-cast

Անցյալի որևէ ժամանակաշրջանի համար գրաֆիկի կառուցում ըստ մոտ անցյալի կամ ընթացիկ ժամանակաշրջանի միտումների ու տվյալների:

**հետվայրէջքային վազք** – пробег после посадки, послепосадочный пробег – landing roll

**հետք** – след – 1. track, trace, 2. sign, trace, 3. blip

1. Որևէ բանի ազդեցությունից պահպանված նշան, դրոշմ: 2. ՌՏԿ, տատանագրիչի ևն էկրանին օբյեկտի լուսային արտապատկերը:

ինվերսիոն հետք – инверсионный след, конденсационный след – condensation trail, contrail

կոնդենսացման հետք – տես *հետք՝ ինվերսիոն հետք*

**հետքաշում** – отход, отвод войск – pull-out, retirement, withdrawal

հետքաշման գոտի – полоса отхода, полоса отступления – zone of action

Տեղանքի հատված, որը նշանակված է օպերատիվ-մարտավարական (մարտավարական) օղակի կազմավորմանը՝ հետքաշում կատարելու համար:

հետքաշման ուղի – путь отхода, направление отхода – line of withdrawal

մարտավարական հետքաշում – тактический отход – tactical withdrawal

**հետևակ** – пехота – 1. infantry, 2. (*պտմ.*) the foot

Ցամաքային զորքերի տեսակ, որը նախանշանակված է համագորային մարտում հակառակորդին պարտության մատնելու, նրա տարածքները գրավելու և իր տարածքը պաշտպանելու համար: Մարտը վարում է հետիոտն կարգով կամ մարտական մեքենաներով՝ համագործակցելով այլ զորատեսակների հետ (տանկեր, հրետանի ևն)՝ հրաձգային և այլ տեսակի սպառազինության օգտագործմամբ: Որոշ պետություններում կոչվում է մոտոհետևակ, մոտոհրաձգային զորք և այլն:

զրահամեքենայացված հետևակ – бронемоторизованная пехота – armored infantry

զրահամեքենայացված հետևակի գումարտակ – батальон бронемоторизованной пехоты – armored infantry battalion

թեթև հետևակ – легкая пехота – light infantry

ծովային հետևակ – морская пехота – Marine Corps, marines, naval infantry



Մեծ թվով պետությունների ՌՇՈՒ-ի մեծ շարժունակությամբ օժտված զորատեսակ, հետևակայիններ, որոնք ծառայում են նավատորմում, սակայն մարտական գործողություններ են վարում ցամաքում:

ծովային հետևակի արշավագորային բրիգադ (ԱՄՆ) – экспедиционная бригада морской пехоты – marine expeditionary brigade

ծովային հետևակի արշավագորային գումարտակ (ԱՄՆ) – экспедиционный батальон морской пехоты – marine expeditionary unit

ծովային հետևակի զինվոր – солдат морской пехоты – marine

ծովային հետևակի նավատորմային ուժեր – флотские силы морской пехоты – Fleet Marine Force

մեքենայացված հետևակ – механизированная пехота – mechanized infantry

օդաշարժունակ հետևակ – аэромобильная пехота – air assault infantry

**հետևակային** – пехотинец – Infantryman

**հետևանք** – следствие – effect

բացասական հետևանք – отрицательные последствия – fallout

կողմնակի միջուկային հետևանք – косвенные ядерные последствия – nuclear collateral effects

հետևանքների նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ – меры по уменьшению и ликвидации последствий – recovery and reconstitution

**հետևի** – задний – rear

**հետևում** – 1. տես *մշտագնում*, 2. слежение, сопровождение – 1. տես *մշտագնում*, 2. tracking

Նշանակետի ճշգրիտ և անընդհատ տեղորոշում ՌՏԿ-ով, օպտիկական և այլ միջոցներով:

հետևման գոտի – зона слежения – track production area

հետևում իրադրությանը – отслеживание ситуации – situation monitoring

հետևում «կապույտների» ուժերին – слежение за силами «синих» – blue force tracking

**հերբիցիդ** – гербицид – herbicide

**հերթագայական** – поочередный – alternate

**հերթագրոհ նշանակետի վրա** – заход на цель – bombing run

**հերթական համար** – порядковый номер – serial number

հերթական համարի հրանոթի ապագործարկում – прекращение действия орудия порядкового номера – number... out

հերթական համարի հրանոթի գործարկում – введение в действие орудия порядкового номера – number ... in

**հերթանցում** – проезд, прохождение – transit

**հերթապահ** – дежурный – man on duty, person on duty

**հերթապահություն** – дежурство – duty, watch

հերթապահություն եթերում – տես *ռադիոհերթափոխ*

հերթապահություն օդում – дежурство в воздухе – tour of flight duty, combat air patrol

Թռչող ապարատների անձնակազմերը և ավիացիոն ստորաբաժանումները մարտական խնդիրների կատարմանը պատրաստության ամենաբարձր աստիճանում պահելու եղանակ. օդային տարածության տվյալ շրջանում (հերթապահության գոտում) ավիացիոն ստորաբաժանումների թռչող ապարատների անձնակազմերի գտնվելը և սպասումը մարտական առաջադրանքի կատարման անցնելու հրամանի:

մարտական հերթապահություն – боевое дежурство – combat alert duty

Հատուկ տեսակի հերթապահություն (գործունեություն), որը վարում են հատուկ առանձնացված ուժերն ու միջոցները, որոնք գտնվում են պլանավորված կամ հանկարծակի ծագող խնդիրների լուծման և մարտական գործողությունների վարման համար պատ-



րաստության ավելի բարձր աստիճանում, քան մյուս ուժերն ու միջոցները:

մարտական հերթապահություն թռիչքադաշտում – боевое дежурство на земле – ground alert

**հերթափոխ** – 1. смена, 2. вахта – 1. duty, shift, 2. watch

1. Հերթափոխային աշխատանքի յուրաքանչյուր հերթը: 2. Միևնույն աշխատանքը միաժամանակ կատարող մարդկանց խումբ, որը փոխարինվում է մեկ այլ խմբով: 3. Նավի անձնակազմի մասի հերթական աշխատանքը՝ հերթապահությունը, ինչպես նաև այդ աշխատանքը՝ հերթապահությունը կատարող խումբը:

հերթափոխի հրամանատար – вахтенный командир – chief of the watch

մարտական հերթափոխ – боевая смена – duty shift

**հերթափոխային** – вахтенный – watch-keeper

**հերթափոխում** – смена – relay, relief

**հերձվածող** – изгой, отщепенец – alien

**հերմետիկ** – տես *օղաանթափանց*

**հերմետիկ խցիկ** – տես *պատիճախցիկ*

Սենք, որը լիովին մեկուսացված է շրջապատող միջավայրից և, սովորաբար, օժտված է լինում ներքին մթնոլորտի վերականգնման (պահպանման) համակարգով:

**հերոս** – герой – hero

**հերոսություն** – героизм – heroism

**հերքում** – տես *մխտում*

**հզորություն** – 1. мощь, сила, 2. мощность, 3. могущество – 1. power, might, vigor, 2. power, energy, 3. capability, power

1. Սուբյեկտի՝ գործընթացի վրա ներգործելու կարողության աստիճանը: 2. Միավոր ժամանակում կատարվող աշխատանքը: 3. Ուժեղությունը՝ ուժ ունենալը, ուժին՝ որպես իշխանությանը, տիրապետելը:

ծովային հզորության ցուցադրում – демонстрация морской мощи – maritime power projection

համախումբ հզորություն – совокупная мощь – total power, total strength

Պետության պաշտպանական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, գիտակրթական, մշակութային-հոգևոր, մտավոր, մարդկային, նյութառեսուրսային ամբողջական ներուժը:

հզորությունների հաշվեկշիռ – баланс сил, баланс мощности – balance of power, power balance

Էլեկտրականության բնագավառում. բոլոր աղբյուրների հզորությունների հանրահաշվական գումարի հավասարությունը էներգիայի բոլոր ընդունիչների հզորությունների թվաբանական գումարին:

մարտական հզորություն – боевая мощь – combat power, fighting strength

Պետության ռազմական ներուժի բաղկացուցիչ մասը, այն նյութական ու հոգևոր գործոնների համախումբը, որոնցով պայմանավորվում է ՋՈՒ-ի վիճակը և մարտական խնդիրներ կատարելու օպերատիվ կարողությունը:

միջուկային հզորություն – ядерная мощь – nuclear power

պետության հզորության գործիքակազմ – инструментарий национальной мощи – instruments of national power

Պետության կառավարության համար հասանելի այն բոլոր միջոցները, որոնք նա կարող է օգտագործել ազգային նպատակների իրագործման համար:

ռազմածովային հզորություն – военноморская мощь – sea power

ռազմական հզորություն – военная мощь – 1. military power, 2. military might, military strength

Պետության (պետությունների դաշնադրության) բնութագրիչ, որն արտահայտում է նրա նյութական ու հոգևոր ուժերի այն մասը, որը կարող է օգտագործված լինել և օգտագործվում է ռազմաքաղաքական նպատակներին հասնելու համար (կոչվում է նաև *պաշտպանական հզորություն*):

տերության տիեզերական հզորություն – космическая мощь государства – space power

**ՀՋՏ** – տես *տարաշարժ՝ հակազենհրթային տարաշարժ*

**հիգիենա** – гигиена – hygiene

«**Հիդրա**» – «Гидра» – “Hydra”

Ամերիկյան չկառավարվող հրթիռ՝ նախանշանակված ինքնաթիռից վրագետնյա նշանակետերը խոցելու համար:

**հիդրոգրաֆիա** – տես *ջրագրություն*

**հիդրոօդերևութաբանական ապահովում**

– гидрометеорологическое обеспечение  
– hydrometeorological service

Ջորքերի հատուկ ապահովման տեսակ, որը ներառում է մարտական գործողությունների շրջանում օդերևութաբանական և ջրաբանական պայմանների մասին տեղեկությունների հավաքումը և համակողմանի հաշվառումը:

**հիմնագիծ** – базисная линия – baseline

1. Երևակայական գիծ կամ ստանդարտ, որի միջոցով նույն կարգի մեծությունները չափվում կամ համեմատվում են: 2. Ջույգ կազմող հիմքային ռադիոերկրաբաշխական կայաններն իրար միացնող ուղիղ գիծ: 3. Լուսանկարաչափությունում. երկու հաջորդական ուղղաձիգ լուսանկարների հիմնական հենակետերը միացնող գիծ: 4. Եռանկյունացման մեջ. փոխհամաձայնեցված եռանկյունների շարքից մի եռանկյան այն կողմը, որը մանրակրկիտ կերպով և ճշգրտորեն չափված է, և որի միջոցով հաշվարկվում են մյուս եռանկյունների կողմերը:

տեղաերկրաբաշխական հիմնագիծ – геодезический базис – baseline

Գիծ, որի երկարությունը (մոտ 8-15 կմ) չափվում է տեղանքում գծային եղանակով՝ մեծ ճշգրտությամբ: Եռանկյունացման մեջ ծառայում է եռանկյունի ելակետային կողմի երկարության որոշման համար, ընդամեն երկրաբաշխական հիմնագծից եռանկյունի գծին անցումը կատարվում է հենագծերի ցանցի միջոցով:

**հիմնադրամ** – фонд – fund

1. Հիմնական կապիտալ, դրամագլուխ: 2. Ոչ առևտրային կազմակերպություն, որը տնօրինում է բարեգործական, սոցիալական կամ այլ հասարակական

օգտաբեր նպատակներով ստեղծված կապիտալը:

**հիմնադրում** – տես *հիմնում*

**հիմնական** – 1. основной, 2. основной, капитальный, 3. базовый – 1. main, 2. capital, 3. basic, base

հիմնական հենացանց – основная опорная сеть – field control

Ցանց՝ կազմված կետերից, որոնց տեղադիրքերն ու բարձրությունները հայտնի են և քարտեզագրության մեջ օգտագործվում են որպես հիմնական տվյալներ:

հիմնական պայմանականչ – основной позывной – primary call sign

Այն պայմանանշանը, որը հատկացված է տվյալ կայանին, և որի միջոցով հնարավոր է այն նույնականացնել:

հիմնական սպառող – основной потребитель – dominant user

Համատեղ կամ բազմազգ գործողությունների ժամանակ ընդհանուր օգտագործման որևէ պաշարների մատակարարման հիմնական սպառողը:

հիմնական տեխնիկական սպասարկում և նորոգում – капитальное техническое обслуживание и ремонт – depot maintenance

հիմնական ուղղակեցվածք – տես *դրություն՝ զգաստ դրություն*

**հիմնակետ** – ключевой пункт – critical point

Կարևոր աշխարհագրական վայր (կետ) կամ դիրք, որը կարող է առանցքային դեր խաղալ օպերացիայում հաջողության հասնելու համար:

**հիմնարկ** – учреждение – establishment

տարանցիկ բուժտարահանումային հիմնարկ – транзитное лечебно-эвакуационное учреждение – in-transit evacuation facility

**հիմնում** – учреждение – establishment

**հիմք** – 1. основа, базис, 2. цоколь, 3. основа, основание, 4. основание, щелочь – base

1. Պատի շարվածքի ստորին մասը գետնի մեջ: 2. Հենարան, պատվանդան: 3. Ներքնաշենք (բազիս): 4. Պատ-

ճառ, շարժառիթ: 5. Ապացույց, փաստ: 6. Սկզբնաղբյուր, ակունք, ելակետ:

նորմատիվ-իրավական հիմք – нормативно-правовая основа – normative legal instrument, legal and regulatory framework

**հիմքային** – основной, базисный – basic, base

- 1. Հիմքին վերաբերող, հիմքին առնչվող:
- 2. Որպես հիմք ծառայող:

հիմքային ժամանակաշրջան – базисный период – base period

Այն ժամկետը, որի համար կազմվում է պլանը:

հիմքային տարի – տես *բազիսային տարի*

**հիվանդ** – больной – sick

երթևեկ հիվանդ – амбулаторный больной, ходячий раненый – walking patient

Հիվանդ, որը կարողանում է քայլել, և որին տեղափոխելու համար պատգարակ անհրաժեշտ չէ:

**հիվանդանոց** – больница – hospital

**հիվանդացություն** – заболеваемость – morbidity, disease incidence, sickness rate

Որոշ ժամանակահատվածում հիվանդացումների հարաբերական թիվը:

**հիվանդության պատճառով զինծառայությանը ոչ պիտանի** – непригодный к военной службе по болезни – medically unfit

Օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգ, ըստ որի՝ տվյալ հիվանդությամբ տառապող քաղաքացին ենթակա չէ բանակ զորակոչման, իսկ զինծառայողը դադարեցնում է իր զինծառայությունը:

**հիվանդություն** – болезнь, заболевание – disease, illness

Օրգանիզմի բնականոն կենսագործունեության, աշխատունակության, սոցիալապես օգտակար գործունեության, կյանքի տևողության և արտաքին ու ներքին միջավայրների մշտապես փոփոխվող պայմաններին նրա հարմարվելու ընդունակության նվազում՝ որպես պատասխան ախտածին գործոնների ազդեցությանը:

Ճառագայթային հիվանդություն – лучевая болезнь – radiation sickness

վարակիչ հիվանդություն – заразная болезнь, инфекционная болезнь – infectious disease

վարակիչ հիվանդություններից պաշտպանության միջոցներ – меры защиты от инфекционных заболеваний – infectious disease protection

**հիվանդություններ և ոչ մարտական վնասվածքներ** – болезни и небоевые ранения – disease and nonbattle injury

Հիվանդություններից և ոչ մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքներ:

**ՀԿ** – 1. տես *հրամանատարական՝ հրամանատարական կետ*, 2. տես *կազմակերպություն՝ հասարակական կազմակերպություն*

**ՀԿՀ** – տես *համալիր՝ հետախուզակրակային համալիր*

**ՀԿՌՀ** – տես *համակարգ՝ համազարկային կրակի ռեակտիվ համակարգ*

**ՀԿՏ** – տես *տարաշարժ՝ հակակործանիչային տարաշարժ*

**ՀՀՀ** – տես *համալիր՝ հետախուզահարվածային համալիր*

**ՀՀՊ** – տես *պաշտպանություն՝ հակահրթիռային պաշտպանություն*

**ՀՀՊ համակարգերի միջև խնդիրների բաշխում** – распределение задач между системами ПРО – weapon assignment

**հղում** – ссылка – reference

**հղում քարտեզին** – ссылка на карту – map reference

Քարտեզի ծանոթագրություն՝ քարտեզի վրա (սովորաբար՝ մասշտաբային կամ կողողինատային ցանցի վրա) հաղորդվող տեղեկությունների համեմատման միջոցով երկրի մակերևույթի վրա կետի որոշման եղանակ:

**ՀՄՄ** – տես *մեքենա՝ հետևակի մարտական մեքենա*

**հմտություն** – умение, навык – skill

Վարժությամբ՝ սովորելով ձեռք բերված ունակություն, որն է բնագավառի գործնական գիտելիքների ամբողջություն:

**հյուծում** – տես *ուժասպառություն*

մարտական հյուծում – боевое истощение – battle fatigue

Առանձնահատուկ հոգեհուզական վիճակ, որն առաջանում է ստրեսների, հուզական կամ մտավոր գերլարվածության հետևանքով և բացասաբար է ազդում կյանքի որակի վրա:

**հյուպատոս** – консул – consul

**հյուպատոսարան** – консульство – consulate

**հյուպատոսություն** – консульство – consulate

**հյուսիս** – север – north

իրական հյուսիս – истинный север, истинное направление северного меридиана – true north

մագնիսական հյուսիս – магнитный север – magnetic north

**Հյուսիսային բևեռաշրջան** – Северный полярный круг – Arctic Circle

**Հյուսիսատլանտյան պայմանագրի դաշինք** – տես *կազմակերպություն՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն*

**հյուսիսը կողմնացույցով** – север по компасу – compass north

**հնազանդում** – տես *ենթարկում*

**հնար** – прием – technique

մարտավարական հնար – тактический прием – tactical maneuver

տակտիկական հնար – տես *հնար՝ մարտավարական հնար*

**հնարամտություն** – տես *ձեռներեցություն*

**հնարավոր** – возможный, потенциальный – potential, feasible

**հնարք** – տես *խորամանկություն*

**հնձել** – տես *բնաջնջել*

**հնոց** – տես *այրում՝ այրման խուց*

**հոգեբանական** – психологический – psychological

հոգեբանական թեմա – психологическая тема – psychological theme

Այն գաղափարը, որի վրա է հիմնվում հոգեբանական օպերացիան:

հոգեբանական իրավիճակ – психологическая обстановка – psychological situation

**հոգեխոցվածք** – психическая травма – psychological trauma

Անձնային նշանակալիություն ունեցող որևէ իրավիճակ (երևույթ), որը մարդու հոգեկանի վրա գործում է այստաժին բնույթի ազդեցություն, հոգեբանորեն դժվար տանելի է և ունակ է պաշտպանական հոգեբանական մեխանիզմների անբավարարության դեպքում հանգեցնելու հոգեկան խանգարման:

մարտական գործողություններում ստացված հոգեխոցվածք – психологическая травма, полученная в ходе боевых действий – battle fatigue

Ուժեղ վերապրում, հոգեկան ցնցում, որն առաջ է եկել մարտական իրադրության հոգեխոցիչ գործոնների կարճատև կամ երկարատև ազդեցության հետևանքով, այսինքն՝ երբ մարդը ֆիզիկապես վիրավորում կամ կոնսուզիա չի ստացել, բայց ի վիճակի չէ վարելու մարտական գործողություններ:

մարտական հոգեխոցվածք – боевая психическая травма – battle exhaustion, combat fatigue, mental trauma in combat

**հոգեկան** – психический – mental

հոգեկան առողջություն – психическое здоровье – mental health

**հոգնականություն** – плюрализм – pluralism

Փիլիսոփայական ուսմունք, որը պնդում է, թե աշխարհի հիմքում դրված են բազմաթիվ ինքնուրույն, անկախ հոգևոր էություններ:

**հոլակ** – гироскоп – gyroscope

Արագ պտտվող կախյալ ռոտոր, որի պտտման առանցքը կարող է տա-րածության մեջ փոփոխել իր դիրքը:

**հողակցում** – заземление – earthing  
էլեկտրական սարքի, օբյեկտի կամ փոխադրամիջոցի միակցում Երկրագնդին՝ պաշտպանական նպատակով:

**հողանցում** – տես *հողակցում*

**հողապատնեշ** – бруствер – parapet, breastwork, sangar

**հողմակողմ** – наветренный – upwind

**հողմապակի** – ветровое стекло, переднее стекло, лобовое стекло – windscreen, windshield

«Հոռնետ» – «Хорнет» – “Hornet” (FA-18)  
Ամերիկյան թեթև բազմանպատակային կործանիչ:

**հոսակորուստ** – утечка – leakage, escape  
1. Հեղուկի և գազի չնախատեսված արտահոսք: 2. (փոխ.) Հոսուն առարկաների, նյութերի ևն արտահոսք:

**հոսք** – поток – stream

հիմնական հոսք – основной поток – mainstream

**հոսանքակուտակիչ** – аккумулятор – battery

**հոսատարում** – снос, дрейф – drift  
Լողացող՝ թռչող մարմնի տեղափոխումը միջավայրի ազդեցության հետևանքով:

**հոսափտալ** – госпиталь – military hospital, medical and casualty facility

Զինվորական բուժկանխարգելիչ հիմնարկ, որը նախանշանակված է զինծառայողներին որակավոր և մասնագիտացված բուժօգնություն ցույց տալու և ստացիոնար բուժման համար:

դաշտային հոսափտալ – полевой госпиталь – field hospital, ambulance

**հովանավորություն** – покровительство, протекция – protection

**հովացնող հեղուկ** – охлаждающая жидкость, хладагент – coolant

Շարժիչի գերտաքացումը կանխող սառեցնող միջոց:

**հովհար** (*հրետ.*) – веер – sheaf of fire  
Մարտկոցի (դասակի) միևնույն կրակային դիրքում տեղաբաշխված հրա-

մոթների (ականանետների, մարտական մեքենաների) փողերի փոխհամաձայնեցված ուղղորդում՝ միևնույն նշանակետի կրակելու դեպքում:

**հորիզոն** – горизонт – horizon

աստղաբաշխական հորիզոն – астрономический горизонт – true horizon

իրական հորիզոն – истинный горизонт – true horizon

տեսանելի հորիզոն – видимый горизонт – apparent horizon

ԵՎ այն զիծը, որով երկինքը սահմանագատվում է Երկրից, և՛ դրա վերևում գտնվող երկնային տարածությունը, և՛ Երկրի այն մակերևույթը, որը դիտորդը տեսնում է, և՛ նրա շուրջը սփռված ամբողջ տեսանելի տարածությունը:

**հորիզոնագիծ** – горизонталь – contour line, contour

ենթադրական հորիզոնագիծ – предполагаемая горизонталь, гипотетическая горизонталь – form line

հիմնական հաստացված հորիզոնագիծ – основная утолщенная горизонталь – index contour line

միջանկյալ հորիզոնագիծ – промежуточная горизонталь – intermediate contour line

օժանդակ հորիզոնագծեր – вспомогательные горизонталь – auxiliary contours

**հորիզոնական փողաշրջում** – горизонтальный поворот орудия – traverse

**հորիզոնահողակ** – гиригоризонт – gyrohorizon

Հոլակային սարք, որը նախանշանակված է տարածության մեջ օբյեկտի իրական հորիզոնական դիրքը որոշելու համար:

**հորինվածք** – компоновка – format

**հպատակ** – подданный – subject  
Որևէ պետության քաղաքացիություն ունեցող անձ:

այլ պետության հպատակ – տես *հպատակ՝ օտարերկրյա հպատակ*

օտարերկրյա հպատակ – иностранный подданный – foreign national, foreign subject

**հպատակագրում** – натурализация – naturalization

Քաղաքացիություն հայցողի կամավոր ցանկության հիման վրա քաղաքացիության ձեռքբերման իրավաբանական գործընթաց:

**ՀՊԾ** – տես *Համաշխարհային պարենային ծրագիր*

**հպում** – տես *շփում 1*

**հռչակագիր** – декларация – declaration, proclamation

**հռչակում** – провозглашение – proclamation, leaflet

**հսկիչ** – контролер – 1. supervisor, 2. inspector

**հսկողություն** – 1. контроль, 2. надзор – 1. control, 2. inspection  
Ստուգում, հետևում, պահպանում:

**հսկում** – տես *հսկողություն 2*

էլեկտրոնային հսկում՝ անցումային պրոցեսների ժամանակ սխեմաներում առաջացող էլեկտրամագնիսական ճառագայթման վերլուծությամբ – электронная слежка путем анализа электромагнитного излучения в схемах при переходных процессах – TEMPEST

**հրաբամբակ** – տես *պիրոքսիլին*

**հրադադար** – прекращение огня – cease fire

Որոշ ժամանակով մարտական գործողությունների դադարեցման համաձայնագիր, որն ստորագրվում է մինչև պատերազմի ավարտը նշանավորող հաշտության պայմանագրի կնքումը:

համընդհանուր հրադադար – всеобщее прекращение огня – general cease fire

հրադադարի համաձայնեցված գիծ – согласованная линия прекращения огня – agreed cease-fire line, ACFL

հրադադարի ռեժիմ – режим прекращения огня – cease-fire regime

**հրազեն** – огнестрельное оружие – gun  
Կինետիկական զենքի տեսակ, որում խոցիչ տարրի (գնդակ, արկ, ական ևն) նետման համար օգտագործվում է նետիչ լիցքի ակնթարթային (վայրկյանի հարյուրերորդական մասեր) այրման հետևանքով փողում առաջացած խիստ սեղմված (մինչև 500 ՄՊա) և շիկացած (մինչև 3500 Կ) գազերի էներգիան:

հրազենային վիրավորում – огнестрельное ранение – gunshot wound

**հրաժարական** – 1. отказ, 2. отставка – 1. refusal, 2. resignation

1. Որևէ բանից հրաժարում պարունակող՝ բովանդակող: 2. Բանավոր կամ գրավոր հայտարարություն՝ պաշտոնից՝ հանձնարարված գործից ևն հրաժարվելու մասին:

**հրաժարում** – отказ – refusal

**հրակնատ** – бойница, амбразура – firing port, embrasure

**հրահան** – курок – cock

Հրածգային զենքի հարվածային մեխանիզմի մաս, որը կրակոցի ժամանակ կատարում է նետիչ լիցքի բոցավառում:

**հրահանգ** – 1. инструкция, 2. наставление, 3. տես *ցուցում* – 1. instruction, brief, 2. instruction, guide, 3. տես *ցուցում*

1. Որևէ բանի կատարման կամ իրագործման կարգն ու եղանակը սահմանող ցուցումների, կանոնների հավաքածու (համախումբ): 2. Խրատ, պատվեր, որով պետք է առաջնորդվել:

Հատուկ իրավիճակներում պլանավորման ղեկավար հրահանգ – Руководство по планированию в особой обстановке – Contingency Planning Guidance

հրահանգի ցրում – рассылка инструкции – dissemination of instruction

**հրահանգագիր** – 1. инструкция, 2. наставление – instruction, manual

Ծառայողական փաստաթուղթ, որը կանոնակարգում է զորամասերի, ռազմաուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության կազմակերպական, գիտատեխնիկական, տնտեսական, ֆինանսական և այլ հատուկ կողմեր կամ բովանդակում



է ռազմական տեխնիկայի օգտագործման կամ կիրառման վերաբերյալ ցուցումներ:

գորավարժության պլանավորման և անցկացման վերաբերյալ հրահանգագիր – инструкция по планированию и проведению военного учения – exercise planning and performance instructions

Ծովային ավիացիայի պատրաստման ու շահագործման ընթացակարգերի ստանդարտացման հրահանգագիր – Руководство по стандартизации процедур подготовки и эксплуатации морской авиации – Naval Air Training and Operating Procedures Standardization manual

**հրահանգավորում** – инструктирование, инструктаж – instruction, instructing, briefing  
Հրահանգով՝ հրահանգագրով օժտում, ապահովում:

**հրահանգիչ** – инструктор – instructor

**հրահանգում** – инструктирование, инструктаж, постановка задачи – instruction, instructing  
Առաջադրանքի կատարման եղանակի վերաբերյալ ցուցում տալը:

**հրահանը բարձրացնել** – взводить курок – cock

**հրահանը քաշած** – со взведенным курком – made ready

**հրահրել** – 1. подстрекать, понуждать, 2. разжигать – 1. incite, solicit, 2. foment

**հրահրիչ** – տես *սադրիչ*

**հրահրում** – տես *սադրանք*

**հրաձգային բջջախրամատ** – стрелковая ячейка, ячейный окоп – weapon pit  
Խրամատի, խրամուղու ևն տարր, որը նախատեսված է ավտոմատավորի, զնդացրորդի, նռնականետորդի կամ խմբային զենքի մարտահաշվարկի տեղաբաշխման համար:

**Հրաձգային զենքի, թեթև սպառազինության և ականների դեմ պայքարի գծով հատուկ աշխատանքային խումբ (ՆԱՏՕ)** – Специальная рабочая группа по стрелковому оружию, легкому вооружению и борьбе с минами (НАТО) – Ad Hoc

Working Group on Small Arms and Light Weapons and Mine Action

**հրաձգային զենք և թեթև սպառազինություն** – стрелковое оружие и легкое вооружение – small arms and light weapons

**հրաձգարան** – стрельбище, тир – shooting ground, range, shooting range, firing range, target range, gallery range

Հատուկ սարքավորված կառույց՝ նախանշանակված անհատական (անձնական) և մարտական հրաձգային զենքով ուսումնավարժական հրաձգության կամ այդ գծով մրցումների անցկացման համար:

խողովակային հրաձգարան – трубчатое стрельбище – pipe range

**հրաձգություն** – стрельба – shooting, firing, fusillade

Հրազենի (հրետանի, հրաձգային զենք) արձակում:

անընդհատ լուսավորիչ հրաձգություն – непрерывный осветительный огонь – continuous illumination fire

Կրակի տեսակ, որի դեպքում լուսավորիչ արկերը կրակվում են որոշակի ժամանակամիջոցներում այնպես, որ թիրախը կամ սահմանված շրջանը լինեն մշտապես լուսավորված:

գազաթնահար հրաձգություն – навесная стрельба – mounted shooting, mounted firing, high fire

Հրետանային հրանոթներով հրաձգություն՝ փողի բարձրության անկյան 20°-ից մեծ արժեքների դեպքում, 45°-ից մեծ անկյունների դեպքում կոչվում է հրասանդային:

գետնամերձ հրաձգություն – настильная стрельба, стрельба с низким углом возвышения – low-angle fire, flat fire, flat trajectory fire

Հրետանային կրակի տեսակ, երբ բարձրացման անկյունը 20°-ից փոքր է:

կրակահերթով հրաձգություն – стрельба очередью – fire by bursts, fire in bursts

համազարկով հրաձգություն – стрельба залпом – salvo fire

Մի քանի հրետանային հրանոթի, ՀԿՌ-ների, տորպեդային ապարատ-



ների, ռմբանետների, հրաձգային զենքի միաժամանակյա կրակոց:

հրաձգության աղյուսակ – таблица стрельбы, таблица дальностей и прицелов – range tables

Աղյուսակ, որում բերվում են տվյալներ՝ ըստ նշանակետից հեռավորության նշանոցի անհրաժեշտ շտկումների մասին:

հրաձգության արդյունքների գնահատում – տես *հրաձգություն՝ հրաձգության գնահատում*

հրաձգության գնահատում – оценка стрельбы, оценка результатов стрельбы – kill assessment

հրաձգության դիպուկություն – меткость стрельбы – sharp shooting

Հրաձգության ճշգրտության բնութագիր. նշանակետի (նշանակետի նախատեսված կետի) հետ արկերի (զնդակների, ականների) անկման միջին հետագծի համընկնման աստիճանը:

հրաձգության կանոններ – правила стрельбы – rules of fire

Տարբեր տեսակի զենքերից կրակի նախապատրաստման ու վարման վերաբերյալ հիմնական դրույթներն ու հանձնարարականները:

հրաձգությանը պատրաստ – готовый к стрельбе – armed

հրաձգության ճշգրտություն – точность стрельбы – accuracy of fire

Նշանակետի (թիրախի) նկատմամբ արկերի, հրթիռների, զնդակների անկման (պայթյունի) կետերի հնարավոր տեղադրությունների հավանականային գնահատականը, որը բնորոշվում է կրակոցների կիսվածությամբ և հրաձգության դիպուկությամբ:

հրաձգության ուղղություն – направление стрельбы – see line of site – line of fire

հրաձգություն բարձրացման փոքր անկյուններով – տես *հրաձգություն՝ գետնամերձ հրաձգություն*

հրաձգություն կարճ կրակահերթերով – стрельба короткими очередями, огонь короткими очередями – interrupted fire

հրաձգություն կարճատև կանգառներից – стрельба с коротких остановок – fire from short halts

Հարձակման ժամանակ տանկերի (ԻՀԿ-ների, ՀՄՄ-ների, ՋՓՂ-ների) վարած կրակը այն դեպքերում, երբ մինչև նշանակետը եղած մեծ հեռավորությունների կամ մեքենայի իրանի ցնցումների պատճառով հնարավոր չէ վարել հընթացս դիպուկ կրակ:

հրաձգություն հընթացս – стрельба с ходу – fire on the move

հրաձգություն միակի կրակոցներով – стрельба одиночными выстрелами – single shot fire

հրաձգություն տեղից – стрельба с места – fire from a halt

հրաձգություն փակ դիրքերից – տես *կրակ՝ կրակ փակ դիրքերից*

հրաձգություն քարտեզով – տես *հրետակրծություն՝ հրետակրծություն հաշվարկային տվյալներով*

ճակատով արհեստական ցրմամբ հրաձգություն – стрельба с искусственным рассеиванием по фронту – alternate traversing fire

մարտական հրաձգություն – боевая стрельба – field firing, combat firing

Կրակային պատրաստման բարձրագույն ձևը. հաստիքային զինամթերքի կրակոց հաստիքային զենքով (հրետանային հրանոթ, նռնականետ, հրաձգային զենք, տորպեդային ապարատ, զենիթային և ավիացիոն համալիրներ են)՝ մարտական պայմաններին առավելագույնս մոտ իրադրությունում անձնակազմին զենքի կիրառում ուսուցանելու համար:

միակի և մարտական հրաձգություն – одиночные и боевые стрельбы – single rounds and field firing

ուսումնական հրաձգություն – учебная стрельба – drill round

Ոչ մարտական փամփուշտներով կրակահերթ, որն օգտագործվում է հրաձգային վարժանքների ժամանակ:

**հրաձիգ** – стрелок – rifleman, shot

դիպուկ հրաձիգ – меткий стрелок – marksman

**հրամայականչ** – տես *ձայնատվություն*

**հրաման** – приказ – order

Հրամանատարի (պետի) գրավոր կամ բանավոր կարգադրությունը, որն ուղղված է ենթականերին և պահանջում է պարտադրաբար որոշակի գործողությունների կատարում, այս կամ այն կանոնների պահպանում կամ սահմանում է որոշակի կարգ, վիճակ:

բեռնման հրաման – приказ на погрузку – embarkation order

գորավարժության անցկացման հրաման – приказ о проведении военного учения – exercise operations plan

ընդհանուր հրամաններ – общие приказы – general orders

կատարողական հրաման – исполнительный приказ – administrative order

հրամանով առաջադրված խնդիր – задача, поставленная в приказе – specified task

Առաջադրանք, որը օպերացիայի համատեղ պլանավորման համատեքստում վերադաս շտաբը հանձնարարել է տվյալ կազմավորմանը:

մարտական հրաման – боевой приказ – operation order, OPORD

նախորդ հրամանի չեղյալ հայտարարում – отмена предыдущего приказа – countermand

նստեցման հրաման – приказ на посадку – embarkation order

Նալի վրա գործն ու զենք-զինամթերքը բեռնելու հրահանգ, որտեղ հստակեցվում են ամիս-ամսաթիվը, ժամանակը, երթուղին, բեռնավորման միջոցները ևն:

շարժվելու հրաման – приказ начать движение – order to move

վարչաթիկունքային հրաման – административно-тыловой приказ – administrative order

Հրաման, որը վերաբերում է բեռնափոխադրումներին, մատակարարմանը, տեխնիկական սպասարկմանն ու նորոգմանը, տարահանմանը, կադրերին

առնչվող և այլ վարչատնտեսական հարցերին:

վերադասի հրաման՝ օպերացիային նախապատրաստվելու մասին – приказ вышестоящего о подготовке к операции – warning order

տեղաշարժման հրաման – приказ о передвижении – movement order

փոխանցման հրաման – приказ о передаче – deployment order

*ԱՄՆ-ում.* պլանավորման վերաբերյալ Պաշտպանության քարտուղարի տված ցուցումնագիր, որը Շտաբների պետերի միացյալ կոմիտեի Նախագահի վավերացումից հետո հրահանգում և ուղղորդում է մարտական հրամանատարների միջև ուժերի վերաբաշխումը:

օդային տարածքի վերահսկման հրաման – приказ по контролю воздушного пространства – airspace control order

օպերացիայի անցկացման հրաման – приказ на проведение операции – execute order

Լիազոր մարմնի (պաշտոնատար անձի՝ հրամանատարի) հրաման, որով կարգադրվում է սկսել կոնկրետ մարտական գործողությունները:

օպերացիան սկսելու հրաման – տես *հրաման՝ օպերացիայի անցկացման հրաման*

**հրամանատար** – 1. командир, 2. командующий – commander, general, leader  
ՋՌԻ-ի պաշտոնատար անձ, որի վրա դրված է ստորաբաժանման, զորամասի (նավի), զորամիավորման հրամանատարության (ղեկավարման) պարտականություն:

ազգային հրամանատար – национальный командующий – national commander

Հրամանատար, որը չի մտնում դաշնակցային ուժերի հրամանատարների կազմի մեջ:

ազգային ուժերի հրամանատար – командующий национальными силами – national force commander

աջակցող հրամանատար – поддерживающий командующий – supporting commander

աջակցվող հրամանատար – поддерживаемый командующий – supported commander

ավիաթևի հրամանատար – командир авиационного крыла – wing commander

ավիատրանսպորտային ստորաբաժանման հրամանատար – командир авиатранспортного подразделения – airlift mission commander

ավիացիոն զորամասի հրամանատար – командир авиационной части – air officer commanding

բրիգադի հրամանատար – командир бригады, комбриг – brigade commander

զլխավոր հրամանատար – главнокомандующий, главком, спарлапет – Commander-in-Chief

ՌԳԹ-ում կան ռազմավարական ուղղության վրա գործող զորքերի (ուժերի) հրամանատար:

դաշտային հրամանատար – полевой командир, военный лидер – warlord

Թույլ կենտրոնական կառավարություն ունեցող պետության ամբողջ ռազմական ու քաղաքացիական իշխանությանը օժտված անձ, զինված հակամարտությանն ու մարտական գործողություններին անմիջականորեն մասնակցող ռազմականացված կազմավորման հրամանատար:

դիվիզիայի հրամանատար – командир дивизии – division commander

զորամիավորման հրամանատար – командир соединения – commanding general, general officer commanding

«կապույտների» հրամանատար – командир (командующий) сил «синих» – blue commander

ՆԱՏՕ-ի զորավարություններում՝ յուրային ուժերի հրամանատար:

հակաօդային պաշտպանության հատվածի հրամանատար – командир сектора противовоздушной обороны – sector air defense commander

ՀՕՊ-ի գոտու կան շրջանի հրամանատարին ենթակա հրամանատար, որը պատասխանատու է տվյալ շրջանի (հատվածի, գոտու)՝ ՀՕՊ-ի ու ՀՀՊ-ի համար:

հակաօդային պաշտպանության հրամանատար – командир противовоздушной обороны – air defense commander

հրամանատարի գործառությանին պարտականությունները մարտավարական մակարդակով – функциональные обязанности командира на тактическом уровне – tactical battle management functions

հրամանատարի՝ դաստիարակչական աշխատանքի զօնով տեղակալ – заместитель командира по воспитательной работе – Deputy Commander for Morale and Welfare

հրամանատարի սահմանած՝ պատրաստության վերջնաժամկետ – срок готовности, устанавливаемый командиром – commander's required date

հրամանատարի տեղակալ – заместитель командира – second in command

հրամանատարի տեղակալ անձնակազմի զօնով – заместитель командира по личному составу – troop commander

«մանուշակագույնների» զորքի հրամանատար – командир (командующий) войска-ми «фиолетовых» – purple commander

միավորման հրամանատար – командующий объединением – commanding general

միացյալ բազմազգ օպերատիվ-մարտավարական զորախմբի հրամանատար – командующий многонациональной объединенной оперативно-тактической группой – joint force commander

միացյալ բազմազգ օպերատիվ-մարտավարական զորախմբի ցամաքային բաղադրատարրի հրամանատար – командующий сухопутным компонентом многонациональной объединенной оперативно-тактической группы – joint force land component commander

միացյալ բազմազգ օպերատիվ-մարտավարական խմբի օդային բաղադրատարրի հրամանատար – командующий воздушным компонентом многонациональной оперативно-тактической группы – joint force air component commander

միացյալ հատուկ օպերացիաների օդային բաղադրատարրի հրամանատար – командующий воздушным компонентом объединенных специальных операций – joint special operations air component commander

միացյալ ուժերի հատուկ օպերացիաների բաղադրատարրի հրամանատար – командующий компонентом специальных операций объединенных сил – joint force special operations component commander

միացյալ ուժերի հրամանատար – командующий объединенными силами – joint force commander

միացյալ ուժերի ցամաքային բաղադրատարրի հրամանատար – командующий сухопутным компонентом объединенных сил – joint force land component commander

միացյալ ուժերի օդային բաղադրատարրի հրամանատար – командующий воздушным компонентом объединенных сил – joint force air component commander

նշանակված պլանավորող հրամանատար – назначенный командир по планированию – designated planning agent

Քաղաքացիական արտակարգ իրավիճակներում զինվորական գործունեությունը պլանավորող, համակարգող և իրականացնող հրամանատար:

շարային հրամանատար – строевой командир – troop commander

ոչ նատոյական հրամանատար – командир (командующий) не от НАТО – non-NATO commander

Հրամանատար, որը ներկայացնում է մի պետություն, որը ՆԱՏՕ-ի անդամ չէ:

տանկային ստորաբաժանման հրամանատար – командир танкового подразделения – tank commander

տարածաշրջանային հակաօդային պաշտպանության հրամանատար – командующий региональной противовоздушной обороной – regional air defense commander

օդային տարածքի վերահսկման համար պատասխանատու հրամանատար – командир, ответственный за контроль воздушного пространства – airspace control authority

օպերացիայի շրջանում ուժերի հրամանատար – командующий силами в районе операции – on-scene commander

**հրամանատարական** – 1. командный, 2. командирский – command

Հրամանատարին հատուկ, հրամանատարին վերաբերող:

հրամանատարական կազմ – командный состав – command staff, command personnel

հրամանատարական կազմի ուսումնակրթական պատրաստման ծրագիր – программа учебно-образовательной подготовки командного состава – Leader Education and Training Program

հրամանատարական կետ – командный пункт – command post

**հրամանատարության, կառավարման և տեղեկատվության համակարգեր** – системы командования, управления и информации – Command, Control and Information Systems, CCIS

**հրամանատարություն** – командование – command

1. Տարբեր մակարդակների զինվորական կառավարման մարմինների համակարգ, ղեկավար կազմի պաշտոնատար անձինք, որոնք գլխավորում են զինվորական կազմավորումները (հիմնարկները): 2. Ջորջի կառավարում: 3. Հրամանատարի գործառույթների կատարում, հրամանատար լինելը:

աջակցող հրամանատարության գործողությունների պլան – план действий поддерживающего командования – supporting plan

Ատլանտիկայում ՆԱՏՕ-ի ՄՁՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատարություն – Верховное главное командование ОВС НАТО в зоне Атлантики; Верховное главное командование ОВС НАТО на Атлантике – Allied Command Atlantic NATO, ACLANT

բաղադրատարրային գործառույթային հրամանատարություն – компонентное функциональное командование – functional component command

Հրամանատարություն, որը կարող է բաղկացած լինել երկու տարբեր ռազմական ստորաբաժանումների ուժերից՝ ստեղծված ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարատև գործառույթային առաքելության իրագործման համար:

բաղադրատարրային հրամանատարություն – компонентное командование – component command

1. ՆԱՏՕ-ի զինվորական կառավարման մարմինների կառուցվածքում՝ երրորդ օղակի զինվորական կառավարման մարմին, որն իր տնօրինության տակ ունի ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի զորամասեր, պատասխանատու է ՆԱՏՕ-ի ՄՋՈՒ-ի տարածաշրջանային հրամանատարության հրամանատարի կարգադրությամբ տարածաշրջանի սահմաններում գործողությունների պլանավորման և օժանդակ օպերացիաների վարման համար: 2. Բաղադրատարրային գործառնության կամ ՋՈՒ-ի տեսակի բաղադրատարրային հրամանատարություն, որը պատասխանատու է բազմազգ ուժերի կազմում ռազմածովային, ցամաքային, ռազմաօդային, հատուկ և այլ օպերացիաների վարման համար:

զերագույն գլխավոր հրամանատարության պահուստ – резерв верховного главнокомандования – supreme high command reserve

զերագույն գլխավոր հրամանատարության պահուց – резерв Верховного главнокомандования – Reserve of the Supreme High Command

զերագույն գլխավոր հրամանատարություն – верховное главное командование, верховное главнокомандование (ВГК) – The Supreme High Command

Պետության (պետությունների դաշնության) ՋՈՒ-ի ռազմավարական ղեկավարման բարձրագույն մարմին, որը սովորաբար ստեղծվում է պատերազմի ժամանակ, իսկ երբեմն՝ նաև խաղաղ ժամանակ (օրինակ՝ Եվրոպայում և Ատլանտիկայում ՆԱՏՕ-ի Միացյալ ՋՈՒ-ի ռազմավարական (զերագույն) հրամանատարություն):

գլխավոր հրամանատարություն – главное командование, главнокомандование – High Command, General Headquarters

ՌԳԹ-ում կամ ռազմավարական ուղղության վրա գործող ՋՈՒ-ի տեսակի զորքերի (ուժերի) ռազմավարական

(օպերատիվ-ռազմավարական) կառավարման մարմին:

Եվրոպական հրամանատարություն – Европейское командование, Еврокомандование – European Command, EUCOM

կենտրոնական հրամանատարություն – центральное командование – central command

հակաօդային պաշտպանության հրամանատարություն – командование противовоздушной обороны – air defense command

հատուկ հրամանատարություն – специальное командование – specified command, specified combatant command

հատուկ օպերացիաների ուժերի հրամանատարություն – командование сил специальных операций – special operations command

հրամանատարության լրիվություն – полнота командования – full command

Հրամանատարի իրավասությունը և պատասխանատվությունը իր ենթականերին հրամաններ տալու առումով: Ներառում է մարտական և վարչատնտեսական գործունեության բոլոր կողմերը և առկա են միայն ազգային զինված ուժերում, մինչդեռ ՆԱՏՕ-ում հրամանատարը չունի կարգադրական իշխանության լրիվություն, քանի որ անդամ պետություններն իրենց ազգային զորքերը տրամադրում են ՆԱՏՕ-ին՝ միայն դնելով նրա օպերատիվ ենթակայության տակ:

հրամանատարություն ըստ գործառնության հատկանիշի – командование по функциональному признаку – functional command

հրամանատարություն, կառավարում և կապեր – командование, управление и связи – command, control and communications, C3

Կառավարման գործընթաց, ենթակա զորքերի (ուժերի) ղեկավարում:

մարտական ավիացիոն հրամանատարություն – боевое авиационное командование – Air Combat Command

մարտական հրամանատարություն – боевое командование – combatant command

մարտավարական ավիացիոն հրամանատարության կենտրոն – центр тактического авиационного командования – tactical air command center

մարտավարական հրամանատարություն – тактическое командование – tactical command, TACOM

միանձնյա հրամանատարություն – единоначалие – unity of command

Կառավարման կազմակերպման ձև, որի դեպքում կազմակերպությունը՝ ձեռնարկությունը՝ հիմնարկությունը՝ կառավարման մարմինը (կամ դրա կառուցվածքային ստորաբաժանումը) ղեկավարում է մեկ անձ, որն իրավագոր է կայացնելու իրավաբանորեն պարտադիր որոշումներ:

միավորված հրամանատարություն – объединенное командование – unified command, unified combatant command

ԱՄՆ-ում. օպերատիվ կառավարման մարմին, որի պատասխանատվության ոլորտն ընդգրկում է ըստ իրենց ուղիղ նախանշանակման զինված ուժերի կիրառման բնագավառը և ներառում է ռազմավարական ու օպերատիվ պլանավորման, խաղաղ ու պատերազմական ժամանակ տարբեր տարածաշրջաններում զորքերի (ուժերի) խմբավորումների ստեղծման, ՋՈՒ-ի ռազմավարական ծավալման ու մարտական գործողությունների ղեկավարման հարցերը: Օպերատիվ ղեկավարումը պաշտպանության քարտուղարի միջոցով իրագործում է Նախագահը: Լինում է գործառութային և տարածաշրջանային:

միացյալ հրամանատարություն – объединенное командование – joint command

միջտեսակային ենթատարածաշրջանային հրամանատարություն – межвидовое субрегиональное командование – joint subregional command

ռազմավարական հրամանատարություն – стратегическое командование – strategic command, strategic direction

ռազմաօդային ուժերի մարտավարական հրամանատարություն – тактическое командование военно-воздушными силами – air force tactical command

օդային տեղափոխումների հրամանատարություն – командование воздушных перебросок – Air Mobility Command

օդատիեզերական պաշտպանության հյուսիսամերիկյան հրամանատարություն – Североамериканское командование воздушно-космической обороны – North American Aerospace Defense Command

օպերատիվ հրամանատարություն – оперативное командование, оперативное управление войсками (силами) – operational command

Հրամանատարին տրված լիազորություն՝ կատարելու առաքելությունը կամ խնդիրները, ղեկավարելու ենթականերին, տեղաբաշխելու զորամասերը (ստորաբաժանումները), անհրաժեշտության դեպքում իրագործելու օպերատիվ և/կամ մարտավարական վերահսկողություն:

**հրամանատվական** – командный – command

Հրամանատուին առնչվող, հատուկ:

հրամանատվական կենտրոն – командный центр – command center

**հրամանատվություն** – командование – command

Հրաման տալը, հրամայելը, կարգադրելը ինչպես անձի, այնպես էլ ղեկավար սարքի կողմից:

**հրամանատու** – 1. командующий, 2. տես *հրամանատվական* – 1. commanding, 2. տես *հրամանատվական*

հրամանատու համակարգ – командная система – command system

Կառավարման էլեկտրոնային համակարգ:

**հրամկազմ** – տես *հրամանատարական՝ հրամանատարական կազմ*

**հրանետ** – огнемёт – flame-thrower

Ջենք, որի խոցիչ տարրը հրաշիթն է (նշանակետը այրող կամ հրկիզող վառվող նյութը):

**հրանոթ** – орудие – gun

20 մմ և ավելի տրամաչափի հրազենի տեսակ, որը նախանշանակված է կենդանի ուժի և ռազմական տեխնիկայի



խոցման, ամրաշինությունների և կառավարման կետերի ավերման ու ռչնչացման, ականադաշտերում անցուղիներ բացելու համար:

անհետզուրք հրանոթ – безоткатное орудие – recoilless gun

դաշտային հրանոթ – полевое орудие – field gun

ինքնագնաց զենիթային հրանոթ – самоходное зенитное орудие – self-propelled anti-aircraft gun, SPAAG

ինքնագնաց հաուրից – самоходная гаубица – self-propelled howitzer

ինքնագնաց հրանոթ – самоходное орудие – self-propelled gun

ինքնագնաց հրետանային հրանոթ – самоходное артиллерийское орудие – self-propelled artillery

լռված հրանոթ – «заевшее» орудие – hung ordnance

«Առկախ» հրետանի, երբ անսարքությունների հետևանքով հնարավոր չէ կրակել կամ արկ արձակել:

հրանոթի աշտարակ – турель, орудийная башня – turret

հրանոթի առաջք – передок орудия – limber

հրետանային հրանոթ – артиллерийское орудие – gun, cannon, artillery piece

պայթեցնող լիցքեր նետող հրանոթ – орудие для метания подрывных зарядов – demolition gun

Լայնափող գնդացիր, որը տեղադրվում է զրահապատ ինժեներատեխնիկական մեքենայի վրա և օգտագործվում է շենքեր քանդելու համար:

**հրանոթային կրակ** – орудийный огонь – gunfire

**հրանոթային կրակողջույն** – տես սայրուտ՝ *հրանոթային սայրուտ*

«**հրանոթ-նշանակետ**» **գիծ** – линия «орудие-цель» – spotting line

**հրապատիճ** – капсуль – capsule  
Վառողի բոցավառման կամ պայթուցիկների ձայթունի գրգռում հարուցող միջոց:

հարվածային հրապատիճ – ударный капсюль, пистон – percussion cap  
Փոքրածավալ պայթուցիկ նյութ, որը ձայթում է զենքի բռնկիչին հարվածելու դեպքում:

**հրապատվար** – տես *կրակի արգելապատնեշային կրակ*

**հրապարակային** – տես *հանրային*

**հրապարակումների և ցրման բաժին** – отдел публикаций и рассылок – publications and distribution section

**հրապարկում** – капсуль – detonator  
Փոքր պայթեցնող սարք, որն օգտագործվում է պայթուցիկ լիցքը պայթեցնելու համար:

**հրասանդ** – мортира – mortar  
Կարճ փողով և մեծ կորությամբ հետագծով կրակող հրանոթ՝ ներկայումս սպառազինությունից հանված:

**հրատարակում** – издание, выпуск – issue

**հրատարակ** – огневой вал – 1. creeping barrage, rolling barrage, 2. sheet of flame  
1. Հարձակմանը կրակային աջակցության մեթոդ. հարձակվող զորքերի ճակատի առջև մեկ կամ միաժամանակ երկու բնագծերում ստեղծվող կրակի հոծ պատնեշ, որը զորքի առաջխաղացման համեմատ տեղափոխվում է դեպի հակառակորդի պաշտպանության խորքը և կիրառվում է նախապատրաստված պաշտպանությունը ձեղքելու ժամանակ: 2. Հրե արգելապատնեշ, որը հակառակորդի հարձակման ուղղությունների վրա ստեղծվում է ձեռքի տակ եղած դյուրավառ նյութերից (ծղոտ, գերաններ, ջախ ևն):

**հրատեխնիկա** – пиротехника – pyrotechnics

**հրատեխնիկական** – пиротехнический – pyrotechnic

հրատեխնիկական հապաղիչ – пиротехнический замедлитель – pyrotechnic delay  
Սարք, որով հետաձգվում է հրատեխնիկական միջոցի ձայթումը:



**հրացան** – 1. ружье, 2. տես *մուշկետ* – 1. gun, 2. տես *մուշկետ*

Երկար փողով ձեռքի հրազենի ընդհանուր անվանումը: Լինում է երկու տեսակի՝ ողորկ փողով, որը բուն հրացանն է և ներկայումս ունի գերազանցապես որսորդական կիրառություն, և ակոսավոր փողով, որը ներկայումս լայնորեն կիրառվում է ռազմական ոլորտում:

ակոսավոր հրացան – винтовка – rifle

դիպուկահարական ակոսավոր հրացան – снайперская винтовка – sniper rifle

Երկայնական սահող փակադակով ակոսավոր հրացան – винтовка с продольно-скользящим затвором – bolt-action rifle

ինքնալիցք ակոսավոր հրացան – самозарядная винтовка, полуавтоматическая винтовка – self-loading rifle

կարճափող հրացան – տես *կարաբին*

կիսաավտոմատ ակոսավոր հրացան – տես *հրացան՝ ինքնալիցք ակոսավոր հրացան*

կոտորակի հրացան – дробовик – shotgun

հակատանկային հրացան – противотанковое ружье – antitank rifle

հրացանի շամփուր – шомпол – pull-through

ողորկափող հրացան – гладкоствольное ружье – shotgun

պահունակավոր ակոսավոր հրացան – магазинная винтовка – magazine rifle

**հրացանափոկ** – ружейный ремень – sling

**հրափամփուշտ** – пиропатрон – cartridge-actuated device

**հրդեհ** – пожар – fire

զանգվածեղ հրդեհ – տես *հրդեհ մեծ հրդեհ*

մեծ հրդեհ – массивованный пожар – massive fire

**հրե** – огненный – fire

հրե գունդ – огненный шар – fireball

հրե փոթորիկ – огненная буря – firestorm

**հրետակոծություն** – տես *հրետակոծում*

հրետակոծություն հաշվարկային տվյալներով – стрельба по исчисленным данным – predicted fire

**հրետակոծում** – артиллерийский обстрел – bombardment, shelling

Հրետանային կրակով միևնույն օբյեկտի տևական խոցում:

**հրետաձգություն** – артиллерийская стрельба – gunnery

հրետաձգության նախապատրաստում – подготовка стрельбы – gunnery, preparation of fire

**հրետանային** – артиллерийский – artillery

Հրետանուն հատուկ, հրետանուն առնչվող:

հրետանային դիվիզիոն – артиллерийский дивизион – artillery battalion

հրետանային մարտկոց – артиллерийская батарея – artillery battery

**«հրետանավակային դիվանագիտություն»** – «дипломатия канонерок» – gunboat diplomacy

Արտաքին քաղաքականության տեսակ, երբ պետությունը շեշտը դնում է ուժի ցուցադրման վրա, հատկապես՝ ռազմածովային հզորության, բիրտ ճնշման քաղաքականություն:

**հրետանավոր** – артиллерист – gunner, artilleryman

**հրետանի** – артиллерия – artillery, ordnance

1. Ջորատեսակ: 2. Ջենքի (սպառազինության) տեսակ, մեծ տրամաչափի հրազենի, հրթիռների և ՀՕՊ-ի զենքերի ընդհանուր անվանումը:

դաշտային հրետանի – полевая артиллерия – field artillery

զենիթային հրետանի – տես *հրետանի՝ հակաօդային պաշտպանության հրետանի*

թեթև հրետանի – легкая артиллерия – light artillery

լեռնային հրետանի – горная артиллерия – mountain artillery

հակակարկտային հրետանի – противоградная артиллерия – antihail artillery, hail-suppression artillery

հակատանկային հրետանի – противотанковая артиллерия – antitank artillery

հակաօդային պաշտպանության հրետանի – артиллерия противовоздушной обороны, зенитная артиллерия – air defense artillery, antiaircraft artillery, flak

հրետանու նախապատրաստում մարտի – подготовка артиллерии к бою – preparation of artillery for combat

հրետանու նյութական մաս – материальная часть артиллерии – artillery materiel

հրետանու պահում – хранение артиллерии – artillery storing

հրետանու տարաշարժման գոտի – зона маневрирования артиллерии – artillery maneuver area

Շրջան, որի սահմաններում թույլատրվում է հրետանու ծավալումը, բայց որը նախատեսված չէ պարտադիր օգտագործման համար:

ռեակտիվ հրետանի – реактивная артиллерия – missile artillery

Վրագետնյա հրետանու տեսակ՝ զինված համագարկային կրակի ռեակտիվ համակարգերով:

**հրետասայլ** – лафет – gun carriage, carriage

Հրետանային հրանոթի մաս՝ փողի տեղադրման համար:

հրետասայլի կնձիթ – хобот лафета – trail  
Հրետասայլի հետին մասը:

հրետասայլի ստորին հաստոց – нижний станок лафета – chassis

**հրթիռ** – ракета – missile, rocket

Թռչող ապարատ, որը շարժման մեջ է դրվում ռեակտիվ ուժի ազդեցությամբ և նախատեսված է մթնոլորտում և անօդ (տիեզերական) տարածությունում թռիչքների համար:

աերոդինամիկ հրթիռ – аэродинамическая ракета – aerodynamic missile

ազդանշանիչ հրթիռ – сигнальная ракета – flare

արագաթռիչ հակառադիոտեղորոշումային հրթիռ – высокоскоростная противолокационная ракета – high speed anti-radiation missile

«Օդ–երկիր» դասի ամերիկյան արագաթռիչ հակառադիոտեղորոշումային հրթիռ:

բազմաստիճան հրթիռ – многоступенчатая ракета – multy stage rocket

Երկու և ավելի աստիճաններից կազմված բաղադրյալ հրթիռ:

բազմաստղ ազդանշանային հրթիռ – многозвездная сигнальная ракета – cluster

բալիստիկ հրթիռ – баллистическая ракета – ballistic missile

բալիստիկ հրթիռի գլխամաս – головная часть баллистической ракеты – re-entry vehicle

Բալիստիկ հրթիռի այն մասը, որն իր թռիչքի վերջնամասում վերադառնում է մթնոլորտի խիտ շերտեր:

բարձրաթռիչ հրթիռի գործողության գոտի – зона действия высокой ракеты – high-altitude missile engagement zone

գերհեռահար հրթիռ – ракета дальнего действия – stand-off land attack missile, SLAM

Հրթիռ, որը վրագետնյա նշանակետերի խոցման համար արձակվում է հակառակորդի ՀՕՊ-ի միջոցների գործողության շառավղից մեծ հեռավորություններից:

«երկիր–երկիր» դասի հրթիռների արձակման շարժական կայանք – передвижная пусковая установка ракет класса «земля-земля» – mobile-erector launcher

լազերային ուղղորդմամբ հրթիռ – ракета с лазерным наведением – laser guided missile

թևավոր հրթիռ – крылатая ракета – cruise missile

Միակի արձակման անօդաչու թռչող ապարատ, որի թռիչքի հետագիծը պայմանավորված է թևի աերոդինամիկական ամբարձիչ ուժով, շարժիչի քարշուժով և ծանրության ուժով:

թեթև հակատանկային հրթիռ – легкая противотанковая ракета – light antitank weapon

թիրախ-հրթիռ – ракета-мишень – target missile, rocket-target

ինքնուղղորդվող հրթիռ – самонаводящаяся ракета – self-guided missile, homing rocket

ինֆրակարմիր ուղղորդմամբ հրթիռ – տես *հրթիռ՝ ջերմային ուղղորդմամբ հրթիռ*

կառավարվող հրթիռ – управляемая ракета – guided missile

«կրակեցիր՝ մոռացար» հրթիռ – ракета «выстрелил–забыл» – fire-and-forget weapon

Ինքնուղղորդման համակարգով կառավարվող զենք, որը արձակումից հետո ինքնուրույնաբար որոնում ու խոցում է նշանակետը:

հակատանկային կառավարվող հրթիռ – противотанковая управляемая ракета, ПТУР – guided antitank missile

հականավային հրթիռ – противокорабельная ракета – antiship missile

հակառադիոտեղորոշումային հրթիռ – противолокационная ракета – antiradar missile, ARM

Հրթիռ, որը որսում է ռադիոտեղորոշումային կայանի ճառագայթումը և դրանով ուղղորդվում դեպի ՌՏԿ-ն:

հրթիռի շարժիչի անջատում – отключение двигателя ракеты – cut off

հրթիռի ոչնչացում – уничтожение ракеты – missile destruct

հրթիռի ուժակայանք – ракетная двигательная установка – rocket propulsion system

հրթիռի ուղղորդման համակարգ – система наведения ракеты – missile guidance system

հրթիռների կառավարման համակարգ – система управления ракетами – missile control system

հրթիռների ոչնչացման համակարգ – система уничтожения ракет – missile destruct system

մարտավարական հրթիռ – тактическая ракета – tactical missile

մերձագործ բալիստիկ հրթիռ – баллистическая ракета ближнего действия, оперативно-тактическая баллистическая ракета – short-range ballistic missile

Հրթիռներ, որոնց հեռահարությունը չի գերազանցում 1000 կմ-ն:

միջին հեռահարությամբ բալիստիկ հրթիռ – баллистическая ракета средней дальности – 1. medium-range ballistic missile (1500–3000 ծով. մղոն), 2. intermediate-range ballistic missile (600–1500 ծով. մղոն)

Բալիստիկ հրթիռների դաս, որոնց հեռահարությունը 1000–5500 կմ է (ՌԴ դասակարգմամբ), ԱՄՆ-ի դասակարգմամբ բաժանվում են 2 ենթադասի:

միջմայրցամաքային բալիստիկ հրթիռ – межконтинентальная баллистическая ракета – intercontinental ballistic missile

միջմայրցամաքային հրթիռ – межконтинентальная ракета – intercontinental missile

Բալիստիկ հրթիռ՝ 5500 կմ-ից ավելի հեռահարությամբ:

միջմայրցամաքային հրթիռ՝ տրոհվող գլխամասով – баллистическая ракета с разделяющейся головной частью – multiple reentry vehicle

որսիչ հրթիռ – ракета-перехватчик, противоракета – interceptor, antimissile missile, antiballistic missile

Հրթիռ, որը նախատեսված է հակառակորդի բալիստիկ հրթիռները թռիչքի ժամանակ ոչնչացնելու համար:

չկառավարվող հրթիռ – неуправляемая ракета – free-flight rocket

ռադիոկառավարվող հրթիռ – радиоуправляемая ракета – beam rider

ՌԳԹ հրթիռ – ракета театра военных действий – theater missile

Հրթիռ, որը նախատեսված է ՌԳԹ սահմաններում ծավալված ուժերին ու կառույցներին հարված հասցնելու համար, նախկին անվանումը՝ մարտավարական հրթիռ:

ստորջրյա մեկնարկով հրթիռ – ракета с подводным стартом – underwater launch missile

Վերիի ազդանշանային հրթիռ – сигнальная ракета Веры – Very light

վրագետնյա բազավորմամբ որսիչ հրթիռ – ракета-перехватчик наземного базирования – ground-based interceptor

տանող հրթիռ – ракета-носитель – booster

օդային բազավորմամբ հակաճառագայթունային հրթիռ – противолокационная ракета воздушного базирования – air-launched antiradiation missile

Օդային կրիչների վրա տեղակայվող հրթիռ, որի ուղղորդումը կատարվում է ըստ ընդունվող ռադիոճառագայթման:

օդառեակտիվ հրթիռ – տես *արկ` օդառեակտիվ արկ*

«օդ–երկիր» դասի հրթիռ – ракета класса «воздух–земля» – air-to-ground missile, AGM, air-to-surface missile

«օդ–օդ» դասի հրթիռ – ракета класса «воздух–воздух» – air-to-air missile, air intercept missile

«օդ–օդ» դասի փոքր հեռահարությանը կատարելագործված հրթիռ – усовершенствованная ракета средней дальности класса «воздух–воздух» – advanced medium-range air-to-air missile, AMRAAM

«օդ–օդ» դասի փոքր հեռահարությանը կատարելագործված հրթիռ – усовершенствованная ракета малой дальности класса «воздух–воздух» – advanced short-range air-to-air missile

օպերատիվ-մարտավարական հրթիռ – оперативно-тактическая ракета – tactical missile

**հրթիռագործ** – ракетчик – missileman  
Հրթիռների պատրաստման (մշակման, նախագծման, արտադրության) զծով մասնագետ, հրթիռաշինության ոլորտի աշխատող:

**հրթիռակայան** – ракетодром – launching site, rocket range

Հատուկ սարքավորված տեղ, որը նախատեսված է հրթիռների փորձարկման ու արձակման համար:

**հրթիռակիր** – ракетносец – missile carrier

**հրթիռաձիգ** – ракетчик – rocketeer, missileman

Հրթիռների արձակման կայանքների աշխատող:

**հրթիռային արագացուցիչ** – ракетный ускоритель – rocket booster

**հրթիռային զորքեր և հրետանի** – ракетные войска и артиллерия – rocket troops and artillery

**հրթիռային հարձակման մասին նախազգուշացման համակարգ** – система предупреждения о ракетном нападении – theater event system

ՌԳԹ-ում գործող համակարգ, որը նախանշանակված է օդային տարածքում հակառակորդի հրթիռների (օդային հարձակման միջոցների) հնարավորինս վաղ հայտնաբերման համար և բաղկացած է երեք անկախ տարրերից, որոնք են՝ միասնական մարտավարական վրագետնյա կայանները, հայտնաբերող և զգուշացնող համակարգը, տիեզերական բազավորմամբ ինֆրակարմիր համակարգով օժտված հրամանատվական կետը:

**հրթիռային հարձակման մասին նախազգուշացման ռադիոտեղորոշումային կայան** – радиолокационная станция предупреждения о ракетном нападении – missile warning air defense radar, rocket warning radar

Ռադիոտեղորոշումային կայան, որը նախանշանակված է օդային հարձակման միջոցների (հրթիռների) հայտնաբերման և դրանց մասին անհապաղ տեղեկացման համար:

**հրթիռային հարձակման մասին նախազգուշացում** – предупреждение о ракетном нападении – missile attack warning

**հրկիզանյութ** – напалм – napalm

**հրկիզում** – 1. возгорание, 2. поджог – 1. flash, 2. arson

**հրշեջ** – 1. пожарный, пожарник, 2. пожарный – 1. fireman, 2. fire

հրշեջ խումբ – пожарная команда – fire brigade

հրշեջ մաս – пожарная часть – fire department, fire service

**հրդեհաշեջ** – տես *հրշեջ 2*

**հրոսակախումբ** – банда – gang

**հրում** – толчок – push

**հուզմունք** – 1. волнение, 2. տես *շփոթմունք* – 1. excitement, 2. տես *շփոթմունք*

**հուզում** – տես *խռովություն*

**հուզումներ** – տես *անկարգություն*

ժողովրդական հուզումներ – տես *հասարակական՝ հասարակական անկարգություններ*

**ՀՈՒԿ** – տես *կայան՝ հրանոթային ուղղորդման կայան*

**հումանիտար** – гуманитарный – humanitarian

**հուշագիր** – меморандум – memorandum, aide-mémoire

1. Դիվանագիտական փաստաթուղթ, որում մանրամասնորեն շարադրված է դիվանագիտական նամակագրության առարկա դարձած հարցերի էությունը:
2. Որևէ հարցի վերաբերյալ ծառայողական գրություն:

համաձայնության հուշագիր – տես *հուշագիր՝ պայմանավորվածության հուշագիր*

պայմանավորվածության հուշագիր – меморандум о договоренности, меморандум о согласии – memorandum of agreement

փոխըմբռնման հուշագիր – меморандум о взаимопонимании – memorandum of understanding

**հուսալի** – надежный, обеспеченный – secure, safe

**հուսալիություն** – надежность – reliability

ռազմական տեխնիկայի հուսալիություն – надежность военной техники – military reliability

խոցման հուսալիություն – надежность поражения – confidence of kill, destruction reliability

**հուսար** – гусар – hussar

**հուր** – տես *կրակ*

**ՀՕՊ** – տես *պաշտպանություն՝ հակաօդային պաշտպանություն*

**ՀՕՊ-ի միջոցներով առաջնահերթ ծածկապաշտպանության օբյեկտների շրջան** – район объектов первоочередного прикрытия средствами ПВО – vital area, vital air defense area, vital zone

## Ձ (ՁԱ)

**ձագարափոս** – воронка – crater

**ձախ թևի** – տես *ձախաթևյան*

**ձախաթևյան** – левофланговый – left-flanking

**ձախողում** – 1. неудача, 2. провал, крах – 1. reverse, 2. defeat

լիակատար ձախողում – տես *ֆիասկո*

**ձայնախլարար** – տես *խլարար*

**ձայնախորաչափ** – эхолот – sonic depth finder

**ձայնային անջրպետ** – звуковой барьер – sound barrier

**ձայնատվություն** – оклик – challenge

**ձայնաքողարկում** – звукомаскировка – sound camouflage

**ձգաբանական** – տես *բալիստիկ*

**ձգաբանություն** – баллистика – ballistics  
Գիտություն, որն ուսումնասիրում է նետված մարմինների շարժման օրինաչափությունները:

**ձգալար** – растяжка – trip wire

Լար, որը ձգված է երկու հենարանների միջև այնպես, որ անցնող մարդը դիպչի և ընկնի:

**ձգան** – спусковой крючок, собачка – trigger

Հրագեղի փակաղակի կրակող մեխանիզմի մաս, որը նախանշանակված է

կրակելու ժամանակ նետիչ լիցքի բռնազավառման համար:

**ծգափոկ** – вытяжной трос – rip-cord

**ծգտել** – стремиться, нацеливаться – aim

**«Ձեզ հասկացա»** – «Вас понял!» – “Roger!”

**ծեռակերտ շինություններ** – сооружения, созданные руками человека – man-made features

Ջանազան կառույցներ՝ շենքեր, կամուրջներ, ամբարտակներ, ջրանցքներ ևն:

**ծեռնածություն** – манипуляция – manipulation

Մեքենայություն, շինծություն, փաստերը, երևույթները, գործընթացները որոշակի նենգափոխումներով իր շահերին ծառայեցնելը, շահարկումը:

**ծեռնահասություն** – компетентность – competence, expertise

Իր գիտելիքների, փորձի հիման վրա որևէ բանի մասին դատելու կարողություն:

**ծեռնամարտ** – рукопашный бой – hand-to-hand fighting

Մերձամարտ, որում ընդդիմամարտող կողմերը միմյանց խոցում են սառը զենքով, ձեռքի հրաձգային զենքով, նռնակներով, ինչպես նաև ձեռքի տակ եղած այլ միջոցներով և մարտական մենամարտերի հնարների կիրառմամբ:

ծեռնամարտ առանց զենքի – рукопашный бой без оружия – unarmed combat

**ծեռնանոնակ** – տես *նռնակ՝ ձեռքի նրոնակ*

**ծեռնաշղթա** – наручники – handcuff

ծեռնաշղթա հագցնել – надеть наручники – handcuff

**ծեռնարկություն** – предприятие – enterprise

**ծեռնարկում** – предприятие, акция – action

Որևէ նպատակի հասնելու համար ձեռնարկված գործողություն:

հաջողված ձեռնարկում – удачное предпринятие, удачный шаг – coup

հատուկ ձեռնարկումներ – специальные действия – special actions

մահապարտի ահաբեկչական ձեռնարկում – террористический акт смертника – suicide attack

ոչ բարեկամական ձեռնարկում – недружественный акт – unfriendly act

Որևէ պետության կամ նրա իրավաբանական կամ ֆիզիկական անձանց դեմ մեկ այլ պետության ձեռնարկած գործողություն, որը պարտադիր չէ, որ լինի հակաիրավական, սակայն իր էությանը հակամարտային և առձակատու մային է:

ռազմաքաղաքական ձեռնարկում – военно-политическая акция – political-military action

տնտեսական ձեռնարկում – экономические меры – economic action

Տնտեսական միջոցառում, տնտեսական միջոցներ, տնտեսական քայլ. որևէ պետության կողմից նախաձեռնած տնտեսական քայլեր կամ գործունեություն, որը, համապատասխանաբար, դրականորեն կամ բացասաբար է անդրադառնում մեկ այլ պետության ռազմական ներուժի վրա:

քաղաքական ձեռնարկում – политическая акция – political action

քայքայիչ քաղաքական ձեռնարկում – подрывная политическая акция – subversive political action

**ծեռներեցություն** – предприимчивость, находчивость – initiative

**ծեռովի** – տես *ձեռքի*

**ծեռք բերել** – приобрести, получить – acquire

**ծեռքբերում** – 1. приобретение, 2. տես *նվաճում* – 1. acquisition, 2. տես *նվաճում*

**ծեռքի** – ручной – manual

ծեռքի նռնակ – ручная граната – hand-grenade

**ծերբակալություն** – տես *ծերբակալում*

ծերբակալության իրավասություն – полная власть на арест – power of arrest

Պայմաններ, որոնց առկայությամբ իրավապահին իրավունք է տրվում կատարելու ծերբակալություն:

**ծերբակալում** – задержание – capture, detention

Հանցագործություն կամ վարչական իրավախախտում կատարելու մեջ կասկածվող անձի կարճատև ազատազրկում:

**ՁԻԱՀ** – տես *ծեռքբերովի ինունային անբավարարության համախտանիշ*

**ծնակույտ** – сурроб – drift, snowdrift

**ծող** – брус, стержень – bar

**ծև** – форма, вид – form, format

**ծևաթուղթ** – бланк – form

Տպագրական արտադրանքի տեսակ: Թղթի որոշակի ձևաչափի ստանդարտ թերթ, որի վրա զետեղված են փաստաթղթի մշտական տեղեկությունները և տեղ է հատկացված փոփոխվող տեղեկույթի գրանցման համար:

**ծևախախտում** – деформация – deformation

Մարմնի չափերի ու ձևի փոփոխում արտաքին ուժերի կամ ջերմաստիճանի, մագնիսականության ևն ազդեցությամբ՝ առանց զանգվածի փոփոխման:

**ծևանմուշ** – տես *նմուշ 1*

քայլերի ձևանմուշ – шаблон действий – event template

Օպերացիայի կոնկրետ տարբերակի համար օպտիմալ գործողությունների ձևանմուշային սխեմա:

**ծևաչափ** – формат – format, size

1. Գրքի էջի, սյունակի ևն չափերը:
2. Որևէ քաղաքական-դիվանագիտական գործընթացում մասնակիցների թիվը, կազմը, ընդգրկվածությունը:

**ծևավորում** – 1. формирование, оформление, 2. տես *կազմավորում 1* – 1. shaping, forming, 2. տես *կազմավորում 1*

1. Որոշ բանի ձև տալը: 2. Որոշ բանի (թատրոնի, ցուցահանդեսի ևն)

արտաքին տեսքը, ձևը: 3. Գոյացում, առաջացում:

միասնական աշխարհատարածքի ձևավորում – формирование единого мирового пространства – formation of a single world space

**ծևարկում** – формализация – formalization

Պրոբլեմների, խնդիրների ևն լուծում ձևական աբստրակտիկ (պարզեցված) կառուցումների միջոցով:

## Ղ (ՂԱՏ)

**Ղարաբաղյան հակամարտություն** – Карабахский конфликт, Нагорно-Карабахский конфликт – the Karabakh conflict

Հակամարտություն ԽՍՀՄ փլուզման շրջանում նախկին ԱդրխՍՀ տարածքում օրինապատշաճ ձևով ստեղծված երկու ինքնիշխան պետությունների՝ ԼՂՀ-ի ու ԱդրՀ-ի միջև: Ծագել է ԽՍՀՄ կազմավորման ժամանակաշրջանում, երբ բոլշևիկյան կամայականության հետևանքով Լեռնային Ղարաբաղը, անջատվելով Ղաշտային Ղարաբաղից, որի հետ կազմում էր հին հայկական Արցախ աշխարհը, մտցվել է ԱդրխՍՀ կազմի մեջ որպես ինքնավար մարզ (ԼՂԻՄ): Խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղի հայությունն ի պատասխան Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների հայահալած քաղաքականության՝ բազմիցս հանդես է եկել ԱդրխՍՀ կազմից դուրս գալու պահանջով:

Սկզբում ունեցել է վերամիացական բնույթ՝ պայմանավորված ՀԽՍՀ-ի հետ վերամիավորման վերաբերյալ ԼՂԻՄ-ի հայության պահանջով: Այնուհետև փոխել է իր կողմնորոշումը՝ ստանալով ինքնորոշմամբ պետական անկախության ձեռքբերման ուղղվածություն: ԱդրՀ իշխանությունների կողմից այդ հակամարտությունն ուժային մեթոդներով լուծելու փորձի հետևանքով օրինական ձևով ստեղծված ԼՂՀ-ը ինքնապաշտպանության ընթացքում ձեռք է բերել զինված հակամարտության բնույթ: ԼՂՀ Պաշտպանության բա-



նակը ի պատասխան ԱդրՀ զինված ազրեսիայի պարտության է մատնել ազրեսորին և ԱդրՀ որոշ սահմանամերձ շրջաններից ստեղծել անվտանգության գոտի

**ղեկ** – 1. руль, 2. штурвал, рулевое колесо, 3. руль поворота, руль направления – 1. helm, wheel, 2. rudder

1. Ինքնաթիռի՝ ավտոմեքենայի՝ նավի ևն ընթացքի ուղղությունը կարգավորելու հարմարանք, ղեկանիվ: 2. Նավախելի կամ ինքնաթիռի պոչամասի թիակածն ուղղաձիգ հարմարանք, որով վարում՝ կարգավորում են ապարատի շարժման ուղղությունը:

**ղեկալծակ** – румпель – helm

**ղեկակալ** – рулевой – coxswain

**ղեկանիվ** – տես *ղեկ 1*

**ղեկապետ** – штурман – navigator

Նավատորմում և ավիացիայում պաշտոնատար անձ, որն ունի հատուկ մասնագիտական կրթություն և ապահովում է ուղեվարական առումով ճշգրիտ, հուսալի և անվտանգ ուղեգնացություն:

կործանիչի ուղղորդիչ ղեկապետ – штурман наведения истребителя – interceptor controller

Սպա, որին հանձնարարված է որսիչ-կործանիչի հսկողությունը:

**ղեկավար** – 1. руководитель, глава, 2. руководящий – 1. leader, chief, 2. leading, guiding

առաքելության ղեկավար – глава миссии – chief of mission

տեղում ղեկավար – руководитель на месте – on-site commander

տեսչական խմբի ղեկավար – руководитель инспекционной группы – inspection team leader

**ղեկավարող** – տես *ղեկավար 2*

**ղեկավարել** – руководить, возглавлять – lead

**ղեկավարություն** – руководство – leadership

1. Ղեկավար լինելը, ղեկավարի պաշտոնը: 2. Ղեկավար կազմի ամբողջությունը:

ազգային զինվորական ղեկավարություն – национальное военное руководство – national military authority

ռազմավարական ղեկավարություն – стратегическое руководство – strategic command, strategic direction

ռազմաքաղաքական ղեկավարություն – военно-политическое руководство – military-political leadership

**ղեկավարում** – руководство – guidance, direction

Տվյալ ոլորտում ռազմավարական նպատակների հստակեցում, իրականացվելիք գործունեության վերաբերյալ ռազմավարական որոշումների կայացում (մշակում և ընդունում) ու դրանց իրականացմանը հասնելու համար գործունեության ուղղորդում և վերահսկում՝ համապատասխան համակարգի միջոցով:

ինտախուզական առաջադրանքի կատարման ղեկավարում – руководство выполнением разведывательного задания – intelligence mission management

ինտախուզական առաջադրանքների մշակման և տեղեկույթի հավաքման համադասման ղեկավարում – руководство разработкой разведывательных заданий и координацией сбора информации – collection requirements management

միանձնյա ղեկավարում – единоличное руководство – personal leadership

## Ճ (ՃԵ)

**ճախարակածոպան** – лопарь – fall

**ճախրում** – парение – hovering

**ճակատ** – 1. տես *ռազմաճակատ*, 2. лоб, 3. фасад – 1. տես *ռազմաճակատ*, 2. forehead, 3. front

1. Մարտակարգի դիմային (ղեպի հակառակորդն ուղղված) կողմը: 2. Դեմքի վերին հատվածը:

ժողովրդական ճակատ – народный фронт – popular front, peoples' front

«ճակատ» շարվածք – строй «фронт» – line abreast formation

ճակատի լայնություն – ширина фронта – frontage

մարտական գործողությունների ճակատ – фронт боевых действий – front of war, battle-front

**ճակատամարտ** – 1. сражение, 2. битва – 1. battle, 2. large-scale battle

1. Օսլերացիայի նպատակների իրագործմանը կամ դրա մասնակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված մարտական գործողությունների և հարվածների համախումբ, ՋՈՒ-ի միավորված տեսակների մարտական կիրառման ձևերից: 2. Ամբողջ պատերազմի կամ դրա փուլի նպատակների իրագործմանն ուղղված վճռական բախում, որը տեղի է ունենում զորքերի (ուժերի) խոշոր խմբավորումների միջև, պատերազմի որոշակի փուլում վճռորոշ քաղաքական ու պատերազմառազմավարական նպատակներին հասնելու համար կարևոր ուղղություններում կամ ՌԳԹ-ում զորքերի խոշոր խմբավորումների միաժամանակյա և հաջորդական հարձակողական ու պաշտպանական օսլերացիաների համախումբ, որոնցից առավել կարևոր ու վճռորոշ բախումները կոչվում են զլխավոր ճակատամարտեր:

**ճակատային** – 1. տես *ռազմաճակատային*, 2. фронтальный, лобовой, 3. фронтовик – 1. frontal, 2. front-line soldier

1. Ճակատին վերաբերող, հատուկ, ճակատի: 2. Ճակատում կռվող մարտիկ:

ճակատային դիմադրության բեռնվածություն – нагрузка лобового сопротивления – drag loading

ճակատային դիմադրություն – лобовое сопротивление – drag

**ճամբար** – лагерь – camp, encampment

1. Ջորքի բնակվելու տեղ, նրա տեղաբաշխման՝ բնակավայրերից դուրս գտնվող տեղ, որը հատկացված ու հատուկ սարքավորված է մարտական, ուսումնական և այլ խնդիրներ

կատարելու համար: 2. Ժամանակավոր կայան, վայր, որտեղ հավաքվել են մարդկանց խմբեր ինչ-որ միջոցառում անցկացնելու համար: 3. Հասարակական-քաղաքական խմբավորում, ուղղություն: 4. Կալանավայր:

զորահանգրվանային ճամբար – этапный лагерь – staging camp

զորային ճամբար – военный лагерь, лагерь войск – camp, military camp, camp of troops

Ջորքերի ժամանակավոր հանգրվան բնակավայրից դուրս՝ դաշտային պայմաններում պատրաստվելու կամ արշավի ժամանակ հանգստանալու համար:

համակենտրոնացման ճամբար – концентрационный лагерь – concentration camp

Քաղաքական, սոցիալական, ռասայական, կրոնական և այլ հատկանիշներով ձերբակալված մարդկանց մեծ զանգվածների գտնվելու տեղ:

ճամբարի վայր – место лагеря – camp site

ներկալված անձանց ճամբար – лагерь для интернированных лиц – internment camp

ներկալված քաղաքացիական անձանց ճամբար – лагерь для интернированных гражданских лиц – civilian internee camp

նորակոչիկների ուսումնական ճամբար – учебный лагерь новобранцев – boot camp

ուսումնական ճամբար – тренировочный лагерь – training camp

քաղաքական ճամբար – политический лагерь – political camp

Քաղաքական խմբավորում կամ քաղաքական ուղղություն, որը միավորում է մի քանի քաղաքական կուսակցություններ, որոնք ունեն միանման նպատակներ ու խնդիրներ, իշխանության համար պայքարում արտացոլում են միմյանց մոտ կանգնած սոցիալական խմբերի՝ խավերի շահերը:

**ճամբարելու տեղ** – տես *ճամբար՝ ճամբարի վայր*

**ճամբարում** – разбивка лагеря – encampment

**ճամփաբաժան** – տես *խաչմերուկ*

**ճամփեզր** – обочина – roadside, berm

**ճայթում** – детонация – detonation

**ճայթիչ** – детонатор – detonator  
Պայթուցիչ սարքի մաս, որը պարունակում է արտաքին ազդեցությունների նկատմամբ ավելի զգայուն լիցք, քան հիմնականն է, և ծառայում է հարվածային ալիքով հիմնական պայթուցիկ լիցքի (նյութի) պայթյունի հուսալի հարուցման համար:

միջանկյալ ճայթիչ – промежуточный детонатор – booster  
Ճայթիչ՝ լիցք, որն ավելի հզոր է, քան առաջին ճայթիչը, և որը երաշխավորված կերպով ապահովում է հիմնական լիցքի պայթյունը:

**ճայթյուն** – детонация – detonation  
Պայթուցիկ նյութի քիմիական վերածում, որն ուղեկցվում է էներգիայի անջատմամբ և հարվածային ալիքի ձևով գերծայնային արագությամբ տարածվում է նյութի մեջ՝ անցնելով մի շերտից մյուսին:

**ճանաչում** – 1. տես *որոշարկում*, 2. познание, 3. признание – 1. տես *որոշարկում*, 2. acknowledgement, 3. recognition

ճանաչման ազդանշան – տես *որոշարկիչ՝ որոշարկիչ ազդանշան*

**ճանաչողություն** – տես *իմացություն 2*

**ճանապարհ** – 1. дорога, 2. տես *ուղի 1*, 3. дорога, стезя – 1. way, road, 2. տես *ուղի 1*, 3. path, way

բնահողային ճանապարհ – грунтовая дорога – dirt road, unmetaled road

զլխավոր ճանապարհ – главная дорога – main road

գրունտային ճանապարհ – տես *ճանապարհ՝ բնահողային ճանապարհ*

թեք ճանապարհ – наклонный путь – glide path

լիրքային ճանապարհ – насыпная дорога – causeway  
Իջվածքով կամ ճահճուտով ճանապարհն անցկացնելու դեպքում լրացուցիչ լցված ու տոփանված հողաշերտ:

ճանապարհ ընկնել – отправляться (в дорогу) – set off

մեծ ճանապարհ – большая дорога, большак – main road

չկարգավորվող երթևեկությամբ ճանապարհ – дорога без регулирования движения – open route

սալարկված ճանապարհ – мощеная дорога – causeway

վտանգավոր ճանապարհ – опасный путь, опасная дорога – hostile track  
Երթուղի, որն ըստ սահմանված չափանիշների համարվում է ոչ անվտանգ:

փակել ճանապարհը – преграждать путь – intercept

**ճանապարհորդություն** – путешествие, поездка – trip

**ճանկառք** – вилка – bracket  
Հրետանում կիրառվող հնար, որի ժամանակ կատարվում են երկու կրակոց այնպես, որ մեկն անցնի նշանակետը, մյուսը՝ չհասնի դրան, և ըստ այդմ կատարվում է նշանափործում:

**ճանկիչ** – захват, кошка – grapnel  
Որպես կանոն 2–5 միացված մետաղական սուր և կեռ թաթիկներից (եղջյուրներից) կազմված գրոհատախտակ, որը նավակալման ժամանակ նետվում է հակառակորդի նավի վրա կամ գրոհի ժամանակ՝ բերդի պարիսպներին:

**ճաշարան** – столовая – mess

**ճառագայթ** – луч – beam

ռենտգենյան ճառագայթներ – рентгеновские лучи – X-ray

**ճառագայթահարում** – облучение – irradiation, exposure  
Որևէ օբյեկտի (մարդ, շինություն, տեխնիկա, սարքավորանք) ենթարկումը ռադիոակտիվ ճառագայթման:

անշարժ ճառագայթահարման տևողություն – время неподвижного облучения – dwell time

ճառագայթահարման մակարդակ – уровень радиоактивного облучения – radiation exposure state

ճառագայթահարման քրոնիկական բաժնաչափ – хроническая доза облучения – chronic radiation dose

ներքին ճառագայթահարում – внутреннее облучение – internal radiation

ռադիոակտիվ ճառագայթահարման բաժնաչափի հաշվառում – учет доз радиоактивного облучения – radiation exposure status

ռադիոակտիվ ճառագայթահարում – радиоактивное облучение – radioactive irradiation

**ճառագայթային** – лучевой – radial

**ճառագայթում** – տես *ռադիացիա*

էլեկտրամագնիսական ճառագայթման վրտանգավորություն – опасное воздействие электромагнитного излучения – electromagnetic radiation hazard

էլեկտրամագնիսական ճառագայթում – электромагнитное излучение – electromagnetic radiation

թափանցող միջուկային ճառագայթում – проникающая радиация – initial nuclear radiation

ինֆրակարմիր ճառագայթում – տես *ճառագայթում՝ ջերմային ճառագայթում*

իոնացնող ճառագայթում – ионизирующее излучение – ionizing radiation

մակածված ճառագայթում – 1. наведенная радиация, 2. вынужденное излучение – induced radiation

**ճառագայթումավտանգ** – радиационно-опасный – radiation-hazardous

Ուադիոակտիվ ճառագայթման առումով կենդանի օրգանիզմների համար վտանգ ներկայացնող:

**ճարտարագիտական հոգեբանություն** – инженерная психология – engineering psychology

Հոգեբանության կիրառական ճյուղ, որն ուսումնասիրում է «մարդ–տեխնիկա»

համակարգերի ստեղծման և գործունեության տեղեկատվականառավարային պրոբլեմները:

**ճգնաժամ** – кризис – crisis

1. Կտրուկ արմատական բեկում, որևէ գործընթացի, սոցիալական հաստատության, հասարակական ոլորտի կամ ամբողջ հասարակության ծանր անցումային վիճակը: Պետական մակարդակով՝ միջադեպ կամ իրավիճակ, որը սովորաբար արագ է զարգանում և ստեղծում է այնպիսի դիվանագիտական, տնտեսական կամ ռազմական կարևորություն ներկայացնող իրադրություն, որի դեպքում պետության ռազմաքաղաքական ղեկավարությունն սկսում է դիտարկել ազգային նպատակների իրագործման համար ռազմական ուժերի և պետության ռեսուրսների օգտագործման հարցը:  
2. Որևէ բանի մեծ պակաս, զգալի անբավարարություն:

կառավարման ճգնաժամ – кризис управления – management crisis

միջազգային ճգնաժամ – международный кризис – international crisis

ռազմական ճգնաժամ – военный кризис – military crisis

ռազմաքաղաքական ճգնաժամ – военно-политический кризис – military and political crisis

Միջպետական հարաբերությունների զարգացման սուր փուլ, որը բնորոշվում է երկու և ավելի պետությունների ղեկավարների առձակատամբ, որը տեղի է ունենում պատերազմի կամ զինված հակամարտության մեծ հավանականությամբ ծագման վտանգի պայմաններում:

քաղաքական ճգնաժամ – политический кризис – political crisis

Քաղաքական բնույթի ճգնաժամ, որը կարող է ծագել. ա) պետությունների միջև, բ) պետության ներսում, երբ քաղաքական ուժերի միջև փոխհամաձայնեցված ձեռնարկումների անհնարիության հետևանքով դժվարանում են օրինաստեղծման գործընթացները, թուլանում է պետական վերահսկողությունը:

վստահության ճգնաժամ – кризис доверия – crisis of confidence

տնտեսական ճգնաժամ – экономический кризис – economic crisis

**ճեղան** – фашина – fascine

Գերանների՝ ջախի կամ պլաստմասսե կամ այլ նյութերից պատրաստված խողովակների կապոց՝ խրամատները, խրամները, առուները են լցնելու համար, որպեսզի մեքենաները (տեխնիկան) կարողանան դրանք հաղթահարել:

**ճեղք** – 1. трещина, 2. разрыв – 1. crack, 2. gap

**ճեղքվածք** – տես *ճեղք 2*

**ճեղքում** – 1. прорыв, 2. расщепление, 3. рассечение, 4. раскол – 1. breakthrough, 2. fission, splitting, 3. cleavage, 4. split, dissidence

- 1. Ճեղք բացելը, պատռելով անցնելը:
- 2. Մասերի բաժանում: 3. Իրարից բաժանելը՝ երկպառակում: 4. Դիմադրությունը հաղթահարելով՝ առաջխաղացման կամ ելքի ճանապարհի բացում:
- 5. Ֆիզիկական ներգործությամբ մասերի բաժանում՝ քայքայում:

ատոմի միջուկի ճեղքում – расщепление ядра атома – nuclear fission

Ֆիզիկական ներգործությամբ ատոմի միջուկի տրոհում՝ նոր նյութի (նյութերի) ատոմների և տարրական մասնիկների առաջացմամբ, որի ժամանակ անջատվում է հսկայական ատոմային (միջուկային) էներգիա:

դեսանտային ճեղքում – десантный прорыв – amphibious breaching

Կանխամտածված խանգարող՝ խաթարող օպերացիա, որն իրականացվում է դեսանտային օպերացիայից առաջ:

ճեղքման գոտի – участок (полоса) прорыва – breakthrough area, breakthrough sector

Միավորման, զորամիավորման, զորամասի հարձակման գոտու այն մասը, որի սահմաններում զորքերը կենտրոնացնում են իրենց ջանքերը՝ հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու համար:

ճեղքման մեջ զորամուտ – ввод в прорыв – introducing into breakthrough

Երկրորդ շարակարգի կամ պահուց զորքերի զորամասերի՝ զորամիավորումների՝ միավորումների կազմակերպված առաջընթացումը, ծավալումն ու մարտի (ճակատամարտի) մեջ մտցնելը հակառակորդի պաշտպանության ճեղքման ժամանակ հարձակումը զարգացնելու նպատակով:

տեղային ճեղքում – местный прорыв – local penetration

**ճեպագիր** – տես *զեկույց՝ զինվորական պաշտոնական զեկույց*

**ճեպագրույց** – брифинг – briefing

**ճգմել** (հակառակորդին) – смять – overrun

**ճկախողովակ** – տես *փողոսակ*

**ճկունություն** – гибкость – flexibility

մարտական ճկունություն – տես *ճկունություն՝ օպերատիվ ճկունություն*

օպերատիվ ճկունություն – оперативная гибкость, боевая гибкость – operational flexibility

ՆԱՏՕ-ում. կոլեկտիվ պաշտպանության կամ պատասխանատվության գոտու սահմաններից դուրս ժամանակավոր ծավալման խնդիրներ կատարելիս Դաշինքի ուժերի կարողությունը՝ պահպանելու իրենց մարտունակությունը:

**ճյուղ** – 1. ветвь, 2. отрасль – branch

գիտության ճյուղ – отрасль науки, научная дисциплина – branch of science, science discipline

**ճյուղաթափույք** – валежник – deadfall

**ճնշախուց** – барокамера – altitude chamber

**ճնշամղում** – 1. напор, натиск, 2. տես *դինամիկական ճնշում* – 1. rush, 2. տես *դինամիկական ճնշում*

**ճնշվածություն** – 1. подавленность, угнетенность, 2. տես *անկում 4* – 1. spleen, 2. տես *անկում 4*

**ճնշում** – 1. давление, 2. подавление, 3. угнетение – 1. pressure, 2. suppression, reduction, 3. oppression

աերոդինամիկական ճնշում – аэродинамическое давление – impact pressure

ակտիվ ռադիոէլեկտրոնային ճնշում – активное радиоэлектронное подавление – electronic attack

ակուստիկական ճնշում – акустическое давление, меры противодействия акустическим средствам – acoustic warfare countermeasures

առավելագույն ավելցուկային ճնշում – максимальное избыточное давление – peak overpressure

Տեղանքի վրա առավելագույն ճնշումը, որը կիրառվում է ակնթարթային գործընթացի ժամանակ:

բարձր ճնշման սուզարկղ – տես *խցիկ՝ բարձր ճնշումային խցիկ*

բաց տարածությունում բարձր ճնշում – повышенное давление на открытом пространстве (при ЯВ) – free air overpressure

դինամիկական ճնշում – скоростной напор, динамическое давление – dynamic pressure

Իդեալական անսեղմելի հեղուկի կամ գազի միավոր ծավալի կինետիկ էներգիան, որը հավասար է հեղուկի կամ գազի խտության և հոսքի արագության քառակուսու արտադրյալի կեսին:

էլեկտրամագնիսական ճնշում – электромагнитное подавление – electromagnetic jamming

էլեկտրամագնիսական խլացում՝ հակառակորդի էլեկտրամագնիսական սրվակտորի օգտակար կիրառման արգելանք՝ ռադիացիոն կամ էլեկտրամագնիսական էներգիայի միջոցով:

էլեկտրոնային ճնշում – электронное подавление, радиоподавление – electronic jamming, radio deception

հակառակորդի հակաօդային պաշտպանության ճնշում – подавление противовоздушной обороны противника – suppression of enemy air defences, SEAD

հավելյալ ճնշում – избыточное давление – overpressure

ռադիոէլեկտրոնային ճնշում – радиоэлектронное подавление, РЭП – electronic

countermeasures, ECM, radar deception, jamming

Միջոցառումների և գործողությունների համալիր, որը նպատակաուղղված է ռադիոէլեկտրոնային խանգարումներով հակառակորդի ռադիոէլեկտրոնային համակարգերի ու միջոցների աշխատանքի խաթարմանը կամ մարտական կիրառման արդյունավետության նվազմանը:

ուժային ճնշում – силовое давление – coercion

օբյեկտների (նշանակետերի) ճնշում – подавление объектов (целей) – target suppression

**ճշգրիտ** – точный – affirmative

ճշգրիտ որոշարկում – точное опознание – positive identification

Նույնականացում, որը կատարվում է ինչպես դիտմամբ, այնպես էլ նշանակետի բնութագրիչների՝ տարբեր տեսչնիկական միջոցներով որոշված արժեքների վերլուծությամբ:

ճշգրիտ օդային խոցման միջին կետ – средняя точка точного воздушного поражения – direct mean point of impact

Օդային հարձակման ժամանակ հակառակորդի օբյեկտի ուղիղ խոցման կետը:

**ճշգրտություն** – точность – precision

**ճշգրտում** – 1. корректирование, корректировка, 2. уточнение – 1. adjustment, 2. refinement

**ճշտադրում** – տես *կարգաբերում 1*

**ճշտորդ** – корректировщик – observer

ճշտորդ–թիրախ հեռավորություն – дистанция между корректировщиком и мишенью – observer–target distance

ճշտորդի նույնականացում – идентификация корректировщика – observer identification

ճշտորդ ինքնաթիռ – самолет-корректировщик – spotter plane

Հատուկ սարքավորված ինքնաթիռ, որը նախանշանակված է հրետանային հրաձգության արդյունքները վերահսկելու և կրակը ճշգրտելու համար:



**ճշտորոշում** – верификация – verification  
Որևէ բանի ճշգրտության և իսկության պարզման (հաստատման) գործընթաց:

**ճշտում** – տես ճշգրտում

**ճոճան** – люлька – gun slide  
Հրետանային հրանոթի հրետասայլի մաս, որը նախանշանակված է փողի տեղակայման և հետզլորքի ու առաջ-զլորքի ժամանակ նրա ուղղորդման համար:

**ճոպան** – 1. трос, канат, 2. швартов – 1. rope, cable, wire, 2. hawser

օդային արգելակիչ ճոպան – տես *ավիա-ավարտիչի ճոպան*

**ճոպանածայր** – лопарь – fall

**ճոքավոր կոշիկ** – ботинок – boot

**ճուլկի** – чека – splint  
Մաս, որն ամրացնում է նռնակի պայթուցիչը՝ վաղօրոք պայթյունը կանխելու համար:

## Մ (ՄԵՆ)

**մագլցել** – карабкаться – scramble

**մագնիսական հասարակած** – магнитный экватор – magnetic equator, aclinic line

**մագնիսաչափ** – магнитометр, магнитный датчик – fluxgate, fluxvalve  
Մագնիսական դաշտի բնութագրերը և նյութերի մագնիսական հատկությունները չափելու համար սարք՝ գործիք:

**մազեր** – мазер – maser, microwave amplification by stimulated emission of radiation  
Քվանտային գեներատոր, որը ճառագայթում է սանտիմետրային տիրույթի կոհերենտ էլեկտրամագնիսական ալիքներ (միկրոալիքներ):

**ՄԱԹԱ** – տես *ապարատ՝ մարտական անօդաչու թռչող ապարատ*

**մաթեմատիկական սպասում** – математическое ожидание – expected value

**«Մալյուտկա»** – «Малютка» – “Sagger”

խորհրդային 9Մ14 հակատանկային հրթիռ:

**մալուխ** – кабель – cable

**Մախի թիվ** – число Маха – Mach number  
Սեղմելի գազի հոսանքի բնութագիր. նրա հոսանքի արագության և ձայնի արագության հարաբերությունը, որը լայնորեն օգտագործվում է աներո- և հիդրոդինամիկայում, մասնավորապես՝ ինքնաթիռաշինությունում (Մ-թիվ, կամ Մ):

**ՄԱԿ** – տես *Միավորված ազգերի կազմակերպություն*

ՄԱԿ-ի ականագերծման ծառայություն – Служба ООН по разминированию – United Nations Mine Action Service

ՄԱԿ-ի՝ աղետի գնահատման և համադասման խումբ – Группа ООН по оценке бедствия и координации – United Nations Disaster Assessment and Coordination Team

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձև – Резолюция Совета Безопасности ООН – United Nations Security Council Resolution

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ – Совет Безопасности ООН – United Nations Security Council, UNSC

ՄԱԿ-ի մշտապես գործող մարմին, որի վրա ՄԱԿ-ի Կանոնադրության 24-րդ հոդվածով դրված է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար գլխավոր պատասխանատվությունը:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Բարձր ներկայացուցիչ – Высокий представитель Генерального секретаря ООН – High Representative of the Secretary General of the UN

ՄԱԿ-ի՝ թմրամիջոցների վերահսկման միջազգային ծրագիր – Программа ООН по международному контролю над наркотиками и предупреждению преступности, ЮНДКП – United Nations International Drug Control Program

ՄԱԿ-ի խաղաղապահական օպերացիաների գծով վարչություն – Департамент ООН по миротворческим операциям –



United Nations Department of Peacekeeping Operations

ՄԱԿ-ի խաղաղապահական օպերացիաների գծով հատուկ կոմիտե – Специальный комитет ООН по миротворческим операциям – United Nations Special Committee on Peacekeeping Operations

ՄԱԿ-ի խաղաղապահական օպերացիաների վարչություն – Управление ООН по миротворческим операциям – Department of Peacekeeping Operations (UN)

ՄԱԿ-ի Կանոնադրության խախտում – нарушение Устава ООН – breach of the UN Charter

ՄԱԿ-ի հակաահաբեկչական կոմիտե – Контртеррористический комитет ООН – United Nations Counter-Terrorism Committee

ՄԱԿ-ի մանդատ – мандат ООН – United Nations mandate

ՄԱԿ-ի մանդատով գործող ուժեր – силы, действующие по мандату ООН – UN - mandated force

ՄԱԿ-ի մարդասիրական հարցերի համադասման վարչություն – Управление по координации гуманитарных вопросов ООН, УКГВ ООН – United Nations Office for Coordination of Humanitarian Affairs

ՄԱԿ-ի պահակային ուժեր – Силы охраны ООН – United Nations Protection Force

ՄԱԿ-ի պատժամիջոցներ – санкции ООН – United Nations sanctions

ՄԱԿ-ի ռազմական դիտորդների խումբ – Группа военных наблюдателей ООН – United Nations Military Observer

ՄԱԿ-ի՝ փախստականների գործերով գերագույն հանձնակատար – Верховный комиссар ООН по делам беженцев – UN High Commissioner for Refugees

ՄԱԿ-ի քաղաքական հարցերով վարչություն – Департамент ООН по политическим вопросам – United Nations Department of Political Affairs

**մակածված հոգեգարություն** – индуцированный психоз, индуцированное помешательство – induced psychosis

**մակածված հոգեկան խանգարվածություն** – տես *մակածված հոգեգարություն*

**մակածություն** – индукция – induction  
1. Մասնավոր փաստերից ու դրույթներից ընդհանուր եզրակացությունների հանգեցնող մտահանգում: 2. Դաշտերի, լիցքերի, հոսանքների ևն առաջացում արտաքին պայմանների (միջավայրի) փոփոխման հետևանքով:

**մակածում** – индуцирование, наведение – induction

**մականուն** – 1. прозвище, кличка, 2. տես *կեղծանուն* – 1. nickname, alias, 2. տես *կեղծանուն*

**մակարդակ** – уровень – level  
1. Բարձրանալու՝ դեպի վեր խոյանալու կամ բարձրություն կազմելու չափը: 2. Պայմանական հորիզոնական գիծ կամ հարթություն, որն ընդունվում է որպես մի բանի բարձրության սահմանագիծ՝ սահման: 3. (*փխբ.*) Որևէ բանի դրսևորման՝ զարգացման՝ որակի՝ մեծության ևն չափը՝ աստիճանը:

թույլատրելի մակարդակ – допустимый уровень – tolerance level

ստրատեգիական մակարդակ – տես *ռազմավարական՝ ռազմավարական մակարդակ*  
Մեծ նշանակություն ունեցող, մեծ նշանակությամբ օժտված:

օպերատիվ-մարտավարական մակարդակ – оперативно-тактический уровень – tactical level

օպերատիվ-ռազմավարական մակարդակ – оперативно-стратегический уровень – strategic level

**մակերես** – площадь, площадь поверхности – area, surface area

խոցվող մակերես – поражаемая площадь – beaten zone

**մակերևույթ** – поверхность – surface  
«մակերևույթ – մակերևույթ» դասի հրթիռ – ракета класса «поверхность – поверхность» – surface-to-surface missile, SSM

«մակերևույթ-օդ» դասի հրթիռ – ракета класса «поверхность – воздух», зенитная ракета – surface-to-air missile, SAM

«Մակերևույթ-օդ» դասի հրթիռ, որն օգտագործվում է հակառակորդի օդային հարձակման միջոցները վրազետնյա համալիրներով խոցելու համար:

**մակույկ** – տես *նավակ*

**մահ** – смерть, кончина – death

**մահաբեր** – смертоносный – lethal

**մահաբերություն** – убойная сила, убойность – deadly force

**մահակ** – палка, прут – stick

**մահապատիժ** – смертная казнь – execution, capital punishment

մահապատժի արժանի – тяжкий, караемый смертью – capital

**մահապարտ** – смертник – 1. condemned man, 2. suicide attacker, kamikaze, 3. suicide bomber

1. Մահվան՝ մահապատժի դատապարտված անձ: 2. Իր կյանքի գնով որևէ նպատակի հասնելուն պատրաստ անձ, ներկայումս ունի գերազանցապես բացասական իմաստ՝ մահապարտ ահաբեկիչների առընչությամբ:

**մահավտանգ** – убойный – killing

**մահացած** – умерший – dead

**մահացու** – 1. смертельный, 2. տես *մահապատժի արժանի* – 1. lethal, mortal, killing, 2. տես *մահապատժի արժանի*

**մահճիկ** – койка, походная кровать – cot, camp-bed

**մաղձախտ** – տես *խոլերա*

**մայոր** – майор – major

Ցամաքային զորքերում և ավիացիայում՝ ավագ սպայական կազմի կրտսեր կոչում, ԱՄՆ-ի ծովային հետևակում՝ ավագ սպայական կազմի կոչում, որը համապատասխանում է բանակի փոխգնդապետի կոչման:

**մայրաքաղաք** – столица – capital

**մայր ցամաք** – континент – continent, mainland

**մանանեխի գազ** – տես *խարիտ*

**մանիպուլացիա** – տես *ծեռնածություն*

**մանկլավիկ** – приспешник – collaborator

**մանրագնդակ** – տես *կոտորակ*

**մանրակերտում** – макетирование – prototyping

Որևէ բանի մանրակերտի՝ տվյալ առարկայի, իրի պարզեցված վերարտադրության պատրաստում:

**մանրամաս** – տես *դետալ*

**մանրամասնություն** – подробность, мельчайшая деталь – detail

**մանր գնումներ** – мелкие закупки – petty cash purchase

**մանրել** – տես *ջարդել*

**մանրէազերծիչ** – стерилизатор – sterilizer

**մանրէազերծում** – стерилизация – sterilization

**մանրուք** – տես *մանրամասնություն*

**մաշակայունություն** – износостойкость – durability, wear resistance

Սարքի, մեքենայի, իրի դիմացկունությունը մաշման նկատմամբ:

**մաշիկ** – տես *արգելակ՝ արգելակի կոճղակ*

**մաշվածության թույլատրելի չափ** – допустимая мера износа – deterioration limit

Այն նվազագույն պահանջները, որոնց պետք է համապատասխանի կոնկրետ առարկան (իրը) կամ օբյեկտը, որպեսզի չհանվի շահագործումից:

**մառախլապատ** – туманный – foggy

**մառախուղ** – туман – fog

մառախուղի շղթա – туманная гряда – fog bank

**մաս** – часть – part, piece

Ամբողջի որևէ կտոր՝ առանձնացված կամ չառանձնացված, բաղադրիչներից յուրաքանչյուրը:

բնակչահագործման մաս – квартирно-эксплуатационная часть, КЭЧ – quartering unit

Բնակչահագործման ծառայության մարմին, որը պատասխանատու է բնակ-գորանոցային ֆոնդի ու կոմունալ շինությունների տեխնիկական շահագործման կազմակերպման, բոլոր տեսակների բնակարանային գույքով անրագրված գորամասերի ապահովման, ինչպես նաև բնակարանային ունեցվածքի հաշվառման համար:

բուժանիտարական մաս – медико-санитарная часть, медсанчасть – ambulance

համալրող մասեր – комплекующие – pack-up kit

ներսի մաս – տես տարածություն՝ ներքին տարածություն

նյութական մաս – материальная часть – material

նյութական մասի վերահսկման սպա – офицер по контролю за материальной частью – material control officer

վարչատնտեսական մաս – административно-хозяйственная часть – administration

**մասնագիտացված մատչելիության ծրագիր** – программа специализированного доступа – special access program

**մասնագիտացում** – специализация – specialization

**մասնագիտություն** – специальность – specialty

կարևոր նեղ մասնագիտություն – важная узкая специальность – critical occupational specialty

հիմնական քաղաքացիական մասնագիտություն – основная гражданская специальность – main civilian occupation

**մասնագիր** – спецификация – specification

Տվյալ արտադրանքի կազմի մեջ մըտնող մասերի ցանկը՝ դրանց նկատմամբ տեխնիկական պահանջների նշմամբ:

**մասնակցության մեթոդ** (ֆինանսական հաշվետվությունում) – метод участия – equity method

**մասնաճյուղ** – филиал, отделение – section, branch

**մասնավորեցման աստիճան** – степень детализации – level of detail

**մասնավոր ռազմական ընկերություն** – частная военная компания – private military company

Մասնավոր առևտրային կազմակերպություն, որը համապատասխան վարձատրությամբ օտար պետությունների համար կազմակերպում է ռազմական ուսուցում, փորձագիտություն, վաճառում է զենք կամ մատակարարում կենդանի ուժ՝ գործելով միջազգային իրավունքի շրջանակներում:

**մասնատում** – 1. расчленение, 2. разбиение – 1. breakdown, 2. partition

**մասշտաբ** – масштаб – scale, numerical scale, scope, representative fraction

1. Քարտեզում, գծագրում գծի երկարության հարաբերությունը իրական երկարությանը: 2. Որևէ բանի չափը, ծավալվածությունը, նշանակալիության սահմանները:

գծագրական մասշտաբ – графический масштаб, графическая шкала – graphic scale

գծային մասշտաբ – линейный масштаб – graphic scale, linear scale

գործունեության մասշտաբ – масштаб деятельности – volume of activity

հիմնական մասշտաբ – основной масштаб – principal scale, nominal scale

օդալուսանկարի մասշտաբ – масштаб аэрофотоснимка – photographic scale

**մատակարար** – 1. поставщик, 2. տես մատակարարում՝ մատակարարման գծով մասնագետ – 1. supplier, contractor, 2. տես մատակարարում՝ մատակարարման գծով մասնագետ

1. Իրավաբանական (կազմակերպություն, ձեռնարկություն, հիմնարկ) կամ ֆիզիկական անձ, որը պատվիրատուին տրամադրում է ապրանքներ կամ ծառայություններ: 2. Մատակարար ծառայության աշխատող:

մատակարարի կատարած թիկունքային ապահովում – тыловое обеспечение поставщиком – contractor logistics support, CLS

Կապալով կատարվող թիկունքային ապահովում:

մեկ հնարավոր մատակարարով մրցույթ – тендер с одним потенциальным поставщиком – single tender

մեկ հնարավոր մատակարարով տենդեր – տես *մատակարար՝ մեկ հնարավոր մատակարարով մրցույթ*

**մատակարարում** – 1. снабжение, 2. поставки – 1. supply, sourcing, 2. provision

Միջոցառումների համալիր, որոնք անցկացվում են ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցներով ապահովելու նպատակով:

անմիջնորդ մատակարարում – прямые поставки, поставки без посредника – customer direct

լրացուցիչ մատակարարման առարկա – предмет дополнительного снабжения – element of resupply

հրետանային-տեխնիկական մատակարարում – артиллерийско-техническое снабжение – ordnance

մատակարարման անհատական պատվեր – индивидуальный заказ на поставку – individual purchase order

մատակարարման առարկաներ – տես *մատակարարում՝ մատակարարման իրեր*

մատակարարման առարկաների լրացում – восполнение предметов снабжения – logistic re-supply

մատակարարման առարկաների կարգ – категория предметов снабжения – classes of supply

մատակարարման առարկաների համափոխարինելիություն – взаимозаменяе-

мость предметов снабжения – interchangeability of supplies

մատակարարման գծով մասնագետ – специалист по снабжению, снабженец – purchasing and contracting officer

մատակարարման իրեր – предметы снабжения – supplies

մատակարարման իրեր և ծառայություններ – предметы снабжения и услуги – supplies and services

մատակարարման իրերի համափոխարինելիություն – տես *մատակարարում՝ մատակարարման առարկաների համափոխարինելիություն*

մատակարարման ծառայության աշխատող – տես *մատակարարում՝ մատակարարման գծով մասնագետ*

մատակարարման ծառայություն – служба снабжения – supply service

Թիկունքային ծառայություն, որը նախանշանակված է ՋՈՒ-ի համար անհրաժեշտ բոլոր նյութերի, տեխնիկայի և դրա մասերի գնման, բաշխման, պահեստում պահելու ժամանակ սպասարկման և օգտահանման համար, ներառյալ՝ տեսակի և քանակության որոշումը:

մատակարարման ծավալ – объем снабжения – level of supply

Ռազմական գույքի կամ պաշարի այն քանակությունը, որը թույլատրված է կամ առաքված՝ ապագա պատռողների համար:

մատակարարման կարևոր առարկա – важнейший предмет снабжения – critical item

մատակարարման կարևոր առարկաների ցուցակ – список важнейших предметов снабжения – critical item list

մատակարարման կետ – пункт снабжения – supply point, distribution point

մատակարարման համակարգի կառավարում – управление системой снабжения – supply chain management

Արտադրանքի պատրաստման (թողարկման) և առբերման համակարգում ներգրավված բոլոր ընկերությունների ու ձեռնարկությունների գործունեության վերահսկման ու պլանավորման գծով միջոցառումների համախումբ:

մատակարարման նորմ – норма снабжения – ration

Մեկ անձին (ստորաբաժանմանը, զորամասին) տրվող կամ անհրաժեշտ պարենի, վառելիքի կամ այլ ռեսուրսի կանոնակարգված քանակությունը (հատկապես՝ այդ ռեսուրսի տղության պայմաններում) միավոր ժամանակում:

մատակարարման նորմավորում – нормирование снабжения – rationing

Արտակարգ իրավիճակներում հատկացվող նյութական բավարարման սահմանափակում:

մատակարարման պահանջվող նորմ – требуемая норма снабжения – required supply rate

Զինամթերքի քանակը՝ արտահայտված զենքի մեկ միավորով օրական կրակոցների թվով (այն զինամթերքի դեպքում, որը զենքը կրակում է) և մատակարարման մյուս բոլոր առարկաների դեպքում՝ արտահայտված մեկ օրվա հաշվարկով տվյալ մեծությունների չափման միավորներով, որոնք գնահատվում են ըստ նախատեսված ուժերի գործողությունների ապահովման անհրաժեշտության՝ առանց կոնկրետ շրջանում ինտենսիվության նվազման:

մատակարարման պահեստ – склад снабжения – supply depot

մատակարարման պետ – начальник снабжения – quartermaster

մատակարարման սպառվող առարկաներ – расходные предметы снабжения – expendable supplies

մատակարարման օրական մարտական նորմ – суточная боевая норма снабжения – combat day of supply

Մատակարարվող պաշարների այն ընդհանուր քանակությունը, որն անհրաժեշտ է մարտերի մեկ օրվա համար՝ հաշվարկված մատակարարման օրական ստանդարտ նորմի նկատմամբ ինտենսիվության գործոնի կիրառմամբ:

մատակարարման օրական ստանդարտ նորմ – стандартная суточная норма снабжения – standard day of supply

Մատակարարվող պաշարների այն ընդհանուր քանակությունը, որը միջի-

նում պահանջվում է մեկ օրվա համար և հաշվարկվում է ազգային նորմերի հիման վրա, իսկ ՆԱՏՕ-ում՝ մաս ՆԱՏՕ-ի թիկունքային ապահովման գծով փորձագետների մշտական խմբի մշակած նորմաներով:

մատակարարում օդային ճանապարհով – տես *մատակարարում՝ մատակարարում օդուղով*

մատակարարում օդուղով – снабжение по воздуху – air supply

մարտական գործողությունների համար մատակարարման առարկաներ – предметы снабжения для боевых действий – combat supplies

մարտական մատակարարում – боевое снабжение – military supplies, war supplies

մրցակցային մատակարարում – конкурентное снабжение – competitive sourcing

**մատերիա** – материя – substance, matter

**մատնիչ** – 1. доносчик, 2. տես *դավաճան* – 1. snitch, informer, 2. տես *դավաճան*

**մատնություն** – 1. տես *դավաճանություն* 1, 2. донос, выдача – 1. տես *դավաճանություն* 1, 2. betrayal, denunciation

**մատույց** – подступ, подход – avenue of approach, approach

1. Որևէ տեղի՝ թշնամու դիրքերին՝ ռազմական օբյեկտներին ևն մոտենալու, հարվածելու, հարձակվելու հարմար վայր՝ ուղի: 2. Առհասարակ՝ քաղաքի, տեղանքի՝ շենքի ևն մերձակայքը:

**մատուռ** – часовня – chapel

**մարդագող** – похититель людей – kidnapper

**մարդագողություն** – похищение людей – kidnapping, kidnap

**մարդախումբ** – группа людей – band  
խումբ, որում մարդիկ միավորված են ընդհանուր հետաքրքրություններով (երաժշտախումբ, ավազակախումբ, արշավախումբ ևն):

**մարդասիրական** – 1. гуманитарный, 2. гуманный – 1. humanitarian, 2. humane

մարդասիրական օգնություն – гуманитарная помощь – humanitarian aid, humanitarian assistance

**մարդկանց առևանգում** – տես *մարդագորություն*

**մարզ** – область – area, domein

**մարզաճամբար** – տես *ճամբար՝ ուսումնական ճամբար*

**մարզիչ** – тренер – trainer

**մարմին** – 1. орган, 2. тело, 3. տես *իրան 2* – 1. board, 2. body, 3. տես *իրան 2*

թռիչքների վրագետնյա կառավարման մարմին – орган наземного управления полетами – flight control

Վրագետնյա տեղաբաշխմամբ ստորաբաժանում, որը կառավարում է թռիչքը:

իրավակիրառ մարմին – правоприменяющий орган – law enforcement agency

Պետական մարմին, որը կատարում է դատական ցուցումները, օրինակ, ունի լիազորություններ՝ ապրանքներ կամ փաստաթղթեր առգրավելու, տարածքը խուզարկելու ևն:

իրավապահ մարմին – правоохранительный орган – law enforcement agency

մարտական ապահովման մարմին – орган боевого обеспечения – combat support agency

պետական մարմին – государственный орган – agency, service

ռազմական կառավարման մարմին – орган военного управления – military authorities

ռազմական կառավարման մարմիններ, որոնք մասնակցում են միջտեսակային օպերացիաների (գորավարժությունների) պլանավորմանն ու անցկացմանը – органы военного управления, участвующие в планировании и проведении межвидовых операций (учений) – joint planning and execution community

վերաբաշխող մարմին – перераспределяющая инстанция – redistribution authority

տեղեկույթի (հետախուզական) հավաքման մարմին – орган сбора (разведывательной) информации – collection agency

օդային տրանսպորտի բաշխման մարմին – орган распределения воздушного транспорта – air transport allocations board

օրենսդիր մարմին – законодательный орган – legislative body

**մարշալ** – маршал – marshal

Որոշ պետություններում՝ բարձրագույն զինվորական կոչումը:

ավիացիայի գլխավոր մարշալ – главный маршал авиации – air chief marshal

ավիացիայի մարշալ – маршал авиации – marshal of the Air Force, air marshal

զրահատանկային զորքերի մարշալ – маршал бронетанковых войск – marshal of armored troops

թռիչքային մարշալ – տես *մարշալ՝ օդային մարշալ*

ինժեներական զորքերի մարշալ – маршал инженерных войск – marshal of engineer troops

կապի զորքերի մարշալ – маршал войск связи – marshal of signal troops

հրետանու մարշալ – маршал артиллерии – artillery marshal

օդային մարշալ – воздушный маршал – air marshal

Աշխատող, որը ծածուկ կերպով ապահովում է մարդատար ինքնաթիռների չվերթների անվտանգությունը: Իրավունք ունի ձեռքավելու անձանց և կիրառելու զենք:

**մարտ** – бой – fight, fighting, combat, action

Ձորքերի մարտավարական գործողությունների հիմնական ձևը, ըստ նպատակի, տեղի և ժամանակի համաձայնեցված հարվածներ, կրակ և տարաշարժ ներկայացնող կազմավորված զինված ընդհարում:

գիշերային մարտ – ночной бой – night fighting

Գիշերային պայմաններում մղվող մարտ, որն ունի որոշակի առանձնահատկություններ:

խոր մարտ – глубокий бой – deep battle  
Հակառակորդի մարտավարական պաշտպանության միաժամանակյա ճնշում ամբողջ խորությամբ, հրետանու և ավիացիայի աջակցությամբ սլացիկ ձեղքում հետևակի և տանկերի կիրառմամբ:

հակաօդային մարտ – противовоздушный бой – air defense battle

համազորային մարտ – общевойсковой бой – combined arms battle

Մարտ, որին մասնակցում են ՑՁ տարբեր զորատեսակների և ՋՈՒ-ի տարբեր տեսակների ստորաբաժանումներ, զորամասեր և զորամիավորումներ:

հանդիպական մարտ – встречный бой – meeting engagement, encounter battle

Հարձակողական մարտի տեսակ, որում կողմերը ծագում են դրված խնդիրները լուծելու հարձակման միջոցով:

հարձակողական մարտ – наступательный бой – offensive battle

հետիոտն մարտ – пеший бой – dismounted action

մարտ բնակավայրում – տես *մարտ՝ քաղաքային մարտ*

«Մարտի՛» – «К бою!», «Занять места!», «Занять боевые позиции!» – “Action stations!”

մարտի բռնվել – вступить в бой – join the battle, engage in combat

Մարտի մեջ մտնել, դառնալ մարտին մասնակից, ընդհարվել:

մարտի դաշտ – поле сражения, поле боя – battlefield, combat zone

մարտի ժամանակ ստացված վերքերից մահացած – умерший от ран, полученных в бою – died of wounds received in action

մարտի կառավարում – управление боем – battle management

մարտի մեջ գործադրում – ввод в сражение (бой) – introducing into battle, engaging in battle

Երկրորդ շարակարգի և պահուց զորքերի զորամիավորումների՝ միավորումների՝ զորամասերի՝ ստորաբաժանումների կազմակերպված առաջընթացումը,

ծավալումը և մարտի (ճակատամարտի) մեջ մտցնելը ջանքերի ուժգնացման և հակառակորդի ուժերի ու միջոցների նկատմամբ գերակշռության պահպանման (ապահովման) նպատակով:

«մարտի պատրաստ» դրություն – положение «на изготовку» – ready position

մարտի պլան – план боя – tactical plan

մարտից դուրսբերում – выход из боя – disengagement

մարտ շրջափակման մեջ – бой в окружении – encirclement battle

Մարտ, որը մղում է շրջապատման մեջ հայտնված խումբը՝ ստորաբաժանումը՝ զորամասը՝ զորամիավորումը:

մարտ վարել – տես *մարտնչել*

մարտում անհայտ կորած – без вести пропавший в бою – missing in action

մարտում սպանված – убитый в бою – killed in action, KIA

մարտում վիրավոր – раненый в бою – wounded in action

մարտում (օպերացիայում) ջանքերի մեծացում – наращивание усилий в бою (операции) – build-up of efforts in battle (operation)

Միջոցառումներ, որոնք ուղղված են մարտի (օպերացիայի) ընթացքում առաջին շարակարգի ուժեղացմանը՝ հաջողությունը զարգացնելու և մարտի (օպերացիայի) նպատակներին հասնելու համար:

պաշտպանողական մարտ – оборонительный бой – defensive battle

տեղական նշանակության մարտ – бой местного значения – local engagement

ուսումնական մարտ – учебный бой – sham fight

քաղաքային մարտ – бой в городе – military operations in urban terrain, MOUT, urban combat (USA), fighting in built-up areas (*Brit.*)

Մարտական գործողություններ քաղաքային վայրում, որոնց բնորոշ է տեսադաշտի և կրակակրծման գոտու սահմանափակությունը, մեծ ավերածությունների, անցկալների ու հրդեհների



գոյացումը, տարաշարժի ու կառավարման բարդությունը, մարտական գործողությունների մասնատվածությունը մի շարք տեղական մարտերի, դրանց համառությունն ու կատաղիությունը, գրոհային ջոկատների ու խմբերի լայն կիրառումը ևն:

օդային մարտի գորաշարժ և գործիքակազմ – маневр и инструментарий воздушного боя – air combat maneuvering and instrumentation, ACMI

օդավրագետնյա մարտ – տես *մարտ՝ օդացամաքային մարտ*

օդացամաքային մարտ – воздушно-наземный бой – air-land battle

Մարտ, որն ընդգրկում է օդային տարածության ստորին շերտը և պատերազմող կողմերի զորքերի դիրքերի ամբողջ խորությունը:

**մարտագիծ** – боевая линия – battle line  
Հարձակման ժամանակ ՀՄՄ-ներով (ԶՓԴ-ներով) գործող մոտոհրաձգային վաշտի (դասակի) կամ տանկային վաշտի (դասակի) մարտակարգը:

**մարտագլխիկ** – боеголовка, боевой блок – warhead

Հրթիռի խոցիչ տարրը՝ միջուկային կամ սովորական:

հաջորդաշարային մարտագլխիկ – тандемная боеголовка – tandem warhead

Հակատանկային մարտագլխիկ՝ բաղկացած մեկը մյուսի հետևից տեղադրված երկու կուտակային լիցքերից:

մարտագլխիկի խոցում – поражение боеголовки – warhead kill

Հրթիռի մարտագլխիկի ոչնչացում հակառակորդի պաշտպանական միջոցներով:

միջուկային մարտագլխիկ – ядерная боеголовка – nuclear warhead

սպառագինությունից հանված մարտագլխիկ – снятая с вооружения боеголовка – retired warhead

տարաշարժուն մարտագլխիկ – маневренная боеголовка – maneuverable reentry vehicle

ուղղորդված լիցքով մարտագլխիկ – боеголовка с направленным зарядом – shaped-charge warhead

քիմիական մարտագլխիկ – химическая боеголовка – chemical warhead

**մարտադաշտ** – տես *մարտ՝ մարտի դաշտ*

մարտադաշտի մշտադիտում – наблюдение за полем боя – combat surveillance

մարտադաշտում տեսանելիության վատթարացում – ухудшение видимости на поле боя – fog of war

Տեսանելիության վատթարացում՝ պայմանավորված մարտադաշտում պայթյուններով կամ այլ միջոցներով առաջացված ծխով, մշուշով ևն:

**մարտալրակազմ** – боекомплект – ammunition allowance

Զենքի (հրանոթ, գնդացիր, արձակման կայանք ևն), մարտական մեքենայի (տանկ, նավ, ինքնաթիռ ևն) համար զինամթերքի սահմանված քանակը:

հաստիքային մարտալրակազմ – табельный боекомплект – basic load

Ստորաբաժանման կամ կազմավորման համար ըստ հաստիքային հաշվետախտակի նախատեսված զինամթերքի քանակությունը:

հաստիքային միջուկային մարտալրակազմ – табельный ядерный боекомплект – prescribed nuclear load

Որոշակի քանակությամբ միջուկային զենք, որը նախատեսված է միջուկային զենք կիրառող ստորաբաժանման՝ զորամասի համար:

**մարտակայանք** – боевая платформа – platform

Միջոց (հրթիռ, սուզանավ, ինքնաթիռ ևն), որով տեղափոխվում է զենքը:

զինակիր մարտակայանք – боевая платформа, несущая боевая платформа – platform, fighting platform, combat platform

**մարտական** – боевой – combat, fighting, tactical, field

Մարտին հատուկ, վերաբերող:

մարտական աշտարակախուց – боевая рубка – conning tower

մարտական ավանդույթ – боевая традиция – combat tradition

մարտական բեռնվածություն – տես *բեռնվածք՝ մարտական բեռնվածք*

մարտական գերազանցություն – боевое отличие – battle honor

մարտական դեսանտային մեքենա – боевая машина десанта, БМД – airborne assault vehicle

Օդադեսանտային զորքերի զրահապատ թրթուրավոր լողունակ մեքենա՝ մարտական գործողություններ վարելու և կենդանի ուժ տեղափոխելու համար:

մարտական ինքնուրույնություն – боевая самостоятельность – combat independence, sustainability

Ստորաբաժանման, զորամասի, նավի, զորամիավորման ունակությունը՝ ինքնուրույնաբար վարելու մարտական գործողություններ և որոշակի ժամանակ իր խնդիրները կատարելու հիմնական ուժերից կտրվածության պայմաններում:

մարտական լիաներդաշնակություն – боевая слаженность – military interoperability

Զորամասի (ստորաբաժանման) վիճակ՝ մարտական լիաներդաշնակեցման արդյունքը: 1. Երկու կամ ավելի պետությունների ուժերի ունակությունը՝ արդյունավետ կերպով միասին պատրաստվելու, ուսումնավարժվելու և գործելու համատեղ խնդրի կամ առաջադրանքի կատարման ժամանակ: 2. Մարտավարական (մարտավարամասնագիտական) պատրաստման տարր. վարժանքային միջոցառումների համալիր՝ նպատակաուղղված զինծառայողների ուսումնավարժեցմանը՝ իրենց ստորաբաժանման (անձնակազմի, մարտահաշվարկի, նավի, շտաբի ևն) կազմում փոխհամաձայնեցված կերպով գործելուն: Բաժանվում է 3 փուլի. յուրաքանչյուր զինծառայողի անհատական պատրաստում իր անմիջական ծառայողական գործառույթների կատարմանը (հնտությունների ձևավորում), զորային կազմավորումների շտաբների ու վարչությունների աշխատանքային համատեղելիության ձևավորում, ստորաբաժանումների ու զորամասերի ներդաշնակեցում:

մարտական լողորդ – боевой пловец – diver

մարտական կայունություն – боевая устойчивость – sustainability, combat survivability, robustness, effectiveness

Զինվորական կազմավորման ունակությունը՝ պահպանելու անհրաժեշտ մակարդակի մարտական հզորություն այնքան ժամանակ, որքան հարկավոր է առաջադրանքը կատարելու համար:

մարտական կիրառում – боевое применение – tactical employment

Մարտական կիրառության գործընթացը:

մարտական հաստատունություն – боевая стабильность – effectiveness

Սպառազինության և ռազմական տեխնիկայի կարողությունը՝ պահպանելու իր արդյունավետությունը հակառակորդի, եղանակային պայմանների ևն բացասական ազդեցության պարագայում:

մարտական հերթապահություն օդում – боевое дежурство в воздухе – airborne alert

մարտական հմտություններ – боевые навыки – combat skills

մարտական հնարավորություններ – боевые возможности – 1. combat capabilities, combat potential, 2. military effectiveness

մարտական ծիաբեռնասայլ – տես *զինվորական՝ զինվորական ծիաբեռնասայլ*

մարտական մաս – 1. տես *մարտագլխիկ*, 2. боевая часть, 3. տես *զորամաս՝ մարտական զորամաս* – 1. տես *մարտագլխիկ*, 2. combat department, 3. տես *զորամաս՝ մարտական զորամաս*

1. Հրթիռի, տորպեդի ևն մարտագլխիկը (խոցիչ տարրը): 2. Նավի անձնակազմի հիմնական կազմակերպական ստորաբաժանումը, որը նախանշանակված է որոշակի խնդիրների կատարման ու մարտում և ամենօրյա ծառայության մեջ որոշակի տեխնիկական միջոցների օգտագործման համար, այն է՝ անձնակազմի այն մասը, որի տնօրինությանն են հանձնված որոշակի տեսակի սպառազինությունը կամ սարքավորանքին վերաբերող մարտական և տեխնիկական միջոցները:

մարտական միավոր – боевая единица – unit, combat unit

մարտական մկրտություն – боевое крещение, первое испытание на каком-либо поприще – baptism of fire

Որևէ ասպարեզում առաջին փորձությունը:

մարտական նստեցում և բեռնում – боевая погрузка – combat loading

Ջորջի նստեցում և ՄՈՏ բեռնում փոխադրամիջոց այնպես, որ իջեցման (բեռնաթափման) ժամանակ դրանք պատրաստ լինեն մարտական կիրառմանը:

մարտական ոգի – боевой дух – morale

մարտական պատրաստության դրություն – положение боевой готовности – general quarters

Պատրաստության դրություն, երբ մարտական գործողությունները (գերազանցապես՝ նավատորմի) անխուսափելի են. բոլոր մարտական կայանքների մարտահաշվարկները տեղում են և պատրաստ են գործարկման, զինամթերքը պատրաստ անհապաղ լիցքավորման, հրանոթներն ու կառավարվող հրթիռների արձակման կայանքները կարող են մարտաբեռնվել:

մարտական ստրեսների կառավարում – управление боевыми стрессами – combat and operational stress control

Այն ծրագրերն ու գործողությունները, որոնք զինվորական ղեկավարությունը ձեռնարկում է պատերազմի ժամանակ գործառնելու անբարենպաստ հուզաստրեսային հակազդումները կանխելու, հայտնաբերելու և վերահսկելու նպատակով:

մարտական վիճակ – боевое положение – 1. standby state, 2. firing position

1. Հրետանու և հրթիռային համալիրների՝ գործարկմանը պատրաստության դրություն: 2. Ականների և այլ պայթուցիկ զինամթերքի վիճակ, երբ այն լարված (լիցքավորված) է և գտնվում է սպասողական վիճակում՝ մարտական գործարկման համար:

մարտական վնասվածք – боевая травма, ранение в бою – battle injury

մարտական տարածության մասին տեղեկացվածություն – осведомленность о боевом пространстве – battlespace awareness

Իրազեկվածություն այն միջավայրի, գործոնների և պայմանների մասին, որոնք անհրաժեշտ են ռազմադաշտում հաջողության հասնելու համար:

մարտական օդադետք – боевой воздушный дозор – combat air patrol

օդային մարտական առաջադրանք – боевое авиационное задание – air mission

**մարտակարգ** – տես *կարգ՝ մարտական կարգ*

առաջին շարակարգում երկու տարրով մարտակարգ – боевой порядок с двумя элементами в первом эшелоне – two-up

Մարտավարություն, որի դեպքում երկու ստորաբաժանումները համահավասար կերպով շարժվում են առջևից, մնացածը՝ դրանց հետևից:

«անկյունով դեպի առաջ» մարտակարգ – боевой порядок «углом вперед» – wedge formation

Նախամարտական դասավորություն, որի դեպքում մի տարրը (ստորաբաժանում, տանկ, ինքնաթիռ, ռազմանավ ևն) գլխավորում է շարասյունը, իսկ հաջորդ երկուսը գտնվում են նրանից հետո՝ միևնույն հեռավորության և միմյանց հետ մի գծի վրա:

ծավալվել մարտակարգի – развертываться в боевой порядок – shake out

մարտակարգի խորություն – глубина боевого порядка – depth of deployment

Այն հեռավորությունը, որի վրա առաջավոր ստորաբաժանումներից (պաշտպանության առջևի գծից) գտնվում է մարտակարգի առավել հեռու տեղաբաշխված տարրի հետնագիծը:

մարտակարգի կազմում – построение боевого порядка – strategic concentration

մարտակարգի վերահասավորման տարածք – территория построения – forming-up point

Այն շրջանը՝ գոտին՝ վայրը, որտեղ մարտավարական խմբավորման զին-

վորներն ու զրահատեխնիկան կուտակվում և կազմում են մարտակարգ՝ հակառակորդի դեմ մարտական գործողություններ սկսելու համար:

ռադիոէլեկտրոնային համակարգերի մարտակարգ – боевой порядок радио-электронных систем – electronic order of battle

«տուփ» մարտակարգ – боевой порядок «коробочка», боевой порядок «прямоугольник» – box

Ռազմական տեխնիկայի մարտակարգ՝ քառակուսու կամ ուղղանկյան ձևով:

**մարտահաշվարկ** – расчет, боевой расчет – combat crew, combat duty assignment, team combat

1. Ժամանակավոր զինվորական կազմավորում, որը նախանշանակված է մարտական հերթապահություն, զորքերի (ուժերի) մարտական կառավարում և այլ խնդիրներ կատարելու համար: 2. Ստորաբաժանման զինծառայողների հատուկ (լրացուցիչ) պարտականությունների որոշումը մարտական իրադրության, մարտավարական գործարարությունների, տազնապի, պահակային ծառայության և այլ դեպքերի համար:

գնդացրային մարտահաշվարկ – пулеметный расчет – machine gun crew, gun group

Մեկ գնդացիր սպասարկող անձնակազմը՝ ըստ պարտականությունների համարակալմամբ:

հրանոթային մարտահաշվարկ – оружийный расчет – gun crew

Մեկ հրանոթ սպասարկող անձնակազմը՝ ըստ գործառնությունների համարակալմամբ:

հրետանային մարտահաշվարկ – տես *մարտահաշվարկ՝ հրանոթային մարտահաշվարկ*

**մարտահրավեր** – вызов – challenge

Այնպիսի ռեալ վտանգի հատկանիշ, որը հնարավոր վնասի նախականիսման և/կամ նվազեցման համար հակազդում է պահանջում, ինչպես նաև անվտանգության սուբյեկտին հրավիրում է մրցակցության: Անհրաժեշտություն է ստեղծում անվտանգության

առկա ռեսուրսները համապատասխանեցնելու այդ բնագավառում ծագած մրցակցության պահանջներին:

**մարտանցում** – форсирование – forcing

Ականադաշտի, զանազան տարածական պաշտպանական միջոցների, ինչպես նաև բնական արգելքների ևն հաղթահարում՝ հակառակորդի դիմադրության ճնշմամբ:

**մարտաշարվածք** – боеукладка – ammunition stowage rack, ammunition box

Մարտական մեքենայում տեղակայված սարքավորանքի ու մեխանիզմների համախումբ՝ նախատեսված զինամթերքը տեղաբաշխելու և լիցքավորման գծին հասցնելու համար:

**մարտաշարք** – строй – formation

Ջինծառայողների ստորաբաժանումների, զորամասերի, նավերի, ինքնաթիռների ևն կանոնադրությամբ սահմանված տեղաբաշխում՝ դասավորություն համատեղ շարժվելու և գործելու համար:

շեղանկյունաձև մարտաշարք – строй ромба – diamond formation

1. Ջորքի քառանկյունաձև մարտավարական շարվածք, որի մի սուր անկյունը գտնվում է ճակատային մասում: 2. Մարտավարական խմբավորում, որը կազմված է չորս մասից, մի մասը՝ առջևում, երկուսը՝ թևերում, իսկ չորրորդը եզրավակում է կառուցվածքը:

սեպածև մարտաշարք – строй клином – arrowhead

Սլաքածև (Λ) մարտական շարվածք:

**մարտապաշար** – боезапас – basic load, reserve ammunition

Ջինամթերքի այն քանակությունը, որը հատկացվում է ռազմական տեխնիկայի մի միավորին:

**մարտասնուցում** – боевое питание, боепитание – ammunition supply

Մոտոհրաձգային, տանկային և հրետանային, ինչպես նաև ծովային հետևակի ստորաբաժանումների մատակարարում՝ ապահովում զինամթերքով:

**մարտավար** – тактик – tactician

**մարտավարական** – тактический – tactical

մարտավարական ապահովում – тактическое обеспечение – tactical support, tactical security

մարտավարական դրվագ – тактический эпизод – tactical episode  
Ջորավարժության սցենարի մի հատված:

մարտավարական հնարներ, մեթոդիկա և ընթացակարգեր – тактические приемы, методика и процедуры – tactics, techniques and procedures

մարտավարական մակարդակ – тактический уровень – tactical level

**մարտավարություն** – тактика – tactics  
Ռազմական արվեստի բաղադրիչ, որը ներառում է ՁՈՒ-ի տարբեր տեսակների, տարբեր զորատեսակների ու հատուկ զորքերի ստորաբաժանումների ու զորամասերի կողմից մարտի պատրաստման ու վարման տեսությունն ու պրակտիկան, ռազմական նպատակներին հասնելու համար օգտագործվող կրակի, կազմավորումների ու տարաշարժի համակցությունը:

մարտավարության հայեցակարգ – концепция тактики – tactical concept  
Մարտավարության վերաբերյալ այն տեսակետների համակարգը, որոնք հետազայում հիմք են ծառայում պետության զինված ուժերի մարտավարությունը կանոնակարգող փաստաթղթի (մարտավարական դոկտրինի կամ մարտական կանոնագրքի) մշակման համար:

պաշտպանողական մարտավարություն – оборонительная тактика – defensive tactics

**մարտատեսախցիկ** – боевая видеокamera – combat camera

**մարտարշավ** – рейд – raid, foray  
Մեծ շարժունակությամբ զորամասերի կամ պարտիզանական ջոկատների սկզբի տեղաշարժը և մարտական գործողությունները հակառակորդի թիկունքում:

պարտիզանական մարտարշավ – партизанский рейд – guerrilla raid

Պարտիզանական կազմավորումների մարտական գործողությունների եղանակ. սկզբի տեղափոխումներ հակառակորդի թիկունքում նրա կենդանի ուժը, տեխնիկան, կարևոր օբյեկտները ոչնչացնելու, թիկունքի աշխատանքը խաթարելու և մատակարարումները խափանելու, կառավարման համակարգը կազմալուծելու, հաղորդակցությունները (կապ, փոխադրումներ ևն) խզելու, ինչպես նաև նոր շրջաններում դիմադրությունը խթանելու համար: Որոշ մասնագետների կարծիքով (մասնավորապես՝ խորհրդային «Стратегия» ռազմական դասագրքի)՝ նման ռազմավարություն առաջինը կիրառել է հայոց Տիգրան Բ՝ Լուկուլլոսի (Հին Հռոմ) դեմ պատերազմում (մ. թ. ա. 69 – 67 թթ.):

**մարտիկ** – боец – fighter, warfighter

**մարտկոց** – батарея – battery  
Հրետանու, հրթիռային, զենիթահրթիռային զորքերի հիմնական կրակային (հարվածային) մարտավարական ստորաբաժանումը:

հրթիռային մարտկոց – ракетная батарея – missile battery

մարտկոցի ավագ սպա – տես *կրակային՝ կրակային դիրքի ավագ*

մարտկոցի կառավարման կենտրոն – центр управления батареей – battery control center

**մարտնչել** – сражаться, вести бой – fight, combat

**մարտունակ** – боеспособный – combat-effective

**մարտունակություն** – боевая способность, боеспособность – combat effectiveness, combat capability, operational capability

Ջորքի (ուժերի) վիճակ, որը հնարավորություն է տալիս ըստ իր նախանշանակման հաջողությամբ մարտական գործողություններ վարելու և իրացնելու իր մարտական հնարավոր

րությունները իրադրության ցանկացած պայմաններում:

մարտունակության կորուստ – утрата бое- способности – attrition

մարտունակության վերականգնում – восстановление бое- способности – reconsti- tution, rehabilitation of combat effectiveness, restoration of operational capability, restor- ing fighting efficiency, stand-down

**մարում** – 1. гашение, 2. амортизация, 3. տես *թուլացում* – 1. suppression, 2. de- preciation, amortization, 3. տես *թուլա- ցում*

1. Հանգցնելը: 2. Հանգցնելը, մեղմաց- նելը: 3. Փակելը, վերջացնելը (պարտ- քերը ևն): 4. Թուլացնելը, դադարելը (դադարեցնելը), ընդհատելը (ընդհատ- վելը):

**մաքսանենգ** – контрабандист – smuggler

**մաքսանենգություն** – контрабанда – smuggling

օդային մաքսանենգության դեպք – случай воздушной контрабанды – air smuggling event

**մաքրում** – 1. очистка, 2. расчистка, очистка – 1. purification, 2. clearing, clearance

գլխավոր մաքրում – генеральная уборка – bull

**մեդալ** – медаль – medal

Հատուկ նշան, որը թողարկվում է ի նշանավորումն (ի պատիվ) որևէ պատ- մական կամ քաղաքական իրադար- ծության, ակամավոր գործչի կամ որպես ռազմական և այլ վաստակների ու գե- րազանցության համար պարգևատրում:

**մեթոդ** – метод – method

տանող պտուտակի շրջապտույտների կարգավորման մեթոդ – метод регули- рования оборотов несущего винта, авто- матизированный контроль за скоростью вертолета – rotor governing mode

**մեթոդաբանություն** – методология – methodology

**մեխանիզմ** – механизм – mechanism, gear

1. Շարժումների փոխանցման կամ կերպափոխման սարք, որում մի կամ մի քանի մասերի շարժումն առաջ է բերում մյուս մասերի միանգամայն որոշակի շարժումներ: 2. Որևէ բանի ներքին կառուցվածքը՝ համակարգը: 3. Այն վիճակների ու պրոցեսների համախումբը, որոնցից ձևավորվում է որևէ ֆիզիկական, քիմիական, ֆի- զիոլոգիական և այլ նման երևույթ:

ամբարձիչ մեխանիզմ – подъемный ме- ханизм – hoist, lifting mechanism

դարձկեն մեխանիզմ – поворотный ме- ханизм – turning mechanism, rotation gear, turret mechanism

կապի և փոխգործության մեխանիզմներ – механизмы связи и взаимодействия – liaison arrangements

կցորդման մեխանիզմ – механизм сцеп- ления – clutch gear, coupling mecha- nism

**մեխանիկ** – механик – 1. mechanic, artifi- cer, 2. fitter

մեխանիկ-վարորդ – механик-водитель – tank driver

**մեծաբեկոր** – глыба, блок – block

**մեծածավալ** – տես *ռազմավարական*

**մեծանշանակ** – տես *ռազմավարական*

**մեծատառ** – заглавная буква – capital

**մեծարանք** – տես *պատիվ 2*

**մեծ քանակությամբ** – в большом коли- честве – in force

**մեծ քանակություն** – большое количе- ство, масса – mass

**մեկնաբանել** – комментировать – anno- tate

**մեկնաբանություն** – 1. комментарий, 2. интерпретация, трактовка – 1. com- ment, commentary, 2. interpretation

1. Որևէ բնագրի բացատրություն՝ պար- զաբանում: 2. Բացատրական՝ լուսա- բանող ու քննադատական դատողու- յուններ որևէ բանի մասին:



**մեկնաբանում** – трактовка – interpretation

1. Պարզաբանելը, բացատրելը, մեկնելը: 2. Որևէ բանի մասին տեղեկություններ՝ ծանոթություններ տալը:

**մեկնակետ** – исходная точка – start point

1. Երթուղու լավ որոշարկված կետ, որտեղից փոխադրամիջոցների (տեխնիկայի) շարասյան երթն սկսվում է տվյալ տեղաշարժի ընդհանուր հրամանատարի ղեկավարությամբ: 2. Ընդհանրապես՝ այն կետը, որից սկսվում է շարժումը: 3. Հայեցակետ:

ստուգիչ մեկնակետ – контрольная исходная точка – departure point

**մեկնակերպ** – версия – version

Որևէ բանի շարադրման կամ պարզաբանման տարբերակներից մեկը:

**մեկնարկ** – старт – start

**մեկնելիություն** – 1. интерпретируемость, 2. разрешающая способность исходного фотоснимка – interpretability

**մեկնիչ** – интерпретатор, толкователь – interpreter

**մեկնում** – отбытие – departure

թույլատրված մեկնում – санкционированный отъезд – authorized departure

Ընթացակարգ, ըստ որի ներկայացուցչության աշխատողներին իրավունք է տրվում հեռանալու տվյալ վայրից՝ իրենց պետության կամ կյանքի համար սպառնալիքի առկայության պարագայում:

մեկնմանը պատրաստության օր – дата готовности к отправке – available-to-load date

մեկնման ժամանակը – время отбытия – time of departure

մեկնման պլանավորված ժամանակ – плановое время отбытия – estimate time of departure

**մեկուսախմբային ոգի** – корпоративный дух, честь мундира – esprit de corps

Ֆրանսերենից տարածված արտահայտություն, որը նշանակում է հարգանք, պատիվ, նվիրվածություն իր զո-

րամասին, այսինքն՝ իր հիմնարկին, խմբին, կազմակերպությանը ևն:

**մեկուսականխում** – блокирование – blockade, block

**մեկուսապաշտություն** – изоляционизм – isolationism

Քաղաքական վարքի տեսակ, որը նպատակաուղղված է այլ սուբյեկտների հետ տվյալ քաղաքական սուբյեկտի կապերի և առնչությունների սահմանափակմանը:

**մեկուսարան** – изолятор – isolation ward

Հատկացված (հատուկ սարքավորված) տեղ՝ վայր՝ սենք, որը նախատեսված է կենդանի օրգանիզմներին (գերազանցապես՝ մարդկանց) այլ օրգանիզմների հետ շփումներից զերծ պահելու համար (օրինակ՝ հիվանդներին, հանցագործներին ևն):

կարգապահական մեկուսարան – տես՝ *հատուկտվայտ*

Հատուկ հատկացված տեղ (սենք), որտեղ մեկուսի պահվում է կարգապահական պատժի ենթարկված զինծառայողը:

**մեկուսացած** – изолированный – isolated

**մեկուսացում** – տես *անջատում*

ռազմաքաղաքական մեկուսացում – военно-политическая изоляция – political-military isolation

սոցիալական մեկուսացում – социальная изоляция – social withdrawal

**մեկուսի** – տես *մեկուսացած*

**մեկուսիչ յուղ** – изоляционное масло – insulating oil

Յուղ, որն օգտագործվում է որևէ առարկա (գերազանցապես՝ էլեկտրական լիցքեր կրող) այլ առարկաներից (հոսանքատար, խոնավ կամ հեղուկ՝ զազային) տարանջատելու, դրանց հետ անմիջական շփումները կանխելու նպատակով:

**մեղադրանք** – обвинение – accusation, charge

**մեղսակից** – տես *հանցակից*

**մենամարտ** – поединок – duel



**մենամարտություն** – единоборство – single combat

**մենաշնորհ** – монополия – monopoly

1. Որևէ բան արտադրելու կամ վաճառելու բացառիկ իրավունք: 2. Խոշոր տնտեսական միավորում, որն իր ձեռքում կենտրոնացրել է որևէ ապրանքի արտադրման ու սպառման մեծ մասը՝ տնտեսության որոշակի բնագավառում հաստատելով իր գերիշխանությունը: 3. Մյուսների նկատմամբ որևէ մեկի հատուկ վիճակը, նախապատվության իրավունք:

**մեռած** – տես *մահացած*

**մեռյալ ձագար** – տես *տարածություն*  
*մեռյալ տարածություն* 2

**մետաղալար** – տես *լար*

**մետաղափնտրիչ** – металлоискатель, металлдетектор – metal detector

**մերժել** – отказать, отклонить – refuse

**մերժում** – отказ – denial

«**Մերկավա**» – «Меркава» – “Merkava”  
1980-ական թվականների իսրայելական հիմնական մարտական տանկ:

**մերձագործ** – 1. ближнего действия, 2. с малым радиусом действия – short-range

**մերձամարտ** – ближний бой – close quarter battle, infighting  
Մարտ, որում ընդդիմամարտող կողմերի զինվորները կարող են կիրառել անզամ սվիններ և պարզագույն զենք:

**մերձափնյա** – տես *ափամերձ*

մերձափնյա րեկում – береговая рефракция – coastal refraction, land effect, shore line effect  
Մակերևութային ռադիոալիքի տարածման ուղղության փոփոխում, երբ այն անցնում է ցամաք–ծով կամ ծով–ցամաք սահմանով:

**մերձեցում** – տես *մոտեցում* 1

մերձեցում հակառակորդին – сближение с противником, сближение – advance to contact

**մերձձայնային** – околосвуковой – transonic

Տվյալ նյութում ձայնի տարածման արագությանը մոտ արագություն:

**մեքենա** – машина – 1. vehicle, 2. engine  
1. Փոխադրամիջոց, որն ունի մասնագիտացված բնույթ և ծառայում է որոշակի նպատակի: 2. Մեխանիզմ կամ մեխանիզմների զուգակցում, որոնք կատարում են որոշակի նպատակաուղղված շարժումներ՝ էներգիայի կերպափոխման, աշխատանքի առարկայի ձևի, հատկությունների, վիճակի կամ դիրքի փոփոխման, տեղեկույթի հավաքման, փոխանցման, պահման, մշակման և օգտագործման համար:

անվաթրթուրավոր մեքենա – колесно-гусеничная машина, полугусеничная машина – half-track

անվավոր մարտական հետախուզական մեքենա – колесная боевая разведывательная машина – combat vehicle reconnaissance wheeled

անվավոր մեքենա – տես *փոխադրամիջոց՝ անվավոր փոխադրամիջոց*

անվավոր ՄՀՄ – տես *մեքենա՝ անվավոր մարտական հետախուզական մեքենա*

արագագնաց դեսանտային մեքենա – быстроходная десантная машина – fast attack vehicle, FAV

Ամերիկյան արտադրության թեթև անագնաց մեքենա՝ զինված միջին տրամաչափի գնդացրով:

զրահապատ հետախուզադետրային մեքենա – бронированная разведывательно-дозорная машина, БРДМ – armored reconnaissance and patrol vehicle

զրահապատ հետախուզադիվերսիոն մեքենա – бронированная разведывательно-диверсионная машина – armored reconnaissance and sabotage vehicle

զրահապատ մարտական մեքենա – бронированная боевая машина – armored fighting vehicle, AFV

զրահապատ մեքենայի հիմնակմախք – остов бронированной машины – hull

զրահապատ նորոգումատարահանիչ մեքենա – бронированная ремонтно-эвакуа-

ционная машина, танк-тягач – armored recovery vehicle, armored repair and recovery vehicle

Վնասված՝ չաշխատող, փչացած գրահամեքենաները մարտի դաշտից հեռացնող գրահամեքենա:

թեթև գրահապատ մեքենա – легкая бронированная машина – light armored vehicle

թրթուրավոր մարտական հետախուզական մեքենա – боевая гусеничная разведывательная машина – combat vehicle reconnaissance tracked

թրթուրավոր ՄՀՄ – տես *մեքենա՝ թրթուրավոր մարտական հետախուզական մեքենա*

ինժեներական մեքենա – инженерная машина – combat engineer tractor

կառավարման մեքենա – машина управления – command vehicle

կիսաթրթուրավոր մեքենա – տես *մեքենա՝ անվաթրթուրավոր մեքենա*

համապիտանի էլեկտրոնային հաշվիչ մեքենա – универсальная электронно-вычислительная машина – universal computing engine

հետախուզական մեքենա – разведывательная машина – combat vehicle reconnaissance

հետևակի մարտական մեքենա – боевая машина пехоты, БМП – infantry fighting vehicle, IFV

հրամանատարական մեքենա – командирская машина – command vehicle

հրամանատարաշտաբային մեքենա – командно-штабная машина – command vehicle

ճարտարագործական մեքենա – տես *մեքենա՝ ինժեներական մեքենա*

մարտական հետախուզական մեքենա – боевая разведывательная машина, БРМ – armored reconnaissance vehicle, combat vehicle reconnaissance, cavalry fighting vehicle, CFV

մարտական մեքենա – боевая машина – vehicle

ՄՀՄ – տես *մեքենա՝ մարտական հետախուզական մեքենա*

շտապօգնության մեքենա – машина скорой помощи – ambulance, life-saving vehicle

**մեքենայացված** – механизированный – mechanized

**մեքենաշինություն** – машиностроение – engineering, mechanical engineering

ընդհանուր մեքենաշինություն – общее машиностроение – general engineering

**ՄԶԶՊ** – տես *Միջուկային զենքի չտարածման պայմանագիր*

**մզվածք** – տես *հանուկ*

**մթերաբաժին** – паек, продовольственный паек – allowance

Համապատասխան քանակությամբ ու տեսականիով սննդամթերքի հավաքածու ըստ հաստատված նորմերի՝ մեկ օրվա, մի քանի օրվա, մեկ ամսվա կամ այլ ժամկետների համար:

**մթերք** – продукт – food

**մթնեցում** – затемнение – blackout

Քողարկման եղանակ. միջոցառումներ, որոնք խոչընդոտում են շենքերից, շինություններից և այլ օբյեկտներից լուսարձակմանը՝ հակառակորդի կողմից դրանց հայտնաբերումը կանխելու համար:

**մթնոլորտ** – атмосфера – atmosphere

Երկնային մարմնի գազային թաղանթը, որը պահպանվում է շնորհիվ ձգողության ուժի:

**Մի-28** – Ми-28 – “Havoc”

Խորհրդային հարվածային ուղղաթիռ:

**միառանցք** – соосный, коаксиальный – coaxial

Համաչափության՝ պտտման և ն միևնույն առանցքն ունեցող, օրինակ՝ միառանցք մալուխ:

**միաբերում** – տես *ընդհանրացում*

**միաժամանակյա** – одновременный – simultaneous

**միակենտրոնություն** – моноцентризм – monocentrism

Տեսություն, ըստ որի՝ բոլոր մարդկային ռասաները ծագել են միևնույն նախամարդուց՝ միևնույն աշխարհագրական շրջանում:

**միակողմանի ճանապարհ** – односторонняя дорога – single flow route

Ճանապարհ, որով երթևեկությունը թույլատրված է միայն մեկ ուղղությամբ:

**միանալ** – соединяться – ally

**միանալու հայտագիր** – нота о присоединении – note of accession

**միապետ** – монарх – monarch

**միապետություն** – монархия – monarchy

Պետության կազմակերպվածք՝ պետական կառավարման ձև, որի դեպքում գերագույն պետական իշխանությունը լիովին կամ մասնակիորեն պատկանում է (ռեալ կերպով կամ ձևականորեն) միանձնյա ղեկավարի՝ միապետի (թագավորի, կայսեր, ցարի, շահի, սուլթանի ևն), որն այն սովորաբար ստանում է իր նախորդից և ժառանգաբար փոխանցում հաջորդին:

բացարձակ միապետություն – տես *բացարձակապետություն*

սահմանադրական միապետություն – конституционная монархия, ограниченная монархия – constitutional monarchy, limited monarchy

Միապետություն, որում միապետի իշխանությունը (և՛ ձևական-իրավաբանական, և՛ փաստացի առումով) այնպես է սահմանափակված բարձրագույն օրենքներով (սահմանադրություն ևն) կամ բարձրագույն դատական ատյանների նախադեպային վճիռներով, որ նա չունի պետական իշխանության ոլորտում գերիշխանական լիազորություններ:

սահմանափակ միապետություն – տես *միապետություն՝ սահմանադրական միապետություն*

**միասնական** – единый, общий – uniform

**միասնականություն** – տես *միասնություն*

**միասնություն** – единство, спаянность, сплоченность – cohesion

**միավորել** – консолидировать – consolidate

**միավորված** – տես *միացյալ*

**Միավորված ազգերի կազմակերպություն** – Организация Объединенных Наций – United Nations, UN

Միջազգային կազմակերպություն, որն ստեղծվել է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը և ամրապնդմանը, պետությունների միջև համագործակցության զարգացմանը նրպատակառդղված՝ ինքնիշխան պետությունների կամավոր ջանքերի միավորման հիմքերի վրա:

**միավորվածություն** – объединенность – unity

Միասնականության, համախմբվածության վիճակ:

**միավորում** – 1. единение, объединение, соединение, 2. объединение, 3. объединение, корпорация, 4. տես *ընկերակցություն* – 1. integration, unification, 2. major formation, 3. corporation, 4. տես *ընկերակցություն*

1. Միավորելը, միասնականացնելը, համախմբելը: 2. Օպերատիվ (ռազմավարական) մակարդակի ու նախանշանակման զինվորական կազմավորում, որում ընդհանուր հրամանատարության ներքո միավորված են մի քանի զորամիավորում կամ ավելի մանր միավորումներ: 3. Ընդհանուր տնօրինությամբ մի քանի արտադրական ձեռնարկություն ընդգրկող կազմակերպություն:

**միացյալ** – объединенный – joint (USA), combined (NATO)

Միասնականացած, համախումբ կազմած:

միացյալ ենթահրամանատարություն – տես *հրամանատարություն ենթակա միացյալ հրամանատարություն*

միացյալ զորախմբի բանակային քահանա – капеллан объединенной группы войск – joint force chaplain

միացյալ զորքերի խմբի գլխավոր վիրարույժ – главный хирург объединенной группы войск – joint force surgeon

Միացյալ ռազմավարական հրամանատարություն – Объединенное стратегическое командование – Joint Strategic Command

1. ԱՄՆ-ում. ռազմական կառավարման մարմին, որը, ունենալով միավորված հրամանատարության կարգավիճակ, դրանից տարբերվում է պատասխանատվության գոտիով՝ այն համաշխարհային մասշտաբի է: Ստեղծված է օպերատիվ կառավարման ճկունության մեծացման ու կենտրոնացման համար: 2. ՌԴ-ում. 2007 – 2010 թթ. ռազմական վերափոխումների շրջանակներում ըստեղծվել են չորս միավորված ռազմավարական հրամանատարություններ՝ «Արևմուտք», «Արևելք», «Կենտրոն» և «Հյուսիս»:

Միացյալ տրանսպորտային հանձնաժողով – Объединенная транспортная комиссия – Joint Transportation Board

միացյալ ուժերի գործողությունների պլանավորման ուղեցույց – руководство по планированию действий объединенных сил – joint planning document

Միացյալ ուժերի ուսումնական կենտրոն – Учебный центр объединенных сил – Joint Force Training Center

**միացնել** – соединять – ally

**միացված լինել** – быть включенным – set

**միացում** – соединение, присоединение – connection, link

1. Միացնելը, իրար միջև կապ ստեղծելը: 2. Գործարկելը, աշխատանքային բանեկակարգի մեջ դնելը: 3. Ընդհանուր տերմին, որը նշանակում է, որ երկու կետերի միջև կան կապի միջոցներ:

«ՄիԳ» – «МиГ» – MiG

Կործանիչների խորհրդային սերիա:

**միգաշղարշ** – легкий туман, дымка – mist

**միգրանտ** – мигрант – migrant

**միլիցիա** – милиция – militia

**միջադեպ** – инцидент – incident

1. Բախում, անախորժություն: 2. (ռազմ.) կարճատև զինված ընդհարում փոքր թվով զինծառայողների միջև՝ ռազմական տեխնիկայի օգտագործմամբ:

զեկուցման ենթակա միջադեպ – подлежащий сообщению инцидент – reportable incident

խախտում, որի մասին պետք է զեկուցվի վերադաս հրամանատարությանը:

քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական, միջուկային կամ պայթյունային միջադեպ – химический, биологический, радиологический, ядерный или взрывной инцидент – chemical, biological, radiological, nuclear, or high-yield explosives incident

Թունավոր, կենսաբանական, ռադիոակտիվ կամ միջուկային նյութերի կանխամտածված կամ պատահական արտանետումների կամ պայթյունի ճայթման հետևանքով առաջացած արտակարգ իրադրություն:

**միջադիր** – прокладка – insertion

**միջադրում** – внесение – insertion

**Միջազգային առևտրային պալատ** – Международная торговая палата – International Chamber of Commerce

**Միջազգային զինվորական շտաբ** – Международный военный штаб – International Military Staff

**Միջազգային համադասող խումբ** – Международная координационная группа – International Coordination Cell

**Միջազգային համադասող կենտրոն** – Международный координационный центр – International Coordination Center

**Միջազգային քարտուղարություն** – Международный секретариат – International Staff

ՆԱՏՕ-ի մարմին, որն ապահովում է անդամ պետությունների և գործընկերների միջև համաձայնության ձեռք-

բերումն ու որոշումների ընդունումը, պատասխանատու է ՆԱՏՕ-ի կոմիտեների նիստերի ու որոշումների նախապատրաստման և իրագործման համար ևն:

**միջաթումբ** – траверс – traverse

Խրամատներում և ամրաշինություններում հողալիքը՝ թևային կրակից պաշտպանելու համար:

**միջակա** – промежуточный – intermediate

**միջամտություն** – вмешательство – interference

կանխամտածված միջամտություն – преднамеренное вмешательство – purposeful interference

Նախապես ծրագրված գործողություններ, որոնց նպատակն է խաթարել ուրև համակարգի բնականոն գործունեությունը, որևէ գործընթացի, երևույթի զարգացման համար ստեղծել խոչընդոտներ:

միջամտություն ներքին գործերին – տես *ինտերվենցիա*

Առանց այլ պետության համաձայնության՝ ներգործություն նրա ներքին քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ իրադրության վրա:

**միջանկյալ** – տես *միջակա*

**միջանցք** – коридор – corridor

օդային միջանցք – воздушный коридор – air corridor

Օդային տարածության՝ ըստ լայնության, երբեմն նաև՝ բարձրության սահմանափակ գոտի, որը տրամադրվում է օդանավերի թռիչքի համար:

**միջավայր** – среда – environment

1. Բնական պայմաններ, որոնցում տեղի են ունենում բնական երևույթները, պրոցեսները և զարգացումները: 2. Բնական կամ սոցիալական պայմաններ, որոնցում տեղի են ունենում մարդու, մարդկային խմբերի, հասարակության կենսագործունեությունն ու զարգացումը:

անվտանգ միջավայր – տես *իրադրություն՝ անվտանգ իրադրություն*

աշխատանքային միջավայր – рабочая среда – service environment

կենսաբանական միջավայր – биологическая среда – biological environment

միջավայրի նախապատրաստում – подготовка среды – preparation of the environment

շրջակա միջավայր – окружающая среда – environment

շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն – предварительное изучение окружающей среды – environmental baseline survey

Օպերատիվ տեղակայումից առաջ կատարվող շրջակա միջավայրի ուսումնասիրություն:

շրջակա միջավայրի պայմանների հաշվառում – учет условий окружающей среды – environmental considerations

շրջակա ցամաքային միջավայր – окружающая земная среда – terrestrial environment

**միջգերատեսչական** – межведомственный – interagency

**միջին** – средний – intermediate

Միջին և փոքր հեռահարությամբ իրթիւների վերացման պայմանագիր – Договор о ликвидации ракет средней и меньшей дальности, РСМД – Intermediate-Range and Shorter-Range Nuclear Forces Treaty, INF

**միջնաբերդ** – цитадель – 1. citadel, 2. castle

1. Քաղաքի կամ բերդի առավել ամրացված մասը, որը հարմարեցված է ինքնուրույն պաշտպանության համար: 2. Պատվար, նեցուկ, ամրություն (որևէ բնագավառում):

**միջնաշխարհ** – внутренняя территория страны – inland

Երկրի ներքին մասը, ծովից կամ սահմանից հեռու գտնվող տարածքը:

**միջնորդ** – посредник – 1. facilitator (in negotiations), 2. controller, umpire (exercises)

1. Անձ, կազմակերպություն, պետություն ևն, որը նպաստում է որևէ օբյեկտի (անձ, կազմակերպություն, պետություն ևն) միջև կապերի՝ հաղորդակցման հաստատմանը, կողմերի հաշտեցմանը, որևէ հարցում համաձայնության ձեռքբերմանը: 2. Ջորախաղերի (երկկողմ գորավարժությունների) հրամանատարության ներկայացուցիչը, որը գնահատում է կողմերի գործողությունները (տես նաև *միջնորդ՝ գորային միջնորդ*):

անաչառ միջնորդ – տես *միջնորդ՝ անկողմնակալ միջնորդ*

անկողմնակալ միջնորդ – беспристрастный посредник – honest broker

Բանակցություններին մասնակցող երրորդ կողմ, որը հանդես է գալիս որպես բանակցությունների սկսման հիմք ծառայող որոշ նախնական առաջարկություններով, ինչը նրա մասնակցությունը տարբերում է հասարակ նպաստումից կամ «բարի ծառայություններից», սակայն նա չունի կողմերին լուծում պարտադրելու իրավունք: Նման միջնորդության օրինակ է Օ. Բիսմարկի մասնակցությունը 1878 թ. ռուս-թուրքական բանակցություններին, որոնցում իր դերը Բիսմարկն արտահայտել է որպես «Ehrlicher Makler»-ի (անաչառ միջնորդ) պարտականություն:

գորային միջնորդ – войсковой посредник – umpire, control organization officer

Երկկողմ գորային կամ հրամանատարաշտաբային գորավարժություններում չեզոք անձ, որը նշանակվում է մարտական գործողությունների խաղարկույնը ղեկավարելու և գորավարժությանը մասնակցող ստորաբաժանումների (գորամասերի, գորամիավորումների) հրամանատարների ու շտաբների սպաների գործողությունները գնահատելու համար:

գորավարժությունում միջնորդների խումբ – группа посредников на учениях – exercise control group, umpire control organization

միջնորդ դատավոր – տես *իրավաբար*

միջնորդի կարգավիճակ – статус посредника – intermediary status

**միջնորդել** – տես *պաշտպանություն՝ պաշտպանության տակ առնել*

**միջնորդություն** – посредничество – mediation

Գաղտնիության պայմաններում իրագործվող կամավոր գործընթաց, որի ժամանակ հատուկ պատրաստում ստացած և չեզոքություն պահպանող անձը (միջնորդ) նպաստում է կողմերին, որ նրանք բանակցությունների միջոցով ձեռք բերեն վեճի կամ տարածայնության վերաբերյալ համաձայնություն, ընդ որում, այդ կողմերը պահպանում են որոշման ընդունման և վեճի լուծման պայմանների նկատմամբ իրենց կատարյալ վերահսկողությունը:

**միջոց** – 1. средство, 2. мера – 1. asset, 2. measure, 3. means, implement

1. Որևէ բան, որի շնորհիվ՝ օգնությամբ տեղի է ունենում (կատարվում) մեկ այլ բան: 2. Միջոցառում, որևէ բան կատարելուն կամ կանխելուն ուղղված գործողությունների համախումբ, եղանակ:

առբերման միջոց – средство доставки – 1. means of delivery, 2. vector

արգելական միջոց – мера воспреещения – denial measure

Տարածքը, զորքը կամ շինություններն օգտագործելու հնարավորությունից հակառակորդին զրկելը:

զանգվածային լրատվության միջոց – средство массовой информации, СМИ – mass media, media

թարախապալարային միջոց – нарывное средство – blister

հաշվետախտակային միջոց – տես *հաստիքային միջոց*

հաստիքային միջոց – табельное средство, штатное средство – organic means, organic equipment

հեռահաղորդակցման միջոց – телекоммуникационное средство – telecommunication means

հետախուզական միջոց – տես *ուղեցուցորդ*



ճառագայթաբանական ներգործության միջոց – средство радиологического воздействия – radiological exposure device

մեծանշանակ օդային փոխադրման միջոց – տես տրանսպորտ՝ մեծանշանակ օդային տրանսպորտ

պաշտպանական բնագիծն անցած օդային հարձակման միջոց – տես նշանակետ՝ պաշտպանության բնագիծը հաղթահարած օդային նշանակետ

պաշտպանական միջոց – защитное средство – shield

պատժիչ միջոց – карательная мера – reprisal

ռադիոէլեկտրոնային միջոց – радиоэлектронное средство, РЭС – radioelectronic device

Ռադիոէլեկտրոնիկայում օգտագործվող սարք:

վախեցման միջոց – средство устрашения – deterrent

տեղափոխման միջոց – средство передвижения – vehicle

**ներդրում** – 1. вклад, 2. инвестиция, 3. внедрение – 1. contribution, 2. investment, 3. introduction

ներդրումներ անվտանգության ապահովման ոլորտում – инвестиции в обеспечение безопасности – security investment

ներդրումներ պաշտպանության մեջ – инвестиции в оборону – defense investment

**ներթափանցիչ** – пенетратор – penetrator  
Տեխնիկական սարք (սովորաբար հրթիռային շարժիչով) Երկրագնդի կեղևի մեջ ներթափանցելու համար:

**ներթափանցում** – 1. տես *թափանցում*, 2. просачивание – 1. տես *թափանցում*, 2. infiltration

մասնակի ներթափանցում – частичное проникновение – partial penetration

**ներթողում** – выпуск – admission

**ներխուժել** – вламываться, вриваться – break in

**ներխուժում** – вторжение – invasion

1. Ցամաքով, օդով կամ ծովով մի կամ մի քանի պետությունների ԶՈՒ-ի (ԶՈՒ-երի) մուտքը մեկ այլ պետության տարածք՝ առանց նրա կառավարության համաձայնության, ագրեսիայի ձեռնարկում: 2. Ռազմածովային դեսանտային օպերացիայի տարատեսակ՝ նպատակաուղղված ռազմական գործողությունների տեղափոխմանը հակառակորդի տարածք:

բռնի ներխուժում – насильственное вторжение – forcible entry

ներխուժում պետության օդային տարածք – вторжение в воздушное пространство, нарушение воздушных границ – violation of air space

Չթույլատրված մուտք միջազգային նորմերով տվյալ պետությանը պատկանող օդային տարածություն:

ներխուժում տարածքային ջրեր – вторжение в территориальные воды, нарушение границ территориальных вод – violation of territorial waters

Չթույլատրված ներխուժում միջազգային իրավունքի նորմերով տվյալ երկրին պատկանող ծովային գոտի:

**ներկ** – краска – paint, color

**ներկալել** – интернировать – intern

**ներկալում** – интернирование – internment

1. Որոշակի կարգախմբերի արտասահմանցիների հարկադրական տեղափոխում որևէ վայր՝ դրանից հեռանալու արգելմամբ. մասնավորապես՝ պատերազմող պետությունները կիրառում են հակառակ կողմի ռազմագերիների կամ այլ քաղաքացիների, չեզոք պետությունները՝ պատերազմող կողմերի զինծառայողների նկատմամբ: 2. Որոշ պետությունների ներքին իրավունքում. ազատության սահմանափակում, որը կապված է քրեական պատժման կամ քրեական դատավարության խնդիրների հետ (օրինակ՝ կատարվում է քաղաքական հիմունքներով): 3. Որոշ պետություններում. սոցիալապես վտանգավոր անձնավորությունների նախակամխիչ ազատագրվում:

**ներկայացուցիչ** – представитель – deputy

**ներկայացուցչություն** – представитель-ство, миссия – mission, representation

արտասահմանում դիվանագիտական ներկայացուցչությանը կից անվտանգության ծառայության տարածաշրջանային բաժնի պետ (ԱՄՆ) – начальник регионального отдела службы безопасности при дипломатическом представительстве за рубежом (США) – regional security officer

դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար – глава дипломатической миссии – principal officer

ՄԱԿ-ի ռազմական դիտորդների ներկայացուցչություն – миссия военных наблюдателей ООН – UN military observer mission

Համաշխարհային ընկերակցության ներկայացուցչություններ, որոնք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ ստեղծվում են միջազգային հակամարտությունների շրջաններում՝ ռազմաքաղաքական և օպերատիվ իրադրության զարգացումը, հրադադարի կամ զինադադարի համաձայնագրերի կատարումը վերահսկելու, ինչպես նաև խաղաղության դեմ սպառնալիքների կանխման կամ վերացման ուղղությամբ միջոցների պատեհաժամ ձեռնարկման համար օբյեկտիվ տեղեկույթ ստանալու նպատակով:

ներկայացուցչության ղեկավար – глава миссии – head of mission, chief of mission

ռազմադիվանագիտական ներկայացուցչություն – военно-дипломатическое представительство – military-diplomatic mission

**ներկայություն** – присутствие – presence

միջազգային քաղաքացիական ներկայություն – международное гражданское присутствие – international civil presence

Օգտագործվել է ՄԱԿ-ի ԱԽ-ի՝ Կոսովոյի վերաբերյալ բանաձևում և նշանակում է միջազգային կառույցների ոչ ռազմական օժանդակությունը ժողովրդավարական պետութենաշինությանը և հակամարտության հետևանքների վերացմանը:

ռազմական ներկայություն – военное присутствие – military presence

**ներկաքողարկում** – камуфляж – camouflage

Ֆոնի առավել տարածված բժերին գույնով և վառվռունությամբ նման գանազան բժերի ձևով բազմերանգ գունավորում:

**ներկաքողարկումային** – камуфляжный – camouflage, disruptive

Ներկաքողարկմանը վերաբերող՝ հատուկ:

ներկաքողարկումային գործվածք – камуфляжная ткань – disruptive pattern material

ներկաքողարկումային համազգեստ – камуфляжная форма – battledress utilities

ներկաքողարկումային նախշանկար – камуфляжная раскраска – disruptive pattern

**ներմուծում** – 1. импорт, 2. внедрение – 1. import, 2. implanting

1. Արտասահմանից ապրանքների ներկրում երկիր՝ այնտեղ վաճառելու կամ օգտագործելու նպատակով: 2. Ներսմտցնել՝ մուծել, ոչ հարազատ կամ տվյալ վայրի համար անսովոր մի բան (սովորույթ, նորաձևություն, գաղափար, օբյեկտ ևն) յուրացնել՝ դարձնել համակարգի տարր:

**ներռազմաթատերաբեմային** – внутри театра военных действий – intratheater

ՌԳԹ սահմաններում գտնվող, ՌԳԹ սահմաններից դուրս չեկող:

**ներս մտցնելը** – տես *մտցնելը*

**ներսփռանք** – инфильтрат – infiltration

**ներտարածաշրջանային** – внутререгиональный – intraregional

**ներուժ** – потенциал – potential

Որևէ բնագավառում գոյություն ունեցող միջոցների, կարողությունների համախումբ:

գիտական ներուժ – научный потенциал – scientific potential

կադրային ներուժ – кадровый потенциал – personnel potential, staff capacity

հոգևոր ներուժ – духовный потенциал – spiritual potential

մարտական ներուժ – боевой потенциал – combat potential

մտավոր ներուժ – интеллектуальный потенциал – intellectual potential

ռազմական ներուժ – военный потенциал – defense capabilities

սկզբնական օպերատիվ ներուժ – начальный оперативный потенциал – initial operational capability

Ստեղծման ու զարգացման (*Production and Deployment*) փուլի այն կետը, երբ համակարգը ձեռք է բերում օգտագործողի հաստատուն կարիքների բավարարման համար անհրաժեշտ օպերացիոն կարողությունների նվազագույն արժեքը:

վարչաթիկունքային ներուժ – административно-тыловой потенциал – administrative capacity

տնտեսական ներուժ – экономический потенциал, хозяйственный потенциал – economic potential

Էկոնոմիկայի, նրա ճյուղերի, ձեռնարկությունների, տնտեսությունների համախումբ կարողությունը՝ վարելու արտադրատնտեսական գործունեություն, թողարկելու արտադրանք, ապրանքներ, ծառայություններ, բավարարելու բնակչության պահանջները, հասարակական պահանջները, ապահովելու արտադրության և սպառման զարգացումը: Պայմանավորված է պետության բնական ռեսուրսներով, արտադրամիջոցներով, աշխատանքային ու գիտատեխնիկական ներուժով, կուտակված ազգային հարստությամբ:

քաղաքական ներուժ – политический потенциал – political potential

**ներուժային** – потенциальный – potential

Ներուժին հատուկ, վերաբերող:

**ներքին** – внутренний – internal

**ներքնոլորտ** – тропосфера – troposphere  
Մթնոլորտի ստորին շերտը, որի բարձրությունը բևեռներում 8–10 կմ է,

բարեխառն գոտում՝ 11–12 կմ, հասարակածում՝ 16–18 կմ:

**նեցուկ** – 1. տես *հենարան*, 2. տես *հենակ*

երկճղի նեցուկ – տես *հենակ՝ երկճղի հենակ*

նեցուկ տալ – подпирать – revet

**նիգ** – տես *փականք*

**նիշ** – знак – character

**նիշք** – տես *ֆայլ*

**նիտրոգլիցերին** – нитроглицерин – nitroglycerine

**նկատելիություն** – заметность, видность – visibility

**«Նկատված չէ՛»** – «He замечен!» – “Lost”  
Հրետանում և ծովից կրակային աջակցության ժամանակ՝ ուղղորդման ճշգրտություն, որի դեպքում կրակը ճշտողը հայտնում է, որ արձակված արկը չի երևում:

**նկարագրական անվանում** – описательное наименование – descriptive name

**նմանակ** – аналог – analog

Մի բան, որը համապատասխանում է, նման է այլ առարկայի, երևույթի, հասկացության:

**նմանակում** – аналогизация – analogization

1. Կերպավորությունների միջոցով անցում թվային համակարգերից նմանակային համակարգի: 2. Երկու և ավելի առարկաների, երևույթների, հասկացությունների նմանեցում միմյանց՝ ընդհանուր հատկությունների, գծերի ի հայտ բերմամբ:

**նմանարկակայունություն** – имитостойкость – authentication

Համակարգի հատկություն, որը հակառակորդին զրկում է այդ համակարգի մեջ ապատեղեկույթ մտցնելու կամ հաղորդվող հաղորդագրության իմաստը դրանով խեղաթյուրելու հնարավորությունից:



**նմանարկիչ** – 1. имитатор, 2. имитационный – 1. imitator, simulator, 2. imitative

1. Որևէ բան հնարավորինս ճշգրտորեն վերարտադրող մարդ կամ սարք:  
2. Նման գործողությանը (գործունեությանը) հատուկ, վերաբերող:

**նմանարկում** – имитация – imitation, simulation

1. Որևէ բանի հնարավորինս ճշգրիտ վերարտադրություն: 2. Կեղծված իր:

**նմուշ** – 1. образец, модель, шаблон, 2. проба – 1. pattern, 2. trial

**նյութ** – 1. вещество, 2. материя, 3. материал, 4. տես *տվյալների համախումբ* – 1. substance, 2. substance, matter, 3. material, 4. տես *տվյալների համախումբ*

արցունքաբեր նյութ – слезоточивое вещество – tear agent

բաղադրյալ նյութ – տես *բաղադրանյութ*

գրգռիչ թունավոր նյութ – отравляющее вещество раздражающего действия – irritant

զանգվածային անկարգությունների ճնշման համար կիրառվող քիմիական նյութեր – տես *նյութ՝ ոստիկանական նյութեր*

զանգվածային անկարգությունների ճնշման միջոցներ – средства подавления массовых беспорядков – riot control means

էներգիական նյութ – энергетический материал – energetic material

ընդհանուր թունավորիչ գործողությամբ թունավոր նյութ – отравляющее вещество общеядовитого действия – blood agent

Մարմինը թթվածնից զրկող քիմիական նյութ:

թունավոր կենսաբանական արդյունաբերական նյութ – токсичное промышленное биологическое вещество – toxic industrial biological

Արդյունաբերական, բժշկական կամ առևտրային նպատակներով արտադրվող, օգտագործվող, տեղափոխվող կամ պահեստավորվող կենսաբանական նյութ, որը վարակման կամ թունավորման վտանգ է ներկայացնում:

թունավոր նյութ – 1. տես *թույն*, 2. отравляющее вещество – 1. տես *թույն*, 2. toxic agent

թունավոր նյութի բաժնաչափ – доза отравляющего вещества – chemical dose

թունավոր նյութով մարտագլխիկ – боеголовка с отравляющим веществом – chemical warhead

թունավոր ռադիոակտիվ արդյունաբերական նյութ – токсичное промышленное радиоактивное вещество – toxic industrial radiological

Արդյունաբերական, բժշկական կամ առևտրային նպատակներով արտադրվող, օգտագործվող, տեղափոխվող կամ պահեստավորվող ռադիոակտիվ նյութ:

թունավոր քիմիական արդյունաբերական նյութ – токсичное промышленное химическое вещество – toxic industrial chemical

Արդյունաբերական կամ հետազոտական նպատակներով մշակվող և արտադրվող քիմիական նյութ, որը կարող է վտանգավոր լինել մարդու առողջության համար:

իներտ պայթուցիկ նյութ – տես *պայթուցիկ՝ իներտ պայթուցիկ*

ինքնաշեն պայթուցիկ նյութ – самодельное взрывчатое вещество – homemade explosive

կայուն թունավոր նյութ – стойкое отравляющее вещество, стойкое средство – persistent agent

հեղձուցիչ թունավոր նյութ – отравляющее вещество удушающего действия – choking agent

հոգեազդու նյութ – психотропное вещество – psychotropic substance

հոգեմետ նյութ – տես *նյութ՝ հոգեազդու նյութ*

մաշկաթարախապալարային գործողությամբ մարտական թունավոր նյութ – боевое вещество кожно-нарывного действия – blister agent, vesicant agent

Քիմիական նյութ, որն այրում է մաշկը և վրան բշտիկներ առաջացնում:



մարտական թունավոր նյութ – боевое отравляющее вещество – chemical agent  
Քիմիական նյութ, որը նախանշանակված է հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու կամ ժամանակավորապես շարքից հանելու համար:

նետողական պայթուցիկ նյութ – метальное взрывчатое вещество – propellant

նյարդակաթվածահարույց անկայուն թունավոր նյութ – неустойчивое отравляющее вещество нервно-паралитического действия – nonpersistent nerve agent, G-agent

Գերմանիայում 1936–1949 թթ. համադրմամբ ստացված նյարդակաթվածահարական ազդեցություն գործող անկայուն թունավոր նյութերի դաս, որին պատկանում են տաբունը (gA), գարիը (gB), զոմանը (gD) և այլն:

նյարդակաթվածահարույց թունավոր նյութ – отравляющее вещество нервно-паралитического действия – nerve agent

նյարդակաթվածահարույց թունավոր նյութերի հայտնաբերիչ-ազդանշանիչ – распознаватель-сигнализатор ОБ нервно-паралитического действия – nerve agent immobilized enzyme alarm and detector, NAIAD

նյարդակաթվածահարույց մարտական թունավոր նյութ – боевое отравляющее вещество нервно-паралитического действия – V-agent

նստիկանական նյութեր – химические вещества, применяемые для подавления массовых беспорядков – riot control agent  
Քիմիական նյութ, որը ներառված չէ արգելված քիմիական նյութերի ցանկում, սակայն առաջ է բերում կտրուկ նյարդաբանական հակազդում՝ ընդհուպ մինչև տեղաշարժվելու կարողության կրուստը, և կիրառվում է զանգվածային անկարգությունների ճնշման համար:

պայթուցիկ նյութ – տես *պայթուցիկ*

ռադիոակտիվ նյութեր – радиоактивные вещества – radioactive substances

ռադիոակտիվ նյութերի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիա – предель-

но допустимая концентрация радиоактивных веществ, максимально допустимая концентрация – radioactivity concentration guide, maximum permissible concentration

Միջավայրի (օդ, ջուր ևն) միավոր ծավալում ռադիոակտիվ իզոտոպների այն առավել մեծ գումարային քանակությունը, որի դեպքում օդը կամ ջուրը կարելի է մշտապես օգտագործել:

ռադիոկլանիչ կառուցվածքային նյութ – радиопоглощающий конструкционный материал – radar-absorbent structural material

Ինքնաթիռաշինության մեջ օգտագործվող նյութ, որը կլանում է ռադիոալիքները և ինքնաթիռը դարձնում աննկատելի:

ռադիոկլանիչ նյութ – радиопоглощающий материал – radar-absorbent material

Նյութ, որը կլանում է ռադիոալիքները:

ռադիոկլանիչ նյութեր – радиопоглощающие материалы – radar absorbent material

վերահսկվող շրջանառությամբ նյութ – вещество, контролируемое в обращении – controlled substance

փսխեցուցիչ թունավոր նյութ – рвотное отравляющее вещество – vomiting agent

Նյութ, որն առաջ է բերում փսխումներ:

ֆուգասային պայթուցիկ նյութ – бомба или реактивный снаряд с бризантом – high explosive

**նյութական** – материальный – physical

նյութական համակշռում – տես *նյութական` նյութական փոխհատուցում*

նյութական փոխհատուցում – материальное возмещение, материальная компенсация – solatium

Որևէ վնաս` կորուստ ծածկելու` համակշռելու համար հատկացվող նյութական միջոց:

**ննջապարկ** – спальный мешок – sleeping bag, zed bag

**նշագիր** – обозначение – sign

մարտավարական պայմանական նշագիր – тактическое условное обозначение – military symbol

**նշագրում** – обозначение – designation, notation

Պայմանական նշանների համակարգ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է որևէ առարկայի, երևույթի, գործընթացի, հասկացության՝ նկարագրությունը պարզեցնելու, համառոտելու և ավելի ընկալելի դարձնելու համար:

օրերի և ժամերի նշագրում – обозначение дней и часов – designation of days and hours

Պենտագոնում և ՆԱՏՕ-ում ընդունված են օրերի և ժամերի հետևյալ նշագրումները. E – ՆԱՏՕ-ի զորավարություն սկսելու օր, M – զորահավաքն սկսելու օր, H – օպերացիան սկսելու կոնկրետ ժամ են:

**նշահատում** – засечка – plot

Նշանակետի, հենակետի, տեղանքի կետի, արկի պայթյունի և այլ կորդինատների որոշում մեկ կամ մի քանի կետերից հաստված ուղղությունների և դեպի նշահատվող կետ ուղղության միջև անկյունների կամ միջև այդ կետը հեռավորության և անկյան չափմամբ, ինչն արվում է հետախուզության գործիքներով (միջոցներով):

**նշան** – знак, символ – sign

ապաքողարկիչ նշաններ – демаскирующие признаки – signature

լողուն նշան – плавучий знак – floating mark

Նավագնացային երթևեկության նշաններ, որոնք հրահանգում են անվտանգ լողարկման ուղղությունները կամ տարաշարժը՝ մնալով ջրի մակերևույթին:

կորդինատային նշան – координатная метка – collimating mark, fiducial mark

նշան բռնել – прицеливаться – aim, acquire

սահմանագծային նշան – межевой знак – landmark

**նշանաբան** – 1. девиз, 2. лозунг, 3. пароль – 1. motto, slogan, 2. slogan, 3. password, countersign

Գաղտնի բառ՝ պահակային ծառայության ժամանակ լիազորություններում համոզվելու (հաստատելու) համար:

**նշանաբաշխում** – целераспределение – target allocation

Նշանակետերի խմբից առանձին նշանակետերի հատկացում յուրաքանչյուր զենքի համակարգի՝ զենքի կիրառումը համադասելու և խոցման արդյունավետությունը մեծացնելու նպատակով:

**նշանաբառ** – տես *նշանաբան 3*

**նշանաբերում** – տես *նշանառում՝ առաջանցիկ նշանառում*

**նշանաբռնել** – տես *նշան՝ նշան բռնել*

**նշանազատում** – целеопределение – targeting, target indication

Նշանակետի ընտրություն և դրան արձագանքման միջոցների որոշում՝ օպերատիվ պահանջների, հնարավորությունների և սահմանափակումների հաշվառմամբ:

«Նշանաթիվն ավելացնել» – «Трубка больше!» – “Up!”

Հրետանային տերմին, որով կրակը ճշգրտողը ազդանշան է տալիս, որ նշանառությունը պետք է տեղափոխել դեպի վեր:

**նշանախոցում** – попадание, поражение – impact, hit

Օբյեկտի (նշանակետի, կենդանի ուժի) վրա տարբեր տեսակի զենքերով (մարտական տեխնիկայով) ներգործության արդյունքը:

նշանախոցման կետ – տես *հանդիպման կետ*

նշանախոցման հավանականություն – տես *նշանակետ՝ նշանակետի խոցման հավանականություն*

նշանախոցման միջին կետ – средняя точка попадания – mean point of impact

**նշանակել** – назначить (на должность) – appoint

**նշանակետ** – цель – aim, target

1. Հակառակորդի օբյեկտ, որը նախատեսվում է խոցել: 2. Անորոշ պատկանելության օբյեկտ, որի իսկությունը

(յուրային-թշնամական) պետք է պարզել:

«...այսինչ նշանակետի կրակակոծումն ավարտված է» – «...по цели... стрельбу закончил(а)» – end of mission

Հրետանիով կամ ռազմածովային հրետանային աջակցության ժամանակ նշանակետի հրետակոծությունը դադարեցնելու մասին զեկույց:

անշարժ նշանակետի կրակակոծման տեվողություն – время обстрела неподвижной цели – dwell time

Այն ժամանակաընթացքը, երբ ակնկալվում է, որ թիրախը կմնա նույն տեղում:

անսպասելի նշանակետ – տես *նշանակետ՝ չպլանավորված նշանակետ*

արագընթաց նշանակետ – высокоскоростная цель – high-speed target

առանձնակի կարևորությամբ նշանակետ – особо важная цель – high-payoff target

բոլոր նշանակետերը խոցել – տես *կրակակոծել մեկ առ մեկ*

դիտվող նշանակետ – наблюдаемая цель, наблюдаемая трасса – active track

ըստ պահանջի խոցվող պլանային նշանակետ – плановая цель, поражаемая по заявке – on-call target

լրացուցիչ նշանակետ – дополнительная цель, дополнительная мишень – supplementary target

կեղծ նշանակետ – ложная цель – decoy  
Արհեստական նշանակետ, որը ինքնակառավարվող հրթիռը կամ ՌՏԿ-ով ընդունվող ազդանշանները շեղում է իրական նշանակետից:

կետային նշանակետ – տես *նշանակետ՝ միակի նշանակետ*

«Համարել նշանակետ» – «Считать целью!» – “Record as target”

Տվյալ օբյեկտը որպես նշանակետ դիտելու և հետազայում համապատասխան գործողություններ կատարելու հրաման:

ծեռնու նշանակետ – выгодная цель – target of opportunity, opportunity target

Հանկարծակի հայտնաբերված և խոցման տեսակետից հարմար նշանակետ:

միակի նշանակետ – одиночная цель, точечная цель – point target

Մեկ առանձին, ոչ խմբովի նշանակետ:

նշանակետերի ընտրագատում – селекция целей – target discrimination

Խանգարումների ֆոնի վրա նշանակետից ստացվող ազդանշանի առանձնացում:

նշանակետերի լուսավորում մարտադաշտում – освещение целей на поле боя – battlefield illumination

նշանակետերի խումբ – группа целей – group of targets

Երկու կամ ավելի նշանակետեր, որոնց վրա կրակը պետք է վարվի միաժամանակ:

նշանակետերի կրակային տարաբաշխում – огневое распределение целей – centralized control

ՀՕՊ-ում. կառավարման եղանակ, որի դեպքում վերադաս հրամանատարությունը կատարում է կրակային ստորաբաժանումների համար նշանակետերի բաշխում՝ նշանացուցում:

նշանակետերի համախումբ – совокупность целей – target complex

Նշանակետերի միախմբերի՝ աշխարհագրորեն կապված շարք:

նշանակետերի համակարգ – система целей – target system

1. Աշխարհագրորեն իրար մոտ գտնվող և գործառնություններով փոխկապված նշանակետերի խումբ: 2. Իրար հետ այն աստիճանի փոխկապված նշանակետերի խումբ, որ դրանք հնարավոր է ոչնչացնել մեկ առանձին գործողությամբ:

նշանակետերի հետախուզում – разведка целей – target development, target intelligence

նշանակետերի միախումբ – сосредоточение целей – target concentration

Աշխարհագրորեն իրար մոտ գտնվող նշանակետերի խմբավորում:

նշանակետերի շարք – ряд целей – series of targets

Հրետանային տերմին. նշանակետերի որոշակի թվաքանակ և/կամ նշանակետերի խումբ, որը պլանավորված է կրակակոծման համար որպես աջակցություն տարաշարժի փուլում:

նշանակետերի սահմանափակ ցանկ – перечень целей с ограничениями – restricted target list

նշանակետերի վերաբերյալ հետախուզական տվյալներ – разведывательные данные о целях – target intelligence

նշանակետերի վերաբերյալ տվյալների փաթեթ – папка с документацией о целях – target folder

Փաթեթ՝ էլեկտրոնային կամ թղթապանակ, որը պարունակում է նշանակետերին վերաբերող հետախուզական և այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են դրանց դեմ գործողություններ պլանավորելու և ձեռնարկելու համար:

նշանակետերի ցայտունություն – контрастность целей – target contrast

Տեղանքի, ջրի, շրջակա առարկաների ֆոնի վրա նշանակետերի տարբերակելիության աստիճանը, որը հնարավորություն է տալիս տեսողական եղանակով կամ ինֆրակարմիր սարքերի միջոցով հայտնաբերելու և որոշարկելու նշանակետերը:

նշանակետերի ցանկ – перечень целей – schedule of targets

Խոցման համար նախանշանակված նշանակետերի հաստատված ցուցակ:

նշանակետերի ցուցակ – список целей – target list

Հայտնաբերված կամ հնարավոր նշանակետերի աղյուսակ, որը որոշ օդակ հաստատել է տեղեկատվության և կրակային աջակցության պլանավորման նպատակներով:

«Նշանակետը գրանցված է» – «Цель зафиксирована» – “Recorded!”

Պատասխան՝ «Համարել նշանակետ» հրամանին:

«Նշանակետը կորած է» – «Цель потеряна» – “Contact lost!”

նշանակետը ճանկառել – захватывать цель в вилку – straddle

Նշանակետի ուղղությամբ կրակել այնպես, որ առաջին արկը թռչի փոքր-ինչ հեռու (պայթի նշանակետի հետևում), իսկ երկրորդը՝ փոքր-ինչ մոտ (պայթի նշանակետի առջևում), երրորդը՝ խոցի նշանակետը:

նշանակետի առաջանցիկ գիծ – упрямая линия цели – line of future position

Ուղիղ գիծ, որը միացնում է հրանոթը (արձակման կայանքը) և հանդիպման առաջանցիկ կետը (հաշվարկային կետ, որում պետք է տեղի ունենա արկի (հրթիռի) և շարժվող նշանակետի հանդիպումը):

նշանակետի բաղադրատարր – компонент цели – target component

Նշանակետերի համակարգից մի շարք նշանակետեր, որոնք կատարում են նման գործառնություններ:

նշանակետի բռնում ուղեկցման նպատակով – захват цели на сопровождение – target acquisition

նշանակետի գիծ – линия цели – line of site

Ուղիղ գիծ, որը միացնում է փողից արկի դուրս գալու կետը և նշանակետը:

նշանակետի գտնվելու շրջան – район нахождения цели – objective area

նշանակետի գատորոշում – распознавание цели – target recognition

Օդային (տիեզերական) նշանակետի տիպի ու պետական պատկանելության պարզում:

նշանակետի ընդունման (փոխանցման) գոտի – полоса приема (передачи) цели – zone of transmission of radar target with one another

ՀՕՊ-ի հարևան զորամիավորումների կցակետով անցնող գոտի, որի վերևում օդային նշանակետի թռիչքի ժամանակ կատարվում է մի զորամիավորման (զորամասի) կողմից դրա շարժման պարամետրների մասին տեղեկույթի փոխանցում և հարևանի կողմից իր ռադիոտեղորոշիչ միջոցներով նշանակետի ուղեկցման պատասխանատվության ստանձնում:

նշանակետի թռիչքի հետագիծ – траектория полета цели – target flight trajectory  
Անընդհատ գիծ, որը նկարագրում է տարածության մեջ նշանակետի զանգվածների կենտրոնի շարժումը կոորդինատների որոշակի համակարգում:

նշանակետի խորագնում – зондаж цели – target probing

նշանակետի խոցման հավանականություն – вероятность поражения цели, вероятность попадания (в цель) – kill probability

նշանակետի խոցում – поражение цели – damage, kill

Նշանակետի վրա խոցման միջոցների ներգործություն, որի հետևանքով նշանակետը կորցնում է նորմալ կերպով գործելու (մարտական խնդիրը կատարելու) ունակությունը:

նշանակետի խոցում ռադիոտեղորոշումային կայանի կիրառմամբ – поражение цели с использованием РЛС – radar fire

նշանակետի կալնում – захват цели – lock-on, target lock-on

Մեծ թվով ռադիոտեղորոշումային համակարգերի հատկությունը՝ ավտոմատ կերպով հետևելու ընտրված նշանակետին:

նշանակետի համալիր բնութագրիչ – сигнатура цели – target signature

նշանակետի համար – номер цели – target number

Համար, որը տրված է (կրակի կառավարման ստորաբաժանումը սովել է) տվյալ նշանակետին:

նշանակետի հայտնաբերում – обнаружение цели, засечка цели – target detection

նշանակետի որոշարկում – опознавание цели – identification

նշանակետի մասին տվյալների քարտ – карточка данных о цели – target information sheet

նշանակետի նկարագրություն – описание цели – description of target, target description

նշանակետի շրջանի կոորդինատային ցանց – координатная сетка района цели – target grid

նշանակետի ոչնչացում – уничтожение цели, уничтожение объекта – target destruction

նշանակետի ռադիոպատկեր – радиоизображение цели – target's radio image

նշանակետի ռադիոտեղորոշումային հայտնաբերում – радиолокационное обнаружение цели – contact

Նշանակետի հայտնաբերում ռադիոտեղորոշումային սարքերով:

նշանակետի ռակուրս – ракурс цели – target aspect angle, target aspect ratio

նշանակետի վերլուծություն – анализ цели – target analysis

նշանակետի տեղադրություն – местоположение цели – target location

նշանակետի ցուցանշում – индикация цели – target indication

նշանակետի օդալուսանկարման նշանակված ժամանակը – назначенное время аэрофотографирования цели – time on target

նշանակետին հարված հասցնելու նշանակված ժամանակը – назначенное время нанесения удара – time on target

շարժվող նշանակետ – движущаяся цель – maneuvering target

շտապ ոչնչացման ենթակա նշանակետ – տես թիրախ՝ առաջնահերթ թիրախ

չպլանավորված նշանակետ – внеплановая цель, внезапная цель – target of opportunity, opportunity target, unplanned target, unanticipated target

Նշանակետ, որը նախապես չի ընդգրկվել խոցման ենթակա նշանակետերի ցանկում, որովհետև նոր՝ հանկարծակի է հայտնվել, կամ որի ոչնչացման անհրաժեշտությունը պարզ է դարձել գործողությունների ընթացքում:

պլանային նշանակետ – плановая цель – planned target

պլանավորված նշանակետ – запланированная цель, назначенная цель – scheduled target

Պլանավորված նշանակետ՝ թիրախ, որի վրա կրակի բացումը կամ ազդե-

ցության որևէ այլ գործողության ձեռնարկումը ծրագրված է սկսել որոշակի ժամի:

վերգետնյա նշանակետ – надземная цель – above-ground target

վերջրյա նշանակետ – надводная цель – above-water goal

վրագետնյա նշանակետ – наземная цель – ground target

վրաջրյա նշանակետ – надводная цель – surface target, emergent goal

ցածրաթռչ նշանակետ – низколетящая цель – low-flying target

փորձնական հերթագրոհ նշանակետի վրա – тренировочный заход на цель, холостой заход на цель – dry run

օդային նշանակետ – воздушная цель – aerial target

օդային նշանակետի ուղեդիտում – про-водка воздушной цели – air target tracking

1. Օդային նշանակետի թռիչքի անընդ-հատ ռադիոտեղորոշումային դիտում:

2. Ըստ տարբեր տեսակների հետա-խուզության (ռադիոտեղորոշումային ևն) տվյալների՝ կառավարման կետե-րի պլանշետներում (քարտեզներում, ցուցասարքերում) օդային նշանակետի թռիչքի հետևողական արտապատկե-րում:

**նշանակում** – 1. назначение, 2. տես նշա-գրում, 3. տես նշանակում՝ նշանակում պաշտոնի – 1. appointment, assignment, designation, 2. տես նշագրում, 3. տես նշանակում՝ նշանակում պաշտոնի

նշանակում պաշտոնի – назначение на должность – appointment, assignment

նշանակում պաշտոնի՝ տեղափոխմամբ (առաջխաղացմամբ) – назначение на должность с переводом (продвижением) – posting

**նշանահատիկ** – мушка – sight blade  
Հրագետնի նշանոցի ուղղանկյունաձև, օ-ղակաձև կամ եռանկյունաձև մաս, որը տեղադրվում է փողի վրա և ծառայում է նշանառման նպատակին:

**նշանահեռվություն** – расстояние до це-ли – range

Նշանակետի (թիրախի) դիրքի հեռա-վորությունը դիտակետից (հաշվարկ-ման կետից):

**նշանառել** – нацеливаться, наводить (ра-кеты на что-л.) – home in

**նշանառու** – наводчик – gunner, gunlayer  
Հրանոթը նշանակետին ուղղող զին-վոր:

նշանառու տանկիստ – танкист-наводчик, танкист-стрелок – tank gunner

**նշանառություն** – прицеливание – aim, aiming, sighting

Տարածության մեջ հրագետնի փողին որոշակի դիրքի (ուղղահայաց և հորի-զոնական հարթություններում) հաղոր-դում, որպեսզի նետվող առարկան (արկ, ական, զնդակ ևն) հասնի թիրախին և խոցի այն:

դինամիկ նշանառություն – динамическое прицеливание – dynamic targeting

Արագ նշանառություն, նշանառություն կամ թիրախի ընտրություն, որը նախա-պես կատարված չի եղել:

ուղիղ նշանառություն – прямая наводка – direct laying

Նշանառության եղանակ, երբ օպտի-կական առանցքը ուղղվում է անմիջա-կանորեն նշանակետի վրա:

**նշանառում** – տես նշանառություն

առաջանցիկ նշանառում – упреждение огня, приведение огня – lead

նշանառման գիծ – линия прицеливания – line of aim, line of sight

Ռեղիղ գիծ, որը հրածոցի աչքից անցնում է նշանոցի ձեղքի մեջտեղով (նրա եզ-րերի հետ հավասար բարձրությամբ) և նշանահատիկի զագաթով՝ մինչև նշա-նառման կետ:

նշանառման կետ – точка прицеливания – aimpoint, aiming mark

Թիրախի (կամ դրանից դուրս գտնվող) կետ, որին ուղղվում է գեները, այսինքն՝ որը ցանկանում է խոցել կրակողը:



**նշանացուցիչ** – целеуказатель – designer

ինֆրակարմիր նշանացուցիչ – инфракрасный целеуказатель – infrared pointer

**նշանացուցում** – целеуказание – target designation, target indication, targeting

Հրամանատարների, շտաբների, հետախուզության մարմինների, նավերի ու թռչող ապարատների անձնակազմերի կողմից նշանակետի բնույթի, տեղադրման կետի ու գործողությունների մասին տվյալների հաղորդում կառավարման կետերին, կրակային համալիրներին, ինքնաթիռներին, նավերին, ինչպես նաև մարտական միջոցների կառավարման գործիքներին:

նշանացուցման ապարատուրա – аппаратура целеуказания – targeting equipment

Ապարատուրա, որը որոշում և տեղեկություններ է տալիս նշանակետի բնույթի, տեղադրության և գործողությունների մասին:

**նշանափործում** – пристрелка, пристрелочный огонь – registration fire

Նշանակետի խոցման համար հրանոթի (ականանետի) նշանոցային հարմարանքների և պայթուցիչի առավել նպատակահարմար նախադրումների որոշում հրաձգությամբ:

նշանափործում հեռանիշներով – пристрелка по реперу – register

**նշանաքուղեր** – տես *թևքատրեզ*

**նշանոց** – прицел – sight, gunsight, rear sight

Գործիքներ ու հարմարանքներ՝ զենքը նշանակետին ուղղելու համար (որպեսզի զենքին տրվի այնպիսի դիրք, որը համապատասխանի կրակի համար հաշվարկված նախադրումային արժեքներին):

անդրադարձիչ նշանոց – տես *նշանոց՝ հայելային նշանոց*

գիշերային նշանոց – ночной прицел – night sight

համակցված շրջադիտակային նշանոց – комбинированный перископический прицел – combined periscopic sight

համապիտանի նշանոց – универсальный прицел – all purpose sight

հայելային նշանոց – зеркальный прицел, отражательный прицел – reflex sight

մեխանիկական նշանոց – механический прицел, неоптический прицел – iron sight

նշանոցի ճշգրիտ նախադրում՝ բարձրացման և հողմատարման հաշվառմամբ – правильная установка прицела с учетом возвышения и сноса – zero

նշանոցի նախադրում – установка прицела – sight adjustment

ոչ օպտիկական նշանոց – տես *նշանոց՝ մեխանիկական նշանոց*

ջերմացուցային նշանոց – тепловизионный прицел – thermal imaging sight

օպտիկական նշանոց – оптический прицел, телескопический прицел – optic sight, telescopic sight, hyposcope

Օպտիկական սարք, որը կրակողին հնարավորություն է տալիս տեսնելու ավելի մեծ նշանակետ (թիրախ) և ավելի ճշգրիտ կրակելու:

**նշանոցային մագացանց** – прицельные нити оптического прицела – reticle

Օպտիկական նշանոցի վրա գծված ցանց՝ ճշգրիտ նշանառության համար:

**նոկաուտի ենթարկել** – нокаутировать – knock out

Որևէ մեկին հարվածելով ուշագնաց անել, նաև փոխաբերական՝ կաթվածահար անել, տապալել՝ զգեստնել՝ ուշագնացության վիճակի հասցնել:

**նորակոչիկ** – новобранец – recruit

Զինվորական ծառայության նոր կանչված:

նորակոչիկների խումբ – группа новобранцев – draft

**նորամուծություն** – инновация – innovation

Ներդրված մտավոր նորույթ, որն էապես մեծացնում է տվյալ համակարգի գործառության արդյունավետությունը կամ նպաստում նոր գիտելիքի ստեղծմանը, մարդկանց կյանքի ոլորտների նորացման վերաբերյալ մինչ այդ չկիրառված գաղափարի ձևավորմանը



(տեխնոլոգիաներ, արտադրանք, հանրության գոյության կազմակերպական ձևեր՝ գիտություն, կրթություն, կառավարում, աշխատանքի կազմակերպում, սպասարկում, տեղեկության ռուրտ ևն):

**նորարարություն** – новаторство – innovation

Նորույթ, մարդկանց ստեղծարար գործունեության մեջ նորի դրսևորում, աշխատանքում մարդու ստեղծագործական ընդունակությունների արտահայտում:

**նորմ** – норма – norm

կանոնադրական նորմեր – уставные нормы – by-law

Նորմեր, որոնք ամրագրված են սովյալ կազմակերպության կանոնադրության մեջ և կարգավորում են հիմնական գործունեությունն ու դրանից բխող իրավահարաբերությունները:

սպառման նորմ – норма потребления – consumption rate

Որոշակի ժամանակամիջոցում (օր, շաբաթ, ամիս, տարի ևն) բարիքի օգտագործման միջին արժեքը:

տրման նորմ – норма выдачи – unit of issue

**նորմատիվ** – 1. норматив, 2. տես *նորմատիվային* – 1. norm, standard, normative, 2. տես *նորմատիվային*

Նորմերի տնտեսական, տեխնիկական և այլ ցուցանիշներ, ըստ որոնց կատարվում է որոշակի աշխատանք, իրագործվում է ինչ-որ ծրագիր:

նորմատիվ տեղեկատու – нормативный указатель – normative index

**նորմատիվային** – нормативный – normative, standard

Նորմատիվին վերաբերող, նորմատիվին հատուկ:

նորմատիվային բազա – нормативная база – normative base, legal base

Համակարգի, նրա առանձին ենթահամակարգերի և օղակների գործունեությունը կարգավորող օրենսդրական, նորմատիվ ակտերի, ղեկավար հրահանգների ու կատարողական-

բաշխողական փաստաթղթերի համախումբ:

նորմատիվային ցուցանիշ – нормативный показатель – standard indicator

**նորմատիվ-իրավական հենք** – տես *հիմք՝ նորմատիվ-իրավական հիմք*

**նորոգապիտանիություն** – ремонтпригодность, ремонтируемость – repairability, maintainability

Նորոգմամբ իր սկզբնական աշխատանքային պարամետրները վերականգնելու հատկություն:

**նորոգելիություն** – տես *նորոգապիտանիություն*

**նորոգում** – ремонт, починка – repair

Որևէ առարկայի՝ իրի՝ սարքի՝ մեքենայի ևն աշխատունակության, իր գործառույթները կատարելու կարողության վերականգնում:

ընթացիկ և կապիտալ նորոգում – տես *տեխնիկական սպասարկում*

հապճեպ նորոգում – ремонт на скорую руку – emergency repair

նորոգման կարգախումբ – вид технического обслуживания, категория ремонта – maintenance category

նորոգման փուլաշրջան – ремонтный цикл – repair cycle

վթարային նորոգում – аварийный ремонт – emergency repair

վթարային նորոգում մարտական պայմաններում – аварийный ремонт в боевых условиях – battle damage repair

Անհրաժեշտ նորոգում, որը սեղմ ժամկետներում կատարվում է մարտական պայմաններում և ոչ հաստիքային միջոցների հնարավոր օգտագործմամբ՝ վնասված կամ շարքից դուրս եկած սպառազինությունն ու ռազմական տեխնիկական ժամանակավորապես օգտագործմանը պիտանի վիճակի բերելու համար:

**նպաստ** – 1. пособие, 2. տես *օգուտ* – 1. allowance, 2. տես *օգուտ*

1. Դրամական կամ նյութական օգնություն, օժանդակություն: 2. Օգուտ:

դրամական նպաստ – денежное пособие, суточные – allowance

ընտանեկան նպաստ – семейное пособие – family allowance

խնամակալի զոհվելու դեպքում տրվող նպաստ – пособие по случаю гибели кормильца – benefit on the occasion of death of the supporter

խնամակալի կորստի դեպքում տրվող նպաստ – пособие по случаю потери кормильца – survivor benefit

խնամակալի մահվան դեպքում տրվող նպաստ – пособие по случаю смерти кормильца – death benefit

**նպաստում** – содействие, способствование – assistance, boost

**նպատակ** – цель – aim, goal, objective, purpose

Այն, ինչին ձգտում են հասնել, ինչն ուզում են իրագործել, մտադրություն:

առանձնակի կարևորությամբ նպատակ – особо важная цель – high value target

գլխավոր նպատակ – главная цель – primary objective

մարտական նպատակ – тактическая цель – tactical purpose

միջանկյալ նպատակ – промежуточная цель – intermediate objective

նպատակի միասնություն – единство цели – unity of purpose

ուսումնական պատրաստման նպատակ – миссия учебной подготовки, цель учебной подготовки – training mission

օժանդակ նպատակ – вспомогательная цель – secondary objective

**նպատակադրում** – целеполагание – goal-setting

Նպատակ դնելը, նպատակադրվելը:

**նպատակակետ** – տես *նպատակ*

**նպատակ ունենալ** – տես *ձգտել*

**նռնակ** – граната – grenade

Մերձամարտի զինամթերք:

բեկորային նռնակ – осколочная граната – fragmentation grenade

ինքնաշեն զրահափար նռնակ – самодельная бронебойная граната – improvised antiarmor grenade, IAAG

լուսածայնային նռնակ – տես *նռնակ՝ շոկային նռնակ*

հրացանային նռնակ – винтовочная граната – rifle grenade

շոկային նռնակ – граната шокового действия, свето-шумовая граната – stun grenade

Նռնակ, որը պայթյունի հետևանքով առաջացնում է խլացուցիչ կամ կուրացնող էֆեկտ:

ռեակտիվ նռնակ – реактивная граната – rocket-launched grenade

**նռնականետ** – гранатомет – grenade launcher

Մերձամարտի զենք՝ նռնակով խցման համար:

հակատանկային նռնականետ – противотанковый гранатомет – antitank grenade launcher

ռեակտիվ նռնականետ – реактивный гранатомет – rocket launcher

**նստեցնել** – 1. сажать, 2. осаждать – 1. seat, 2. deposit

**նստեցում** – 1. посадка, 2. посадка, приземление, 3. осаждение, 4. посадка, насадка – 1. embarkation, boarding, 2. landing, 3. deposition, 4. fit

1. Նավ, ինքնաթիռ, գնացք, մեքենա ևն նստելը՝ նստեցնելը: 2. Վայրէջք, զգեստնում: 3. Լուծույթից հեռացում նստվածքի ձևով: 4. Երկու դետալների միացման տեսակ, որը բնորոշվում է նախքան միացումը դրանց ունեցած չափերով:

նստեցման նավահանգիստ – порт посадки – port of embarkation

նստեցման շրջան – зона посадки, зона погрузки – embarkation area

Առափնյա մի հատված, որտեղ կատարվում են նավ բարձրանալու վերջին գործողությունները:

նստեցման ու բեռնման ժամանակը – время на посадку и погрузку – station time

ուղղաթիռ նստեցման շրջան – район посадки на вертолет – pick-up zone, PZ

«Նստի՛ր» – «Садись!» – “Mount!”

**նվազագունացնել** – տես *նվազարկել*

**նվազարկել** – минимизировать – minimize

**նվազեցում** – уменьшение – reduction

**նվազում** – 1. уменьшение, 2. снижение, уменьшение – 1. reduction, 2. decrease

**նվաճող** – завоеватель – conqueror

**նվաճում** – 1. достижение, приобретение, 2. завоевание – 1. achievement, 2. conquest

**նվիրվածություն** – տես *հավատարմություն*

**նրան** – տես *դաշույն 2*

**նրբանցք** – տես *նեղ փողոց*

**նույնականացում** – идентификация – identification

Երևույթների՝ հասկացությունների՝ առարկաների՝ պրոցեսների (գործընթացների) և ն համընկնման հաստատումը, նույնացումը, նույնականության պարզումը:

**նույնականություն** – идентичность – identity

Նույնություն, ինքնություն:

**նույնառանցք** – տես *միաառանցք*

**նույնացում** – отождествление – identification

**նույնություն** – тождественность, тождество – identity

### Շ (ՇԱ)

**շահ** – интересы (в знач. – выгода) – interests

Այն, ինչ համապատասխանում է մեկի ձգտումներին բարեկեցությանը, պահանջունքների բավարարմանը, նյութական ու հոգևոր բարիքներից ազատ օգտվելու իրավունքի ապահովմանը:

ազգային շահեր – национальные интересы – national interests

Ազգի գոյության, ինքնության պահպանման, զարգացման ու վերարտադրու-

յան համար գերակա նշանակություն ունեցող հոգևոր-բարոյական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ պահանջունքների համախումբ:

Ազգային շահերը բխում են ազգի նպատակների (առաքելության) և նրա հոգևոր-բարոյական արժեքների մասին պատկերացումներից: Կարևորագույն ազգային շահերն են՝ պետության ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության ապահովումը, ավանդույթով պայմանավորված ազգային կացութաձևի պահպանումը, կայուն տնտեսական զարգացումը և հասարակության ու անհատի սոցիալական առաջընթացը:

աշխարհաքաղաքական շահ – геополитические интересы – geopolitical interests

կոլեկտիվ անվտանգության շահ – интересы коллективной безопасности – collective security interests

մեկուսախմբային շահ – корпоративные интересы – corporate interests

շահերի սահմանափակման միջոցներ – средства ущемления интересов – means to disadvantage interests

պետական շահ – государственные интересы – state interests, interests of the state

ռազմական շահ – военные интересы – military interests

տարածաշրջանային անվտանգության շահ – интересы региональной безопасности – regional security interests

տնտեսական շահ – экономические интересы – economic interests

**շահագործում** – эксплуатация – operation, exploitation

Բնական ռեսուրսների, արտադրամիջոցների, փոխադրամիջոցների, շենքերի և կանոնավոր օգտագործում:

շահագործման դադարեցում – прекращение эксплуатации – decommissioning

շահագործման հանձնում – ввод в эксплуатацию, введение в строй – 1. activation, 2. commissioning

շահագործման պայմաններ – условия эксплуатации – service environment

շահագործում և տեխնիկական սպասարկում – эксплуатация и техническое обслуживание – operation and maintenance

**Շանհայի համագործակցության կազմակերպություն** – տես *Համագործակցության շանհայյան կազմակերպություն*

**«շան հերթափոխ»** – собачья вахта – dogwatch

Նավի վրա տարվող հերթապահություն:

**շառավիղ** – радиус – radius

1. Ուղիղ գծի հատված, որը միացնում է շրջանագծի կամ գնդի կենտրոնը այդ շրջանագծի կամ գնդի մակերևույթի ցանկացած կետի հետ, ինչպես նաև այդ հատվածի երկարությունը: 2. Որևէ բանի ընդգրկման մեծությունը, տարածման ոլորտը:

անվտանգության շառավիղ – радиус безопасности, безопасное удаление – radius of safety

Միջուկային պայթյունի էպիկենտրոնից այն հեռավորությունը շրջանագծով, որից այն կողմ յուրային գործի վրա պայթյունի ազդեցությունն ընդունելի (թույլատրելի) է:

գործողության շառավիղ – радиус действия – action radius

ճայթումային ակնառչնչացման շառավիղ – радиус детонационного уничтожения мины – destruction radius

Ականային պատերազմում. հաստատված չափի ու տեսակի պայթեցնող լիցքից հաշվված այն առավելագույն հեռավորությունը, որի վրա, անկախ ուղղությունից, ականը սահմանված հավանականությամբ կպայթի իր հիմնական լիցքի ճայթումային պայթյունից:

միջուկային անվտանգության նվազագույն շառավիղ – минимальный радиус ядерной безопасности – minimum nuclear safe distance

Այն նվազագույն շառավղով կազմված շրջանագիծը, որից դուրս միջուկային պայթյունով առաջացված վտանգը գտնվում է թույլատրելիության սահմաններում:

**շառավղային** – радиальный – radial

**շարակարգ** – эшелон – 1. echelon, 2. serial

1. ՆԱՏՕ-ում. պետության ՁՈՒ-ի խմբավորման մի մասը, որը նախանշանակված է ռազմավարական խնդիրներ լուծելու համար: 2. Ջորջերի (ուժերի) օպերատիվ դասավորության (մարտակարգի) տարր. լինում են մեկ կամ մի քանի (առաջին, երկրորդ շարակարգ, պահուց): 3. Շտաբի կառուցվածքային ստորաբաժանում (առաջին, երկրորդ՝ թիկունքային): 4. Հրամանատարության առանձին օղակ՝ մակարդակ. օրինակ՝ գնդի նկատմամբ դիվիզիան վերադաս օղակ է, գումարտակը՝ ստորադաս: 5. Սանդղաշարք. զորքերի մարտակարգ, որի դեպքում ստորաբաժանումները դասավորվում են մեկը մյուսի հետևից միևնույն հեռավորության վրա՝ միևնույն ուղղությամբ շեղվածությամբ: 6. Ջորամաս կամ մի քանի ստորաբաժանում, որոնք տեղափոխվում են միևնույն գնացքով կամ նավով: 7. Ավիացիոն զորամասի վերատեղաբաշխման ժամանակ նոր թռիչքարանձեր օդով տեղափոխվող ինքնաթիռները (ուղղաթիռները) կազմում են թռիչքային շարակարգ, իսկ ցամաքով տեղափոխվող ստորաբաժանումները՝ վրագետնյա շարակարգ:

ապահովման շարակարգ – эшелон обеспечения – support echelon

Ձանգվածեղ հարվածներ հասցնելու ժամանակ օդում ավիացիոն խմբավորման օպերատիվ դասավորության տարր, որը կազմավորվում է հարվածային շարակարգի գործողությունների համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով:

դեսանտային շարակարգ – տես *ալիք՝ դեսանտային ալիք*

երկրորդ շարակարգ – второй эшелон – rear echelon

թռիչքային կրեյսերական շարակարգ – крейсерский эшелон – cruising level

թռիչքային շարակարգ – летный эшелон – air echelon

Ավիացիոն ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների այն ինքնաթիռները (ուղղաթիռները), որոնք կազմավորման վերատեղաբաշխման

(վերաբազավորման) ժամանակ տեղափոխումը կատարում են ինքնուրույնաբար՝ օդով:

հարձակման շարակարգ – эшелон атаки – echelon attack

Ջորջի օպերատիվ դասավորության տարր՝ նախանշանակված հակառակորդի մարտավարական գոտին ճեղքելու և հետագա հարձակում վարելու համար:

նավահետքային շարակարգ – кильватерная колонна, кильватерный строй – line of battle, column

Նավերի շարակարգ, որի դեպքում դրանք շարժվում են մեկը ճիշտ մյուսի հետևից՝ «նավահետքով»:

ստորին շարակարգ – нижний эшелон – lower layer

վերին շարակարգ – верхний эшелон – upper layer

35 կմ-ից բարձր գտնվող գոտի:

վրագետնյա շարակարգ – наземный эшелон – ground echelon

օդային շարակարգ – воздушный эшелон – 1. air echelon, 2. air task force

1. Ավիացիայի վերաբազավորման ժամանակ այն անձնակազմն ու նյութական միջոցները, որոնք տեղափոխվում են օդով՝ տրանսպորտային ինքնաթիռներով և/կամ ուղղաթիռներով: 2. Երբեմն՝ այն խմբավորումը, որն օդում ստեղծվում է մեկ կամ մի քանի ավիացիոն միավորումներից՝ հակառակորդի օբյեկտներին զանգվածեղ հարված հասցնելու համար:

**շարակարգային տեղափոխություն** – поэшелонное перемещение – echeloned displacement

Մի զորամիավորման տեղափոխում մի տեղից մյուսը՝ առանց գործառույթի իրականացումը դադարեցնելու:

**շարակարգում** – эшелонирование – echeloning

1. Շարակարգերի ստեղծում՝ բաժանում: 2. Շարքով դասավորելը, որոշակի հերթականությամբ՝ հաջորդականությամբ շարելը: 3. Օդում գտնվող ինքնաթիռների միջև թռիչքի անվտանգության ապահովման համար տարածություններ-

րի ստեղծում ուղղաձիգ և հորիզոնական հարթություններում: 4. Տեղաշարժման, տեղակայման կամ հարձակման ժամանակ զորքերի տարաբաշխում մի քանի շարքով՝ դեպի խորք, կամ սանդղաշարքով:

պաշարների շարակարգում – эшелонирование запасов – echeloning supplies laterally and in depth

Օպերացիայում (մարտում) նյութական միջոցների բաշխում ըստ թիկունքի օղակների ու խմբավորումների՝ զորքերի համապատասխան պահանջմունքների պատեհաժամ բավարարման, հակառակորդի ներգործությունից դրանց ավելի լավ պահպանման և զորքերի երկարատև ինքնուրույն գործողությունների ապահովման նպատակով:

ուղղաձիգ շարակարգում – вертикальное эшелонирование – stepped-up separation

Խմբով թռչող ինքնաթիռների դեպքում՝ յուրաքանչյուր ինքնաթիռի հեռավորությունը իրենից բարձր և/կամ ցածր հարթության մեջ թռչող ինքնաթիռից:

**շարամաս** – серия – serial

Նույնատիպ իրերի՝ առարկաների՝ երևույթների, մեկը մյուսի շարունակություն հանդիսացող ստեղծագործությունների և՛ շարքի յուրաքանչյուր տարրը՝ առանձին մասը:

**շարային** – տես *մարտական*

**շարային ստուգատես** – строевой смотр – parade, ceremonial review

Ջինվորական ստորաբաժանման, զորամասի (նավի) ստուգման ձև, որի նպատակն է անձնակազմի անհատական շարային պատրաստականության և ստորաբաժանումների շարային ներդաշնակության աստիճանի որոշումը: Անցկացնում են ուղղակի պետերը կամ տեսչական ստուգումը ղեկավարելու համար նշանակված անձինք:

**շարանշիչ** – рядный маркер – row marker

Ցամաքային ականային պատերազմում. բնական, արհեստական կամ հատուկ նշիչ, որը տեղադրված է ականաշարքի սկզբում կամ վերջում՝ շարքերը նշելու համար:

**շարասյուն** – колонна – column

Դասավորություն, որի դեպքում զին-  
ծառայողները, ստորաբաժանումները  
կամ մեքենաները շարված են մեկը  
մյուսի հետևից:

գումարտակային շարասյունների գիծ – ли-  
ния батальонных колонн – line of bat-  
talions

հինգերորդ շարասյուն – пятая колонна –  
fifth-column

Ներքին թշնամիները՝ դավաճանները՝  
հակառակորդի գործակալները:

մեկ շարասյունով – колонна по одному –  
single file

նավահետքային շարասյուն – տես *շարա-  
կարգ՝ նավահետքային շարակարգ*

շարասյան ավիացիոն ծածկապաշտպա-  
նություն – авиационное прикрытие ко-  
лонны – column cover

շարասյան երթուղի – маршрут конвоя –  
convoy route

շարասյան երկարություն – длина колон-  
ны, глубина колонны – column length,  
road space

Տարածություն ըստ երկարության, որը  
վերահսկում կամ զբաղեցնում է շա-  
րասյունը, արտահայտվում է երկա-  
րության միավորներով:

շարասյան շարժման արագություն – ско-  
рость передвижения колонны – pace

շարասյան շարժման տեմպը կարգավոր-  
ող – задающий скорость передвижения  
колонны – pace setter

շարասյան տարրերի միջև հեռավորու-  
թյուն – дистанция между элементами  
колонны – column gap

փոխադրանավերի շարասյուն – конвой  
(караван) торговых судов – convoy, na-  
val convoy

Բեռնատար նավերի շարասյուն, որը  
սովորաբար ռազմանավերի (պահա-  
կանավախմբի) ուղեկցությամբ բեռներ  
էր տեղափոխում մի նավահանգստից  
մեկ այլ նավահանգիստ: Հատկապես  
հայտնի են Արկտիկական (բևեռային)  
շարասյունները, որոնք երկրորդ համաշ-  
խարհային պատերազմի տարիներին  
Անգլիայից ռազմական նախանշանակ-

ման բեռներ, հազուստ, սննդամթերք  
էին տեղափոխում ԽՍՀՄ:

**«շարասյուն՝ մեկակի» մարտաշարք** –  
строй «колонна по одному» – trail form-  
ation

1. Դասավորություն, որի դեպքում զին-  
ծառայողները, մեքենաները, ռազմա-  
կան տեխնիկան շարժվում են մեկը  
մյուսի հետևից՝ հրամանով սահման-  
ված հեռավորության վրա, կողքերից  
չունենալով հարևաններ: 2. Դասավո-  
րություն, որի դեպքում բոլոր ինքնա-  
թիռները մեկ միասնական շարքում են՝  
մեկը մյուսի հետևից:

**շարժաբեր** – привод – actuator

**շարժական** – передвижной – mobile, mov-  
able

**շարժական զինվորական վիրաբուժա-  
կան հոսպիտալ** – подвижный армейский  
хирургический госпиталь – mobile army  
surgical hospital

**շարժասարք** – движитель – propeller

Սարք, որի միջոցով շարժիչի կամ  
էներգիայի բնական աղբյուրի մեխանի-  
կական աշխատանքը կերպափոխվում  
է շարժական միջոցների տեղափոխու-  
թյան:

**շարժիչ** – двигатель – engine, motor

Սարք (մեքենա), որը որևէ տեսակի է-  
ներգիան կերպափոխում է մեխանի-  
կական աշխատանքի:

բարբախող ռեակտիվ շարժիչ – пульсиру-  
ющий реактивный двигатель – pulsejet

դիզելային շարժիչ – տես *դիզել*

կայծային վառումով շարժիչ – двигатель  
с искровым зажиганием – spark ignition  
engine

հրթիռային շարժիչ – ракетный двигатель  
– rocket engine

հրթիռային շարժիչի նախամեկնարկային  
ստուգիչ գործարկում – տես *փորձարկում՝  
թռիչքային պատրաստության կրակային  
փորձարկում*

մեկնարկային շարժիչ – стартовый дви-  
гатель – booster



շարժիչի անսարքություն – неисправность мотора – engine trouble

շարժիչի խափանում – отказ мотора – engine failure

շարժիչի ջերմաստիճանի ցուցիչ – индикатор температуры двигателя – engine temperature indicator

շարժիչների նախաթռիչքային ստուգման գոտի – տես *շարժիչ՝ շարժիչների փորձարկման հարթակ*

շարժիչների փորձարկման հարթակ – площадка для опробования двигателей, зона предполетной проверки мотора – run-up area

ռեակտիվ շարժիչ – реактивный двигатель – jet engine, jet

ուղղահոս օդառեակտիվ շարժիչ – прямой воздушный реактивный двигатель – ramjet

քարշուժի շեղելի վեկտորով ռեակտիվ շարժիչ – реактивный двигатель с отклоняемым вектором тяги – thrust vectoring jet engine

**շարժում** – движение – movement

ազգային-ազատագրական շարժում – национально-освободительное движение – national liberation movement

կայծակնային շարժում – мгновенное движение, рывок – dash

Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական շարժում – национально-освободительное движение карабахских армян – national liberation movement of Khara-bakh Armenians

շարժման ուղի – путь движения – line of march

շարժման ուղղություն (գործի) – направление движения – line of march

շարժման քանակ – количество движения – momentum

չմիացման շարժում – движение непрямого соединения – nonaligned movement

Համաժողովրդավարական շարժում, որը միավորում է ռազմաքաղաքական միություններին չմասնակցելու, հանուն խաղաղության և միջազգային անվտան-

գության, պետությունների և ժողովուրդների իրավահավասար համագործակցության պայքարելու քաղաքականություն վարող պետությունների:

Պագուռշյան շարժում – Пагуошское движение – Pugwash movement

Գիտնականների հասարակական շարժում հանուն խաղաղության, զինաթափման, միջազգային անվտանգության ու գիտական համագործակցության: 1-ին խորհրդաժողովը կայացել է 1957 թ. Պագուռշում (Կանադա):

պարտիզանական շարժում – партизанское движение – guerrilla movement

ժողովրդական զանգվածների զինված պայքար հանուն իրենց երկրի ազատության և անկախության (որը մղվում է հակառակորդի բռնազավթած տարածքներում) կամ հանուն իրենց երկրում ներպետական սոցիալ-քաղաքական վերափոխումների (ապստամբական շարժում):

ռեակտիվ շարժում – реактивное движение – jet propulsion

վազիկ շարժում – стремительное движение, рывок – shoot

սրընթաց շարժում – стремительное движение – dash

**շարժուն** – мобильный, подвижный – mobile

**շարժունակ** – տես *շարժուն*

**շարժունակություն** – 1. мобильность, 2. подвижность – mobility

Արագ տեղափոխվելու, ծավալվելու (աշխատանքային վիճակի բերվելու) և ըստ իր նախանշանակման կամ հրամանի գործունեություն սկսելու կարողություն:

ռազմավարական շարժունություն – стратегическая мобильность – strategic mobility

Ջորջերը տարբեր ՌԳԹ-ներ արագ տեղափոխելու կարողություն:

**շարժունություն** – տես *շարժունակություն*

մարտավարական շարժունություն – тактическая мобильность, тактическая подвижность – tactical mobility



**շարվածք** – 1. укладка, 2. построение – 1. stowage, 2. formation

շարվածք շարայունով – построение в колонну – column formation

ուղղաձիգ շարվածք – вертикальная укладка – vertical stowage

**շարում** – 1. построение, 2. набор – 1. formation, 2. typing

**շարքագիծ** – шеренга – alignment

**շարք** – 1. ряд, 2. строй – 1. file, 2. formation

գծային շարք – линейный строй – line formation

մեկ շարքով – в одной шеренге, в одну шеренгу – abreast

շարք կանգնել – становиться в строй – fall in

շարքի հավասարեցում – равнение строя – dressing

Շքերթի ժամանակ զինվորների հավասարությունը մի գծի վրա:

շարքից դուրս գալը – выход из строя, поломка, порча – breakdown, accident

շարքից դուրս եկած – տես *օգտագործման համար ոչ պիտանի*

շարքից ժամանակավոր դուրսբերում – временный вывод из строя – temporary incapacitation

Վնասման պատճառով ժամանակավոր անաշխատունակություն կամ անմարտունակություն:

ցրիվ շարք – рассыпной строй – extended order

**շարքային** – 1. рядовой, 2. солдат – 1. private, ranker, 2. soldier

Ջորային առաջին զինվորական կոչումը:

ավիացիայի շարքային – рядовой авиации – aircraftman

շարքային հրետանավոր – канонир, рядовой артиллерии – gunner

**շեղանկյուն** – ромб – diamond

**շեղում** – 1. отклонение, смещение, 2. девиация, 3. տես *խոսքում 3* – 1. dec-

lination, 2. departure, 3. deviation, 4. տես *խոսքում 3*

1. Սովորական դիրքից՝ վիճակից՝ ուղղությունից մի կողմ թեքվելը: 2. Մագնիսական կողմնացույցի ցուցմունքների սխալ, սարքերություն: 3. Շեղում ուղեգծից:

իրական շեղում – реальное отклонение – real precession

հորիզոնական շեղում – горизонтальное отклонение – horizontal error, probable error

Հավանական շեղում՝ ըստ հորիզոնական հեռավորության:

հետվնասվածքային շեղումներ – посттравматические отклонения – post-traumatic stress disorder

շառավղային շեղում – радиальное смещение – radial displacement

շեղում դեպի հյուսիս – отклонение к северу – northing

շեղում նշանառման կետից – отклонение от точки прицеливания – delivery error

շեղում ուղղույթից – отклонение от курса – diversion

Շարժման ծրագրված ուղղությունից շեղում զանազան պատճառներով:

շրջանային հավանական շեղում – круговое вероятное отклонение – circular error probable

**շեմ** – порог – threshold

**շենք** – 1. здание, 2. տես *սենք* – 1. building, 2. տես *սենք*

շենքի վերնամաս – надземное строение – superstructure

**«Շերիդան»** – «Шеридан» – “Sheridan”

Ամերիկյան թեթև տանկ:

**շերտ** – 1. полоса, 2. пласт, 3. слой, 4. прослойка – 1. strip, 2. zone, 3. seam, stratum, 4. layer, stratum

1. Տարածության մեջ երկայնակի ձգվող միատեսակ գուտի, նյութի, մարմնի և այլ առարկաների մաս, որ գտնվում է մյուս մասերի միջև: 2. Հասարակական, մշակութային, կրոնական, քաղաքական ևն հատկանիշի ընդհանրությամբ

բնորոշվող մարդկանց խումբ: 3. Հանքի երկայնական զանգված:

**2ԵՖ** – տես *պետ*

«Շիլկա» – «Шилка» – “Shilka”  
 Խորհրդային ինքնագնաց ԶՍՈՒ-23-4  
 զենհրթային կայանք:

**շինարարություն** – строительство – engineering

հաստատութենական շինարարություն – институциональное строительство – institution-building

**շինել** – տես *գրատ*

**շինություն** – տես *կառույց*

**շլացում** – ослепление вспышкой, временное ослепление – flash blindness  
 Պայծառ լույսից տեսողության ժամանակավոր կորուստ:

**ՇՀԿ** – տես *կետ` շարժական հրամանատարական կետ*

**շղարշ** – 1. дымка, 2. завеса, покров – 1. smoke, 2. cloud

**շղթա** – цепь, цепочка – train

արտադրամատակարարումային շղթա – логистическая цепочка – supply chain  
 Տվյալ ապրանքի թողարկման համար անհրաժեշտ հումքի մատակարարումից` արտադրմամբ ու պատրաստի արտադրանքի պահեստավորմամբ, մինչև պատրաստի ապրանքի օգտագործումը:

գրոհող շղթա – атакующий эшелон, атакующий вал – assault wave

Դեսանտային օպերացիայում. դեսանտային (ափհանիչ զորէջքային) միջոցների լայնական շարքերը` ավիքները, որ շարժվում են դեպի դեսանտի իջեցման կետը (ափ կամ գորէջքի շրջան):

ծայնային շղթա – տես *շղթա` ակուստիկ շղթա*

**շնիկ** – տես *ծգան*

**շնչադիմակ** – респиратор – respirator

**շոկ** – տես *ցնցակաթված*

**շչակ** – 1. гудок, 2. сирена – 1. blast, 2. siren

**շտաբ** – штаб – staff, headquarters

գերագույն շտաբ – генеральный штаб, генштаб – general staff  
 Պետության ԶՈՒ-ի կառավարման գլխավոր մարմին:

գերագույն շտաբի պետ – начальник генерального штаба – Chief of the General Staff

գլխամասային շտաբ – головной штаб – parent headquarters  
 ՆԱՏՕ-ի ՄՁՈՒ-ի տարածաշրջանային հրամանատարության շտաբ:

գլխավոր շտաբ – главный штаб – main staff, main headquarters, Armed Service Staff

գլխավոր շտաբի պետ – начальник главного штаба, НГШ – Chief of the Main Staff  
 Գլխավոր շտաբի ղեկավար:

ինտեգրված շտաբ – интегрированный штаб – integrated staff

միացյալ (միջտեսակային) գերագույն շտաբ – объединенный (межвидовой) генеральный штаб – joint headquarters, JHQ

միացյալ շտաբ – объединенный штаб – joint headquarters

միացյալ ուժերի մշտական շտաբ – постоянный штаб объединенных сил (постоянно действующая штаб-квартира коллегияльных сил) – standing joint force headquarters

միջտեսակային շտաբ – межвидовой штаб – joint staff

շտաբի` անձնակազմի բաժին – отдел личного состава штаба – the department of a headquarters responsible for personnel, G1

շտաբի թիկունքային ապահովման բաժին – отдел тылового обеспечения штаба – the department of a headquarters responsible for logistics, G4

շտաբի` հասարակայնության հետ կապի բաժնի պետ – начальник отдела штаба по связям с общественностью – staff public affairs officer

շտաբի հետախուզական բաժին – разведывательный отдел штаба – the department of a headquarters responsible for intelligence, G2

շտաբի պետի տեղակալ – заместитель начальника штаба – deputy chief of staff

շտաբի օժանդակ բաժիններ – вспомогательные отделы штаба – special staff

շտաբի օպերատիվ բաժին – оперативный отдел штаба – the department of a headquarters responsible for operations and training, G3

շտաբի օպերատիվ բաժնի պետ – начальник оперативного отдела штаба – operations officer

շտաբների ծառայություն – служба штабов – staff duty

**շտաբային քոլեջ** – штабной колледж – staff college

Ուսումնական հաստատություն, որը պատրաստում է բարձրագույն հրամկազմի սպաների:

**Շտաբների պետերի միացյալ կոմիտե** – Объединенный комитет начальников штабов – Joint Chiefs of Staff

ԱՄՆ-ում. ռազմական ղրորտի կառավարման բուն ռազմական բարձրագույն մարմինը:

**Շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահ** – Председатель Объединенного комитета начальников штабов – Chairman of the Joint Chiefs of Staff

ԱՄՆ-ի բարձրագույն ռազմական մարմնի ղեկավար:

**շտապ** – 1. срочный, неотложный, безотлагательный, 2. տես *առաջ* – 1. urgent, 2. տես *առաջ*

**շտեմարան** – 1. база, 2. вместилище, хранилище – 1. base, 2. hold

հետախուզական տվյալների շտեմարան – база разведанных – intelligence database

տվյալների թարմացված ինտեգրային շտեմարան – обновленная интегрированная база данных – Modernized Integrated Database

տվյալների կենտրոնական շտեմարան – центральная база данных – core data base

տվյալների շտեմարան – база данных – database, base

**շտկում** – 1. տես *ուղղում 1, 2*, 2. տես *կարգաբերում 1* – 1. տես *ուղղում 1, 2*, 2. տես *կարգաբերում 1*

**«Շտուրմ»** – «Штурм» – “Spiral”  
Լազերային ուղղորդմամբ խորհրդային 9Կ-114 հակատանկային հրթիռ:

**«Շրայկ»** – «Шрайк» – “Shrike”  
Հակառադիոտեղորոշումային հրթիռ:

**շրջադարձ** – 1. оборот, 2. поворот – return

Իմելմանի շրջադարձ – поворот Иммельмана – Immelman turn

լրիվ շրջադարձ – տես *հետադարձում*

մարտական շրջադարձ – боевой разворот – combat turn

շրջադարձի կետ – 1. поворотный момент, переломный момент, 2. поворотный пункт, точка перелома – 1. decisive point, 2. turning point

1. Որևէ բանի ընթացքը, զարգացումը կտրուկ փոխող պահ՝ իրավիճակ՝ գործողություն՝ գործոն են: Դրանց դեպքում կարելի է հակառակորդի դեմ հասնել հաջողության: 2. Պայմանական կետ, որում տեղի է ունենում ընթացքի ուղղության փոփոխում: 3. Որևէ զարգացման բարձրակետը կամ ցածրակետը: 4. Ականազոտու միջնագծի կետ, որտեղ գոտու ձգվածության ուղղությունը շեղվում է:

ստանդարտ շրջադարձ – стандартный разворот – procedure turn

Շրջադարձ, որի անկյունը մեկ ուղղությամբ 80° է, մյուս՝ 260°:

շրջադարձի ցուլապատեր – фара поворота, «поворотник» – indicator lights

**շրջադարձում** – տես *հետադարձում*

**շրջադիտակ** – перископ – periscope  
Օպտիկական սարք, որը նախանշանակված է թաքստոցից (խրամատ, բլին-

դաժ և այլն), վրաջրյա նավերի ներսի սենքերից և շրջադիտակային խորուբյան վրա գտնվող սուզանավերից շրջակայքը դիտելու համար:

**շրջագննում** – обзор – observation

Շրջակայքի՝ չորս բոլորի դիտում՝ զըննում:

տարածքի շրջագննում – обзор пространства – space observation, overlook

**շրջաթռիչք** – облет – fly-around, flying around

Թռչելով՝ շրջելը, բոլոր տեղերն այցելելը:

**շրջակայք** – окрестность – environs

**շրջահայաց** – տես *զգուշավոր*

**շրջահայեցություն** – предусмотрительность – 1. prudence, 2. caution

**շրջայց** – обход – round

Հիվանդասենյակներում բժշկի կողմից հիվանդների հաջորդական բուժզննում:

**շրջան** – 1. район, 2. круг, 3. տես *ժամանակաշրջան* – 1. area, 2. district, 3. region, 4. circle, 5. տես *ժամանակաշրջան*

ամրացված շրջան – укрепленный район – fortified area

1. Տեղանքի շրջան (գոտի), որը սարքավորված է երկարաժամկետ ու դաշտային ամրաշինությունների համակարգով՝ զուգակցված տարբեր ինժեներական արգելափակոցներով, և պատրաստված է երկարատև համառ պաշտպանության համար: 2. Հաստիքային զինվորական կազմավորում՝ նախանշանակված պաշտպանական խնդիրներ կատարելու համար:

ապահովության շրջան – район безопасности – safe area

1. ԱՄՆ-ում. Հակառակորդի տարածքում որոշակի շրջան, որտեղ փախուստի դիմածը կամ փրկվածը հնարավորություն ունի խուսափելու գերությունից կամ ապաստանելու մինչև իր տարահանումը: 2. Խաղաղապահական օպերացիաներում. անվտանգ շրջան, որում ՆԱՏՕ-ի կամ նրա գլխավորած

ուժերը պաշտպանում են որոշակի մարդկանց և/կամ գույքը:

անվտանգ շրջան – безопасная зона – secure area

Շրջան կամ նշված տեղանք՝ վայր, որում ՆԱՏՕ-ի կամ նրա գլխավորած ուժերն ստանձնել են մարդկանց և գույքի համար առանձնահատուկ աստիճանի պատասխանատվություն և կարող են տեղաշարժի վրա սահմանափակումներ դնել:

ավիացիայի թռիչքների համադասման շրջան – տես *գոտի՝ ավիացիայի գործողությունների համադասման գոտի*

արգելված շրջան – запретный район – exclusion zone

Շրջան, որը հաստատել է թույլատրող մարմինը՝ կոնկրետ աշխարհագրական շրջանում կոնկրետ գործողություններ արգելելու համար:

ավիանված գործի թիկունքային շրջան – тыловой район (морского) десанта – beach support area

բեկումնային շրջան – кульминационный период – culminating point

դիրքային շրջան – позиционный район – position area

1. Տեղանքի հատված՝ նախանշանակված հրթիռային, հրանոթային և ականանետային զորամասերն և ստորաբաժանումները մարտակարգի ծավալելու համար: 2. ԳԴՀ-ում. տանկային վաշտի, ինչպես նաև ՋՓԴ-ներով մոտոհետևակային վաշտի պաշտպանության շրջան:

զորէջքի շրջան – район десантирования – airborne objective area, assault dropping zone

զորքի բնակավորման շրջան – район расквартирования войск – contonment area

թիկունքային շրջան – тыловой район – rear area

թռիչքների հատուկ ռեժիմով շրջան – район с особым режимом полетов – caution area

Օդային տարածք, որտեղ կոնկրետ ժամանակահատվածում գործում են թռիչքների սահմանափակումներ:

ծովային շրջանի մեկուսացում – изоляция морского района – sea denial

Ծովային շրջանի նկատմամբ հակառակորդի վերահսկողության կանխումը, երբ յուրային ուժերը բավարար չեն վերահսկողություն հաստատելու համար:

կառավարող շրջաններ – տես *օղակ՝ դեկավար օղակ*

կարգավարական շրջան – диспетчерский район – control area

կարգավարման հանգուցային շրջան – узловой диспетчерский район – terminal control area

Կարգավարման շրջան, որը սովորաբար ստեղծվում է մեկ կամ մի քանի խոշոր օդանավակայանների մոտակայքում՝ օդային երթևեկության երթուղիների զուգամիտման տեղերում:

կենտրոնացման (դիրքավորման) շրջան – район сосредоточения (расположения) – concentration area, assembly area

կենտրոնացման միջակա շրջան – промежуточный район сосредоточения – staging area

1. Դեսանտային (ծովային կամ օդային) օպերացիաներում ելքային շրջանի և ռազմարշավի նպատակակետի միջև ուղու վրա գտնվող վայր, որտեղ կատարվում է վառելիքով վերալիցքավորում, նավերի վերախմբավորում և/կամ զորքերի վարժանք, սուուգատես ու վերաբաշխում: 2. Այլ օպերացիաներում՝ գլխավոր վայր (տեղ), որը նախատեսված է դեպի նպատակակետ շարժվելու ընթացքում զորամասերի կենտրոնացման համար:

կենտրոնացման նախնական շրջան – первоначальный район сосредоточения – initial assembly area

կենտրոնացում ելքային շրջանում – сосредоточение в исходном районе – marshalling

կիսատրոհման շրջան – период полураспада – half-life

հակաօդային պաշտպանության շրջան – район противовоздушной обороны – air defense region

Հակաօդային պաշտպանության գոտու աշխարհագրական մաս:

հավաքի շրջան – район сбора – assembly area

հետազդեցության շրջան – период последействия – after-effect phase

Ներքին ձգաբանության մեջ. կրակոցի կատարման վերջին շրջանը՝ փողից արկի դուրս գալու պահից մինչև նրա վրա գազերի ազդեցության դադարումը:

հնարավոր վտանգի օբյեկտների շրջան – район объектов потенциальной угрозы – target area of interest

Աշխարհագրական վայր, որում գտնվող կարևոր և ըստ այդմ՝ մեծ հետաքրքրություն ներկայացնող օբյեկտները կարող է գրավել խոցել յուրային զորքը:

հրետանու առանձնացված շրջան – выделенная зона артиллерии – artillery reserved area

Շրջան, որը հատկացված է բացառապես հրետանու ուժերի և միջոցների տեղաբաշխման համար:

մարտական գործողությունների հիմնական շրջան – основной район боевых действий – main battle area

մարտական գործողությունների շրջանի դիտում – наблюдение за районом боевых действий – battlefield surveillance

մարտական գործողությունների շրջանի շրջապատնեշում օդից – изоляция района боевых действий с воздуха – air interdiction

Ուազմաօդային ուժերի գործողություններ՝ նպատակաուղղված հակառակորդի ուժերի (զորքի) ոչնչացմանը, ճնշմանը կամ սաստմանը՝ նախքան դրանց արդյունավետ կիրառումը, կատարվում են յուրային ուժերից այնպիսի հեռավորության վրա, որպեսզի անհրաժեշտ չլինի յուրաքանչյուր մարտական թռիչք համաձայնեցնել կրակային ներգործության կամ յուրային զորքերի տարաշարժի հետ:

միացյալ թիկունքային շրջան – объединенный тыловой район – joint rear area

նշված շրջանում գտնվելու տևողություն – продолжительность пребывания в указанном районе – on-station time

շրջանի մեկուսացում – изоляция района, операция по блокированию района – area interdiction operation

շրջանի շրջափակման օպերացիա – տես *շրջան՝ շրջանի մեկուսացում*

շրջանի շրջափակում – блокирование района – interdiction

որոնողափրկարարական աշխատանքների շրջան – район поисково-спасательных работ – search-and-rescue region

Որոշակի չափերի շրջան՝ գոտի, որը ճանաչված է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության, Միջազգային ծովային կազմակերպության կամ որևէ այլ միջազգային կազմակերպության կողմից և կապված է փրկարարական օպերացիաների համադասման կենտրոնի հետ, որի շրջանակներում տրամադրվում են որոնումափրկարարական ծառայություններ:

չպաշտպանված շրջան – незащищенный район – unsecured area

պաշտպանական միջոցառումներ և փրկարարավերականգնողական աշխատանքներ – защитные мероприятия и спасательно-восстановительные работы – area damage control

Պատերազմական գործողություններից կամ բնական կամ մարդածին աղետներից առաջ, դրանց ընթացքում կամ դրանցից հետո իրականացվող միջոցառումներ՝ հավանական վնասը պակասեցնելու կամ դրանց ազդեցությունը նվազեցնելու նպատակով:

պաշտպանական շրջան – տես *պաշտպանություն՝ պաշտպանության շրջան*

պատասխանատվության մարտավարական շրջան – тактический район ответственности – tactical area of responsibility

մբարկոծման շրջան – район бомбардировки – bomb site

Տարածք, որը ենթարկվել է մբարկոծության և պահպանել է ավերածությունների հետքեր:

սահմանամերձ շրջան – пограничный район – frontier area

սպասման շրջան – район ожидания – readiness area, waiting area

Վայրէջքի վայրերի՝ թռիչքադաշտերի մոտակայքում գտնվող տեղանքի հաստատվածներ, որոնք նշանակված են օդային (ծովային) դեսանտի զորքերի ծածուկ տեղաբաշխման, զորէջքին (ափհանմանը) և մարտական գործողություններին նրանց պատրաստումն ավարտելու համար:

սպառնալից շրջան – угрожаемый период – period of threat

Ժամանակ (տարբեր տևողությամբ), որը սովորաբար անմիջականորեն նախորդում է պատերազմի սկզբին և բնութագրվում է միջազգային իրադրության ու հավանական հակառակորդների միջև հարաբերությունների ծայրաստիճան սրմամբ:

ստորջրյա մարտական գործողությունների շրջան – зона подводных боевых действий – submarine action area

փակ շրջան – запретный район – no-go area

օպերատիվ շրջան – տես *շրջան՝ օպերացիայի շրջան*

օպերատիվ շրջանի համակցված հետախուզական գծահանում – комбинированная разведывательная съемка района операции – modified combined obstacle overlay

օպերացիայի շրջան – район операции, оперативный район – operational area

**շրջանակ** – 1. рама, 2. рамка – 1. frame, 2. framework

**շրջանացում** – районирование – regionalization, zoning

Տարածքի բաժանում շրջանների:

**շրջանցիկ ճանապարհ** – տես *շրջանցուղի*

**շրջանցուղի** – 1. объезд, обходная дорога, 2. обход, обходной путь – 1. diversion, detour, 2. bypass

1. Պահուստային ճանապարհ, որով երթնելում են, երբ հիմնական ճանա-



պարիը խցանված է կամ փակ է՝ նորոգվում է ևն: 2. Ճանապարհ, որը շրջանցում է տվյալ վայրը՝ շրջանը՝ բնակավայրը ևն:

**շրջանցում** – 1. обход, 2. объезд, 3. избегание, обход, 4. обход, игнорирование – 1. envelopment, turning movement, 2. by-pass, detour, 3. evasion, circumvention, 4. avoidance

1. Տարաշարժ, որը կատարվում է հակառակորդի դիրքեր զորքի (ուժերի) խոր թափանցման և նրան թիկունքից հարվածներ հասցնելու նպատակով: 2. Ռադիացիոն ախտահարման, ավերածությունների, հրդեհների, հեղեղումների հատվածներով շրջանների, դժվարանցանելի տեղանքի հաղթահարում՝ հարևան բարենպաստ տարածքով անցնելու միջոցով: 3. Որևէ հարցի՝ թեմայի մասին խոսելուց՝ հիշելուց, խուսափում՝ խուսանավում, 4. Որևէ պայմանի՝ պահանջի ևն անտեսում:

**շրջապատել** – окружать – surround

**շրջապատնեշում** – блокада, блокирование – blockade, block

Տեղանքում կամ օրգանիզմում վարակի, հիվանդությունների և տարածման սպառնալիք ներկայացնող այլ ախտերի օջախի մեկուսացման եղանակ:

տեղեկատվական շրջապատնեշում – информационная блокада – information blackout

**շրջապատում** – окружение – encirclement  
Հակառակորդի խմբավորման մեկուսացում նրա այլ զորքերից, որը կատարվում է տվյալ խմբավորումը ոչնչացնելու կամ գերելու նպատակով:

**շրջառում** – охват – outflanking

Տարաշարժ, որը կատարվում է յուրային զորքերը հակառակորդի դիրքեր դուրս բերելու և նրա թևին հարվածելու նպատակով:

ուղղաձիգ շրջառում – вертикальный охват, охват с воздуха – vertical envelopment

Մարտավարական գորաշարժ, որի ժամանակ զորեջք կատարող զորքը հայտնվում է հակառակորդի գորաթևում կամ թիկունքում:

**շրջափակում** – блокада, военная блокада – blockade, investment

Գործողություններ՝ նպատակաուղղված օբյեկտի մեկուսացմանը՝ նրա արտաքին կապերը կտրելու միջոցով:

շրջափակումը խախտող – нарушитель блокады, блокадопрорыватель – blockade runner

շրջափակումը ձեղքող – տես *շրջափակում՝ շրջափակումը խախտող*

ռազմական շրջափակում – տես *շրջափակում*

**շրջհոսիչ** – обтекатель – fairing, cowling

Հատուկ կառուցվածք, որը հեշտացնում է շարժվող օբյեկտի մակերևույթով գազի կամ հեղուկի հոսումը, ինչի շնորհիվ էապես նվազում է շարժմանը հիդրոաերոդինամիկական դիմադրությունը:

**շուկայի ազատականացում** – либерализация рынка – market liberalization, liberalization of the market

Շուկայական տնտեսության ձերբազատում նրա բնականոն գործունեությանը խանգարող պետական սահմանափակումներից:

**շուրջկալ** – оцепление – cordon

Ջինժառայողների խումբ (զինախումբ, ստորաբաժանում), որը տեղաբաշխվում է որոշակի բնագծերում (կետերում)՝ պաշտպանվող օբյեկտ օտար անձանց ներթափանցումը կանխելու կամ այնտեղից ելքն արգելելու համար:

ներքին շուրջկալ – внутреннее оцепление – inner cordon

**շուրջկալում** – оцепление – surrounding

**շփոթ** – տես *խրախանցում*

**շփոթմունք** – замешательство, растерянность – confusion

**շփոթություն** – замешательство, смятение – confusion

**շփում** – 1. контакт, соприкосновение, 2. տես *հաղորդակցություն 1*, 3. трение – 1. contact, 2. տես *հաղորդակցություն 1*, 3. friction



հակառակորդի հետ անմիջական շփում – непосредственное соприкосновение с противником – direct contact with the enemy

մարտական շփում – боевое соприкосновение, боевой контакт – combat contact

շփման գիծ – линия соприкосновения – line of contact

շփման վայր – стыковочный пункт – coordinating point

Նախատեսված կետ, որտեղ բոլոր զորամիավորումները պետք է իրար հետ կապ հաստատեն համակարգված գործելու համար:

ռազմական շփումներ – военные контакты – military engagement

**շփումների հաստատում** – տես *կապ` կապի հաստատում*

**շքաբաճկոն** – мундир – tunic

**շքանշան** – орден – order, medal, decoration

Պետական պարգև` մի կամ մի քանի (տվյալ շքանշանին հատուկ) նշանների տեսքով:

**շքերթ** – демонстрация, парад – parade, demonstration

Ջորքի, զինատեսակների, մարզիկների, բնակչության հանդիսավոր ստուգատես ու երթ, որը կատարվում է պաշտոնական տոնախմբությունների առթիվ (զորքի առնչությամբ գործածվում է «զորահանդես» տերմինը):

Պարզագույն հակատանկային միջոց` վեց ծայր ունեցող (*սուվ*. երեք երկտավր մետաղական հեծաններից պատրաստված) ծավալային աստղ:

**ոլորտ** – сфера, область – sphere, area

համագործակցության ոլորտ – направление сотрудничества – cooperation area

Գործունեության ոլորտ, որում ծավալվում է տվյալ համագործակցությունը, համագործակցային աշխատանքների ուղղվածությունը:

Հյուսիսատլանտյան պայմանագրի ոլորտ – сфера (влияния) Североатлантического договора – North Atlantic Treaty area

**ողնուց** – киль – fin

**ողողադաշտ** – пойма – flood plain

Հովտի ամենացածրադիր վայրը, որը ծածկվում է ջրով ամեն անգամ, երբ գետը վարարում ու դուրս է գալիս ավերից:

**ողորկափող** – гладкоствольный – smooth-bore

**ողորմածություն** – пощада, сохранение жизни при сдаче в плен – quarter

**ողջամտություն** – рассудочность, рассудительность – consciousness

**ողջ մնացած** – տես *կենդանի` կենդանի մնացած*

**ոչ գաղտնի հրատարակություն** – несекретное издание – nonregistered publication

**ոչ դիմացկոն** – տես *անկայուն*

**ոչ երկրային** – внеземной, инопланетный – alien

**ոչնչացում** – 1. уничтожение, ликвидация, 2. истребление, уничтожение, 3. տես *բնաջնջում* – 1. disposal, elimination, 2. destruction, annihilation, 3. տես *բնաջնջում*

ավիացիայի ոչնչացման հարձակողական գործողություններ – наступательные действия по уничтожению сил и средств авиации – offensive counterair attack operations

**Ո (ՎՈ)**

**ոգի** – дух – spirit

բարոյական ոգի – моральный дух – morale

Անձնակազմի գիտակցության վիճակ, որը բնութագրում է հոգևոր կարողությունը և պատրաստությունը` խաղաղ և պատերազմական շրջաններում գործելու համապատասխան իր նախանշանակմանն ու դրված խնդիրներին:

**ոգնակ** – еж – antitank hedgehog

ոչնչացմանը պատրաստ – готовый к уничтожению – prepared for demolition

ոչնչացման վրա ծախսեր – затраты на ликвидацию – disposal costs

ոչնչացման տեղ – место уничтожения – destruction site

**ոչնչացված** – уничтоженный – destroyed

**ոչ վերջնական** – неокончательный – indecisive

**ոսոխ** – неприятель, супостат – foe

**ոսպնյակ** – линза – lens

**ոստիկան** – полицейский – policeman, constable

**ոստիկանություն** – полиция – police

**ոտնաթաթ** – ступня – foot

**ոտնաչափ** – фут – foot

Երկարության բրիտանական միավոր՝ հավասար 30,48 սմ-ի:

**որակ** – 1. качество, 2. տես *հատկություն* – 1. quality, 2. տես *հատկություն*

որակի երաշխիք – гарантия качества – quality assurance

որակի նվազագույն վերահսկվող ցուցանիշներ – минимальные контролируемые показатели качества – minimum quality surveillance

որակի վերահսկում – наблюдение за качеством – quality surveillance

ռադիոընդունման որակ – качество радиоприема – reception

**որմնանցք** – амбразура – embrasure

Պատի մեջ բացված անցք՝ դուրսը անվտանգ դիտելու, ներսից նետ՝ կրակ ևն արձակելու համար:

**որոգայթ** – տես *թակալի*

**որոնում** – поиск, изыскание – search

արագ որոնման մեթոդիկա – методика быстрого поиска – quick search procedure  
Տեղանքի հետազոտում՝ մեծ թվով ինքնաթիռների գործարկմամբ:

Որոնման և փրկման հարցերով միջազգային խորհրդատվական խումբ – Международная консультативная группа по вопросам поиска и спасения – International Search and Rescue Advisory Group

որոնում և փրկում – поиск и спасение – search and rescue, SAR

Գետնին կամ ծովում աղետի ենթարկված անձնակազմին որոնելու և փրկելու աշխատանքների համալիր:

որոնում՝ կալման նպատակով – поиск с целью перехвата – intercepting search

**որոշարկիչ** – опознавательный – identification

Որոշարկման նպատակներին ծառայող, որոշարկում կատարող:

որոշարկիչ ազդանշան – опознавательный сигнал – recognition signal

որոշարկիչ նշան – опознавательный знак – recognition marking, insignia

որոշարկիչ ռադիոկարոս – опознавательный радиомаяк – identification beacon

որոշարկիչ տարաշարժ – опознавательный маневр – identification maneuver

**որոշարկում** – 1. детерминирование, 2. опознавание, распознавание – 1. determination, 2. Identification, recognition

1. Որոշակիացում, որոշակի դարձնելը:  
2. Չատորոշում, տարբերակում:

ընթացակարգային որոշարկում – процедурное опознавание – procedural identification

Նշանակետի որոշարկում՝ ըստ դիտումների և վերլուծության:

ընտրողական որոշարկման սարք – устройство селективного опознавания – selective identification feature

մարտական պայմաններում որոշարկման համակարգ – система опознавания в боевых условиях – combat identification system

«յուրային–օտար» որոշարկման համակարգ – система опознавания «свой–чужой» – identification “friend and foe”

Ապարատածրագրային տեխնիկական համալիր՝ նախանշանակված յուրային զորքերն ու ՍՈՏ-ն հակառակորդի զոր-

քից ու ՍՈՏ-ից ավտոմատ եղանակով տարբերելու համար:

«յուրային–օտար» որոշարկում – опознавание «свой–чужой» – identification friend or foe

որոշարկման կոդային ազդանշան – опознавательный кодовый сигнал – selective identification feature

ռադիոէլեկտրոնային որոշարկման համակարգի կոդային ընդունիչ – бортовой приемник радиоэлектронного опознавания – squawk box

ռադիոտեղորոշումային որոշարկում – տես *ռադիոորոշարկում*

**որոշում** – 1. решение, 2. определение, 3. постановление – 1. decision, 2. defining, 3. act

մարտի որոշում – решение на бой – decision on the fighting

Մարտական խնդրի կատարման՝ հրամանատարի սահմանած կարգն ու եղանակները, ներառում է մարտի մտահղացումը, խնդրի հանձնարարումը գործին, փոխգործության հիմնական հարցերը, կառավարման կազմակերպման հիմունքները, հիմնական տեսակների ապահովման խնդիրները:

մեծանշանակ որոշում – տես *որոշում՝ ռազմավարական որոշում*

որոշման ընդունման բարձրություն – высота принятия решения – decision altitude, decision height

Վայրէջքի գոտու այն առավելագույն բարձրությունը, որը նախատեսված է երկրորդ վայրէջքամուտն սկսելու համար այն դեպքում, երբ օդաչուին չի հաջողվել հաստատել տեսողական կապ:

որոշման ընդունման կետ – точка принятия решения, момент принятия решения – decision point

Տարածության և ժամանակի մեջ մի կետ, որում պլանավորածի համապատասխան հրամանատարը պետք է որոշում կայացնի:

որոշման ընդունման պահ – տես *որոշում՝ որոշման ընդունման կետ*

որոշման ընդունում – принятие решения – decision-making

որոշումների ընդունմանն աջակցման համընդհանուր համակարգ – глобальная система поддержки принятия решений – Global Decision Support System

Օդային փոխադրումների հրամանատարությանը ենթակա օդափոխադրումային և օդալիցքավորումային միջոցների կառավարման համակարգ:

որոշումների ընդունմանն աջակցման ձևանուշ – шаблон поддержки принятия решения – decision support template

Հետախուզության և գործողությունների ժամանակացույց՝ հիմնված ռազմախաղի արդյունքների վրա, որում ներկայացվում են որոշումների կետերը, զորքերի տեղաշարժի և գործողության ընթացքի ժամկետները և այլ կարևոր տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են յուրային գործողության կոնկրետ ուղեգծի իրագործման համար:

ռազմավարական որոշում – стратегическое решение – strategic decision

ստրատեգիական որոշում – տես *որոշում՝ ռազմավարական որոշում*

տեխնակապաշտական որոշում – технократическое решение – technocratic decision

տեղադրության որոշում – определение места, определение местоположения – 1. location, spotting, 2. fix

տեղադրության որոշում ռադիոտեխնիկական միջոցներով – определение местоположения радиотехническими средствами – radio fix

տեղական իշխանության մարմինների որոշում – распоряжение местных органов власти – by-law

Որոշում, որը տեղական իշխանության մարմիններն ընդունում են ի զարգացումն ազգային օրենսդրության կամ տեղում դրա կիրառումն ապահովելու համար:

տեսակի որոշում – определение типа – identification

քաղաքական որոշում – политическое решение – political decision

**որսի իրավունք** – право на охоту – shooting

**որսում** – 1. перехват, перехватывание, 2. ловля, поимка – 1. interception, 2. catching

որսման կետ – 1. точка перехвата, 2. точка подключения подслушивающего устройства – intercept point

օդային նշանակետերի կալում շրջաբերական կապի օգտագործմամբ – перехват воздушных целей с использованием циркулярной связи – broadcast-controlled air interception

օդային նշանակետի որսում – перехват воздушной цели – air interception

օտարերկրյա ստուգիչ-չափիչ ապարատուրայի ազդանշանների որսում – перехват сигналов иностранной контрольно-измерительной аппаратуры – foreign instrumentation signals intelligence

## Չ (ՉԱ)

**չավարտել** – не завершить, не довести до конца – abandon

**չափ** – мера – measure

**չափանիշ** – критерий – criterion, measure  
Ղատողության, զնահատման, կարգաբերման չափ:

արդյունավետություն – արժեք չափանիշ – эффективность затрат, критерий эффективности – стоимость – cost-effectiveness criterion

Կառավարային որոշումների ընդունման համար խնդրի լուծման՝ նախագծի զնահատման առավել համապիտանի մեթոդ՝ գործիք:

բավարարության չափանիշ – критерий достаточности, критерий соответствия – adequacy

Չափանիշ, որն օգտագործվում է պլանավորվող օպերացիայի մասշտաբայնությունն ու մտահղացումը զնահատելու ժամանակ:

իրագործելիության չափանիշ – критерий осуществимости – feasibility

Նախատեսված է առաջադրված խնդիրների կատարման համար հատկացված ուժերի և միջոցների բավարարության որոշման համար:

համապատասխանության չափանիշ – տես *չափանիշ՝ բավարարության չափանիշ*

օպերացիայի ավարտման չափանիշներ – критерии прекращения операции – termination criteria

ԱՄՆ-ում. Նախագահի կամ Պաշտպանության քարտուղարի հաստատած չափանիշներ, որոնց պետք է բավարարի օպերացիայի ընթացիկ արդյունքը՝ այն դադարեցնելու համար:

**չափանմուշ** – эталон – standard

**չափառ** – տես *ցանկապատ*

**չափաքանոն** – линейка – scale, numerical scale

**չափման միավոր** – единица измерения – unit, measure

**չափս** – размер – measurement

**չափում** – 1. измерение, 2. замер, измерение – 1. measurement, 2. mansuration

1. Չափելը, մեծության արժեքի որոշում:  
2. Չափողականություն, չափանիություն, կոորդինատային առանցքների թիվը, այն պարամետրների թիվը, որոնք ներկայացնում են տվյալ իրի՝ առարկայի՝ երևույթի ևն համալիր չափը:

**չգաղտնիացված** – незасекреченный – unclassified

**չեզոք** – нейтральный – neutral

**չեզոքացում** – нейтрализация, приведение в состояние пассивности – neutralization

1. Որևէ առարկայի՝ երևույթի՝ պրոցեսի (գործընթացի) համալիր ազդեցության զրոյացումը՝ համակշռումը: 2. Որևէ հնարավոր ներգործիչ տարրի (զենք, զինամթերք, սպառնալիք ևն) բերումը անվտանգ վիճակի, գործարկման՝ ներգործման կանխումը:

**չեզոքություն** – нейтралитет – neutrality  
Չեզոք լինելը, չմիջամտելու պարտավորության ստանձնում, անկողմնապահություն:

չեզոքության սահմանակարգ – институт нейтралитета – institute of neutrality

չեզոքության վիճակ – состояние нейтральности – neutral state

զինված չեզոքություն – вооруженный нейтралитет – armed neutrality

Չեզոք պետությունների իրավունքը գենքի ուժով պաշտպանելու իրենց տարածքի անձեռնմխելիությունը՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

«Չեղենջեր» – «Челленджер» – “Challenger”  
Բրիտանական միջին տանկ:

**չենթարկվելը** – տես *անհնազանդություն*

**չենթարկում հրամանին** – неподчинение приказу – disobedience

**չզգուշացված** – տես *թաքստոց՝ թաքստոցից դուրս գտնվող*

**չզինված** – տես *անզեն*

**չզրահապատված** – տես *անզրահապատ*

**ՉԹՕ** – տես *օբյեկտ՝ չճանաչված թռչող օբյեկտ*

**չկանխատեսված պատահույթ** – непредвиденное событие – emergency

**չկառավարվող ական** – տես *ական՝ ինքնավար ական*

**չկարգավորվածություն** – տես *խառնաշփոթ*

**չհամաձայնվել** – տես *մերժել*

**չհարձակում** – ненападение – nonaggression

Ժամանակակից միջազգային իրավունքի սկզբունք, ըստ որի արգելվում է որևէ պետության կողմից ցանկացած քաղաքական, տնտեսական կամ ռազմավարական նկատառումներով մեկ այլ պետության դեմ պատերազմի սանձազերծումը կամ առաջինը զինված ուժի կիրառումը:

**չճառագայթող** – տես *պասիվ*

**չմիջամտություն** – невмешательство – noninterference

Ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկը, որով արգելվում է պետությունների և ժողովուրդների գործերին այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների ուղղակի կամ անուղղակի միջամտությունը:

«չոկ» – «чок» – choke

Հրացան, որի փողը ծայրամասում նեղանում է:

**չորսու** – տես *ծող*

**չպայթած** – невзорвавшийся, незорвавшийся – unexploded

**չպաշտպանված** – տես *թաքստոց՝ թաքստոցից դուրս գտնվող*

**չպլանավորված շարժում** – незапланированное движение – ad hoc movement

**չվացուցակ** – график (движения) – schedule

**չտարածում (զենքի)** – нераспространение – nonproliferation

**չուղեկցվող առևտրանավ** – տես *նավ՝ միակի նավ*

## Պ (ՊԵ)

**պակաս** – 1. нехватка, 2. տես *պակասուրդ* – 1. shortage, shortfall, 2. տես *պակասուրդ*

**պակասուրդ** – дефицит – 1. deficiency, 2. short supply

1. Վիճակ, երբ որևէ բանից ավելի քիչ կա, քան պետք է լինի կամ պահանջվում է, որ լինի: 2. Համարվում է, որ կա տվյալ իրի (առարկայի, նյութի ևն) պակասուրդ, երբ տրված ժամանակահատվածում առկա պաշարի և սպասվելիք մուտքերի ընդհանուր քանակն ավելի փոքր է, քան այդ նույն ժամանակամիջոցում ընդհանուր գնահատումային պահանջարկը:

զանգվածի պակասուրդ – дефект массы – mass defect

Խորհրդային սահմանմամբ. տվյալ իզոտոպի ատոմային միջուկի՝ զանգ-

վածի ատոմական միավորներով արտահայտված դադարի զանգվածի և տվյալ իզոտոպի զանգվածային թվի տարբերությունը : Արևմտյան սահմանամբ. տվյալ նուկլիդի միջուկը կազմող նուկլոնների դադարի զանգվածների գումարի և տվյալ նուկլիդի ատոմային միջուկի դադարի զանգվածի միջև տարբերությունը :

**պակտ** – пакт – pact

չհարձակման պակտ – пакт о ненападении – nonaggression pact

Միջազգային պայմանագիր (*սով. քաղաքական մեծ կարևորություն ունեցող*), որով կողմերը պարտավորվում են միմյանց դեմ ռազմական գործողություններ չվարել:

**պահ** – момент, миг – moment

բեկումնային պահ – критический момент – critical point

շրջադարձային պահ – տես *շրջադարձ` շրջադարձի կետ*

**պահաժամկետ** – տես *պահում` պահման ժամկետ*

**պահածոյացում** – консервирование, консервация – conservation

**պահակ** – 1. караульный, 2. сторож – 1. sentry, guard, 2. watchman

պատվո պահակ – почетный караул – guard of honor, honor guard

**պահակադիր** – разводящий – corporal of the guard

**պահակազորային** – 1. տես *պահակային*, 2. տես *պահակ 1*

պահակազորային ծառայություն – տես *պահակային` պահակային ծառայություն*

**պահակախմբի սենք** – տես *պահակատուն*

**պահակախցիկ** – տես *պահակատնակ*

**պահակակետ** – пост, караульный пост – post

մարտական պահակակետ – боевой пост – action station

պահակակետերի շրջայց – обход караула – tour

**պահակային** – 1. сторожевой, 2. караульный – 1. watch, 2. guard, sentry

պահակային դիտանոց – сторожевая вышка – watch-tower

պահակային ծառայություն – караульная служба – guard duty

Ջորջերի ծառայության բաղադրիչ, մարտական խնդրի կատարում պահակախմբերի կողմից:

**պահականավ** – сторожевой корабль – corvette

**պահականավախումբ** – эскорт конвоя – convoy escort

ժամանակավոր կազմավորում` բաղկացած պահպանվող նավերից և ծովով դրանց անվտանգ անցումն ապահովող մարտական նավերից:

ռազմական պահականավախումբ – военный конвой – military convoy

**պահակախումբ** – караул – guard

Ջինված ստորաբաժանում, որը նշանակվել է մարտական դրոշների, ռազմական ու պետական օբյեկտների պահպանման ու պաշտպանության, հաուպտվախտում (կարգապահական մեկուսարանում ևն) գտնվող անձանց պահպանման համար:

անձնական պահակախումբ – личная охрана – bodyguard

թևային պահակախումբ – боковое охранение – flank guard

մարտական պահակախումբ – боевое охранение – battle outposts

Մարտի ժամանակ յուրային զորքերի մարտական ու նախամարտական կարգեր` հակառակորդի հետախուզական ուժերի ներթափանցումը կանխելու, յուրային զորքերը հակառակորդի հանկարծակի հարձակումից զերծ պահելու նպատակով զորքերի պահպանման համար հատկացվող ուժեր ու միջոցներ:

պահակախմբի հերթափոխ – развод караулов – guard mount

Պահակային ծառայության անցնելուց առաջ պահակախմբերի ամենօրյա ստուգատես:

պահակախմբերի փոխում – смена караулов – relief of the guard

**պահակաշուն** – сторожевая собака – guard dog

**պահակատնակ** – караульная будка – sentry box

**պահակատուն** – караульное помещение – guardroom

**պահանջ** – требование – requisition

կարևոր պահանջ – важнейшее требование – critical requirement

հանդիպական պահանջ – встречное требование – offset

**պահանդորդ** – охранник – security guard

Պահակ, որևէ օբյեկտի (հիմնարկ, կազմակերպություն, անհատ) անվտանգությունը ապահովող, կարգուկանոն պահպանող զինված կամ անզեն անձ:

**պահանջագիր** – заявка – requisition, requirement

մարտական միջոցների կիրառման վերաբերյալ վաղորոք ներկայացվող պլանային պահանջագիր – заблаговременно представляемая плановая заявка на применение боевых средств – preplanned mission request

Նշանակետին օդային հարված հասցնելու վերաբերյալ պահանջագիր, որը ներկայացվում է նախքան առաջադրանքի պլանավորումը, որպեսզի հնարավոր լինի ավելի մանրամասնորեն պլանավորել այն:

**պահեստ** – склад – storehouse, storage, depot, stockpile, store

Նյութական արժեքներ (ապրանքներ, նյութեր, մթերքներ ևն) պահելու տեղ՝ շենք, սենյակ, սենք ևն:

դաշտային պահեստ – полевой склад – dump, supply dump

դեսանտային օպերացիայի պաշարների ծովամերձ պահեստ – береговой склад

запасов десантной операции – beach reserves

Դեսանտային օպերացիայի ժամանակ բոլոր տեսակների պաշարների կուտակում առափնյա բազայում:

միջանկյալ պահեստ – промежуточный склад – intermediate depot

պահեստի հարթակ – складская площадка – magazine area

պահեստի պահպանություն ու պաշտպանություն – охрана и оборона склада – stockpile security

պահեստներում եղած նյութական միջոցներ – имеющиеся на складах материальные средства – stock holding

պահեստում առկա քանակություն – наличность на складе – stock level

ստորերկրյա պահեստ – подземный склад – bunker

վառելիքի պահեստ – склад горючего – fuel storage

տեխնիկական պահեստ – технический склад – maintenance depot

**պահեստազոր** – резерв – reserve

Ռազմական տեսակետից ուսումնասիրված այն մարդկանց թվակազմը, որոնք գտնվում են զինվորական հաշվառման մեջ և նախանշանակված են զորահավաքի դեպքում ՋՈՒ-ի ծավալման և պատերազմի դեպքում դրանց համալրման համար:

առաջին հերթի պահեստազոր – резерв первой очереди – Ready Reserve

երկրորդ հերթի պահեստազոր – резерв второй очереди – Standby Reserve, inactive reserve

ԱՄՆ-ում. պահեստազոր, որ կազմված է ռազմաուսուցանված անձնակազմից, որն առնվազն 6 տարի ծառայել է կանոնավոր զորքերում կամ կազմակերպված պահեստազորում և հաշվառման մեջ է մնում մինչև 60 տարին լրանալը:

զինավարժ պահեստազոր – военнообученный резерв – military trained reserve

Այն կարգախմբի պահեստազորայինները, որոնք ունեն ռազմական զիտելիքներ ու զինվորական ծառայության



փորձ, պարբերաբար մասնակցում են հավաքների:

մարտապատրաստ պահեստազոր – боеготовый резерв – Ready Reserve

պահեստազորի զորային ռազմահավաք – учебные сборы запаса в войсках – active duty for training

պահեստազորի կարգախումբ – категория запаса, категория резерва – Reserve Component category

պահեստազորի մարդկային ռեսուրսների ուսումնավարժեցում – տես *ռեսուրս՝ մարդկային ռեսուրսների ռազմական ուսուցում*

պահեստազորի պատրաստում – подготовка личного состава резерва – inactive duty training

պահեստազորում գտնվելը – нахождение в резерве – inactive status

**պահեստազորային** – 1. резервист, 2. резервный – 1. reservist, 2. reserve

պահեստազորային բաղադրիչ – резервный компонент – Reserve Component

**պահեստամաս** – запасная часть – spare  
Որևէ մեքենայի սարքավորանքի՝ սարքի կն առանձին ստացված և սարքին վիճակում պահվող մաս, որը նախանշանակված է նույնատիպ, բայց փչացած մասը փոխարինելու համար:

պահեստամասերի գնում – закупка запасных частей, закупка запчастей – procurement of spares

**պահեստային** – 1. складской, запасной, 2. տես *վթարային* – 1. stocking, storage, alternate, 2. տես *վթարային*

- 1. Պահեստին վերաբերող՝ հատուկ:
- 2. Որպես փոխարինող պատրաստված՝ պահվող, հիմնականի՝ գործարկվողի հետ միաժամանակ գոյություն ունեցող: 3. Վթարի կամ այլ արտակարգ իրադրության համար նախատեսված:

պահեստային համար – տես *գույքահամար*

պահեստային մասերի, գործիքների ու պիտույքների լրակազմ – комплект запасных

частей, инструментов и принадлежностей – maintenance kit

պահեստային շրջան – резервный район – survival area

Ծածուկ տեղ, որտեղ զորքը կարող է հանգրվանել, երբ պատերազմը դառնում է անխուսափելի, պատերազմական ժամանակի տեղաբաշխման վայր:

պահեստային սպասարկում – складское обслуживание – stock support

**պահեստավորում** – резервирование – reserve

պահեստավորման հարթակ – площадка для складирования – hard stand

Բաց բնահողային հարթակ՝ տեխնիկայի պահման համար պատրաստված մակերևույթով:

**պահ մտնել** – притаиться – lurk

**պահոց** – տես *շտեմարան*

անոթազուրկ հեղուկ վառելիքի պահոց – хранилище для бестарного топлива – bulk storage

պայթուցիկ զինամթերքի և թունավոր նյութերի բաց պահոց – открытое хранилище боеприпасов и токсичных веществ – ammunition and toxic material open space

**պահպանագիծ** – кордон – cordon

**պահպանազգեստ** – տես *սկաֆանդր 1*

**պահպանախումբ** – конвой – convoy, escort

Զինվորական ստորաբաժանում (զինախումբ, առանձին զինծառայող), որը նշանակված է ուղեկցելու և պաշտպանելու փոխադրամիջոցներ, ռազմագերիների, ինչպես նաև հետաքննության տակ գտնվող կամ դատապարտված զինծառայողների, կարգապահական կարգով կալանքի տակ գտնվող շարքայինների:

շարայան պահպանախումբ – охранение конвоя – convoy escort

Մեքենաների խմբին ուղեկցող մեքենաների պահակախումբ:

**պահպանական** – տես *պաշտպանիչ*

պահպանական ազդասարք – охранныя сигнализация, прибор тревожной сигнализации – intruder alarm

**պահպանաճուլկի** – предохранительная чека – arming pin, safety pin

**պահպանանավ** – корабль охранения – guard-ship

**պահպանանյութ** – консервант – preservatives

Հավելանյութ, որի ավելացմամբ ապահովվում է տվյալ իրի, առարկայի, սննդամթերքի ևն երկարակեցությունը:

**պահպանաջոկատ** – 1. охранение, охрана, 2. охранение, застава – 1. guard, 2. combat security forces, outpost

1. Ուղղված և անապահով ստորաբաժանում՝ ջոկատ, որին հանձնարարված է որևէ օբյեկտի պաշտպանություն: 2. Ուժեր և միջոցներ, որոնց հանձնարարված է զորքերի պահպանության խնդրի կատարումը, ըստ պահպանության տեսակների կարող է լինել մարտական, երթային, պահակային:

առաջավոր երթային պահպանաջոկատ – головная походная застава – advance party

Երթային պահպանության մարմին, որն ուղարկվում է գլխավոր ուժերի անխափան շարժումն ապահովելու, պահպանվող զորքերի վրա հակառակորդի հանկարծակի հարձակումը կանխելու, դրանց մեջ նրա հետախուզության ներթափանցմանը խոչընդոտելու և յուրային զորքի ծավալման ու մարտի մեջ մտնելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

առափնյա պահպանաջոկատ – береговая охрана – coast guard

երթային պահպանաջոկատ – походное охранение – march security

թևային երթային պահպանաջոկատ – боковая походная застава, БПЗ – flank guard

Երթի ժամանակ զորքի երթային պահպանման մարմին, սովորաբար՝ ուժեղացված մոտոհրաձգային (տանկային) դասակ, երբեմն՝ վաշտ: Տեղաբաշխվում է առաջապահ ջոկատի կամ ան-

միջականորեն հիմնական ուժերի որևէ թևում կամ երկուսում էլ՝ հակառակորդի հանկարծակի հարձակումից զերծ պահելու կամ նրա վրագետնյա հետախուզության ներթափանցումից հիմնական ուժերի պաշտպանության նպատակով:

մարտական պահպանաջոկատ – боевое охранение – battle outposts

Կազմված է. պաշտպանության ժամանակ՝ 1-ին շարակարգի գումարտակաների կազմից այն հատվածներում, որտեղ առաջավոր դիրքեր չեն սարքավորվում, հարձակման (հակահարձակման) ժամանակ՝ երբ զորամասերը (ստորաբաժանումները) գործում են հիմնական ուժերից անջատ, հակառակորդի հետ անմիջական շփումը կորցնելու դեպքում, գիշերը ևն: Հակառակորդի թիկունքում օդադեսանտային զորքերի զորամասերի (ստորաբաժանումների) գործելու ժամանակ նրանց տեղաբաշխման շրջանները պահպանում են մարտական պահպանաջոկատները:

պահակային պահպանաջոկատ – сторожевое охранение, сторожевая застава – picket, bivouac outpost

պայթեցման ենթակա օբյեկտի պահպանաջոկատ – охрана объекта, подлежащего разрушению – demolition guard

**պահպանել** – сохранять – 1. save, 2. տես *պաշտպանել*

**պահպանիչ ճուլկի** – տես *պահպանաճուլկի*

**պահպանվածություն** – сохранность – state of preservation

**պահպանություն** – охранение, охрана – outpost, combat security

Չորքերի մարտական ապահովման տեսակ, որն իրագործվում է յուրային զորքերի հիմնական ուժերի վրա հակառակորդի հանկարծակի հարձակումը և յուրային դիրքեր նրա հետախուզության թափանցումը կանխելու, յուրային զորքերի ծավալման ու մարտի մեջ մտնելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով:

մարտական պահպանություն – боевое охранение – battle outposts

Պահպանության տեսակ, որի էությունը յուրային հիմնական ուժերի վրա հակառակորդի հարձակման (կամ նրա հետախուզադիվերսիոն խմբերի ներթափանցման) կանխումն է:

երթային պահպանություն – походное охранение – march security, march protection

Պահպանություն, որն իրագործվում է յուրային զորքերի շարժման՝ երթի ժամանակ:

հակասուզանավային պահպանություն – противолодочное охранение, противолодочная завеса – antisubmarine screen

պահակային պահպանություն – сторожевое охранение, сторожевая застава – bivouac outpost

Ջորքերի պահպանության տեսակ, որը ձեռնարկվում է այն դեպքում, երբ յուրային զորքը մնում է տեղում՝ հակառակորդի վրագետնյա հնարավոր հարձակման սպառնալիքի առկայությամբ:

շարայան պահպանություն – охрана колонны – convoy protection

**պահպանում** – 1. сохранение, 2. соблюдение, 3. տես *պահպանություն*, 4. տես *կատարում 2* – 1. conservation, 2. observance, 3. տես *պահպանություն*, 4. տես *կատարում 2*

1. Մարտական ապահովման տեսակ, միջոցառումների համալիր, որոնք իրագործվում են բոլոր տեսակի մարտերում, տեղաշարժման և տեղում դիրքավորման ժամանակ՝ հակառակորդի հանկարծակի ցամաքային հարձակումից զերծ մնալու, գլխավոր ուժերին նրա հետախուզության մոտեցումը կասեցնելու և այլ նպատակներով: 2. Անհրաժեշտ՝ պահանջվող վիճակը՝ դրությունը պահելը, հաստատված պահանջները կատարելը, չխախտելը:

գինվորական, կարևոր պետական և հատուկ օբյեկտների պահպանում – охрана военных, важных государственных и специальных объектов – protection of military, important state and special sites

հասարակական կարգի պահպանում – 1. охрана общественного порядка, 2. соблюдение общественного порядка, поддержание общественного порядка – maintenance of public order

հասարակական կարգուկանոնի պահպանում – տես *պահպանում՝ հասարակական կարգի պահպանում*

պահպանման ժամկետ – срок хранения – shelf life

պահպանման ծախսեր – расходы на содержание – maintenance costs

պետական սահմանի պահպանում – охрана государственной границы – border security

օբյեկտների պահպանում – охрана объектов – protective security, site security

օդային տարածքի պահպանում – охрана воздушного пространства – air space protection

ֆիզիկական անձանց պահպանում – охрана физических лиц – protective security

**պահում** – 1. хранение, 2. удержание – 1. custody, 2. detention

պահման ժամկետ – срок сохранности, срок хранения – storage life

պահման միավոր – единица хранения – unit of issue

Պահեստավորման ժամանակ իրերի չափման միավոր:

պահման տեղ – место хранения – storage facility

**պահունակ** – 1. магазин (винтовки, патронов), 2. патронная обойма – 1. magazine, 2. clip

թմբկաձև պահունակ – барабанный магазин – drum

**պահուստ** – резерв, запас – reserve, stock

Անհրաժեշտության դեպքում օգտագործելու համար պահված նյութական միջոցներ:

գերագույն գլխավոր հրամանատարության պահուստ – резерв Верховного глав-

нокомандования – Supreme High Command Reserve

ռազմական պահուստ – военный резерв – military reserve

օպերատիվ պահուստ – оперативный резерв – operational reserve

Կոնկրետ օպերացիաներին աջակցման համար օպերատիվ մակարդակով ստեղծված ռազմատեխնիկական ու նյութատեխնիկական պաշարներ:

**պահուստային** – резервный, запасной – reserve

1. Պահուստին առնչվող՝ հատուկ:
2. Պահուստում գտնվող, պահուստին վերագրված:

պահուստային երթուղի – резервный маршрут, запасной маршрут – reserved route

պահուստային թռչքուղի – запасная взлетно-посадочная полоса – emergency runway

պահուստային խարսխակայան – запасная якорная стоянка – emergency anchorage

Նավերի՝ արտակարգ իրավիճակներին համար նախատեսված կայանատեղի:

պահուստային ճանապարհ – запасная дорога – emergency road

պահուստային մարտապատրաստ ուժեր – резервные боеготовые силы – residual forces

**պահուստավորում** – резервирование – reservation, redundancy

Պահուստի ստեղծում:

**պահուց** – 1. резерв, 2. резервный – reserve

ՁՈՒ-ի տարբեր տեսակների կազմավորումներ՝ զորք, որը նախատեսված է պատերազմի (ռազմարշավի), օպերացիայի, մարտի ընթացքում ծագող նոր խնդիրները լուծելու համար. օպերատիվ դասավորության՝ մարտակարգի տարր, որը նախանշանակված է հանկարծակի ծագող մարտական խնդիրների լուծման համար:

մարտավարական պահուց – тактический резерв – tactical reserve

պահուց զորք (ուժեր) – войска (силы) резерва – reserves

Օպերատիվ դասավորության (մարտակարգի) տարր, որը նախանշանակված է օպերացիայի ընթացքում հանկարծակի ծագող խնդիրների լուծման համար:

ռազմական պահուց – военный резерв – military reserve

օպերատիվ-մարտավարական պահուց – оперативно-тактический резерв – tactical reserve

Տարաշարժուն ուժեր, որոնք գտնվում են հրամանատարի ենթակայության տակ և նախատեսված են հետագա գործողություններին մասնակցելու համար:

օպերատիվ պահուց – оперативный резерв – operational reserve

Կոնկրետ օպերացիաներին օպերատիվ մակարդակով աջակցման նպատակով առանձնացված զորքեր, ՍՈՏ, որոնք նախատեսված են հանկարծակիորեն ծագող մարտական խնդիրների լուծման համար:

**պայթափաթեթ** – взрыв-пакет – thunderflash

Պայթուցիկ սարք, որն օգտագործվում է ուսումնական նպատակներով՝ պայթյուն նմանարկելու համար:

**պայթիչային խոռոչ** – очко взрывателя – fuze cavity

Խոռոչ՝ պայթուցիչը տեղադրելու համար:

**պայթեցնել** – взрывать – blow up, set off

**պայթեցնող պարագաների լրակազմ** – комплект подрывного имущества – demolition kit

**պայթեցում** – взрывание, подрыв – firing

պայթեցմանը պատրաստ – готовый к взрыву – armed

պայթեցման օբյեկտ – объект для разрушения – demolition target

պայթեցումների զծով մասնագետ – специалист-подрывник – demolitions expert

պայթեցումների հաջորդականության կարգավորման սխեմա – схема регулирова-

ния последовательности подрывов – sequence circuit

**պայթյուն** – 1. взрыв, 2. разрыв – 1. explosion, blast, 2. burst

Սահմանափակ ծավալում էներգիայի շատ արագ (մի քանի մկվրկ-ի ընթացքում) անջատման պրոցես:

անհետք ստորերկրյա պայթյուն – камуфлет – camouflet

Ստորերկրյա պայթյուն, որը երկրի մակերևույթի վրա չի առաջացնում որևէ հետք՝ ձագարափոս, ձեղք, ճաք ևն:

ծավալային պայթյուն – объемный взрыв – thermobaric explosion

Այրվող նյութերի և օքսիդիչի՝ սահմանափակ (կիսասահմանափակ) տարածություն զբաղեցնող կամ շրջակա միջավայրում ազատ ամպի տեսք ունեցող գազային կամ օդակախության խառնուրդի պայթյուն:

ձայթյունային պայթյուն – детонационный взрыв – sympathetic detonation

մակերևութային միջուկային պայթյուն – поверхностный взрыв ядерного оружия – nuclear surface burst

Միջուկային պայթյուն անմիջականորեն մակերևույթին կամ դրան շատ մոտ:

միջուկային պայթյունի արգասիքներ – продукты ядерного взрыва – nuclear weapon debris

միջուկային պայթյունի էպիկենտրոնի շեղում – отклонение эпицентра ядерного взрыва – offset distance

Պայթյունի ցանկալի (նախորոշված) կենտրոնից իրական կենտրոնի հեռավորությունը:

միջուկային պայթյունի հարվածային ալիք – ударная волна ядерного взрыва – atomic blast, nuclear blast wave

միջուկային պայթյունի հզորություն – мощность ядерного взрыва – nuclear yield

միջուկային պայթյունների հայտնաբերման և իրազեկման համակարգ – система обнаружения и оповещения о ядерных взрывах – nuclear detonation, detection and reporting system

միջուկային պայթյուն ցածր բարձրությամբ – ядерный взрыв на низкой высоте – low airburst

միջուկային օդային պայթյուն – воздушный ядерный взрыв – nuclear airburst

Միջուկային զենքի պայթյուն օդում՝ մինչև 10 կմ բարձրության վրա, այնպես, որ լուսավոր շրջանը չի հասնում մակերևույթին:

մթնոլորտային միջուկային պայթյուն – атмосферный ядерный взрыв – high altitude burst

Վերգետնյա (Երկրի մակերևույթից որոշակի բարձրության վրա) միջուկային պայթյուն:

պայթյունի ալիք – взрывная волна – blast wave, blast

պայթյունի ալիքի ճակատային ճնշում – давление во фронте взрывной волны – drag loading

պայթյունի ալիքների դիֆրակցիա – дифракция взрывных волн – blast wave diffraction

պայթյունի անվտանգ բարձրություն – безопасная высота взрыва – safe burst height

պայթյունի բարձրություն – высота разрыва – height of burst

պայթյունի հարուցման միջոց – տես *լիցք՝ լիցքի բոցավառման միջոց*

պայթյունի հզորություն – мощность взрыва – 1. explosive power, power of explosion, 2. yield (միջուկային)

Լինում է երկու տեսակի՝ բացարձակ և հարաբերական (բերված), առաջինն արտահայտվում է պայթյունի էներգիական ցուցանիշներով, երկրորդը՝ առաջացրած ավերածությունների աստիճանով:

պայթյունի վտանգի հավանականություն – вероятность опасности взрыва – explosive hazard incident

Տվյալ վայրում չօգտագործված կամ վնասված պայթուցիկի հավանական առկայություն:

պայթյունի տեսակ – тип взрыва – type of burst

Կարող է լինել՝ օդային, բարձրության վրա, միջուկային օդային, միջուկային վրազետնյա, միջուկային ստորգետնյա, միջուկային ստորջրյա, ցածր օդային:

պայթյունի օպտիմալ բարձրություն – оптимальная высота взрыва – optimum height of burst

պայթյունների փունջ – веер разрывов – sheaf of bursts

Պայթյունների հովհար. մարտկոցային (դասակային) կրակահերթի կամ համազարկի արկերի (ականների) պայթյունների համախումբը՝ ստացված փողերի բարձրացման միևնույն անկյան դեպքում:

ստորերկրյա միջուկային պայթյուն – подземный ядерный взрыв – nuclear underground burst

Ստորգետնյա էպիկենտրոնով միջուկային պայթյուն:

ստորջրյա միջուկային պայթյուն – подводный ядерный взрыв – nuclear underwater burst

օդային պայթյուն – воздушный взрыв – airburst

Ռումբի կամ արկի վերգետնյա պայթյուն:

**պայթյունադիմացկուն միջնորմ** – взрывопрочная перегородка, взрывозащитная стена – blastwall

**պայթյունապաշտպան պատ** – տես *պայթյունադիմացկուն միջնորմ*

**պայթյունավտանգ** – взрывоопасный – explosive, processing

Առարկա՝ իր՝ նյութ, ինչպես նաև իրադրություն՝ իրավիճակ, որն ունակ է և հավանական է, որ պայթի:

պայթյունավտանգ առարկա – взрывоопасный предмет – explosive hazard

պայթյունավտանգ առարկայի վնասագերծման ընթացակարգ – процедура обезвреживания взрывоопасного предмета – explosive ordnance disposal procedures, render safe procedures

Չպայթեցված զինամթերքի չեզոքացում, որը ներառում է մի քանի քայլ՝ մոտե-

ցում, որոշարկում, անվտանգության ապահովում, մասնատում, վերջնական ոչնչացում:

պայթյունավտանգ առարկաների վերջնական վնասագերծման ընթացակարգ – процедура окончательного обезвреживания взрывоопасных предметов – final disposal procedures

պայթյունավտանգ առարկաների վնասագերծման հետ կապված միջադեպ – происшествие при обезвреживании взрывоопасных предметов – explosive ordnance disposal incident

Իրադարձություն՝ պատահար, որը տեղի է ունեցել պայթյունիկ առարկան վնասագերծելու՝ չեզոքացնելու ժամանակ:

պայթյունավտանգ առարկաների վնասագերծման ստորաբաժանում – подразделение по обезвреживанию взрывоопасных предметов – explosive ordnance disposal unit

**պայթյունավտանգություն** – взрывоопасность – 1. explosion hazard, 2. explosion risk

Պայթելու հավանականություն ունենալու հատկություն:

**պայթում օդում** – разрыв в воздухе – air burst

**պայթուցիկ** – 1. взрывчатое вещество, взрывчатка, 2. взрывчатый, взрывной, – explosive

Քիմիական միացություններ կամ խառնուրդներ, որոնք ունակ են պայթելու արտաքին ազդեցության հետևանքով:

թերթային պայթուցիկ – листовое взрывчатое вещество – sheet explosive

իներտ պայթուցիկ – инертное взрывчатое вещество – inert explosive, insensitive explosive

ծավալային պայթուցիկ – տես *զինամթերք՝ ծավալային պայթյունի զինամթերք*

հարուցիչ պայթուցիկ – инициирующее взрывчатое вещество – detonator

հեղուկ պայթուցիկ – жидкое взрывчатое вещество – liquid explosive

պայթուցիկ սարք – взрывное устройство – charge



պլաստիկ պայթուցիկ – пластичное взрывчатое вещество, пластиковая бомба, пластит – plastic explosive

վառելիքաօդային պայթուցիկ խառնուրդ – топливо-воздушная взрывная смесь – fuel-air explosive

փշրտող պայթուցիկ – бризантное взрывчатое вещество – high explosive

**պայթուցիչ** – взрыватель – exploder, initiation system, fuse

ակնթարթային գործողությամբ պայթուցիչ – взрыватель мгновенного действия – instantaneous fuse

գործարկման կարգավորվող ժամանակով պայթուցիչ – взрыватель с регулируемым временем – variable-time fuse

դանդաղեցված գործողությամբ պայթուցիչ – взрыватель замедленного действия, взрыватель с задержкой – delayed-action fuse, time fuse

էլեկտրական պայթուցիչ սարք – электрическое взрывное устройство, электро-взрыватель – electro-explosive device

ժամանակային հապաղմամբ պայթուցիչ – взрыватель с временной задержкой, детонатор замедленного действия – time-delay detonator, delay-action exploder  
Զինամթերքի գործարկման համար նախատեսված ավտոմատ սարքվածք, որն ունի ժամանակային շտկման հընարավորություն և կարող է գործարկվել գործարկիչ ազդակի առաջացումից որոշակի ժամանակ անց:

հապաղմամբ պայթուցիչ – տես *պայթուցիչ` դանդաղեցված գործողությամբ պայթուցիչ*

հատակային պայթուցիչ – донный взрыватель, донная трубка – base fuze  
Պայթուցիչ, որը տեղակայված է արկի կամ ռումբի հիմքում:

հարվածային պայթուցիչ – ударный взрыватель – impact action fuze, direct action fuze

Պայթուցիչ, որը գործարկվում է նշանակետին անմիջականորեն հարվածելու դեպքում:

պայթուցիչի հեռացում – удаление взрывателя – defuse

Ռումբի վնասազերծում` պայթուցիչի հեռացմամբ:

պայթուցիչի ոչնչացում – уничтожение взрывателя – fuze destruction

Պայթեցում այլ պայթուցիկի կամ տաքացման միջոցով, կատարվում է այն դեպքերում, երբ վնասազերծումը հնարավոր չէ (կախված իրադրությունից և զինամթերքի տեսակից):

պաշտպանիչ փականով պայթուցիչ – взрыватель с предохранительным ставнем – shuttered fuze

ոչ հպումային պայթուցիչ – неконтактный взрыватель – proximity fuze

փողում պայթուցիչ պահպանակով պայթուցիչ – взрыватель с предохранителем от взрыва в стволе – boresafe fuze

**պայթուցիչի զարկան** – ударник взрывателя – firing pin

**պայման** – условие – condition

բարենպաստ պայմաններ – благоприятные условия, благоприятная обстановка – permissive environment

գործիքային օդերևութաբանական պայմաններ – приборные метеоусловия – instrument meteorological conditions

սանիտարական պայմանների բարելավում – улучшение санитарных условий – sanitation

սանիտարահիգիենիկ պայմաններ – санитарно-гигиенические условия – sanitary and hygiene conditions

Գործունեության (աշխատանքի, ծառայության ևն) կամ բնակման պայմաններ, որոնք ներառում են տեխնիկական միջոցների ու սարքավորանքի վիճակը, լուսավորվածության աստիճանը, սենյակների (սենքերի) փոշոտվածությունն ու օդափոխելիությունը, օդի ջերմաստիճանն ու խոնավությունը, աղմուկների, տատանումների ևն մակարդակը, անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցների առկայությունն ու վիճակը, ընդհանուր մաքրության աստիճանը ևն:



տեխնիկական պայմաններ – технические условия – specification, technical specification

Փաստաթուղթ, որում սահմանված են այն բոլոր պահանջները, որոնց պետք է բավարարի կոնկրետ արտադրանքը, նյութը և կամ դրանց խումբը, ինչպես նաև նկարագրված են այն ընթացակարգերը, որոնց միջոցով պետք է պարզվի, թե բավարարված են արդյոք այդ պահանջները:

**պայմանաբառ** – 1. տես *նշանաբան* 3, 2. տես *կողաբառ*

**պայմանագիր** – 1. договор, 2. контракт – 1. treaty, 2. contract

Գրավոր համաձայնություն՝ կողմերի փոխադարձ պարտավորություններով:

անժամկետ պայմանագիր – бессрочный договор – treaty of unlimited duration, open-ended contract

արտաքին մատակարարի հետ պայմանագրի կնքում – заключение договора с внешним поставщиком – outsourcing

բազմակողմ պայմանագիր – многосторонний договор – multilateral treaty, multipartite treaty

բազմափուլ պայմանագիր – многоэтапный контракт – multiphase contract

բաց պայմանագիր – открытый договор – open treaty

դաշնային պայմանագիր – союзный договор – treaty of alliance, union treaty

երկկողմ պայմանագիր – двусторонний договор – bilateral treaty

ժամկետային պայմանագիր – срочный договор – terminal treaty

«ծախսեր գումարած պարգևատրում» պայմանագիր – контракт «затраты плюс премиальные» – cost-plus award fee contract

Պայմանագիր, ըստ որի՝ պատվիրատուն պարտավորվում է վճարել ծախսերի դիմաց և պարգևատրություն, որի չափը որոշում է ըստ աշխատանքի արդյունքներից իր բավարարվածության աստիճանի կամ փորձագիտական գնահատականի:

ծախսերի հատուցում նախատեսող պայմանագիր – контракт с возмещением расходов – cost-type contract

կարճաժամկետ պայմանագիր – краткосрочный договор – short-term treaty

կոմունալ ծառայությունների մատուցման պայմանագիր – договор на оказание коммунальных услуг – utility contract

համակարգերի սպասարկման պայմանագիր – контракт на обслуживание систем – systems support contract

հաշտության պայմանագիր – мирный договор – peace treaty

Հյուսիսատլանտյան պայմանագիր – Североатлантический договор – North Atlantic Treaty

1949 թ. ապրիլի 4-ին (ՍՄՆ) արևմտաեվրոպական ու հյուսիսամերիկյան պետությունների կնքած միջազգային պայմանագիր, որը դարձավ ՆԱՏՕ-ի ստեղծման հիմնադիր փաստաթուղթ:

միջազգային պայմանագիր – международный договор – international agreement, international treaty

Միջուկային զենքի չտարածման պայմանագիր – Договор о нераспространении ядерного оружия, ДНЯО – Treaty on the Non-Proliferation of Nuclear Weapons, NPT

պայմանագիր առանց գնումների ծավալների նշման – договор без оговоренных объемов закупок – open-end contract

պայմանագիր՝ գնի հաստատմամբ – контракт с фиксированной ценой – fixed price contract

Հաստատված կամ փոփոխելի գնով ապրանքափոխանակության պայմանագիր:

պայմանագրերի գծով պաշտոնյա – специалист по контрактам, военный закупщик – contracting officer

պայմանագրերի գծով պաշտոնյայի (սպալի) ներկայացուցիչ – представитель военного закупщика – contracting officer representative

Պայմանագրերի կնքման կոմիտե – Комитет по заключению контрактов – Contract Awards Committee

պայմանագրերի կնքման և գնումների համար լիազորված անձ – уполномоченный по заключению контрактов и закупкам – procuring contracting officer

պայմանագրի դենոնսացում – денонсация договора – denunciation of a treaty

պայմանագրի ընդհատում – приостановление контракта – contract termination

Պաշտպանական գնումների ոլորտում. հիմնական պայմանագրի կամ դրա անհատական պայմանագրերի հիման վրա կատարվող աշխատանքի մասնակի կամ լրիվ դադարեցում կամ հետաձգում ի շահ կառավարության կամ նրա պահանջով, կամ կատարողի կողմից պայմանագրի պահանջները չկատարելու պատճառով:

պայմանագրի կատարման վերահսկում – контроль за выполнением контракта – contract administration

պայմանագրի կնքում – 1. заключение договора, 2. заключение контракта – 1. conclusion of a treaty, 2. conclusion of a contract, contracting

պայմանագրի վավերացում – ратификация договора – ratification of a treaty

պատվերի հիմնական պայմանագիր – базовое соглашение о заказе – basic ordering agreement, BOA

Գնումների մրցույթից հետո կնքվող այն ընդհանուր պայմանագիրը, որը նախորդում է անհատական (յուրաքանչյուր արտադրանքի վերաբերյալ) պայմանագրերին:

ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման պայմանագիր – договор о сокращении стратегических наступательных вооружений – strategic arms reduction treaty

Վաշինգտոնի պայմանագրի 5-րդ հոդվածի կիրառում – применение статьи 5 Вашингтонского договора – invocation of Article 5

Վաշինգտոնի 1949 թ., կամ Հյուսիսատլանտյան, պայմանագիրը, որով ստեղծվեց ՆԱՏՕ-ն, իր 5-րդ հոդվածով նա-

խատեսում է ՆԱՏՕ-ի հիմնական գործունեությունը՝ նպատակաուղղված իր անդամ պետությունների անվտանգության և անկախության պաշտպանության ապահովմանը քաղաքական, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ռազմական միջոցներով:

տարածաշրջանային պայմանագիր – региональный договор – regional treaty

ունիվերսալ պայմանագիր – универсальный договор – universal treaty

փակ պայմանագիր – закрытый договор – closed treaty, restricted treaty

**պայմանագրային** – договорный – conventional, negotiated, contract, contractual

1. Պայմանագրին վերաբերող՝ հատուկ: 2. Պայմանագրով սահմանվող՝ կարգավորվող:

պայմանագրային հարաբերություններ – договорные отношения; отношения, вытекающие из договора – 1. privity of contract, contractual relations, 2. treaty of relations

Իրավական հարաբերություններ, որոնք ձևավորվում են պայմանագրի երկու կողմերի միջև:

պայմանագրային պարտավորություններ – договорные обязательства – treaty obligations, contract commitments

**պայմանական** – условный – conventional

1. Պայմանավորվածությամբ սահմանված՝ որոշված՝ ընդունված, նախապես պայմանավորվելով ստեղծված՝ գործածվող՝ օգտագործվող: 2. Որոշ պայմանի տակ դրված, որոշակի պայմանով՝ հանգամանքներով պայմանավորված: 3. Որոշ պայմանավորվածությամբ որևէ բան ներկայացնող՝ որևէ բանի փոխարինող:

պայմանական անվանում (փաստաթղթի, սարքի) – условное обозначение – short title

պայմանական գործնաս – условная часть – notional unit

Պլանավորման ժամանակ օգտագործվող հասկացություն:

պայմանական նախադրույթ – условное допущение – assumption

Ընթացիկ վիճակի մասին վարկած կամ իրադարձությունների ապագա զարգացման մասին կանխավարկած, որոնք, ապացուցում չունենալով հանդերձ, կարող են ճիշտ լինել, և որոնք անհրաժեշտ են հրամանատարին՝ իր գործողությունների պլանավորման ժամանակ գնահատումները «եթե-ապա» սկզբունքով ավարտին հասցնելու և գործողությունների օպտիմալ սցենար մշակելու համար:

պայմանական նշագրում – условное обозначение – conventional sign

պայմանական պատասխան – отзыв – reply

Նշանաբանին տրվող պատասխան:

պայմանական պարտավորություններ – условные обязательства – contingent liabilities

**պայմանականչ** – տես *ռադիոկանչ*

ընդհանուր պայմանականչ – общий позывной, неидентифицированный позывной – indefinite call sign

Պայմանականչ, որը ներկայացնում է ոչ թե որևէ կոնկրետ օդակ, հրամանատարություն, ղեկավար մարմին, գործակալություն կամ ստորաբաժանում, այլ դրանցից ցանկացածին կամ դրանց որևէ խումբ:

կոլեկտիվ պայմանականչ – коллективный позывной – collective call sign

Պայմանականչ, որը տրվում է երկու կամ ավելի հրամանատարության, զորամասի ևն, ընդամին այն ներառում է ինչպես դրանց հրամանատարին, այնպես էլ նրան ենթակա հրամանատարներին:

մարտավարական պայմանականչ – тактический позывной сигнал – tactical call sign

Պայմանականչ, որը պատկանում՝ տրրված է մարտավարական մակարդակի հրամանատարին կամ մարտավարական կապի միջոցին:

միջազգային պայմանականչ – международные позывные – international call sign, signal letters

ռադիոցանցի պայմանականչ – позывной сети, позывной сигнал радиосети – net call sign

տակտիկական պայմանականչ – տես *պայմանականչ՝ մարտավարական պայմանականչ*

**պայմանանշան** – условный знак – 1. high sign, 2. convention

**պայմանավորվածություն** – договоренность – arrangement

Փոխադարձ համաձայնություն՝ կարևոր հարցերում կողմերի բարձր աստիճանի պատասխանատվությամբ:

**պայուսակ** – сумка – bag

դաշտային պայուսակ – полевая сумка – map carrier

**պայքար** – борьба – struggle

հակաականային պայքարի հարձակողական միջոցներ – наступательные средства противоминной борьбы – offensive mine countermeasures

ոչ ավերիչ ռադիոէլեկտրոնային պայքար – радиоэлектронная борьба неразрушительного характера – nondestructive electronic warfare

Մարտական պայմաններում հակառակորդի կապի և էլեկտրոնային սարքերի աշխատանքի խաթարման նպատակով էլեկտրոնային միջոցների կիրառում:

պայքար ակուստիկական միջոցների դեմ – борьба с акустическими средствами – acoustic warfare

պայքար ահաբեկչության դեմ – борьба против терроризма – combating terrorism

պայքար աղտոտվածության դեմ – борьба с заражением – contamination control

պայքար անօրինական զինված կազմավորումների դեմ – տես *գործողություն՝ գործողություններ հակակառավարական զինված կազմավորումների դեմ*

պայքար զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ – борьба против распространения оружия массового уничтожения – counterproliferation

պայքար թմրաբիզնեսի դեմ – борьба против наркобизнеса – counterdrug

պայքար քայքայիչ գործունեության դեմ – борьба с подрывной деятельностью – countersubversion

պայքար օդային հարձակման միջոցների դեմ – տես *օպերացիա` հակաօդային օպերացիա*

**պանթյուրքականություն** – пантюркизм – Pan-Turkism

Գաղափարախոսություն և քաղաքականություն` հիմնված այն գաղափարի վրա, թե բոլոր թյուրքախոս ժողովուրդները միևնույն ազգի են և պետք է միավորվեն Բալկաններից մինչև Սիբիր սփռվող մեկ պետության` «Մեծ Թուրանի» կազմում:

**պանիսլամականություն** – панисламизм – Pan-Islamism

Կրոնաքաղաքական գաղափարախոսություն` հիմնված այն պատկերացումների վրա, թե ամբողջ աշխարհի մահմեդականները միասնական են և պետք է միավորվեն մեկ պետությունում:

**պաշար** – запас – stock, store, supply  
Որևէ բանի առկա քանակություն` կուտակված ապագա ծախսման համար կամ որևէ այլ նպատակով:

անձեռնմխելի պաշար – неприкосновенный запас – iron ration, reserve stock

Պարենի, վառելիքի, զինամթերքի ևն պաշար, որ հատուկ կուտակվել և պահվում է արտակարգ իրավիճակներում օգտագործելու համար:

ընդհանուր պաշարներ – общие запасы – common supplies

խաղաղ ժամանակվա օպերատիվ պաշարներ – оперативные запасы мирного времени – peacetime operating stocks

Առկա միջոցներ` խաղաղ ժամանակ ամենօրյա պահանջները բավարարելու համար:

կրոփի վթարային պաշար – носимый аварийный запас, НАЗ – survival kit

հաստատված նորմերը գերազանցող զինամթերքի և ռազմական տեխնիկայի պաշարներ – запасы боеприпасов и военной техники, превышающие установленные нормы – surplus munitions

հատուկ իրավիճակի համար նախատեսված նյութական միջոցների պաշար – запас материальных средств для особой обстановки – contingency retention stock

հիմնական պաշար – базовый запас – basic stocks

Հաստատված ժամանակահատվածում օպերատիվ պլանի կատարման համար անհրաժեշտ պաշարներ:

մեկ օրվա պաշար – запасы на один день – one day's supply

նյութական միջոցների պաշար – запас материальных средств – stockpile

նյութական միջոցների պաշարները կառավարող մարմին – орган управления запасами материальных средств – inventory control point

ՊՆ կազմում` կազմակերպական միավոր, որը պատասխանատու է նյութական մասի ռացիոնալ օգտագործման համար:

նյութական միջոցների պաշարների բաշխման կետ – пункт распределения запасов материальных средств – inventory control point

նյութական միջոցների պաշարների նորմ – норма запасов материальных средств – materiel inventory objective

Առարկաների քանակություն (անձեռն կամ պատվիրված), որն անհրաժեշտ է զորահավաքի օրը: Հասկացությունը ներառում է նաև ռազմական գույքի պահանջները զորահավաքի օրը և պահեստային ռազմական գույքի պահանջները պատերազմական ժամանակ:

նյութական միջոցների ռազմական պաշարներ – военные запасы материальных средств – military stores

նյութական պաշարներ – материальные запасы – inventory

Արտադրատեխնիկական նախանշանակման արտադրանք, որը գտնվում է արտադրման և շրջանառման տարբեր փուլերում, ժողովրդական սպառման իրեր և այլ ապրանքներ, որոնք սպասում են արտադրական կամ անձնական օգտագործման գործընթացի մեջ ներգրավման:

ոչ մարտունակ՝ պաշարների անբավարարության պատճառով – небоеспособный из-за недостаточности запасов – not mission capable, supply

ջնվազեցվող պաշարի նորմ – норма неснижаемого запаса – stockage objective

Ընթացիկ օպերացիաների ապահովման համար նյութերի առավելագույն քանակությունը, որը հավասար է օպերատիվ մակարդակով և անվտանգային մակարդակով ներկայացված պաշարների գումարին:

պակասուրդային ռազմական պաշարներ – дефицитные военные запасы – critical supplies and materiel

պահանջվող պաշարների քանակ – количество потребных запасов, предельный уровень запасов – requisitioning objective

պաշարների լրացում – пополнение запасов – stores replenishment

պաշարների լրացում – восполнение запасов, пополнение запасов – resupply  
Նյութական պաշարների (զինամթերք, սնունդ, ջուր ևն) լրացում թարմ միջոցներով:

պաշարների լրացում արտակարգ պայմաններում – восполнение запасов в чрезвычайных условиях – emergency resupply  
Պաշարների ծախսի ու կորուստների լրացում արտակարգ իրավիճակում, նյութական միջոցների շտապ առքերում:

պաշարների լրացում ըստ պահանջարկի – пополнение запасов по требованию – on-call resupply

պաշարների լրացում ծովում – пополнение запасов в море – replenishment at sea

պաշարների լրացում մարտական պայմաններում – пополнение запасов в боевых условиях – combat resupply

պաշարների կառավարում – управление запасами – inventory management  
ԱՄՆ-ի ՊՆ կազմում կազմակերպական միավոր, որը պատասխանատու է նյութական մասի ռազմինալ օգտագործման համար:

պաշարների հաշվառում – учет запасов – stock control

պաշարների մակարդակ – уровень запасов – stock level

Որևէ տեղում (պահեստ, խանութ ևն) առկա պաշարների ծավալը:

պաշարների պլանավորման գծով ղեկավար ցուցումներ – руководящие указания по планированию запасов – stockpile planning guidance

պաշարների սահմանային մակարդակ – տես *պաշար՝ պահանջվող պաշարների քանակ*

պաշարների վիճակ – состояние запасов – inventory status

ռազմական պաշարների նյութական միջոցների պահանջումը – потребности в материальных средствах военных запасов – war reserve materiel requirement

ռազմական պաշարների վաղորդ պահանջված նյութական միջոցների հաշվեկշիռ – необходимый баланс заблаговременно затребованных материальных средств военных запасов – pre-positioned war reserve materiel requirement, balance

Ռազմական ռեզերվային պահանջարկ, որը դեռ չի բավարարվել կամ չի ֆինանսավորվել:

տրված պաշարներ – приданные запасы – accompanying supplies

**պաշարել** – осаждать – besiege

**պաշարեղեն** – припасы – stores

**պաշարներ** – запасы – supplies

**պաշարում** – осада – siege, besiegement, investment

Ամրոցի, բերդի (ամրացված քաղաքի) կամ ամրաշինված այլ վայրի գրավմանն ուղղված ռազմական գործողությունների վարման եղանակ:

**պաշտոն** – пост, должность – post, appointment

առանցքային պաշտոն – տես *դիրք՝ առանցքային դիրք*

ընդհանուր պաշտոնի նշանակում – на-  
значение на общую должность – joint  
duty assignment

միջազգային զինվորական պաշտոն – меж-  
дународный военный пост – international  
military post

միջազգային պաշտոն – международный  
пост – international post

շրջափոխական պաշտոն – ротационная  
должность – rotational post

պաշտոնի բարձրացում – տես *պաշտոն-  
նեական՝ պաշտոնեական առաջխաղա-  
ցում*

պաշտոնի իջեցում – понижение в долж-  
ности – demotion

պաշտոնի կարգել – տես *նշանակել*

փոխակալման ենթակա զինվորական  
պաշտոն – воинская должность, подле-  
жащая замещению – military post to be  
filled

**պաշտոնազրկություն** – отстранение от  
должности, снятие с работы – dismissal  
Օրենքով սահմանված կարգով ծառա-  
յողի (զինծառայողի, աշխատողի) հե-  
ռացում պաշտոնից լիազոր մարմնի  
(պաշտոնյայի) հրամանով:

**պաշտոնաթող լինել** – подать в отставку,  
выйти на пенсию – retire

**պաշտոնաթողություն** – отставка, отказ  
от должности – 1. retirement, 2. resign  
Ծառայությունից՝ աշխատանքից ազա-  
տում ծառայողի (զինծառայողի, աշ-  
խատողի) ցանկությամբ՝ դիմումի հա-  
մաձայն՝ օրենքով նախատեսված կար-  
գով:

**պաշտոնակալություն** – введение в долж-  
ность – induction  
Պաշտոնի նշանակվելը, պաշտոն զբա-  
ղեցնելը:

**պաշտոնական** – официальный – official  
1. Պետական անհրաժեշտությամբ պայ-  
մանավորված՝ պաշտոնից բխող, պաշ-  
տոնի պահանջով կատարված: 2. Կա-  
ռավարության, որևէ մարմնի (պատաս-  
խանատու անձի) կատարած:

պաշտոնական աճուրդ – официальные  
торги – formal bidding

պաշտոնական ճաշկերույթ – официаль-  
ный обед – mess night

Հրավերով ճաշկերույթ, որին ներկա են  
լինում պաշտոնատար անձինք, և որի  
ժամանակ պահանջվում են որոշակի  
(սովորույթներով հաստատված) ընթա-  
ցակարգեր:

պաշտոնական շնորհակալություն՝ պար-  
գևատրմամբ – официальное выражение  
благодарности с присуждением награды  
– commendation

**պաշտոնակարգություն** – иерархия –  
hierarchy

Ստորին պաշտոնների, աստիճանների  
ևն ենթակայություն ավելի բարձրին:

**պաշտոնանկություն** – տես *պաշտոնա-  
զրկություն*

**պաշտոնեական** – должностной – official  
Պաշտոնին հատուկ՝ առնչվող, պաշտո-  
նով պայմանավորված:

պաշտոնեական առաջխաղացում – про-  
движение по службе – promotion

պաշտոնեական գործառույթ – должност-  
ная функция – incumbency

**պաշտոնյա** – տես *անձ՝ պաշտոնատար  
անձ*

**պաշտպան** – защитник, обороняющий –  
defender

**պաշտպանական** – 1. оборонный, 2. տես  
*պաշտպանողական* – 1. defensive, de-  
fense, 2. տես *պաշտպանողական*  
Պաշտպանությանն առնչվող, հատուկ:

առաջադրանքով պայմանավորված  
պաշտպանական միջոցներ – постоян-  
ные меры защиты, применяемые для  
выполнения поставленной задачи –  
mission-oriented protective posture  
Քիմիական հարձակումների դեմ պատ-  
րաստ լինելու վիճակ, որով որոշվում է,  
թե ինչ պաշտպանական միջոցներ  
պետք է ձեռնարկվեն:

պաշտպանական արդյունաբերություն –  
оборонная промышленность – defense  
industry



պաշտպանական բյուջե – оборонный бюджет – defense budget

Պետական բյուջեի մաս, որը վերաբերում է պաշտպանության ոլորտում պետության գործունեության ֆինանսական ապահովմանը:

**Պաշտպանական ակադեմիաների և անվտանգային հետազոտությունների ինստիտուտների ԳՀԽ կոնսորցիում** – консорциум военных академий и институтов, занимающихся исследованием проблем безопасности по Программе PPM – Partnership for Peace Consortium of Defence Academies and Security Studies Institutes

**պաշտպանական-անվտանգային աջակցության ծրագրեր** – программы оборонно-безопасного содействия – security assistance

ԱՄՆ-ի հետ համագործակցության շրջանակում իրագործվող անվտանգային օգնություն:

**Պաշտպանական գերատեսչության հետախուզական տեղեկույթի հավաքման ու մշակման կենտրոն (ԱՄՆ)** – Центр сбора и обработки разведывательной информации оборонного ведомства – Department of Defense Intelligence Information System Enterprise

**պաշտպանողական հակաօդային օպերացիա** – противовоздушная оборонительная операция – defensive counterair, defensive counterair operation

**Պաշտպանական օդերևութաբանական արբանյակային ծրագիր** – Оборонная метеорологическая спутниковая программа – Defense Meteorological Satellite Program

ԱՄՆ-ի եղանակի կանխատեսման ռազմական արբանյակ, որը վերահսկում է Ազգային օվկիանոսային և մթնոլորտային ճնշման վարչությունը:

**պաշտպանել** – 1. защищать, 2. оборонять – 1. protect, 2. defend

**պաշտպանիչ** – защитный, предохранительный – protective

պաշտպանիչ խորհրդանշաններ – охраняющие эмблемы – protected emblems

խորհրդանշաններ (Կարմիր խաչ, Կարմիր մահիկ ևն), որոնք ցույց են տալիս, որ դրանք կրող անձինք, կառույցները, փոխադրամիջոցները ևն պաշտպանված են միջազգային իրավունքի նորմերով:

պաշտպանիչ հեռավորություն – «буферное» расстояние, защита расстоянием – buffer distance

**պաշտպանողական** – защитный, оборонительный – defensive, defense

**Պաշտպանության պետական կոմիտե** – Государственный Комитет Обороны – State Defense Committee

Պատերազմի ժամանակ ԽՍՀՄ-ում (Հայրենական մեծ պատերազմ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (Արցախյան ազատագրական պատերազմ) արտակարգ բարձրագույն պետական մարմին՝ օժտված լիակատար իշխանությամբ:

**պաշտպանություն** – 1. оборона, 2. защита – 1. defense, 2. protection, 3. shield

1. Ջորջի (ուժերի) մարտական գործողությունների տեսակ, որը կիրառվում է հակառակորդի՝ որպես կանոն գերազանցող ուժերի հարձակումը (հարվածները) հետ մղելու, նշված ուղղությունները (բնագծերը, շրջանները, օբյեկտները) պահելու, որոշ ուղղություններում ուժերն ու միջոցները խնայելու և այլ ուղղություններում հակառակորդի նկատմամբ գերազանցություն ստեղծելու, հակառակորդի հարձակվող խմբավորումները ջախջախելու և յուրային զորքերի հակահարձակման համար պայմաններ ստեղծելու նպատակով: 2. Պետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության պահպանմանը և դրան պատրաստմանը նպատակաուղղված քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցառումների համակարգ:

ազգային հակահրթիռային պաշտպանություն – национальная противоракетная оборона – National Missile Defense, NMD



ազգային պաշտպանություն – национальная оборона, защита отечества – homeland defense

ակտիվ հակաօդային պաշտպանություն – активная противовоздушная оборона, авиазенитная оборона (уст.) – active air defense

ակտիվ պաշտպանություն – активная оборона – active defense

Ռազմապատմական գրականության մեջ. տերմին, որով նշագրվում էին պատերազմող կողմերից մեկի պաշտպանական գործողությունները, որոնք կատարվում էին ոչ միայն տարածքը պահելու, այլև գլխավորապես հակառակորդի խոշոր ուժերն ուժասպառ անելու և հյուժելու նպատակով:

անհատական պաշտպանության միջոցներ – индивидуальные средства защиты – individual protective equipment, individual protective kit

Միջոցներ, որոնք նախանշանակված են առանձին զինծառայողների՝ լուսային ճառագայթմամբ խոցման աստիճանի նվազեցման, ինչպես նաև նրանց ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանության համար:

անհատական պաշտպանության հանդերձանք – средства индивидуальной защиты – personal protective equipment

Միջոցներ, որոնք նախանշանակված են տեխնիկական վթարների ժամանակ առաջացող քիմիական, ֆիզիկական և ջերմային վտանգներից անհատին պաշտպանելու կամ մեկուսացնելու համար: ՆԱՏՕ-ի դասակարգմամբ նույնացված է *անհատական պաշտպանության միջոցներին (individual protective equipment, individual protection kit)*:

անհատական պաշտպանության հատուկ միջոցներ – специальные средства индивидуальной защиты – mission-oriented protective posture gear

Առաջադրանքի կատարմանը կողմնորոշված պաշտպանական հանդերձանք:

«առաջավոր պաշտպանության» հայեցակարգ – տես *առաջադիր՝ «առաջադիր բնագծերի» ռազմավարություն*

ավիագենիթային պաշտպանություն (*հնց.*) – տես *պաշտպանություն՝ ակտիվ հակաօդային պաշտպանություն*

արտակարգ դրություն քաղաքացիական պաշտպանության համակարգի համար – чрезвычайное положение для системы гражданской обороны – civil defense emergency

դիրքային պաշտպանություն – позиционная оборона, оборона района – positional defense, positional defense, static defense

Պաշտպանության տեսակ, որի գլխավոր նպատակն է երկար ժամանակ և հուսալիորեն պահել նախապես սարքավորված բնագծերը (շրջանները):

երկրի պաշտպանություն – оборона страны – home defense

զինված պաշտպանություն – вооруженная защита – armed defense

Ազգի, պետության և նրա ռազմական կազմակերպության գործունեությունը՝ նպատակաուղղված պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պահպանմանն ու ամրապնդմանը, անվտանգության ապահովմանը:

գորակայանի պաշտպանության ուժեր – силы обороны базы – base defense forces

գորակայանի պաշտպանություն – оборона базы – base defense

գորքերի (ուժերի) պաշտպանություն զերձզրիտ զենքից – защита войск (сил) от высокоточного оружия – protection of troops (forces) against precision guided weapon

գորքերի (ուժերի) պաշտպանություն ՁևՁ-ից – защита войск (сил) от ОМП – protection of troops (forces) against WMD

գորքերի և օբյեկտների պաշտպանություն – защита войск и объектов – force protection

խմբային պաշտպանություն – տես *պաշտպանություն՝ կոլեկտիվ պաշտպանություն*

խոր պաշտպանություն – эшелонированная оборона, глубокая оборона – defense in depth, deep defense, layered defense

Ռազմավարություն, որի նպատակն է ավելի շատ հետաձգել, քան կանխել հարձակվողի առաջխաղացումը՝ ժամանակ շահելով, տարածքներ զիջելով և գոհեր տալով:

Կետային պաշտպանություն – տես *պաշտպանություն՝ կետային օբյեկտների պաշտպանություն*

Կետային օբյեկտների պաշտպանություն – оборона точечных объектов, точечная оборона – point defense

Հակառակորդի օդային հարվածներից օբյեկտների պաշտպանություն մոտ հեռավորության վրա՝ փոքր հեռահարությամբ «երկիր-օդ» դասի հրթիռներով:

Կիբեռտարածության պաշտպանությանն ուղղված պատասխան ձեռնարկում – ответные действия по обеспечению защиты киберпространства – defensive cyberspace operation response action

ՊՆ պաշտպանված կիբեռհամակարգից դուրս իրականացվող միջոցներ՝ ՊՆ կիբեռտարածքի հնարավորությունների պաշտպանության նպատակով:

Կլլեկտիվ պաշտպանության միջոցներ – средства коллективной защиты, средства групповой защиты – collective protection

Կլլեկտիվ պաշտպանություն – коллективная защита, групповая защита – collective protection

հակաականային պաշտպանություն – противоминная защита – defensive mine countermeasures

հակադեսանտային պաշտպանություն – противодесантная оборона – antilanding defense

հակակենսաբանական պաշտպանություն – противобиологическая защита – biological defense

Կենսաբանական պատերազմի դեմ ուղղված պաշտպանական միջոցներ՝ միջոցառումներ:

հակահրթիռային պաշտպանության շրջան – район противоракетной обороны – ballistic missile defense area

Գործառույթներով փոխկապված և համապատասխանաբար ծավալված վրագետնյա ու տիեզերական բազավորմամբ ուժերի ու միջոցների, ՀՕՊ-ի միջոցների, կառավարման մարմինների տարածքային-օպերատիվ (օպերատիվ-մարտավարական) միավորում՝ նախանշանակված հաստատված սահմաններում բալիստիկ հրթիռները դրանց հետագծերում հայտնաբերելու և ոչնչացնելու համար:

հակահրթիռային պաշտպանություն – противоракетная оборона, ПРО – missile defense, ballistic missile defense, BMD

Ռժերի և միջոցների համալիր, ինչպես նաև միջոցառումներ ու մարտական գործողություններ, որոնց նպատակն է հակառակորդի հրթիռային (հրթիռամիջուկային) հարվածի հետմղումը՝ թռիչքի ժամանակ հրթիռների ոչնչացմամբ:

հակահրթիռային պաշտպանություն երթային բնագծում – противоракетная оборона на маршевом рубеже – ground-based midcourse defense

հակաճառագայթային պաշտպանություն – антирадиационная защита – shielding

1. Էլեկտրամագնիսական խանգարումներից էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների, հոսանքատար հաղորդալարերի, ապարատուրայի պաշտպանություն՝ հողակցված կլանիչ կամ անդրադարձիչ միջոցներով պատմամբ: 2. Ռադիոակտիվ նյութերի բեռնման, տեղափոխման, ստացման ևն ընթացքում անձնակազմին ճառագայթումից պաշտպանելու համար օգտագործվող նյութեր: 3. Ռադիոակտիվ ճառագայթումից պաշտպանություն՝ նման ֆիզիկական հատկություններ ունեցող նյութերի օգտագործմամբ:

հակամիջուկային պաշտպանություն – противоядерная оборона, защита от ядерного оружия – nuclear defense

հակասուզանավային պաշտպանություն – տես *սուզանավ՝ պայքար սուզանավերի դեմ*

հակատիեզերական պաշտպանություն – противокосмическая оборона – space defense

հակաքիմիական պաշտպանություն – противохимическая защита – chemical defense

հակաքիմիական, հակակենսաբանական, հակաճառագայթաբանական և հակամիջուկային կոլեկտիվ պաշտպանություն – коллективная противохимическая, противобиологическая, противорадиологическая и противоядерная защита – collective chemical, biological, radiological and nuclear protection

հակաքիմիական, հակակենսաբանական, հակաճառագայթաբանական և հակամիջուկային պաշտպանություն – противохимическая, противобиологическая, противорадиологическая и противоядерная защита – chemical, biological, radiological, and nuclear defense; chemical, biological, radiological, and nuclear protection

հակաօդային պաշտպանության գոտի – зона противовоздушной обороны – air defense area, air defense zone

1. Կոնկրետ սահմանված օդային տարածք, որտեղ պետք է պլանավորվի և իրականացվի հակաօդային պաշտպանությունը: 2. ԱՄՆ-ում. համապատասխան գործակալության սահմանած չափերով օդային տարածք, որտեղ ազգային անվտանգության շահերը պահանջում են օդային հարձակման սպառնալիքի ժամանակ հայտնված օդային միջոցները արագ կերպով վերցնել հսկողության տակ: 3. ՌԴ-ում. ՀՕՊ-ի զորքերի տարածքային օպերատիվ միավորում՝ հաստատված սահմաններում ուժերի և միջոցների հակաօդային պաշտպանության ապահովման օպերատիվ և այլ խնդիրների համատեղ կատարման համար:

հակաօդային պաշտպանության հատված – сектор противовоздушной обороны – air defense sector

Հակաօդային պաշտպանության շրջանի մաս:

հակաօդային պաշտպանության միասնական համակարգ – объединенная система противовоздушной обороны – integrated air defense system

հակաօդային պաշտպանության վրագետնյա ենթակառուցվածք – տես պաշտ-

*պանություն՝ հակաօդային պաշտպանության վրագետնյա միջոցների ցանց*

հակաօդային պաշտպանության վրագետնյա միջոցների ցանց – сеть наземных средств противовоздушной обороны, наземная инфраструктура противовоздушной обороны – air defense ground infrastructure, air defense ground environment

Որոշակի ՌԳԹ-ում օպերատիվ կառավարման ռադիոտեղորոշումային կայանների ու կենտրոնների վրագետնյա դիրքերի ցանց՝ ստեղծված ՀՕՊ-ի գործողությունների մարտավարական կառավարման համար:

հակաօդային պաշտպանության օպերատիվ կենտրոն – оперативный центр противовоздушной обороны – antiaircraft operations center

հակաօդային պաշտպանություն – противовоздушная оборона, ПВО – air defense

Հակառակորդի օդային հարձակման հետմղմանը և օդից հասցվող հարվածներից բնակչության, զորքի և օբյեկտների պաշտպանությանը նպատակաուղղված միջոցառումների, ուժերի, միջոցների ու գործողությունների համախումբ:

հակաօդային և հակահրթիռային պաշտպանության միացյալ համակարգ – объединенная система противовоздушной и противоракетной обороны – integrated air and missile defense

հակաօդային և հակահրթիռային պաշտպանություն – противовоздушная и противоракетная оборона – air and missile defense

համատեղ պաշտպանություն – совместная оборона – joint defense, combined defense

հայրենիքի պաշտպանություն – տես պաշտպանություն՝ ազգային պաշտպանություն

հապճեպ ձեռնարկված պաշտպանություն – տես պաշտպանություն՝ պաշտպանություն հապճեպ սարքավորված դիրքերում

ճառագայթաբանական պաշտպանություն – радиологическая защита – radiological defense

միասնական պաշտպանություն – տես *պաշտպանություն՝ համատեղ պաշտպանություն*

նախապատրաստված պաշտպանություն – подготовленная оборона – prepared defense

Պաշտպանություն, որը բնորոշվում է. ա) ինժեներական առումով պատեհաժամորեն սարքավորված պաշտպանական բնագծերով (գոտիներով), շրջաններով ու դիրքերով, բ) դրանցում նախապես տեղաբաշխված զորքերի խմբավորումներով (մարտակարգերով), գ) կրակի ու արգելափակոցների զարգացած համակարգերով, դ) ուժերի ու միջոցների նախապատրաստված տարաշարժով, ավիացիոն ու հրթիռային հարվածներով:

շարակարգված պաշտպանություն – տես *պաշտպանություն խոր պաշտպանություն*

շարժունակ պաշտպանություն – маневренная оборона, подвижная оборона – retrograde defensive, mobile defense

Պաշտպանության տեսակ, որի նպատակն է հակառակորդին մեծ կորուստներ պատճառել, ժամանակ շահել և յուրային ուժերը պահպանել՝ տարածքի մի մասը կորցնելու հնարավորության առկայությամբ:

շարժուն պաշտպանություն – мобильная оборона – mobile defense

շրջանաձև պաշտպանություն – круговая оборона – all-round defense

պաշտպանության ակտիվություն – активность обороны – aggressiveness in defense

Հակառակորդի վրա պաշտպանվող զորքի անընդհատ ներգործությունը: Պաշտպանության կազմակերպմանն ու վարմանը ներկայացվող հիմնական պահանջներից մեկն է:

պաշտպանության առջևի եզր – передний край обороны – forward edge of the battle area, main line of resistance

Յուրային զորքերի այն առաջնային գիծը, որն առավել մոտ է հակառակորդին:

պաշտպանության բավարարություն – достаточность обороны – defense sufficiency

Պետության (պետությունների դաշնադրության) ռազմական հզորության վիճակ, որի դեպքում ապահովված են՝ հնարավոր հակառակորդին ագրեսիայից հետ պահելը և այն հետ մղելը, սակայն բացառվում է հանկարծակի հարձակման կամ լայնամասշտաբ հարձակողական օպերացիաների ձեռնարկումը առանց ՋՈՒ-ի լրացուցիչ ծավալման կամ դրանց հզորության մեծացմանը նպատակաուղղված այլ միջոցների իրականացման:

պաշտպանության բնագիծը հաղթահարած օդային նշանակետ – воздушная цель, преодолевшая рубеж обороны; средство воздушного нападения, преодолевшее рубеж обороны – leaker

պաշտպանության գիծ – линия обороны – line of defense

պաշտպանության խորություն – глубина обороны – defense depth

Պաշտպանական դիրքերի ամենաառջևի և ամենահետին գծերի միջև եղած հեռավորությունը:

պաշտպանության կազմակերպման սկզբունքներ – принципы организации обороны – defense doctrine

պաշտպանության հաղթահարման տոկոս – процент преодоления обороны – leakage rate

Օդային հարձակման միջոցների այն մասը՝ տոկոսներով, որին հաջողվում է անցնել պաշտպանության գոտին՝ պահպանելով իր մարտունակությունը:

պաշտպանության համակարգ – система обороны – defense system

պաշտպանության համար ոչ պիտանի – непригодный для обороны – indefensible, untenable

Օբյեկտ՝ դիրք, տեղանք, բնակավայր ևն, որին աշխարհագրական պայմանների, դրա դիրքի, այլ բնութագրիչների բերումով տվյալ դեպքում հնարավոր չէ պաշտպանել:

պաշտպանության հատված – участок обороны – defense area

պաշտպանության հարցերի վերլուծություն – анализ вопросов обороны – defense analysis

Պաշտպանության հարցերով պետական քարտուղար – Государственный секретарь по вопросам обороны – Secretary of State for Defense

Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարը:

Պաշտպանության հիմնադրամ – Фонд обороны – Defense Fund

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ում ստեղծված հիմնադրամ, որին ռազմաճակատի կարիքների համար բնակչությունը կամավոր կերպով տրամադրում էր դրամական ու նյութական արժեքներ: Այդ ֆոնդին մեծ միջոցներ տրամադրեց ոչ միայն խորհրդային, այլև Սփյուռքի հայությունը:

պաշտպանության ղեկավարում – руководство обороной – defense guidance

պաշտպանության ճեղքում – прорыв обороны – breakthrough

պաշտպանության մասին օրենք – закон об обороне – Law on defense

պաշտպանության նախարարության կապի համակարգ – система связи министерства обороны, система военной связи – Defense Communications System

պաշտպանության նախարարության կոլեգիա – коллегия министерства обороны – Collegium of the Ministry of Defense

պաշտպանության նախարարության հաստիքացուցակ – штатное расписание Министерства обороны – Defense Ministry staff list

պաշտպանության նախարարության հետախուզական բաժնի ավագ սպա – старший офицер разведывательного отдела министерства обороны – defense human intelligence executor

պաշտպանության նախարարության քաղաքացիական ծառայող – государственный служащий министерства обороны – Ministry of Defense civilian

պաշտպանության նախարարություն – министерство обороны, МО – Ministry of Defense, MOD, Defense Ministry

Գործադիր իշխանության մարմին, որը պաշտպանության ոլորտում իրականացնում է պետական քաղաքականություն և պետական կառավարում, ինչպես նաև համադասում է այլ նախարարությունների ու գործադիր իշխանության մարմինների՝ պաշտպանության հարցերի հետ կապված գործունեությունը:

պաշտպանության նպատակով երկրի տարածքի օպերատիվ սարքավորում – оперативное оборудование территории страны в целях обороны – strategic preparation of a country for defense

Օպերատիվ միջոցառումների համակարգ՝ նպատակաուղղված պաշտպանությանը պետության այն տարածքների պատրաստմանը, որոնք կարող են դառնալ ռազմական գործողությունների թատերաբեմ:

պաշտպանության շերտ – оборонительный пояс – defensive belt

պաշտպանության շրջան – район обороны – defense area, defended locality

Պաշտպանության համար նախապատրաստված տարածք, որում ներառվում են միմյանց հետ կրակի և արգելապատնեշների համակարգով կապված հենակետեր, սարքավորվում են հրետանու, ականանետների, տանկերի, ՀՏԿ կայանքների, ՀՕՊ-ի միջոցների համար կրակային դիրքեր և հրամանատարական դիտակետեր:

պաշտպանության վերակառուցում – оборонная перестройка, военная перестройка – defense restructuring

պաշտպանության տակ առնել – вступаться, ходатайствовать – intercede

պաշտպանության տակ գտնվող անձինք և տեղեր – люди и места, находящиеся под защитой – protected persons and places

պաշտպանության տիպային պլան – типовый план обороны – Standing Defense Plan

Խաղաղ պայմաններում զորքի գործողությունների պլան:

պաշտպանության քարտուղար – секретарь по обороне – Secretary for Defense

ԱՄՆ-ի պաշտպանության նախարարը:

պաշտպանության քարտուղարություն – տես *գերատեսչություն՝ պաշտպանական գերատեսչություն*

պաշտպանություն լազերային ճառագայթումից – защита от лазерного излучения – laser protection

պաշտպանություն հապճեպ սարքավորված դիրքերում – оборона на поспешно оборудованных позициях, поспешно занятая оборона – hasty defense

պաշտպանություն հեռավորությամբ – տես *պաշտպանիչ՝ պաշտպանիչ հեռավորություն*

պաշտպանություն միջուկային զենքից – տես *պաշտպանություն՝ հակամիջուկային պաշտպանություն*

պաշտպանություն ռադիոէլեկտրոնային ճնշման միջոցներից – защита от средств радиоэлектронного подавления – electronic counter-countermeasures

պաշտպանություն քիմիական զենքից – защита от химического оружия – chemical operation

պասիվ հակաօդային պաշտպանություն – пассивная противовоздушная оборона – passive air defense

պասիվ պաշտպանություն – пассивная оборона – passive defense

պասիվ պաշտպանություն քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական և միջուկային հարձակումներից – пассивная защита от химического, биологического, радиологического и ядерного нападения – chemical, biological, radiological, and nuclear passive defense

պատեհաժամորեն կազմակերպված պաշտպանություն – заглаговременная оборона – deliberate defense

Պաշտպանություն, որն իրականացվում է նախօրոք սարքավորված պաշտպանական դիրքերում՝ նախքան հակառակորդի հետ շփումները:

ռադիոակտիվ, քիմիական կամ կենսաբանական նյութերով ախտահարումից զոր-

քրի պաշտպանության միջոցներ – меры по предотвращению заражения войск радиационными, химическими и биологическими средствами – contamination avoidance

ռազմավարական պաշտպանություն – стратегическая оборона – strategic defensive

տարածքային պաշտպանություն – территориальная оборона – territorial defense

Լյն ռազմական ու համապետական միջոցառումների բաղկացուցիչ մասը, որոնք իրականացվում են յուրային տարածքում գտնվող օբյեկտներն ու հաղորդակցության ուղիները հակառակորդի գործողություններից, նրա դիվերսիոն ու ահաբեկչական ձեռնարկումներից պաշտպանելու, ինչպես նաև ռազմական դրության ռեժիմի հաստատմանն ու պահպանմանն աջակցելու համար:

տարաշարժուն պաշտպանություն – маневренная оборона – retrograde defensive

տիեզերահրթիռային պաշտպանություն – ракетно-космическая оборона – ballistic missile defense

Օդատիեզերական պաշտպանության բաղկացուցիչ մաս. ուժերի ու միջոցների, ինչպես նաև միջոցառումների, տեղեկատվահետախուզական ու մարտական գործողությունների համալիր, որն իրականացվում է հրթիռամիջուկային հարձակման մասին պետական ու ռազմական ղեկավարման մարմիններին պատեհաժամորեն իրազեկելու, տիեզերական տարածությունում մարտական գործողությունների սկսումը հայտնաբերելու և ռազմական օբյեկտներին հակառակորդի հասցրած հարվածները պատեհաժամորեն հետ մղելու նպատակով:

տեղեկույթի պաշտպանություն – защита информации – information protection

ունեցվածքի պաշտպանություն – охрана имущества – protection of property

քաղաքացիական պաշտպանություն – гражданская оборона – civil defense

Միջոցառումների համակարգ, որոնք նպատակաուղղված են ռազմական



գործողությունների վարման ժամանակ և դրանց հետևանքով առաջացող վտանգներից բնակչության, տարածքում գտնվող նյութական արժեքների պաշտպանությանը և այդ պաշտպանությանը բնակչության պատրաստմանը:

քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային պաշտպանություն – химическая, биологическая, радиационная и ядерная защита – chemical, biological, radiological and nuclear shield, CBRN shield

օդատիեզերական պաշտպանություն – 1. аэрокосмическая оборона, 2. воздушно-космическая оборона – aerospace defense

ԱՄՆ-ում. համապետական միջոցառումների ու զորքերի գործողությունների համալիր, որոնք իրագործվում են օդից ու տիեզերքից հասցվող հարվածներից ՋՈՒ-ի խմբավորումների, բնակչության կորուստները, պետության տնտեսական և այլ շրջանների վնասները կանխելու նպատակով: Ներառում է ՀՕՊ-ի, ՀՀՊ, հակատիեզերական պաշտպանության, հրթիռային հարձակման մասին նախազգուշացման ու տիեզերական տարածության վերահսկման խնդիրների լուծումը, ՌԴ-ում. հակառակորդի օդատիեզերական հարվածներից պետության տարածքի կարևոր ռազմաքաղաքական օբյեկտների, զորքերի խմբավորումների և պաշտպանություն, որն իրագործում են ՌԴ օդատիեզերական պաշտպանության զորքերը:

ֆիզիկական պաշտպանություն – физическая защита – physical security

**պասիվ** – 1. пассивный, инертный, 2. пассивный, не излучающий – passive

1. Ոչ ակտիվ, զուսպ, սակավազդու, իներտ, 2. Ռադիոէլեկտրոնային և էլեկտրաստատիկական սարքեր, որոնք աշխատում են ոչ թե օբյեկտը ճառագայթահարելու և անդրադարձած ճառագայթումն ընդունելու, այլ օբյեկտի ճառագայթումը կամ երրորդ աղբյուրի՝ դրանից անդրադարձված էլեկտրամագնիսական ալիքների (լույսի) որսման վրա: Մասնավորապես՝ պասիվ

գիշերային դիտման սարքերը, որոնք չեն պահանջում լրացուցիչ ինֆրակարմիր լույս:

**պասիվացում** – տես *չեղոքացում*

**պասիվություն** – пассивность – Inaction

**պատածակում** – пробивание стены здания для проникновения внутрь – mouse-holing

Պատի մեջ ձեղքի բացում ներս մտնելու համար:

**պատահական** – случайный, непредумышленный – accidental

պատահական սխալ – случайная ошибка – probable error

**պատահականություն** – случайность, непредвиденное событие – accident

**պատանդ** – заложник – hostage

Անձ, որը բռնությամբ պահվում է, որպեսզի որևէ մեկը (հարազատ, բարեկամ, իշխանություն) ստիպված լինի կատարելու որոշակի գործողություն, պարտավորություն կամ գերծ մնա որևէ ձեռնարկումից՝ պատանդի ազատ արձակման, նրա սպանության կամ առողջությանը վնասման կանխման նպատակով:

պատանդների ազատում – освобождение заложников – hostage rescue, hostage release

**պատասխան** – 1. ответ, 2. տես *արձագանք* – 1. reply, response, answer, 2. տես *արձագանք 1*

միջուկային սպառնալիքին պատասխան – ответ на ядерную угрозу – nuclear response

**պատասխան գործողությունների համադասման տարածաշրջանային կենտրոն** – региональный центр координации ответных действий – regional response coordination center

**պատասխանատվություն** – ответственность – responsibility

Իր արարքների և գործողությունների, ինչպես նաև դրանց հետևանքների համար պատասխան տալու սուբյեկտի պարտականություն:



կարգապահական պատասխանատվություն – дисциплинарная ответственность – disciplinary responsibility

**պատասխանիչ** – ответчик – transponder

Ռադիոտեղորոշումային համակարգի սարք, որն ի պատասխան ճիշտ կազմըված ռադիոազդանշանային հարցման կազմավորում և ճառագայթում է պատասխան ազդանշան:

**պատարագ** – обедня – mass

դաշտային պատարագ – богослужение в полевых условиях – drumhead service

**պատգամավոր** – депутат – deputy

**պատգարակ** – носилки – stretcher

**պատգարակակիր սանիտար** – санитар-носильщик – stretcher-bearer

**պատերազմ** – война – war, warfare

Պետությունների, ժողովուրդների, ազգությունների, սոցիալական խմբերի միջև սոցիալ-քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, ինչպես նաև ազգային, կրոնական, տարածքային և այլ հակասությունները ռազմական բռնության միջոցով լուծելու ծայրահեղ ձև:

ազատագրական պատերազմ – освободительная война – liberation war, war of liberation

ազգային-ազատագրական պատերազմ – национально-освободительная война – national liberation war

ակնային պատերազմ – минная война – mine warfare

ակնթարթային պատերազմ – տես *պատերազմ` կայծակնային պատերազմ*

անկախության համար պատերազմ – война за независимость – war of independence, independence war

անհամաչափ պատերազմ – асимметричная война – asymmetrical warfare

Պատերազմ, որի կողմերի ռազմական ուժերի միջև կա շատ մեծ անհամապատասխանություն, ինչի հետևանքով թույլ կողմը դիմում է անհամաչափ միջոցների, ինչպիսիք են՝ պարտիզանական պատերազմը, պասիվ դիմադրու-

յունը, ահաբեկչական գործողությունները, հոգեբանական պատերազմը, աջակցումը հակակառավարական շարժումներին ու խմբերին և այլն:

«անշփում» պատերազմ – «бесконтактная» война – “contact-free” war

Մշակվող տեսակի (6-րդ սերնդի) պատերազմ, որը ներառում է ոչ ռազմական (հետախուզական, քաղաքական-հոգեբանական, տեղեկության ևն) օպերացիաները, ինչպես նաև ավտոմատացված (անզինվոր) ռազմական օպերացիաները:

«Աստղային պատերազմ» – տես *ռազմավարական` Ռազմավարական պաշտպանական նախաձեռնություն*

ատոմային պատերազմ – տես *պատերազմ` միջուկային պատերազմ*

բնախոցիչ պատերազմ – экологическая война – ecological warfare

գաղափարախոսական պայքար պատերազմում – идеологическая борьба в войне – ideological struggle in war

Պատերազմում հաղթանակի հասնելու համար պատերազմող կողմերի ընդդիմամարտությունը հոգևոր ոլորտում:

գաղութարարական պատերազմ – колониальная война – colonial war

գաղութային պատերազմ – տես *պատերազմ` գաղութարարական պատերազմ*

դիրքային պատերազմ – позиционная война, окопная война – position warfare, trench warfare

Ջինված պայքար, որում գերակշռում են մեծ ձգվածությամբ, խոր շարակարգված պաշտպանությամբ, երկարատև կայունությամբ հոծ ռազմաձակատներում դանդաղ ու սակավ արդյունավետ ձակատային հարձակումների ձևով ծավալվող ռազմական գործողությունները:

դիվանագիտական պայքար պատերազմում – дипломатическая борьба в войне – diplomatic struggle in war

երկրաֆիզիկական պատերազմ – геофизическая война – geophysical war

Ապագայի հավանական պատերազմ՝ երկրաֆիզիկական գեների կիրառ-

մամբ: Բարդությունը պայմանավորված է հիմնականում երկու գործոնով. ա) չկա այդ զենքի կիրառումից պաշտպանություն, այսինքն՝ զենքը կիրառողը ևս կարող է դառնալ զոհ, և բ) հնարավոր չէ հաշվարկել (կանխատեսել) հետևանքները, և զենքի կիրառումը կարող է հանգեցնել անդառնալի ավերիչ պրոցեսների:

«եռաբլոկ պատերազմ» – «трехблочная война» – “three-block war”

Հայեցակարգ, ըստ որի՝ հակամարտային (ձգնաժամային) իրավիճակներում գործող զինվորներից կարող է պահանջվել բուն ռազմական օպերացիաներ ու խաղաղապահական օպերացիաներ վարելու և մարդասիրական օգնություն ցույց տալու հնտություն:

էլեկտրոնային պատերազմ – электронная война, радиоэлектронная борьба – electronic warfare

Չորքերի գործողություններ, որոնք ներառում են էլեկտրամագնիսական աղբյուրների որոնումն ու որոշարկումը, ինչպես նաև հակառակորդի կողմից էլեկտրամագնիսական ճառագայթման սպեկտրի օգտագործման արդյունավետության նվազեցումը կամ կանխումը:

էկոլոգիական պատերազմ – տես *պատերազմ՝ բնախոցիչ պատերազմ*

խրամատային պատերազմ – տես *պատերազմ՝ դիրքային պատերազմ*

«կայանքակենտրոն» պատերազմ – «платформоцентричная» война – “platformcentric” war

Պատերազմ, որի ժամանակ օպերացիաների և ձևկատամարտերի հաջողությունը հիմնականում կախված է մարտական միջոցների անհատական կարողությունից, և հակառակորդի մասին տեղեկություններն ստացվում են «կայանքներից» (մարտական մեքենաներ, ուղղաթիռներ, հետախուզական խմբեր ևն):

կայծակնային պատերազմ – молниеносная война, блицкриг – blitzkrieg

կանխիչ պատերազմ – превентивная война – preventive war

Պատերազմ, որը մի պետությունն սկսում է նախականիչ հարվածներով՝ դրանք հիմնավորելով հակառակորդի կողմից ագրեսիա ձեռնարկելու բացահայտ սպառնալիքի արկայությամբ: Մի շարք պետություններ մերժում են նման պատերազմ սկսելու իրավունքը՝ համարելով, որ «բացահայտ ագրեսիայի սպառնալիքը» կարող է դառնալ շահարկումների առարկա:

կենսաբանական պատերազմ – бактериологическая война, биологическая война – biological warfare, germ warfare

կիբեռպատերազմ – кибернетическая война, кибервойна – cyberwar

կրոնադավանական պատերազմ – религиозная война – religious war

հակառակորդի հյուժման պատերազմ – война на изнурение противника – attritional warfare

Պատերազմի վարման մեթոդ. փոքր ինտենսիվությամբ մարտական գործողություններ, որոնց նպատակն է հակառակորդին ուժասպառ անելը, նրան իր մարդկային, տնտեսական և այլ ներուժը վատնելով՝ սպառելը:

համաշխարհային պատերազմ – мировая война – world war

«համատարած պատերազմ» – «тотальная война» – total war

Ագրեսիվ պատերազմ, որը նախապատրաստվում և վարվում է դրա շահերին հասարակության ամբողջ կյանքի և պետության էկոնոմիկայի ենթարկմամբ, դրա ընթացքում հակառակորդի ՋՈՒ-ի ու նաև խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացման նպատակով խոցման ցանկացած, ամենադաժան միջոցների կիրառմամբ:

համընդհանուր միջուկային պատերազմ – глобальная ядерная война, мировая ядерная война – global nuclear war

Հայրենական մեծ պատերազմ – Великая Отечественная война – the Great Patriotic War

Երկրորդ համաշխարհային պատերազմի (01.09.1939–02.09.1945) մաս՝ ԽՍՀՄ պատերազմը Չերմանիայի և նրա դաշնակիցների դեմ (22.06.1941–

09.05.1945), որին մեծապես մասնակցեց հայ ժողովուրդը:

հոգեբանական պատերազմ – психологическая война – psychological warfare

մեծամասշտաբ պատերազմ – крупномасштабная война – major war, large-scale war

միջուկային պատերազմ – ядерная война – nuclear warfare, atomic warfare

ոչ կանոնավոր պատերազմ – нерегулярная война – irregular warfare

Դաժան պայքար, որը հանուն իշխանության լեգիտիմության ու բնակչության վրա ազդեցության մղում են ոչ պետական դերակատարները: Ոչ կանոնավոր պատերազմը նախապատվություն է տալիս անուղղակի և անհամաչափ մոտեցումներին, թեև կարող է կիրառել ռազմական և այլ հնարավորությունների ամբողջ գունապնակը, որպեսզի թուլացվեն հակառակորդի իշխանությունը, ազդեցությունը և կամքը:

չհայտարարված պատերազմ – необъявленная война – undeclared war

պատերազմի առիթ – казус белли (лат.), повод для развязывания войны – casus belli

պատերազմի ելք – исход войны – outcome of a war

պատերազմի թեժացում – տես *պատերազմ՝ պատերազմի ուժգնացում*

պատերազմի իրավունք – право войны – law of war

Միջազգային իրավունքի բաժին, որը կարգավորում է զինված հակամարտությունների վարման ընթացքը:

պատերազմի կանխում – предотвращение войны – prevention of war

պատերազմի հայտարարում – объявление войны – declaration of war

պատերազմի հրահրում – разжигание войны – war-mongering

պատերազմի հրծիգ – поджигатель войны – instigator of war

պատերազմի մարդասիրական իրավունք – гуманитарное право войны – humanitarian law in war

պատերազմի մարտավարական մակարդակ – тактический уровень войны – tactical level of war

Պատերազմական գործողությունների մակարդակ, երբ ճակատամարտերն ու մարտերը պլանավորվում և վարվում են մարտավարական կազմավորումների, զորամասերի, ստորաբաժանումների առջև դրված ռազմական նպատակներին հասնելու համար:

պատերազմի նյութական ծախքեր – материальные издержки войны – material costs of war

պատերազմի պարբերացում – периодизация войны – war periodization

պատերազմի ռազմավարական մակարդակ – стратегический уровень войны – strategic level of war

Պատերազմի մակարդակ, որի դեպքում պետությունը (հաճախ հանդես գալով որպես դաշնադրության անդամ) որոշում է ազգային ու բազմազգ (դաշինքի կամ դաշնադրության) ռազմավարական անվտանգային նպատակները և ուղենիշները, ապա ի հայտ է բերում և օգտագործում այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսները:

պատերազմի սանձազերծում – развязывание войны – unleashing of war

պատերազմի սկզբնական շրջան – начальный период войны – opening stage of war

պատերազմի վարման եղանակ – способ ведения войны – warfare

պատերազմի վարման ոչ ավանդական մեթոդներ – нетрадиционные методы ведения войны – unconventional warfare

Ի տարբերություն սովորական պատերազմից, որի նպատակը հակառակորդի ռազմական ներուժի նվազեցումն է, մարտական գործողությունների վարման ոչ ավանդական մեթոդների մարտավարությունը փորձ է հաղթանակի հասնելու համաձայնության, կապիտուլյացման կամ կողմերից մեկին ցույց տրվող գաղտնի աջակցության միջոցով: Դրանց ուժերն ու նպատակները ծածուկ են կամ ոչ հրատակորեն որոշված, իսկ ընդհանուր

կամ երկարաժամկետ նպատակն է հակառակորդին հետագա դիմադրությունից հրաժարման պարտադրումը:

պատերազմի վարում – ведение войны – warfare, conduct of war

պատերազմի ուժգնացում – эскалация войны – escalation of war

պատերազմի քարոզում – пропаганда войны – war mongering

պատերազմի օրենքներ և սովորույթներ – законы и обычаи войны – laws and customs of war

Պատերազմի ժամանակ պատերազմող կողմերի և չեզոք պետությունների իրավունքներն ու պարտականությունները կարգավորող միջազգային իրավական նորմերի ու բարոյական սկզբունքների համախումբը:

Պարսից ծոցի պատերազմ – война в Персидском заливе – Gulf War

Երկու պատերազմ. 1990–1991 թթ.՝ 34 պետությունների դաշնադրության պատերազմ Իրաքի դեմ որպես պատասխան Քուվեյթի վրա նրա հարձակման, 2003 թ.՝ դաշնադրային զորքերի կողմից Սադամ Հուսեյնի կառավարության տապալումը:

պարտիզանական պատերազմ – партизанская война – guerrilla warfare

վրազետնյա ականային պատերազմ – наземная минная война – land mine warfare

վրաջրյա պատերազմ – надводная война – surface warfare

Վրաջրյա ուժերով մղվող պատերազմ:

ստորջրյա պատերազմ – подводная война – undersea warfare

տարածաշրջանային պատերազմ – региональная война – regional war

տարաշարժային պատերազմ – маневренная война – maneuver warfare

տեղային պատերազմ – локальная война – local war

Ըստ քաղաքական նպատակների, ռազմական գործողությունների տարածքային ընդգրկման, կիրառվող զինված ուժերի ու միջոցների քանակի ու որակի՝ սահմանափակ պատերազմ:

տեղայնացված պատերազմ – տես *պատերազմ՝ տեղափակված պատերազմ*

տեղափակված պատերազմ – локализованная война – localized war

Պատերազմ, որը ձեռնարկված միջոցների շնորհիվ պարփակված է նեղ աշխարհագրական սահմաններում և հետագա ծավալում չի ստանում:

տեղեկության պատերազմ – информационная война, информационное противоборство – information warfare

«ցանցակենտրոն» պատերազմ – «сетевая» война, «сетевая» война – network war

Հայեցակարգ, որը նախատեսում է միացյալ ուժերի խմբավորումների մարտական հզորության մեծացում ի հաշիվ տեղեկության հաղորդակցային ցանցի ստեղծման, որը միավորի տեղեկության աղբյուրները (հետախուզությունը), կառավարման մարմինները և խոցման (ճնշման) միջոցները, ինչպես նաև օպերացիայի մասնակիցներին ժամանակի ռեալ մասշտաբում ապահովի իրադրության վերաբերյալ հավաստի ու լրիվ տեղեկությամբ՝ նրանց օժտելով մարտական ինքնավարությամբ:

փոքր պատերազմ – малая война – small war

քաղաքացիական պատերազմ – гражданская война – civil war

քիմիական և կենսաբանական պատերազմ – химическая и биологическая война – chemical and biological warfare, CBW

քիմիական պատերազմ – химическая война – chemical warfare

օդային պատերազմ – воздушная война – air warfare

**պատերազմական** – տես *ռազմական*

պատերազմական վիճակ – состояние войны – state of war, state of hostilities

Պետությունների (պետությունների դաշնությունների) միջև հարաբերություններ՝ նրանց միջև պատերազմի հայտարարման (ռազմական գործողությունների փաստացի սկսման) պահից մինչև դրա ավարտը: Պատերազմական վիճակի մեջ մտնելու հիմնական

իրավական ձևը պատերազմի հայտարարումն է (գործնականում ոչ միշտ է տեղի ունենում), իսկ դադարեցման ձևը՝ հաշտության պայմանագրի կնքումը (դրան կարող են նախորդել ռազմական գործողությունների փաստացի դադարեցումը, զանազան ժամանակավոր համաձայնագրերի կնքումը): Բնութագրվում է զինված ուժի կիրառմամբ բացահայտ պայքարով, դիվանագիտական, տնտեսական-հաղորդակցային և այլ կապերի խզմամբ, հակառակորդի պետական ունեցվածքի (որպես կանոն՝ բացի դիվանագիտական ներկայացուցիչների ունեցվածքից) առգրավմամբ, ներկավմամբ:

պատերազմական թղթակից – военный корреспондент, военкор – war correspondent, embed

Լրագրող, որը զորքի հետ տեղաշարժվում է և լրատվություն ուղարկում նրա կատարած մարտական գործողությունների մասին:

պատերազմական ժամանակ – военное время – wartime

պատերազմական հոգեխցկվածք – психическая травма, полученная в ходе войны – shell shock

Հոգեխցկվածք, որն ստացվել է պատերազմի ժամանակ:

պատերազմական նկրոզ – невроз военного времени – combat fatigue

պատերազմական շրջան – военный период – wartime

պատերազմական վիճակում գտնվող – տես *պատերազմող*

**պատերազմող** – воюющий – belligerent

**պատժախուց** – карцер – brig

**պատժամիջոց** – санкция – sanction

Իրավական նորմի տարր, որը նախատեսում է այդ նորմում պարունակվող կանոնը խախտած անձի համար անբարենպաստ հետևանքներ:

պատժամիջոցի կատարման պարտադրում – принуждение к соблюдению санкции – sanction enforcement

Օպերացիաներ, որոնք ներառում են պարտադրման միջոցներ՝ երկիր կամ

նրանից դուրս առանձին տեսակի պարանքների տեղափոխումը կանխելու համար:

պատժամիջոցների խախտում – нарушение санкций – violation of sanction

**պատժիչ** – карательный – punitive

**պատժում** – наказание – punishment

պատժում զորամասի տարածքից դուրս գալու արգելմամբ – наказание неувольнением из части – confined to barracks

**պատիժ** – наказание – punishment

**պատիճ** – 1. капсула, оболочка 2. տես *հրապատիճ* – 1. capsule, 2. տես *հրապատիճ*

**պատիճախցիկ** – капсула, герметичная кабина – capsule, sealed cabin

Բարձրաթիչ (բարձրլուորային) ինքնաթիռներում և տիեզերանավերում հերմետիկորեն փակվող խցիկ, որտեղ տաշուն (տիեզերագնացը) կամ ամբողջ անձնակազմը կարող է գտնվել առանց հատուկ պաշտպանազգեստի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում (պլանավորված կամ արտակարգ իրավիճակներում) արտանետվել և անվնաս վայրէջք կատարել:

**պատիվ** – 1. достоинство, честь, 2. почет, почесть, 3. տես *հարգանք* – 1. dignity, 2. honor, esteem, 3. տես *հարգանք*

զինվորական պատիվ – воинская честь – military honor

զինվորական պատիվներ – воинские почести – military honors

Ջինվորական ծեսի մաս. ՋՈՒ-ում սահմանված՝ հարգանքի մատուցման, մեծարանքի ձև:

զինվորի պատիվ – տես *պատիվ՝ զինվորական պատիվ*

պատվի ընկերական դատարան – товарищеский суд чести – Comrades' Court of Honor

Սպաների և ենթասպաների ընտրովի մարմին, որը կոչված է պաշտպանելու զինվորական կոչման պատիվն ու արժանապատվությունը, նպաստելու զին-

վորական կարգապահության ամրապնդմանը, իրավախախտումների կանխմանը:

**պատկեր** – 1. изображение, 2. картина – 1. image, 2. picture

1. Որևէ բանի կերպարը, վերարտադրությունը, տեսքը: 2. Տեսարան:

բազմատիրույթ պատկեր – многозональное изображение – multispectral imagery

գանգի պատկեր – череп (как символ смерти) – death's head

Մահվան ավանդական նշան:

թափանցիկ տակդիրի վրա արված պատկեր – изображение на прозрачной подложке – transparency

ինֆրակարմիր պատկեր – տես *պատկեր՝ ջերմային պատկեր*

միասնական մարտավարական պատկեր – единая тактическая картина – common tactical picture

Հետախուզական, վրագետնյա կայանների, մարտավարական տեղեկույթի հաղորդման բազմազիծ ցանցերից ստացվող մարտավարական տեղեկույթի միասնականացմամբ ձևավորված ճշգրիտ և ամբողջական պատկեր:

պատկերի կապուղու կասկադային ուժեղարար – каскадный усилитель канала изображения – cascade image intensifier

պատկերի հետ լուսանկարված չափիչ ցանց – измерительная сетка, сфотографированная вместе с изображением – reseau

պատկերի շեղման համակշռում – компенсация сдвига изображения – image motion compensation

պատկերի որակի վատացում – ухудшение качества изображения – image degradation

պատկերի պայծառության ուժեղարար – усилитель яркости изображения – image intensifier

պատկերի տեղաշարժ – смещение изображения – image displacement

պատկերի տվյալների գրանցում – запись данных изображения – imagery data recording

պատկերի ցայտունության կամ պայծառության ուժեղացում – усиление контрастности или яркости изображения – image intensification

պատկերների համախումբ – совокупность изображений – imagery

պատկերների համահարաբերակցություն – корреляция изображений – imagery correlation

Օպտիկական մեթոդ, որը կիրառվում է պատկերների վրա փոփոխությունների հարթ ու ծավալային ճշգրիտ չափումների համար պատկերների ուսումնասիրության և նույնականացման տեխնիկայում:

պատկերների մշակում – обработка изображений – imagery exploitation

ջերմային պատկեր – тепловое изображение, инфракрасное изображение – thermal image

Պատկեր, որն ստացված է ինֆրակարմիր ճառագայթման կիրառմամբ:

**պատկերացանց** – растр – raster, scanning pattern

Ցանց, որը նախանշանակված է լույսի ճառագայթների փնջի կառուցվածքային փոխակերպման համար:

կիսերանգային պատկերացանց – полутонный растр – half-tone screen

**պատկերում** – изображение – image

**պատճառում** – причинение – inflicting

**պատճեն** – копия – copy

օդալուսաքարտեզի պատճեն – копия аэрофотокарты – image map

Լուսագրաչափության մեջ. պատկերներից կամ պատկերների հաջորդաշարից կազմված քարտեզ, որին սովորաբար վրադրվում են կոորդինատային կամ երկրաբաշխական ցանցերը և այլ տվյալներ:

**պատճենորդ** – копировщик – tracer

**պատյան** – 1. кожан, чехол, 2. оболочка, скорлупа, 3. корпус, 4. футляр, ножны,



5. кобура – 1. jacket, case, 2. shell, 3. hull, fuselage, 4. sheath, scabbard, 5. holster

1. Տուփ, արկղ, պարկ ևն՝ մեջը գենք, գործիք, նվազարան դնելու և պահելու, կամ փոշուց ևն փչանալուց պահպանելու համար: 2. Մեխանիզմների, մեքենաների կամ նրանց մասերի մեկուսացման ու պահպանման համար փայտից, մետաղից, պլաստմասսայից ևն պատրաստված ծածկույթ, տուփ և այլն:

**պատնեշ** – 1. տես *արգելափակոց*, 2. барьер, 3. вал – 1. տես *արգելափակոց*, 2. barrier, 3. rampart

թիրախային պատնեշ – мишенный вал – butt

հակասուզանավային պատնեշ – противолодочный барьер – antisubmarine barrier

**պատնեշացանց** – сетка – cargo net

**պատնեշիչ** – заградительный – protective

**պատնեշում** – տես *փակում 3*

**պատսպարան** – укрытие – hide, defilade, cover

Ամրաշինական կառույցներ, բնական միջոցներ և տեղի առարկաներ, որոնք կարող են զորքը, ռազմական տեխնիկան ու զույքը պաշտպանել հակառակորդի խոցիչ միջոցներից ու հետախուզությունից, ինչպես նաև անբարենպաստ եղանակային պայմաններից, և որտեղ զորքը կարող է հանգստանալ և մնալ որպես պահուց:

**պատվածք** – покрытие – coating, coverage, covering

Որևէ բան ծածկող, շրջափակող, պատող շերտ:

թեթև պաշտպանիչ պատվածք – легкое защитное покрытие – light protective coating

լայնատիրույթ պատվածք – широкодиапазонное покрытие – wide-range coverage, broad-band cover

ռադիոկլանիչ պատվածք – радиопоглощающее покрытие – radio-cover, radio-absorbing covering

**պատվանդան** – 1. տես *հիսք 3*, 2. пьедестал – 1. տես *հիսք 3*, 2. pedestal

**պատվաստանյութ** – вакцина – vaccine

**պատվաստում** – 1. вакцинация, 2. прививка, 3. привитие – 1. vaccination, 2. inoculation, 3. inculcation

**պատվավոր անվանում** – почетное наименование – honorific

**պատվար** – 1. завеса, ширма, 2. տես *պաշտպանություն 3*

հակասուզանավային պատվար – տես *պահպանություն՝ հակասուզանավային պահպանություն*

**պատվեր** – заказ – order

հաստված գնի նշմամբ պատվեր – заказ с указанием фиксированной цены – fixed price order

Պատվեր, որում նշված է գինը, բայց կարող է արվել վերապահում, որ գները սահուն են:

պատվեր՝ խստիվ սահմանված գնի նշմամբ – заказ с указанием жестко фиксированной цены – firm fixed price order

Պատվեր, որում չի նշվում լողացող գների մասին ակնարկ:

պատվերի սպասման ժամանակը – время ожидания заказа – customer wait time

Պատվիրատուի կողմից պատվիրման և ապրանքի/ծառայության մատուցման միջև եղած ժամանակահատվածը:

պատվերների տեղաբաշխման կարգ – порядок размещения заказов – ordering procedures

Իրավանորմատիվային ամրագրում ստացած կանոնների, ընթացակարգերի և պահանջների համախումբ, որոնք կարգավորում են տվյալ ոլորտում գործունեությունը:

պետական պատվեր – государственный заказ, госзаказ – state order

«Պատվի ա՛ն» – «На караул!» – “Present arms!”



**պատվի առնել** – взять на караул – present arms

**պատվիրատու** – заказчик – customer

**պատրաստ** – готовый – ready

**պատրաստակամություն** – готовность – readiness, willingness

1. Որևէ բան անելու հոժարակամություն, պատրաստություն: 2. Պատրաստական արարք, վերաբերմունք:

**պատրաստականություն** – выучка – skill

1. Որևէ բանի համար անհրաժեշտ պատրաստություն՝ գիտելիքների՝ ունակություն: 2. Այդ գիտելիքների՝ ունակության նմանակարգակը՝ աստիճանը:

դաշտային պատրաստականություն – полевая выучка – fieldcraft

հատուկ պատրաստականություն (հետախույզի կամ հակահետախույզի) – специальная подготовка – tradecraft

Օպերատիվ մեթոդներ և հմտություններ, որոնք կիրառվում են հետախուզական գործունեության մեջ:

մարտական պատրաստականություն – боевая выучка – warfare skills

Ջորքերի (ուժերի) գիտելիքների ու հմտությունների, բարոյահոգեբանական ու ֆիզիկական հատկությունների համալիր, ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների, կառավարման մարմինների ուսումնական ժամկետներում ու ներդաշնակվածությունը և կարողությունը՝ մարտական գործողություններ վարելու իրադրության ցանկացած պայմաններում կամ կատարելու այլ խնդիրներ՝ ըստ իրենց նախանշանակման:

օդային պատրաստականություն – воздушная выучка – flight skills

Տարբեր իրադրություններում մարտական գործողություններ վարելուն թռիչքային անձնակազմի մասնագիտական ուսումնական ժամկետները:

ֆիզիկական պատրաստականություն – физическая выучка – physical skill

**պատրաստել** – 1. готовить, подготавливать, подготавливаться, 2. готовить, тренировать – 1. prepare, 2. train

**պատրաստի** – готовый – ready

պատրաստի առևտրային արտադրանք – готовое коммерческое изделие – commercial off-the-shelf

պատրաստի արտադրանք – готовое изделие, готовый продукт – end item

Շահագործման կամ կիրառման համար պատրաստի վիճակում գտնվող ապրանք՝ նյութեր՝ ռետուրսներ:

պատրաստի վիճակում – в состоянии готовности – made ready

**պատրաստվածություն** – подготовленность – preparedness

ֆիզիկական պատրաստվածություն – физическая подготовленность – physical fitness, physical preparedness

**պատրաստվածք** – տես *արտադրանք*

**պատրաստվել** – готовиться – prepare

պատրաստվել հրամանի կատարմանը – подготовиться к выполнению приказа – prepare to deploy order

պատրաստվել մարտի – приготовить к бою – prepare for action

**պատրաստություն** – готовность – 1. readiness, 2. preparedness

1. Պատրաստ լինելը, պատրաստ վիճակ: 2. Որևէ գործի, զբաղմունքի նման պատրաստված լինելը և դրա աստիճանը, մակարդակը:

արդյունաբերության պատրաստության ապահովման ծրագիր – программа обеспечения готовности промышленности – industrial preparedness program

արդյունաբերության պատրաստություն – готовность промышленности – industrial preparedness

զենքի համալիրների պատրաստություն – готовность боевых комплексов – weapons readiness state

Հակաօդային ուժերի մարտական պատրաստության աստիճան, որի դեպքում կրակային համալիրները պատրաստ են կիրառման:

զորահավաքային պատրաստություն – мобилизационная готовность – mobilization preparedness

1. Պետության, իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների ու ՋՈՒ-ի կարողությունը՝ կատարելու մոբիլիզացում: 2. Ջորքերի (ուժերի) վիճակ, որը նրանց հնարավորություն է տալիս սահմանված ժամկետում անցնելու պատերազմական ժամանակի կազմակերպահաստիքային կառուցվածքի:

ծավալումային պատրաստություն – տես *ծավալում՝ ծավալմանը զորամասի (ստորաբաժանման) պատրաստության աստիճան*

մարտական պատրաստության աստիճան – степень боевой готовности – defense readiness condition

մարտական պատրաստության մակարդակի գնահատում – оценка уровня боевой готовности – combat readiness assessment

մարտական պատրաստության պլան – план боевой готовности – plan of combat readiness

մարտական պատրաստության վիճակ – состояние боевой готовности – state of readiness, state

Սխալ արտահայտություն, որը տարածում է ստացել և՛ հայերենում, և՛ ռուսերենում, և՛ անգլերենում: Սխալը պայմանավորված է այն հանգամանքով, որ «պատրաստություն» բաղադրիչն արդեն ունի վիճակի իմաստ:

մարտական պատրաստություն – боевая готовность – combat readiness

Ջորքի վիճակ, որը նրան հնարավորություն է տալիս սահմանված ժամկետում սկսելու մարտական գործողություններ և դրանց ընթացքում հաջողությամբ կատարելու մարտական խնդիրները:

չեղյալ հայտարարել մարտական պատրաստությունը – отменить боевую готовность – stand down

Մարտական պատրաստության աստիճանի նվազեցում, բերում բնականոն՝ մշտական պատրաստությանը:

պատրաստության աստիճան – степень готовности – readiness state, degree of preparedness

պատրաստության բերման ժամանակը – время приведения в готовность – readiness time

պատրաստություն աղետներին – готовность к бедствиям – disaster preparedness

պատրաստություն արտակարգ իրավիճակներին – готовность к чрезвычайным ситуациям – emergency preparedness

Պետության, իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, փրկարարական, բժշկական և ԱԻ-ի հետևանքների վերացման ծրագրերով նախատեսված գերատեսչությունների, ծառայությունների ու դրանց գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների վիճակ, որով ապահովվում են արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցումը և արագ վերականգնումը:

ռազմական պատրաստություն – военная готовность – defence preparedness, military preparedness

Պետության (դաշնադրության) ռազմական կազմակերպության վիճակ, որը բնութագրում է նրա պատրաստությունը անմիջապես կատարելու իր զործառության խնդիրները:

օպերատիվ պատրաստության գնահատում – оценка оперативной готовности – operational readiness evaluation

օպերատիվ պատրաստություն – оперативная готовность – operational readiness

ֆիզիկական պատրաստություն – физическая готовность – physical readiness

**պատրաստում** – 1. приготовление, 2. подготовка, 3. տես *թողարկում* – 1. preparation, 2. training, 3. տես *թողարկում*

ավիացիոն պատրաստում – авиационная подготовка – aviation training

արտազորային պատրաստում – вневойсковая подготовка – pre-conscription and reserve military training

զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ աշխատանքի գծով ուսումնական պատրաստում – учебная подготовка по работе с представителями средств массовой информации – media awareness training

զինծառայողների անհատական պատրաստում – одиночная подготовка военнослужащих – individual training

ՁՈՒ-ի բոլոր ձևերի երիտասարդ շարքային զինվորների (նավաստիների) ուսուցում՝ մարտում իրենց պարտականությունները կատարելու, զենքի, ռազմական տեխնիկայի հետ վարվելու և ամենօրյա ծառայություն կատարելու համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ձեռքբերման համար:

զինծառայողների ինքնուրույն պատրաստում – самостоятельная подготовка военнослужащих, самоподготовка – self development

Չինծառայողների պատրաստման (ուսուցման) մեթոդ, որը հիմնված է ըստ հաստատված ծրագրի կատարվող ինքնուրույն աշխատանքի միջոցով անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման կամ ամրապնդման վրա:

զորահավաքային պատրաստում – мобилизационная подготовка – mobilization preparation

Խաղաղ ժամանակ իրագործվող միջոցառումների համալիր՝ նպատակաուղղված տնտեսության, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, զինված ուժերի ու պետության տարածքի պատեհաժամ պատրաստմանը զինված հարձակումից պետության պաշտպանությանը, պատերազմի ժամանակ պետության ու բնակչության պահանջմունքների բավարարմանը:

թռիչքամարտավարական պատրաստում – летно-тактическая подготовка – tactical flight training

Թռիչքային պատրաստման տեսակ. օդանավերի անձնակազմերի, ավիացիոն ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների ուսումնավարժեցում մարտի վարմանը:

թռիչքային պատրաստում – летная подготовка – flight training

Թռիչքային անձնակազմի ուսումնավարժեցում ինքնաթիռին (ուղղաթիռին), դրա սարքավորանքին ու սպառազինությանը տիրապետմանը, մարտական գործողությունների վարմանն ինչպես առանձին ինքնաթիռով (ուղղաթիռով), այնպես էլ ստորաբաժանման (զորամասի) կազմում՝ ըստ տվյալ տեսակի ավիացիայի նախանշանակման:

լեռնային պատրաստում – горная подготовка – mountain training

Ջորքերի ուսումնավարժեցում լեռնային պայմաններում մարտերի վարմանը:

համանավատորմային պատրաստում – общефлотская подготовка – all-fleet training

հատուկ պատրաստում – специальная подготовка – special training

հետախուզական պատրաստում – разведывательная подготовка – intelligence training

հրամանատարական պատրաստում – командирская подготовка – command training

Մարտական և օպերատիվ պատրաստման բաղկացուցիչ մաս. զեներալների ու ծովակալների, ենթասպանների, սերժանտների ու ավագների արհեստավարժության, մասնագիտական ու մեթոդական վարպետության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված ուսումնական միջոցառումների համալիր:

հրետանային պատրաստում – артиллерийская подготовка – artillery preparation

հրթիռահրաձգային պատրաստում – ракетно-стрелковая подготовка – rocket marksmanship

ՋՀՀ մարտական արդյունավետության և կիրառման հասցրերի ուսումնասիրություն. ներառում է՝ զենիթային կառավարվող հրթիռների ուղղորդման և նշանակետերի խոցման, տարապայթուցիչ գործարկման և կառավարման համակարգի աշխատանքի օրենքների, ինչպես նաև հրթիռ-

ների ուղղորդման, հրթիռների արձակման և ՋՀՀ-ներով օդային նշանակետերի խոցման գոտիների հաշվարկման մեթոդների և նուսումնասիրությունը:

մարտավարական մակարդակով ուսումնական պատրաստում – учебная подготовка на тактическом уровне – tactical training

մարտական նմանարկումային պատրաստում – имитационные учения – battle inoculation

Ջինվորների պատրաստում ճակատամարտի մոդելավորված մարտական էֆեկտների կիրառմամբ:

մարտական պատրաստման պլան – план боевой подготовки – plan of combat training

մարտական պատրաստում – боевая подготовка – combat training, tactical training

Անձնակազմի զինվորական ուսումնավարժեցմանն ու դաստիարակությանը, ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների ու դրանց կառավարման մարմինների լիաներդաշնակեցմանը նպատակամղված կազմակերպված գործընթաց, որի նպատակն է ապահովել ըստ նախանշանակման մարտական խնդիրների կատարումը և մարտական գործողությունների հաջող վարումը:

մարտական և օպերատիվ պատրաստման մեթոդիկա – методика боевой и оперативной подготовки – method of combat and operational training

մարտավարական պատրաստում – тактическая подготовка – tactical training

մարտավարամասնագիտական պատրաստում – тактико-специальная подготовка – special tactical preparation

Հատուկ զորքերի ստորաբաժանումների, զորամասերի և կառավարման մարմինների անձնակազմերի ուսումնավարժեցում մարտի վարմանը:

միացյալ մարտական պատրաստում – объединенная боевая подготовка, межвидовая боевая подготовка – joint training

Միջտեսակային կազմավորումների մարտական պատրաստման գծով միջոցառումների համալիր:

միջտեսակային մարտական պատրաստում – տես *պատրաստում՝ միացյալ մարտական պատրաստում*

նախագորակոչային պատրաստում – допризывная подготовка – pre-conscription training

նախամեկնարկային պատրաստում – предстартовая подготовка – pre-launch activities

նախնական զինվորական պատրաստում – начальная военная подготовка – basic military training

Դպրոցական դասընթաց (առարկա), որում ներառված են ռազմական գործի տեսական ու գործնական տարրական հիմունքները:

նորակոչիկների պատրաստման ծրագիր – տես *պատրաստում՝ նորակոչիկների սկզբնական պատրաստում*

նորակոչիկների սկզբնական պատրաստում – первоначальная подготовка новобранцев, курс молодого бойца – basic training

շարային պատրաստում – строевая подготовка – drill

պատրաստման ծրագիր – программа подготовки – training program

պատրաստում թռիչքի – подготовка к полету – flight preparation, pre-flight preparation

պատրաստում մարտական խնդրի կատարմանը – подготовка к выполнению боевой задачи – tactical mission preparation

ռազմաբժշկական պատրաստում – военно-медицинская подготовка – military medical training

ռազմական պատրաստում – военная подготовка – military training

սկզբնական հոգեբանական պատրաստում – начальная психологическая подготовка – indoctrination, initial psychological preparation

սկզբնական պատրաստում – начальная подготовка – indoctrination

սպայական կադրերի պատրաստում – подготовка офицерских кадров – training of officers

քաղաքացիների պատրաստում զինծառայությանը – подготовка граждан к военной службе – training of civilians for military service

օպերատիվ-մարտավարական պատրաստում – оперативно-тактическая подготовка – operational-tactical training

օպերատիվ միջավայրի համատեղ հետախուզական պատրաստում – совместная разведывательная подготовка оперативной среды – joint intelligence preparation of the operational environment

օպերատիվ պատրաստում – оперативная подготовка – operational training

Գեներալների, սպաների և ռազմավարական, օպերատիվ-ռազմավարական, օպերատիվ ու օպերատիվ-մարտավարական օղակների կառավարման մարմինների հիմնական տեսակի պատրաստում, որի նպատակն է ուսուցանվողների կողմից խոր օպերատիվ-ռազմավարական ու օպերատիվ-մարտավարական գիտելիքների և դրանք գործնականում կիրառելու հմտության ձեռքբերումը, կառավարման մարմինների պահպանումն օպերատիվ խնդիրների լուծման ժամանակ գործերի կառավարմանը մշտապես պատրաստի վիճակում:

ֆիզիկական պատրաստում – физическая подготовка – physical training, calisthenics

**պատրույզ** – фитиль – fuze, match

**պատուհաս** – տես *աղետ*

սոցիալական պատուհաս – социальное бедствие – social disaster

Որևէ երկրի, երկրների խմբի կամ ամբողջ մոլորակի բնակչության զգալի զանգվածներ ընդգրկող մեծ դժբախտություն, որը դրսևորվում է մարդկանց զանգվածային մահացությունների, ավերածությունների, համատարած սովի, ծնելիության կտրուկ նվազման,

զանգվածային գաղթի, ուղեղների արտահոսքի և այլ բացասական երևույթների ձևով:

**պատում** – 1. нанесение, покрытие, 2. տես *պատվածք 1*, 3. տես *պարուրում* – 1. plating, 2. տես *պատվածք 1*, 3. տես *պարուրում*

**պարագա** – տես *հանգամանք*

**պարագիծ** – периметр – perimeter, periphery

**պարագլուխ** – главарь – warlord

**պարալաքս** – տես *տեղազանություն*

**պարամետր** – параметр – parameter

1. Համակարգի, սարքի որևէ հատկություն բնորոշող մեծություն: 2. Մաթեմատիկական բանաձևում եղած մեծություն, որի արժեքը տվյալ խնդրի սահմաններում հաստատուն է:

օդային պարամետրների մշակման կենտրոնական ԷՀՄ – центральная ЭВМ обработки воздушных параметров – central air data computer, air data computer

Սարք, որը ճնշման ու ջերմաստիճանի հիման վրա հաշվարկում և ցույց է տալիս բարձրությունը, ուղղաձիգ արագությունը, օդի շարժման արագությունը և Մախի թիվը:

**պարան** – веревка – cord

**պարաշյուտ** – парашют – parachute

արտածգիչ պարաշյուտ – вытяжной парашют – extraction parachute

իջեցում պարաշյուտով – выброска с воздуха, десантирование парашютным способом – air drop

պարաշյուտի բացման բարձրություն – высота раскрытия парашюта – parachute deployment height

պարաշյուտի գմբեթ – купол парашюта – canopy

պարաշյուտով դուրս նետվել – выбрасываться с парашютом – bail out, bale out

Արտակարգ իրավիճակում պարաշյուտով դուրս նետվել կործանվող ինքնաթիռից:

պարաշյուտով թռիչք – տես *թռիչք՝ պարաշյուտային թռիչք*

տևողական թռիչք պարաշյուտով – затяжной прыжок с парашютом – free-fall jump  
Պարաշյուտով թռիչք, որի ժամանակ պարաշյուտիստը ճանապարհի մեծ մասն անցնում է ազատ անկման բանելակարգով և միայն երկրի մակերևույթից որոշ (ոչ մեծ) հեռավորության վրա բացում է պարաշյուտը:

**պարաշյուտավոր** – տես *պարաշյուտիստ*

**պարաշյուտիստ** – парашютист – parachutist

ինքնաթիռից պարաշյուտիստների թողարկիչ – выпускающий парашютистов из самолета – stick commander

խմբաթիռ պարաշյուտիստներ – группа парашютистов – stick

պարաշյուտիստների փոքր խումբ – маленькая группа парашютистов – little groups of paratroopers

**պարապմունք** – занятие – study period

դաշտային պարապմունք – полевые занятия – field training

թռուցիկ պարապմունք – летучка – briefing

Օպերատիվ արվեստի և մարտավարության գծով հրամանատարական պատրաստման պարապմունքների ձև. անցկացվում է քարտեզի (տեղանքի մանրակերտի) վրա դասարանում կամ տեղանքում՝ սովորողների մեջ սահմանափակ ժամկետում իրադրությունն արագ ու ճիշտ գնահատելու, օպերացիայի (մարտի) վերաբերյալ որոշում ընդունելու, ենթականերին խնդիրներ առաջադրելու կարողություններ ձևավորելու, ինչպես նաև զորքերի կառավարման գծով նրանց գիտելիքներն ու հմտություններն ստուգելու նպատակով:

ուսումնական պարապմունք – учебное занятие – exercise study

**պարբերություն** – период – period

**պարգև** – награда – reward

**պարգևանշան** – наградной знак – decoration

Սովորաբար՝ քաջության կամ մեծ ձեռքբերումների համար տրվող նշան, որը կրում են կրծքին:

**պարեկ** – патруль – patrol

1. Մի խումբ զինծառայողներ (ստորաբաժանում), որոնք նշանակված են հակառակորդին հետևելու, որոշակի շրջան պահպանելու համար: 2. Մի խումբ զինծառայողներ, որոնք նշանակված են կայազորում (զինվորական ավանում) պարեկման համար:

հեծելապարեկ – конный патруль – horse patrol, mounted patrol

մարտական արգելապատնեշային օդային պարեկ – заградительный боевой воздушный патруль, истребители дальнего прикрытия – barrier combat air patrol

Կործանիչ ինքնաթիռների ջոկատ, որը տվյալ օբյեկտը օդային պարեկությամբ ծածկապաշտպանում է հակառակորդի օդային հարվածներից:

մարտական պարեկ – боевой патруль – combat patrol, fighting patrol

մարտական օդային պարեկ – боевой воздушный патруль, воздушная группа прикрытия – combat air patrol

պարեկի անդամ – տես *պարեկային 2*

սահմանային պարեկ – пограничный патруль – border patrol

տեղանքի սուխազերծման պարեկ – патруль зачистки местности от врага – clearing patrol

Պարեկ՝ ջոկատ, որին հանձնարարված է հայտնաբերել և վնասագերծել տվյալ վայրում հակառակորդի մնացած (հատուկ նպատակով թողնված) զինվորին (զինվորներին):

փրկարարական օպերացիայի օդային պարեկ – воздушный патруль в спасательной операции – rescue combat air patrol

**պարեկային** – 1. патрульный, 2. патрульный, член патруля –1. patrol, 2. patroller

**պարեկում** – патрулирование – patrolling

1. Պարեկային ծառայության կատարում՝ հակառակորդին հետևելու, յուրային զորքերը պահպանելու և ծածկապաշտպանելու համար: 2. Կայազորում պարեկների ծառայությունը: 3. Պահակային ծառայության կատարման եղանակ, երբ պահպանվող օբյեկտների շուրջ կատարվում է հաստատված երթուղիներով շրջայց-զննում:

օդային տարածքի պարեկում – патрулирование воздушного пространства – air policing

Խաղաղ ժամանակ որսիչ կործանիչների կիրառում՝ տվյալ օդային տարածության անձեռնմխելիությունն ապահովելու համար:

**պարեկություն** – տես *պարեկում*

հակասուզանավային պարեկություն – противолодочное патрулирование – antisubmarine patrol

մշտական պարեկություն – постоянное патрулирование – standing patrol

**պարենային մատակարարում** – продовольственное снабжение – ration

**պարենավորում** – տես *ապահովում*՝ *պարենային ապահովում*

**պարետ** – комендант – commandant

Որևէ հասարակական շենքի (շինության, կառույցի) կառավարիչ:

**պարետային** – комендантский – commandant

Պարետին՝ պարետությանը վերաբերող՝ հատուկ:

պարետային ժամ – комендантский час – curfew

Օրվա սահմանված ժամանակ (սովորաբար երեկոյան ու գիշերը), երբ տվյալ բնակավայրի բնակիչներին արգելվում է առանց հատուկ թույլտվության դուրս գալ փողոց:

պարետային ժամի սահմանում – введение комендантского часа – imposition of curfew

պարետային ծառայություն – комендантская служба – commandant's (control) service

Այնպիսի միջոցառումների համակարգ, որոնք կազմակերպվում և իրագործվում են զորքերի պատեհաժամ ու ծածուկ տեղափոխման, կենտրոնացման, ծավալման ու տեղաբաշխման ապահովման, ինչպես նաև նրանց տեղաբաշխման ու մարտական գործողությունների վարման շրջաններում ընդհանուր կարգուկանոնի պահպանման նպատակով:

**պարզել** (առազատ, դրոշ) – развертывать (парус, флаг) – shake out

**պարզորոշում** – уяснение – clarification, comprehension

Լիարժեք ըմբռնում, իմաստավորում, ընկալում:

**պարկ** – мешок – bag

**պարկուճ** – гильза – cartridge case, shell case

Հրետանային կրակոցի, հրաձգային փամփուշտի տարր, որում տեղադրվում են նետիչ լիցքը և դրա բոցավառիչը:

կրակված պարկուճ – отстрелянная гильза – empty case

**պարպում** – разряд, разрядка – discharge

լարվածության պարպում – разрядка напряженности – détente

Երկու պետությունների կամ պետությունների խմբերի, բլոկների միջև հարաբերություններում առձակատման ագրեսիվության նվազում:

**պարպված** – разряженный – made safe

պարպված մարտկոց – разряженная батарея – dud

Առանց էլեկտրական լիցքավորվածության՝ էլեկտրականորեն չէզոք վիճակում գտնվող մարտկոց:

**պարսատիկ** – праща – sling

«Պարսից ծոցի պատերազմի համախտանիշ» – «Синдром войны в Персидском заливе» – Gulf War Syndrome

Հիվանդություն, որով տառապում են Պարսից ծոցի առաջին (1991 թ.) պատերազմի վետերանները, և որի համախտանիշներն են՝ մշտական գլխացավերը, ընկալման պրոբլեմները, անբացատրելի հոգնածությունը, ցանր,



մշտական փորլուծությունը և շնչառական պրորլեմները:

**պարտադրական** – տես *հարկադրական*

**պարտադրանք** – տես *հարկադրանք*

**պարտադրում** – принуждение – enforcement, coercion

**պարտազանցություն** – нарушение долга – dereliction of duty

**պարտականություն** – обязанность, долг – duty, responsibility

1. Այն, ինչ որևէ մեկը պետք է անվերապահորեն կատարի, այն, ինչ հասարակական պահանջով կամ ներքին մղումով պետք է պարտադրաբար կատարվի: 2. Ծառայություն, որևէ պաշտոնի կատարման հետ կապված և պաշտոնեական գործառույթներով պայմանավորված գործողությունների շրջան՝ համախումբ:

գործառությանին պարտականություններ – функциональные обязанности – functions  
Ռազմական բնագավառում. անհատի, հիմնարկի կամ կազմակերպության տրված կամ սահմանված պարտականությունները, պատասխանատվությունը, առաքելությունը:

**պարտավորություն** – обязательство – commitment, responsibility

Հարաբերական քաղաքացիական իրավաբանական պարտություն, ըստ որի՝ մի կողմը (պարտապան) պետք է հոգուտ մյուս կողմի (պարտատեր) կատարի որոշակի գործողություններ կամ զերծ մնա որոշակի գործողությունների կատարումից:

ռազմաքաղաքական պարտավորություններ – военно-политические обязательства – political-military commitments

**պարտիզան** – партизан – guerrilla, partisan

Անձ, որը կամավոր կերպով կռվում է հակառակորդի գրաված տարածքներում գործող կազմակերպված զինված կազմավորումների կամ պետական վարչակարգի դեմ պայքարող ապստամբ ուժերի կազմում:

**պարտություն** – поражение – defeat

1. Ջախջախվելը, ծնկի բերվելը: 2. Անհաջողություն, ձախողում:

պարտության մատնել – наносить поражение – inflict a defeat

ջախջախիչ պարտություն – разгромное поражение – rout

**պարտվողական** – пораженец – defeatist  
Պարտվողականության կողմնակից:

**պարտվողականություն** – пораженчество – defeatism

Քաղաքական տրամադրություններ, որոնք համապատասխանում են պատերազմում իր պետության կառավարության պարտության ցանկությանը:

**պարտք** – 1. долг, 2. задолженность, долг – 1. duty, 2. debt

1. Անձնավորության կողմից հասարակական կամքին ենթարկվելու անհրաժեշտության ընդունումը, հասարակական բարոյականության պահանջների վերածումն իր անձնական հրամայականի և կամավոր կատարումը: 2. Պարտավորություն, ինչպես նաև դրամական միջոցներ կամ այլ ակտիվներ, որոնք մի անձ (վարկատու) փոխանցում է մեկ այլ անձի (վարկառու)՝ դրանք վերադարձնելու և դրա համար վարձատրելու պայմանով:

դեբիտորական պարտք – дебиторская задолженность – debts receivable

երկարաժամկետ դեբիտորական պարտք – долгосрочная дебиторская задолженность – long-term receivables

պետական պարտքի ճանաչում – легализация долга – validation

ռազմական պարտքեր – военные долги – war debts

Պետական պարտք, որը գոյացել է ռազմական ծախսերի աճման հետևանքով:

**պարուրում** – окутывание – envelopment

**պացիֆիզմ** – տես *խաղաղապաշտություն*

**պացիֆիստ** – տես *խաղաղապաշտ*

**Պենտագոն** – տես ԱՄՆ՝ ԱՄՆ-ի պաշտպանական գերատեսչություն

**պետ** – начальник – chief, superior

ինժեներական ծառայության պետ – начальник инженерной службы – engineer commander

հետախուզության պետ – начальник разведки – intelligence officer

մասնագիտացված մատակարարման պետ – начальник специализированного снабжения – commodity manager

նավային հերթափոխի պետ – вахтенный начальник – officer of the deck

**պետական** – государственный – 1. state, national, 2. public  
Պետությանը հատուկ, վերաբերող:

**պետականություն** – государственность – statehood

ազգային պետականություն – национальная государственность – national statehood

Ազգային-տարածքային կազմավորում ստեղծելու քաղաքական իշխանության հատկությունը, որն արտահայտում է ազգի կամ որևէ էթնոսի ինքնիշխանությունը մարմնավորելու և պաշտպանելու ռեալ կարողությունը:

**պետանավ** – командирский корабль, флагман – flagship

Նավ, որին գտնվում է տվյալ նավաջոկատի հրամանատարը, որի դրոշակը բարձրացվում է այդ նավի վրա:

պետանավի հրամանատար – командир флагманского корабля, командир флагамана – flag-captain

**պետութենակենտրոնություն** – государствоцентричность – state centrivity

Քաղաքականություն, գաղափարախոսություն, մոտեցում են, որոնց առանցքը պետության՝ պետականության գաղափարն է, նրա շահերի գերակայությունը:

**պետություն** – государство – state, nation

Քաղաքականորեն կազմակերպված հասարակություն, որն ունի իշխանության հաստատությունների, իրավական նորմերի ու տնտեսական կապերի համակարգ, ինչպես նաև ինքնիշխանական տարածք:

ազգային պետություն – национальное государство – nation-state

Սահմանադրական-իրավական տիպի պետություն, որը որոշակի ինքնիշխանական տարածքում որոշակի ազգի ինքնորոշման ու կազմակերպման ձև է և արտահայտում է այդ ազգի կամքը:

գործընկեր պետություն – партнерствующее государство – partner nation

ԱՄՆ-ի քաղաքականության մեջ. պետություն, որն ԱՄՆ-ի հետ համագործակցում է թմրանյութերի ապօրինի տարածման և դրանց վաճառքից ստացվող փողերի «լվացման» դեմ պայքարում:

գորք հատկացրած պետություն, որը ՆԱՏՕ-ի անդամ չէ – страна, выделившая войска, не являющаяся членом НАТО – Non-NATO Troop-Contributing Nation

ընդունող պետությանն աջակցության մասին պայմանավորվածություններ – договоренности о поддержке принимающего государства – host nation support arrangements

Ընդունող պետությանը ցուցաբերվող աջակցության տրամադրման մեխանիզմներ:

ընդունող պետությանն աջակցություն – поддержка принимающего государства – host nation support

ընդունող պետություն – принимающее государство – host nation, host country, host state

Պետություն, որի տարածքում անցկացվում է միջազգային խորհրդաժողով կամ ուսումնակրթական դասընթացներ, գտնվում է միջազգային կազմակերպության կենտրոնակայանը կամ օտար պետության ներկայացուցչությունը:

կազմակերպիչ պետություն – государство-организатор – lead nation

Միացյալ ուժերի թիկունքային ապահովման համար պատասխանատու կամ ՆԱՏՕ-ի հետ համատեղ նախագծերում կազմակերպիչ գործառույթներ կատարող պետություն:

համադասող պետություն (Միացյալ ուժերի թիկունքային ապահովման) – государство-координатор – lead nation

համընդհանուր բարեկեցության պետություն – государство всеобщего благоденствия – welfare state

1. Քաղաքական համակարգ, որի դեպքում սոցիալական քաղաքականությունը դառնում է կառավարության գործունեության գերակա ուղղություն, և պետությունն ստանձնում է իր բոլոր քաղաքացիների բարեկեցության ապահովման պարտավորություն: 2. Հայեցակարգ, որը ժամանակակից կապիտալիստական (ժողովրդավարական) հասարակությունը դիտում է որպես այն աստիճանի զարգացած հասարակություն, որը շնորհիվ գիտության, տեխնիկայի և տնտեսության ներկայիս բարձր մակարդակի ի վիճակի է ապահովելու իր բոլոր անդամների համեմատաբար բարձր կենսամակարդակը:

մասնակցություն օտար պետության «ներքին պաշտպանությանը» – участие во «внутренней обороне» иностранного государства – foreign internal defense

Կառավարական քաղաքացիական կամ ռազմական մարմինների մասնակցությունը այլ կառավարության կամ կազմակերպության պլանավորված գործողություններին՝ դրանց հանրությունը դիվերսիաներից, անօրենություններից, ապստամբություններից, ահաբեկչություններից կամ անվտանգության համար այլ սպառնալիքներից ազատելու և պաշտպանելու նպատակով:

որոշակի գործառույթ ստանձնած պետություն – государство, выполняющее определенную функцию – role specialist nation

Պետություն, որը համաձայնություն է տվել բազմազգ ուժերին կամ դրանց մի մասին որոշակի պաշարներով կամ ծառայություններով ապահովելու հարցում:

որոշակի տեսակի թիկունքային ապահովման գծով մասնագիտացած պետություն – государство, специализирующееся на определенном виде тылового обеспечения – logistic role specialist nation

պետության գործառութային մասնագիտացում – функциональная специализация государства – role specialization

ՆԱՏՕ-ում. ամբողջ բազմազգ խմբավորման կամ դրա մի մասի համար որո-

շակի տեսակի մատակարարման կամ ծառայությունների տրամադրման վերաբերյալ պատասխանատվություն, որը մասնակից պետությունների միջև համակշռման և/կամ հատուցման մասին համաձայնությունների հիման վրա իր վրա է վերցնում որևէ պետություն:

պետության խոցելիություն – уязвимость государства – vulnerability of a state

Պետության քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և այլ ենթակառուցվածքի, ինչպես նաև ռազմական կազմակերպվածքի չպաշտպանված կամ վատ պաշտպանված տարրերի համախումբը, որի առկայությունն ստիպում է ռազմաքաղաքական ճգնաժամի ժամանակ գնալու լուրջ զիջումների, իսկ պատերազմի կամ զինված հակամարտության դեպքում կանխորոշում է մեծ հավանականությամբ պարտություն:

պետության պատրաստում պաշտպանությանը – подготовка государства к обороне – preparation of the state for defense

Համապատասխան պետական և ոչ պետական կառույցների կողմից համադասված միջոցառումների համակարգի կազմակերպման և իրականացման բարդ, բազմակողմանի և շարունակական գործընթաց՝ ուղղված զինված հարձակումից պաշտպանությանը նրա բոլոր ոլորտների պատեհաժամ և լրիվ պատրաստության համակողմանի ապահովմանը:

պետության ռազմական կազմակերպվածք – военная организация государства – military organization of the state

պետության տարածքի օպերատիվ սարքավորում պաշտպանության համար – оперативное оборудование территории страны в целях обороны – strategic preparation of a country for defense

պետության տիեզերական գերազանցություն – космическое превосходство страны – space superiority

պետության պաշտպանունակություն – обороноспособность государства – national defense capability

Ազրեսիայի հետմղմանը, պետության տարածքային ամբողջականության և

անկախության պաշտպանությանը նրա տնտեսության, բնակչության և ՋՈՒ-ի պատրաստվածության մակարդակը:

պետությունների կամավոր ավանդ – добровольный вклад государств – voluntary national contributions

ՆԱՏՕ-ում. կոնկրետ ծրագրերի իրագործման համար ՆԱՏՕ-ի անդամ առանձին պետությունների ֆինանսական կամ այլ բնույթի օգնությունը:

ֆինանսավորող պետություն (ՆԱՏՕ-ի համատեղ ծրագրերում) – финансирующее государство – funding nation

**պետպատվեր** – տես *պետական՝ պետական պատվեր*

**պիտակավորում** – маркировка товара – marking

**պիոներ** – пионер – pioneer

Առջևից գնացող և ճանապարհի հարթող ինժեներասակրավորային զորամասի զինծառայող:

**պիտանիություն** – пригодность, соответствие – fitness

Օգտակարություն, կիրառելիություն:

հոգեբանական պիտանիություն – психологическая пригодность – mental fitness

պիտանիության ժամկետ – срок годности – shelf life

ժամկետ, որի ընթացքում տվյալ իրը՝ առարկան՝ նյութը՝ մթերքը պահպանում է օգտագործման համար սահմանված հատկությունների որակական ու քանակական պարամետրները:

**պիրօքսիլին** – пироксилин – pyroxylin, gun cotton

Ազոտ պարունակող նիտրաթաղանթանյութ, անծուխ վառողների հիմքը:

**պլան** – план – plan, schedule

1. Որոշակի գործողությունների նախապես մշակված ծրագիր՝ համակարգ, որը նախատեսում է դրանց կատարման կարգը, հաջորդականությունը և ժամկետները: 2. Պայմանական նշանների օգտագործմամբ գծագիր:

առաքման պլան – план отправки – base mobility plan

Ջորամասի տեղաբաշխման վայրից անձնակազմի և ռազմական տեխնիկայի՝ տեղաբաշխման այլ վայր ուղարկման պլան:

արգելապատնեշային համակարգի ստեղծման պլան – план оборудования системы заграждений – barrier, obstacle, and mine warfare plan

Համապարփակ համադասված պլան, որը ներառում է արգելապատնեշների, խոչընդոտների և ականադաշտերի ստեղծման համար պատասխանատվությունը, ընդհանուր և հատուկ արգելապատնեշների, խոչընդոտների և ականադաշտերի ընդհանուր տեղադրությունը, հատուկ հրահանգները, սահմանափակումները և ավարտման ժամկետը, ինչպես նաև կարող է նախանշել արգելապատնեշների գոտիների կամ շերտերի տեղերը:

բեռնային պլան – грузовой план – loading plan

գործառության պլան – տես *պլան՝ մասնավոր պլան*

գործողությունների պլան – план действий – action plan

Ջինված ուժերի զարգացման պլան – план развития вооруженных сил – armed forces development plan

զորահավաքային պլան – мобилизационный план – mobilization plan

թիկունքային ապահովման պլան – план тылового обеспечения, вспомогательный план – supporting plan

Կազմվում է որպես օպերացիայի պլանի օժանդակ պլան՝ այն մանրամասնելու նպատակով:

ինժեներական ապահովման պլան – план инженерного обеспечения – engineer support plan

Օպերատիվ պլանի հավելված, որն ընդգրկում է ինժեներատեխնիկական անհրաժեշտ ծառայությունները, որ պետք է կատարվեն:

հաստատված պլան – утвержденный план – final plan

հատուկ իրավիճակում ձեռնարկվող գործողությունների պլան – план действий в особой обстановке – contingency plan

հետախուզման պլան – տես *պլան՝ հետախուզական տվյալների հավաքման պլան*

հետախուզական տվյալների հավաքման պլան – план сбора разведывательных сведений, план разведки – collection plan

հիմնական օպերացիոն պլան – основной план операции – base plan

Պլանի տեսակ, որը նկարագրում է օպերացիայի ընդհանուր գաղափարը, ներգրավված հիմնական ուժերը և մարտական առաջադրանքն ավարտին հասցնելու նախատեսված ժամկետները:

մասնավոր պլան – частный план, функциональный план – functional plan

Խաղաղ ժամանակ կամ թույլատրված միջավայրում ռազմական օպերացիաների իրագործումը ներառող պլան, որը մարտական հրամանատարներն ըստ Ռազմավարական ուժերի և միջոցների կիրառման միացյալ պլանի մշակում են այնպիսի պահանջմունքների գծով, ինչպիսիք են՝ աղետների ժամանակ բնակչությանը օգնության ցուցաբերումը և պաշտպանությունը, պետական օգնությունը, նյութական ապահովումը, գոյապահպանությունը, հաղորդակցության և կապի ապահովումը, միջուկային զենքի կիրառման դեպքում տարահանման և վերականգնողական աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև օպերացիաների շարունակականության ապահովումը և նմանատիպ այլ խնդիրներ:

մարտական թռիչքների պլան – план боевых вылетов – plan of combat sorties, plan of combat flights

մարտական պատրաստության պլան – план боевой готовности – plan of combat readiness

մարտավարական պլան – тактический план – course of action, tactical plan

Պլան, որը կազմվում է համեմատաբար կարճ ժամանակահատվածի համար, սովորաբար՝ մեկ տարի կտրվածքով:

մոբիլիզացիոն պլան – мобилизационный план – mobilization plan

1. Այն փաստաթղթերի համախումբը, որոնք արտացոլում են ամբողջ ՁՈՒ-ի, նրա առանձին տեսակների, զինվորական օկրուգի, միավորման, զորամիավորման, զորամասի, հիմնարկի զորահավաքային ծավալման միջոցառումների բովանդակությունը, ծավալը, կարգը և իրականացման ժամկետները: 2. Այն փաստաթղթերի համախումբը, որոնք արտացոլում են պետության տնտեսությունը և զանազան պետական հաստատությունները պատերազմական ժամանակի պայմաններում գործունեության բանեակարգի փոխադրելուն ուղղված միջոցառումների բովանդակությունը, ծավալը, կարգը և իրականացման ժամկետները:

մոտավոր պլան – примерный план, черновой план – outline plan

միացյալ ռազմավարական ուժերի և միջոցների բաշխման պլան – план распределения объединенных стратегических сил и средств – joint strategic capabilities plan

նախագծային պլան – проект плана – draft plan

նախնական պլան – տես *պլան՝ մոտավոր պլան*

պարապմունքի պլան – план проведения занятия – lesson plan

պլանի ամփոփումը – резюме плана – plan summary

Պլանի հիմնական դրույթների ավարտական համառոտման բաժինը:

օդային տեղափոխումների գծով կապորդ սպա – офицер связи по воздушным переброскам – air mobility liaison officer

օդային փոխադրումների գծով սպա – офицер по воздушным перевозкам – air movement officer

**սպայակազմ** – տես *կազմ` սպայական կազմ*

**սպայական** – офицерский – officer

սպայական կաշեգոտի – офицерская портуя – Sam Browne belt, Sam Browne

սպայական կոչման շնորհում – присвоение офицерского звания – commissioning

սպայական շրջափոխություն – офицерская ротация – officer rotation

Սպայական պաշտոններում սպաների հերթով գտնվելը` հերթազայումը:

սպայության թեկնածու – кандидат в офицеры – officer candidate

**սպանդ** – տես *կոտորած*

արյունալի սպանդ – տես *արյունահեղություն*

**սպանել** – убивать – kill

**սպանվել** (մարտում) – տես *զոհվել*

**սպանություն** – убийство – murder, killing

սպանություն` խղճահարությունից դրդված – убийство из жалости – coup de grâce

Վիրավոր անծի կամ կենդանու սպանություն, եթե նրա փրկությունն անհնար է, հետագա տանջանքներից ազատելու համար:

**սպառազինված** – տես *զինված*

**սպառազինություն** – вооружение – armament, weaponry, arms

Միջոցներ, ներառյալ` բաղադրիչ մասերը, որոնք նախատեսված են հակառակորդի կենդանի ուժը, տեխնիկան, շինությունները և այլ օբյեկտներ խոցելու համար, ինչպես նաև միջոցներ, որոնք անմիջականորեն ապահովում են դրանց կիրառումը (ուղղորդում, արձակում, կառավարում և սպասարկում):

արտասահմանյան պետությունների սպառազինության ու ռազմական տեխնիկայի վաճառք – продажа оружия и военной техники иностранным государствам – foreign military sales

զրահատանկային սպառազինություն – бронетанковое вооружение, танковое вооружение – armored

կցված սպառազինություն – տես *սպառազինություն` հաստիքային սպառազինություն*

հակատանկային սպառազինություն – противотанковое вооружение – antitank weapons

հանում սպառազինությունից – снятие с вооружения – decommissioning

հաստիքային սպառազինություն – табельное вооружение – standard weapon

Սպառազինություն, որը նախատեսված է զորամասի հաստիքացուցակով:

հրետանային սպառազինություն – артиллерийское вооружение – artillery weapons

ռազմավարական սպառազինություն – стратегическое вооружение – strategic arms

ռազմավարական սպառազինությունների սահմանափակում և կրճատում – ограничение и сокращение стратегических вооружений – reduction and limitation of strategic arms

սովորական սպառազինություն – տես *զենք` սովորական զենք*

սովորական սպառազինությունների ներուժ – потенциал обычных вооружений – conventional weapons capabilities

սպառազինության արդիականացում – модернизация вооружения – armaments modernization

Սպառազինության հին նմուշների կատարելագործում կամ փոխարինում նոր տեսակներով` ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

սպառազինության բնագավառում պլանավորման, ծրագրերի և քաղաքականության վարչություն – Управление планирования, программ и политики в об-



ласти вооружения – Armaments Planning, Programs and Policy Directorate

սպառազինության գործարան – завод по производству вооружения – armaments factory

սպառազինության համալիր – комплекс вооружения – weapon system

Գործառնություն միջանց փոխկապված խոցման միջոցների և դրանց մարտական կիրառումն ապահովող տեխնիկական միջոցների համախումբ:

սպառազինության համակարգի կիրառման հայեցակարգ – концепция применения системы вооружения – weapon system employment concept

Կոնկրետ սպառազինության համակարգի կիրառման պայմանների ընդհանուր նկարագրություն՝ հիմնված այդ համակարգի բնութագրիչների վրա, որը ներառված է ընդհանուր մարտավարական հայեցակարգի կամ դոկտրինային դրույթների համակարգի շրջանի մեջ:

սպառազինության մեջ ընդունում – принятие на вооружение – service introduction

Պաշտոնական որոշում (հրաման) այն մասին, որ նորաստեղծ կամ նոր արդիականացված ռազմական տեխնիկան ներառված է պետության զինված ուժերի հաստիքային միջոցների կազմում:

սպառազինության շուկա – տես *զենք՝ զենքի շուկա*

սպառազինության պաշարների ոչնչացում – уничтожение запасов вооружения – weapon stockpile destruction

Սպառազինությունների կրճատման քաղաքականության իրացման եղանակ:

սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում – модернизация вооружения и военной техники – modernization of weapons and military equipment

սպառազինության և ռազմական տեխնիկայի պաշարներ – запасы вооружения и военной техники – stocks of arms and military equipment, materiel

սպառազինություն և ռազմական տեխնիկա – вооружение и военная техника, ВВТ – weapons and military equipment, armaments and military equipment, equipment

սպառազինությունների արգելում – запрещение вооружений – weapons ban

Առանձին տեսակների սպառազինությունների օգտագործման վրա ըստ միջազգային պայմանագրի կամ միակողմանի կարգով դրված արգելանք, որը նախատեսում է դրանց հանում սպառազինությունից՝ դուրսբերում մարտական կազմից:

սպառազինությունների արտահանում – экспорт вооружений, экспорт оружия – arms exports

Այլ պետությանն սպառազինության և ռազմական տեխնիկայի վաճառք կամ տրամադրում՝ օգտագործելու համար:

սպառազինությունների կուտակում – наращивание вооружений – rearmament, build-up

սպառազինությունների մրցավազք – гонка вооружений – arms race

Երբ մի պետության ռազմականացման հետևանքով սկսում է հարկադրաբար սպառազինվել նաև այդ պետության հավանական հակառակորդը:

սպառազինությունների ոչնչացում – уничтожение вооружений – destruction of weapons

սպառազինությունների սահմանափակում – ограничение вооружений – limitation of armament

սպառազինությունների վերահսկում – контроль над вооружением – arms control

ստրատեգիական սպառազինություն – *սպառազինություն՝ ռազմավարական սպառազինություն*

**սպառազինում** – вооружение, оснащение вооружением – armament, weaponization, arming

Մատակարարում՝ ապահովում զենքով, ռազմական տեխնիկայով, զինված պայքարի այլ միջոցներով:

**սպառնալիք** – угроза – threat

անդրազգային սպառնալիք – транснациональная угроза – transnational threat

անհամաչափ սպառնալիք – асимметричная угроза – asymmetric threat

անմիջական ռազմական սպառնալիք – непосредственная военная угроза – direct military threat

արտաքին անհամաչափ սպառնալիք – внешняя асимметричная угроза – external asymmetrical threat

Սպառնալիք, որի աղբյուրներն են տրվյալ պետության սահմաններից դուրս գտնվող ոչ պետական կառույցները, ներառյալ՝ հասարակական, կրոնական, ահաբեկչական կազմակերպությունները, ինչպես նաև այլ պետությունների տարածքում տեղի ունեցած կործանարար բնական ու տեխնածին աղետները և տարածված մահաբեր համաճարակները:

արտաքին համաչափ սպառնալիք – внешняя симметричная угроза – external symmetrical threat

Սպառնալիք, որի աղբյուրն է մեկ այլ պետություն (պետությունների դաշինք) կամ նրա որևէ կառույց:

արտաքին սպառնալիք – внешняя угроза – external threat

լրտեսման ներքին սպառնալիք – внутренняя угроза шпионажа – counterintelligence insider threat

հիմքային նախագծային սպառնալիք – базовая проектная угроза – design basis threat

Սպառնալիք, որն ուղղված է պաշտպանվող օբյեկտի դեմ, և որը դրված է այդ օբյեկտի պաշտպանական համակարգի նախագծի հիմքում: Դա այն տեսակի ու մեծության սպառնալիքներն են, որոնց ըստ նախագծի պետք է դիմակայեն շենքերը կամ այլ կառույցներ: Հիմքային նախագծային սպառնալիքները ներառում են նաև այն մեթոդները և գործիքները, զենքերն ու պայթուցիկ նյութերը, որոնք դիվերսանտները կարող են օգտագործել այդ օբյեկտի դեմ:

ներքին անհամաչափ սպառնալիք – внутренняя асимметричная угроза – internal asymmetrical threat

Սպառնալիք, որի աղբյուրներն են տվյալ պետության տարածքում գործող ոչ պետական կառույցները, ինչպես նաև պետության կողմից անվերահսկելի երևույթներն ու գործընթացները:

ներքին համաչափ սպառնալիք – внутренняя симметричная угроза – internal symmetrical threat

Սպառնալիք, որի աղբյուրը պետությունն ինքն է՝ իր ոչ բավարար զարգացածության պատճառով:

ներքին սպառնալիք – внутренняя угроза – internal threat

ռազմական սպառնալիք – военная угроза – military threat

Միջպետական հարաբերությունների վիճակ, որի դեպքում գոյություն ունի մըրցակից կողմերի միջև ռազմական հակամարտության ծագման անմիջական հնարարավորություն, պատերազմի բռնկման ակնհայտ հավանականություն:

սպառնալիք առողջությանը – угроза здоровью – health threat

սպառնալիքի գնահատում – оценка угрозы – threat assessment

սպառնալիքի հետմղում – парирование угрозы – countering threat, parrying of threat

սպառնալիքի մասին զգուշացում – предупреждение об угрозе – threat warning

ժամանակի տեսակետից կրիտիկական տեղեկույթի հաղորդում՝ հրապարակում՝ տարածում սովորաբար կյանքի կամ կենսականորեն կարևոր ռեսուրսի համար վտանգի առաջացման մասին:

սպառնալիքի չեզոքացում – нейтрализация угрозы – neutralization of the threat

սպառնալիքի նշված գոտի – указанная зона угрозы – named area of interest

սպառնալիքների դինամիկ գնահատում – динамическая оценка угроз – dynamic threat assessment

Պաշտպանական հետախուզական ծառայության՝ գործակալության՝ վարչության կողմից մշակվող սպառնալիքների գնահատում, որը տեղ է գտնում արտակարգ իրավիճակների պլանավորման ուղեցույցում:

սպառնալիքների վերլուծություն – анализ угроз – threat analysis

սպառնալիք տեղեկատվական անվտանգությանը – угроза информационной безопасности – information security threat

սպառնալիք տեղեկության անվտանգությանը – угроза информационной безопасности – information security threat

վերազգային սպառնալիք – транснациональная угроза – transnational threat

վերասահմանային սպառնալիք – трансграничная угроза – transborder threat

ուղղակի ռազմական սպառնալիք – прямая военная угроза – direct military threat

օդում ինքնաթիռների անվտանգության համար սպառնալիք – угроза безопасности самолетов в воздухе – inflight security threat

**սպառող** – потребитель – consumer

**սպասարկում** – обслуживание – 1. service, 2. maintenance

Գործունեության ապահովում, պահպանում գործառույթների կատարմանը պատրաստ վիճակում:

ընդհանուր սպասարկում – общее обслуживание – common servicing

ընթացիկ սպասարկում և նորոգում – текущее обслуживание и ремонт – maintenance

ընթացիկ տեխնիկական սպասարկում – текущее техническое обслуживание – servicing

թռիչքադաշտային սպասարկման զորանիստ – часть аэродромного обслуживания – air staging unit

Ձորամաս, որը տեղաբաշխված է թռիչքարանում (թռիչքադաշտում) և ըզբաղվում է ինքնաթիռների ընդունմամբ, բեռնման-բեռնաթափման ու սպասարկման աշխատանքներով, արտաթռիչքին նախապատրաստմամբ, անձնակազմի ու բեռների վերահսկմամբ:

թռչող ապարատների փոխադարձ սպասարկում – взаимное обслуживание летательных аппаратов – aircraft cross-servicing, aircraft transient servicing

համատեղ սպասարկում – совместное обслуживание – joint servicing

նորոգումատեխնիկական սպասարկում – ремонтно-техническое обслуживание – maintenance service

պայմանագրային հիմունքներով նյութատեխնիկական սպասարկում – материально-техническое обслуживание на контрактной основе – contracted logistic support

պլանային կանխարգելիչ սպասարկում – планово-профилактическое обслуживание, превентивная эксплуатация – preventive maintenance

Պարբերական և/կամ նշանակված սպասարկում, որի նպատակն է վթարի (խափանման) հավանականության նվազեցումը:

պլանային տեխնիկական սպասարկում ու նորոգում – плановое техническое обслуживание и ремонт – planned maintenance

վրագետնյա սպասարկող անձնակազմ – наземный обслуживающий экипаж – ground crew, ground personnel, ground staff

տեխնիկական սպասարկման գոտի – зона технического обслуживания – maintenance area

տեխնիկական սպասարկման խումբ – команда технического обслуживания – maintenance crew

տեխնիկական սպասարկման կետ – пункт технического обслуживания – maintenance depot

տեխնիկական սպասարկման հրապարակ – площадка технического обслуживания – maintenance area

տեխնիկական սպասարկման տեսակ – maintenance category

տեխնիկական սպասարկում – техническое обслуживание – maintenance

տեխնիկական սպասարկում՝ անսարքությունների վերացմամբ – техническое обслуживание с устранением неисправностей – corrective maintenance

տեխնիկական սպասարկում, ընթացիկ և հիմնական նորոգում – техническое об-

служивание, текущий и капитальный ремонт – maintenance, repair and overhaul

տեխնիկական սպասարկում զորամասում – техническое обслуживание в части – organizational maintenance

Տվյալ զորամասում կատարվող տեխնիկական ստուգում և թերությունների վերացում:

տեխնիկական սպասարկում զորքերում – техническое обслуживание в войсках – in-service logistics support

Սպասարկում, որը կատարվում է զորամասում շահագործման ընթացքում:

տեխնիկական սպասարկում, նորոգում և շահագործում – техническое обслуживание, ремонт и эксплуатация – maintenance, repair and operation

տեխնիկական սպասարկում չլինելու պատճառով ոչ մարտունակ – небоеспособный из-за отсутствия техобслуживания – not mission capable, maintenance

տրանսպորտային սպասարկում – транспортное обслуживание – transportation service

փոխադարձ նյութատեխնիկական սպասարկում – взаимное материально-техническое обслуживание – cross-servicing

Մի զորատեսակի կողմից արված գործողություն մեկ այլ զորատեսակի համար:

**սպասյակ** – տես *հանձնակատար*

**սպարապետ** – տես *հրամանատար՝ գլխավոր հրամանատար*

Պաշտոն ավատատիրական Հայքում՝ պետության ռազմական ուժի գլխավոր հրամանատարը, տվյալ գործակալության գլուխը, ռազմական ոլորտում արքայի օգնականն ու խորհրդատուն:

**«Սպեյս Շատլ»** – «Спейс Шаттл» – «Space Shuttle»

Քազմակի օգտագործման ամերիկյան մարդավարական տրանսպորտային փոխադրանակ:

**սպիտակ ծխածածկույթ** – белая дымовая завеса – white obscurant smoke

**«Սպիտակ վառ»** – английский военно-морской флаг – “White Ensign”

Մեծ Բրիտանիայի պաշտոնական ռազմածովային դրոշը:

**սվին** – штык – bayonet

Ծակող կամ ծակող-կտրող սառը զենք, որն ամրացվում է հրացանի փողի ծայրին՝ ձեռնամարտում կիրառելու համար:

**սվինահարել** – колоть штыком – bayonet

**սվինաձև բահ** – штыковая лопата, заступ – shovel, spade

**ստաժավորում** – стажировка – secondment

Մասնագիտությամբ աշխատանքային փորձի ձեռքբերման կամ որակավորման բարձրացման ուղղությամբ գործունեություն, ինչպես նաև որոշակի տևողությամբ փորձարկման շրջանում աշխատանք տվյալ պաշտոնում՝ այդ հաստիքում աշխատելու համար պիտանիությունը որոշելու նպատակով:

ստաժավորման ուղարկել – տես *գործուղել*

**ստանալ** – տես *ծեռք բերել*

**ստանդարտ** – 1. стандарт, 2. стандартный – standard

1. Ձևանմուշ՝ չափանմուշ՝ օրինակ՝ մոդել, որն ընդունվում է որպես ելակետային՝ նման օբյեկտները դրանց հետ բաղդատելու համար: 2. Համընդհանուր ճանաչում ստացած, պատմականորեն ձևավորված կանոնների հավաքածու՝ համախումբ: 3. Փաստաթուղթ, որում սահմանված են պահանջները, հատկորոշումը, ղեկավար սկզբունքները կամ բնութագրիչները, ըստ որոնց կարող են օգտագործվել համապատասխան նյութերը, արտադրանքը, պրոցեսներն ու ծառայությունները: 4. Ստանդարտին (1-3) վերաբերող՝ հատուկ:

ստանդարտ զուգահեռական – стандартная параллель – standard parallel

Կոնական պրոյեկցիաներում. լայնության մեկ կամ երկու գիծ, որոնց երկայնքով կոնը քսվում է Երկրին:

**ստանդարտավորում** – стандартизация – standardization

Տվյալ բնագավառի, ճյուղի գործունեության ապահովում ստանդարտներով:

ստանդարտավորման միջազգային կազմակերպություն – международная организация по стандартизации – International Organization for Standardization

**ստանդարտացում** – стандартизация – standardization, standard specification

Պետական մասշտաբով, ինչպես նաև միջազգային կազմակերպության շրջանակներում միօրինակ նորմերի ու հումքին, կիսապատրաստվածքին, նյութերին, արտադրական պրոցեսներին, պատրաստի արտադրանքին, գործիքներին, արտադրության կազմակերպմանը, մշակմանն ու նախագծմանը են ներկայացվող պահանջների հաստատում՝ սահմանում:

**ստատիկ** – статический – static

**ստատուս-քվո** – статус-кво – status-quo

Առկա կամ ինչ-որ պահի գոյություն ունեցած քաղաքական, իրավական կամ այլ վիճակ (դրություն), որի պահպանման կամ վերականգնման մասին է խոսքը:

**ստացատեղ** – место приема – point of need

Օպերատիվ գոտու տարածք, որը տարածաշրջանային մարտական հրամանատարը կամ նրա տեղակալը սահմանում են որպես համալրում, ՍՈՏ և նյութատեխնիկական միջոցներ ստանալու տեղ:

**ստացիոնար** – стационар, стационарное медицинское лечебное учреждение – fixed medical treatment facility

Կլինիկական հիվանդանոց, որտեղ հիվանդները՝ վիրավորները, բուժվում են պառկած՝ առանց հիվանդանոցից հեռանալու:

ստացիոնար կլինիկական բուժօգնություն – տես *ստացիոնար*

**ստացող** – получатель – receiver

**ստացում** – получение – reception

**«ստելս»** – «стелс» – “stealthy”

Ռազմական ինքնաթիռների նկատելիության (հիմնականում՝ ռադիոտեղորոշումային և ինֆրակարմիր) նվազեցման մեթոդների ու միջոցների համախումբ:

**ստերեոզույգ** – տես *տարածադիտական զույգ*

**ստերիզացում** – стерилизация – sterilization

**«ստի հայտնաբերիչ»** – տես *բազմաֆիզիոգրանցիչ*

**«Ստինգեր»** – «Стингер» – “Stinger”

«Երկիր-օդ» դասի ամերիկյան ձեռքի հրթիռ:

**ստորաբաժանում** – подразделение –

1. unit, 2. sub-unit, 3. տես *կազմակերպական միավոր*

երկակի նախանշանակման ստորաբաժանում – подразделение двойного назначения – dual capable unit

թաղումների գրանցման ստորաբաժանում – подразделение регистрации захоронений – Graves Registration Unit

Ստորաբաժանում, որը պատասխանատու է պատերազմական ժամանակ ժամանակավոր թաղումների վայրերի որոշման և արձանագրման համար:

հատկացված ստորաբաժանում – выделенное подразделение – detachment, team

հերթապահ ստորաբաժանում – дежурное подразделение – alert force

Մարտական պատրաստության հատուկ աստիճանում պահվող ստորաբաժանում՝ գործնաս:

հետախուզական ստորաբաժանում – разведывательная часть, разведывательное подразделение – reconnaissance unit

մարտական ստորաբաժանում – боевое подразделение – combat unit, tactical combat unit, tactical unit

միացյալ հակահետախուզական ստորաբաժանում – объединенное подразделение контрразведки – joint counterintelligence unit

նյութատեխնիկական ապահովման ստորաբաժանում – подразделение материально-технического обеспечения – technical support unit

Վաշտ, դասակ, որի հիմնական գործառույթը տվյալ զորամիավորման՝ զորամասի ևն ապահովվում է նյութատեխնիկական միջոցներով:

ստորաբաժանման գրասենյակ – канцелярия подразделения – orderly room

ստորաբաժանում, որը հիմնական ուժերի հետքաշումից հետո թողնվում է դիրքերում – подразделение, оставляемое на позиции после отвода основных сил – stay behind force

տիպային ստորաբաժանում – типовое подразделение – standard unit

Ստորաբաժանում, որն իր կառուցվածքով, թվակազմով, ամրագրված տեխնիկայով և սպառազինությամբ համապատասխանում է ընդհանուր սահմանված պարամետրներին:

ուսումնական ստորաբաժանում – учебное подразделение – training unit

քաղաքացիական կազմակերպությունների հետ կապերի ստորաբաժանում – подразделение по связям с гражданскими организациями – civil affairs

քիմիական ստորաբաժանում – химическое подразделение – chemical-warfare unit

**ստորագրել** – подписывать – sign

**ստորագրություն** – подпись – signature

**ստորադասություն** – տես *ենթակայություն*

ստորադասության շղթա – տես *ստորակարգություն*

**ստորակարգություն** – порядок подчиненности – chain of command, command channel

Հրամանատարների շղթա՝ հաջորդաշար, որի միջոցով հրամանները բարձր օղակից փոխանցվում են ստորին օղակին: Ջորքերի կառավարման համակարգ, ըստ որի՝ հրամանները փոխանցվում են ավագ պետից կրտսերին:

ստորակարգություն օպերացիայում – տես *ստորակարգություն՝ օպերատիվ ստորակարգություն*

օպերատիվ ստորակարգություն – оперативная подчиненность, порядок подчиненности в операции – operational chain of command

**ստորին** – нижний, нижестоящий – subordinate

**«Ստորմ Շեյդոու»** – «Storm Шейдоу» – “Storm Shadow”

Թևավոր հրթիռ, որը նախանշանակված է ամրացված կառույցներին հարվածելու համար:

**ստորնակետ** – надир – nadir

Ռիդոլոթյուն, որը համընկնում է տվյալ կետում ձգողության ուժի ուղղության հետ:

ստորնակետի արտապատկերում մակերևույթին – проекция надир на поверхность – ground nadir

**ստորջրյա** – подводный – submarine

ստորջրյա ապարատ – տես *բատիսկաֆ*

ստորջրյա հրթիռակիր հածանավ – подводный ракетный крейсер – ballistic missile submarine

ՌԴ ռազմածովային նավատորմի ատոմային սուզանավ՝ սպառազինված մեծ հեռահարությամբ թևավոր կամ բալիստիկ հրթիռներով, որի հիմնական նախանշանակումն է հակառակորդի առավել կարևոր վրագետնյա ու ծովային օբյեկտներին հրթիռամիջուկային հարվածներ հասցնելը:

ստորջրյա նավարկություն – подводное плавание – underwater navigation

Սուզանավի (կամ ջրի տակ շարժվելու համար նախատեսված այլ ապարատի) տեղաշարժումը՝ ջրի մեջ լրիվ ընկղմված վիճակում:

ստորջրյա շարժման կարողություն – способность преодоления глубоководной преграды вброд – deep fording capability

Սովորաբար ցամաքային գործածություն ունեցող մեքենայի օժտվածությունը ստորջրյա լողունակությամբ ու անջրաթափանցությամբ:

ստորջրյա ուղեբացում – ликвидация противодесантных заграждений водолазами – clearance diving

Հակադեսանտային արգելափակոցների վերացում ջրասույզների ուժերով:

**ստվեր** – тень – shadow



**ստվերագծում** – штриховка, изображение штрихами, метод штрихования – hatching

Քարտեզին ստվերագծերի նկարում, որոնք օգտագործվում են քարտեզի վրա լեռան լանջերի ուղղությունը ցույց տալու համար:

ստվերագծման մեթոդ – տես *ստվերագծում*

**ստվերային** – теневой – shadow

**ստվերային տնտեսություն** – теневая экономика – shadow economy

Տնտեսական գործունեություն, որը թաքցվում է պետությունից ու հասարակությունից և գտնվում է պետական վերահսկողության ու հաշվառման շրջանակից դուրս:

**ստվերավորում** – отмывка (в картографии) – hill shading

Քարտեզագրության մեջ. տեղանքի ռելիեֆի պատկերման եղանակ՝ թեք, հազվադեպ՝ ուղղահայաց լուսավորության դեպքում ստվերային պլաստիկայի մեթոդով, ինչպես նաև ռելիեֆի կիսատոնային պլաստիկ պատկերումն ստվերների վրադրմամբ:

**ստրատեզ** – տես *ռազմավար*

**ստրատեզիա** – տես *ռազմավարություն*

**ստրատեզիական** – տես *ռազմավարական*

«**Ստրելա-1**» – «Стрела-1» – “Gaskin”  
«Երկիր-օդ» դասի խորհրդային մերձագործ հրթիռ, որը նախանշանակված է մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումների համար և օգտագործվում է «Շիլկա» ՋՀՀ-ի հետ համատեղ:

«**Ստրելա-3**» – «Стрела-3» – “Gremlin”  
«Երկիր-օդ» դասի խորհրդային 9Կ34 փոխադրովի հրթիռ:

«**Ստրելա-10**» – «Стрела-10» (9K35) – “Gopher”  
«Երկիր-օդ» դասի խորհրդային 9Կ35 հրթիռ, որը կցված է լինում գրահապատ և մեխանիզացված խմբերին:

**ստրես** – стресс – stress

Օրգանիզմի ոչ սպեցիֆիկ հարմարողական (բնականոն) համախումբ հակազդումներ տարբեր անբարենպաստ (ֆիզիկական կամ հոգեբանական) գործոնների ազդեցությանը, որոնք խախտում են նրա հոմեոստազը, ինչպես նաև օրգանիզմի նյարդային համակարգի (կամ ամբողջ օրգանիզմի) համապատասխան վիճակը:

մարտական ստրես – боевой стресс – combat and operational stress

Պատերազմի ժամանակ ստրեսային իրավիճակների ազդեցությանը ենթարկված մարդու սպասվող և կանխատեսելի հուզական, մտավոր, ֆիզիկական և/կամ վարքային հակազդումները:

**ստուգազննում** – осмотр – checkout

**ստուգատես** – смотр – review

Ավագ պետերի կողմից զորամասերի (զորամիավորումների) ստուգման ձև, կատարվում է անձնակազմով դրանց համալրվածության, շարային ուսումնավարժվածության և մարտական ներդաշնակության աստիճանը, սպառազինության, մարտական և այլ տեխնիկայի, համազգեստի ու հանդերձվածության առկայությունն ու վիճակը, տարբեր տիպի բավարարումներով ապահովվածությունը որոշելու և գնահատելու համար:

**ստուգիչ զննում** – контрольный просмотр – vetting

**ստուգողական ամսաթիվ** – контрольная дата – target date

**ստուգում** – 1. проверка, 2. проверка, инспектирование, 3. проверка, испытание, 4. տես *ստուգիչ*, 5. տես *քննում*, 6. տես *հավաստում 2* – 1. check, 2. inspection, 3. test, checkout, 4. տես *ստուգիչ*, 5. տես *քննում*, 6. տես *հավաստում 2*

բարեհուսության ստուգում – проверка благонадежности, проверка на благонадежность – security vetting

միջազգային ռազմական տեսչական ստուգում – международная военная инспекция – international military inspection



տեխնիկական վիճակի ստուգում – проверка технического состояния – maintenance check

տեսչական ստուգման ենթարկվող մասնակից պետություն – инспектируемое государство-участник – inspected state party

տեսչական ստուգում – инспекция, инспекторская проверка – inspection

տվյալների ստուգում – проверка данных – validation

**սրակալ** – портупья – belt

**«սրբազան» պատերազմ** – «священная» война – sacred war, holy war

**սրսկիչ** – шприц, спринцовка – syringe, squirt

**սրսկում** – 1. տես ներարկում, 2. спринцевание – 1. տես ներարկում, 2. squirt

**UOU** – СОС, «Спасите наши души» – SOS, Save Our Souls

Աղետի միջազգային ազդանշան՝ անգլերեն «փրկեցե՛ք մեր հոգիները» արտահայտության առաջին տառերով կազմված բառ-կոչ:

**Սու-24** – Су-24 – SU-24  
Խորհրդային կործանիչ-ռմբակոծիչ:

**Սու-25** – Су-25 – SU-25  
Խորհրդային գրոհային ինքնաթիռ:

**Սու-27** – Су-27 – SU-27  
Խորհրդային կործանիչ:

**սուզաբեռ** – якорь, минный якорь – sinker, anchor

Ծանրություն, որն ամրացվում է որևէ վրաջրյա օբյեկտից, մասնավորապես՝ ծովային ականից, ձգվող ճոպանին՝ ականը տեղում պահելու համար:

**սուզագիծ** – ватерлиния – floating line

**սուզագնդիկ** – грузило – sinker  
Գնդիկ, սովորաբար՝ կապարե, որն ամրացվում է կարթաթելին՝ կեռիկը ջրի տակ պահելու համար:

**սուզագզեստ** – տես սկաֆանդր 2

**սուզանավ** – подводная лодка, подлодка – submarine

Նավ, որը կարող է սուզվել (ջրի երես բարձրանալ) և երկար ժամանակ գործել ջրի մեջ (լրիվ կամ մասնակիորեն) ընկղմված վիճակում:

ամուր անջրանցիկ պատյանով սուզանավ – подводная лодка с прочным водонепроницаемым корпусом – submarine with a waterproof shell, submarine with a watertight housing

ատոմային սուզանավ – ядерная подлодка – atomic submarine, nuclear submarine

բազմանպատակային սուզանավ – многоцелевая подводная лодка – multipurpose submarine

երկիրան սուզանավ – двухкорпусная подводная лодка – twin-submarine

թեթև ջրաթափանց պատյանով սուզանավ – подводная лодка с легким водонепроницаемым корпусом – submarine with a light (water)-permeable hull

պայքար սուզանավերի դեմ – борьба с подводными лодками, противолодочная оборона – antisubmarine warfare

ռազմավարական ատոմային սուզանավ – атомная стратегическая подводная лодка – strategic nuclear submarine

սուզանավերի զորակայան – база подводных лодок – submarine base

սուզանավի ստորջրյա արագություն – подводная скорость подводной лодки – underwater speed of the submarine

սուզանավի վրաջրյա արագություն – надводная скорость подводной лодки – surface speed of the submarine

վթարային սուզանավ – 1. аварийная подводная лодка, 2. տես աղետ՝ աղետի ենթարկված սուզանավ – 1. disabled submarine, 2. տես աղետ՝ աղետի ենթարկված սուզանավ

**սուզանավորդ** – подводник – submariner  
Սուզանավում ծառայող ծովային (զին-ծառայող):

**սուզարկղ** – кессон – caisson

**սուզորդ** – ныряльщик – diver

**սուզում** – погружение – dip

սուզման առավելագույն խորություն – максимальная глубина погружения – maximum operating depth

Սուզանավի սուզման առավելագույն աշխատանքային խորությունը:

սուզման արագություն – скорость погружения – rate of dive

սուզման սահմանային խորություն – предельная глубина погружения – test depth

Այն խորությունը, մինչև որը սուզանավը կարող է սուզվել փորձարկման ժամանակ:

սուզման հաշվարկային խորություն – расчетная глубина погружения – collapse depth

Այն հաշվարկային խորությունը, որից հետո սուզանավը չի կարող դիմանալ ճնշմանը:

**սուսեր** – шпана, рапира – sword

1. Սառը զենքի տեսակ. եռանիստ, քառանիստ կամ վեցանիստ երկար բարակ շեղբով սուր: 2. Սրածայր կարճ թուր, որը հաճախ օգտագործվել է նավաձանկման ժամանակ, իսկ այժմ միայն արարողակարգային առիթներով:

**սուտ** – лужа – lie

սուտ լուր – «утка» – hoax

**սուր** – 1. меч, 2. острый – 1. sword, 2. sharp

սուր ծայր – острый конец – point

սուր հարց – острый вопрос – sensitive issue

**սուրհանդակ** – 1. посланник, гонец, 2. почтовый – 1. courier, 2. messenger

մոտոցիկլավար սուրհանդակ – мотоциклист-курьер, мотоциклист связи – dispatch rider

**սևեռակ** – стопор – lock

Հարմարանք, որը ծառայում է մեխանիզմի մասերը որևէ դիրքում կանգնեցնելու կամ ամրացնելու համար:

**սևեռակիչ** – упор, стопор – stop

Հարմարանք, որը մեխանիզմին՝ շարժվող դետալին հնարավորություն չի տալիս որոշակի կետից հետո շարունակելու շարժումը:

**սևեռում** – 1. տես *զամում*, 2. տես *կենտրոնացում 1*

**սև շուկա** – черный рынок – black market  
Ստվերային տնտեսության սոցիալական հաստատություն՝ շուկայում ապրանքների և ծառայությունների ապօրինի շրջանառության մասիվ:

**սև վառոդ** – черный порох – gunpowder  
Պատմականորեն առավել հին վառոդը, որի հիմնական բաղադրությունը կազմում են սելիտրան, փայտածուխը և ծծումբը:

## Վ (ՎԵՎ)

**վագոն** – вагон – car

բաց վագոն – открытый вагон, платформа – platform

մարդատար վագոն – пассажирский вагон – carriage

վագոն-ցիստերն – вагон-цистерна – tanker

**վազելվազք** – перебежка – rush

**վախ** – страх – fear

**վախկոտություն** – трусость – cowardice  
բարոյական վախկոտություն – моральная трусость – moral cowardice

**վախճան** – տես *մահ*

**վահան** – щит – shield

քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական և միջուկային վահան – химический, биологический, радиологический и ядерный щит – chemical, biological, radiological and nuclear shield

Պաշտպանության անհատական և կոլեկտիվ միջոցներ, որոնք անհրաժեշտ են քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական ու միջուկային զենքի կիրառման հետևանքները մեղմելու համար:

**վայր** – пункт, место – point

ապակենտրոնացման վայր – տես *կետ՝ ցրման կետ*

Ստորաբաժանումների անջատման կետ, որտեղից նրանք շարժվում են տարբեր ուղղություններով:

գյուղական վայր – сельская местность, деревенская местность – countryside, country

զորքի և զենքի տեղաբաշխման վայր – район размещения войск и оружия – contonment area

հանցագործության վայրի զննում – տես *տեղագնություն 3*

հետիոտացման վայր – район спешивания – drop-off point

1. Այն վայրը, որտեղ զինվորներն իջնում են մեքենաներից՝ գործողությունը ոտքով շարունակելու համար: 2. Նախապես պլանավորած վայր, որտեղ մարդիկ և ուղեբեռը իջեցվում են մեքենաներից և ընդունվում մեկ այլ զորամիավորման կողմից:

մշտական տեղաբաշխման վայր – место постоянной дислокации – home station

նախանշանակման վայր – пункт назначения – terminal

Վայր, որը նախապես որոշված է որպես տեղափոխման (շարժման) վերջակետ:

նշանակման վայր – место назначения – destination

տեղաբաշխման վայր – место дислокации – area of deployment

Այն վայրը, որտեղ գտնվում է զորամասը (ստորաբաժանումը, զորամիավորումը), հիմնարկը, ձեռնարկությունը կամ դրանց մի որևէ մասը (մասնաճյուղ, առանձին ստորաբաժանում, բաժին ևն):

ցածրադիր վայր – изменность, низина – depression

**վայրէջք** – 1. посадка, приземление, 2. касание земли – 1. landing, 2. touchdown

1. Թռչող ապարատի էջքը՝ շարժումը թռիչքի բարձրությունից մինչև հայում գետնին: 2. էջքի այն պահը, երբ թռչող ապարատը դիպչում է այն հարթակին,

որի վրա պետք է դադարեցնի իր շարժումն օդում:

անհաջող անցում վայրէջքի – неудачный заход на посадку – missed approach

գետնից տրվող հրամաններով վայրէջքամուտի սխեմա – схема захода на посадку по командам с земли – ground-controlled approach procedure

հարկադրական վայրէջք – вынужденная посадка – emergency landing, forced landing

Վայրէջք, որը կատարվում է օդաչուից անկախ պատճառներով՝ շարժիչների շարքից դուրս գալու, վթարային իրավիճակի, եղանակային պայմանների ևն հետևանքով, երբ թռիչքի շարունակումը կվտանգեր ուղևորներին կամ ինքնաթիռին:

հարկադրված վայրէջք ջրի վրա – вынужденная посадка на воду – ditching

Աղետի ենթարկվող օդանավի վայրէջք ջրային մակերևույթի վրա:

շրջանագծով անցում վայրէջքի – заход на посадку по кругу – circling approach

սարքերով վայրէջքի համակարգ – система посадки по приборам – instrument landing system

ստիպել վայրէջք կատարել – заставить приземлиться – ground

վայրէջքի ապահովման միջոց – средство обеспечения посадки – landing aid

վայրէջքի գոտի – зона посадки – landing zone

Հատուկ տարածք (ցամաքային, ջրային, տախտակամածային ևն), որն օգտագործվում է ինքնաթիռը նստեցնելու համար:

վայրէջքի երկրորդ անցման ընթացակարգ – схема повторного захода на посадку – missed approach procedure

վայրէջքի կետ – точка приземления – landing point

Ուղղաթիռի կամ ուղղաձիգ վերթիռով և վայրէջքով ինքնաթիռի վայրէջքի համար հարմարեցված (սարքավորված) տեղ:

վայրէջքի հարթակ – посадочная площадка – landing site

Վայրէջքի գոտու հատված, որը բաղկացած է մեկ կամ մի քանի վայրէջքի կետերից:

վայրէջքի ղեկավար – руководитель посадки – landing signals officer

Վերթիռավայրէջքային ուղու ծառայող, որը վայրէջքի անցնելու ավարտական փուլում՝ վայրէջքից անմիջապես առաջ, պատասխանատու է տեսողական հսկողության համար:

վայրէջքի շրջան – район приземления – landing area

Ընդհանուր տարածք, որն օգտագործվում է զորէջքի և նյութական միջոցների մատակարարման համար ինչպես վայրնետմամբ (պարաշյուտներով), այնպես էլ ինքնաթիռների նստեցմամբ:

վայրէջքի տեղ – место посадки, место приземления – alighting area

վայրէջքի ուղղութային ռադիոփարոս – курсовой посадочный радиомаяк – localizer

վայրէջք կատարել – приземлиться – land

**վայրէջքագիծ** – глиссада – glide path

Վայրէջքից անմիջապես առաջ թռչող ապարատի թռիչքի հետագծի ուղղաձիգ պրոյեկցիան:

**վայրէջքամուտ** – заход на посадку – landing approach, approach

Տարաշարժ, որը կատարում է ինքնաթիռը (թռչող ապարատը) վայրէջքի գոտի մտնելու համար:

նախնական վայրէջքամուտի շրջան – район первоначального захода на посадку – initial approach area

վայրէջքամուտի ժամանակը – время захода на посадку – approach time

վայրէջքամուտի հերթականություն – очередность захода на посадку – approach sequence

Վայրէջքի պատրաստված մի քանի ինքնաթիռների զգեստման հաջորդականությունը:

վայրէջքամուտի ռադիոտեխնիկական միջոցներ – радиотехнические средства захода на посадку – radio approach aids

Ռադիոսարք, որը որոշում է ինքնաթիռի տեղը՝ սկսած թռիչքադաշտի գոտի նրա մտնելուց մինչև վայրէջքի անցնելու պահը:

վայրէջքամուտի սկզբնական փուլ – начальный этап захода на посадку – initial approach

**վայրկյան** – секунда – second

**վայրնետում** – сбрасывание – dropping

անպարաշյուտ վայրնետում – беспарашютная выброска – free drop

Սարքավորումների և պաշարների նետում ինքնաթիռից առանց պարաշյուտի:

վայրնետման բացարձակ բարձրություն – абсолютная высота выброски – drop altitude

Վայրնետման կետի բարձրությունը ծովի մակերևույթից:

վայրնետման կետ – точка сбрасывания – release point

վայրնետման հարաբերական բարձրություն – относительная высота сбрасывания – drop height

Վայրնետման կետի և անկման կետի միջև եղած ուղղաձիգ հեռավորությունը:

վայրնետում փոքր արագությամբ – низкоскоростное сбрасывание – low velocity drop

**վայրնետք** – сбрасывание – airdrop, airland, supply by air

**վանական** – монах – religious, monk

**վանականուհի** – монахиня – religious, nun

**վանդակ** – клетка – cage

**վանդակացանց** – տես *ցանկապատ*

**վաշտ** – рота – company

Պետությունների մեծ մասի ԶՈՒ-ում հիմնական մարտավարական ստորաբաժանումը:

հետևակային վաշտ – пехотная рота – infantry company

հրաձգային վաշտ – стрелковая рота – rifle company

նորոգումային վաշտ – ремонтная рота – maintenance company

շտաբի պահպանման և զինվորական ոստիկանության վաշտ (ԱՄՆ) – рота охраны штаба и военной полиции (США) – HQ Security and MP company

պարետային վաշտ (ՌԴ) – комендантская рота (РФ) – HQ Security and MP company (USA)

տանկային վաշտ – танковая рота – tank company, squadron

տեխնիկական վաշտ – техническая рота – maintenance company

**վառատար** (*հնգ.*) – տես *ենթասպա*

**վառելանյութ** – топливо, горючее – fuel

Նյութեր, որոնք ունակ են տարբեր ռեակցիաների հետևանքով անջատելու ջերմային էներգիա, որը անմիջականորեն օգտագործվում է տեխնոլոգիական պրոցեսներում կամ վերածվում է այլ տեսակի էներգիայի:

տարբեր վառելանյութերի համատեղելիություն – совместимость различных видов топлива – fuel interoperability

**վառելաքսանյութ** – горюче-смазочные материалы, ГСМ – petroleum, oil and lubricants, POL, fuels and lubricants

Գերազանցապես ածխաջրածինների վերամշակմամբ ստացված նյութերի դաս, որում ներառված են հիմնականում ավտոմոբիլային տեխնիկայի համար կամ որպես վառելիք, կամ որպես քսուքներ (յուղեր) օգտագործվող նյութերը:

**վառելիք** – տես *վառելանյութ*

ամբարված հեղուկ հրթիռային վառելիք – жидкое ракетное топливо в резервуарах – bulk liquid propellants

այլընտրանքային գազատուրբինային վառելիք – альтернативное топливо для газовой турбин – alternative turbine fuel

դիզելային վառելիք – дизельное топливо – diesel fuel, diesel engine fuel

թեթև վառելիք – легкое топливо – petroleum fuel

Սակավ մածուցիկ նավթային վառելանյութ: Տարբեր երկրներում այս դասին են վերագրում տարբեր վառելիքներ:

ինքնաբոցավառվող վառելիք – самовоспламеняющееся топливо – hypergolic fuel

համապիտանի վառելիքի օգտագործման սկզբունք – принцип использования универсального топлива – Single Fuel Policy

համափոխարինելի վառելիք – взаимозаменяемое топливо – interchangeable fuel

հրթիռային վառելիք – ракетное топливо – propellant, missile fuel

շարժիչային վառելիք – моторное топливо – automotive fuel

վառելիքի վերամղում մեծ ճնշման տակ – перекачка горючего под высоким давлением – squirt

վառելիքի տվյալ պաշարով և խնայողական արագությամբ հեռագնացություն – տես *հեռագնացություն՝ օպտիմալ բանեւակարգով հեռագնացություն*

Առանց նավը կամ մեքենան վառելիքով լրացուցիչ լիցքավորելու դրա անցած հնարավոր առավելագույն ճանապարհը:

վառելիքով ապահովման դաշտային տեխնիկական միջոցներ – полевые технические средства обеспечения горючим – tactical fuels handling equipment

**վառելիքալցավորիչ** – топливозаправочный – bowser

**վաստակ** – տես *ծառայություն 5*

**վավերացում** – ратификация, утверждение – ratification, confirmation

Յուրաքանչյուր կողմի համապատասխան մարմնի հաստատմամբ փաստաթղթին (օրինակ՝ պայմանագրին) իրավական ուժ տալու գործընթաց:

**վարակազերծում** – обеззараживание – decontamination

մանրակրկիտ վարակազերծում – тщательное обеззараживание – thorough decontamination

**վարակակիր դիակներ** – инфицированные останки – contaminated remains

**վարակի փոխանցիչ** – переносчик инфекции – vector

**վարակիչ** – заразный, инфекционный – infectious

**վարակում** – 1. заражение, 2. инфицирование, инфекция – 1. contamination, 2. infection

Տարբեր հիվանդությունների հարուցիչների տեղափոխում (բնական կամ արհեստական ճանապարհով) որևէ տեղ (մարդու օրգանիզմ, տեղանքի վրա, ջրային տարածք, իրերի մեջ ևն):

մնացորդային վարակում – остаточное заражение – residual contamination

ռադիոակտիվ վարակում – радиоактивное заражение – radioactive contamination

վարակման գոտու հսկիչ-անցագրային կետ – контрольно-пропускной пункт зоны заражения – contamination control point

վարակման գոտու սահման – граница зоны заражения – contamination control line

**վարդապետություն** – տես *ուսմունք*

**վարժանմանակ** – соразмерная модель – mock-up

Մեքենայի, սարքի կամ զենքի նույնաչափ նմանակ՝ դրա կառուցվածքը, գործողությունը ուսումնասիրելու, անձնակազմին դրանով աշխատելուն վարժեցնելու համար:

**վարժանք** – тренировка – exercise study

ամենօրյա վարժանք – ежедневная тренировка – drill, instruction

զորահավաքային վարժանք – мобилизационные учения – mobilization exercise

հրամանատարաշտաբային վարժանք – командно-штабная тренировка – command field exercise, CFX

Համատեղ ուսուցման ձև, որի նպատակն է հրամանատարների, շտաբների զորատեսակների (ուժերի), հատուկ զորքերի ու ծառայությունների պետերի վարժեցումը զորքերի (ուժերի) կառավարմանը:

ղեկավար կազմի խմբային վարժանք – групповое упражнение – leadership exercise study

Սպաների վարժանք՝ դերային խմբային խաղի ներառմամբ:

շարային վարժանք – строевое учение – drill

**վարժասարք** – тренажер – simulator, trainer

Անձնակազմի մեջ տարբեր մասնագիտություններով մասնագիտական հըմ-տությունների գործնական ձևավորման, կատարելագործման ու վերահսկման համար նախանշանակված ուսումնավարժական սարք՝ հարմարանք:

թռիչքային վարժասարք – летный тренажер – flight simulator

ուսուցողական վարժասարք – обучающий тренажер – training simulator

**վարժություն** – упражнение – exercise

**վարկաբեկում** – компрометация – compromise

**վարձակալ** – арендатор – customer

**վարձկան** – наемник – mercenary, soldier of fortune

1. Անձինք՝ գերազանցապես օտարերկրացիներ, որոնց պետությունը դրամական վարձատրության դիմաց ընդունում է զինծառայության: 2. Հատուկ հավաքագրված մարդիկ, որոնք չեն պատկանում պատերազմող կողմերից որևէ մեկին, սակայն պատրաստ են վարձատրության դիմաց կռվելու այդ երկրներից մեկի կողմում: 3. (*փխբ.*) Ծախու մարդ, կանակատար:

**վարմունք** – տես *արարք*

**Վարչավայի պայմանագրի կազմակերպություն** – Организация Варшавского договора, Восточный блок – Eastern Bloc

**վարորդ** – водитель – driver

**վարչակազմ** – администрация – administration

**վարչական** – административный, управленческий – administrative

**վարչակարգ** – режим – regime

Պետական կառավարման կերպ՝ ձև, մի մարդու կամ մի խումբ անձանց կարողությունը՝ վերահսկելու քաղաքացիների, հասարակության վարքը:

հին վարչակարգ – старый режим, отживший режим – ancient régime  
 Վարչակազմ կամ կառավարական ծրագրեր, որոնք փոխարինվել են նորերով:

**վարչատնտեսական հնարավորություններ** – административно-хозяйственные возможности – administrative capacity

**վարչություն** – 1. администрация, дирекция, правление, 2. администрация, руководящий аппарат, 3. управление – 1. administration, directory, 2. administration, 3. division, department

1. Որևէ հիմնարկի՝ հաստատության ղեկավար կազմը՝ պաշտոնյաները, կառավարչությունը: 2. Որևէ հիմնարկության, կառույցի ևն մեծ բաժանմունք, որը պատասխանատու է որոշակի ուղղության, ոլորտի համար:

գլխավոր հրթիռահրետանային վարչություն – Главное ракетно-артиллерийское управление – Main Missile and Artillery Directorate

Եվրաստլանտյան ինտեգրման և գործընկերության վարչություն – Управление евроатлантической интеграции и партнерства – Euro-Atlantic Integration and Partnership Directorate

թիկունքային ապահովման և ռեսուրսների վարչություն – управление по тыловому обеспечению и ресурсам – Logistics and Resources Division

հանրային դիվանագիտության վարչություն – управление общественной дипломатии – Public Diplomacy Division

ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչություն – Управление оборонной политики МО РА – Defense Policy Department, MOD RA

նավագնացության հարցերով ազգային վարչություն – национальное управление по вопросам судоходства – national shipping authority

շինարարության և ընդհանուր ծառայությունների վարչություն – Управление строительства и общих услуг – Construction and General Services Directorate

ռազմական վարչության պետ – начальник военной администрации – military governor

ռազմական վարչություն – военная администрация – 1. military administration, military government, 2. Military Department

1. Պետության այն ռազմավարական մարմինների համախումբը, որոնք կարգադրիչ գործունեություն են վարում ռազմական շինարարության, ՋՈՒ-ի շինարարության և դրանց կառավարման ոլորտներում: 2. Այլ պետության ժամանակավորապես գրաված կամ բռնազավթած տարածքում գործող ղեկավար մարմին:

վարչատնտեսական վարչություն – административно-хозяйственное управление – Executive Management Division

քաղաքացիական վարչություն – гражданская администрация – civil administration

Վարչություն, որն օտարերկրյա կառավարությունն ստեղծում է. ա) բարեկամական երկրի տարածքում, այդ պետության հետ պայմանագրի հիման վրա, այն լիազորություններն իրականացնելու համար, որոնք սովորաբար պատկանում են տեղական իշխանություններին, բ) թշնամուց գրավված տարածքում ժամանակավորապես օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությամբ օժտված քաղաքացիական մարմին՝ մինչև տեղաբնիկների ձևավորած իշխանությունների գործարկումը:

օպերատիվ վարչություն – оперативное управление – operative department, operations division

օպերացիաների վարչություն – управление по операциям – Operations Division

ֆինանսական վերահսկման վարչություն – Управление финансового контроля – Financial Control Directorate

**վարում** – ведение, руководство, проведение – conduct

**վարք** – поведение – conduct

**վարքականոն** – кодекс поведения – code of conduct, code

Կանոնների, նորմերի, համոզմունքների համախումբ:



պատվո վարքականոն – кодекс чести – code of honor

**վաուչեր** – ваучер – voucher

Պետության թողարկած ֆինանսական փաստաթուղթ, որը տիրոջն իրավունք է տալիս գնելու բաժնետոմսեր, անշարժ գույք՝ արժեքի չափով, մասնավորեցման չեկ:

**վեզիկանտ** – везикант – HD

Մաշկաթարախապալարային ազդեցությամբ թունավոր նյութ:

**վելյուտ** – տես *փրկանավակ*

**վեկտոր** – вектор – vector

Ֆիզիկական մեծություն, որն ունի չափ և ուղղություն:

**վեհաժողով** – ассамблея – assembly

**վեճ** – 1. спор, 2. տես *տարածայնություն* – 1. dispute, 2. տես *տարածայնություն*

Տարածայնություն, հակասություն, հակառակություն, վիճարկություն, որի ընթացքում յուրաքանչյուր կողմ ձգտում է համոզելու մյուսին, որ ինքն է իրավացի:

վեճի կարգավորում – урегулирование спора – settlement of dispute

**վետերան** – ветеран – veteran

1. Փորձառու զինվոր, անցած պատերազմների մասնակից: 2. ԶՈՒ-ում, մինևույն զորամիավորումում՝ զորամասում ևն, հիմնարկում, կազմակերպությունում երկար ժամանակ ծառայած՝ աշխատած անձ:

վետերանների միություն – союз ветеранов – legion

վետերաններին կատարվող վճարումներ – выплаты ветеранам войны – veterans' payments

**վերաբազավորում** – перебазирование – re-deployment

**վերաբաշխում** – перераспределение – 1. reallocation, 2. redistribution, 3. cross-loading (personnel)

1. Վերաբաշխելը, վերաբաշխվելը, նորից բաշխելը, նոր հիմունքով բաշխելը: 2. Նոր ընտրությունների արդյունքներով պատգամավորական տե-

ղերի նոր բաժանում քաղաքական ուժերի միջև: 3. Փչացած (կորած) ավտոմեքենայով՝ նավով՝ ինքնաթիռով կամ այլ փոխադրամիջոցով տեղափոխվող անձնակազմի, նրա հրամանատարների, զենքի ու զինամթերքի, նյութական միջոցների, սննդամթերքի ևն բաշխումն ըստ մնացած փոխադրամիջոցների:

**վերաբեռնում** – 1. перегрузка, 2. перезагрузка – 1. overload, 2. reload, reloading, 3. reboot, restart, 4. reset

1. Նոր՝ կրկին բեռնում բեռնաթափումից, լիցքաթափումից հետո: 2. Համակարգչային տեխնիկայի կրկին միացում անջատումից հետո: 3. Քաղաքական ոլորտում. փոխհարաբերությունների, երկխոսության ևն կառուցում ձևավորում՝ նոր սկզբունքների, նոր մոտեցումների հիմքի վրա:

**վերաբնակեցում** – переселение – relocation

**վերագրավում** – повторный захват – geos-occupation

**վերադաս** – 1. вышестоящий, 2. տես *պետ*, – 1. senior, 2. տես *պետ*

**վերադարձ** – возврат, возвращение – return

վերադարձ բնականոն վիճակի (ԱԻ-ից հետո) – տես *վերականգնում*

վերադարձ զինվորական մարմինների ենթակայության տակ – возвращение в подчинение военным органам – returned to military control

ԱՄՆ-ում. այն մարդու կարգավիճակը, որը հայտարարվել էր անհայտ կորած, սակայն վերադարձից հետո այդ կարգավիճակը հանվել է:

վերադարձ զորակայան – возвращение на базу – recovery

վերադարձի ազդանշան – сигнал к возвращению – recall

վերադարձի բնագիծ – рубеж возвращения, разведывательный рубеж – line of return

վերադարձի գոտի – зона возвращения – recovery zone

«Վերադարձե՛ք էլակետ» – «Возвращай-  
тесь назад!» – «Return to base!»

Նշված կետ (վայր) վերադառնալու  
հրաման:

**վերադարձում** – 1. տես *վերադարձ*, 2. ре-  
ституция – 1. տես *վերադարձ*, 2. restitu-  
tion

Հակառակորդի տարածքից պատե-  
րազմող պետության ապօրինի առ-  
գրավված և դուրս բերված գույքի,  
նշակության և այլ արժեքների լիա-  
կատար վերադարձը:

**վերադիրքավորում** – передислокация –  
relocation

**վերազգայնականություն** – транснациона-  
лизм – transnationalism

**վերազինում** – перевооружение – rearma-  
ment, reequipping

Հին զենքի, սպառազինության, հաստո-  
ցային հանդերձանքի, տեխնիկական  
միջոցների փոխարինում նոր՝ կատա-  
րելագործված և արդիական մոլշ-  
ներով: Օգտագործվում է նաև փոխա-  
բերական իմաստով. զինանոցում նոր  
զադափարների, մոտեցումների, հնար-  
ների ներառում:

**վերալիցքավորում** – перезаряджение, пе-  
резарядка – recharging, reload, reloading

**վերախմբավորում** – перегруппировка –  
1. deployment, 2. redeployment

**վերածում** – превращение – transforma-  
tion

վերածման աղյուսակ – таблица перево-  
да – conversion scale

Չափման երկու տարբեր միավորների  
հարաբերակցությունը ցույց տվող սանդ-  
ղակ:

**վերակազմակերպում** – реорганизация –  
reorganization

**վերականգնել** – восстанавливать – recov-  
er, restore

**վերականգնելիություն** – восстанавливае-  
мость – maintainability

**վերակենդանացման խնամք** – տես *կեն-  
սադարձային խնամք*

**վերականգնողական խնամք** – реабили-  
тационный уход – rehabilitative care

**վերականգնում** – 1. восстановление, 2. ре-  
генерация, 3. восстановление (*псих.*),  
4. реабилитация – 1. recovery, 2. regener-  
ation, 3. reintegration, 4. rehabilitation

հետհակամարտային վերականգնում –  
постконфликтная реабилитация – post-  
conflict rehabilitation

հոգեկանի վերականգնում – психологиче-  
ская реабилитация – decompression

Անձնակազմի հոգեբանական և վար-  
քագծային դրսևորումների վերականգ-  
նում գերությունից կամ շրջափակումից  
հետո:

վերականգնման ընթացակարգ – процеду-  
ра восстановления – recovery procedure

վերականգնման մեխանիզմ – механизм  
восстановления – recovery mechanism

վերականգնում ոչ ավանդական օժանդա-  
կությամբ – восстановление нетрадици-  
онной поддержкой – nonconventional as-  
sisted recovery

**վերակառուցավորում** – реструктуриза-  
ция, структурная перестройка – restruc-  
turing

**վերակարգ** – наряд – 1. order, 2. detail

1. Ջորամասում, կայագործում ներքին,  
պարեկային, կայագործային ծառայու-  
թյուն կամ այլ աշխատանքներ կատա-  
րելու համար նշանակվող ստորաբա-  
ժանում կամ զինծառայողների խումբ:  
2. Փոքր զինվորական ստորաբաժա-  
նում, որին տրված է հատուկ առաջա-  
դրանք:

**վերահաղորդիչ** – ретранслятор – retrans-  
mitter

Կապի հեռավորության մեծացման  
համար կիրառվող միջանկյալ ռա-  
դիոսարքավորանք, որն ընդունում է  
ազդանշանը, առանց աղավաղման  
ուժեղացնում, ապա հաղորդում հա-  
ջորդ հանգույցին:

**վերահաղորդում** – 1. ретрансляция, 2. по-  
вторение передачи – 1. relay, 2. repeat

**վերահաշվարկ** – пересчет (в финансо-  
вой отчетности) – restatement

**վերահսկողություն** – տես *վերահսկում*

բաժնաչափական վերահսկողություն – дозиметрический контроль – radiological monitoring

խիստ վերահսկողություն – строгий контроль – close control

խորհրդարանական վերահսկողություն – парламентский контроль – parliamentary oversight

հարձակողական օդատիեզերական վերահսկողություն – наступательный аэрокосмический контроль – offensive space control

Միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են ԱՄՆ-ի կամ երրորդ կողմի տիեզերական կարողությունները թշնամաբար օգտագործելու՝ հակառակորդի փորձերի կանխմանը, կամ հարձակողական օպերացիաներ, որոնց նպատակն է ԱՄՆ-ի և/կամ նրա դաշնակիցների տիեզերական համակարգերի գործունեությանը հակառակորդի միջամտության կամ դրանց վրա նրա հարձակման չեզոքացումը՝ նրա մոլորեցմամբ, տիեզերական հնարավորությունների նվազեցմամբ, քայքայմամբ կամ ոչնչացմամբ:

ձառագայթաբանական վերահսկողություն – радиационный контроль – radiological monitoring

**վերահսկում** – контроль – control

Տևական ստուգում, ինչպես նաև այդ նպատակով կատարվող դիտում:

աշխատանքի և շրջակա միջավայրի հիգիենայի վերահսկում – контроль за гигиеной труда и окружающей средой – occupational and environmental health surveillance

բաժնաչափական վերահսկում – дозиметрический контроль – monitoring

եթերի վերահսկում – наблюдение за эфиром, дежурство в эфире – listening watch, radio watch

էլեկտրամագնիսական սպեկտրի գործարկման վերահսկում – контроль за воздействием электромагнитного спектра – electromagnetic spectrum control

Այլ մահացու կամ ոչ մահացու օպերացիաների հետ էլեկտրամագնիսական սպեկտրի համատեղ գործարկման համադասված իրականացում, ինչը հնարավորություն է տալիս ազատ կերպով գործելու օպերացիոն էլեկտրամագնիսական միջավայրում:

ընթացակարգային վերահսկում – процедурный контроль – procedural control

Օդային տարածության վերահսկման մեթոդ, որը հիմնված է նախապես համաձայնեցված ու հայտարարված հրամանների և ընթացակարգերի վրա:

հեռաչափական վերահսկման սարքակազմակ – стенд телеметрического контроля – console

հրապարակումների վերահսկում – контроль публикаций – security review

հուսալի վերահսկում – надежный контроль – positive control

Օդային տարածքի վերահսկման մեթոդ, որը հիմնված է օդադիտման, ճշգրիտ որոշարկման և օդային տարածքի վերահսկման՝ պատասխանատու հրամանատարի նշանակած տարրերի և այդ օդային տարածքի բոլոր օգտագործողների միջև արդյունավետ հաղորդակցման վրա:

ռադիոմիջոցների աշխատանքի վերահսկում – контроль работы радиоэлектронных средств – emission control

Ռադիոհեռարձակումների վերահսկում. ռադիոհաղորդումների նվազագույն քանակի հեռարձակում՝ հակառակորդի կողմից հայտնաբերվելու վտանգից խուսափելու համար:

**վերաձևում** – передел – redistribution**վերամիասնականացում** – տես *վերամիավորում*

վերամիավորական – ирредентистский, воссоединительный – reunion

վերամիավորականություն – ирредентизм – reunion

Պետության, կուսակցության, քաղաքական շարժման քաղաքականություն՝ նպատակաուղղված միևնույն պետության կազմում ժողովրդի, ազգի, էթնոսի միավորմանը: Արտահայտվում է էթնի-

կական մոբիլիզացման ձևով, որի ժամանակ բարձրացվում է տվյալ էթնիկական բեկորի բնակության տարածք այն տիտղոսային պետության տարածքին միացնելու հարց, որտեղ տվյալ էթնոսը կազմում է մեծամասնություն:

**վերամիավորում** – воссоединение, восстановление единства – rejoin, reintegration

**վերանայում** – пересмотр – review

պաշտպանական համակարգի ռազմավարական վերանայում – стратегический пересмотр оборонной системы – Strategic Defense Review (SDR)

Պաշտպանական համակարգի զարգացման՝ կատարելագործման ժամկետային ընթացքի հետազոտմամբ՝ արվածի գնահատմամբ, թույլ տրված սխալների, բացթողումների վերհամմամբ անվտանգային միջավայրի զարգացման դինամիկայի ուսումնասիրության հիման վրա առկա և կանխատեսվող սպառնալիքների գերակայությունների որոշմամբ և դրանց չեզոքացման (հետմղման) համար անհրաժեշտ մարդկային, նյութական, հոգևոր, քաղաքական-սոցիալական և այլ ռեսուրսների և առկա ռեսուրսների հարաբերակցության հաշվառմամբ պաշտպանության համակարգի զարգացման պլանների ճշգրտում և փոփոխում:

պաշտպանական համակարգի ստրատեգիական վերանայում – տես *վերանայում՝ պաշտպանական համակարգի ռազմավարական վերանայում*

**վերանպատակադրում** – перенацеливание – reaiming

Ավիացիայում. օդում գտնվող ուժերին դրված մարտական խնդրի փոփոխում (ճշգրտում):

**վերապահում** – оговорка – reservation

**վերապատրաստում** – переподготовка – retraining

1. Կադրերի ուսուցանում՝ նոր մասնագիտությամբ: 2. (լայն տարածում ստացած սխալ կիրառություն) Լրացուցիչ ուսուցում՝ որակավորման բարձրացման համար:

ամենամյա վերապատրաստում – ежегодная переподготовка – annual training

**վերապրուկ** – пережиток – survival

**վերառազմականացում** – ремилитаризация – remilitarization

Նախկինում զինաթափված (ապառազմականացված) պետության զինված ուժերի ու ռազմական ներուժի վերականգնում:

**վերատեղաբաշխում** – передислокация – 1. redeployment, 2. deployment

**վերատպություն** – перепечатка – overprint

**վերացված** – տես *ոչնչացված*

**վերացում** – տես *ոչնչացում 1*

քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական և միջուկային զենքի կիրառման հետևանքների վերացում – ликвидация последствий применения химического, биологического, радиологического и ядерного оружия – chemical, biological, radiological, and nuclear consequence management

ականապատնեշների և խոչընդոտների վերացում – устранение заграждений и препятствий – clearing operation

Ձեռնարկում, որի նպատակն է ճանապարհների, տարածքի ևն մաքրումը ականներից և խոչընդոտներից՝ դրանց ոչնչացմամբ կամ չեզոքացմամբ:

**վերաուսուցում** – переучивание – retraining

**վերափոխում** – реформа, реформирование – reform

Որևէ բանի վերակազմակերպում, փոփոխում, վերակառուցում:

անվտանգության ապահովման հատվածի վերափոխում – реформа сектора обеспечения безопасности – security sector reform

Ժողովրդավարական վերափոխում – демократическая реформа – democratic reform

կառուցվածքային վերափոխում – տես *վերակառուցավորում*

պաշտպանական վերափոխում – оборонная реформа, военная реформа – defense reform

ռազմակրթական համակարգի վերափոխում – реформа системы военного образования – military education system reform

**վերգետնյա** – надземный – overground  
Գետնից՝ գետնի մակերևույթից որոշ բարձրության վրա գտնվող:

**վերելակ** – лифт, подъемник – elevator, lift

**վերելք** – восхождение, подъем – climb

կտրուկ վերելք – круча, крутой подъем – steep slope

**վերթիռ** – взлет – takeoff  
Թռչող ապարատի՝ գետնից, հենարանից կտրվելը՝ վեր բարձրանալը:

արագընթաց վերթիռ կատարել (կործանիչների մասին) – տես *տազնապ՝ տազնապով արագ օդ բարձրացնել*

կարճ վերթիռ ու վայրէջք – короткие взлет и посадка – short takeoff and landing

կարճ վերթիռով ու վայրէջքով թռչող ապարատ – летательный аппарат с коротким взлетом и посадкой – short takeoff and landing aircraft, STOL aircraft

կարճ վերթիռով և ուղղաձիգ վայրէջքով թռչող ապարատ – летательный аппарат с коротким взлетом и вертикальной посадкой – short takeoff and vertical landing aircraft, STOVL aircraft

վերթիռ կատապուլտով – взлет с катапульты – catapult launching  
Ինքնաթիռի օդ բարձրացում՝ թափառքի փոխարեն կատապուլտով նետման միջոցով:

վերթիռ շարայունով – взлет колонной – stream take-off

**վերթիռային վազքատարածություն** – длинна разбега, взлетная дистанция – take-off distance

Ինքնաթիռի օդ բարձրանալու համար անհրաժեշտ թափառքի երկարությունը, որն առաջին հերթին պայմանավորված է տվյալ մակնիշի ինքնաթիռների բնութագրիչներով:

**վերթիռավայրէջքային հրապարակ** – взлетно-посадочная площадка – airstrip

**վերթռչել** – взлететь – take off

**վերին** – верхний – 1. superior, 2. upper, 3. overhead

**վերիֆիկացում** – տես *հավաստում 2*

**վերլուծության և փորձի ընդհանրացման միացյալ կենտրոն** – Объединенный центр анализа и обобщения опыта – Joint Analysis and Lessons Learned Center

**վերլուծություն** – анализ – analysis, breakdown

1. Գիտական հետազոտության մեթոդ՝ ամբողջի մտովի կամ փաստացի բաժանում բաղադրիչների: 2. Որևէ բանի քննում՝ քննարկում՝ դիտարկում:

ամփոփիչ վերլուծություն – разбор – review

Պարապմունքի (վարժեցման, զորավարժության) արդյունքների ամփոփում՝ ուսումնավարժեցվողների գործողությունների վերլուծության և գնահատման, նրանց կատարած աշխատանքի դրական ու բացասական կողմերի ընդհանրացման, կառավարման մարմինների, զորքերի և առանձին կարգախմբերի զինժառայողների պատրաստման գործում առկա թերությունների և բացթողումների պարզման, ինչպես նաև հետագա մարտական և օպերատիվ պատրաստման ուղղությունների մատնանշման նպատակով:

իրավաքաղաքական վերլուծություն – политико-правовой анализ – political and legal analysis

հետադարձ վերլուծություն – ретроспективный анализ – backcasting

Պլանավորման մեթոդ, որի դեպքում նախապես որոշվում են ապագայի ցանկալի պայմանները, ապա ըստ դրանց՝ ձեռնարկվելիք անհրաժեշտ քայլերը:

հուսալիության վերլուծություն – анализ надежности – reliability analysis

պաշտպանական-անվտանգային վերլուծություն – оборонно-безопасностный анализ – defense security analysis

պաշտպանական վերլուծություն – оборонный анализ, военный анализ – defense analysis

ռազմաքաղաքական վերլուծություն – военно-политический анализ – military-political analysis

տեխնիկական վերլուծություն – технический анализ – technical analysis

Պատկերային տեղեկույթի վերծանման ոլորտում. պատկերում ջնջված (կորած) մանրամասների ճշգրիտ վերականգնում:

**վերծանում** – расшифровка, дешифровка – decryption, deciphering, decipherment

վերծանման բանալի – ключ к расшифровке – key

վերծանման տեխնիկա – криптоанализ, техника расшифрования – cryptanalysis

**վերկաջ** – подъем, побудка, утренняя заря – reveille

**վերմախտ** – Вермахт – Wehrmacht

Գերմանիայի Զինված ուժերի անվանումը 1935–1945 թթ.:

**վերնագիր** – заголовок – heading, course

**վերնախավ** – элита – elite

**վերնաշենք** – надстройка – superstructure

**վերջապահ** (գորք) – арьергард – rear guard

Մոտոհրաձգային (տանկային) զորամաս (ստորաբաժանում), որը հատկացվում է հիմնական ուժերի նահանջը (հետքաշումը) ապահովելու (ծածկապաշտպանելու) համար, երթային պահպանության մարմին:

**վերջասարք** – терминал, оконечное устройство – terminal

**վերջնագիր** – ультиматум – ultimatum

**վերջնակետ** – տես *ծայրակետ*

**վերջնամաս** – оконечность – terminal

**վերջնամոբիլիզացում** – отмобилизование – completion of mobilization

Միջոցառումների համալիր՝ ուղղված կառավարման մարմինների, զորամիա-

վորումների, զորամասերի և հիմնարկների լիակատար փոխադրմանը պատերազմական ժամանակի կազմակերպվածքի ու հաստիքների:

**վերջնասարք** – տես *ծայրասարք*

**վերջրյա** – надводный – above-water

Ջրից դուրս, ջրի մակերևույթից վեր գտնվող:

**վերտեքս** – вертекс – vertex

Արկի հետագծի բարձրագույն կետը:

**վերք** – рана – wound

ինքն իրեն հասցրած վերք – нанесенная самому себе рана – self-inflicted wound

մակերեսային վերք – поверхностная рана – flesh wound

ոչ մարտական վերք – небоевая рана – nonbattle injury

**վթար** – 1. авария, 2. авария, столкновение – 1. accident, breakdown, emergency 2. crash

Մեքենայի, նավի, ինքնաթիռի, հաստոցի, ընդհանրապես որևէ տեխնիկական միջոցի, սարքի, սարքավորանքի հանկարծակի վնասումը՝ շարքից դուրս գալը, աշխատանքի՝ գործունեության, որևէ ընթացքի խաթարումը:

վթարի ազդանշան – տես *աղետ՝ աղետի ազդանշան*

**վթարային** – 1. аварийный, запасной, 2. տես *վիչագած* – 1. safig, 2. տես *վիչագած*

վթարային անձեռնմխելի պաշար – неприкосновенный аварийный запас – survival

վթարային իրազեկման ծառայություն – служба аварийного оповещения – alerting service

վթարային իրավիճակ – аварийная ситуация – emergency situation

վթարային պաշար – аварийный запас – emergency rations

Արտակարգ իրավիճակների համար հատկացվող մթերաբաժին:

վթարային վայրէջք (առանց անփվները բացելու) – аварийная посадка – crash landing

վթարային փրկարարական աշխատանքներ – аварийно-спасательные работы – rescue operations, emergency repairs

Միջոցառումների համալիր, որոնք իրականացվում են արտակարգ իրավիճակների (բնական ու մարդածին աղետների, մեծ վթարների ու պատուհասների) գոտում մարդկանց կյանքը, նյութական ու մշակութային արժեքները փրկելու, բնական միջավայրը պաշտպանելու, օջախը տեղափակելու, մարդկանց կյանքին և առողջությանն սպառնացող գործոնների ազդեցությունը չեզոքացնելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով:

վթարային փրկարարական գործողություն և հրդեհի մարում – аварийное спасение и пожаротушение – crash rescue and fire suppression

Հրդեհի դեպքում օդանավի անձնակազմի տարահանում և հրդեհի մարում:

վթարային փրկարարական պատիճախցիկ – аварийно-спасательная капсула – escape capsule

**Վի-էքս – Ви-Экс – VX**

Ամերիկյան արտադրության նյարդակաթվածահարույց նյութ՝ գազ:

**Վիճակ** – 1. состояние, 2. положение – 1. state, condition, 2. situation, posture

ականի անվտանգ վիճակ – безопасное положение мины – safe state

անաշխատունակ վիճակ – нерабочее состояние – inoperability

անելանելի վիճակ – безвыходное положение, тупик – impasse

անորոշ վիճակ – տես *իրադրություն՝ անորոշ իրադրություն*

աշխատունակ վիճակ – рабочее состояние – active status

առողջական վիճակի վերահսկում – наблюдение за состоянием здоровья – health surveillance, deployment health surveillance

«զգաստ» վիճակ – положение «смирно» – “attention”

լավ ֆիզիկական վիճակ – хорошая физическая форма – fitness

նորոգումային վիճակ – состояние ремонта – maintenance status

1. Հատուկ ստեղծված ոչ գործառույթային վիճակ, որի դեպքում համապատասխան անձնակազմը ապահովում և պահպանում է սարքավորանքի, տեխնիկայի և ռազմական գույքի այնպիսի վիճակ, երբ դրանք կարող են նվազագույն ժամանակում լրացուցիչ անձնակազմի ներգրավմամբ հեշտությամբ վերականգնել իրենց աշխատունակ վիճակը առանց զգալի կամ կապիտալ նորոգման: 2. Փաստացի կամ թիկունքային դասակարգմամբ որպես օգտագործման համար ոչ պիտանի տեխնիկայի վիճակը մինչև անհրաժեշտ սպասարկման կամ նորոգման ավարտը: 3. Ռազմական գույքի կոնկրետ միավորի մարտապատրաստության մակարդակը արտահայտող վիճակը:

սկզբնական վիճակի վերականգնում – восстановление первоначального положения – restitution

**Վիճելի հարց** – спорный вопрос – issue

**Վիմպել** – вымпел – drop message

«Վիմպել» – «Вымпел» – “Aphid”

Խորհրդային արտադրության «օդ-օդ» դասի մերձագործ հրթիռ:

**Վիրաբուժություն** – хирургия – surgery

**Վիրակապ** – повязка – bandage

վիրակապի պարագաներ – перевязочный материал – dressing

**Վիրակապարան** – перевязочный пункт – dressing station

Ղաշտային բուժկետ, որտեղ վիրավորները առաջին օգնությունն են ստանում հոսպիտալ տեղափոխվելուց առաջ:

**Վիրակապել** – перевязывать, бинтовать – bandage

**Վիրակապության նյութեր** – перевязочный материал – bandage



**վիրակապում** – перевязка – dressing

**վիրահատարան** – операционная – surgery

**վիրահատել** – оперировать – operate

**վիրահատություն** – хирургическая операция – surgery, operation

Վիրաբուժական միջամտություն, որը կատարվում է բուժման կամ ախտորոշման նպատակով:

**վիրավոր** – раненый – wounded

պատգարակավոր վիրավոր – раненый на носилках – stretcher-case

վիրավորների տեղափոխման միջոցներ – средства переброски раненых – patient movement items

վիրավորների օպերատիվ-մարտավարական խնամում – оперативно-тактический уход за ранеными – tactical combat casualty care

քայլող վիրավոր – տես *հիվանդ` երթևեկ հիվանդ*

**վիրավորանք** – оскорбление – offense

վիրավորանք գործողությամբ – оскорбление действием – violence

Մարդու անձը վիրավորող արարք` ֆիզիկական բռնություն:

**վիրավորում** – ранение – wound, wound-ing, injury

1. Մարդու մաշկի, լորձաթաղանթի և ներքին հյուսվածքների կամ օրգանների վնասում, որն առաջ է բերում դրանց ձևի կամ գործառնությունների փոփոխություն: 2. Վերք հասցնելու գործողություն:

բեկորային վիրավորում – осколочное ранение – shrapnel wound, fragmental wound

գնդակային վիրավորում – пулевое ранение – bullet wound

ցնցումային վիրավորում – контузионное ранение – contused wound

**վիրուսային արյունահոսական տենդ** – вирусная геморрагическая лихорадка – viral hemorrhagic fevers

**վկայագիր** – 1. свидетельство, паспорт, 2. сертификат – 1. passport, 2. certificate, certification

**վկայական** – аттестат – military certifiacate

ինքնության վկայական – տես *վկայական` անձի վկայական*

**վճարում** – плата, оплата – pay

վճարման հանձնարարություն – платежное поручение – payment instruction

վճարում ապրանքային համարժեքով (զինծառայողների նյութական) – оплата в товарном эквиваленте – payment in kind

**վճռական** – տես *վճռորոշ*

**վճռորոշ** – 1. решительный, 2. решающий – decisive

վճռորոշ տարածք – ключевая территория – key terrain

Տարածք, որն անհրաժեշտ է գրավել առաջադրանքը կատարելու համար:

**վնաս** – 1. ущерб, вред, урон, 2. повреждение, ущерб – damage, harm, injury

1. Որևէ բան, որ փչացնում է առարկան, պակասեցնում արժեքը, խախտում ամբողջությունը: 2. Այն, ինչ խանգարում է մարդու առողջությանը: 3. Ունեցվածքի կորուստ:

անընդունելի վնաս – неприемлемый ущерб – unacceptable damage

Հայեցակարգային հասկացություն զրսպման տեսությունում. զինված ուժերի, ռազմաարդյունաբերական օբյեկտների, պետական ու ռազմական կառավարման համակարգերի խոցման մակարդակ, որի դեպքում պետությունը կորցնում է պատերազմը շարունակելու կարողությունը կամ զրկվում դրա հետագա վարման քաղաքական ու տնտեսական շարժառիթներից:

ընդունելի վնաս – приемлемый ущерб – acceptable damage

ծանր վնաս – тяжелый ущерб – severe damage

վնաս միջուկային հարձակումից – ущерб от ядерного нападения – nuclear damage

վնաս պատճառել – տես *վնասել*

վնասի անմիջական գնահատում – непосредственная оценка ущерба – direct damage assessment

Ավերածությունների տարածքի գնահատում՝ օդային հետախուզության, օդային լուսանկարչության կամ անմիջական դիտման միջոցով:

վնասի գնահատում – оценка ущерба – damage assessment

1. Առաջացած վնասվածքների, ավերածությունների բնույթի ու չափի որոշում: 2. Ազգային անվտանգության ոլորտին վերաբերող գաղտնի տեղեկույթի տարածման հետևանքների որոշում:

վնասի կանխատեսումային գնահատում – прогнозируемая оценка ущерба – damage estimation

Հարձակման հավանական հետևանքների նախահաշվարկում:

վնասի չափանիշ – критерий ущерба – damage criterion

տրված անընդունելի վնաս – заданный неприемлемый ущерб – guaranteed unacceptable damage

տրված վնաս – заданный ущерб – guaranteed damage

ուղեկից վնաս – տես *վնաս՝ ուղեկցական վնաս*

ուղեկցական վնաս – сопутствующий ущерб – collateral damage

**վնասազերծում** – обезвреживание – neutralization, deactivation

Վտանգ ներկայացնող օբյեկտի (զինամթերք, դիվերսանտ, բանդիտ են) բերում այնպիսի վիճակի, երբ բացառված է դրա չթույլատրված գործարկումը կամ թշնամական ակտիվ գործողությունը:

**վնասակար** – вредный – adverse, harmful

**վնասել** – причинять вред, наносить урон – harm

**վնասվածք** – повреждение, травма – injury

ականապայթյունային վնասվածք – минно-взрывная травма – mine blast trauma, explosive injury trauma

Բաց տեսակի վնասվածք, որն առաջանում է ականի պայթյունի հետևանքով:

լուրջ վնասվածք – серьезное повреждение – severe damage

չափավոր վնասվածք – умеренное повреждение – moderate injury

**վնասում** – 1. повреждение, 2. нанесение вреда, 3. տես *ջարդում* – 1. damage, 2. infliction of harm, crippling, 3. տես *ջարդում*

չափավոր վնասում – умеренное повреждение – moderate damage

վնասման հավանականություն – вероятность повреждения – probability of damage

վնասման հատված – տես *վնասում՝ վնասման գոտի*

օտար առարկայով վնասում – повреждение посторонним предметом – foreign object damage

**վրլյունտարիզմ** – տես *կանապաշտություն*

**վստահական** – доверительный – confidential

վստահական հիմնադրամ – трастовый фонд, доверительный фонд – trust fund

**վստահականություն** – доверительность, конфиденциальность – 1. confidentiality, 2. credibility

**վստահելի** – տես *գաղտնապահ*

**վտանգ** – опасность – danger, hazard, jeopardy

Վիճակ, որի դեպքում կա համակարգին վնաս պատճառելու հնարավորություն:

առանձնակի վտանգ – особая опасность – special hazard

ավիաբախման վտանգ – опасность авиастолкновения – near miss, airmiss

Օդում երկու ինքնաթիռների բախման վտանգ:

բացահայտ և անմիջական վտանգ – явная и непосредственная опасность – clear and present danger

ԱՄՆ-ի Գերագույն դատարանի որոշումներում օգտագործվող ստանդարտ (կաղապարային) արտահայտություն՝ վերաբերող այն դեպքերին, երբ խոսքի ազատությունը պետք է սահմանափակված լինի: Օրինակ՝ Սահմանադրությամբ արգելված է թատրոնում գոռալ «Հրդեհ», որովհետև այդ դեպքում կառաջանա խուճապ, որը կլինի «բացահայտ և անմիջական վրտանգ»:

խուսափում վտանգից – տես *փախուստ՝ փախուստ վտանգից*

կենսաբանական վտանգ – биологическая опасность – biological hazard

մեծ ռազմական վտանգի գոտի – зона повышенной военной опасности – zone of increased military danger

վտանգի գոտուց դուրսբերում – эвакуация, вывоз – recovery

վտանգի կանխում – предотвращение опасности – hazard avoidance

վտանգի ճանապարհային նշան – знак опасности на дорогах – road hazard sign

վտանգի որոշում և նախազգուշացում – определение опасности и предупреждение – indications and warning

*ԱՄՆ-ում.* հետախուզական գործունեություն, որը նպատակաուղղված է ԱՄՆ-ի կամ նրա դաշնակցային, քաղաքական, ռազմական կամ տնտեսական շահերի, ինչպես նաև ԱՄՆ-ի՝ արտասահմանում գտնվող քաղաքացիների համար վտանգ ներկայացնող արտերկրյա գարգացումների վերաբերյալ տեղեկույթի պատեհաժամ հայտնաբերմանն ու հաղորդմանը:

վտանգ չներկայացնող – տես *անվտանգ*

քիմիական վտանգ – химическая опасность – chemical hazard

քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական և միջուկային վտանգ – химическая, биологическая, радиологическая и ядерная опасность – chemical, biological, radiological, and nuclear hazard

քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական և միջուկային վտանգի մասին տեղեկույթի օպերատիվ տրամադրում ապահովող միջոցառումներ – мероприятия, которые обеспечивают оперативное предоставление информации о химической, биологической, радиологической и ядерной опасности – chemical, biological, radiological, and nuclear sense

**վտանգավոր** – опасный – dangerous

վտանգավոր մերձեցում – տես *վտանգ՝ ավիաբախման վտանգ*

վտանգավոր մոտեցում – տես *վտանգ՝ ավիաբախման վտանգ*

վտանգավոր ռազմական գործողություններ – опасные военные действия – dangerous military activities

վտանգավոր ռազմական գործունեություն – опасная военная деятельность – dangerous military activities

Խաղաղ ժամանակ կողմերի զինված ուժերի անձնակազմերի՝ միմյանց նոտակայքում ձեռնարկվող գործողություններ, որոնք կատարվում են անխուսափելի իրադարձությունների բերումով կամ ակամա կերպով և կարող են հանգեցնել մարդկային զոհերի կամ նյութական վնասի ու կողմերի հարաբերություններում ստեղծում են լարվածություն:

**«Վտանգավոր մերձություն»** – «Опасная близость!» – “Danger close”

Ծովային և հրետանային գնդակոծության ժամանակ տրվող կոչ կամ ազդանշան, որը ցուցում է տալիս, որ յուրային զորքերը գտնվում են կրակային գոտուց 600 մետրից պակաս հեռավորության վրա:

**վրազետնյա** – наземный – ground

Գետնին՝ գետնի մակերևույթին գտնվող, գետնի վրա հիմնված՝ կառուցված:

վրազետնյա ապաստարան – наземное убежище – surface shelter

վրազետնյա բազավորմամբ ստորին շարակարգի միջոցներ – средства наземного базирования нижнего эшелона – Land-Based Lower Layer

վրագետնյա բազավորմամբ վերին շարակարգի միջոցներ – средства наземного базирования верхнего эшелона – Land-Based Upper Layer

վրագետնյա դիտորդների կազմավորում – организация наземных наблюдателей – ground observer organization

վրագետնյա իրադրության օդային դիտման համակարգ – система наблюдения за наземной обстановкой – air-ground surveillance capability

**վրադրում** – наложение – overlay, trace

համեմատական վրադրում – компаративное наложение – comparative cover

Օդային հետախուզության տարածամանակյա արդյունքների բաղդատում:

**վրաթիկնոց** – տես *անջրանցիկ՝ անջրանցիկ թիկնոց*

**վրածածկ** – перекрытие – overhead cover

**վրածածկում** – перекрытие – overhead protection

**վրաջրյա** – надводный – water surface

Ջրի վրա՝ ջրի մակերևույթին գտնվող, ջրից մասամբ դուրս եկող:

վրաջրյա ուժեր – надводные силы – surface forces

Ուժեր, որոնք գտնվում և գործում են ջրային մակերևույթին:

**վրատիպ** – надпечатка – overprint

**վրիժառուական ձեռնարկում** – акт возмездия – reprisal

**վրիպում** – промах – 1. fault, 2. miss

1. Անճշտություն, սխալ: 2. Առարկայի (զնդակ, արկ, ռումբ ևն) այնպիսի նետում, որի դեպքում այդ առարկան չի դիպչում այն թիրախին, որի վրա արձակված էր:

**ՎՔՆ** – տես *վառելաքսանյութ*

**ՎՔՆ ապահովման տեխնիկական միջոցների գծով աշխատանքային խումբ** – рабочая группа по техническим средствам обеспечения ГСМ – Petroleum Handling Equipment Working Group

## S (ՏՅՈՒՆ)

**S-54** – T-54 – T-54

1950-ական թթ. խորհրդային հիմնական մարտական տանկ:

**S-62** – T-62 – T-62

1960-ական թթ. խորհրդային հիմնական մարտական տանկ:

**S-64** – T-64 – T-64

1970-ական թթ. խորհրդային հիմնական մարտական տանկ:

**S-72** – T-72 – T-72

խորհրդային S-64 տանկի պարզեցված տարբերակ:

**S-80** – T-80 – T-80

1980-ական թթ. խորհրդային հիմնական մարտական տանկ:

«**Տաբուն**» – «Табун» – “Tabun”

Նյարդակաթվածահարույց թունավոր նյութ:

**տագնապ** – тревога – alert, alarm

1. Ջորքը գործողություններին պատրաստության վիճակի բերելու ազդանշան (հրաման): 2. Միջոցառումների համալիր, որոնք ՋՈՒ-ում իրագործվում են զորքերը մարտական խնդիրներ կատարելուն, արտակարգ իրավիճակներում գործելուն պատրաստության վիճակի շտապ բերման նպատակով: 3. Հակառակորդի հարձակման մասին բնակչությանը իրագեկող ազդանշան (հայտարարություն):

կեղծ տագնապ – ложная тревога – hoax

մարտական տագնապ – боевая тревога – battle alarm, alert, alarm

տագնապի ազդանշան – сигнал тревоги – alert, alarm

տագնապի հրաման – приказ тревоги – alert order

Տագնապ հայտարարելու հրաման:

տագնապ հայտարարել – объявить тревогу – alarm

տագնապով արագ օդ բարձրացնել – поднимать в воздух (истребители) по тревоге, быстро взлетать, подниматься в

воздух по тревоге (об истребителях) – scramble

Հակառակորդի օդային հարձակման միջոցներ կամ չպարզված պատկանելության կամ անհայտ օբյեկտներ հայտնաբերելու դեպքում դրանց դեմ կործանիչներ ուղարկել:

ուսումնական տագնապ – учебная тревога – training alarm

օդային տագնապ – воздушная тревога – air raid alert, (Am.) aircraft warning

**տագնապած** – встревоженный, обеспокоенный – alarmed

**տախտակամած** – палуба, настил – deck  
Նավերում. կողերի վրա հենվող հորիզոնական ծածկույթ՝ կազմված հարթակից և դրան պահող միջոցների լրակազմից (հավաքածուից):

թռիչքային տախտակամած – полетная палуба – flight deck

Ավիակրի տախտակամած, որն օգտագործվում է ինքնաթիռների վերթիռի և վայրէջքի համար:

**տակառ** – бочка – barrel

**տակդիր** – 1. подставка, 2. подложка – 1. prop, carrier, 2. substrate, carrier

բեռնային տակդիր – грузовой поддон, грузозахватная платформа – pallet, loading platform

**տակդիր-բեռնամփոփ** – поддон – sabot  
Բեռներն ինքնաթիռից վայր նետելու հարմարանք:

**տակտիկա** – տես *մարտավարություն*

**տակտիկական** – տես *մարտավարական*

տակտիկական խոչընդոտներ – տես *խոչընդոտ՝ մարտավարական խոչընդոտներ*

տակտիկական կապ – տես *կապ՝ մարտավարական կապ*

տակտիկական հնարներ, մեթոդիկա և ընթացակարգեր – տես *մարտավարական՝ մարտավարական հնարներ, մեթոդիկա և ընթացակարգեր*

տակտիկական հրթիռ – տես *հրթիռ՝ մարտավարական հրթիռ*

տակտիկական պլան – տես *պլան՝ մարտավարական պլան*

տակտիկական օդատրանսպորտային փոխադրումներ – տես *փոխադրում՝ մարտավարական օդատրանսպորտային փոխադրումներ*

**տաճար** – տես *եկեղեցի 1*

**տանկ** – танк – tank

Լրիվ զրահապատ թրթուրավոր մեքենա՝ օժտված բարձր մակարդակի անցունակությամբ և հզոր թնդանոթով, որը սովորաբար տեղակայվում է պտտվող աշտարակում և նախատեսվում է ուղիղ նշանառությամբ հրաձգության համար:

թեթև տանկ – легкий танк – light tank  
Մարտական հետախուզական թրթուրավոր մեքենա, ՄՀՄ:

հարթաչերեփավոր տանկ – տես *տանկ-բուլդոզեր*

հիմնական մարտական տանկ – основной боевой танк – main battle tank

հիմնական տանկ – основной танк – main tank

Բազմանպատակ մարտական տանկ, որը զուգակցում է մեծ կրակային հզորությունը, պաշտպանվածությունը և շարժունությունը:

մարտական տանկ – боевой танк – battle tank

Ռազմական գործում կիրառվող տանկ:

շղթայակիր ականորսիչ տանկ – цепной танк-тралщик – flail tank

Հատուկ ականագերծիչ հարմարանքով օժտված տանկ՝ նախատեսված ականադաշտերում անցուղիներ բացելու համար:

տանկի անձնակազմ – экипаж танка – tank crew

տանկի հորինվածք – компоновка танка – tank configuration

Սպառազինության համալիրի, անձնակազմի, շարժիչահաղորդակային կայանքի, զրահային և հատուկ պաշտպանության տարրերի, տանկի համակարգերի և օժանդակ սարքավորանքի՝ զոր-

ծառութային առումով հիմնավորված տեղաբաշխում:

տանկի հրամանատար – командир танка – tank commander

**տանկակործանիչ** – истребитель танков, танкоистребитель – tank destroyer

1. Հայրենական մեծ պատերազմում. հակառակորդի տանկերի դեմ պայքարելու համար խորհրդային ստորաբաժանումների կազմում ստեղծվող ոչ հաստիքային զինախմբերի անձնակազմի անդամ: 2. Ինքնագնաց հրետանային կայանքներ՝ նախանշանակված զրահապատ տեխնիկայի ոչնչացման համար:

**տանկանմատչելի** – танконедоступный – tankproof

Տանկերի համար անանցանելի կամ դժվարանցանելի ուղղություն՝ մատույց՝ ճանապարհ:

**տանկաշինություն** – танкостроение – tank construction

**տանկավարում** – танковожение – tank-driving

**տանկարշավարան** – танкодром – tankodrome, tank training area

Տեղանքի հատված, որը սարքավորված է տանկի վարումն ուսուցանելու համար:

**տանկափոխադրիչ** – транспортер танка, танковоз – tank transporter

**տանկ-բուլդոզեր** – танк-бульдозер, танк-дозер – tank dozer

**տանկեր** – танкер, нефтеналивное судно – tanker

**տանկիստ** – танкист – tanker

հրաձիգ տանկիստ – տես *նշանառու՝ նշանառու տանկիստ*

**տառապանք** – страдание – distress

**տասից մեկին վիճակ գցելով մահապատժի ենթարկել** (*պտմ.*) – подвергнуть децимации (*ист.*) – decimate

**տասնորդ գանձել** – взимать десятину – decimate

**տարաբաշխում** – 1. распределение, 2. рассредоточение – 1. distribution, allocation, 2. dispersal, dispersion

1. Տարբեր տեղեր բաշխել՝ բաժանել՝ ցրել: 2. Մեկ ամբողջի տրոհմամբ ըստացված մասերի միմյանցից հեռացումը՝ տարբեր տեղերում զետեղումը:

զորքի տարաբաշխում – рассредоточение войск – dispersal of troops

Տեղանքում զորամիավորումների, զորամասերի, մարտակարգի տարրերի, սպառազինության առանձին միավորների (ինքնաթիռ, տանկ, հրանոթ, արձակման կայանք), նավերի տեղաբաշխում ճակատով ու խորությամբ որոշակի ընդմիջակայքներով՝ հակառակորդի խոցման միջոցներից դրանց կորուստները հնարավորինս նվազեցնելու նպատակով, սակայն այնպես, որ կառավարումը չխաթարվի:

ուժերի և միջոցների տարաբաշխում – рассредоточение сил и средств – force dispersal

**տարածադիտական զույգ** – стереоскопическая пара, стереопара – stereoscopic pair

Միևնույն օբյեկտի զույգ հարթ պատկերներ, որոնք ունեն այնպիսի տարբերություններ, որոնց շնորհիվ միաժամանակ յուրաքանչյուր պատկերը մի աչքով (առանձին) դիտելու դեպքում ստեղծվում է պատկերի տարածականության (ծավալայնության) պատրանք:

**տարածաշրջան** – регион – region, area

1. Պայմանական աշխարհագրական շրջան, որը որոշակի տեսակետից կարող է դիտվել որպես մեկ ամբողջություն: 2. Ռազմավարական շրջանի մաս, որի սահմաններում գտնվում է պետության (մի խումբ պետությունների) ռազմատնտեսական ներուժի մի զգալի մասը և ռազմական գործողությունների (ազդեցիկայի) սանձազերծման դեպքում կարող են ծավալվել ՋՈՒ-ի բոլոր տեսակների մեծամասշտաբ օպերացիաներ և իրագործվել պատերազմի որոշ կամ բոլոր ռազմավարական նպատակները:

**Տարածաշրջանային հարցերով և միջ-երկրածովյան երկխոսության բաժին** – Отдел по региональным вопросам и Средиземноморскому диалогу – Regional Affairs and Mediterranean Dialogue Section

**տարածվածություն** – распространенность – currency

**տարածություն** – пространство – space

1. Մատերիալի հիմնական հատկություն (ատրիբուտ): 2. Ֆիզիկական կամ երևակայական (վիրտուալ) եռաչափ դաշտ, որն ունի երկարություն, լայնություն և բարձրություն: 3. Ռ-չափանի դաշտ:

ազգային տեղեկատվական տարածություն – национальное информационное пространство – national information space

աշխարհառազմավարական տարածություն – геостратегическое пространство – geostrategic space

Երկրի մակերևույթի տարածքների (ներառյալ՝ դրանցում գտնվող օբյեկտները), ներքին ծովերի և Համաշխարհային օվկիանոսի ջրատարածքների, ինչպես նաև երկրամերձ օդատիեզերական տարածության համախումբը, որը աշխարհաքաղաքականության ուսումնասիրության և պատերազմական ռազմավարության մեջ հաշվառման օբյեկտ է: Դիտարկվում է մայրցամաքային և օվկիանոսային ռազմավարական շրջանների, տարածաշրջանների, առանձին երկրամասերի ու շրջանների, օվկիանոսային ու ծովային գոտիների, ռազմավարական ուղղությունների, ռազմավարական օդատիեզերական ուղղությունների և օդային ուղղությունների համակարգում:

ընդհանուր մարտական տարածություն – общее боевое пространство – common operating environment

հետարկային տարածություն – заснарядное пространство – initial air space

Փողի մեջ շարժվող արկի հետևում եղած տարածությունը, որտեղ գազերը ճնշում են գործադրում արկի վրա:

մարտական տարածություն – боевое пространство – battlespace

1. Իրական կամ երևակայական (տեղեկության) տարածության այն հատվածը, որտեղ մղվում են (նախատեսվում է մղել) մարտական գործողություններ: 2. Այն միջավայրը, գործոնները և պայմանները, որոնք անհրաժեշտ է հասկանալ՝ մարտական հզորությունը հաջողությամբ կիրառելու, ուժերը պաշտպանելու և/կամ առաջադրանքը կատարելու համար:

մեռյալ տարածություն – 1. мертвое пространство, непоражаемое пространство, невидимая зона, 2. мертвое пространство, мертвая воронка, 3. мертвое пространство, мертвая зона – 1. dead space, dead zone, blind spot, 2. dead space, 3. dead space, blind spot

1. Տվյալ տեսակի զենքի նշանառվական հեռահարության սահմաններում (դիտորդի տեսադաշտում) գտնվող տարածություն, որում նշանակետը չի կարող տվյալ կրակային դիրքից խոցված լինել ուղիղ նշանառությամբ կրակակծման՝ հրթիռի արձակման պարագայում (կամ նկատելի լինել դիտորդի կողմից դիտման դեպքում)՝ զենքի ձգաբանական հատկությունների, տեղանքի ռելիեֆի, զենքի՝ դիտորդի (կամ նշանակետի) դիրքը ծածկող պատմեշի առկայության ևն բերումով: 2. Հրանոթի վերևում գտնվող ծագարածև տարածություն, որում նշանակետը չի կարող խոցվել այն պատճառով, որ բարձրացման անկյունը միշտ լինում է 90°-ից փոքր: 3. Ռադիոֆիզիկայում և կապի ոլորտում. տարածություն, որը գտնվում է ռադիոհաղորդչի հասանելիության տիրույթում, սակայն որի սահմաններում հնարավոր չէ ընդունել այդ ռադիոհաղորդչի ազդանշանները:

միասնական պաշտպանական տարածություն – единое оборонное пространство – single defense space

Պետական հիմնարկների համագործակցություն՝ պետության պաշտպանունակության ապահովման նպատակով:

միջխրամատային տարածություն – междуючное пространство – no-man’s-land

ներքին տարածություն – внутренность, внутренняя часть – interior



չխոցված տարածություն – տես *տարածություն մեթյալ տարածություն 1*

տիեզերական տարածություն – космос, космическое пространство – space

Տարածություն, որը գտնվում է Երկրի մթնոլորտից այն կողմ և ներառում է միջգալակտիկական (հեռավոր տիեզերք), միջաստղային և միջնոլորակային (մերձավոր տիեզերք) տարածությունները, և որի իրավական ռեժիմը սահմանվում է միջազգային տիեզերական իրավունքով:

օդային տարածություն – воздушное пространство – air domain

Մթնոլորտի մաս, որն սկսվում է Երկրի ցամաքային ու ջրային մակերևույթից և հասնում է այն բարձրությունների, երբ օպերացիաների վրա նրա ազդեցությունը դառնում է չնչին:

**տարածում** – 1. распространение, 2. տես *ցրում* – 1. transit, 2. տես *ցրում*

**տարածք** – территория – territory

ազատագրված տարածք – освобожденная территория – liberated territory

ակնանապատելի ջրային տարածք – минеруемое водное пространство – mineable waters

Ջրային տարածք, որը հարմար է ակնանապատելու համար:

արգելված օդային տարածք – запретное воздушное пространство – airspace reservation

Որոշակի օդային տարածություն, որը մտնելու համար պետության կողմից պաշտպանական, անվտանգային կամ այլ նպատակներով դրված է արգելք կամ սահմանափակում:

բռնազավթված տարածք – оккупированная территория – occupied territory

կախյալ տարածքներ – зависимые территории – depended territories

Մայր պետությունների (մետրոպոլիա) տիրապետություններ, որոնք գտնվում են նրանց լրիվ կամ մասնակի կառավարման ներքո:

մարտավարական տեսակետից կարևոր տարածք – тактически важная территория – ground of tactical importance

պաշտպանական տարածք – зона обороны – defense zone

ջրային տարածքի հաղթահարում վաղորդք նախապատրաստմամբ – форсирование водной преграды с предварительной подготовкой – deliberate crossing

վերահսկվող օդային տարածք – контролируемая воздушная зона – controlled airspace

տարածքի բաժանում հատվածների – разбивка территории на участки – compartmentation

տարածքի հանձնում – передача территории – territory transfer

օդային տարածք – воздушное пространство – airspace

Օդային տարածության այն հատվածը, որը սահմանափակված է տվյալ պետության պետական սահմանագծով անցնող ուղղաձիգ հարթությամբ, և որի նկատմամբ պետությունն ունի այն նույն իրավունքները, որոնք ունի իր ցամաքային և ջրային տարածքների նկատմամբ:

օդային տարածքի նկատմամբ ինքնիշխանություն – суверенитет над воздушным пространством – air sovereignty, air sovereignty mission

Իր օդային տարածքի նկատմամբ բացարձակ վերահսկողություն իրականացնելու պետության անվերապահ իրավունքը:

օդային տարածքի սահմանափակումներ – ограничения воздушного пространства – airspace restrictions

Օդային տարածքի՝ սահմանված չափերով հատվածի օգտագործման սահմանափակում (արգելում), որը դնում է տեղային լիազոր մարմինը՝ անվտանգության և ապահովության նկատառումներով:

օդային տարածքի վտանգավոր հատված – опасный район воздушного пространства – airspace warning area

օդային տարածքի օգտագործման և վերահսկման ընթացակարգ – процедура использования и контроля воздушного пространства – airspace control procedures

օպերացիայի շրջանը վրածածկող օդային տարածք – воздушное пространство над районом операции – airspace control area  
 Օդային տարածք, որի կողային սահմանները համընկնում են օպերացիայի շրջանի վրագետնյա սահմանների հետ:

**տարածքային** – территориальный – territorial

Տարածքին վերաբերող՝ հատուկ:

տարածքային ամբողջականություն – территориальная целостность, территориальная неприкосновенность – territorial integrity

Միջազգային իրավունքի նորմ, որով պետության տարածքը անձեռնմխելի է այլ պետությունների կողմից զինված ուժի կիրառման կամ ուժի կիրառման սպառնալիքի միջոցով ոտնձգությունների համար:

տարածքային անձեռնմխելիություն – տես *տարածքային՝ տարածքային ամբողջականություն*

տարածքային բանակ – территориальная армия – Territorial Army

Մեծ Բրիտանիայում. ցամաքային զորքերի առաջին հերթի ռեզերվ, որը կազմվում է կամավորության հիմունքներով ռազմական պատրաստում ստացած անձանցից:

տարածքային բանակի զինվոր – солдат территориальной армии – terrier, territorial

տարածքային պահանջ – территориальная претензия – territorial claim

տարածքային ջրեր – территориальные воды – territorial waters

Տվյալ պետության ներքին ջրերը և սահմաններում ներառված օվկիանոսային (ծովային) ջրատարածքը:

տարածքային օդային տարածություն – территориальное воздушное пространство – territorial airspace

Օդային տարածություն, որը գտնվում է տվյալ պետության ինքնիշխանական ցամաքային ու ջրային տարածքի վերևում:

**տարահանման շրջան** – район эвакуации – recovery site

Անձնակազմի փրկության օպերացիաների ամերիկյան տերմին. գոտի (վայր), որտեղից մեկուսացված անձնակազմը կարող է դուրս բերվել (տարահանվել) յուրային ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածք:

**տարահանում** – эвакуация – evacuation, evacuation procedure

Մարտական գործողությունների, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի ազդեցությանը ենթարկված շրջաններից և տարերային կամ տեխնաժին աղետի գոտուց վիրավորների ու հիվանդների, բնակչության, ռազմագերիների, վնասված սպառազինության ու ռազմական տեխնիկայի, զինվորական և այլ զույքի, տնտեսական արքավորանքի և արժեքների դուրսբերում:

զանգվածային տարահանում – массовая эвакуация – mass evacuation

վիրավորների տարահանում – эвакуация раненых – casualty evacuation

վիրավորների և հիվանդների տարահանման կազմակերպական կենտրոն – организационный центр эвакуации больных и раненых – patient evacuation control center

վիրավորների և հիվանդների տարահանում – эвакуация раненых и больных – casualty evacuation

տարահանման ուժեր – силы эвакуации – extraction force

տարահանումային տրանսպորտ – эвакуационный транспорт – recovery vehicle

տարահանում ծովով – эвакуация морем – amphibious withdrawal

տեխնիկայի տարահանում – эвакуация техники – recovery

**տարամիտում** – дивергенция – divergence, divergency

**տարածայնություն** – разногласия, трения – friction

**տարանջատված** – տես *հեռու*

**տարանջատում** – дистанцирование, разделение – distancing

1. Երկու օբյեկտի միջև որոշակի հեռավորության պահպանում: 2. Յուզարարի հեռու, զերծ մնալ որևէ բանից:

ուղղաձիգ տարանջատում – вертикальное дистанцирование, вертикальное эшелонирование – vertical separation  
Ինքնաթիռների միջև հեռավորությունն ըստ բարձրության:

**տարանցում** – транзит – transit

տարանցման միջանցք – транзитный коридор – transit corridor

**տարաշարժ** – маневр – maneuver, manoeuvre

Մարտական գործողությունների նախապատրաստման ու վարման ժամանակ զորքի (ուժերի, նյութական միջոցների) որոշակի մասի կազմակերպված տեղափոխում (փոխադրում) նոր ուղղության վրա (բնագիծ, շրջան), ինչպես նաև կրակի, հրթիռային զորքերի ու ավիացիայի հարվածների տեղափոխում:

զերբազանցել տարաշարժում – превзойти в маневрировании, перехитрить – outmaneuver

զորամասի տարաշարժ – маневр войсковой части – maneuver of military unit, military unit maneuver

զորքի տարաշարժ – маневр войск – maneuver of forces, maneuver of troops, forces maneuver

խաբեական տարաշարժ – 1. отвлекающий маневр, 2. տես *գործողությունն՝ ցուցադրական գործողություններ* – 1. feint, 2. տես *գործողություն՝ ցուցադրական գործողություններ*

խուսափման տարաշարժ – маневр уклонения – evasion

հակազենիթային տարաշարժ – противозенитный маневр, ПЗМ – evasive maneuver

Ջենիթային հրետանու կրակի գոտում ինքնաթիռի (ուղղաթիռի) ուղղույթի, արագության և բարձրաթռիչության փոփոխում՝ խոցման հավանականության նվազեցման նպատակով:

հակակործանիչային տարաշարժ – противоистребительный маневр, ПИМ – counterfighter maneuver

ԹԱ-ների (ԹԱ-ների խմբի) թռիչքի պարամետրների (ուղղություն, արագություն, բարձրություն) փոփոխում հակառակորդի կործանիչի (կործանիչների) կողմից հայտնաբերումից խուսափելու, նրանց նշանառությունը և կողային զենքի արդյունավետ կիրառումը խաթարելու համար:

մարտավարական տարաշարժ – тактический маневр – tactical maneuver

տարաշարժ կատարող ուժեր – տես *ուժեր՝ տարաշարժվող ուժեր*

տարաշարժում հակահրթիռային պաշտպանության միջոցներով – маневр средствами ПРО – maneuvering by missile defense assets

տարաշարժում ՀՕՊ-ի միջոցներով – маневр средствами ПВО – maneuvering by air defense assets

**տարաշարժային** – маневренный – maneuverable, mobile

Տարաշարժին հատուկ՝ վերաբերող:

**տարաշարժում** – маневрирование, маневр – maneuvering, maneuver

Տարաշարժի ձեռնարկում՝ կատարում՝ իրագործում:

զորքի տարաշարժում – маневр войсками – maneuver by forces, maneuver with forces, maneuver by troops

հրթիռային հարվածների տարաշարժում – маневрирование ракетными ударами – missile attack maneuvering

մարտական տարաշարժում – боевое маневрирование – combat maneuvering

տարաշարժման հրապարակ – տես *թռիչքագոտի*

տարաշարժման շրջան – район маневрирования – maneuvering area

տարաշարժման պլան – план маневра – scheme of maneuver

տարաշարժում ճակատամերձ գոտում – маневрирование в прифронтовой полосе – maneuvering in the front line, immediate battle area maneuvering

**տարաշարժուն** – маневренный – maneuverable, mobile

Տարաշարժի կարողությամբ օժտված, հեշտությամբ տարաշարժ կատարող:

տարաշարժուն բռունցք – տես *խումբ` հարվածային խումբ*

**տարաշարժունություն** – маневренность – maneuverability

1. Տարբեր կազմավորումների կարողությունը՝ մարտական գործողությունների նախապատրաստման ու վարման ընթացքում արագ կատարելու տեղաշարժ, ծավալում: 2. Ռազմական տեխնիկայի կարողությունը՝ արագ փոխելու շարժման արագությունն ու ուղղությունը:

**տարասեռություն** – разнородность, гетерогенность – heterogeneity

**տարատեսակ** – տես *տեսակ*

**տարատեսակում** – диверсификация – diversification

Բազմազանություն, ընդլայնում (տեսականու, ցանկի, կիրառվող օբյեկտների՝ առարկաների՝ ուղիների՝ աղբյուրների են):

**տարբերանշան** – знак различия – rank insignia, bar, insignia

Սպայի աստիճան արտահայտող նշան:

**տարերք** – стихия – element

**տարընթացություն** – разброд – disorder  
Անհամաձայնություն, տարաձայնություն, համաձայնություն ու կարգուկանոն չլինելը:

**տարկետում** – տես *հետաձգում*

**տարվա չորային եղանակ** – сухой сезон – dry season

**տարր** – элемент – element

ապաչեզոքարար տարր – элемент необезвреживаемости – antihandling device

Ականներում տեղադրվող սարք, որը հնարավորություն չի տալիս վնասագերծելու ականը:

ապավնասագերծելիության տարր – элемент необезвреживаемости – anticounterming device

Ոչ հպումային ականներում տեղադրվող սարք, որը ականը պաշտպանում է չնախատեսված պայթեցումից:

աստիճանաբարծրացված լիազորություններով տարր – подразделение с повышенными полномочиями – step-up

Կազմակերպության այն ստորաբաժանումը՝ կառուցվածքային տարրը, որին փոխանցվել են այդ կազմակերպության՝ կառավարման ու վերահսկման լիազորությունները:

գրաֆիկի, լուսանկարի կամ պատկերի տարր – элемент, деталь на графике, изображении – detail

կարևոր տարր – важнейший элемент – critical element

Օբյեկտի կամ առարկայի տարր, որն ապահովում է դրա հիմնական գործառույթի կատարումը:

մարտական տարր – боевой элемент – combat element

տարրի երկարակեցություն – долговечность элемента – component life

**տացք** – отдача – feedback

Կատարված (ծախսված) աշխատանքի դիմաց ստացվող արդյունքը՝ օգուտը, աշխատանքի օգտակարության չափը:

**տափաշիշ** – фляга – water bottle, canteen

**տեխնիկ** – техник – technician, artificer

կրտսեր տեխնիկ – младший техник – junior technician

ՌՕՈՒ-ի կրտսեր մասնագետների զինվորական կոչում, համարժեք է բանակի փորձառու կամ լավ պատրաստված շարքայինին:

**տեխնիկա** – 1. техника, 2. техника, мастерство – 1. technical equipment, technical hardware, technology, 2. technique, technical skill

1. Մարդկային գործունեության որևէ բնագավառում կիրառվող մեթոդների, մեխանիզմների, սարքերի, սարքավածքների, սարքավորանքի, հարմարանքների, գործիքների ևն համախումբը: 2. Որևէ տեսակի գործունեության մեջ օգտագործվող հմտությունների ու հնարների համախումբ, վարպետության դրսևորման ձև:

անձնակազմի հետ տեղափոխվող մարտական տեխնիկա – перебрасываемая вместе с личным составом боевая техника – mobility equipment

Մարտական տեխնիկա, որը ենթակա է անձնակազմի հետ տեղափոխման կամ գտնվում է տեղափոխման ընթացքում:

գաղտնագրման տեխնիկա – шифровальная техника – cryptographic equipment

1. Գաղտնագրման համար օգտագործվող սարքավորանք, ապարատուրա:  
2. Գաղտնագրման համար կիրառվող հնարների ամբողջությունը, գործողության եղանակը:

գաղտնի հսկման սարքերի հայտնաբերման տեխնիկա – техника обнаружения аппаратуры тайной слежки – technical surveillance countermeasures

Տեխնիկական միջոցներ և մեթոդներ, որոնց շնորհիվ հնարավոր է հայտնաբերել հակառակորդի գաղտնալսման, ծիկրակման և գաղտնի կերպով հետևման սարքերը և դրանց չեզոքացմամբ կասեցնել գաղտնի տեղեկույթ կորզելու նրա փորձերը:

զրահատանկային տեխնիկա – бронетанковая техника, бронетехника – armor, armored vehicle

Տարբեր տիպերի անվավոր ու թրթուրավոր մեքենաներ, որոնք ամբողջությամբ կամ մասամբ պաշտպանված են զրահով (տանկեր, զրահափոխադրիչներ, հետևակի մարտական մեքենաներ ևն):

թիկունքային տեխնիկա – тыловая техника – service support equipment

խորտակված տեխնիկայի ջրահանում – подъем затонувшей техники – salvage operation, salvage procedure

մարտական տեխնիկա – боевая техника – weaponry, combat equipment, combat materiel

Ռազմական տեխնիկայի հիմնական մասը, որը նախանշանակված է անմիջականորեն մարտական խնդիրների կատարման համար:

մարտական տեխնիկայի կրկնական օգտագործում – повторное использование боевой техники – retrograde

մարտական տեխնիկայի ոչնչացում – уничтожение боевой техники – destruction of equipment

Բարոյական հնացածության կամ մաշվածության հետևանքով հետագա շահագործման, նորոգման կամ վերափոխման համար ոչ պիտանի տեխնիկայի վերացում (վերամշակում):

ռազմական տեխնիկա – военная техника – military equipment, munitions, military hardware

Տարբեր տեխնիկական միջոցներ, որոնք տրվում են զինված ուժերին նրանց մարտական և ամենօրյա գործունեության ապահովման համար:

ռազմական տեխնիկայի ընդունում – приемка военной техники – reception of equipment into service

ռազմական տեխնիկայի հավաքակայան – парк военной техники – equipment collection point, ECP

ռազմական տեխնիկայի մշակում – разработка военной техники – military engineering

ռազմական տեխնիկայի նախանշանակում – предназначение военной техники – purpose of military equipment

ռազմական տեխնիկայի ոչնչացման վերահսկում – контроль за уничтожением военной техники – equipment destruction control

ռազմական տեխնիկայի ոչնչացման տեսչություն – инспекция уничтожения военной техники – equipment destruction inspection

ռազմական տեխնիկայի ստանդարտավորում – стандартизация военной техники – military equipment standardization

ռազմական տեխնիկայի ստանդարտացում – стандартизация военной техники – military equipment standardization

ռազմական տեխնիկայի օգտահանում – утилизация военной техники – disposal of materiel

վնասված տեխնիկայի մասերի նորոգումային օգտագործում – ремонтное использование

зование частей поврежденной техники – cannibalization

Նորոգման մեթոդ, որի դեպքում վնասված տեխնիկայի աշխատող մասերը տեղադրվում են այլ նմուշի վրա՝ այն նորոգելու համար:

վնասված տեխնիկայի վերականգնում – восстановление поврежденной техники – salvage operation, salvage procedure

վնասված տեխնիկայի տարահանում – эвакуация поврежденной техники – equipment casualty evacuation

Տեխսպասարկման կամ վերանորոգման ենթակա սարքավորանքի, տեխնիկայի տեղափոխում:

տեխնիկայի ամրագրում զինծառայողին – закрепление техники за военнослужащим – equipment technology for military personnel

Հրամանով սպառազինության, ռազմական տեխնիկայի, զենքի հանձնում կոնկրետ զինծառայողին (զինծառայողների մասնագիտացված խմբին) հետագա շահագործման համար՝ այդ միջոցի համար նրա (նրանց) պատասխանատվության պայմանով:

տեխնիկայի ընդունման կետ – пункт приема техники – equipment reception point

տեխնիկայի հարմարեցում մարդուն – приспособление техники к человеку – equipment adjustment, hardware adjustment

տեխնիկայի՝ որպես պահեստամասերի օգտագործում – использование техники на запчасти – salvage

Շարքից դուրս եկած տեխնիկայի առանձին մասերի օգտագործում նմանատիպ այլ տեխնիկական միջոցի նորոգման համար, եթե դրա վերականգնումը նպատակահարմար չէ:

տեխնիկայի ու պաշարների կուտակում – сосредоточение техники и запасов – marshalling

**տեխնիկական** – технический – technical, technological, engineering

Տեխնիկային հատուկ՝ առնչվող:

տեխնիկական զինվածություն – техническая оснащенность – equipment availability

տեխնիկական զինում – техническое вооружение – technical equipping

տեխնիկական զննում – технический осмотр – maintenance check

տեխնիկական համատեղելիություն – техническая совместимость – technical compatibility

տեխնիկական հիմնավորում – техническое обоснование – technical evaluation

տեխնիկական մասնագետ – технический специалист – technician

տեխնիկական միջուկային փորձաքննություն – техническая ядерная экспертиза – technical nuclear forensics

տեխնիկական պայմանավորվածություն – техническая договоренность – technical arrangement

տեխնիկական ստանդարտ – технический стандарт – technical standard

Կոնկրետ արտադրանքի կամ դրա բաղադրատարրի ստեղծման մասնագիր:

տեխնիկական փաստաթղթախումբ – տես *տեխնիկական՝ տեխնիկական փաստաթղթերի հավաքածու*

տեխնիկական փաստաթղթերի լրամշակում – доработка технической документации – improvement of technical documentation

տեխնիկական փաստաթղթերի հավաքածու – техническая документация – technical documentation

Փաստաթղթերի լրակազմ, որն օգտագործվում է որևէ տեխնիկական օբյեկտի՝ շինության, կառույցի, արդյունաբերական ապրանքի, ծրագրային ու ապարատային ապահովման նախագծման (գծագրման), ստեղծման (պատրաստման) և կիրառման (շահագործման) ժամանակ:

տեխնիկական փորձաքննության կազմակերպություն – организация по проведению технической экспертизы – technical review authority

տեխնիկական փորձաքննություն – տես *զննահատում՝ տեխնիկական զննահատում*



տեխնիկական օգնություն – техническая помощь – technical assistance

**տեխնիկատնտեսական հիմնավորում** – технико-экономическое обоснование – feasibility study

Փաստաթուղթ, որում ներկայացված են տվյալ մշակման (նախագծի) տեխնիկական անհրաժեշտությունն ու բնութագրերը և տնտեսական շահավետությունը:

**տեխնիկ սերժանտ** – техник-сержант – technical sergeant

Կոչում ՌՕՈՒ-ում:

**Տեխնոլոգիական հետազոտությունների և համագործակցության բյուրո** – Бюро технологических исследований и сотрудничества – Technology Studies and Cooperation Office

**տեղ** – 1. место, 2. место, участок, 3. տես *սենք* – 1. place, spot, 2. site, 3. տես *սենք*

տեղի բնակչությունը և հաստատությունները – местное население и институты – indigenous population and institutions

Տերմին, որն օգտագործվում է օպերացիաների շրջանում քաղաքացիական հասարակության կառուցվածքի նշման համար, ներառյալ՝ բնակչությունը, պետական, առևտրային, համայնական, մասնավոր կազմակերպություններն ու օբյեկտները:

տեղի որոշում ըստ տարածամասնակյա դիտումների – определение места по разновременным наблюдениям – running fix

օբևանության տեղ – помещение для постоя – billet

**տեղաբաշխում** – 1. дислокация, 2. дислоцирование, размещение – 1. dislocation, 2. dislocating

Խաղաղ ժամանակ տարբեր զորամասերի (զորամիավորումների), հիմնարկների ու ռազմաուսումնական հաստատությունների տեղավորում դրանց համար հատկացված տեղերում (հատուկ զինվորական ավաններում, ճամբարներում, բնակավայրերում ևն): Պատերազմի ժամանակ այս հատկացությունը սովորաբար օգտագործվում է գործող բանակի կազմի մեջ չմտնող կազմավորումների նկատմամբ:

**տեղագրական** – топографический – topographical

Տեղագրությանը հատուկ՝ վերաբերող:

տեղագրական կատար – топографический гребень – topographical crest

Լեռան գագաթ, որից կարող է ստորոտը տեսանելի չլինել:

տեղագրական սկզբնակետ – репер, пристрелочный репер, точка отсчета – datum point

Որոշ ելակետ՝ հաշվարկային կետ, որի կորդինատները հայտնի են կամ կարող են որոշված լինել, և որի միջոցով կարելի է որոշել այլ կետերի տեղադրությունը:

**տեղադիրք** – местонахождение, дислокация, местоположение – position, location

Տվյալ օբյեկտի գտնվելու վայրը՝ պատկերված կորդինատային համակարգում, աշխարհագրական, տեղագրական դիրքը:

տեղադիրքի կոդ – код местоположения – geolocation code

**տեղադրություն** – местоположение, местонахождение – 1. site, 2. location, 3. տես *դիրք*

1. Տեղադրում: 2. Որևէ կետի աշխարհագրական դիրքը:

տեղադրության ռադիոորոշում – радиоопределение местоположения – radio fix

տեղադրություն օդային տարածությունում – положение летательного аппарата в воздушном пространстве – air position

Օդում թռչող ապարատի գտնվելու հաշվարկային կետն առանց քանու ազդեցության հաշվառման:

**տեղադրում** – 1. подстановка, 2. տես *զե-տեղում 1, 3*, 3. տես *տեղակայում* – 1. substitution, 2. տես *զե-տեղում 1, 3*, 3. տես *տեղակայում*

**տեղաերկրաբաշխական կապակցում** – топогеодезическая привязка – survey control, topographic referencing, topogeodetic survey

Շարժվող կետի կորդինատների որոշում՝ հայտնի կորդինատներով կե-



տեղի նկատմամբ տվյալ կետի դիրքի հարաբերակցման միջոցով:

**տեղազանություն** – параллакс – parallax  
Հաշվարկման կետի նկատմամբ առարկայի դիրքի փոփոխումը տեսանկյան փոփոխման հետևանքով:

**տեղազննություն** – 1. осмотр местности, 2. տես *դիտախուզում*, 3. осмотр места преступления – 1. area reconnaissance, 2. տես *դիտախուզում*, 3. crime scene investigation  
Վայրի՝ տեղանքի՝ տեղի (մարտադաշտ, շրջան, հակառակորդի դիրքեր, հանցագործության վայր են) զննում՝ հետազոտում:

**տեղակալ** – заместитель – deputy

**տեղակալում** – 1. замещение, 2. субституция – 1. displacement, shift, 2. substitution

Որևէ բանի (երևույթի, առարկայի, տարրի, օբյեկտի, իրի, մարդու) փոխարինում այլ նմանատիպ բանով, ինչի հետևանքով տեղի է ունենում որակական փոփոխություն:

**տեղակայում** – установка, размещение – installation, installing, setup

Մեխանիզմի, սարքի, սարքավորանքի, կայանքի, հարմարանքի են տեղադրում՝ ամրակցում այդ նպատակով հատկացված կամ նախագծման ժամանակ նախատեսված դիրքում:

տեղակայում դիրքում – установка на позицию – emplacement

1. Հրետանային համակարգի կամ ավելի մեծ զինատեսակի՝ կրակելու համար հարմար դիրքավորում: 2. Հրետանային համակարգի՝ կրակելու համար հարմար դիրք:

նուղեվարական միջոցների տեղակայման խումբ – группа установки навигационных средств – marking team

Անձնակազմ, որն իջեցվել է վայրէջքի գոտում՝ նուղեվարական սարքավորանք տեղակայելու առաջադրանքով:

**տեղական** – местный – local

տեղական բջիջ – местная ячейка – local cell

տեղական ժամանակ – местное время – local time

տեղական մասշտաբի մոբիլիզացում – мобилизация местного масштаба – local mobilization

**տեղակապակցիչ** – топопривязчик – topographic survey vehicle

Հատուկ անվավոր կամ թրթուրավոր մեքենա՝ սարքավորված նուղեվարական ապարատությամբ: Նախանշանակված է կրակային (արծակման) դիրքերի, դիտակետերի, պահակակետերի և հրետանային հետախուզության միջոցների տեղակայման կետերի կոորդինատների ավտոմատ որոշման, սահմանափակ տեսանելիության պայմաններում տեղագրական քարտեզում շարժման երթուղու նշմամբ շարասյունների առաջնորդման համար են:

**տեղաճարակ** – эндемия, эндемическое заболевание – endemic disease, endemic

Տվյալ աշխարհագրական տարածաշրջանին՝ վայրին բնորոշ հիվանդություն:

**տեղամաս** – տես *տեղ*

զգայուն տեղամաս – чувствительный участок – sensitive site

ընտրական տեղամաս – избирательный участок – polling station

**տեղային** – 1. локальный, 2. эндемический – 1. local, 2. endemic

**տեղանք** – 1. местность, 2. տես *տեղ* – 1. locality, country, 2. տես *տեղ*

անտառոտ տեղանք – лесистая местность – woodland

բաց տեղանք – открытая местность – open ground

լեռնաանտառային տեղանք – горно-лесистая местность – wooded upland

տեղանքի երկրակողավորված պատկեր – геокодированное изображение местности – geocoded image

տեղանքի կարևոր հատված – важный участок местности – vital ground

1. Դիրք, որը հնարավորություն է տալիս ապահովելու մյուս դիրքերի հուսալի պաշտպանությունը (պաշտպանական մարտերում) կամ հաջողությամբ զարգացնելու գրոհը (հարձակողական մարտերում): 2. Տեղանքի հատված, որի

նկատմամբ վերահսկողությունն անհրա-  
ժեշտ է մարտական խնդրի կատարման  
հաջողության համար:

տեղանքի կողմնորոշիչ – ориентир на  
местности, особенность рельефа – terrain  
feature

Տեղի լավ նկատելի և հեշտությամբ  
որոշարկվող առարկա՝ առանձնահատ-  
կություն, որը կարող է ծառայել որպես  
հենանիշ տվյալ վայրում կողմնորոշ-  
վելու համար:

տեղանքի հետախուզում – разведка мест-  
ности – terrain intelligence

տեղանքի հետ կապակցված պատկեր –  
изображение с привязкой к местности –  
georeferenced image

տեղանքի մաքրում ականներից – տես  
*ականագերծում*

տեղանքի վերլուծություն – анализ мест-  
ности – terrain analysis

**տեղաշարժ** – передвижение – movement

մանրակրկիտ կերպով նախապատրաստ-  
ված տեղաշարժ – тщательно спланиро-  
ванное передвижение – fully planned move-  
ment

տեղաշարժի սահմանափակում – ограни-  
чение передвижения – movement restric-  
tion

Տվյալ տարածքում կուտակումներից  
խուսափելու համար երթի հրահանգ-  
ված ժամանակային սահմանափակում-  
ներ:

**տեղաշարժում** – տես *տեղաշարժ*

**տեղավորում** – տես *գետեղում 1, 3*

**տեղատվություն** – отлив – low tide

**տեղափոխել** – տես *փոխադրել*

**տեղափոխելի** – տես *շարժական*

**տեղափոխովի** – տես *շարժական*

**տեղափոխություն** – 1. перемещение,  
2. տես *տեղաշարժ* – 1. relocation, 2. տես  
*տեղաշարժ*

**տեղափոխում** – 1. переброска, 2. переезд,  
3. перемещение, 4. տես *փոխադրում 2* –

1. lift, 2. removal, transport, 3. transition,  
4. տես *փոխադրում 2*

1. Ջորքերի վերատեղաբաշխում մեկ  
տեղից մեկ այլ վայր (*սով.*՝ թիկունքից  
ռազմաճակատ կամ ռազմաճակատի  
մի հատվածից մեկ այլ հատված):  
2. Վարչարարության մեջ (ժարգոնա-  
յին). մի ղեկավար պաշտոնից տեղա-  
փոխում այլ ղեկավար պաշտոնի՝ վի-  
ճակը շտկելու համար: 3. Անցում մի վայ-  
րից մեկ այլ վայր փոխադրամիջոցով  
(ավտոմեքենա, գնացք, նավ, ինքնաթիռ  
ևն):

գորքի տեղափոխում – передвижение  
войск – troop movement, military move-  
ments

Ջորքի տեղաշարժ մի շրջանից մյուսը՝  
իր ընթացքով (երթով), երկաթգծով, օ-  
դային, ջրային (գետի կամ ծովի) փո-  
խադրամիջոցներով կամ համակցված  
եղանակով:

հիվանդների ու վիրավորների տեղափոխ-  
ման համադասման կենտրոն – центр  
координации переброски больных и ра-  
неных – patient movement requirements  
center

Հիվանդների ու վիրավորների տարա-  
հանման ուղղությամբ հիմնական գոր-  
ծունեությունը և պլանավորումը համա-  
դասող հիմնարկ:

հիվանդների ու վիրավորների տեղափոխ-  
ման քաղաքականություն – политика пе-  
реброски больных и раненых – patient  
movement policy

հիվանդների ու վիրավորների տեղափո-  
խում – переброска больных и раненых –  
patient movement

մասնակիորեն պլանավորված տեղափո-  
խում – частично запланированная пере-  
броска – partially planned movement

ջանքերի տեղափոխում – перенос усилий  
– redirection of efforts, shift of efforts

Օպերացիայի (մարտի) ընթացքում գոր-  
քերի (ուժերի) գլխավոր խմբավորման  
գործողությունների ուղղության էական  
փոփոխություն:

ռազմական տեղափոխումների կառավա-  
րում – տես *փոխադրում ռազմական փո-  
խադրումների կառավարում*

տեղափոխում նոր պաշտոնի – перевод на новую должность – reassignment

տեղափոխում օդով – տես *օդային՝ օդային տեղափոխում*

**տեղեկացվածություն** – տես *տեղյակություն*

**տեղեկատվական** – информационный – information, informational

1. Տեղեկատվությանը՝ տեղեկույթի հաղորդմանը՝ փոխանցմանը՝ հրապարակմանը վերաբերող, այդ գործընթացի արդյունքի՝ հետևանքի հիմնական բնորոշ հատկությունը: 2. Տեղեկատվությանը վերաբերող՝ հատուկ:

տեղեկատվական հակազդեցություն – информационное противодействие – information counteraction

տեղեկատվական միջավայր – информационная среда – information environment

Տեղեկույթի պահման, մշակման և հաղորդման տեխնիկական ու ծրագրային միջոցների, ինչպես նաև տեղեկութեան իրագործման սոցիալ-տնտեսական ու մշակութային պայմանների համախումբ:

տեղեկատվական պահանջմունք – информационная потребность – information requirements

Թշնամու մասին տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են հետախուզական տեղեկույթն ամբողջացնելու համար:

տեղեկատվական տեխնոլոգիա – информационная технология – information technology

**Տեղեկատվատեխնոլոգիական համակարգերի և կապի միջոցների կառավարման ծառայություն** – Служба управления информационно-технологическими системами и средствами связи – Information, Communication, Technology Management

**տեղեկատվություն** – информирование, информация – informing, information

Տեղեկույթի հաղորդում՝ տրամադրում՝ փոխանցում:

տեղեկատվությանը ներկայացվող պահանջներ – требования к информации – information requirements

**տեղեկացնել** – извещать, уведомлять – advise

**տեղեկացվածություն** – информированность – awareness

Իրազեկվածություն, տեղյակություն:

**տեղեկացում** – информирование – informing

1. Որևէ բանի մասին տեղեկանալը, տեղեկություն ստանալը: 2. Որևէ բանի մասին տեղեկացնելը, տեղեկություն տալը:

հասարակայնության տեղեկացում – информирование общественности – public information

տեղեկացում ստացման մասին – уведомление о получении – acknowledgement

**տեղեկութային** – информационный – information, informational

Տեղեկութային վերաբերող՝ հատուկ:

տեղեկութային ընդդիմամարտություն – տես *տեղեկութային պատերազմ*

տեղեկութային հասարակություն – информационное общество – information society

տեղեկութային հոսք – информационный поток – information flow

տեղեկութային շտեմարան – информационная база – information base

**տեղեկութավորում** – информатизация – informatization

Տեղեկույթով ապահովում:

**տեղեկութացում** – информатизация – informatization

Տեղեկույթով հագեցում՝ տոգորում:

**տեղեկություն** – сведения – information

լուսանցքային տեղեկություններ – маргинальные данные – marginal data, marginal information

Քարտեզի կամ տրամագրի (դիագրամ) վրա պարզաբանական տվյալներ, որոնք բացատրում և լրացնում են դաշտում ներկայացված տեղեկույթը:

կարևոր հետախուզական տեղեկություններ – важнейшие разведывательные данные – critical intelligence

Հետախուզական տեղեկություններ, որոնք պահանջում են հրամանատարի անհետաձգելի ուշադրությունը և ներառում են տեղեկույթ հետևյալի մասին (բայց դրանով չեն սահմանափակվում): 1. Ցանկացած տեսակի թշնամական գործողությունների անսպասելի բռնկման ծանրակշիռ հայտանիշներ (հարձակման մասին նախազգուշացում): 2. Իր կամ բարեկամ պետության դեմ ցանկացած բնույթի ագրեսիա: 3. Քիմիական, կենսաբանական, ճառագայթաբանական, միջուկային կամ մեծ պայթուցիկ էներգիայով զենքի կիրառում: 4. Նշանակալից իրադարձություններ, որոնք կարող են հանգեցնել հակառակորդ պետություններում միջուկային հարվածի պլանի փոփոխման:

հիմնական հետախուզական տեղեկություններ յուրային ուժերի և միջոցների մասին – основные разведывательные сведения о своих силах и средствах – essential elements of friendly information

տեղեկություններ հատկացված զորամասերի և ստորաբաժանումների մարտական հնարավորությունների մասին – сведения о боевых возможностях выделенных частей и подразделений – mission capability statement

**տեղեկուղի** – трасса передачи информации – route

**տեղեկույթ** – информация – information  
Պահպանման, վերամշակման ու հարդրման օբյեկտ հանդիսացող տեղեկություններ:

աշխարհատարածական տեղեկույթ – геопространственная информация – geospatial information

ավիացիոն տեղեկույթի տպվածք – распечатка авиационной информации – aeronautical information overprint

զաղտնի տեղեկույթ – конфиденциальная информация, закрытая информация – sensitive information, confidential information, private information

1. Կառույցի (պետություն, կազմակերպություն, մարմին ևն) անվտանգությամբ

յունը կամ նրա որևէ առանձին ոլորտի վերաբերող տեղեկություններ, որոնց հրապարակումը կամ հակառակորդի կողմից կորզումը վնաս կպատճառեն այդ կառույցի անվտանգությանը: 2. Այլ կառույցի անվտանգությանը վերաբերող և թաքուն կորզված տեղեկություններ, որոնց հրապարակումը կամ ուրիշին հայտնի դառնալը կվնասեն այդ կառույցի շահերին:

զաղտնի տեղեկույթի չթույլատրված հրապարակում – несанкционированное разглашение секретной информации – compromise

զաղտնի տեղեկույթի ստրակորուստ – утечка секретной информации – unauthorized disclosure of classified information

զաղտնի տեղեկույթից օգտվելու իրավունք – доступ к секретной информации – access to classified information

գնահատումների հիման վրա ստացված հետախուզական տեղեկույթ – разведывательная информация на основе оценок – estimative intelligence

դիտողական տեսքով ներկայացվող տեղեկույթ – информация в наглядной форме – visual information

Տեղեկույթ, որը հարմարեցված է աչքով ընկալման համար (պատկերներ, նկարներ, տեսքստեր ևն):

թարմ տեղեկույթ – свежая информация – update

թռիչքային տեղեկույթի ծառայություն – служба полетной информации – flight information service

թռիչքային տեղեկույթի կենտրոն – центр полетной информации – flight information center

թռիչքային տեղեկույթի շրջան – район полетной информации – flight information region

Որոշակի չափերի օդային տարածություն, որում ապահովվում են թռիչքատեղեկատվական սպասարկումն ու վթարային իրազեկումը:

ինֆրակարմիր տեսապատկերային տեղեկույթ – инфракрасная видовая информация – infrared imagery

Պատկեր, որն ստացվում է էլեկտրամագնիսական սպեկտրի ինֆրակարմիր տիրույթում նշանակետի մակերևույթից անդրադարձված կամ առաքված ճառագայթման ընթերցմամբ:

ծառայողական տեղեկույթ – служебная информация – service information

կարևոր տեղեկույթ – важнейшая информация – critical information

Յուրային մտահղացումների, հնարավորությունների և գործողությունների վերաբերյալ կենսականորեն կարևոր կոնկրետ փաստեր, որոնք հակառակորդին անհրաժեշտ են, որպեսզի նա ըստ այդմ պլանավորի և արդյունավետ կերպով գործի այնպես, որ յուրային առաջադրանքի կատարման համար երաշխավորվեն ձխտողունը կամ անընդունելի հետևանքների առաջացումը:

հակահետախուզական տեղեկույթի մշակում և վերլուծում – обработка и анализ контрразведывательной информации – counterintelligence production

Բոլոր աղբյուրներից ստացվող այն տեղեկույթի վերլուծություն, որը վերաբերում է լրտեսությանը, դիվերսիաներին, ահաբեկչությանը կամ դրանց վերաբերյալ այլ բազմաբնույթ սպառնալիքների, և այդ տեղեկույթի վերածում վերջնական արգասիքի, որը ենթակա է ցրման ըստ հասցեատերերի: Օգտագործվում է անվտանգային քաղաքականության, պլանների ու գործողությունների մշակման ժամանակ:

հակահետախուզական տեղեկույթի հավաքում – сбор контрразведывательной информации – counterintelligence collection

Այն տեղեկույթի կանոնավոր հավաքում, որը վերաբերում է ազգային շահերի դեմ ուղղված և անվտանգությանն սպառնացող լրտեսությանը, դիվերսիաներին, ահաբեկչությանը, այլ բնույթի հետախուզական գործունեությանը կամ սպանություններին, որոնք ձեռնարկում են օտար պետությունների կառույցները:

հետախուզական տեղեկույթ – տես տվյալներ՝ հետախուզական տվյալներ

հետախուզական տեղեկույթի աղբյուր – источник разведывательной информации – intelligence source

Միջոցներ կամ համակարգ, որոնք կարող են օգտագործվել թիրախային վայրի, կազմակերպության կամ անհատի վիճակին կամ գործունեությանը վերաբերող տեղեկությունների գրանցման կամ դրանց դիտման նպատակով: Հետազոտական աղբյուր կարող են լինել մարդիկ, փաստաթղթերը, սարքերը և/կամ տեխնիկական տվիչները:

հետախուզական տեղեկույթի հաղորդում – передача разведывательной информации – intelligence reporting

նշանակետերի մասին տեղեկույթի կենտրոն – центр информации о появляющихся целях – target information center

ղեկավար տեղեկույթ – руководящая информация – command information

Զինվորական կազմակերպության ներքին լսարանին՝ անդամներին, ուղղված իրազեկիչ հաղորդում (տեղեկույթ), որով նրանք տեղեկացվում են կազմակերպության նպատակների, գործունեության վրա ազդող հիմնական զարգացումների մասին՝ ծառայողների գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար:

ռազմաաշխարհագրական տեղեկույթ – военно-географическая информация – military geographic information

ստացված տեղեկույթ – полученная информация – derived information

տեղեկույթի անմատչելիություն – недоступность информации – inaccessibility of information, unavailability of information

տեղեկույթի ապագադրում – տես տեղեկույթ՝ տեղեկույթի վերծանում

տեղեկույթի առավելագույն օգտագործում – реализация информации – exploitation

Ձեռքի տակ եղած տեղեկույթի օգտագործում մարտավարական կամ ռազմավարական նպատակներով:

տեղեկույթի արտազատում – извлечение информации – extraction of information

Տեղեկությունների ընդհանուր ծավալից անհրաժեշտ տվյալների առանձնացում՝ կորզում՝ հայթայթում:

տեղեկույթի բաշխում ըստ օբյեկտների – распределение информации по объектам – compartmentation

տեղեկույթի գաղտնագրում – шифрование информации – encryption of information

Տեքստի մշակում որոշակի ալգորիթմով՝ անհաղորդների համար այն անհասկանալի դարձնելու համար:

տեղեկույթի գաղտնիացում – засекречивание информации – classification of information

Տեղեկույթի պահման՝ օգտագործման կարգավիճակի փոփոխում՝ դրա մատչելիության սահմանափակմամբ:

տեղեկույթի կենտրոնացված վերամշակում – централизованная обработка информации – centralized information processing

տեղեկույթի հաղորդում վերադասին – передача информации в вышестоящую инстанцию – forward tell

տեղեկույթի համատեղ օգտագործում – совместное использование информации – information sharing

տեղեկույթի հայտ – запрос на информацию – request for information

տեղեկույթի հաստատում – подтверждение информации – confirmation of information (intelligence)

Հետախուզության ստացած տեղեկույթի ստուգում և հաստատում ըստ այլ աղբյուրներից ստացված տվյալների կամ վերլուծական եղանակով:

տեղեկույթի հասցեատեր – адресат информации – consumer

տեղեկույթի հավաքում – сбор информации – information gathering

տեղեկույթի հրապարակում – разглашение информации – disclosure, disclosure of information

տեղեկույթի մատչելիության, ամբողջականության և անվտանգության ապահովում – обеспечение доступности, целостности и безопасности информации – information assurance

տեղեկույթի միաբերում – сведение информации – fusion

Հետախուզության մեջ. հետախուզության և/կամ բազմաթիվ այլ աղբյուրներից ու գործակալություններից ստացված տեղեկույթի համախմբում՝ ամբողջական պատկեր ստանալու նպատակով:

տեղեկույթի նորացում – обновление информации – updating of information

տեղեկույթի պաշտպանություն – защита информации – information protection

տեղեկույթի սորակորուստ – утечка информации – information leakage

Տեղեկույթի ինքնաբերական կամ նպատակային արտահոսք՝ կորուստ:

տեղեկույթի վերծանում – дешифровка информации – information decoding

Տեղեկույթի ապագաղտնագրում՝ պայմանական նշաններով արտահայտումից փոխադրում բոլորի համար հասկանալի տեսքի (լեզվի):

տեղեկույթի տարածում – 1. распространение информации, 2. տես տեղեկույթ՝ տեղեկույթի հրապարակում – 1. dissemination of information, 2. տես տեղեկույթ՝ տեղեկույթի հրապարակում

տեղեկույթի փոխանակում – обмен информацией – information sharing, information exchange

տեսապատկերային տեղեկույթ – видовая информация – imagery

Պատկերների շարք, որոնք ժապավենի կամ որևէ սարքի վրա վերարտադրվում են էլեկտրոնային կամ օպտիկական տեսքով:

տեսապատկերային տեղեկույթի որոշիչ – определитель видовой информации – imagery interpretation key

Պատկերների վերծանման՝ մեկնաբանման բանալին:

տեսապատկերային տեղեկույթի ստացման համար մեկ ինքնաթիռարտաթիռ – один самолето-вылет для получения видовой информации – imagery sortie

Մեկ ինքնաթիռային թռիչք՝ պատկերի ստացման համար:

տեսապատկերային տեղեկույթի վերլուծություն – анализ видовой информации – imagery exploitation

տեսապատկերային տեղեկույթի փաթեթ – досье видовой информации – imagery pack



Պատկերման տարբեր տվիչներից ըստացված այն գրանցումների ամբողջությունը, որոնք ունեն միևնույն նպատակը:

տեսողական տեղեկույթ – зрительная информация, визуальная информация – visual information

Տեսողության միջոցով ստացված տեղեկույթ:

փակ տեղեկույթ – տես *տեղեկույթ՝ գաղտնի տեղեկույթ*

օգտակար տեղեկույթ – полезная информация – usable information

**տեղեկունակություն** – информативность – informativeness

Բովանդակությամբ հագեցածություն, հարուստ տեղեկույթ՝ տվյալներ՝ գիտելիք պարունակող:

**տեղյակ** – сведущий – witting

ԱՄՆ-ի հետախուզական տերմին, որը ցույց է տալիս, որ տվյալ անձը ոչ միայն տիրապետում է հետախուզական տեղեկություններին, այլև գիտակցում է, որ ինքը ներգրավված է հետախուզական գործունեության մեջ:

**տեղյակություն** – осведомленность, информированность – awareness, cognisance

**տեղորոշիչ** – локатор – locator

**տեղորոշում** – локация, определение местоположения – 1. location, spotting, 2. fix

ձայնային տեղորոշում – эхолокация – echo location

Օբյեկտի տեղադիրքի որոշում ըստ դրանից անդրադարձած ձայնային ալիքի հապաղման ժամանակի, լայնորեն կիրառվում է նավագնացության մեջ:

**տեղորոշումային տրամագիր** – локационная диаграмма – location diagram

**տեմպ** – темп – speed, pace

**տենդ** – жар, лихорадка – fever

Էբոլայի տենդ – лихорадка Эбола – Ebola Արյունահոսական տենդի տեսակ. ծանր հիվանդություն, որն առաջանում

է Էբոլայի վիրուսից (Աֆրիկայում), վարակը տարածվում է արյան միջոցով, շփումներով: Հակավիրուսը մինչև հիմա հայտնի չէ: Ենթադրվում է, որ կարող է օգտագործվել որպես կենսաբանական զենք:

**տեսագիծ** – луч зрения – line of sight

Աչքից դեպի առարկան ուղղված ճառագայթների փունջ, որոնք տարամիտում են ակնաբիբից՝ առաջացնելով կոն:

**տեսադաշտ** – 1. поле зрения, 2. кругозор – 1. field of view, sight, view, 2. range of vision, range of interests

1. Այն տարածությունը, որը տեսանելի է գլխի և հայացքի անշարժության դեպքում: 2. Հետաքրքրությունների՝ գիտելիքների ծավալը՝ ընդգրկման շրջանակները, մտահորիզոն:

**տեսածիր** – 1. поле обзора, 2. обзор – 1. field of vision, 2. range of interests

1. Տարածության հատված, որը կարող է տեսնել շարժվող աչքը (երկու աչքը) գլխի անշարժ վիճակում կամ շարժման դեպքում: 2. Մտահորիզոն:

**տեսածրում** – обозрение – view

ռադիոտեղորոշումային տեսածրում – радиолокационное сканирование – radar scan

տեղանքի տեսածրում – сканирование местности – terrain scanning

Տեղանքի կարգավորված՝ տարր առ տարր կատարվող անընդհատ դիտում՝ որևէ ճառագայթի կամ ճառագայթների փնջի տեղաշարժմամբ:

տեսածրման հաճախականություն – частота сканирования – scan rate

**տեսակ** – 1. вид, 2. сорт, 3. тип – 1. form, 2. sort, 3. mode

**տեսայց** – смотр – view

**տեսանելի ապագա** – տես *հեռանկար*

**տեսանելիացում** – визуализация – visualization, visualizing

Ֆիզիկական երևույթի կամ պրոցեսի ներկայացում տեսողական ընկալման համար հարմար տեսքով:



**տեսանելիություն** – видимость – visibility, view, sight

Տեսանելի լինելը, տեսնելու ենթակա:

գրոյական տեսանելիություն – нулевая видимость – zero visibility

սահմանափակ տեսանելիություն – ограниченная видимость – restricted visibility

տեսանելիության սահմաններից դուրս – за пределами видимости – beyond visual range, BVR

ուղիղ տեսանելիություն – прямая видимость – line of sight

«**տեսանելիությունից դուրս**» – «вне наблюдаемости» – “cannot observe”

Հաղորդվում է, երբ հնարավոր չէ տեսնել թիրախը, սակայն կա համոզվածություն, որ այն գոյություն ունի կոնկրետ վայրում և շատ կարևոր է:

**տեսանկյուն** – տես *անկյուն*՝ տեսանելիության *անկյուն*

**տեսարան** – вид, панорама – view

**տեսլական** – видение – vision

Պատկերացում, ընկալում:

պրոբլեմի տեսլական – видение проблемы – vision of problem

**տեսողական** – зрительный, относящийся к зрению – visual

տեսողական նույնականացում – տես *տեսողական*՝ *տեսողական որոշարկում*

տեսողական որոշարկում – визуальное опознавание – visual identification

Թռչող օբյեկտի պետական պատկանելության, տիպի, համարի և սպառազինության առկայության որոշում որսիչ կործանիչի օդաչուի կողմից անմիջական դիտման եղանակով:

**տեսողություն** – зрение – vision

**տեսչություն** – инспекция – inspectorate

**տեսություն** – 1. теория, 2. տես *ամփոփագիր* 2, 3. տես *ամփոփում* 3 – 1. theory, 2. տես *ամփոփագիր* 2, 3. տես *ամփոփում* 3

1. Գիտական դրույթների համակարգված համախումբ, որևէ երևույթի, փաստերի մասին ուսմունք, որևէ պրոբլեմի վերաբերյալ տեսակետների համա-

կարգ: 2. Որևէ թեմայի վերաբերյալ առավել կարևոր դրույթների, եզրակացությունների համառոտ համախումբ՝ ամփոփում:

ՋՈՒ-ի շինարարության տեսություն – теория строительства ВС – armed forces development theory

Ուսումնասիրում է հետևյալ պրոբլեմները. մարտական խնդիրների կատարման ու լրիվ մոբիլիզացմանը զորքերի բարձր մակարդակի մարտական պատրաստության պահպանում, ՋՈՒ-ի առավել օպտիմալ կազմակերպվածքի որոշում, ՋՈՒ-ի համալրման, տեխնիկական հագեցման, ռեզերվների պատրաստման սկզբունքների ու մեթոդների հիմնավորում, զինվորական կադրերի պատրաստման և դրանց զինվորական ծառայության համակարգի որոշում, զորքերի ծառայության կազմակերպում և զինվորական կարգապահության ամրապնդում, զորքերի (ուժերի) բնակավորում ևն:

ՋՈՒ-ի կառավարման տեսություն – теория управления ВС – theory of command and control

Ուսումնասիրում է մարտական գործողությունների (օպերացիաների) վարմանը նախապատրաստման ժամանակ, ինչպես նաև խաղաղ և պատերազմական շրջանում զորքերի մարտական ուսուցման, կյանքի ու գործունեության ղեկավարման ուղղությամբ հրամանատարների, շտաբների, զորքերի կառավարման այլ մարմինների աշխատանքի օրինաչափությունները, սկզբունքներն ու մեթոդները:

Ժողովրդավարական խաղաղասիրության տեսություն – теория демократического мира – democratic peace theory, mutual democratic pacifism

Կարծիք, ըստ որի՝ ժողովրդավարական պետությունները միմյանց դեմ չեն պատերազմում:

հրաձգության տեսություն – теория стрельбы – theory of shooting

Գիտաձյուղ, որն ուսումնասիրում է հրաձգության գործունեության (արդյունավետության) վրա տարբեր պայմանների ներգործությունը՝ դրա նախապատրաստման, վարման և գնահատ-

ման կանոնների ու հնարների մշակման համար:

ռազմական արվեստի տեսություն – теория военного искусства – theory of military art

Ընդհանուր տեսություն, որը ներառում է ռազմավարության, օպերատիվ արվեստի և մարտավարության տեսությունները:

ռազմական տեսություն – военная теория – military theory

1. Պատերազմի ու ռազմական գործի երևույթների և գործընթացների վերաբերյալ գաղափարների համակարգ, ընդհանրացված տվյալներ: 2. Գիտական գիտելիքի բարձրագույն ձևի կազմակերպվածություն, որը ամբողջական պատկերացում է տալիս ռազմական գործի որոշակի բնագավառում գործող օրինաչափությունների և կապերի մասին:

սպառազինման տեսություն – теория вооружения – theory of armament

Մշակում է պաշտպանական շինարարության որոշակի փուլերում ՋՈՒ-ում միասնական ռազմատեխնիկական քաղաքականության վարման նպատակով գիտականորեն հիմնավորված եզրակացություններ և առաջարկություններ:

**տեսուչ** – инспектор – inspector

գլխավոր տեսուչ – главный инспектор – Inspector General

թողարկող պարաշյուտային տեսուչ – выпускающий инструктор по прыжкам с парашютом – jumpmaster

Անձնակազմի փորձառու անդամ, որը հետևում է, թե ինչպես են պարաշյուտիստները դուրս թռչում ինքնաթիռից:

տեսուչ գեներալ – генерал-инспектор – Inspector General

տեսուչների խումբ – группа инспекторов – inspection party

Ֆիզիկական պատրաստման տեսուչ – инструктор по физподготовке – physical training instructor

**տեսք** – տես ձև

**տերմինալ** – 1. տես *վերջնամաս*, 2. տես *ծայրասարք*

երկրորդական նշանակությամբ ծովային տերմինալ – морской терминал второстепенного значения – secondary water terminal

Ափամերձ գոտի, որի փոքր խորությունը հնարավորություն չի տալիս այն օգտագործելու մեծ նավերի կայանման համար:

**տերություն** – держава – power

ծովային տերություն – морская держава – sea power

հիմնական միջուկային տերություն – основная ядерная держава – major nuclear power

մեծ տերություններ – великие державы – great powers

Այն պետությունները, որոնք միջազգային ասպարեզում խաղում են առաջատար դեր և առանձնակի պատասխանատվություն են կրում խաղաղության ու միջազգային անվտանգության պահպանման համար:

միջուկային տերություն – ядерная держава – military nuclear power, nuclear-weapons state, NWS, nuclear nation

Տերություն, որն իր սպառազինության մեջ ունի միջուկային զենք և այն կրող (առբերման) միջոցներ:

**տիեզերազնագ** – космонавт, астронавт – astronaut

**տիեզերազնացություն** – космонавтика, астронавтика – astronautics

Գիտության և տեխնիկայի ճյուղերի համախումբ, որն ապահովում է տիեզերական տարածության և ոչ երկրային օբյեկտների նվաճումը հրթիռների և տիեզերանավերի կիրառմամբ:

**տիեզերական** – տես *ոչ երկրային*

տիեզերական եկվոր – տես *այլմոլորակային (էակ)*

տիեզերական եղանակ – космическая погода – space weather

տիեզերական միջավայր – космическая среда – space environment

Տիեզերական տարածության պարունակությունը. շատ ցածր խտությամբ որոշ մասնիկներ, էլեկտրամագնիսա-

կան ճառագայթում և միջաստղային նյութ, տիեզերական փոշի, տիեզերական աղբ (տիեզերքում մարդու գործունեության արգասիքները) ևն:

տիեզերական պաշտպանական վերահսկողություն – космический оборонительный контроль – defensive space control

տիեզերական տարածության հսկում – контроль космического пространства – space surveillance

տիեզերական տարածության ռազմականացում – милитаризация космоса – weaponization of space

**տիեզերական ուժերի և միջոցների հնարավորություններ** – возможности космических сил и средств – space capability

**տիեզերանավ** – космический корабль – spacecraft

**տիեզերանավակայան** – космодром – cosmodrome

**տիեզերանավորդ** – տես *տիեզերագնաց*

**տիեզերք** – տես *տարածություն` տիեզերական տարածություն*

**տիպ** – տես *տեսակ*

**տիր** – տես *հրաձգարան*

հրաձգային տիր – стрелковый тип – hand-gun range

Հատուկ սարքավորված շինություն (բաց (դաշտային), փակ, կիսափակ), որը նախանշանակված է հրաձգային զենքով (ատրճանակ, կարաբին, ակոսավոր հրացան, ավտոմատ) ուսումնավարժական հրաձգության կամ մրցումների անցկացման համար: Մտնում է համազորային հրաձգարանի համալիրի մեջ կամ կարող է տեղաբաշխվել առանձին:

**տիրապետություն** – 1. владение, 2. господство – 1. power, rule, 2. supremacy, 3. ownership, 4. ruling power

1. Իշխանություն: 2. Տիրող, իշխող լինելը: 3. Ենթարկելը, ուժով գործունեության մեջ դնելը: 4. Տնօրինելու իրավունք:

տիրապետություն ծովում – господство на море, контроль над морским простран-

ством – command of the sea, sea control

տիրապետություն օդում – господство в воздухе – air supremacy, mastery of the air

**տիրապետում** – владение – mastering, ownership

Տիրապետության` գերիշխանության հաստատում, տարածում:

**տիրում** – владение, овладение – possession, ownership

Տիրելը, տեր` գերիշխան` տնօրեն դառնալը:

**տիրույթ** – 1. диапазон, 2. владение, имение – 1. range, scope, 2. estate

1. Մեկի իշխանության տակ գտնվող տարածք, երկիր, կալվածք: 2. Տարածություն, շրջան, միջակայք, որտեղ գոյություն ունի որևէ երևույթ` պրոցես, գոյության պայմանների կատարման ոլորտ:

ալիքների տիրույթ – диапазон волн, полоса частот – band

գործառնման տիրույթ – диапазон функционирования – operational reach

հաճախականությունների տիրույթ – տես *տիրույթ` ալիքների տիրույթ*

**տնտեսություն** – экономика, хозяйство – 1. economy, 2. household

1. Հասարակական այս կամ այն կացութաձևի` արտադրական հարաբերությունների ամբողջություն, ներառյալ` արտադրության միջոցները, աշխատանքի բաժանումը, արտադրությունները, հումքը ևն: 2. Որևէ մեկին պատկանող առարկաների, իրերի ամբողջություն:

կոմունալ տնտեսության վերականգնում – восстановление коммунального хозяйства – utilities restoration

տնտեսության մրցունակություն – конкурентоспособность экономики – competitiveness of the economy

Էկոնոմիկայի կարողությունը` մասնակցելու միջազգային առևտրին, համաշխարհային շուկաներում պահպանելու և ընդլայնելու որոշակի հատվածներ, թողարկելու համաշխարհային չափանիշներին համապատասխանող արտադրանք և դրանից ստանալու շա-

հույժ, որը նպաստի տնտեսական զարգացմանը:

տնտեսության ռազմականացում – милитаризация экономики – economy militarization

տնտեսության փոխադրում ռազմական ռելսերի – перевод экономики на военные рельсы – militarization of economy

**տնտեսում ի հաշիվ արտադրության մասշտաբների մեծացման** – экономия от укрупнения производства, экономия за счет роста масштаба производства – economy of scale

Հավելյալ ծախսերի նվազում՝ կապված արտադրության ծավալների մեծացման և դրանով պայմանավորված արդյունավետության աճման հետ:

**տնօրինություն** – 1. распоряжение, ведение, 2. տես կարգադրություն, 3. տես վարչություն 1 – 1. disposal, 2. տես կարգադրություն, 3. տես վարչություն 1

Գիտական համագործակցության տնօրինություն – Директорат научного сотрудничества – Science Cooperation Directorate

Ճգնաժամային կարգավորման և օպերացիաների տնօրինություն – Директорат кризисного регулирования и операций – Crisis Management and Operations Directorate

Պաշտպանության և անվտանգության տնօրինություն – Директорат обороны и безопасности – Defense and security directorate

**տնօրինում** – 1. տես տնօրինություն 1

**տոկալ** – տես գոտեպնդել

**տողան** – шеренга, линейка – rank  
Շարք, որում զինծառայողները զըտնըվում են մի գծի վրա՝ կողք կողքի, միմյանցից՝ հրամանատարի սահմանած հեռավորությունների վրա:

**տոնական համազգեստ** – парадная форма одежды, парадная форма – ceremonial uniform, ceremonials, mess-kit, service dress

«Տոչկա» – «Точка» – “Scarab”

խորհրդային մարտավարական հրթիռային համալիր:

**տորպեդ** – торпеда – torpedo  
Ինքնագնաց, ինքնակառավարվող կամ հեռակառավարվող ստորջրյա արկ, որը կրում է սովորական կամ միջուկային լիցք և նախանշանակված է վրաջրյա նավերի, սուզանավերի խցման, ջրի մակերևույթի մոտ գտնվող հիդրոշինությունների ավերման համար:

օդային տորպեդ – воздушная торпеда – aerial torpedo

**տորպեդակիր** – торпедоносец – torpedo bomber  
Ինքնաթիռի տեսակ, որը նախանշանակված է ծովում և ծովային զորակայաններում նավերը տորպեդներով խցելու համար:

**տորպեդահարել** – торпедировать – torpedo do  
1. Հակառակորդի ծովային օբյեկտները տորպեդներով խցել: 2. (փխբ.) Որևէ գաղափար, նախաձեռնություն, ձեռնարկում ենթարկել ջախջախիչ քննադատության կամ ստեղծել այնպիսի պայմաններ, որ դրանք դառնան անարդյունավետ ու կասեցվեն (տվ.)՝ բացասական իմաստով):

**տորպեդային** – торпедный – torpedo

**տորպեդանավակ** – տես մոտորանավակ՝ տորպեդային մոտորանավակ

**տվիչ** – датчик – sensor

կողային տվիչ – бортовой датчик – space sensor

մագնիսական տվիչ – տես մագնիսաչափ

**տվյալ** – данные – data

աշխարհատարածական հետախուզական տվյալների շտեմարան – база геопро- странственных разведывательных данных – foundation geospatial-intelligence data  
Տվյալների հավաքածու, որում ներառված է շրջակա միջավայրի պատկերի և հատկությունների մասին համընդգրկուն վերլուծական տեղեկույթ, այն է՝ տեղանքի բարձրության, ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկույունների, երկրաբանական հատկույթ-

- յունների, քարտեզագրական առանձնահատկությունների, տեղանունների, սահմանների և մասին:
- անմիջական օգտագործման հետախուզական տվյալներ – разведывательные данные непосредственного использования – actionable intelligence
- գործակալական տվյալներ – агентурные данные – human intelligence  
Գործակալական հետախուզության կրթած տվյալներ:
- ընթացիկ հետախուզական տվյալներ – текущие разведывательные данные – current intelligence
- ծովային և օդային շարժման մասին տվյալների մշակում և հաղորդում – обработка и передача данных о морском и воздушном движении – filtering
- հատուկ օպերացիաների համար աշխարհատարածական հետախուզական տվյալների շտեմարան – база данных геопространственной разведки для особых операций – geospatial intelligence base for contingency operations
- հետախուզական տվյալներ – разведывательные данные, разведывательные сведения, разведывательная информация – intelligence
- հետախուզական տվյալների առաջնահերթ պահանջումնք – первостепенные потребности в разведывательных данных – priority intelligence requirement
- հետախուզական տվյալների արտազատում – процесс извлечения разведывательных данных – intelligence process
- հետախուզական տվյալների ծածուկ ձեռքբերում – тайное приобретение разведывательных данных – clandestine intelligence collection
- հետախուզական տվյալների համատեղ օգտագործում – совместное использование разведывательных данных – intelligence sharing
- հետախուզական տվյալների հավաքման առաջադրանք – задание по сбору разведывательной информации – collection requirement
- հետախուզական տվյալների հավաքում – сбор разведывательных данных – intelligence collection, intelligence gathering
- հետախուզական տվյալների վերլուծություն – анализ разведывательных данных – intelligence analysis
- հետախուզական տվյալների փոխանակում – обмен разведывательными данными – intelligence sharing, intelligence exchange
- հիմնական հետախուզական տվյալներ – основные разведывательные данные – basic intelligence  
Հետախուզական տվյալներ, որոնք կարող են ցանկացած հարցի վերաբերյալ ծառայել որպես պլանավորման համար ելակետային նյութ և հետագա տեղեկությունների պատրաստման համար հիմք:
- մարտավարական տվյալների հաղորդման գիծ – линия передачи тактических данных – tactical data link
- նախկինում սահմանափակ օգտագործման համար նախատեսված՝ ատոմային էներգետիկային վերաբերող տվյալներ – в прошлом данные по атомной энергетике для ограниченного пользования – formerly restricted data
- շտապ օգտագործման հետախուզական տվյալներ – разведывательные данные для срочного использования – time sensitive intelligence
- ռադիոտեխնիկական հետախուզության տվյալներ – данные радиотехнической разведки – electronic intelligence  
Էլեկտրոնային սարքավորանքի մրջտազնման, ռադիոհեռարձակումների գաղտնալուծման միջոցով հակառակորդի մասին ձեռք բերված տեղեկություններ:
- ռազմական հետախուզական տվյալներ – военные разведывательные данные – military intelligence
- տեղաշարժման տվյալներ – данные о передвижении – movement data
- տեսահետախուզության տվյալների գրանցում – запись данных видовой разведки – imagery data recording

տեսապատկերային հետախուզական տվյալներ – данные видовой разведки – imagery intelligence

Տեխնիկական, աշխարհագրական և հետախուզական տվյալներ, որոնք ստացվում են պատկերների և ուղեկից տվյալների մեկնաբանման և վերլուծության միջոցով:

տվյալների ավտոմատացված մշակում – автоматизированная обработка данных – automatic data processing

տվյալների թարմացում – обновление данных – update

տվյալների համախումբ – совокупность данных, материал – material

տվյալների հավաքման կառավարիչ – управляющий сбором данных – collection manager

տվյալների հավաքման կառավարման մարմին – орган управления сбором данных – collection management authority

տվյալների մշակում – обработка данных – processing

տվյալների մշակում և փոխակերպում – обработка и преобразование данных – processing and exploitation

Հավաքված տեղեկությունների վերածում գաղտնի հետախուզական տեղեկույթի:

տվյալների փոխանակում – обмен данными – data traffic

քարտեզագրական տվյալների տրամագիր – диаграмма картографических данных – compilation diagram

օպերատիվ հետախուզական տվյալներ – оперативные разведывательные данные – operational intelligence

**տվյալներ** – տես *տվյալ*

**տրամադրում** – 1. предоставление, 2. տես *բացթողում* – 1. provision, 2. տես *բացթողում*

**տրամաչափ** – калибр – caliber

1. Հրազենի փողի ներքին չափը՝ փողանցքի տրամագիծը, որը սովորաբար արտահայտվում է մմ-ով, ԱՄՆ-ում՝ մատնաչափի հարյուրերորդականնե-

րով: 2. Արկի, գնդակի ևն արտաքին չափը՝ ամենամեծ տրամագիծը:

մեծ տրամաչափի – крупнокалиберный – heavy caliber

փոքր տրամաչափի – малокалиберный – smallbore

**տրանսպորտ** – транспорт, транспортное средство – transport, traffic

ավտոմոբիլային տրանսպորտ – автомобильный транспорт, автотранспорт – motor transport

մեծանշանակ օդային տրանսպորտ – стратегический воздушный транспорт – strategic air transport

քաղաքացիական տրանսպորտ – гражданский транспорт – civil transportation

օդային տրանսպորտի երթևեկություն – движение воздушного транспорта – air traffic

Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիա – Международная ассоциация воздушного транспорта, ИАТА – International Air Transport Association

**տրավերդ** – траверз – traverse

**տրիգեր** – триггер – trigger

**տրոհում** – 1. распад, разделение, 2. разложение, 3. տես *ձեղքում* 2 – 1. decay, disintegration, 2. disintegration, decomposition, 3. տես *ձեղքում* 2

1. Բաժանում մասերի: 2. Առանձնացում, զատում, հեռացում:

միջուկի տրոհման արգասիքներ – продукты ядерного деления – fission products

Միջուկային վառելիքի վերամշակման կայանք բեռնվող ռադիոակտիվ նյութերի տրոհմամբ ստացվող նյութերը:

ռադիոակտիվ նյութերի տրոհման արգասիքների ելք – выход продуктов распада радиоактивных веществ – yield

ռադիոակտիվ նյութերի տրոհում – распад радиоактивных веществ, радиоактивный распад – radioactive decay

Ատոմների անկայուն միջուկների ինքնաբերական տրոհում՝ տարրական մասնիկների կամ որոշակի հաճախա-



կանությամբ էներգիայի ճառագայթման միջոցով:

ռադիոակտիվ տրոհման արագություն – скорость радиоактивного распада – radioactive decay rate

ռադիոակտիվ տրոհման կոր – кривая радиоактивного распада – radioactive decay curve

**տրոպոպաուզա** – тропопауза – tropopause

Մթնոլորտի երկու հարևան շերտերի՝ ներքնոլորտի և վերնոլորտի միջև զրտնըվող անցումային գոտի:

**տրոտիլ** – տես *եռնիտրոտոլուոլ*

**տրոտիլային համարժեք** – тротильный эквивалент – TNT equivalent

Մեծ էներգիական միջադեպերի ժամանակ անջատված էներգիայի չափ՝ արտահայտված պայթյունի ժամանակ նույնքան էներգիա առաքող եռնիտրոտոլուոլի քանակությամբ:

**տրցակ** – связка, пачка – cluster

**տրում** – выдача – giving out

**տուրբուլենտություն** – տես *մրրկայնություն*

**տուփ** – 1. տես *արկղ*, 2. пачка – 1. տես *արկղ*, 2. pack

**տևականություն** – длительность – duration

## Ց (ՅՈ)

«Ցա՛ծր» – «Ниже!» – “Down!”

Հրետակոծության ժամանակ թիրախի նշանառությունը ցածրացնելու հրահանգ:

**ցածրարժեքություն** – տես *սակավարժեքություն*

**ցածրացնել** – снижать – reduce

**ցածրացում** – снижение – descent

**ցածր խավ** – տես *ժողովուրդ՝ հասարակ ժողովուրդ*

**ցածրորակություն** – низкокачественность – inferiority

**ցամաք** – տես *երկիր*

**ցամաքային** – сухопутный – land

**Ցամաքային զորքերի սպառազինության բաժին** – отдел вооружения сухопутных войск – Land Armaments Section

**ցանկ** – տես *ցուցակ*

զորամասերի և ստորաբաժանումների լիակատար ցանկ – полный список частей и подразделений – force list

Օպերատիվ պլանի մաս. տվյալ օպերացիայի՝ ճակատամարտի պլանով նախատեսված մարտական (ինչպես հիմնական, այնպես էլ աջակցող) և ապահովման գործողություններում ընդգրկված բոլոր զորամասերի և ստորաբաժանումների թվարկումը:

հատուկ կարևորությամբ օբյեկտների ցանկ – список особо важных объектов – key facilities list

հարվածի ոչ ենթակա օբյեկտների ցանկ – список объектов, не подлежащих нанесению ударов – no-strike list

**ցանկապատ** – изгородь, частокол – fence

**ցանց** – 1. сеть, 2. сетка, 3. решетка, сетка – 1. network, 2. net, 3. lattice

1. Որոշակի կարգով դասավորված հանգույցներից ու խոռոչներից կազմված կառուցվածք: 2. Ճանապարհների, ջրանցքների, կապի գծերի և ամբողջությունը, որ տեղադրված է տարածության մեջ:

գործակալական ցանց – агентурная сеть – human intelligence network, informant net

կամայական կորդինատային ցանց – произвольная координатная сетка – point designation grid

կորդինատային ցանց – координатная сетка – grid, military grid

կորդինատների ուղեվարական ցանց – навигационная сетка координат – navigational grid

հակառակորդի թիկունքում գործելու համար թաքցված գործակալական ցանց –



агентура, законсервированная для действий в тылу врага – stay-behind

հակատորպեդային ցանց – противоторпедная сеть – torpedo defense net

Ցանց, որը տորպեդներից պաշտպանում է նավահանգիստը, խարսխված կամ լողացող նավերը:

համընդհանուր տեղեկատվական ցանց – глобальная информационная сетка – Global Information Grid

համընդհանուր տրանսպորտային ցանց – глобальная транспортная сеть – Global Transportation Network

Համընդհանուր ցանցի կառավարման կենտրոն – Центр управления глобальной сетью – Global Network Operations Center

հեռանկարային ցանց – перспективная сетка – perspective grid

հետախուզական ցանց – разведывательная сеть – intelligence net

ճանապարհային ցանց – дорожная сеть – road net

մասշտաբային ցանց – 1. масштабная сетка, 2. сетка на карте для обозначения координат карты – roamer

միացյալ հաղորդակցական ցանց – объединенная коммуникационная сеть – joint communications network

պաշտպանական փոխարկվող ցանց – оборонная коммутируемая сеть – Defense Switched Network

ԱՄՆ-ում ՊՆ ձայնային կապի, տվյալների փոխանցման և տեսակապի հարցերով զբաղվող բաժին, որը մտնում է պաշտպանական հաղորդակցական համակարգի մեջ:

տեղական ցանց – местная сеть – local net

տեղային համակարգչային ցանց – локальная компьютерная сеть – local area net

տեղեկատվական ցանցեր – информационные сети – information network

տեղեկույթի տեղական աղբյուրների ցանց – сеть местных источников информации – local informant net

տվյալների հաղորդման ցանց – сеть передачи данных – data network

ցանցի քայլ – шаг сетки – grid interval

քարտեզագրական ցանց – картографическая сетка – 1. graticule, 2. map grid

օկուլյարային ցանց – окулярная сетка – graticule

**ցանցային** – сетевой – network

1. Ցանցին հատուկ՝ վերաբերող:  
2. Ցանցի տեսք՝ ձև՝ կառուցվածք ունեցող, ցանցի սկզբունքով կառուցված՝ գործող: 3. Որպես հակադրություն կենտրոնացմանը՝ ընդհանուր գաղափարներով ու նպատակներով առաջնորդվող, սակայն ղեկավար կենտրոնից քիչ կախում ունեցող և ընդհանուր ծրագրի շրջանակներում ինքնուրույն՝ ինքնավարաբար գործելու կարողությամբ օժտված բջիջներից՝ հանգույցներից կազմված, ձկուն ու կենսունակ համակարգ:

ցանցային զինատեսակ – сетевое оружие – networked munitions

ցանցային նոնոգրամ – сетчатая номограмма – abac scale

ցանցային ուռկանապարկ – сетевой трал – net sweep

ցանցային օպերացիա – сетевая операция – network operation

**ցավ** – боль – pain

**ցավազրկող** – обезболивающее – pain-killer

**ցատկ** – прыжок – jump

**ցեխահեղեղ** – селевой поток, сель – mud-flow, mudslide

**ցեղասպանություն** – геноцид – genocide

**ցիանի քլորիդ** – տես *քլորցիան*

**ցիստեն** – տես *բար*

**ցնցակաթված** – шок – shock

խոցվածքին ի պատասխան՝ օրգանիզմի համակշռողական հակազդումների խաթարում:

**ցնցում** – 1. сотрясение, тряска, 2. потрясение, шок, 3. сотрясение – 1. shock, blow, 2. shake, 3. shock, commotion

1. Հարվածի՝ հրումների ուժով շարժելը՝ տատանելը՝ տարուբերելը: 2. Ջր-դաճություն, ջրակծկում: 3. Սաստիկ հուզմունք, որևէ իրադարձության՝ դեպքի ազդեցությամբ առաջացած հոգեկան կամ ֆիզիկական հիվանդագին վիճակ: 4. Իրարանցում՝ խեղաբեկում են առաջացնող իրադարձություն: 5. Երկրաշարժի առաջ բերած տատանում՝ երերում:

**ցրիչ** – курьер – courier

**ցրված լուսավորություն** – диффузное освещение – illumination by diffusion

**ցրվածք** – разброс – dispersion

«Ցրվե՛լ» – «Разойтись!» – “Fall out”

**ցրվել** – расходиться – break

**ցրտահարում** – обморожение – frostbite

Կենդանի օրգանիզմների կամ դրանց առանձին հատվածների, առաջին հերթին՝ վերջույթների սառեցումը սառնամանիքային պայմաններում:

**ցրում** – 1. рассеяние, 2. разброс, рассеивание, 3. разгон – 1. dispersal, 2. distribution, 3. suppression

1. Նշանակետի շուրջը արկերի՝ զընդակների և պլանաչափ ցրման՝ բաշխման պատկեր՝ մակերես: 2. Գործնականում միևնույն պայմաններում հրածրության (հրթիռների արձակման, ռըմբանետման) ժամանակ սահմանափակ հարթակում (տարածությունում) արկերի (գնդակների, նռնակների, հրթիռների, ռումբերի ևն) անկման կետերի (օդային պայթյունների) տարաբաշխման երևույթ: 3. Որևէ բանի՝ հրամանի, հրահանգագրի, ցուցումնագրի կամ պաշարների՝ միջոցների պաշտոնական ցրումը՝ բաշխումն ըստ հասցեատերերի: 4. Ուժի գործադրմամբ տարբեր կողմեր հեռանալ ստիպելը (ցուցարարներին, ամբոխին ևն):

արկերի պլանավորված ցրում – запланированное рассеивание снарядов – distribution

Կետի շուրջ արկերի պայթյունների ցրման պլանավորված սխեմա:

ճառագայթման ցրում – рассеяние излучения – radiation scattering

ցրման կետ – пункт рассредоточения – dispersal point

ցրման կոն – տես *հետազոտերի փունջ*

ցրման մակերես – площадь рассеивания – dispersion pattern

Նման պայմաններում կրակահերթի ժամանակ միևնույն զենքից արձակված գնդակների ցրման հետևանքով առաջացած (հետազոտերի փնջով ձևավորված) երկրաչափական պատկեր:

ցրման միջինացված շեղում – срединное отклонение от рассеивания – dispersion error

Հարվածի կամ պայթյունի նշանառված տեղի և իրական տեղի միջև եղած տարածությունը:

**ցցաթումբ** – эстакада – flyover

**ցցապատ** – частокол – pallisade

**ցցապատնեշ** – палисад – pallisade

**ցույց** – демонстрация – demonstration

**ցուպ** – տես *մահակ*

**ցուցադրող** (անձ) – демонстратор – demonstrator

**ցուցադրություն** – выставка – demonstration

**ցուցադրում** – показ, демонстрация – demonstration

**ցուցակ** – список, реестр – list, schedule

խաղաղ ժամանակվա կազմակերպահաստիքային ցուցակ – организационно-штатное расписание мирного времени – peacetime establishment

կազմակերպահաստիքային ցուցակ – организационно-штатное расписание – 1. establishment, 2. table of organization, table of organization and equipment, 3. staff list

Պաշտոնական նորմատիվային փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ զորամասի, հիմնարկի, կազմակերպու-

յան, ռազմակրթական հաստատության թույլատրված կազմակերպվածքը, անձնակազմի թվաքանակն ու կազմը:

համափոխարինելի դետալների ցուցակ – список взаимозаменяемых деталей – interchangeability list

համափոխարինելի մանրամասերի ցուցակ – տես *ցուցակ՝ համափոխարինելի դետալների ցուցակ*

հանձնարարությունների ցուցակ – список поручений – checklist

նախատեսված նշանակետերի ցուցակ – список намеченных целей – candidate target list

Հնարավոր թիրախ հանդիսացող առարկաների, օբյեկտների ցուցակ:

ստուգիչ ցուցակ – контрольный список, проверочный список – checklist

ստուգողական ցուցակ – տես *ցուցակ՝ ստուգիչ ցուցակ*

**ցուցանակ** – вывеска – signpost

**ցուցանշան** – 1. указатель, 2. указательный столб – 1. guide signs, 2. signpost

**ցուցանշում** – индикация – indication

**ցուցասարք** – 1. индикационный прибор, 2. монитор – 1. indicator, 2. monitor

երկրի նկատմամբ թռչող ապարատի դիրքի ցուցասարք – индикатор положения ЛА относительно земли – ground position indicator

հորիզոնական իրադրության ցուցասարք – индикатор горизонтальной обстановки – horizontal situation indicator

Ինքնաթիռի կողային գործիք, որն արտացոլում է մինչև ուղեվարական միջոցները՝ ռադիոփարոս ևն, եղած հեռավորությունը, մագնիսական ուղղույթը և այլն:

շարժական քարտեզով ցուցասարք – дисплей с подвижной картой – moving map display

Տեղաշարժման քարտեզ, որում մեքենան նշագրող նշանն անշարժ է, իսկ տեղանքը նկարագրող պատկերները՝ շարժական:

ուղղածիզ հարթությունում իրադրության ցուցասարք – индикатор обстановки в вертикальной плоскости – vertical situation display

Ցուցասարք, որի էկրանին արտացոլվում են տվյալներ ինքնաթիռի թռիչքի բարձրության, թռիչքների ղեկավարի հրամանների, ուղղածիզ բարձրության, կողաթեքման անկյան ևն մասին:

օդադեսանտային օբյեկտների ընթացիկ տեղադիրքի որոշման համար նախատեսված ցուցասարք – дисплей определения текущего местоположения воздушно-десантных объектов – air plot

օդային արագության համակցված ցուցասարք – комбинированный указатель воздушной скорости – combined airspeed indicator

**ցուցարար** – демонстрант – demonstrator

**ցուցիչ** – указатель, индикатор – indicator  
հոգեբանական օպերացիայի ազդեցության ցուցիչ – индикатор влияния психологической операции – psychological operation impact indicator

Ակնբախ դեպք կամ վարքի հստակ արտահայտված փոփոխություն, որն արտացոլում է ժամանակի կոնկրետ պահին օտարերկրյա թիրախային լսարանի վրա տվյալ հոգեբանական օպերացիայի գործած ազդեցությունը:

ռադիոմագնիսական ցուցիչ – радиоманнитный индикатор – radio magnetic indicator

**ցուցմունք** – показание – indication

**ցուցում** – 1. указание, 2. տես *բուժցուցում* – 1. direction, 2. տես *բուժցուցում*

ղեկավար ցուցում – руководящее указание – guidance

Պրոբլեմների լուծման, առաջադրանքների հաջող կատարման նպատակով ղեկավարության տված հրահանգ՝ հանձնարարական:

**ցուցումնագիր** – директива – directive, instruction, guide

1. Զինվորական՝ ռազմական փաստաթուղթ, որում սահմանվում են գործունեության հիմնական ուղղությունները կամ ցուցում է տրվում կատարելու

որոշակի գործողություններ: 2. Պլան, որն ընդունված է իրագործման՝ համապատասխան հրամանով կամ իրադրության որոշակի փոփոխման դեպքում: 3. Լայն իմաստով. ցանկացած փաստաթուղթ, որով հարուցվում կամ կարգավորվում են գործողությունը, գործողության բնույթը կամ կատարման կարգը:

հանձնարարատու ցուցումնագիր – инициирующая директива – Initiating Directive

մարտական ցուցումնագիր – боевая директива – mission type order

ալանավորման ցուցումնագիր – директива по планированию – planning directive, planning guidance

օպերատիվ ալանավորման ցուցումնագիր (ղեկավար հրահանգ) – директива (руководство) по оперативному планированию – guidelines for operational planning

**ցուցումներ** – указания – orders

### ՈՒ

«ՈՒզի» – «Узи» – Uzi  
Իսրայելական ավտոմատ:

**ուժ** – сила – 1. force, 2. strength, power  
1. Առարկայի, երևույթի, դաշտի ևն ազդեցությունը այլ առարկայի վրա, ինչի հետևանքով տեղի է ունենում մեխանիկական շարժում, ձևախախտում, ներքին էներգիայի փոփոխություն և այլն: 2. Մարդու մկանների լարում, որ կատարում է աշխատանք:

աերոդինամիկական ուժ – аэродинамическая сила – aerodynamic force

Ուժ, որն ազդում է օդում կամ որևէ այլ գազային միջավայրում շարժվող մարմնի վրա:

առկա ուժ – наличествующая сила – current force

արտաքին օգնական ուժ – внешняя вспомогательная сила – external reinforcing force

գլխավոր ուժ – главная сила – major force

զինված ուժի կիրառում – применение вооруженной силы – use of armed force

Կենդանի ուժ – живая сила – manpower  
Զինվորական կազմավորման՝ մարտին (օպերացիային) մասնակցող անձնակազմը: Հիմնականում կիրառվում է հակառակորդի անձնակազմի՝ որպես խոցման օբյեկտի նկատմամբ:

Կենդանի ուժը ժամանակավորապես շարքից հանող թունանյութ – временно выводящее из строя живую силу вещество – incapacitating agent

Կենդանի ուժի կորուստների լրացում – восполнение потерь в живой силе – replenishment of strength in manpower  
Կենդանի ուժի կորուստների լրացում թարմ մարդկային ռեսուրսներով:

«կոշտ» ուժ – «жесткая сила», силовые методы воздействия – hard power  
Ազդեցություն (քաղաքական, տնտեսական ևն) գերազանցապես բիրտ ուժի գործադրմամբ:

նվազագույն ուժ – минимальная сила – minimum force

Ուժ, որը սահմանափակված է այն աստիճանի ինտենսիվությամբ և կիրառման ժամանակով, որոնք անհրաժեշտ են տվյալ նպատակին հասնելու համար:

շարժիչ ուժ – движущая сила – momentum, inertia

ռազմական ուժի ցուցադրում – демонстрация военной силы – demonstration of force

ուժի բազմապատկիչ – умножитель силы – force multiplier  
Զորքի մարտունակության մեծացման ոչ թե ուժային, այլ տեխնիկական, ինժեներական, մարտավարական ևն միջոց:

ուժի խնայում – экономия сил, сбережение сил – economy of force

Իրավիճակ, երբ առաջադրանքի կատարման սկզբնական փուլում ծախսվում են ավելի քիչ միջոցներ և ուժեր, քան պլանավորված էր, ինչի շնորհիվ հիմնական օպերացիայում հնարավոր է լինում գործադրել ավելի շատ ուժեր և միջոցներ:

ուժի կիրառման ընթացակարգային կանոններ – процедурные правила приме-

нения силы – standing rules for the use of force

ԱՄՆ-ում. նախապես հաստատված ցուցումնագրեր, որոնք ուղղորդում են տարբեր օպերացիաներում ՋՈՒ-ի գործունեությունը և կարող են լինել կատարողական կամ ծավալման հրամաններ, հուշագրեր կամ պլաններ:

ուժի կիրառման կանոններ – правила применения силы – rules of engagement

Ռազմական կառավարման լիազորմարմնի ցուցումնագրեր, որոնցով սահմանվում են զորքերի՝ ռազմական գործողությունների կամ շարունակելու պայմանները, հանգամանքները և սահմանափակումները:

ուժի կիրառում – применение силы – use of force, application of force

ուժի կոնկրետ կիրառման կանոններ – правила конкретного применения силы – rules of engagement profile

Կոնկրետ տարածությունում և ժամանակամիջոցում կոնկրետ ուժերի գործողությունների կամ օպերացիայի վարման կանոնների համախումբ:

ուժի մեջ մտնելու օրը – дата вступления в силу – effective date

ուժի նվազագույն կիրառում – минимальное применение силы – use of minimum force

ՋՈՒ-ի կիրառումը ներառող գործողությունների այն նվազագույն ծավալը, որն անհրաժեշտ է իրավիճակը վերահսկելու կամ հակառակորդի ձեռնարկումներից պաշտպանվելու համար, ընդսմին նպատակին հասնելու դեպքում գործողությունները դադարեցվում են:

ուժի ոչ ընտրողական կիրառում – indiscriminate use of force

ուժի տնտեսում – տես ուժ՝ ուժի խնայում

ուժի ցուցադրում – демонстрация силы – show of force

Որևէ պետության (պետությունների խմբի) ՋՈՒ-ի սպառնալից գործողությունները՝ այլ պետության (պետությունների) վրա ճնշում գործադրելու և քաղաքական, տնտեսական և այլ զիջումներ պարտադրելու նպատակով, կարող է

իրագործվել ՋՈՒ-ի մարտապատրաստության աստիճանի բարձրացման, սպառնազինությունների քանակի կտրուկ մեծացման, զորքերի (ծովային ուժերի) ծավալման ու սահմանին մոտեցման, զորավարժությունների, զորախաղերի կազմակերպման, ինքնաթիռների մերձսահմանային թռիչքների և այլ ձևերով:

«փափուկ» ուժ – «мягкая сила», несиловые методы воздействия – soft power

Ազդեցություն ոչ թե պարտադրմամբ, այլ դիվանագիտական-համոզական, շահագրգռական, հնարամտության եղանակով:

ուժի օգտագործման կանոններ – правила использования силы – rules for the use of force

ուժի օրինական կիրառում – законное применение силы – lawful use of force

Ներպետական. ուժի կիրառում ըստ սահմանադրական և այլ ներպետական իրավական նորմերի, արտաքին. ուժի կիրառում՝ համաձայն միջազգային իրավունքի նորմերի:

ուժալրում – усиление, подкрепление – reinforcement

ուժակայանք – տես ուժային՝ ուժային կայանք

ուժային – силовой – force

Ուժին հատուկ՝ վերաբերող:

ուժային բազմապատկիչ – силовой умножитель – force multiplier

Տեխնիկական միջոցներ, որոնք հիմնված լինելով արդի գիտության նվաճումների վրա՝ հնարավորություն են տալիս մեծացնելու պետության պաշտպանական հզորությունն ի հաշիվ ոչ թե քանակի, այլ ռազմական տեխնիկայի ու սպառնազինության որակական գերազանցության:

ուժային բազմապատկություն – силовое умножение – force multiplication

Նման միջոցների ստեղծում ու դրանցով ՋՈՒ-ի սպառնազինում:

ուժային բազմապատկում – силовое умножение – force multiplication

ուժային կայանք – силовая установка – powerplant

ուժային կառույց – силовая структура – power structure

ուժային կառույցներ – силовые структуры – security sector, security structures

Պետական հաստատությունների համակարգի այն հատվածը, որի տարրերի գլխավոր գործառույթը իրենց լիազորությունների սահմաններում պետության անվտանգության ապահովումն է արտաքին ագրեսիայից, կազմակերպված հանցավորությունից, ահաբեկչությունից, դիվերսիոն և զինված հակապետական գործունեությունից:

ուժային կառույցների բարեփոխում – տես *ուժային՝ ուժային կառույցների վերափոխում*

ուժային կառույցների վերափոխում – реформа силовых структур – security sector reform

**ուժանակ** – տես *դինամիտ*

**ուժասպառություն** – 1. изнеможение, истощение сил, 2. полный упадок сил, резкий упадок сил – 1. exhaustion, attrition, 2. collapse

**ուժգին** – տես *ինտենսիվ*

**ուժգնացում** – усиление – intensification, amplification

Որևէ բանի աստիճանական ուժեղացում, աճում, մեծացում, ընդարձակում, ծավալում:

**ուժեղ** – տես *ինտենսիվ*

**ուժեղացնել** – տես *ամրապնդել*

**ուժեղացում** – 1. տես *ուժգնացում*, 2. տես *ուժալրում*

**ուժեր** – силы – forces

Այն զորամասերի, զորամիավորումների և այլ մշտական կամ ժամանակավոր զինվորական կազմավորումների հավաքական անվանումը, որոնք միավորվում են ըստ պատկանելության հատկանիշի կամ խնդիրների ընդհանրության:

անկանոն ուժեր – иррегулярные силы – irregular forces

Չորք, որը չունի մշտական միասնական կազմակերպվածք կամ կանոնա-

վոր զորքից տարբերվում է համալրման, ծառայության կարգով ևն:

անհապաղ արձագանքման ուժեր – силы немедленного реагирования – immediate reaction forces

անհրաժեշտ ուժեր – необходимые силы – required military force

անվտանգության շարժունակ ուժեր – мобильные силы безопасности – mobile security force

ապաշրջափակող ուժեր – разблокирующие силы, силы по снятию осады – relief force

առաջադրանք կատարող հիմնական ուժեր – основные силы по выполнению задания – mission-essential force

արագ արձագանքման ուժեր – силы быстрого реагирования – quick reaction force, rapid reaction force, rapid response force

Հատուկ պատրաստված կազմավորումներ, որոնք նախանշանակված են աշխարհի՝ ռազմավարական առումով կարևոր շրջաններում ձգնաժամային իրավիճակների ծագման դեպքում այնտեղ անհապաղ օգտագործման համար:

արագ հակազդման ուժեր – տես *ուժեր՝ արագ արձագանքման ուժեր*

Աֆղանստանում անվտանգությանն աջակցության միջազգային ուժեր – Международные силы содействия безопасности в Афганистане – International Security Assistance Force in Afghanistan, ISAF

գլխավոր պաշտպանական ուժեր – главные оборонительные силы – main defense forces

Հիմնական ուժերի ու միջոցների խմբավորում, որը նախանշանակված է պաշտպանական օպերացիայում գլխավոր խնդրի կատարման համար:

գլխավոր ուժեր – главные силы – main force

զորավարժությունում հակառակ կողմի ուժերի հրամանատար – командующий силами противника на учениях – opposing forces commander



Ջորավարժություններում՝ դիմակայող ուժերի հրամանատար:

գսպման ուժեր – силы сдерживания – deterrent force

Ուզմավարական նախանշանակման ուժերի ու միջոցների համալիր, որոնք նախատեսված են հակառակորդի հարվածը (հարձակումը) կանխելու և հետ մղելու, պատասխան հարված հասցնելու համար՝ պետության (մի խումբ պետությունների) տարածքը պաշտպանելու և հակառակորդի հնարավոր ագրեսիան՝ նրան անընդունելի վնաս պատճառելու սպառնալիքով կանխելու (գսպելու) համար:

ընդհանուր նախանշանակման ուժեր – տես ուժեր՝ սովորական ուժեր

թշնամու ուժեր – силы врага – enemy

խաղաղապահական ուժերի ազգային թվակազմ – национальный контингент миротворческих сил – national contributing (to a peacekeeping force)

խաղաղապահ ուժեր – силы по поддержанию мира – peacekeeping force, peace support force

խափանիչ ուժեր – сдерживающие силы, сдерживающая группа – delaying force

Փոքրաթիվ զինվորական խումբ, որին հանձնարարված է խոչընդոտել թշնամու առաջխաղացմանը՝ մինչև յուրային զորքերը պատրաստվեն պաշտպանական գծի ամրապնդմանը:

ծովային դեսանտագրոհային ուժեր – տես զորք՝ ափհանվող զորք

ծովային ուժեր – морские силы – maritime forces

ծովացամաքային ուժերով պահպանման շրջան – район охранения сухопутно-морскими силами – amphibious objective area

կազմակերպված հանցավորության և թմրանյութերի առևտրի դեմ պայքարի ուժեր – силы по борьбе с организованной преступностью и наркоторговлей – Organized Crime Drug Enforcement Task Force

կայունացման ուժեր – силы стабилизации – Stabilization Force, SFOR

Բոսնիա-Հերցեգովինայում ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերը:

«կապույտների» ուժեր – силы «синих» – blue forces

ՆԱՏՕ-ի զորավարժություններում՝ բարեկամ երկրների զորքերը:

Կոսովոյի համար ուժեր – Силы для Косово – Kosovo Force

հակազդման ուժեր – силы реагирования – response force, reaction force

հակառակորդի տարածքից զինծառայողների դուրսբերման ուժեր – силы вывода военнослужащих с территории противника – personnel recovery task force

հակառակորդի ուժեր – տես ուժեր՝ թշնամու ուժեր

հակասուզանավային պաշտպանության ուժեր – силы противолодочной обороны – antisubmarine warfare forces

համալրման ուժեր – силы пополнения – augmentation forces

Եվրոպայի ու Հյուսիսային Ամերիկայի պետությունների զինվորական կազմավորումներ, որոնք չեն մտնում պաշտպանության զլխավոր ուժերի կամ արձագանքման ուժերի կազմի մեջ և նախատեսված են ՆԱՏՕ-ի ՄՁՈԲ-ի տարածաշրջանային կամ ծովային հրամանատարություններն ուժեղացնելու և գսպման, ճգնաժամների կարգավորման ու պաշտպանության խնդիրների լուծմանն աջակցելու համար:

Հաշտության պայմանագրի կատարման ուժեր – Силы выполнения мирного соглашения – Implementation Force, IFOR

հատուկ օպերացիաների ուժեր – տես նախանշանակում՝ հատուկ նախանշանակման զորքեր

հատուկ օպերացիաների ուժերի կառավարման ստորաբաժանում – подразделение управления сил специальных операций – special operations command and control element

Սովորական օպերացիաների ուժերի հետ հատուկ օպերացիաների ուժերի զործունեության համաձայնեցումը համադասող կենտրոն:

հատուկ օպերացիաների ուժերի մարտական կառավարման խումբ – группа боевого управления сил специальных опе-



раций – special operations combat control team

Ավիացիոն ուժերի զինախումբ, որն ստացել է համապատասխան պատրաստում ու հանդերձանք՝ հատուկ օպերացիաների վարման և դրանց աջակցման համար:

հատուկ օպերացիաների ուժերի միացյալ մարտավարական խումբ – объединенная тактическая группа сил специальных операций – joint special operations task force

հատուկ օպերացիաների ուժերի շտաբային փաստաթղթերի փաթեթ – комплект штабных документов сил специальных операций – special operations mission folder, special operations mission planning folder

Փաթեթ, որում ներառված են հատուկ օպերացիաների շրջանակում տվյալ առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ նյութերը:

հատուկ օպերացիաներում միացյալ ուժերի ռազմաօդային բաղադրատարր – военновоздушный компонент объединенных сил в специальных операциях – Air Force special operations component

հարվածային ուժեր – ударные силы – strike force

հզորացման ուժեր – силы наращивания, усиление – augmentation forces

Ջորային թվակազմ, սպառազինություն ու ռազմական տեխնիկա, որոնք լրացուցիչ կերպով տեղաբաշխվում են տվյալ շրջանում (տարածաշրջանում), ինչպես նաև եղած ՍՈՏ փոխարինում ավելի արդյունավետ միջոցներով, ինչը նպաստում է եղած խմբավորման հզորության մեծացմանը:

մարտական գործողությունների շրջանում տեղաբաշխվող ուժեր – силы, дислоцирующиеся в районе боевых действий – in-place force

միացյալ դաշնակցային ուժեր – տես ուժեր՝ բազմազգ ուժերի (գորքերի) խմբավորում

միացյալ զինված ուժեր – объединенные вооруженные силы – joint armed forces

Պետությունների դաշնադրության կամ միջազգային կազմակերպության ռազմական կազմակերպվածքը. ՆԱՏՕ-ի

ՄՁՈՒ, ԱՂՀ ՄՁՈՒ, ԱՄԷ-ի ՄՁՈՒ, Վարչավայի պայմանագրի կազմակերպության (այժմ լուծարված է) երկրների ՄՁՈՒ:

միացյալ ուժեր – տես գորքեր՝ միացյալ գորքեր

միացյալ ուժերի ստորաբաժանում – подразделение объединенных сил – element

միջազգային ոստիկանական ուժեր – международные полицейские силы – international police force

միջուկային ռազմավարական ծովային ուժեր – морские стратегические ядерные силы – Nuclear Strategic Naval Forces

շարժուն օդային ուժեր – мобильные воздушные силы – mobility air forces

պայմանական հակառակորդի ուժեր (զորավարժությունում) – силы условного противника (на учениях) – opposing forces, aggressor forces

պարտիզանական ուժեր – партизанские силы – guerrilla force

ռազմածովային ուժեր – военно-морские силы, ВМС – navy, naval forces

ՋՈՒ-ի տեսակ, որը նախանշանակված է օվկիանոսային ու ծովային ՌԳԹ-ում ռազմավարական և օպերատիվ խնդիրներ լուծելու համար:

ռազմավարական սաստման ուժեր – силы стратегического сдерживания – Strategic Deterrence Forces

ռազմարշավային ուժեր – экспедиционные войска – expeditionary force

ռազմաօդային ուժեր – военновоздушные силы, ВВС – Air Force, AF

ՋՈՒ-ի տեսակ, որը նախանշանակված է ինքնուրույնաբար կամ ՋՈՒ-ի այլ տեսակների հետ համագործակցելով ջախջախելու հակառակորդի ավիացիոն, ցամաքային ու ծովային խմբավորումները, քայքայելու նրա ռազմատնտեսական ներուժը, կազմալուծելու պետական և ռազմական կառավարումը և այլն:

ռազմաօդային ուժերի հատուկ օպերացիաների ուժեր – силы особых операций

военно-воздушных сил – Air Force special operations forces

ռազմաօդային ուժերի սպառազինության բաժին – отдел вооружения военно-воздушных сил – Air Armaments Section

ռեակցիոն ուժեր – տես *ուժեր՝ հետադիմական ուժեր*

սովորական ուժեր – обычные силы, силы общего назначения – conventional forces

ԱՄՆ-ի և մի շարք այլ պետությունների զինված ուժերի այն մասը, որը նախանշանակված է առանց մարտավարական միջուկային զենքի կիրառման սահմանափակ պատերազմ վարելու, ինչպես նաև համընդհանուր միջուկային պատերազմի ժամանակ ցամաքային ու ծովային ՌԳԹ-ում ռազմավարական ուժերի հետ համատեղ ռազմական գործողություններ վարելու համար:

«սպիտակների» ուժեր – силы «белых» – white forces

ՆԱՏՕ-ի գորավարժություններում՝ միջնորդների ստորաբաժանումներ:

տարանջատման ուժեր – силы разведения, группировка в буферной зоне – interposition force

տարաշարժվող ուժեր – маневрирующие силы – maneuvering forces

տեղեկույթի (հետախուզական) հավաքման ուժեր և միջոցներ – силы и средства сбора (разведывательной) информации – collection asset

տիեզերական ուժեր – տես *զորքեր՝ տիեզերական զորքեր*

տիեզերական ուժերի կիրառում – применение космических сил – space force application

ցամաքային զորքերի հատուկ օպերացիաների ուժեր – силы специальных операций сухопутных войск – army special operations forces

ուժերի գլխավոր խմբավորում – главная группировка сил – main military force

ուժերի (զորքերի) մարտական կիրառում – боевое применение сил (войск) – employment of forces

Սպառազինության և մարտական տեխնիկայի օգտագործում ըստ դրանց նախանշանակման (գործառույթների):

ուժերի կազմավորում – формирование сил – force generation

ուժերի կազմի որոշում – определение состава сил – force identification

ուժերի հաշվեկշիռ – баланс сил – balance of power, power balance

Պետությունների կամ պետությունների դաշնադրությունների միջև ուժերի այնպիսի բաշխում, որի դեպքում նրանցից ոչ մեկը չունի մյուսների նկատմամբ էական գերազանցություն:

ուժերի հավասարակշռություն – равновесие сил – balance of forces

ՌԺԲ-ի համակարգի վիճակ, որի դեպքում համակարգի զխավոր վեկտորը (արդյունարար ուժը) և կամայական բևեռի նկատմամբ համակարգի զխավոր մոմենտը հավասար են 0-ի:

ուժերի հարմարեցում – адаптация сил – tailoring, force tailoring

Պլանավորման մեջ ուժերի կազմի փոփոխություն՝ մարտական խնդրի պահանջներին համապատասխան:

ուժերի հզորացման տիպային տարբերակ – типовой вариант усиления сил – generic reinforcement option

ուժերի մարտական կիրառում – боевое применение сил – force entry

ՌԺԲ-ի (զորքերի) կիրառում նշանակետի (թիրախի) գտնվելու շրջանում:

ուժերի մեծանշանակ հաշվեկշիռ – տես *ուժեր՝ ուժերի ռազմավարական հաշվեկշիռ*

ուժերի (միջոցների) թերդիրքավորում – расположение сил (средств) с отклонением от утвержденного плана – malposition

ուժերի նախանշանակում – назначение сил – force identification

ուժերի պակասուրդ – дефицит сил – force shortfall

ուժերի ռազմավարական հաշվեկշիռ – стратегический баланс сил – strategic balance of forces, strategic parity

Մեծ նշանակություն ունեցող՝ մեծ դեր խաղացող՝ մեծ չափերի ուժերի որոշակի հարաբերություն:

ուժերի ու միջոցների հատկացման հայտագիր – заявка на выделение сил и средств – statement of requirement

Փաստաթուղթ, որը հրապարակվում է «ընդունող» երկրին աջակցության մասին համաձայնագրի կնքման հետ:

ուժերի և միջոցների բաշխում – распределение сил и средств – 1. allocation, 2. apportionment

Տվյալ ժամանակաշրջանում կոնկրետ աշխարհագրական տարածքում ավիացիայի տարբեր գործողությունների համար հաստատված գերակայություններին համապատասխան ենթադրվող ուժերի ու միջոցների քանակության որոշում և տոկոսային առումով բաշխում:

ուժերի և միջոցների երկարաժամկետ պահանջումը – долгосрочные потребности в силах и средствах – Long-Term Capability Requirements

ուժերի և միջոցների լրակազմ – комплект сил и средств – force package

ուժերի և միջոցների համալիր – комплекс сил и средств – capability package

Ենթակառուցվածքի օբյեկտների համախումբ, որը, զուգակցված լինելով զորքերի հետ, ՆԱՏՕ-ի ՄՁՌ-ի հրամանատարին հնարավորություն է տալիս ստեղծելու Դաշինքին անհրաժեշտ ռազմական ներուժ: Նման օբյեկտների և դրանց շահագործման հետ կապված ծախսերի ֆինանսավորումն ապահովում են ինչպես ՆԱՏՕ-ն, այնպես էլ ազգային աղբյուրները:

ուժերի և միջոցների հաշվարկ – расчет сил и средств – task organization

ուժերի և միջոցների հաշվարկում – расчет сил и средств – force package

Պլանավորման ժամանակ նորմատիվ ցուցիչ:

ուժերի և միջոցների հարաբերակցություն – соотношение сил и средств – force ratio

Թշնամական և յուրային զորքերի որակական և քանակական հարաբերակցությունը:

ուժերի և միջոցների պակասուրդ – дефицит сил и средств – scarcity of resources

ուժեր և միջոցներ – силы и средства – assets

օդազրոհային ուժեր – воздушно-штурмовые силы – air assault force

Ռիդաթիռներով տեղափոխվող օդաչարժունակ զորամիավորումներ, զորամասեր, ստորաբաժանումներ, որոնք նախանշանակված են օդազրոհային օպերացիա (զրոհադեսանտային գործողություններ) վարելու համար:

օդադեսանտային ուժեր – տես *զորքեր՝ օդադեսանտային զորքեր*

օդաչարժունակ ուժեր – аэромобильные силы – airmobile forces

Որոշ պետություններում հատուկ պատրաստված ուժեր (կազմավորումներ) օդաչարժուն օպերացիաներ իրագործելու համար:

օդատիեզերական ուժեր – воздушно-космические силы – aerospace forces

ՌԴ ՁՌ-ի զորատեսակ, որի վրա դրված են հետևյալ խնդիրները. կառավարման վերին օղակների իրազեկում բալիստիկ հրթիռների արձակման հայտնաբերման և նախազգուշացում հրթիռային հարձակման մասին, կարևոր պետական օբյեկտների վրա ուղղորդված բալիստիկ հրթիռների գլխամասերի ոչնչացում, հակառակորդի օդատիեզերական հարձակման միջոցների հարվածներից քաղաքական ու ռազմական կառավարման վերին օղակների կառավարման կետերի, զորքերի խմբավորումների, կարևոր տնտեսական կենտրոնների և այլ կարևոր օբյեկտների պաշտպանություն, տիեզերական ապարատների արձակում և դուրսբերում ուղեծրեր ևն:

**ուլտրաձայն** – ультразвук – ultrasound  
30 – 200 ԿՀց հաճախականությամբ մեխանիկական տատանումներ:

**ուլտրաձայնային** – ультразвуковой – supersonic

ուլտրաձայնային ձառագայթիչ – ультразвуковой излучатель – squawk box

**ուխտ** – 1. орден, 2. обет, 3. տես *միություն* – 1. order, 2. vow, pledge, 3. տես *միություն*

1. Վանական միաբանություն, կրոնասպետական միաբանություն: 2. Հաստատուն խոսք, երդում: 3. Պատգամ: 4. Դաշինք, միություն:

**ուխտադրություն** – вероломство – treachery

**ուխտազանցություն** – տես *երդմնազանցություն 1*

**ուղանցույց** – 1. виадук, мост через суходол, 2. эстакада, путепровод – 1. dry gap bridge, 2. flyover

1. Շարժական կամ անշարժ կամուրջ ոչ ջրային տարածքի վրա: 2. Երկու ճանապարհների հատման կետում մի ճանապարհը մյուսի վրայով տանելու, նավերի կառանման, ընդհանուր առմամբ՝ որոշ բարձրությամբ ճանապարհը տանելու կամուրջ կամ այլ հարմարանք:

**ուղեբացիչ** – путепокладчик – roader, position plotter

Շարասյունային ճանապարհների անցկացման, զորային ճանապարհների հարթման և պահման մեքենա:

**ուղեգիծ** – 1. курс, 2. трасса – 1. course, 2. track

1. Ուղղություն քաղաքականության, հասարակական և այլ գործունեության մեջ: 2. Որևէ տրանսպորտային միջոցի (միջոցների) շարժման երթուղին կամ հատուկ նշված ճանապարհը՝ ուղին, ինչպես նաև լուսածրիչ արկերի (զնդակների) թռիչքի լուսավոր հետքը:

գլխավոր քաղաքական ուղեգիծ – главный политический курс – mainstream

խաղաղասիրական ուղեգիծ – миролюбивый курс – peaceful course, peaceful policy

ռազմական գերազանցման ուղեգիծ – курс на военное превосходство – course to military superiority

քաղաքական ուղեգիծ – политический курс – policy

**ուղեգիր** – путевка – voucher

**ուղեգծանիշ** – створ – alignment

1. Երևակայական գիծ, որը թռիչքուղու երկայնական առանցքի շարունակությունն է, և որի վրա գտնվում են հեռավոր ու մոտիկ առբերիչ ռադիոկայանները: 2. Գետերի ու լճերի ափերին տեղադրվող ցայտունորեն գունավորված ուղեվարական սարքավորանք:

**ուղեթերթիկ** – путевой лист, путевка – route card

**ուղեկալ** – застава – picket

**ուղեկցորդ** – эскорт – bodyguard

**ուղեկցում** – 1. сопровождение, 2. տես *հետևում 2* – 1. accompaniment, 2. տես *հետևում 2*

անմիջական ուղեկցում – непосредственное сопровождение – close support

ավիացիոն ուղեկցում – авиационное сопровождение – aircraft escort, aircraft convoy

Հարձակման կրակային ուղեկցման բաղադրիչ, համագորային զորամիավորումներին լրակցված ավիացիոն զորամասերի մարտական գործողություններ, որոնց նպատակն է հակառակորդի պաշտպանության խորությամբ յուրային հարձակվող զորքերին ցույց տրվող անընդմեջ օժանդակությունը՝ հակառակորդի ռեզերվներին հարվածներ հասցնելու եղանակով:

**ուղեկցուրդ** – эскорт – escort, convoy  
Ուղեկցող զինված պահակախումբ, ծածկապաշտպանող խումբ:

**ուղեհարթիչ** – грейдер – grader  
Կցորդվող կամ ինքնագնաց ճանապարհաշինական մեքենա՝ հողը կտրելու, տեղափոխելու և հարթելու համար:

**ուղենիշ** – տես *կողմնորոշիչ*  
Մտավոր մեծություն, որը ռազմավարական նշանակությամբ ձեռնարկումներում ծառայում է որպես կողմնորոշիչ:

**ուղեպահակետ** – блокпост – road block  
Ճանապարհային ուղեկալ՝ տվյալ ճանապարհով տեղի ունեցող երթևեկությունը վերահսկելու համար:

**ուղեղի ցնցում** – сотрясение мозга – concussion, contusion

**ուղեվարական հաշվարկում** – навигационное счисление – dead reckoning

Գտնվելու վայրի ուղեվարական հաշվարկների կատարում:

**ուղեվարություն** – навигация – navigation

Նավերի, թռչող ապարատների, հատուկ և մարտական մեքենաների վարման և օպտիմալ ուղու ընտրության եղանակների մասին գիտություն:

մոտիկ ուղեվարության միջոց – средство ближней навигации – short distance navigational aid

Ուղեվարական սարքավորանք կամ համակարգ, որի գործողության շառավիղը ոչ ավելի է, քան 200 մղոն (320 կմ):

**ուղեվարում** – навигация – navigation

Գործունեություն ըստ ուղեվարության:

**ուղեցուցակ** – дорожная ведомость – waybill

**ուղեցուցորդ** – 1. проводник, разведчик, 2. проводник, гид – 1. scout, 2. guide

1. Ճանապարհի՝ ուղու հետախուզություն կատարող անձ, տեխնիկական միջոց ևն: 2. Անձ կամ տեխնիկական միջոց, որը շարժվում է առջևից՝ ճանապարհը ցույց տալու համար:

**ուղեփոխիչ** – переключатель – switch

Տեխնիկական սարք, որը հնարավորություն է տալիս մտնող հոսանքատար (ջրի, էլեկտրական ևն) կապուղին հաջորդաբար միացնելու մի քանի կապուղիների:

**ուղեփակոց** – տես *արգելափակոց 1*

**ուղեքարտեզ** – путевая карта – route card

**ուղի** – 1. путь, дорога, 2. տես *կապուղի*, 3. տես *հաղորդուղի*, 4. тракт – 1. way, 2. տես *կապուղի*, 3. տես *հաղորդուղի*, 4. tract

1. Գետնին տեղաբաշխված հաղորդակցության երկար շերտ՝ գոտի, երկաթուղագիծ, գազատար ևն: 2. Ուղեծիր, ընթացիկ: 3. Կողմնորոշում, ուղեգիծ:

արգելված ապրանքի ներկրման ուղի – контрабандный путь – trafficking route

Առևտրական շրջանառության համար արգելված ապրանքների (գենք, թմրա-

նյութ, մարդիկ ևն) գաղտնի ներկրման ճանապարհը՝ երթուղին:

զետնավարման ուղի – рулежная дорожка – taxiway

Թռիչքադաշտում առանձնացված ճանապարհներ, որոնք սահմանված են ինքնաթիռների ցամաքային ինքնընթաց տեղափոխման համար՝ թռիչքադաշտի տարբեր հատվածները միմյանց միացնելու նպատակով:

ծովային ուղի – морской путь – shipping lane

հաղորդակցության ուղի – путь сообщения, коммуникация – line of communications, communication

Տրանսպորտային ուղիներ, տեխնիկական շինություններ ու դրանց սարքավորանքը, որոնք ապահովում են փոխադրամիջոցների երթևեկությունը, մի կետից (շրջանից) այլ կետ մարդկանց ու զանազան բնույթի բեռների տեղափոխումը, սովորաբար լինում են ցամաքային (ավտոմոբիլային, երկաթուղային, խողովակաշարային), ջրային և օդային:

մաքսանենգության ուղի – канал контрабанды, контрабандный маршрут – smuggling route

Արգելված կամ մաքսային տուրք չմուծելու համար այլ ապրանքների գաղտնի ներկրում երկիր:

մոտեցման ուղի – տես *մատույց*

ջրային ուղի – водный путь – waterway

ստորգետնյա ուղի – подземный ход – underpass

վերթիռային ուղի – взлетная полоса – take-off runway

տարանցման ուղի – транзитный путь – transit route

1. Երկու կետերի միջև ուղևորների կամ բեռների տեղափոխում միջակա կետերով՝ հաստատված երթուղով: 2. Օդային միջանցք, որն ստեղծվում է յուրային հակաօդային պաշտպանության կամ ցամաքային ուժերից յուրային կամ բարեկամական ուժերին պատկանող ինքնաթիռի անվտանգությունն ապահովելու համար: 3. Ծովային ճանապարհ, որն անցնում է բաց ծովով և

իրար կապում երկու առափնյա ճանապարհները:

**ուղղ հեռախոսակապ** – прямая телефонная связь – telebrief

ՆԱՏՕ-ում. հեռախոսային կապ ավիակարգավարի և թռիչքադաշտում կանգնած ինքնաթիռներում գտնվող անձնակազմերի միջև:

**ուղղաթիռ** – вертолет – helicopter

Թռչող ապարատ, որի ամբարձիչ ուժն ու քարշուժը ստեղծում են մեկ կամ մի քանի պտուտակներ:

ծանր սպառազինություն կրող ուղղաթիռ – тяжело вооруженный вертолет – gunship

հակատանկային ուղղաթիռ – противотанковый вертолет – antitank helicopter, antiarmor helicopter

համակցված ուղղաթիռ – комбинированный вертолет – compound helicopter

Ուղղաթիռ, որն օժտված է հորիզոնական թռիչքի համար նախատեսված շարժիչներով:

մարտական ուղղաթիռ – боевой вертолет – armed helicopter, attack helicopter

տրանսպորտային ուղղաթիռ – транспортный вертолет – transport helicopter

ուղղաթիռի համար միջանցք – коридор для вертолета – helicopter lane

Ուղղաթիռի թռիչքի անվտանգության համար հատկացված օդային միջանցք:

ուղղաթիռի հեռանալու երթուղի – маршрут удаления вертолета – helicopter retirement route

ՆԱՏՕ-ում. որոշակի վայրէջքային կետից կամ գոտուց ուղղաթիռի արտաթռիչքի երթուղին:

ուղղաթիռի վայրէջքի երթուղի – маршрут захода вертолета на посадку – helicopter approach route

Որոշակի վայրէջքային կետին կամ գոտուն ուղղաթիռի մոտենալու երթուղին:

ուղղաթիռների գրոհային խումբ – штурмовая вертолетная группа – helicopter assault force

Ուղղաթիռային հարվածային խումբ:

ուղղաթիռներին վրագետնյա աջակցման խումբ – группа наземной поддержки вертолетов – helicopter support team

**ուղղաթիռադաշտ** – տես *ուղղաթիռակայան*

**ուղղաթիռակայան** – вертодром, вертолетная станция – heliport

**ուղղաթիռակիր** – вертолетоносец – helicopter carrier

**ուղղաթիռավարում** – вертолетождение – helicopter piloting

**ուղղաթիռին սպասման շրջան** – район выжидания вертолета – ready position

Այն վայրը, որտեղ տեղափոխման ենթակա զորքն ու տեխնիկան հավաքվում և սպասում են ուղղաթիռով փոխադրման:

**ուղղահայում մի քանի կետով** – визирование через несколько точек – alignment

Միևնույն գծի վրա գտնվող երկու կամ ավելի տեսանելի օբյեկտների (լապտեր, լույսեր, փարոսներ) ուղղորդում, ինչպես դրանք կարող է տեսնել դիտորդը:

**ուղղաձիգ հենահարթություն** – нулевая плоскость отсчета – reference datum, balance station zero

Ինքնաթիռի քթամասով կամ դրա մոտակայքով անցնող երևակայական ուղղաձիգ հարթություն, որը ինքնաթիռի բեռնման ժամանակ հավասարակշռության պահպանման համար ծառայում է որպես հորիզոնական հեռավորությունների հաշվարկման սկզբնակետ:

**ուղղաձիգ հեռավորություն** – дистанция по вертикали – vertical interval

Երկու կետի կամ առարկաների դիրքերի միջև հեռավորությունն ըստ բարձրության:

**ուղղաձիգ և/կամ կարճ վերթիռ ու վայրէջք** – вертикальный и/или короткий взлет и посадка – vertical and/or short takeoff and landing

**ուղղաձգահողլակ** – гироскоп – vertical gyroscope



Հուլակային սարք, որը նախանշանակված է տարածության մեջ օբյեկտի իրական ուղղաձիգ դիրքը որոշելու համար:

**ուղղել** – 1. տես *ուղղորդել*, 2. տես *նշանառել*

**ուղղիչ** – выпрямитель – rectifier

**ուղղորդել** – 1. наводить, 2. տես *նշանառել* – 1. target, 2. տես *նշանառել*

**ուղղորդիչ** – 1. направляющая, 2. տես *սարք՝ ուղղորդ սարք* – 1. launcher, 2. տես *սարք՝ ուղղորդ սարք*

**ուղղորդված էներգիա** – направленная энергия – directed energy

Կենտրոնացված էլեկտրամագնիսական, ատոմային կամ ենթատոմային ճառագայթի արձակման համար կիրառվող տեխնոլոգիա:

**ուղղորդում** – 1. наведение, наводка, 2. направление – 1. guidance, aiming, targeting, 2. direction

1. Կառավարման եղանակ, որի դեպքում ուժերին (սուզանավ, թռչող ապարատ) կամ զենքին (հրթիռ, տորպեդ) տրվում են շարժման պարամետրներ (արագություն, խորություն, բարձրություն, ուղղույթ), որոնք դրանց դուրս են բերում հակառակորդի՝ խոցման համար նախատեսված օբյեկտից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում հնարավոր է լինում լուծել տրված խնդիրը: 2. Հրանոթի, հրաձգային զենքի փողին այնպիսի դիրքի տրում, որի դեպքում թիրախի խոցումն ապահովվում է մեծ հավանականությամբ:

անմիջական ուղղորդում – непосредственное управление – close control

հրամանատվական ուղղորդում – командное наведение – command guidance

ռադիոտեղորոշումային ուղղորդման սարք – система радиолокационного наведения – radar seeker

Ուղղորդման համակարգ, որում թիրախների վրա խոցիչ տարրերն ուղղելու համար օգտագործվում է ՌՏԿ:

ուղղորդման հաղորդակ – привод наведения – homing device, drive guidance

Սարք, որը փոխանցում է շարժիչի էներգիան փողի, հրթիռների ուղղորդիչին տեղաշարժի համար:

ուղղորդման համակարգ – система наведения – guidance system

ուղղորդման համակարգի վրագետնյա մաս (ուղղորդման կայանի սարքավորանք) – наземная часть системы наведения (оборудование станции наведения) – guidance station equipment

ուղղորդման հիմնական կետ – основная точка наводки – initial aiming point

ուղղորդում հետագծի միջին հատվածում – наведение на среднем участке траектории – midcourse guidance

ուղղորդում հետագծի վերջնամասում – наведение на конечном участке траектории – terminal guidance

**ուղղորոշիչ** – 1. пеленгатор, 2. пеленгационный – 1. direction finder, DF, 2. direction finding

Սարք, որը նախանշանակված է օբյեկտի անկյունային ուղղության որոշման համար:

իրական ուղղորոշիչ – истинный пеленг – true bearing

**ուղղորոշում** – пеленгация – bearing, direction finding

Ազդանշաններ որոնող և հաղորդող ռադիոտեղորոշումային սարքի միջոցով ազդանշանների ընդունում:

կողմնացուցային ուղղորոշում – компасный пеленг – compass bearing

հարաբերական ուղղորոշում – курсовой угол, относительный пеленг – relative bearing

Ուղեվարական հասկացություն. նավի (օդանավի) տրամագծային հարթությանը և դեպի որևէ դիտվող օբյեկտ ուղղությամբ կազմված հորիզոնական անկյուն:

ուղեգծանիշի ուղղորոշում – пеленг створа – transit bearing

ուղղորոշում՝ ըստ կոորդինատային ցանցի – пеленг по координатной сетке – grid bearing



**ուղղվածություն** – направленность – directedness

**ուղղութեամբ** – векторение – aircraft vectoring

Ուղղորդող ուղղությունների տվյալների հիման վրա անձնակազմերին որոշակի ուղղությունների նշանակման միջոցով օդանավերի ուղեվարական ուղղորդման ապահովում:

**ուղղություն** – направление – direction, way

Գիծ կամ ուղեգիծ, որով շարժվելու, նայելու դեպքում անպայման հանդիպում կամ տեսնում ես տվյալ առարկան:

արևելյան ուղղություն – восточное направление – easting

1. Շարժում դեպի արևելք, շարժում արևելյան ուղղությամբ: 2. Քարտեզի վրա՝ ընթերցում ձախից աջ, կողորդինատային կամ աշխարհագրական ցանցի վրա արևելյան ցուցում:

արևմտյան ուղղությամբ շարժվող – движущийся в западном направлении – westbound, westwards

համագործակցության ուղղություն – տես *համագործակցություն՝ համագործակցության ոլորտ*

հիմնական ուղղություն – 1. основное направление, 2. տես *միտում՝ տիրապետող միտում* – 1. main direction, 2. տես *միտում՝ տիրապետող միտում*

հյուսիսային միջօրեականի իրական ուղղություն – տես *հյուսիս՝ իրական հյուսիս*

հրթիռավտանգ ուղղություն – ракетноопасное направление – threat axis

Հրթիռային հարվածի հավանական անկյունային ուղղությունը:

պլանավորման ուղղություն – направление планирования – dimension of planning

ռազմավարական ուղղություն – стратегическое направление – strategic area, strategic axis

ուղղություն դեպի հյուսիս – направление на север – northing

օպերացիոն ուղղություն – операционное направление – line of operation

Ուղղվածության ուղղության մաս, որը ներառում է տեղանքի հատվածը և դրան հարակից ծովային ջրերն ու օդային տարածքը, և որում գտնվում են կարևոր օպերատիվ օբյեկտներ: Դրա սահմաններում տեղաբաշխվում, ծավալվում, իսկ պատերազմի ժամանակ նաև օպերացիաներ են իրագործում (մարտական գործողություններ են վարում) ՋՈՒ-ի տեսակների միավորումները, զորամիավորումները, զորամասերը:

**ուղղում** – 1. корректирование, корректировка, 2. исправление, поправка, 3. поправка, корректив – 1. correction, adjustment, correcting, 2. amendment, 3. correction, allowance

1. Սխալի շտկում՝ ճշտում՝ ճշգրտում: 2. Բարվոքում, ընդունելի՝ ճիշտ դարձնելը: 3. Որևէ ուղղություն տալը, որևէ կողմ՝ տեղ՝ առարկայի դարձնելը, որևէ բանի վրա կենտրոնացնելը: 4. Որևէ պաշտոնական փաստաթղթում (օրենք, կանոնադրություն ևն) փոփոխում կատարելը: 5. Որևէ մեծության՝ չափացույցի փոփոխումը: 6. Որևէ չափացույցի փոփոխման մեծությունը՝ չափը:

**ուղղույթ** – курс – course, vector  
Շարժվող օբյեկտի (նավ, սուզանավ, թռչող ապարատ, ավտոմեքենա, արև ևն) շարժման ուղղությունը:

կողմնացուցային ուղղույթ – компасный курс – compass bearing

Կողմնացուցային միջօրեականով և շարժման ուղղությամբ կազմված անկյուն:

հանդիպական-խաչվող ուղղույթ – встречно-пересекающийся курс – lead collision course

Ուղղույթ, որով շարժվելու դեպքում կործանիչը կբախվի նշանակետի հետ:

հանդիպման ուղղույթ – линия встречи – line of impact

Հանդիպման (պայթյունի) կետում հետագծին տարված շոշափողը:

մարտական ուղղույթ – боевой курс – attack heading

մարտական ուղղույթի անցման կետ – точка выхода на боевой курс – turn-in point

Կետ, որում ինքնաթիռն սկսում է մոտեցման ուղղույթից շրջվել դեպի հարձակման բնագիծ:

մարտական ուղղույթի սկիզբ – начало боевого курса – target approach point

Օդային փոխադրումների ժամանակ հաշվարկման այն ուղեվարական կետը, որի վերևում գտնվող թռչող ապարատն սկսում է իր տարաշարժը վայրէջքի կամ որևէ այլ գոտի մտնելու համար:

նշանակետի ուղղույթ – курс цели – target heading

Նշանակետի շարժման ուղղությունը:

ուղղույթի գիծ – локсодромия – loxodrome

Նավի այնպիսի ուղղույթ, որի դեպքում նա, կատարելով տարաշարժ, նշանակետը մշտապես պահում է իր հաստատուն ուղղությամբ անկյան վրա:

ուշագրավ ուղղույթ – примечательный курс – significant track

Այնպիսի թռչող ապարատի (ինքնաթիռ, հրթիռ ևն) ուղղույթ, որը սովորական չէ, ուստի և ուշադրություն է գրավում ու կարող է պաշտպանվող տարածքի համար վտանգ ներկայացնել:

**ուղղույթաշեղում** – рыскание – yaw

Շարժման ուղղությունից թռչող ապարատի, նավի, ավտոմեքենայի ևն անկյունային շեղումներ՝ հորիզոնական հարթության մեջ ուղղաձիգ առանցքի շուրջը մեքենայի անկյունային թեքումների հետևանքով:

**ուղղույթացույց** – указатель курса – heading indicator

**ուղևորախումբ** – транспортируемая группа – chalk

Մինոսյն փոխադրամիջոցով տեղափոխվող պարաշյուտիստների կամ այլ զինվորների խումբ:

ուղևորախմբի հրամանատար – командир транспортируемой группы – chalk commander

**ուղևորություն** – տես *ճանապարհորդություն*

**ունակություն** – 1. способность, 2. (эп.) емкость – 1. capability, capacity, 2. capacity

**ունեցվածք** – 1. имущество, 2. տես *զինվորական՝ զինվորական գույք* – 1. property, 2. տես *զինվորական՝ զինվորական գույք*

ստորաբաժանման գույքային ունեցվածք – инвентарное имущество подразделения – unit equipment

Ջինվորական ստորաբաժանմանը հատկացված կամ պատկանող սարքավորանք ևն:

**ունեցվածքային պատասխանատվություն** – имущественная ответственность – properties accountability

**ունիվերսալ** – 1. տես *համապիտանի*, 2. универсальный, разносторонний – 1. տես *համապիտանի*, 2. universal

**ունկնդիր** – слушатель – military student, student

Բարձրագույն ռազմաուսմանական հաստատությունում (ռազմական ակադեմիա, համալսարան) վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում սովորող սպա, ինչպես նաև ռազմաթշկական ֆակուլտետում սովորող անձ:

դասընթացի ունկնդիր – слушатель курсов, участник курсов – course participant

**ուշադիրություն** – внимательность – attentiveness

**ուշադրություն** – внимание – attention

ուշադրություն դարձնել – обращать внимание – pay attention

**ուշացում** – տես *հապաղում*

**ուռկանապարկ** – трал – sweep

հատկանման ռուկանապարկ – придонный трал – bottom sweep

**ուսադիր** – погон – epaulet, shoulder-strap  
Ջինժառայողների ուսերին տեղադրվող տարբերանշաններ, որոնք համազգեստի պարտադիր տարրերից են:

**ուսանող** – студент – student

**ուսապանակ** – эполет – epaulet

**ուսապարկ** – ранец – kitbag, knapsack

փոքր ուսապարկ – небольшой рюкзак – daysack

**ուսափոկ** – перевязь – sling

**ուսմունք** – учение, доктрина – theory, doctrine

1. Որևէ մեծ մտածողի հայացքների, տեսակետների ամբողջությունը: 2. Կրոնական վարդապետություն:

**ուսում** – учение – learning

Կրթություն, գիտելիքի փոխանցման և յուրացման կազմակերպված համակարգված գործընթաց:

**ուսումնավարժեցման շարժունակ խումբ** – мобильная группа учебной подготовки – mobile training team

**ուսումնավարժեցնել** – обучать – train

**ուսումնավարժեցում** – обучение – training «Եթե–ապա» սկզբունքով իրավիճակային գիտելիքների հաղորդում և դրանք գործնականում կիրառելու հմտության ձևավորում:

ականների հետ վարվելու ուսումնավարժեցում – обучение обращению с минами – mine awareness training

զինվորական ուսումնավարժեցում – военское обучение – military training

Զինծառայողներին խաղաղ և պատերազմական ժամանակ գործունեության համար անհրաժեշտ կիրառական գիտելիքների փոխանցման և նրանց կողմից յուրացման, նրանց կարողությունների ու հմտությունների ձևավորման կազմակերպված նպատակաուղղված գործընթաց, ինչպես նաև անձնակազմերի, ստորաբաժանումների ևն մարտական ներդաշնակեցում:

**ուսումնավարժվածություն** – обученность – training

Ուսումնավարժեցման արդյունքը, ուսումնավարժված լինելը:

**ուսուցիչ** – учитель – instructor

**ուսուցում** – обучение – training, learning, indoctrination, study

Գործընթաց, որը նպատակաուղղված է վարքի կոնկրետ, դինամիկական բնույթի հմտությունների, ալգորիթմներ-

րի ձևավորմանը՝ հիշողության մեջ «Եթե–ապա» տրամաբանական սխեմաների ամրագրմամբ և գործողությունների կատարման ավտոմատացմամբ, այսինքն՝ անհատի նախապատրաստումն է հայտնի իրավիճակներում գործելուն:

առաջավոր հեռահար ուսուցում – տես *ուսուցում*՝ *առաջավոր հեռավարական ուսուցում*

առաջավոր հեռավարական ուսուցում – продвинутое дистанционное обучение с использованием распределенных систем – advanced distributed learning

կիրառական ուսուցում – прикладное обучение – applied learning

համատեղ միացյալ ուսուցում փոխանակման կարգով – совместное объединенное обучение в порядке обмена – joint combined exchange training

ուսուցման միջոց – средство обучения – training aid

ուսուցման տեխնիկական միջոցներ – технические средства обучения – technical training aids

**ուրան** – уран – uranium

1. Ռադիոակտիվ նյութ (տարր), որն օգտագործվում է տարբեր զինամթերքներում ու զենքերում, միջուկային զենքի հիմնական նյութերից մեկը: 2. (Մեծատառ) Արեգակնային համակարգությունում Արեգակից հեռավորությամբ 7-րդ մոլորակը:

աղքատացված ուրան – обедненный уран – depleted uranium, weapons-grade uranium

հարստացված ուրան – обогащенный уран – enriched uranium

**ուրիշի տարածք ներխուժած** – нарушитель, вторгшийся на чужую территорию – intruder

Մարդ, ստորաբաժանում, նավ, ինքնաթիռ ևն, որոնք առանց թույլտվության մտել են ուրիշի տարածք:

**ուրվագիծ** – контур, абрис – contour

**ուրվանկար** – конфигурация – configuration

Եզրագիծ, արտաքին ստվերագիծ, պատկեր:

երկրի աշխարհագրական ուրվանկար – конфигурация страны – configuration of the country

## Փ (ՓՅՈՒՐ)

**փաթեթ** – пакет, сверток – package, pack

անհատական փաթեթ – индивидуальный пакет – field dressing

**փախստակ** – перебежчик – defector, deserter

**փախստական** – беженец – refugee

Անձ, որը հիմնավոր երկյուղ ունի, որ ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների հետևանքով հալածանքների գոհ է դառնալու, և այդ պատճառով գտնվում է իր քաղաքացիական պատկանելության երկրից դուրս և չի կարող օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ նշված երկրորդի պատճառով չի ցանկանում օգտվել այդ պաշտպանությունից, չի կարող կամ վերը նշված երկրորդի պատճառով չի ցանկանում վերադառնալ իր նախկին սովորական բնակության երկիր:

ապօրինի կերպով նավ սողոսկած փախըստական – беженец, прокрававшийся на борт корабля – stowaway

փախստականների ճամբար – лагерь беженцев – refugee camp

**փախուստ** – побег – escape

փախուստի գծագիր – чертеж побега – evasion chart

փախուստի կազմակերպման պլան – план организации побега – evasion plan of action

փախուստ վտանգից – бегство от опасности – flight

**փակ** – 1. запор, 2. закрытый – 1. lock, 2. closed

**փակադակ** – затвор – bolt, lock

Հրագեղում կիրառվող հարմարանք՝ փողը կողպելու և բացելու, կրակելու համար: Լրացուցիչ կարող է փամփուշտը հասցնել փամփշտանոց և արտանետել կրակված պարկուճը:

երկայնական սահող փակադակ – продольно-скользящий затвор – longitudinally sliding shutter

հրաձգային զենքի փակադակ – затвор стрелкового оружия – shutter of small arms

հրանոթի փակադակ – затвор орудия – breech lock

**փական** – затвор – shutter

Լուսանկարչական ապարատի ևն հարմարանք:

**փականք** – засов – bolt

**փակոց** – ограждение – enclosure, fencing

Ժամանակավոր պատնեշ՝ պարիսպ:

**փակուղի** – 1. тупик, 2. տես *վիճակ՝ անելանելի վիճակ* – 1. cul-de-sac, 2. տես *վիճակ՝ անելանելի վիճակ*

**փակում** – 1. запираение, 2. закрытие, 3. перекрытие – 1. cutoff, 2. closure, 3. cutoff, obstruction

**փակ փուլաշրջան** – замкнутый цикл – closed cycle

**փամփշտաժապավեն** – патронная лента – belt, cartridge-belt

**փամփշտակալ** – патронташ – 1. cartridge-belt, 2. bandolier

Զինվորական հանդերձանքի առարկա. միլիցքանի անհատական հրազենի համար պայուսակ կամ գոտի՝ փամփուշտների համար առանձին բջիջներով:

ուսավորակային փամփշտակալ – нагрудный патронташ – bandoleer

**փամփշտանոց** – патронник – chamber, cartridge chamber

Հրագեղի մաս՝ լիցքային խցիկ:

**փամփշտապարկ** – патронная сумка – pouch

**փամփուշտ** – патрон – cartridge, holder  
Հրազենի զինամթերք, որում գնդակը (արկը, կոտորակը), նետիչ լիցքը և բոցավառիչ միջոցը պարկուճով միավորված են՝ կազմելով մեկ ամբողջություն:

անգնդակ փամփուշտ – холостой патрон, холостой выстрел – blank round

անգնդակ փամփուշտներով կրակելու հարմարանք – приспособление для стрельбы холостыми патронами – blank-firing attachment

Ավտոմատ կամ կիսավտոմատ զենքին ամրացվող սարք, որը հնարավորություն է տալիս կրակելու անգնդակ փամփուշտներով:

անպարկուճ փամփուշտ – безгильзовый патрон – caseless ammunition

գնդակային փամփուշտ – пулевой патрон – bulletted blank

լուսավորիչ փամփուշտ – осветительный патрон – flare

մարտական փամփուշտ – боевой патрон – live cartridge

Լիցքավորված ու հանդերձված փամփուշտ, որը նախանշանակված է մարտական գործողություններում օգտագործման համար:

սեղմիչ փամփուշտ – зажимной патрон – chuck

**փայլ** – блеск, сияние – sparkle

**փայլատակում** – сверкание – sparkle

**փառք** – слава – glory

**փաստաթուղթ** – документ – document  
Օրենքով սահմանված կարգով կազմված ակտ, որը հաստատում է իրավաբանական փաստը կամ տալիս է որևէ բանի իրավունք:

բնագրային փաստաթուղթ – подлинный документ – authentic document

ծառայողական փաստաթուղթ – служебный документ – official document, official records

կանոնակարգող փաստաթուղթ – регламентирующий документ – regulating document

նորմատիվ փաստաթուղթ – нормативный документ – normative document

պլանային փաստաթուղթ – տես *պլանավորում` պլանավորման փաստաթուղթ*

վարչակազմակերպական փաստաթուղթ – административно-организационный документ – administrative document

օպերատիվ փաստաթուղթ – оперативный документ – operational document

**փարոս** – маяк – beacon

«**Փեյվուեյ**» – «Пейвудей» – Paveway  
Լազերային ճառագայթով ուղղորդվող ամերիկյան ռումբ:

«**Փետրիոտ**» – «Пэтриот» – “Patriot”  
«Երկիր-օդ» դասի ամերիկյան հրթիռ:

**փլատակ** – развалины, руины – debris, wreck

**փլուզում** – распад, развал, обрушение – breakup, collapse  
Ավերում, փլում, քայքայում, կործանում:

**փնտրում** – տես *որոնում*

**փշաժապավեն** – заградительный еж, лента с шипами – caltrops  
Արգելափակոցային հակահետևանքային և հակատրանսպորտային հարմարանք՝ ժապավեն, որի վրա կան չորս կողմ ուղղված սուր փշեր:

ամրանավորված փշաժապավեն – армированная колючая лента – razor wire

**փշալար** – колючая проволока – barbed wire

**փոթորիկ** – шторм – storm

«Փոթորիկ անապատում» – «Буря в пустыне» – “Desert Storm”

փոշե փոթորիկ – пыльная буря – dust storm  
Փոշու խիտ ամպեր առաջացնող ուժեղ քամի:

**փոթորկագույժ նախազգուշացում** – штормовое предупреждение – storm warning

**փոթորկանք** – шквал – squall

**փոխադրաման** – канистра – canister

**փոխադրահամար** – номер грузокomплекта – chalk number

Միևնույն փոխադրամիջոցով տեղափոխվող բեռներին և այդ փոխադրամիջոցին տրված համարը:

**փոխադրամիջոց** – տես *տրանսպորտ*

անվավոր փոխադրամիջոց – колесное транспортное средство, колесная машина – wheeled vehicle

բեռնատար փոխադրամիջոց – транспортное средство, грузовое средство – carrier

միտեղանի փոխադրամիջոց – одноместное транспортное средство – single-seater

սանիտարական փոխադրամիջոց – санитарное транспортное средство – ambulance

Վիրավորներին կամ հիվանդներին դեպքի վայրից հիվանդանոց (հոսպիտալ) տեղափոխելու համար նախատեսված հատուկ սարքավորված փոխադրամիջոց՝ մեքենա, ինքնաթիռ, նավ ևն:

սովորական փոխադրամիջոց – обычный транспорт – ordinary transport

Փոխադրամիջոց, որի բնութագրերը չեն ենթադրում որևէ լրացուցիչ միջոցի կամ սարքավորանքի օգտագործում:

ստրատեգիական փոխադրամիջոց – стратегический транспорт – strategic transport

փոխադրամիջոցը շարքից հանել – вывести из строя транспортное средство – knock out

փոխադրամիջոցի բեռնատարություն – грузоподъемность транспортного средства – transport capacity

փոխադրամիջոցի վիճակի մասին տեղեկություններ – сведения о состоянии транспортного средства – vehicle state

փոխադրամիջոցի տարողություն – вместимость транспортного средства – transport capacity

փոխադրամիջոցի և բեռի ընդհանուր կշիռ – вес транспортного средства и груза – gross weight

փոխադրամիջոցների կանգառման շրջան – район стоянки транспорта – transport area

Այն տարածքը, որտեղ ափհանման ժամանակ կանգնում են փոխադրամիջոցները:

փոխադրամիջոցների պահանջարկ – потребность в транспортных средствах – movement requirement

օդային փոխադրամիջոցների պահանջմունք – потребность в воздушном транспорте, потребность в самолетах для воздушной перевозки – airlift requirement

**փոխադրաբեռ** – фрахт – freight

Վարձված նավով, մեքենայով կամ օդանավով տեղափոխվող բեռներ:

**փոխադրավարձ** – фрахт – freight

Փոխադրամիջոցով բեռներ փոխադրելու համար մուծվող վճար:

**փոխադրելիություն** – транспортабельность, перевозимость – transportability

**փոխադրիչ** – транспортер – carrier

**փոխադրություն** – տես *փոխադրում*

**փոխադրում** – 1. перевод, 2. перенос, перевозка, транспортировка – 1. conversion, 2. transfer, 3. transport, transportation

1. Կազմակերպված տեղափոխում մի կետից՝ վայրից ևն այլ կետ: 2. Կազմակերպված տեղափոխություն մի վիճակից՝ կարգավիճակից՝ հասարակարգից՝ հաստատությունից՝ համակարգից ևն մեկ այլ վիճակի՝ համակարգի ևն: 3. Նյութական (գերազանցապես՝ դրամական) միջոցների փոխանցում, առաքում (փոստով): 4. Որևէ մեծության վերահաշվարկում այլ միավորներով:

զինվորական փոխադրումների աղյուսակ – таблица военных перевозок – movement table

զինվորական փոխադրումների մասին ցուցումնագիր – директива о воинских перевозках – movement directive

զինվորական փոխադրումների չվացուցակ – график перевозок – movement schedule

զինվորական փոխադրումների պլանավորում – планирование воинских перевозок – deployment planning

Օպերատիվ պլանավորում, որը ներառում է զինված ուժերի և ռեսուրսների՝ իրենց նախնական վայրերից օպերատիվ գործողությունների տարածք տեղափոխելը:

ընդհանուր փոխադրումներ – общие перевозки – common-user transportation

թիկունքային փոխադրումներ – тыловые перевозки – administrative movement

ծովային փոխադրումներ – морские перевозки – shipping

ծովային փոխադրումների ընդհանուր ծառայություն – общая служба морских перевозок – common-user sealift

կանոնավոր երկկողմ օդային փոխադրումներ – регулярные двусторонние воздушные перевозки – channel airlift

մարտավարական օդային փոխադրումներ – тактические авиатранспортные перевозки – tactical air transport operations

մեծածավալ փոխադրումներ – տես *փոխադրում՝ ռազմավարական փոխադրումներ*

մեծածավալ օդային փոխադրումներ – տես *փոխադրում՝ ռազմավարական օդային փոխադրումներ*

ռազմական փոխադրում – воинские перевозки, военные перевозки – military transport, military transportation

Ջորջերի, զինախմբերի, առանձին զինծառայողների, ռազմական՝ զինվորական բեռների կազմակերպված տեղափոխում մի շրջանից մյուսը՝ տարբեր տեսակի փոխադրամիջոցների օգտագործմամբ:

ռազմական փոխադրումների ամփոփագիր – сводка о военных перевозках – deployment report

ռազմական փոխադրումների կառավարում – управление военными перевозками – movement control

ռազմավարական փոխադրումներ – стратегические перевозки, стратегические переброски – strategic transport

ռազմավարական օդային փոխադրումներ – стратегические воздушные перевозки – strategic air transport operations

փոխադրման հրաման – приказ на перевозку – movement order

փոխադրման տեսակ – вид транспортировки – mode of transport, means of transport

փոխադրման տվյալներ – данные по перевозке – movement data

փոխադրումների (զինվորական) կառավարման կետ – пост управления (воинскими) перевозками – movement control post

փոխադրումների կառավարման խումբ – группа управления перевозками – movement control team

փոխադրումների համար պատասխանատու – ответственный за перевозки – movement control officer

փոխադրումների հերթականություն – очередность перевозок – movement priority

փոխադրումների միացյալ կենտրոն – объединенный центр перевозок – joint movement center

փոխադրումների պահանջումը – потребность в транспортных средствах – transportation movement requirement

Որոշակի ժամանակահատվածում զինվորական ստորաբաժանման, սարքավորանքի կամ մատակարարումների տեղափոխման անհրաժեշտություն:

օդային փոխադրումները վերահսկող խումբ – группа контроля за воздушными перевозками – airlift control team

օդային փոխադրումների ընդհանուր ծառայություն – общая служба воздушных перевозок – common-user airlift service

օդային փոխադրումների չվացուցակ – график воздушных перевозок – air movement table



**փոխազդեցություն** – взаимодействие – 1. unity of effort, 2. cooperation, 3. coordination, 4. interaction

Կարգ, որն արտացոլում է միմյանց վրա օբյեկտների ներգործության պրոցեսները, դրանց փոխպայմանավորվածությունը և մի օբյեկտից մյուսի առաջացումը:

**փոխակերպում** – преобразование – transformation

**փոխանցում** – 1. передача, 2. տես *բաշխում* – 1. transfer, transmission, 2. տես *բաշխում*

Որևէ բանի տեղափոխում՝ փոխադրում մեկից մյուսին:

լիազորությունների փոխանցում – делегирование полномочий, передача полномочий – delegation of authority, transfer of authority

հորիզոնական փոխանցում – горизонтальная передача – cross-leveling

փոխանցման մեխանիզմ – передаточный механизм – transmitter

փոխանցում ներքին կապալի – տես *ինտրափնդ*

**փոխանցումատուփ** – коробка передач – transmission

**փոխաջակցում** – տես *աջակցություն*՝ *փոխադարձ աջակցություն*

**փոխարինիչ** – заместитель – substitute

**փոխարինող** – замещающий – substitute

**փոխարինում** – 1. замена, 2. տես *տեղակալում 2* – 1. replacement, 2. տես *տեղակալում 2*

**փոխգնդապետ** – подполковник – lieutenant-colonel, half-colonel

Մեծ թվով պետություններում ավագ սպայի զորային զինվորական կոչում (աստիճան):

**փոխգործելիություն** – интероперабельность, оперативная совместимость – interoperability

Այլ համակարգերի հետ համահունչ՝ ներդաշնակորեն, առանց հակասությունների ու համակարգային խաթարումների գործելու կարողություն՝ պայմա-

նավորված կառուցվածքային սկզբունքների ու գործելակերպի համատեղելիությամբ:

- emergent goal – see *surface target*
- emission – 1. արտանետվածք, 2. արտանետում, 3. առաքում, արտասորում, 4. թողարկում (դրամանիշների, արժեթղթերի ևն)
- emission control – 1. ռադիոթողարկում, 2. ռադիոմիջոցների աշխատանքի վերահսկում
- emission security – տվյալների հաղորդման գաղտնիություն
- emplacement – 1. կրակային դիրք, 2. տեղակայում դիրքում, 3. զետեղում, տեղադրում, տեղավորում
- employ – see *enable*
- employee – աշխատող
- employment – 1. մարտական կիրառություն, 2. գործարկում
- employment of forces – ուժերի (զորքերի) մարտական կիրառում
- employment planning – ուժերի և միջոցների կիրառման պլանավորում
- empty case – կրակված պարկուճ
- enable – գործարկել
- enabling force – ծավալումն ապահովող ուժեր
- encampment – see *camp 1*
- enciphering – see *encryption*
- encirclement – շրջապատում
- encirclement battle – մարտ շրջափակման մեջ
- enclave – անկլավ
- enclosure – փակոց
- encoding – 1. see *encryption*, 2. կոդավորում
- encounter – 1. անսպասելի հանդիպում, 2. անսպասելի գոտեմարտ
- encounter battle – see *meeting engagement*
- encryption – գաղտնագրում, ծածկագրում
- encryption of information – տեղեկության գաղտնագրում
- endemic – 1. տեղային, 2. see *endemic disease*
- endemic disease – տեղաճարակ
- end item – պատրաստի արտադրանք
- end of exercise – զորավարժության ավարտ
- end of mission – նշանակետի կրակակոծման ավարտ
- end state – օպերացիայի վերջնական ռազմաքաղաքական արդյունք
- end-to-end – լրիվ փուլաշրջան, ծայրից ծայր
- endurance – ընթացապաշար
- endurance distance – օպտիմալ բանելակարգով հեռագնացություն, վառելիքի տվյալ պաշարով և խնայողական արագությամբ հեռագնացությունը
- endurance speed – խնայողական արագություն
- endurance time – օպտիմալ բանելակարգով շարժման տևողությունը

enemy – 1. թշնամի, 2. հակառակորդ, 3. թշնամու ուժեր, հակառակորդի ուժեր, 4. թշնամական

enemy capabilities – հակառակորդի հնարավոր գործողություններ

enemy combatant – հակառակորդի ռազմիկ, հակառակորդի կոմբատանտ

enemy lines – հակառակորդի արաջնային դիրքեր

enemy troops – հակառակորդի զորք

energetic material – էներգիական նյութ

“Energia-Buran” – «Էներգիա-Բուրան»

energy – 1. էներգիա, 2. see *power 1*

energy security – էներգետիկ անվտանգություն

enfilade fire – երկայնական կրակ

enforcement – 1. պարտադրում, հարկադրում, 2. խաղաղության պարտադրում, 3. իրավակիրառում

enforcement of martial law – ռազմական դրության ռեժիմի ապահովում

engage in combat – see *join the battle*

engagement – 1. see *fight 2*, 2. մարտական աշխատանք, 3. ներգրավում, 4. see *fire fight 1*

engagement area – փոխհրաձգության դաշտ

engagement authority – 1. կրակ բացելու թույլտվություն տալու լիազորություն, 2. կրակ բացելու թույլտվություն

engagement control – կրակակրծման կառավարում

engaging in battle – see *introducing into battle*

engine – 1. շարժիչ, 2. մեքենա

engineer – 1. ինժեներական զորքերի զինծառայող, 2. նավի մեխանիկ

engineer commander – ինժեներական ծառայության պետ

engineering – 1. մեքենաշինություն, 2. շինարարություն, 3. Ճարտարագիտություն,

ինժեներություն, 4. տեխնիկա, 5. see *technical 1*

engineering implementation section – ինժեներատեխնիկական նախագծերի իրացման բաժին

engineering psychology – ճարտարագիտական հոգեբանություն

engineering service – 1. ինժեներատեխնիկական ապահովում, 2. see *engineer support*

engineering training of troops – զորքերի ինժեներական պատրաստում

engineer reconnaissance – ինժեներական հետախուզում

engineer support – ինժեներական ապահովում

engineer support plan – ինժեներական ապահովման պլան

engineer troops – ինժեներական զորքեր, ճարտարագործական զորքեր

engine failure – շարժիչի խափանում

engine temperature indicator – շարժիչի ջերմաստիճանի ցուցիչ

engine-transmission compartment – see *motor and transmission compartment*

engine trouble – շարժիչի անսարքություն

enhanced dialogue – խորացված երկխոսություն

enlisted man – ոչ սպա զինծառայող

enlistment – 1. ընդունում զինվորական ծառայության, 2. պայմանագրային ծառայության ժամկետ

enquiry – հետաքննություն

enriched uranium – հարստացված ուրան

enrollment – անցում զինվորական ծառայության

ensign – 1. see *flag*, 2. դրոշակակիր, 3. see *warrant officer*, 4. ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի լեյտենանտ (ամենացածր կոչումը)

ensuring of security – անվտանգության ապահովում

- entanglement – 1. see *barrage 1*, 2. see *barbed-wire entanglement*
- enter – մուտք
- enter a combat formation – ծավալում մարտակարգի
- enterprise – ձեռնարկություն
- entity – 1. օբյեկտ, 2. սուբյեկտ, կազմավորում
- entrance – մուտք
- entrench – խրամատ փորել
- entrenching – 1. ամրացում, ամրապնդում, 2. ամրագրում, 3. խրամատավորում
- entrenching tool – see *digging tool*
- envelopment – 1. շրջանցում, թիկնանցում, 2. պարուրում, պատում
- environment – 1. միջավայր, 2. շրջակա միջավայր
- environmental baseline survey – շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն
- environmental considerations – շրջակա միջավայրի պայմանների հաշվառում
- environmental safety – see *ecological security*
- environs – շրջակայք
- envoy – դեսպանորդ
- epaulet – 1. ուսադիր, 2. ուսապանակ
- epaulette – see *epaulet*
- epidemic – 1. համաճարակային, 2. see *epidemy*
- epidemy – համաճարակ
- equal area projection – հավասարամեծ պրոյեկցիա
- equal treatment – սեռային իրավահավասարության ապահովում
- equipment – 1. սարքավորանք, 2. ապարատուրա, 3. see *outfit*, 4. see *weapons and military equipment*, 5. see *equipping 2*
- equipment adjustment – տեխնիկայի հարմարեցում մարդուն
- equipment availability – տեխնիկական զինվածություն
- equipment casualty evacuation – վնասված տեխնիկայի տարահանում
- equipment collection point – ռազմական տեխնիկայի հավաքակայան
- equipment destruction control – ռազմական տեխնիկայի ոչնչացման վերահսկում
- equipment destruction inspection – ռազմական տեխնիկայի ոչնչացման տեսչություն
- equipment reception point – տեխնիկայի ընդունման կետ
- equipment technology for military personnel – տեխնիկայի ամրագրում զինծառայողին
- equipping – 1. զինում, 2. սարքավորում, 3. հանդերձում
- equity – see *capital 2*
- equity method – մասնակցության մեթոդ
- error – see *mistake*
- error signal – սխալի ազդանշան
- escadrille – see *squadron 1*
- escalation – աճում, ծավալում
- escalation of aggression – ագրեսիայի ծավալում
- escalation of war – պատերազմի ուժգնացում, պատերազմի թեժացում
- escape – 1. փախուստ, 2. see *leakage 1*
- escape capsule – վթարային փրկարարական պատիճախցիկ
- escapee – գերությունից փախած
- escarpment – զառիվերակ, լեփ
- escort – 1. ուղեկցորդ, 2. see *convoy 3*
- espionage – լրտեսություն
- esprit de corps – մեկուսախմբային ոգի, համագգեստի պատիվ
- essential care – անհրաժեշտ բուժօգնություն
- essential cargo – 1. see *essential supply*, 2. առաջնահերթ բեռ



- essential elements of friendly information – հիմնական հետախուզական տեղեկություններ յուրային ուժերի և միջոցների մասին
- essential elements of information – կարևոր հետախուզական տվյալներ
- essential supply – առաջին անհրաժեշտության ապրանքներ
- essential task – կարևոր առաջադրանք
- established financial limits – սահմանված ֆինանսական լիմիտներ
- establishment – 1. see *institute* 2, 2. հիմնում, հիմնադրում, 3. հիմնարկ, 4. կազմակերպահաստիքային ցուցակ, 5. ղեկավար օղակ, կառավարող շրջաններ, 6. հաստատում
- estate – տիրույթ, կալվածք
- esteem – see *honor* 1
- estimate – 1. գնահատական, 2. see *assessment*, 3. նախահաշիվ
- estimate of terrain – տեղանքի գնահատում
- estimate of the situation – իրադրության գնահատում
- estimated time of arrival – ժամանման պլանավորված ժամանակ
- estimate time of departure – մեկնման պլանավորված ժամանակ
- estimative intelligence – գնահատումների հիման վրա ստացված հետախուզական տեղեկույթ
- eternal flame – հավերժ կրակ
- ethnic – 1. էթնիկ, 2. էթնիկական, 3. ազգային
- ethnic cleansing – էթնիկական զտում
- ethnic fragmentation – էթնոհատվածայնացում
- ethnic group – էթնիկ խումբ
- ethnic instability – էթնիկական անկայունություն
- ethnic interests – էթնիկական շահ
- ethnic isolation – էթնիկական առանձնություն
- ethnic minority – ազգային փոքրամասնություն
- ethnic politology – էթնոքաղաքագիտություն
- ethnic security – էթնիկական անվտանգություն
- ethnic violence – էթնիկական բռնություն
- ethnic weapon – see *genetic weapon*
- ethnopolitical conflict – էթնոքաղաքական հակամարտություն
- EUCOM – see *European Command*
- Euro-Atlantic Disaster Response Coordination Center – Աղետների արձագանքման եվրաստլանտյան համադասող կենտրոն
- Euro-Atlantic Integration and Partnership Directorate – Եվրաստլանտյան ինտեգրման և գործընկերության վարչություն
- Euro-Atlantic Partnership Council, EAPC – Եվրաստլանտյան գործընկերության խորհուրդ, ԵԱԳՀ
- “Eurofighter” – see “*Typhoon*”
- European Command – Եվրոպական հրամանատարություն
- European Security and Defense Identity – անվտանգության և պաշտպանության բնագավառի եվրոպական բաղադրիչ
- (the) European Union – Եվրոպական Միություն, Եվրամիություն, ԵՄ
- evacuation – տարահանում
- evacuation procedure – see *evacuation*
- evacuee – տարահանված անձ
- evader – գերեվարումից խուսափած անձ
- evaluation – 1. արժեքավորում, 2. գնահատում
- evaluation agent – արժեքավորող գործակալություն
- evaluation and feedback – արժեքավորում և արձագանք

- evasion – 1. խուսափման տարաշարժ, 2. շրջանցում
- evasion aid – օգնություն գերությունից խուսափողին
- evasion and escape – 1. ելք հակառակորդի տարածքից, 2. հակառակորդից պոկվելը, 3. արժում հակառակորդի հետապնդումից
- evasion chart – փախուստի գծագիր
- evasion plan of action – փախուստի կազմակերպման պլան
- evasive maneuver – հակազենիթային տարաշարժ, ՀՁՏ
- evening roll call – երեկոյան անվանականչ
- event – իրադարձություն, դեպք
- event time – իրադարձության տեղի ունենալու ժամանակը
- event matrix – իրադարձությունների մատրից
- event template – քայլերի ձևանմուշ
- examination – 1. քննում, ստուգում, 2. հետազոտություն, 3. քննություն, 4. see *interrogation*
- exceptional transport – արտակարգ բեռնափոխադրում
- exchange of shots – see *skirmish 1*
- exclusion zone – արգելված շրջան
- exclusive economic zone – բացառիկ տընտեսական գոտի
- execute order – օպերացիայի անցկացման հրաման, օպերացիան սկսելու հրաման
- executing commander – միջուկային զենք կիրառելու հրաման ստացած՝ ռազմավարական օղակի հրամանատար
- execution – 1. մահապատիժ, 2. կատարում, իրագործում
- (The) executive – see *executive power*
- executive – 1. գործադիր, 2. see (the) *executive power*
- executive agent – գործադիր ներկայացուցիչ
- Executive Management Division – վարչատնտեսական վարչություն
- executive power – գործադիր իշխանություն
- exemption – ազատում
- exemption from military service – ազատում զինվորական ծառայությունից, զինծառայությունից ազատում
- exercise – 1. զորավարություն, 2. վարժություն
- exercise analysis report – զորավարության մասին վերլուծական հաշվետվություն
- exercise area – զորավարությունների տարածք
- exercise commander – զորավարության հրամանատար
- exercise concept – զորավարության մտահղացում
- exercise control group – զորավարությունում միջնորդների խումբ
- exercise directing staff – 1. զորավարության ղեկավար խումբ, 2. զորավարության շտաբ
- exercise director – զորավարության ղեկավար
- exercise expert – զորավարության անցկացման գծով փորձագետ
- exercise incident – ներածական
- exercise instruction – զորավարության անցկացման հրահանգագիր
- exercise manual – զորավարությունների անցկացման ղեկավար ձեռնարկ
- exercise of power – իշխանության իրականացում
- exercise operations plan – զորավարության անցկացման հրաման
- exercise participant – զորավարության մասնակից
- exercise plan – զորավարության պլան
- exercise planning and performance instructions – զորավարության պլանավոր-

ման և անցկացման վերաբերյալ հրահանգագիր

exercise planning directive – զորավարժության պլանավորման ցուցումնագիր

exercise planning instructions – զորավարժության պլանավորման հրահանգագիր

exercise player – see *exercise participant*

exercise program – զորավարժության ծրրագիր

exercise review – see *after-action review 1*

exercise scenario – զորավարժության սցենար

exercise schedule – զորավարժության օրացույց

exercise serial – զորավարժության փուլ

exercise specifications – զորավարժության անցկացման հիմնական պահանջներ

exercise sponsor – զորավարժության կազմակերպիչ

exercise study – 1. see *wargame 2*, 2. սեմինար, 3. ուսումնական պարապմունք, 4. վարժանք

exercise summary – զորավարժության արդյունքներ

exfiltration – արտասողոսկում

exhaust – արտանետվածք

exhaustion – ուժասպառություն, հյուժում

exhaust pipe – արտանետիչ խողովակ

expansion – զավթողագործություն

expected value – մաթեմատիկական սպասում

expedition – 1. արշավ, 2. ռազմարշավ

expeditionary brigade – արշավագորային բրիգադ

expeditionary force – ռազմարշավային ուժեր, արշավագոր

expeditionary operation – արշավագորային օպերացիա

expeditionary unit – արշավագորային գումարտակ

expellee – հարկադրաբար հայրենադարձվող

expelling charge – արտանետիչ լիցք

expenditure – ծախս

expendable supplies – մատակարարման սպառվող առարկաներ

expendable supplies and materials – մատակարարման սպառվող առարկաներ և նյութական միջոցներ

experience – փորձ

experienced personnel – փորձառու անձնակազմ, պատրաստված անձնակազմ

experiment – գիտափորձ, փորձ

expert care – see *expert specialized medical aid*

expertise – 1. փորձաքննություն, 2. see *competence 3*

expert specialized medical aid – մասնագիտացված բուժօգնություն

expert system – փորձագիտական համակարգ

explanatory note – բացատրական գրություն

exploder – պայթուցիչ

exploitation – 1. see *operation 3*, 2. հաջողության զարգացում, 3. տեղեկության առավելագույն օգտագործում

explosion – պայթյուն

explosion hazard – պայթյունավտանգություն

explosion risk – պայթյունավտանգություն

explosive – 1. պայթուցիկ, պայթուցիկ նյութ, 2. պայթյունավտանգ

explosive cargo – պայթյունավտանգ բեռ

explosive hazard – 1. see *explosion hazard*, 2. պայթյունավտանգ առարկա

explosive hazard incident – պայթյունի վտանգի հավանականություն

explosive injury trauma – see *mine blast trauma*

explosively formed projectile – հարվածա-  
յին միջուկ, արկակազմիչ լիցք

explosive ordnance disposal – զինամթեր-  
քի օգտահանում

explosive ordnance disposal incident –  
պայթյունավտանգ առարկաների վնասա-  
զերծման հետ կապված միջադեպ

explosive ordnance disposal procedures –  
պայթյունավտանգ առարկայի վնասա-  
զերծման ընթացակարգ

explosive ordnance disposal unit – պայթ-  
յունավտանգ առարկաների վնասազերծ-  
ման ստորաբաժանում

explosive ordnance reconnaissance – պայ-  
թյունավտանգ օբյեկտների հետախուզում,  
պայթյունավտանգ առարկաների հայտ-  
նաբերում

explosive power – պայթյունի հզորություն

explosive reactive armor – ակտիվ-ռեակ-  
տիվ զրահ

explosive train – կրակային շղթա (պայթու-  
ցիչ)

export – արտահանում

exposure – 1. լուսակայում, 2. *see irradiation*,  
3. հնարավոր կորուստների ռիսկ

exposure station – *see air station 2*

ex-serviceman – նախկին զինծառայող,  
զորացրված անձ

extended order – ցրիվ շարք

extension of military service term – զինծա-  
ռայության ժամկետի երկարացում

extent of a military exercise – զորավար-  
ժության մասշտաբներ

exterior – 1. արտաքին, արտաքին տեսքը,  
2. դրսույթ

extermination – բնաջնջում, ոչնչացում

exterminatory – կործանիչ, կործանող

external – *see foreign 3*

external asymmetrical threat – արտաքին  
անհամաչափ սպառնալիք

external audience – արտաքին լսարան

external interests of national security –  
ազգային անվտանգության արտաքին  
շահ

external reinforcing force – արտաքին օգ-  
նական ուժ

external security – արտաքին անվտան-  
գություն

external support contract – արտաքին  
ապահովման պայմանագիր

external symmetrical threat – արտաքին  
համաչափ սպառնալիք

external threat – արտաքին սպառնալիք

extraction – 1. հանուկ, մզվածք, 2. հեռա-  
ցում օպերացիայի շրջանից

extraction drop – բեռների արտածում

extraction force – տարահանման ուժեր

extraction of information – տեղեկույթի ար-  
տազատում

extraction parachute – արտածոյի պա-  
րաշյուտ

extraction zone – արտածոյման բեռնա-  
թափման գոտի

extra food rations – հավելյալ օրապահիկ

extraterrestrial – այլմոլորակային (էակ),  
տիեզերական եկվոր

extraterritoriality – արտերկրայնություն

extremism – ծայրահեղականություն

## F

fabric – *see material*

fabrication – կեղծում, մոզոնում

fabricator – կեղծիչ

face – դեմք

face-off – *see confrontation 1*

facilitator – միջնորդ

facilities – see *services 2*

facility – 1. կառույց, շինություն, 2. see *device 1*, 3. հարմարություններ, ծառայություններ

fraction – անջատախումբ

factor – 1. գործոն, 2. see *coefficient*

factor of domestic security – ներքին անվտանգության գործոն

factor of internal security – see *factor of domestic security*

factor of international security – միջազգային անվտանգության գործոն

factor of national security – ազգային անվտանգության գործոն

factor of regional security – տարածաշրջանային անվտանգության գործոն

factory test – գործարանային փորձարկում

failure – խափանում

fairing – շրջիոսիջ

fair value – իրական արժեք

faithful representation – հավաստի (իրական) ներկայացում

fake – see *imitation*

fall – 1. անկում, 2. կործանում, անկում, հակառակորդի կողմից նվաճում, 3. ճախարակաճոպան, 4. ճոպանածայր, 5. գոհվել՝ սպանվել (մարտում)

fall back – see *retreat*

fall in – շարք կանգնել

fall in battle – see *fall 5*

fall of shot – արկի անկման տեղը

“Fall out” – «Ցրվել»

fall out – թողնել շարքը

fallout – 1. ռադիոակտիվ տեղումներ, 2. բացասական հետևանք

fallout contours – ռադիոակտիվ տեղումների շրջանի սահմաններ

fallout pattern – ռադիոակտիվ աղտոտվածության շրջանի գծապատկեր

fallout wind vector plot – ռադիացիոն իրադրության կանխատեսման համար քամու ուղղության և ուժի տրամագիր

fall upon – հարձակվել

false origin – կոորդինատների պայմանական ելքային սկզբնակետ

fame of war – see *military glory*

family – ընտանիք

family allowance – ընտանեկան նպաստ

family leave – see *compassionate leave*

family violence – բռնություն ընտանիքում (*հոգեբ.*)

fan marker beacon – հովհարային ռադիոփարոս

fascine – ճեղան

fascism – ֆաշիզմ

fast – see *rapid*

fast attack vehicle – արագագնաց դեսանտային մեքենա

fastening – see *attachment 1*

fatherland – see *homeland*

fatigue – 1. խնջություն, 2. see *fatigue duty*

fatigue duty – զինտնտեսական աշխատանք

fatigues – աշխատանքային արտահագուստ, զինծառայողի բանելազգեստ

fault – վրիպում

FAV – see *fast attack vehicle*

fear – վախ

feasible – see *potential 2, 3*

feasibility – իրագործելիության չափանիշ

feasibility assessment – կիրառելիության գնահատում

feasibility study – 1. ռազմատնտեսական հիմնավորում, 2. տեխնիկատնտեսական հիմնավորում

feat – սխրանք

- feature – ռելիեֆի տարր, տեղական առարկա
- feedback – տաքք
- Federal Assembly of the Russian Federation – Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողով
- feint – կեղծ գրոհ
- fence – ցանկապատ, չափառ
- fencing – see *enclosure*
- ferry – 1. լաստանավ, 2. ջրանցում, 3. see *crossing 4*
- fever – տենդ
- F-hour – «Ժ+» ժամ
- fiasco – ֆիասկո, լիակատար ծախողում
- fiducial mark – see *collimating mark*
- field – 1. դաշտ, 2. see *battlefield*, 3. դաշտային, 4. ռազմադաշտային, 5. արշավային
- field ambulance – դաշտային բուժկետ
- field army – 1. դաշտային բանակ, 2. գործող բանակ
- field artillery – դաշտային հրետանի
- field communications center – կապի դաշտային հանգույց
- field control – հիմնական հենացանց
- fieldcraft – դաշտային պատրաստակալություն
- field court-martial – see *drumhead court-martial*
- field dressing – անհատական փաթեթ
- field engineer – see *sapper 1*
- field engineering – դաշտային ռազմահինժեններական գործ
- field exercise – դաշտային զորավարություն
- field firing – see *combat firing*
- field firing range – մարտական հրաձգության զորավարժարան
- field forces – see *combat forces*
- field fortification – դաշտային ամրաշինություն
- field-glasses – դաշտային հեռադիտակ
- field gun – դաշտային հրանոթ
- field hospital – դաշտային հոսպիտալ
- field kitchen – դաշտային խոհանոց, երթային խոհանոց, շարժական խոհանոց
- field manual – մարտական կանոնադրություն, դաշտային կանոնադրություն
- field marshal – ֆելդմարշալ
- field officer – ավագ սպա
- field of fire – կրակակրծման շրջան
- field of fixation – հայեցադաշտ
- field of view – տեսադաշտ
- field of vision – տեսածիր
- field pack – հանդերձապարկ
- field rank – ավագ սպայական կոչում
- field surgery – ռազմադաշտային վիրաբուժություն
- field test – դաշտային փորձարկում
- field training – դաշտային պարապմունք
- field training exercise – see *field exercise*
- fifth-column – հինգերորդ շարասյուն
- fight – 1. մարտ, 2. գոտեմարտ, 3. թռիչքանցում, 4. մարտնչել, պայքարել
- fight back – 1. հակահարված տալ, 2. դիմադրել
- flight control – թռիչքի կառավարում
- flight control center – see *mission control center*
- flight training – թռիչքային պատրաստում
- flight route – թռիչքի երթուղի
- flight skills – օդային պատրաստակալություն
- fighter – 1. կործանիչ (ինքնաթիռ), 2. մարտիկ, 3. see *gunman 3*

fighter-bomber – ռմբակոծիչ կործանիչ	filter – գտիչ
fighter controller – կործանիչների կառավարման օպերատոր	filtering – ծովային և օդային շարժման մասին տվյալների մշակում և հաղորդում
fighter cover – կործանիչներով ծածկապաշտպանություն	fin – 1. ողնուց, 2. պոչաթև, 3. կայունարար, 4. լողակ
fighter direction aircraft – կործանիչին ուղղորդող թռչող ապարատ	final analysis report – հանրագումարային հաշվետվություն
fighter engagement zone – կործանիչով խոցման գոտի	final approach – վայրէջքամուտի վերջնափուլ
fighter escort – կործանիչների պահպանախումբ	final clearance for the targets – նշանակետերի խոցման վերջնական թույլտվություն
fighter ground-attack – կործանիչների գրոհ վրագետոնյա նշանակետի վրա	final disposal procedures – պայթյունավտանգ առարկաների վերջնական վնասազերծման ընթացակարգ
fighter interceptor – see <i>interceptor 1</i>	final exercise report – զորավարժության արդյունքներով կազմված ամփոփիչ հաշվետվություն
fighters – կործանիչ ավիացիա	final plan – հաստատված պլան
fighter sweep – կործանիչների՝ վրագետոնյա նշանակետերի որոնման ու ոչնչացման գործողություններ	final planning conference – պլանավորման գծով ամփոփիչ խորհրդաժողով
fighter takeoff line – կործանիչների օդհանման բնագիծ	final protective fire – անշարժ արգելապատնեշային կրակ
fighting – 1. see <i>fight 1, 2. combat 2</i>	final reconnaissance – լրահետախուզում
Fighting Falcon (F-16) – «Ֆայտինգ Ֆալկոն»	finance annex – ֆինանսական ապահովման մասին հավելված
fighting in built-up areas – see <i>military operations in urban terrain</i>	finance support – ֆինանսական ապահովում
fighting order – մարտական հանդերձանք	financial – ֆինանսական
fighting patrol – see <i>combat patrol</i>	financial and economic activities – ֆինանսատնտեսական գործունեություն
fighting platform – see <i>platform 2</i>	Financial Control Directorate – ֆինանսական վերահսկման վարչություն
fighting situation – see <i>combat situation</i>	financial controller – ֆինանսական վերահսկիչ
fighting strength – see <i>combat power</i>	financial incentives – ֆինանսական խթանում
fighting unit – see <i>combat unit 1</i>	financial lease – լիզինգ
figure – 1. թվանիշ, 2. թիվ, 3. Ֆիգուր	financial management – ֆինանսական կառավարում
file – 1. շարք, 2. see <i>dossier</i> , 3. քարտադարան, 4. ֆայլ, նիշք	financial regulations – ֆինանսական կանոնակարգ
filler personnel – համալրման անձնակազմ	
filler point – see <i>charging point</i>	
film – 1. ժապավեն, 2. թաղանթ	
film badge – թաղանթային բաժնաչափիչ	



financial reporting – see *financial statements*

financial statements – ֆինանսական հաշվետվողականություն

financing – ֆինանսավորում

«Fire!» – «Կրակ»

fire – 1. կրակ, հուր, 2. կրակակոծություն, 3. հրդեհ, 4. կրակային, 5. հրե, 6. հրշեջ, հրդեհաշեջ

fire adjustment – 1. see *adjustment of fire*, 2. see *spotting 2*

fire-and-forget weapon – «կրակեցիր՝ մոռացար» հրթիռ

fire and maneuver – կրակ ու տարաշարժ

fire area – see *field of fire*

firearm – հրաձգային զենք

fire assault – see *artillery raid*

fire attack – կրակային հարված

fireball – 1. հրե գունդ, 2. ասուպ

fire barrage – 1. կրակապատնեշ, հրապատվար, 2. հակահրդեհային առաջակալ

fire barrage line – հրապատնեշի բնագիծ

fire barrier – see *fire barrage*

fire-bomb – see *incendiary bomb*

fire brigade – հրշեջ բրիգադ

fire by bursts – կրակահերթով հրաձգություն

fire capabilities – կրակային կարողություն

fire capabilities chart – կրակի քարտ, կրակաքարտ

fire control – կրակի կառավարում

fire-control equipment – հրաձգության կառավարման սարքեր

fire control order – կրակի կառավարման զորահրաման

fire control radar – 1. կրակի կառավարման ռադիոտեղորոշումային կայան, կրակի կառավարման ՌՏԿ, 2. հրանոթային ուղղորդման կայան, ՀՌԿ

fire-control system – 1. կրակի կառավարման համակարգ, 2. հակահրդեհային համակարգ

fire coordination – 1. see *fire support coordination*, 2. see *fire distribution*, 3. see *mutual fire support*

fire coordination area – կրակի համադասման շրջան

fire defeat – կրակային խցում

fire department – հրշեջ մաս

fire direction center – կրակի կառավարման կետ

fire discipline – կրակային կարգապահություն

fire distribution – կրակի տարաբաշխում

fire fight – կրակամարտ, փոխհրաձգություն

fire for effect – 1. կրակային խցում, 2. խցիչ կրակ

fire from a halt – հրաձգություն տեղից

fire from short halts – հրաձգություն կարճատև կանգառներից

fire in bursts – see *fire by bursts*

fireman – հրշեջ

fire mission – կրակային խնդիր

fire mode – կրակի բանեվակարգ

fire on the move – հրաձգություն հընթացս

fire plan – 1. կրակի պլանավորում, 2. see *fire system*

fire planning – կրակային պլանավորում

fire position – see *firing position*

firepower – կրակային հզորություն

fire-power umbrella – զենիթային ծածկապաշտպանություն

fire preparation for assault – գրոհի կրակային պատրաստում

fire raid – see *fire assault*

fire sector – կրակային հատված

fire service – see *fire department*

- firestorm – հրե փոթորիկ
- fire superiority – կրակային գերազանցություն
- fire support – կրակային աջակցություն
- fire support coordination – կրակային աջակցության համադասում
- fire support coordination center – կրակային աջակցության համադասման կետ
- fire support coordination line – կրակային աջակցության համադասման բնագիծ
- fire support coordination measure – կրակային աջակցության համադասման միջոցառումներ
- fire support element – կրակային աջակցության կառավարման խումբ
- fire support officer – կրակային աջակցության կառավարման սպա
- fire support team – կրակային աջակցության խումբ
- fire system – կրակի համակարգ
- fire task – see *fire mission*
- fire task – կրակային խնդիր
- fireteam – կրակային օղակ
- fire trench – հրածգային խրամատ
- firing – 1. see *fire* 2, 2. կրակում, 3. see *shooting* 1, 2, 4. պայթեցում
- firing circuit – բռնկիչի շղթա
- firing line – կրակային բնագիծ
- firing mechanism – see *firing circuit*
- firing pin – պայթուցիչի զարկան
- firing port – հրակնատ, ակնատ
- firing position – 1. կրակային դիրք, 2. հրածգության դիրք, 3. կրակային միջոցի մարտական տեղադիրք, 4. մարտական դրություն
- firing post – հրթիռների արծակման կառավարման կետ
- firing range – 1. see *range* 5, 2. see *shooting ground*
- firm fixed price – խստիվ սահմանված գին
- firm fixed price order – պատվեր՝ խստիվ սահմանված գնի նշմամբ
- firmness – ամրություն
- first aid – առաջին օգնություն
- first aid kit – դեղարկղ, առաջին բուժօգնության դեղարկղ
- first impression report – նախնական հաշվետվություն
- first lieutenant (*Am.*) – see *senior lieutenant*
- First Parade – առավոտյան ստուգատես
- first responder – 1. արտակարգ ծառայության աշխատող, 2. շտապօգնության բժիշկ
- first responder care – շտապ բուժօգնություն
- fiscal year – ֆինանսական տարի
- fission – 1. ձեղքում, տրոհում, 2. ատոմի միջուկի տրոհում
- fission products – միջուկի տրոհման արգասիքներ
- fission to yield ratio – միջուկային զենքի հզորության գործակից
- fit – նստեցում
- fitness – 1. լավ ֆիզիկական վիճակ, 2. պիտանիություն
- fitted mine – հանդերձված ական
- fitter – մեխանիկ
- fitting out of a theater of operation – ՌԳԹ նախապատրաստում
- fix – 1. զամում, սևեռակում, 2. ամրակցում, 3. see *location* 2, 4. հաստում
- fixed ammunition – միասնական զինամթերք, ունիտար զինամթերք
- fixed cost – հաստատված ծախսեր
- fixed-date – ժամկետային
- fixed medical treatment facility – ստացիոնար, ստացիոնար կլինիկական բուժօգնարկ
- fixed objective – անշարժ նշանակետ
- fixed price contract – պայմանագիր՝ գնի հաստմամբ

- fixed price order – հաստված գնի նշմամբ պատվեր
- fixed target – անշարժ թիրախ
- fixed-wing aircraft – անշարժ թևով թռչող ավիացիա
- fixer network – ռադիոտեղորոշիչ կայանների ցանց
- fixer system – see *fixer network*
- fixing – see *fastening*
- flag – դրոշ
- flag-captain – պետանավի հրամանատար
- flag officer – 1. see *general 5*, 2. see *admiral*
- flagship – պետանավ
- flail – կալսաշղթա
- flail tank – շղթայակիր ականոսիչ տանկ
- flak – 1. see *air defense artillery*, 2. զենիթային կրակ
- flak jacket – զրահաբաձկոն
- flame – բոց
- flame field expedient – ինքնաշեն հրարծակ սարք
- flame-thrower – հրանետ
- flammable – դյուրաբոցավառ
- flank – 1. զորաթև, թև, 2. զորաթևային, թևային, 3. կողք
- flank attack – զորաթևային հարված
- flank bypass – see *flank round*
- flank guard – թևային երթային պահպանաջոկատ
- “Flanker” – «Ֆլանկեր»
- flanker – թևային
- flank guard – թևային պահակախումբ
- flanking attack – թևային գրոհ
- flanking fire – թևային կրակ
- flanking movement – see *flanking round*
- flanking round – թևանցում
- flank round – թևանցում
- flannelette – ֆլանելետ
- flare – 1. բռնկում, 2. ազդանշանիչ հրթիռ, 3. լուսավորիչ փամփուշտ, 4. հավասարեցում վայրէջքից առաջ, 5. ջերմային թակարդ
- flash – 1. see *flare 1*, 2. հրկիզում, 3. see *chevron*, 4. շտապ ռադիոհաղորդագրություն
- flash blindness – շլացում
- flash burn – ջերմային այրվածք
- flash eliminator – բոցամարիչ
- flashlight – գրպանի լապտերիկ
- flash message – «կայծակ» հաղորդագրություն
- flash signal – see *flash message*
- flash suppressor – see *flash eliminator*
- flash-to-bang time – կրակոցի (պայթյունի) բոցավառումը տեսնելու և ձայնը լսելու միջև ժամանակը
- flat fire – see *low-angle fire*
- flatted cargo – բալաստաբեռ
- flat trajectory fire – see *low-angle fire*
- flaw detection – see *defectoscopy*
- flèche – ասեղնակիր զինամթերք
- fleet – 1. նավատորմ, 2. հավաքակազմ
- Fleet Admiral – see *Admiral of the Fleet*
- Fleet Marine Force – ծովային հետևակի նավատորմային ուժեր
- flesh wound – մակերեսային վերք
- flexible deterrent option – զսպման ձկուն ընտրություն
- flexible response – ձկուն արձագանքում
- flexible response strategy – ձկուն արձագանքման ռազմավարություն
- flexibility – ձկունություն
- flight – 1. թռիչք, 2. ավիաջոկատ, 3. ավիատիպ, 4. փախուստ վտանգից, խուսափում

- flight altitude – see *absolute height*
- flight control – 1. թռիչքի կառավարում, 2. թռիչքների վրա գետնյա կառավարման մարմին
- flight crew – թռչող ապարատի անձնակազմ, թռիչքային անձնակազմ
- flight deck – 1. թռիչքային տախտակամած, 2. անձնակազմի խցիկ
- flight following – թռիչքի ուղեկցում
- flight gear – թռիչքային հանդերձանք
- flight height – see *absolute height*
- flight information center – թռիչքային տեղեկույթի կենտրոն
- flight information region – թռիչքային տեղեկույթի շրջան
- flight information service – թռիչքային տեղեկույթի ծառայություն
- flight leader – արաջավար օդաչու
- flight level – թռիչքի շարակարգ
- flight of aircraft – ինքնաթիռների օդակ
- flight path – 1. թռիչքի հետագիծ, 2. թռիչքի ուղղույթ
- flight personnel – թռիչքային կազմ
- flight plan – թռիչքի պլան
- flight preparation – պատրաստում թռիչքի
- flight range – հեռաթռչնություն
- flight readiness firing – թռիչքային պատրաստության կրակային փորձարկում, հրթիռային շարժիչի նախամեկնարկային ստուգիչ գործարկում
- flight simulator – թռիչքային վարժասարք
- flight safety – see *air safety*
- flight test – թռիչքային փորձարկում
- flying – նետել, գցել
- floatability – see *buoyancy*
- floatation – see *buoyancy*
- floating dot – see *floating mark 1*
- floating line – սուզագիծ
- floating mark – 1. չափման հենանիշ, 2. լողուն նշան
- floating mine – լողացող ական
- flood – 1. հեղեղ, ջրհեղեղ, 2. ջրածածկում, 3. գերլցում
- flood plain – ողողադաշտ
- FLOT – see *forward line of own troops*
- flotilla – նավատորմիկ
- fluorescence – լուսածորում
- fluorescent – լուսածորող
- fluxgate – մագնիսաչափ, մագնիսական տվիչ
- fluxvalve – see *fluxgate*
- fly-around – շրջաթռիչք
- flying around – see *fly-around*
- flying up – see *approach 4*
- flyover – 1. ուղանցույց, 2. ցցաթումբ, 3. see *flypast*
- flypast – 1. օդահանդես, 2. ցուցադրական թռիչքներ
- FM – 1. see *field marshal*, 2. see *frequency modulation*
- FOB – see *forward operating base*
- focal length – կիզակետային հեռավորություն
- focal plane – կիզակետային հարթություն
- foe – ռոխ, ախոյան
- fog – մառախուղ
- fog bank – մառախուղի շղթա
- foggy – մառախլապատ
- fog of war – 1. մարտական իրադրության անորոշություն, 2. մարտադաշտում տեսանելիության վատթարացում
- follow-on echelon – see *assault follow-on echelon*
- follow-on force attack – հարված երկրորդ շարակարգի գորքերին
- follow-on forces – հարձակման երկրորդ շարակարգի գորքեր

- follow-on mine countermeasures – ականային հակազդեցության հետագա միջոցներ
- follow-up – դեսանտային հաջողության զարգացում
- follow-up echelon – իջազորի երկրորդ շարակարգ
- follow-up forces – see *follow-up echelon*
- folly – 1. անխիտեմություն, անշրջահայեցություն, 2. արհեստական փլատակներ
- foment – հրահրել
- food – սնունդ
- food additive – սննդային հավելում
- food and rations – պարենային ապահովում, պարենային բավարարում, պարենավորում
- food rations – օրապահիկ
- food security – պարենային անվտանգություն
- food supplement – see *food additive*
- foot – 1. ոտնաթաթ 2. ոտնաչափ, 3. (*սլոն.*) *the foot* – հետևակ
- footbridge – հետիոտն կամուրջ
- foothold – 1. see *bridgehead*, 2. see *stronghold 4*
- foot march – հետիոտն երթ
- forage – 1. խոտ, 2. խոտամթերում
- forage cap – 1. պիլոտկա, 2. դաշտային զլխարկ
- foray – see *raid 3*
- force – 1. ուժ, 2. ուժային
- force closure – կենտրոնացման ավարտ
- force dispersal – ուժերի և միջոցների տարաբաշխում
- forced landing – see *emergency landing*
- forced march – արագացված երթ
- force entry – ուժերի մարտական կիրառում
- force generation – ուժերի կազմավորում
- force health protection – զինվորական առողջապահություն
- force identification – 1. ուժերի նախանշանակում, 2. ուժերի կազմի որոշում
- force interoperability – զորքերի փոխգործելիություն
- force list – զորամասերի և ստորաբաժանումների լիակատար ցանկ
- force module – 1. մոդուլ, 2. զորքի (ուժերի) մոդուլային կազմավորում
- force movement – ռազմական փոխադրումներ
- force multiplication – 1. ուժային բազմապատկում, 2. ուժային բազմապատկություն
- force multiplier – ուժային բազմապատկիչ
- force-orientated mission – հակառակորդի ջախջախմանը կողմնորոշված ռազմական գործողություններ
- force package – 1. ուժերի և միջոցների լրակազմ, 2. ուժերի և միջոցների հաշվարկում
- force planning – զինված ուժերի շինարարության պլանավորում, զինված ուժերի զարգացման պլանավորում
- force planning section – զինված ուժերի շինարարության պլանավորման բաժին
- force protection – զորքերի և օբյեկտների պաշտպանություն
- force protection working group – զորքերի պաշտպանության գծով աշխատանքային խումբ
- force ratio – ուժերի և միջոցների հարաբերակցություն
- force rendezvous – օպերատիվ զորամիավորման նավերի (ծովային կամ օդային) հանդիպատել
- forces – ուժեր
- forces allocated to NATO – ՆԱՏՕ-ին հատկացված զորքեր
- force shortfall – ուժերի պակասորդ
- forces maneuver – see *maneuver of forces*

forces of occupation – բռնազավթիչ զորքեր

force structuring – 1. զորքերի կազմակերպում, 2. զորքերի կազմակերպվածք

force sustainment – see *logistics*

force tailoring – see *tailoring 1*

force tracking – զորքերի վերահսկման համակարգ

force visibility – զինված ուժերի կերպարանք

forcible entry – բռնի ներխուժում

forcing – մարտանցում

ford – see *shallow water*

forecast – կանխատեսում

forecasting – see *forecast*

forecasting and assessment – կանխատեսում և գնահատում

forecastle – see *bow*

fore end – see *nose cone*

forefield – նախագոտի

foreground – see *forefield*

forehead – ճակատ

foreign – 1. արտասահմանյան, օտարերկրյա, 2. օտար, 3. արտաքին

foreign aid – օտարերկրյա օգնություն (հիմնականում՝ տնտեսական)

foreign assistance – արտերկրյա օգնություն (օժանդակություն՝ հիմնականում աղետների դեպքում)

foreign disaster – արտերկրում տեղի ունեցած աղետ

foreign disaster relief – օգնություն օտար պետություններում աղետների ժամանակ

foreigner – արտասահմանցի, օտարերկրացի

foreign humanitarian assistance – արտերկրին ցուցաբերվող մարդասիրական օգնություն

foreign instrumentation signals intelligence – օտարերկրյա ստուգիչ-չափիչ ապարատուրայի ազդանշանների որսում

foreign intelligence – 1. արտաքին հետախուզություն, 2. օտարերկրյա հետախուզություն

foreign intelligence entity – օտարերկրյա հետախուզական կազմակերպություն

foreign intelligence service – արտաքին հետախուզության ծառայություն

foreign internal defense – մասնակցություն օտար պետության «ներքին պաշտպանությանը»

Foreign Legion – արտասահմանյան լեգեոն

foreign military sales – արտասահմանյան պետություններին սպառազինության ու ռազմական տեխնիկայի վաճառք

foreign national – օտարերկրյա հպատակ, այլ պետության հպատակ

foreign nation support – աջակցություն այլ պետությանը

foreign object damage – օտար առարկայով վնասում

foreign occupation – օտարերկրյա բռնազավթում

foreign policy – արտաքին քաղաքականություն

foreign service national – արտասահմանցի աշխատող

foreign subject – see *foreign national*

foreshore – see *coastal zone*

foresight – see *forecasting*

fork – երկձյուղավորում

form – 1. ձև, տեսք, 2. տեսակ, տարատեսակ, 3. ձևաթուղթ, 4. սահմանված կարգ

formal bidding – պաշտոնական աճուրդ

formalization – ձևարկում

formalization of the task – խնդրի ձևարկում

format – 1. ձևաչափ, 2. see *form 1*, 3. հորինվածք

formation – 1. see *military formation 1*, 2. see *grouping 1*, 3. շարք, 4. մարտաշարք, 5. շարուն, 6. see *forming 1*, 7. ֆորմացիա, 8. շարվածք

formation of a single world space – միասնական աշխարհատարածքի ձևավորում

formatted message text – ձևարկված տեքստային հաղորդագրություն

formerly restricted data – նախկինում սահմանափակ օգտագործման համար նախատեսված՝ ատոմային էներգետիկային վերաբերող տվյալներ

forming – 1. կազմավորում, ձևավորում, 2. տես *shaping*

forming-up place – see *initial position*

forming-up point – կազմավորման տարածք

form line – ենթադրական հորիզոնագիծ

form lines – ռելիեֆի ձևի գծեր

fort – ամրոցիկ, ֆորտ

fortification – 1. ամրաշինություն, պաշտպանական դիրքերի ամրացում, 2. ամրություն

fortified area – ամրացված շրջան

fortress – ամրոց

forward – առաջավոր, առաջադիր, առաջագնաց

forward aeromedical evacuation – ավիաբուժտարահանում առջևի գծից

forward air controller – առաջավոր ավիանուղորդիչ

forward area – առաջնային գոտի

forward arming and refueling point – մարտավրակազմի ու վառելիքի լրացման առաջադիր կետ

forward aviation combat engineering – առաջադիր ավիացիոն կառույցների շինարարության ինժեներական աշխատանքներ

forward defense – «առաջադիր բնագծերի» ռազմավարություն, «առաջավոր պաշտպանության» հայեցակարգ

forward edge of the battle area – պաշտպանության առջևի եզր

forward line of own troops – յուրային զորքի առջևի գիծ

forward logistic site – թիկունքային ապահովման առաջադիր բազավորմամբ օբյեկտ

forward observation – առաջավոր դիտում

forward observation officer – առաջավոր դիտորդ

forward observer – see *forward observation officer*

forward operating base – առաջադիր օպերատիվ բազա

forward slope – առջևի լանջ

forward stationing – առաջադիր բազավորում

forward tell – տեղեկության հաղորդում վերադասին

foundation geospatial-intelligence data – աշխարհատարածական հետախուզական տվյալների շտեմարան

four-star general – քառաստղանի գեներալ

foxhole – see *trench 4*

FPF – see *final protective fire*

fragmental wound – see *shrapnel wound*

fragmentary order – մարտական կարգադրություն

fragmentation aviation bomb – բեկորաֆուգասային ավիացիոն ռումբ

fragmentation grenade – բեկորային նռնակ

fragmentation mine – բեկորային ական

frame – 1. իրան, 2. շրջանակ, 3. կադր (*լուսանկ.*)

framework – 1. շրջանակ, 2. see *structure 2*

framework agreement – շրջանակային համաձայնագիր

fraternization – եղբայրացում

fratricide – եղբայրասպանություն



free – ազատ	freight – 1. փոխադրաբեր, 2. փոխադրավարձ
free air overpressure – բաց տարածությունում բարձր ճնշում	frequency – հաճախականություն
free-capture hunting – «ազատ որս»	frequency deconfliction – հաճախականային համաձայնեցում
free drop – անպարաշյուտ վայրնետում	frequency management – հաճախականությունների բաշխման համակարգ
free fall – ազատ անկում	frequency modulation – հաճախականային մոդուլացիա
free fire zone – ազատ կրակի գոտի	frequency of radiation – ճառագայթման հաճախականություն
free form message text – ոչ ձևարկված տեքստային հաղորդագրություն	friction – 1. շփում, 2. տարածայնություն, վեճ
free mail – անվճար փոստային առաքում	friendly fire – յուրախոցիչ կրակ
free mine – խարսխագերծ ական	friendly force information requirement – դաշնակից զորքի մասին տեղեկություններին ներկայացվող պահանջ
free play exercise – առանց նախնական պլանի զորավարժություն	friendly forces – 1. յուրային զորք, 2. դաշնակից զորք
free rocket overground frog – «Ֆրոգ»	frigate – ֆրեգատ
freedom – ազատություն	fringe – երիզ
freedom-fighter – ազատության մարտիկ, ազատամարտիկ	frogman – ռազմալողորդ
freedom of assembly – հավաքների ազատություն	front – 1. ռազմաճակատ, 2. ճակատ, 3. առաջամաս, առաջք, 4. առջևի
freedom of conscience – խղճի ազատություն	frontage – ճակատի լայնություն
freedom of expression – see <i>freedom of the will</i>	frontal – ճակատային
freedom of movement – տեղաշարժի ազատություն	frontal attack – 1. ճակատային հարձակում, 2. ճակատային գրոհ
freedom of religion – դավանության ազատություն	frontal fire – ճակատային կրակ
freedom of speech – խոսքի ազատություն	frontier – 1. սահմանամերձ, 2. սահմանապահ, սահմանապահական, 3. սահմանային գոտի
freedom of the press – մամուլի ազատություն	frontier area – սահմանամերձ շրջան
freedom of the will – կամարտահայտման ազատություն	frontier guard – see <i>border guard</i>
freedom of thought – see <i>freedom of conscience</i>	frontier incident – սահմանային միջադեպ
free-fall – ազատ անկում	frontier post – սահմանապահ ուղեկալ
free-fall jump – տևողական թռիչք պարաշյուտով	front-line – ճակատային գիծ, առջևի գիծ
free-flight rocket – չկառավարվող հրթիռ	front-line fighter – ռազմաճակատային կործանիչ
	front-line soldier – ճակատային (գինվոր)

front-line troops – ճակատային զորք

front of war – մարտական գործողությունների ճակատ

frostbite – ցրտահարում

frozen conflict – սառեցված հակամարտություն

fuel – վառելանյութ, վառելիք

fuel-air bomb – ծավալային պայթյունի զինամթերք, ծավալային պայթուցիկ, ջերմաճնշումային զենք

fuel-air explosive – վառելիքաօդային պայթուցիկ խառնուրդ

fuel interoperability – տարբեր վառելանյութերի համատեղելիություն

fuels and lubricants – see *petroleum, oils and lubricants*

fuel storage – վառելիքի պահեստ

fuel tanker – բենզատար

“Fulcrum” – «Ֆալկրում»

full command – հրամանատարության լրիվություն

full general – լրիվ գեներալ, see *four-star general*

full mobilization – լրիվ զորահավաք

fully planned movement – մանրակրկիտ կերպով նախապատրաստված տեղաշարժ

functional command – հրամանատարություն ըստ գործառնության հատկանիշի

functional component command – բաղադրատարրային գործառնության հրամանատարություն

functional damage assessment – գործառնության վնասի գնահատում

functional plan – մասնավոր պլան, գործառնության պլան

functions – գործառնության պարտականություններ

fund – 1. ֆոնդ, 2. հիմնադրամ

fundamental principle – հիմնարար սկզբունք

funding – see *financing*

funding nation – ֆինանսավորող պետություն

furlough – արձակուրդ

fuselage – 1. ֆյուզելաժ, 2. see *hull 3*

fuse destruction – պայթուցիչի ոչնչացում

fusillade – 1. կրակակոծում, 2. see *shooting 1*

fusion – տեղեկույթի միաբերում

fuval-endurance limited air target destruction line – օդային նշանակետերի ոչնչացման բնագիծ

fuze – 1. see *safety fuze*, 2. see *exploder*, 3. պատրույգ, 4. see *igniter*

fuze cavity – պայթիչային խոռոչ

## G

G1 – see *(the) department of a headquarters responsible for personnel*

GA – տարբուն

G-agent – see *nonpersistent nerve agent*

“Gainful” – «Կուրք»

gallantry – see *bravery*

gallery range – see *shooting ground*

galley – 1. նավախոհանոց, օդանավախոհանոց, 2. փրկանավակ, վելբոտ, գիչկա

game – խաղ

Gammon – U-200

Ganef – «Կրուգ»

gang – հրոսակախումբ

gangrene – փտախտ

gangster – see *bandit 1*

gap – 1. ճեղքվածք, 2. խզվածք

gap marker – ականադաշտում անցուղիների ցուցանշան

gap-filler radar – օժանդակ ռադիոտեղորոշումային կայան

- garrison – կայազոր
- garrison and guard duty regulations – կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրք
- garrison cap – կայազորային գլխարկ
- garrison force – կայազորի զորքեր
- garrison regulations – կայազորային ծառայության կանոնադրություն
- garrison town – կայազորային քաղաք
- gas – գազ
- gash – see *hole 1*
- Gaskin – «Ստրելա-1»
- gas mask – հակագազ
- gasoline – see *petrol*
- Gatling gun – Գատլինգի գնդացի
- gathering – see *assembly 1*
- GB – see *Sarin*
- GBU-15 – ԳԲՈՒ-15
- GCI – see *ground controlled interception*
- GD – see *soman*
- G-day – «Զի» օր
- gear – 1. սարքվածք, 2. see *mechanism*
- Gecko – «Օսա»
- Geiger counter – Չեյգերի հաշվիչ
- general – 1. գեներալ, 2. see *commander 1*, 3. գերագույն, 4. գլխավոր, 5. բարձրագույն սպա
- general and flag officers – բարձրագույն սպաներ, գեներալներ և ծովակալներ
- general cargo – ընդհանուր բեռ
- general cease-fire – համընդհանուր հրադադար
- general deployment position – ծավալման հիմնական բնագիծ
- general engineering – ընդհանուր մեքենաշինություն
- general errands – հանձնակատար-գեներալ
- general headquarters – see *High Command*
- general headquarters reserve – գլխավոր հրամանատարի ռազմակայանի ռեզերվ
- general military intelligence – ռազմական հետախուզություն
- general mobilization – ընդհանուր զորահավաք
- general officer commanding – see *commanding general 1*
- general of the air force (*Am.*) – ավիացիայի գեներալ
- general of the army (*Am.*) – բանակի գեներալ
- general on the instructions – see *general errands*
- general orders – ընդհանուր հրամաններ
- general purchasing agent – ընդհանուր գնումների գծով ներկայացուցիչ
- general purpose – ընդհանուր նախանշանակում
- general purpose bomb – ընդհանուր նախանշանակման ավիացիոն ռումբ, ֆուգասաբեկորային ավիացիոն ռումբ
- general purpose machine gun – ընդհանրական գնդացի
- general quarters – մարտական պատրաստության դրություն
- general reserve – see *combined arms reserve*
- (the) generals – գեներալական կազմ, գեներալիտետ
- general staff – գերագույն շտաբ
- general stopping power – ակնադաշտի հարաբերական խափանարարություն
- general support-reinforcing – ընդհանուր հրետանային աջակցություն
- generator – գեներատոր
- generic plan – տիպային պլան
- generic planning – տիպային պլանավորում

- generic reinforcement option – ուժերի հզորացման տիպային տարբերակ
- genetic weapon – գենետիկական զենք, էթնիկական զենք
- Geneva Conventions of 1949–1949 թ. ժնկյան կոնվենցիաներ
- genocide – ցեղասպանություն
- geocoded image – տեղանքի երկրակողավորված պատկեր
- geodesy – երկրաբաշխություն
- geographical factor in the war – պատերազմում աշխարհագրական գործոն
- geographic coordinates – աշխարհագրական կոորդինատներ
- geographic space – աշխարհատարածություն
- geolocation code – տեղադիրքի կոդ
- geomatics – երկրատեղեկութաբանություն
- geophysical war – երկրաֆիզիկական պատերազմ
- geophysical weapon – երկրաֆիզիկական զենք
- geopolitical – աշխարհաքաղաքական
- geopolitical conflict – աշխարհաքաղաքական հակամարտություն
- geopolitical interests – աշխարհաքաղաքական շահ
- geopolitical situation – աշխարհաքաղաքական իրադրություն
- geopolitical unit – աշխարհաքաղաքական կառուցվածք
- geopolitics – աշխարհաքաղաքականություն
- georef – see *World Geographic Reference System*
- georeferenced image – տեղանքի հետ կապակցված պատկեր
- geospatial – աշխարհատարածական
- geospatial communication – աշխարհատարածական կապ
- geospatial engineering – աշխարհատարածական ճարտարագիտություն
- geospatial information – աշխարհատարածական տեղեկությ
- geospatial information and services – աշխարհատարածական տեղեկատվական ծառայություններ
- geospatial intelligence – աշխարհատարածական հետախուզություն
- geospatial intelligence base for contingency operations – հատուկ օպերացիաների համար աշխարհատարածական հետախուզական տվյալների շտեմարան
- geospatial intelligence operations – աշխարհատարածական հետախուզական օպերացիաներ
- geostrategic space – աշխարհառազմավարական տարածություն
- Gepard – «Հեպարդ»
- germ warfare – see *biological warfare*
- geterogeneity – տարասեռություն
- ghetto – գետտո
- ghillie – քողարկազգեստ
- GHQ – see *general headquarters*
- “Giant Viper” – «Հսկայական իժ»
- gillie suit – see *ghillie*
- “Gimlet” – «Իզլա-1»
- giving out – տրում
- glasshouse – see *provost prison*
- glide bomb – սավառնող ռումբ
- glide path – 1. վայրէջքագիծ, 2. թեք ճանապարհ
- glider – 1. սավառնակ, 2. սահանավ, գլիսեր
- global – համընդհանուր
- Global Air Transportation Execution System – ավիափոխադրումների համընդհանուր կատարողական համակարգ

- global ballistic missile defense – հակահրթիռային պաշտպանության համընդհանուր համակարգ
- Global Combat Support System-Joint – մարտական գործողություններին աջակցման համընդհանուր համակարգ
- Global Command and Control System – օպերատիվ կառավարման համընդհանուր համակարգ
- Global Decision Support System – որոշումների ընդունմանն աջակցման համընդհանուր համակարգ
- global distribution – համընդհանուր բաշխում
- global force management – ՁՈՒ-ի շինարարության կառավարման համընդհանուր համակարգ, բանակաշինության կառավարման համընդհանուր համակարգ
- Global Information Grid – համընդհանուր տեղեկատվական ցանց
- maneuvering forces – 1. տարաշարժվող ուժեր, տարաշարժ կատարող ուժեր, 2. տարաշարժուն զորք
- maneuvering in the front line – տարաշարժում ճակատամերձ գոտում
- maneuvering target – 1. շարժունակ թիրախ, 2. շարժվող նշանակետ
- maneuvering troops – *see maneuvering forces 2*
- maneuver march – երթ-զորաշարժ
- maneuver of forces – զորքի տարաշարժ, զորաշարժ
- maneuver of military unit – զորամասի տարաշարժ
- maneuver of troops – *see maneuver of forces*
- maneuvers – զորախաղ
- maneuver warfare – տարաշարժային պատերազմ
- maneuver with forces – *see maneuver by forces* զորքի տարաշարժում
- manhole – 1. *see hatch*, 2. տղանցք
- manifest – 1. հայտարարություն, 2. հայտարարագիր
- manipulation – ձեռնածություն, մանիպուլացիա
- manmade blockage – *see manmade obstacle*
- man-made features – ձեռակերտ շինություններ (կառույցներ, կամուրջներ ևն)
- manmade obstacle – ինժեներական արգելափակոց
- man-management – անձնակազմի գործերի կառավարում
- manned aircraft – օդաչուավոր թռչող ապարատ, մարդավարական թռչող ապարատ
- manning – համալրում
- manning and equipping – զինված ուժերի համալրում

manning level – 1. անձնակազմով համալրվածության աստիճան, 2. հաստիքային թվաքանակ

manning levels – անձնակազմով համալրվածություն

manning of the armed forces on a contract basis – զինված ուժերի համալրում պայմանագրային հիմունքով

manning of the armed forces on a mixed principle – զինված ուժերի համալրում խառն սկզբունքով

manning of the armed forces on a voluntary basis – զինված ուժերի համալրում կամավորության հիմունքով

manning of the armed forces on conscription – զինված ուժերի համալրում զորակոչով

manning on a territorial principle – համալրում տարածքային սկզբունքով

manoeuvre – see *maneuver*

man on duty – հերթապահ

MANPADS – see *man-portable air defense system*

man portable – կրովի

man-portable air defense system – կրովի զենիթահրթիռային համալիր, ԿԶՀՀ

manpower – 1. կենդանի ուժ, 2. աշխատուժ, 3. see *military personnel*

manpower management – անձնակազմի կառավարում

manpower requirements – աշխատուժի պահանջմունք

manual – 1. կանոնադրություն, 2. see *instruction* 2, 3. ձեռքի, ձեռովի

manual disassembly – զինամթերքի ձեռովի կազմատում (ոչնչացման ժամանակ)

manufacturing resources planning – արտադրական ռեսուրսների պլանավորում

MAP – see *Membership Action Plan*

map – քարտեզ

map carrier – դաշտային պայուսակ

map convergence – միջօրեականների զուգամիտման անկյուն

map division – քարտեզների կտրատում

map exercise – քարտեզով զորավարժություն

map grid – քարտեզագրական ցանց

mapmaking – քարտեզագրություն

mapping camera – see *air cartographic camera*

mapping of seismically dangerous lot – սեյսմիկորեն վտանգավոր տեղամասի քարտեզավորում

map reference – 1. քարտեզի կոորդինատներ, 2. հղում քարտեզին

map series – 1. քարտեզախումբ, 2. քարտեզի հրատարակություն, 3. քարտեզի տիպ

map square – քարտեզի կոորդինատային ցանցի քառակուսի

march – 1. երթ, ռազմերթ, 2. քայլերգ, 3. շարային քայլ, 4. see *demonstration* 4

march formation – երթաշարք

marching – երթային

marching completion – երթային համալրում

marching order – երթային կարգ, երթակարգ

march in review – հանդիսավոր երթ

march protection – see *march security*

marching replenishment – see *marching completion*

march security – 1. երթային պահպանություն, 2. երթային պահպանաջոկատ

march security patrol – դետրային ջոկ

marginal data – լուսանցքային տեղեկություններ

marginal information – see *marginal data*

marine – 1. ծովային հետևակի զինվոր, 2. see *sailor* 2

Marine Corps – ծովային հետևակ

marine expeditionary brigade – ծովային հետևակի ռազմարշավային բրիգադ

marine expeditionary unit – ծովային հետևակի արշավազորային գումարտակ

marines – see *Marine Corps*

maritime – see *naval 2*

maritime forces – ծովային ուժեր

maritime operation – ծովային օպերացիա

maritime piracy – see *sea piracy*

maritime power projection – ծովային հզորության ցուցադրում

maritime superiority – գերազանցություն ծովում

marker – 1. see *radio beacon*, 2. ազդանշանային լույս, 3. անցուղու ցուցանշան, 4. see *gap marker*, 5. նշանադրիչ նավ

market liberalization – շուկայի ազատականացում

marking – 1. գծանշում, 2. պիտակավորում

marking panel – ազդանշանային պաստառ

marking team – ուղեվարական միջոցների տեղակայման խումբ

marksman – դիպուկ հրաձիգ

marshal – մարշալ

marshalling – 1. կենտրոնացում ելքային շրջանում, 2. տեխնիկայի ու պաշարների կուտակում

marshalling yard – վագոնների տեսակավորման կայան

marshal of armored troops – զրահատանկային զորքերի մարշալ

marshal of engineer troops – ինժեներական զորքերի մարշալ

marshal of signal troops – կապի զորքերի մարշալ

Marshal of the Air Force – ավիացիայի մարշալ

Marshal of the Soviet Union – Խորհրդային Միության մարշալ

martial – ռազմական

martial fame (*AmE*) – see *military glory*

martial law – 1. see *military law*, 2. ռազմական դրություն, 3. ռազմական դրության ռեժիմ

maser – մազեր

mash – see *mobile army surgical hospital*

mask – 1. դիմակ, 2. քողարկել

masking – see *camouflage 1*

mass – 1. զանգված, 2. զանգվածայնություն, 3. (the masses) զանգվածներ, 4. մեծ քանակություն, 5. կուտակում, 6. պատարագ, 7. զանգվածային, 8 զանգվածեղ

massacre – կոտորած, սպանդ, ջարդ

mass and size characteristics – չափազանգվածային բնութագիր

mass army – զանգվածային բանակ

mass atrocity response operations – բըռնության զանգվածային գործողությունների ճնշման օպերացիա

mass casualty – զանգվածային կորուստներ

mass defect – զանգվածի պակասուրդ

mass disorders – see *disorder 3*

massed fire – հոծ կրակ

mass evacuation – զանգվածային տարահանում

massive – see *heavy 2*

massive fire – 1. մեծ հրդեհ, զանգվածեղ հրդեհ, 2. see *massed fire*

massive (nuclear) reprisal strategy – see *strategy of massive retaliation*

mass media – զանգվածային լրատվության միջոց, ՋԼՄ

mass of maneuver – հարվածային խումբ, տարաշարժուն բռունցք

master air attack plan – օդային հարձակման գլխավոր պլան

mastering – տիրապետում

mastery of the air – see *air supremacy*

match – 1. լուցիկ, 2. see *fuze 3*

material – 1. նյութ, 2. գործվածք, 3. տվյալների համախումբ, նյութ, 4. նյութական մաս

material assets – նյութական միջոցներ

material control officer – նյութական մասի վերահսկման սպա

material costs of war – պատերազմի նյութական ծախսեր

material incentives – նյութական խթանում

material management – նյութական միջոցների կառավարում

material provision for servicemen – զինծառայողների նյութական բավարարում

material release order – 1. նյութական միջոցների բացթողման ապրանքագիր, 2. գույքի փոխանցման պատվեր-կարգագիր

material requirement list – անհրաժեշտ միջոցների ցանկ

material resource – նյութական ռեսուրս

materials handling – բեռնման-բեռնաթափման աշխատանքներ

materiel – 1. սպառազինություն և ռազմական տեխնիկա (թիկունքային ապահովմամբ), 2. see *military property*, 3. see *material assets*, 4. նյութական մաս

materiel inventory objective – նյութական միջոցների պաշարների նորմ

materiel planning – նյութատեխնիկական ապահովման պլանավորում

materiel procurement – սպառազինության և ռազմական տեխնիկայի զնումներ

materiel readiness – նյութական միջոցների պատրաստություն կիրառմանը

mathematical modeling of management – կառավարման մաթեմատիկական մոդելավորում

matter – 1. see *substance 1, 2, 3*, 2. գործ

“Maverick” – «Մևերիկ»

maximum – առավելագույն

maximum effective range – առավելագույն արդյունավետ հեռահարություն

maximum elevation – 1. բարձրացման առավելագույն անկյուն, 2. նշված առավելագույն բարձրություն

maximum landing weight – առավելագույն վայրէջքային կշիռ

maximum operating depth – սուզման առավելագույն խորություն

maximum ordinate – հետագծի բարձրություն

maximum permissible concentration – see *radioactivity concentration guide*

maximum permissible dose – առավելագույն թույլատրելի բաժնաչափ

maximum range – առավելագույն հեռահարություն

maximum sustained speed – առավելագույն հաստատուն արագություն

maximum take-off weight – առավելագույն վերթիռային կշիռ

mayday call – աղետի ձայնային ազդանշան

MCC – see *mission control center*

M-day – «Մ» օր

meaconing – ռադիոուղեվարական կայանների խանգարումներ

mean point of impact – նշանախոցման միջին կետ

means – միջոց

means at hand – see *makeshift means*

means of delivery – առբերման միջոց

means of destruction – խոցման միջոց

means of transport – see *mode of transport*

means of warfare – մարտական միջոցներ

mean time between failures – մինչև խափանում միջին աշխատատևություն

means to disadvantage interests – շահերի սահմանափակման միջոցներ

measure – 1. չափ, 2. see *unit 4*, 3. see *criterion*, 4. միջոց

measured mile – սահմանված չափամոդուլ

measurement – 1. չափում, 2. չափս

measure of effectiveness – արդյունավետության չափանիշ

measure of performance – աշխատանքի գնահատման չափանիշ

measures – միջոցներ

mechanic – մեխանիկ

mechanical engineering – see *engineering 1*

mechanism – մեխանիզմ

mechanized – մեքենայացված

mechanized battalion – մոտոհետևակային գումարտակ

mechanized infantry – մեքենայացված հետևակ

medal – 1. մեդալ, 2. see *order 5*

Médecins Sans Frontières – «Բժիշկներ առանց սահմանների»

media – see *mass media*

media awareness training – զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչների հետ աշխատանքի գծով ուսումնական պատրաստում

medicine – 1. բժշկություն, 2. դեղամիջոց

media coverage – լուսաբանում զանգվածային լրատվության միջոցներում

media operations center – ՋԼՄ-ների հետ աշխատանքի կենտրոն

mediation – միջնորդություն

medical – 1. բուժական, 2. բժշկական

medical aid – բուժօգնություն

medical and casualty facility – 1. բուժմաս, 2. see *military hospital*, 3. see *medical post*

medical and health service support – սանիտարաբուժական ապահովում

medical and sanitary consequences of an earthquake – երկրաշարժի բուժանիտարական հետևանք

medical care – բուժխնամք, see *medical aid*

medical consequences of a catastrophe – աղետի առողջական հետևանք

medical evacuation – բուժտարահանում

medical evacuation stage – 1. բուժտարահանման հանգրվան, 2. բուժտարահանման փուլ

medical evacuees – բուժտարահանվող հիվանդներ և վիրավորներ

medical examination – 1. բուժհետազոտում, 2. բժշկական քննություն, բուժքննություն

medical facility – բուժական հիմնարկ, բուժհիմնարկ

medical intelligence – բուժհետախուզություն, բժշկական հետախուզություն

medical logistics support – թիկունքային բուժապահովում

medically unfit – հիվանդության պատճառով զինծառայությանը ոչ պիտանի

medical officer – զինվորական բժիշկ

medical planning – ռազմաբժշկական պլանավորում

medical post – բուժկետ

medical preparedness – բուժծառայությունների պատրաստություն

medical prophylaxis – բուժկանխարգելում

medical security – առողջապահական անվտանգություն

medical service – 1. բուժապասարկում, 2. բուժծառայություն

medical services – 1. see *medical support*, 2. բուժծառայություններ, բուժապասարկում, see *medical service 1*

medical subdivision – see *medical unit*

medical support – 1. բուժապահովում, 2. ռազմաբժշկական ապահովում

medical surveillance – բուժսկողողություն



- medical triage – բուժտեսակավորում
- medical unit – բուժատորաբաժանում, բժշկական ստորաբաժանում
- medium anti-tank weapon – հակատանկային հրթիռների արձակման ձեռքի կայանք
- medium-range ballistic missile – միջին հեռահարությամբ բալիստիկական հրթիռ
- meeting – հանդիպում
- meeting engagement – հանդիպական մարտ
- member – անդամ
- member nation – անդամ պետություն
- member of armed forces – see *service-man 1*
- member of parliament – խորհրդարանի անդամ
- Membership Action Plan – ՆԱՏՕ-ին անդամակցությանը պատրաստման գործողությունների պլան, ՆԱՏՕ ԱՊԳՊ
- memorandum – հուշագիր
- memorandum of agreement – պայմանավորվածության հուշագիր, համաձայնության հուշագիր
- memorandum of understanding – փոխըմբռնման հուշագիր
- men liable to conscription – see *conscript forces*
- mensuration – չափում
- mental – 1. մտավոր, 2. հոգեկան, 3. մտավոր կարողություններ
- mental balance – նյարդահոգեկան կայունություն
- mental fitness – հոգեբանական պիտանիություն
- mental health – հոգեկան առողջություն
- mental imbalance – հոգեկան հավասարակշռության խախտում
- mental impairment – հոգեկան խանգարում
- mental trauma in combat – see *battle exhaustion*
- mercenary – վարձկան
- mercenary army – վարձու բանակ
- merchant navy – առևտրական նավատորմ
- merging – խոշորացում
- “Merkava” – «Մերկավա»
- mess – 1. see *disorder 2, 3*, 2. ճաշարան, 3. սննդի ընդունում
- message – 1. հաղորդում, 2. հաղորդակցություն, հաղորդակցում, 3. հաղորդագրություն, 4. see *communication*
- messenger – 1. սուրհանդակ, 2. լրաբեր, 3. թղթատար
- mess hall – ալումբ-ճաշարան
- mess-kit – see *ceremonial uniform*
- mess night – պաշտոնական ճաշկերույթ
- mess tin – կերակրաման
- metal detector – մետաղափնտրիչ
- meteorological – օդերևութաբանական
- meteorological watch – օդերևութաբանական դիտում
- meteorological weapon – see *climate weapon*
- meteorology – օդերևութաբանություն
- method – մեթոդ
- method of combat and operational training – մարտական և օպերատիվ պատրաստման մեթոդիկա
- methodology – մեթոդաբանություն
- metrological support – չափաբանական ապահովում
- microwave amplification by stimulated emission of radiation – see *maser*
- microwave weapon – միկրոալիքային զենք
- midcourse guidance – ուղղորդում հետագծի միջին հատվածում
- midcourse phase – հետագծի միջին հատվածը
- MiG – «ՄիԳ»

MiG-21 “Fishbed” – «ՄիԳ-21»	military administrative division – ռազմավարչական բաժանում
MiG-23 “Flogger” – «ՄիԳ-23»	military advances – զորքի առաջընթացում
MiG-25 “Foxbart” – «ՄիԳ-25»	military adviser – 1. ռազմական խորհրդական, 2. զինվորական խորհրդական
MiG-27 “Flogger” – «ՄիԳ-27»	military affairs – ռազմական գործ
MiG-29 “Fulcrum” – «ՄիԳ-29»	military age – զորակոչային տարիք
Mig-31 “Foxhound” – «ՄիԳ-31»	military aid to the civil authorities – see <i>military support to civil authorities</i>
might – see <i>power 1, 2</i>	military alliance – ռազմական դաշինք
migrant – միգրանտ, գաղթական	military and political crisis – ռազմաքաղաքական ճգնաժամ
migration – բնակչության շարժ, գաղթ	military art – ռազմական արվեստ, ռազմարվեստ
MILES – see <i>multiple integrated laser engagement system</i>	military assistance – ռազմական օգնություն
miles per hour – մղոն՝ ժամում	military assistance advisory group – ռազմական օգնության ցուցաբերման հարցերով խորհրդարկիչ խումբ
militarism – ռազմամոլություն	Military Assistance Program – Ռազմական օգնության ծրագիր
militarist – 1. ռազմամոլ, 2. ռազմամուլ, ռազմամուլական	military assistance to civil authorities – see <i>military support to civil authorities</i>
militaristic – see <i>militarist</i>	military attaché – ռազմական կցորդ
militarization – 1. ռազմականացում, 2. ռազմականացվածություն	military attorney – see <i>military prosecutor</i>
militarization of economy – տնտեսության փոխադրում ռազմական ռեզիսի	military authorities – 1. զինվորական իշխանություններ, 2. զինվորական ղեկավարություն, 3. ռազմական կառավարման մարմին
militarized formation – ռազմականացված կազմավորում	military balance – ռազմական հաշվեկշիռ, ռազմական հավասարակշռություն
military – 1. ռազմական, պատերազմական, 2. զինվորական, 3. զորական, 4. see <i>military scientific</i>	military band – զինվորական նվագախումբ
military academic conference – see <i>military scientific conference</i>	military base – see <i>base 2</i>
military academic periodical – ռազմագիտական հանդես	military bearing – զինվորական կեցվածք
military academy – 1. զինվորական ակադեմիա, 2. ռազմագիտական ակադեմիա	military branches marshal – զորատեսակի մարշալ
military action – 1. ռազմական ձեռնարկում, 2. see <i>military operations</i>	military budget – ռազմական բյուջե
military action support – ռազմական գործողությունների ապահովում	military call – ռազմակոչ
military activities – ռազմական գործունեություն	
military administration – ռազմական վարչություն	

- military camp – 1. see *camp 1*, 2. see military compound
- military campaign – see *campaign 2*
- military capabilities – ռազմական հնարավորություններ
- military cargo – զինվորական բեռ
- military censorship – ռազմական գրաքննություն
- military certificate – 1. աստեստատ, 2. վկայական
- military characteristic – մարտական բնութագիր
- military civic action – ռազմա-քաղաքացիական փոխգործություն, զինվորա-քաղաքացիական փոխգործություն
- military-civil co-ordination committee – զինվորական-քաղաքացիական համադասման խորհուրդ
- military coalition – ռազմական դաշնադրություն
- military college – զինվորական ուսումնարան
- military column – զորասյուն
- military commissar – զինվորական կոմիսար, զինկոմ
- military commissariat – զինվորական կոմիսարիատ, զինկոմիսարիատ, զինկոմատ
- Military Committee – Ռազմական կոմիտե (ՆԱՍՕ)
- military communication – ռազմական հաղորդակցություն
- military component – ռազմական բաղադրիչ
- military compound – զինվորական ավան
- military concept – ռազմական հայեցակարգ
- military conflict – ռազմական հակամարտություն
- military confrontation – 1. ռազմական առճակատում, 2. ռազմական դիմակայություն
- military construction – 1. զինվորական շինարարություն, 2. ռազմական շինարարություն
- military consultant – ռազմական խորհրդատու, ռազմական խորհրդարկու
- military contract service – պայմանագրային զինվորական ծառայություն, զինվորական ծառայություն կամավորության սկզբունքով
- military control – ռազմական կառավարում
- military convention – ռազմական կոնվենցիա
- military convoy – 1. զինվորական պահպանախումբ, 2. ռազմական պահականավախումբ
- military cooperation – ռազմական համագործակցություն
- Military Cooperation Headquarters of the Commonwealth of Independent States – ԱՊՀ երկրների ռազմական համագործակցության համադասման շտաբ
- military correspondent – զինվորական թղթակից
- military council – ռազմական խորհուրդ
- military counterattack – հակահարձակողական բանակային օպերացիա
- military counterintelligence – զինվորական հակահետախուզություն
- military coup – զինվորական հեղաշրջում
- military courtesy – 1. զինվորական քաղաքավարություն, 2. see *salute 2*
- military crime – զինվորական հանցագործություն
- military crisis – ռազմական ճգնաժամ
- military cybernetics – ռազմագիտական կիբեռնետիկա
- military danger – ռազմական վտանգ
- military deception – ռազմական խորամանկություն, ռազմական հնարամտություն
- military democracy – ռազմական ժողովրդավարություն

military demographics – ռազմական ժողովրդագրություն

Military Department – 1. ռազմական գերատեսչություն, 2. ռազմական վարչություն, 3. ռազմագիտական ֆակուլտետ, 4. ռազմագիտական ամբիոն

military development – see *military construction 2*

military development concept – ռազմական շինարարության հայեցակարգ

military dictatorship – ռազմական դիկտատուրա

military dictionary – ռազմագիտական բառարան

military diplomacy – ռազմական դիվանագիտություն

military-diplomatic mission – ռազմադիվանագիտական ներկայացուցչություն

military discipline – 1. զինվորական կարգապահություն, 2. ռազմագիտական առարկա, 3. ռազմական գիտաճյուղ

military district – զինվորական օկրուգ

military district logistics – օկրուգային թիկունք

Military doctrine – ռազմական դոկտրին

military duty – զինվորական պարտք

military ecology – ռազմական բնապահպանություն

military education – 1. ռազմական կրթություն, 2. ռազմակրթական, 3. զինվորական դաստիարակություն

military education by correspondence – զինծառայողների հեռակա ուսուցում

military education department – see *military department 3, 4*

military education establishment – ռազմակրթական հաստատություն

military education system reform – ռազմակրթական համակարգի վերափոխում, ռազմակրթական համակարգի բարեփոխում

military effectiveness – մարտական հնարավորություններ

military engagement – 1. see *battle 1*, 2. ռազմական շփումներ

military engineering – 1. ռազմական ճարտարագիտություն, 2. ռազմական տեխնիկայի մշակում

military-engineering discipline – ռազմատեխնիկական առարկա

military engineers – see *engineer troops*

military equilibrium – see *military balance*

military equipment – 1. զինվորական տեխնիկա, 2. ռազմական տեխնիկա

military equipment standardization – 1. ռազմական տեխնիկայի ստանդարտավորում, 2. ռազմական տեխնիկայի ստանդարտացում

military ethics – զինվորական բարոյականություն, զինվորական վարվեցողություն

military exercise – see *exercise 1*

military expansion – ռազմական զավթողագործություն

military expenditure – see *military spending*

military expertise – զինվորական վարպետություն

military faculties – ռազմագիտական ֆակուլտետներ

military field therapy – ռազմադաշտային թերապիա

military foresight – կանխատեսում ռազմական գործում

military formation – 1. զինվորական կազմավորում, 2. մարտակարգ

military geographic information – ռազմաաշխարհագրական տեղեկույթ

military geography – ռազմական աշխարհագրություն

military glory – 1. զինվորական փառք, 2. ռազմական փառք

military government – 1. զինվորական կառավարություն, 2. see *military administration*

military governor – ռազմական վարչության պետ

- military graduate student – աղյունկտ
- military grid reference system – ուղղանկյուն կոորդինատների ռազմագիտական համակարգ
- military hardware – see *military equipment*
- military health system – զինվորական առողջապահության համակարգ
- military hierarchy – զինվորական աստիճանակարգություն, զինվորական ենթակայություն
- military history – ռազմական պատմություն
- military holiday – զինվորական տոն
- military honor – զինվորական պատիվ, զինվորի պատիվ
- military honors – զինվորական պատիվներ
- military hospital – զինվորական հոսպիտալ
- military hydroacoustics – ռազմական հիդրոձայնագիտություն
- military ID (card) – զինվորական գրքույկ, զինգրքույկ
- military ideology – ռազմական գաղափարախոսություն
- military-industrial – ռազմաարդյունաբերական
- military-industrial complex – see 1. *defense-industrial complex*, 2. ռազմական արդյունաբերության համալիր, ռազմաարդյունաբերական համալիր
- military informatics – ռազմական տեղեկութաբանություն
- military infrastructure – ռազմական ենթակառուցվածք
- military initiative – ռազմական նախաձեռնություն
- military inspection – ռազմական տեսչություն
- military inspector – զինվորական տեսուչ
- military institute – զինվորական ինստիտուտ, ռազմական ինստիտուտ
- military institution – 1. see *armed forces*, 2. զինվորական բանտ
- military instructor – զինվորական դեկավար, զինդեկ
- military intelligence – 1. ռազմական հետախուզություն, 2. ռազմական հետախուզական տվյալներ, 3. բանակային հետախուզություն
- Military Intelligence Board – Ռազմական հետախուզության խորհուրդ
- military interests – ռազմական շահ
- military interoperability – մարտական լիաներդաշնակություն
- military intervention – ռազմական ինտերվենցիա
- military journalist – զինվորական ժուռնալիստ
- military justice – զինվորական արդարադատություն
- military law – զինվորական իրավունք
- military law and order – զինվորական իրավակարգ
- military learning – 1. ռազմական ուսուցում, 2. զինվորական ուսուցում
- military legislation – զինվորական օրենսդրություն
- military logistics – see *troop supply*
- military loss – see *war losses*
- military manual – զինվորական կանոնադրություն
- military medical – ռազմաբժշկական
- military medical concept – ռազմաբժշկական հայեցակարգ
- military medical panel (to establish medical suitability for service) – ռազմաբժշկական հանձնաժողով, ՌԲՀ
- military medical service – ռազմաբժշկական ծառայություն
- military medical training – ռազմաբժշկական պատրաստում
- military medicine – ռազմական բժշկություն

- military might – ռազմական հզորություն
- military mobilization – see *mobilization 2*
- military movements – 1. see *troop movement*, 2. զորքի տեղաշարժ
- military necessity – 1. ռազմական կարիքներ, 2. ռազմական անհրաժեշտություն
- military nuclear power – միջուկային տերություն
- military oath – see *oath of service*
- military obligations – զինապարտություն
- military observer – ռազմական դիտորդ
- military occupation – ռազմական բռնագավթում
- military occupational specialty – զինհաշվառումային մասնագիտություն
- (The) Military Ombudsman Institution – զինծառայողների մարդու իրավունքների պաշտպանի հաստատություն
- military operations – ռազմական գործողություններ
- military operations in urban terrain – քաղաքային մարտ
- Military Operations Other than War – ոչ պատերազմական պայմաններում իրագործվող ռազմական օպերացիաներ
- military opposition – see *military confrontation 2*
- military organization of the state – պետության ռազմական կազմակերպվածք
- military parade – զորահանդես, զինվորական շքերթ
- military parity – ռազմական համամասնություն
- military patriotic education – ռազմահայրենասիրական դաստիարակություն
- military pay – զինծառայողների դրամական բավարարում
- military pedagogy – ռազմական մանկավարժություն
- military pension – զինվորական թոշակ
- military personnel – զինծառայողների անձնակազմ, զինվորական անձնակազմ
- military police – զինվորական ոստիկանություն
- military policeman – զինվորական ոստիկան
- military policy – ռազմական քաղաքականություն
- military-political alliance – ռազմաքաղաքական միություն
- military-political analysis – ռազմաքաղաքական վերլուծություն
- military-political cooperation – ռազմաքաղաքական համագործակցություն
- military-political leadership – ռազմաքաղաքական ղեկավարություն
- military politology – ռազմական քաղաքագիտություն
- military post – 1. զինվորական պաշտոն, 2. դաշտային փոստ, 3. ռազմական պահակակետ
- military post office – դաշտային փոստի բաժանմունք
- military post to be filled – փոխակալման ենթակա զինվորական պաշտոն
- military power – ռազմական հզորություն
- military preparedness – see *defense preparedness*
- military presence – ռազմական ներկայություն
- military prevision – կանխագուշակում ռազմական գործում
- military procuracy – զինվորական դատախազություն, զինդատախազություն
- military procurement order – ռազմական պատվեր
- military procurements – ռազմական գնումներ
- military production – ռազմական արտադրություն
- military production profitability – ռազմարդյունաբերության շահութաբերություն

- military profession – զինվորական մասնագիտաբանություն
- military proficiency – see *warfare skills*
- military promotion – զինվորական կոչման շնորհում
- military property – 1. զինվորական գույք, 2. ռազմական գույք
- military prosecutor – զինվորական դատախազ, զինդատախազ
- military prowess – see *military valor*
- military psychology – ռազմական հոգեբանություն
- military rank – զինվորական կոչում
- military rank award – see *military promotion*
- military register – զինհաշվառում
- military regulations – see *military manual*
- military reliability – ռազմական տեխնիկայի հուսալիություն
- military representation – զինվորական ներկայացուցչություն
- military requirement – ռազմական պահանջմունք
- military reserve – 1. ռազմական պահուստ, 2. ռազմական պահուց
- military resources – ռազմական ռեսուրսներ
- military response – 1. ռազմական արձագանք, 2. ռազմական արձագանքում
- military restructuring – ռազմական վերակառուցում
- military risk – ռազմական ռիսկ
- military ritual – զինվորական ծես
- military science – ռազմական գիտություն, ռազմագիտություն
- military scientific – ռազմագիտական
- military scientific conference – ռազմական գիտաժողով, ռազմագիտական խորհրդաժողով
- military sea convoy – պահականավախումբ
- military secret – ռազմական գաղտնիք
- military security – ռազմական անվտանգություն
- military service – 1. զինվորական ծառայություն, զինծառայություն, 2. ժամկետային զինվորական ծառայություն, զինվորական ծառայություն զորակոչով
- military service deferment – see *deferment*
- military service period – զինվորական ծառայության ժամկետ
- military service regulations – զինվորական ծառայության անցման կարգ, զինծառայության կարգ
- military signal – ռազմական ազդանշան
- military situation – ռազմական իրադրություն
- military sociology – ռազմական սոցիոլոգիա
- military spending – ռազմական ծախսեր
- military staff – զինվորական կոլեկտիվ
- military stores – նյութական միջոցների ռազմական պաշարներ
- military-strategic cooperation – ռազմական ռազմավարական համագործակցություն
- military strategy – պատերազմական ռազմավարություն, ռազմական ռազմավարություն
- military strength – see *military might*
- military student – ուսկնդիիր
- military subsidies – ռազմական սուբսիդավորում
- military superiority – ռազմական գերազանցություն
- military supplies – մարտական մատակարարում
- military support to civil authorities – ՋՈՒ-ի աջակցություն քաղաքացիական իշխանություններին
- military surgery – see *field surgery*
- military symbol – մարտավարական պայմանական նշագիր



military task for interoperability – փոխգործելիության ռազմական խնդիր, օպերատիվ համատեղելիության ռազմական խնդիր

military-technical assistance – ռազմատեխնիկական օգնություն

military-technical policy – ռազմատեխնիկական քաղաքականություն

military-technical sports – ռազմատեխնիկական մարզաձևեր

military technician – զինվորական տեխնիկ

military term – ռազմագիտական տերմին

military theory – ռազմական տեսություն

military threat – ռազմական սպառնալիք

military-to-military cooperation – 1. համագործակցություն զինվորականների միջև, 2. ռազմական համագործակցություն

military topography – ռազմական տեղագրություն

military trade – see *military occupational specialty*

military trained reserve – զինավարժ պահեստազոր

military training – 1. զինվորական պատրաստում, 2. զինվորական ուսուցում, 3. ռազմական պատրաստում, 4. ռազմական ուսուցում, 5. ռազմաուսումնական, 6. ռազմաուսումնական հաստատություն, 7. զինվորական ուսումնավարժեցում

military training complex – ռազմակրթական համալիր

military training of human resources – մարդկային ռեսուրսների ռազմական ուսուցում, պահեստազորի մարդկային ռեսուրսների ուսումնավարժեցում

military training of the population – բնակչության ռազմական պատրաստում

military training period – see *study period exercise*

military transport – ռազմական փոխադրումներ

military transport aviation – ռազմատրանսպորտային ավիացիա

military transportation – see *military transport*

military tribunal – see *court-martial*

military trophy – ռազմասավար

military unit – see *unit 1*

military unit maneuver – see *maneuver of military unit*

military university – զինվորական համալսարան

military valor – զինվորական սխրագործություն

military van – զինվորական ձիաբեռնասայլ, մարտական ձիաբեռնասայլ

military violence – ռազմական բռնություն

military violence deterrence – ռազմական բռնության զսպում

military vital point – կենսականորեն կարևոր ռազմական օբյեկտ

militia – 1. ժողովրդական աշխարհազոր, 2. միլիցիա see *voluntary military forces*

mind – խելք, բանականություն,

mine – 1. ական, 2. ականային

mineable waters – ականապատելի ջրային տարածք

mine awareness training – ականների հետ վարվելու ուսումնավարժեցում

mine blast trauma – ականապայթյունային վնասվածք

mine clear – see *demining*

mine clearance – see *demining*

mine-clearing line charge – ականազերծման երկարածված պայթուցիկ լիցք

mine countermeasures – հակաականային միջոցառումներ

mined area – see *minefield*

mine defense – ականային պաշտպանություն, ականային արգելապատնեշ

mine destruction – ականների ոչնչացում

mine detector – ականորս

- mine disposal – ականների վնասազերծում
- minefield – 1. ականադաշտ, 2. ականապատնեշ
- minefield breaching – ականադաշտում անցուղիների բացում
- minefield density – ականապատման խտություն
- minefield lane – անցուղի ականադաշտում, ականազերծված անցուղի
- minefield marking – ականադաշտի նշագրում
- minefield record – ականադաշտի տեղեկաքարտ
- minefield report – զեկույց ականադաշտի վերաբերյալ
- mine flail – ականազերծիչ
- mine fuse destruction – ականի պայթուցիչի ոչնչացում
- minehunting – ականորոնում
- minimize – նվազարկել, նվազագումացնել
- minimum range line – անվտանգ հեռավորության բնագիծ
- mining – ականապատում
- mine layer – ականադիր
- mine pan – հակաականային տակնոց
- mine plan – հակաականային տակնոց
- mine planter – ականադարսիչ
- mine plough – ականագութան
- mine reconnaissance – ականային հետախուզում
- mine roller – see *mine flail*
- mine row – ականաշար
- mine strip – ականաշերտ
- minesweep – ականազերծիչ
- minesweeper – ականորսիչ
- minesweeping – ականորսում, ականազերծում
- mine thrower – see *mortar 1*
- minewatching – 1. ականային իրադրության զննում, 2. ականապատնեշային գործողությունների դիտում
- mine warfare – ականային պատերազմ
- mine weapons – ականային զենք, ականազեն
- miniaturized sensor – մանրաչափացված զգայարար
- miniflare – գրպանի ազդանշանիչ լապտերիկ
- minimum aircraft operating surface – թռչող ապարատի համար անհրաժեշտ նվազագույն մակերես
- minimum descent altitude – ցածրաթռչնության նվազագույն բարձրություն
- minimum descent height – see *minimum descent altitude*
- minimum force – նվազագույն ուժ
- minimum nuclear safe distance – միջուկային անվտանգության նվազագույն շառավիղ
- minimum nuclear warning time – միջուկային հարձակման մասին նախազգուշացման նվազագույն ժամանակ
- minimum operating strip – նվազագույն թռիչքուղի
- minimum quality surveillance – որակի նվազագույն վերահսկվող ցուցանիշներ
- minimum residual radioactivity weapon – նվազագույն մակարդակով հարուցվող ռադիոակտիվությամբ միջուկային զենք
- minimum-risk route – նվազագույն ռիսկով երթուղի
- minimum safe altitude – նվազագույն անվտանգ բարձրություն
- ministry – նախարարություն, գերատեսչություն
- ministry of defense – պաշտպանության նախարարություն, ՊՆ
- ministry of defense civilian – պաշտպանության նախարարության քաղաքացիական ծառայող
- minor port – փոքր նավահանգիստ

“minor strategy” – «փոքր ռազմավարություն»

“Mirage” – «Միրաժ»

MIRV – see *multiple independently targetable reentry vehicle*

misdeemeanor – զանգանք

misfire – խլարում

misinformation – 1. ապատեղեկատվություն, ապատեղեկացում, 2. ապատեղեկոյթ

misphasing – see *dephasing*

miss – վրիպում

missed approach – անհաջող անցում վայրէջքի

missed approach procedure – վայրէջքի երկրորդ անցման ընթացակարգ

missile – հրթիռ (գերազանցապես՝ ուղղորդվող)

missile artillery – ռեակտիվ հրետանի

missile attack maneuvering – հրթիռային հարվածների տարաշարժում

missile attack warning – հրթիռային հարձակման մասին նախազգուշացում

missile battery – հրթիռային մարտկոց

missile carrier – հրթիռակիր

missile control system – հրթիռների կառավարման համակարգ

missile defense – հակահրթիռային պաշտպանություն

missile destruct – հրթիռի ոչնչացում

missile destruct system – հրթիռների ոչնչացման համակարգ

missile engagement zone – հրթիռային խոցման շրջան

missile fuel – see *propellant*

missile guidance station – հրթիռների ուղղորդման կայան

missile guidance system – հրթիռի ուղղորդման համակարգ

missile launch – հրթիռի արձակում

missile launcher – see *launcher 1*

missileman – 1. հրթիռագործ, 2. see *rocketeer*

missile support – հրթիռատեխնիկական ապահովում

missile system – հրթիռային համալիր

missile warning air defense radar – հրթիռային հարձակման մասին նախազգուշացման ռադիոտեղորոշումային կայան

missile weapon – հրթիռային զենք

missing – անհայտ կորած

missing in action – մարտում անհայտ կորած

mission – 1. առաքելություն, 2. ներկայացուցչություն, 3. մարտական առաջադրանք, 4. մարտական արտաթռիչք, թռիչքային առաջադրանք, 5. նախանշանակում, 6. առաջադրանք

“Mission accomplished” – «Առաջադրանքը կատարված է»

mission analysis – խնդրի պարզորոշում

mission assignment – առաջադրանքների բաշխման մեխանիզմ

mission capability statement – տեղեկություններ հատկացված զորամասերի և ստորաբաժանումների մարտական հնարավորությունների մասին

mission command – see *mission-type tactics*

mission commander – օդային խնդրի կատարման համար պատասխանատու

mission control center – թռիչքների կառավարման կենտրոն

mission creep – «առաքելության ճապարկում»

mission-essential force – առաջադրանք կատարող հիմնական ուժեր

mission needs statement – առաջադրանքի կատարման համար պահանջների հիմնավորում

mission-oriented protective posture – առաջադրանքով պայմանավորված պաշտպանական միջոցներ

mission-oriented protective posture gear – անհատական պաշտպանության հատուկ միջոցներ

mission report – զեկույց առաջադրանքի կատարման մասին

mission statement – խնդրի հիմնավորում

mission type order – մարտական ցուցումնագիր

mission-type tactics – առաջադրանքային կառավարում, առաջադրանքների մարտավարություն

missive – see *official letter*

mist – միգաշղարշ, մշուշաքող

mistake – սխալ

mixed bag – 1. տարաբնույթ առարկաների հավաքածու, 2. տարաբնույթ ականների հավաքածու

mixed minefield – տարակազմ ականադաշտ

MLRS – see *multiple launch rocket system*

MNC – see 1. *Major NATO Command*, 2. *Major NATO Commander*

MOBEX – see *mobility exercise*

mobile – 1. շարժուն, շարժունակ, 2. շարժական, տեղափոխելի, տեղափոխովի, 3. see *maneuverable 1, 2*

mobile air movements team – օդային փոխադրումների ծավալման շարժուն խումբ

mobile army surgical hospital – շարժական զինվորական վիրաբուժական հոսպիտալ

mobile army surgical unit – շարժուն վիրաբուժական բրիգադ

mobile command post – շարժական հրամանատարական կետ, ՇՀԿ

mobile defense – շարժուն պաշտպանություն

mobile-erector launcher – «երկիր-երկիր» դասի հրթիռների արձակման շարժական կայանք

mobile kitchen – see *field kitchen*

mobile mine – շարժունակ ական

mobile security force – անվտանգության շարժունակ ուժեր

mobile support group – թիկունքային ապահովման շարժունակ խումբ

mobile training team – ուսումնավար-ժեցման շարժունակ խումբ

mobility – շարժունակություն, շարժունություն

mobility air forces – շարժուն օդային ուժեր

mobility corridor – զորաշարժի միջանցք

mobility equipment – անձնակազմի հետ տեղափոխվող մարտական տեխնիկա

mobility exercise – զորքերի շարժունության խնդիրների վերջնամշակման գծով զորավարություն

mobilizable reinforcing force – զորահավաքով գումարվող լրատժ

mobilization – 1. մոբիլիզացում, 2. զորահավաք, 3. զորահավաքային, 4. մոբիլիզացիոն

mobilization base – մոբիլիզացիոն բազա

mobilization document – զորահավաքային փաստաթուղթ

mobilization deployment – see *strategic deployment on mobilization*

mobilization exercise – զորահավաքային վարժանք

mobilization needs – զորահավաքային պահանջմունք

mobilization plan – 1. զորահավաքային պլան, 2. մոբիլիզացիոն պլան

mobilization planning – զորահավաքային պլանավորում

mobilization preparedness – զորահավաքային պատրաստություն

mobilization reserve – զորահավաքային ռեզերվ

mobilization resource – զորահավաքային ռեսուրս

mobilization site – see *mobilization station*

mobilization staff officer – զորահավաքի համար պատասխանատու

mobilization station – գորահավաքային կայան, գորահավաքային կետ

mobilizational preparation of the economy – տնտեսության մոբիլիզացիոն պատրաստում

mock-up – վարժանմանակ

MOD – see *Ministry of Defense*

mode – 1. բանելակարգ, 2. տեսակ, տիպ, 3. see *way 3*

model – մոդել

modeling – մոդելավորում

mode of self-sufficiency – ինքնաբավության բանելակարգ

mode of transport – փոխադրման տեսակ

moderate damage – չափավոր վնասում

moderate injury – չափավոր վնասվածք

moderate nuclear risk – չափավոր միջուկային ռիսկ

modernization – արդիականացում

modernization of weapons and military equipment – սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում

Modernized Integrated Database – տվյալների թարմացված ինտեգրային շտեմարան

modification – 1. փոփոխակ, 2. փոփոխակում

modified combined obstacle overlay – օպերատիվ շրջանի համակցված հետախուզական գծահանում

modify – 1. փոփոխակել, փոփոխել, 2. կրակակոծման պլանը փոփոխել

module – compartment

Modular Lightweight Load-bearing Equipment – հանդերձանքի տեղափոխման թեթևացված մոդուլային համակարգ

modulation – մոդուլացիա

Molotov cocktail – «Մոլոտովի խառնուրդ»

moment – 1. մոմենտ, 2. պահ

moment of load – կշռի մոմենտ

momentum – 1. շարժման քանակ, 2. շարժիչ ուժ, 3. գրոհի ժամանակ առաջնետում, 4. իմպուլս, 5. իներցիա

momentum of attack – գրոհի սլացիկություն և ուժգնություն

money – փող

monarch – միապետ

monarch security – 1. երթային պահպանություն, 2. երթային պահպանաջոկատ

monarchy – միապետություն

monitor – 1. ցուցասարք, 2. հսկիչ դիտորդ, 3. see *eavesdrop*, 4. see *observer 1*, 5. հսկել

monitoring – 1. մշտագնում, 2. ռադիոհաղորդումների հսկում, 3. see *eavesdropping*, 4. բաժնաչափական վերահսկում

monitoring station – զաղտնալսման կայան

monk – see *religious 1*

monocentrism – միակենտրոնություն

monopoly – մենաշնորհ

moored mine – խարսխաական

mopping up – թշնամազերծում

moral and psychological – բարոյահոգեբանական

moral and psychological condition – բարոյահոգեբանական վիճակ

moral and psychological factor – բարոյահոգեբանական գործոն

moral and psychological preparation – see *moral and psychological training*

moral and psychological stability – բարոյահոգեբանական կայունություն

moral and psychological training – բարոյահոգեբանական պատրաստում

moral courage – see *morale*

moral cowardice – 1. բարոյական վախկոտություն, բարոյական երկչոտություն, 2. փոքրոգիություն

moral incentives – բարոյական խթանում

- morale – 1. մարտական ոգի, 2. բարոյական ոգի  
 morale education – բարոյական դաստիարակություն  
 morbidity – հիվանդացություն  
 Morse code – Մորզեի այբուբեն  
 mortal – see *lethal 2*  
 mortar – 1. ականանետ, 2. հրասանդ  
 mortar ammunition – ականանետի զինամթերք, ականանետային ական  
 mosaic – 1. խճանկար, 2. լուսագծապատկերների խճանկար  
 mosaic assembly – օդալուսանկարների սարում  
 most probable conflict – առավել հավանական հակամարտություն  
 motherland – see *homeland*  
 mother ship – կրող նավ  
 motor – see *engine 1*  
 motor and transmission compartment – շարժիչափոխհաղորդակային հատվածամաս  
 motorized – մեխանիզացված  
 motorized infantry – մոտոհետևակ  
 motorized infantry battalion – մոտոհրաձգային գումարտակ  
 motorized rifleman – see *motorized shooter*  
 motorized rifle regiment – առանձին մոտոհրաձգային գունդ  
 motorized shooter – մոտոհրաձիգ  
 motorized unit – մեքենայացված զորամաս, մեքենայավորված զորամաս  
 motor-rifle – մոտոհրաձգային  
 motor transport – ավտոմոբիլային տրանսպորտ, ավտոտրանսպորտ  
 motor vehicle – see *automobile*  
 motorway – ավտոճեպուղի  
 motto – նշանաբան, կարգախոս  
 MOU – see *memorandum of understanding*  
 mount – հաստոց  
 “Mount!” – «Նստի՛ր»  
 mountain artillery – լեռնային հրետանի  
 mountain training – լեռնային պատրաստում  
 mountain troops – լեռնային զորքեր  
 mounted patrol – see *horse patrol*  
 mounted shooting – զագաթնահար հրաձգություն  
 mounting – 1. հենոց, 2. զորքի պատրաստում ելքային շրջաններում, 3. see *assembly 6*  
 mounting area – դեսանտի պատրաստման շրջան  
 mounted firing – see *mounted shooting*  
 mouseholing – պատածակում  
 MOUT – see *military operations in urban terrain*  
 movable – see *mobile*  
 movement – 1. շարժում, 2. տեղաշարժ, տեղաշարժում, տեղափոխում, տեղափոխություն  
 Movement and Transportation Advisory Group – փոխադրումների և տրանսպորտի գծով խորհրդարկիչ խումբ  
 movement control – ռազմական փոխադրումների կառավարում  
 movement control officer – փոխադրումների համար պատասխանատու  
 movement control post – փոխադրումների (զինվորական) կառավարման կետ  
 movement control team – փոխադրումների կառավարման խումբ  
 movement credit – երթանցման թույլտվություն  
 movement data – 1. փոխադրման տվյալներ, 2. տեղաշարժման տվյալներ  
 movement directive – զինվորական փոխադրումների մասին ցուցումնագիր  
 movement group – փոխադրվող խումբ

- movement order – 1. տեղաշարժման հրաման, 2. փոխադրման հրաման
- movement phase – տեղափոխման փուլ
- movement plan – փոխադրումների պլան
- movement priority – փոխադրումների հերթականություն
- movement requirement – փոխադրամիջոցների պահանջարկ
- movement restriction – տեղաշարժի սահմանափակում
- movement schedule – զինվորական փոխադրումների չվացուցակ
- movement table – զինվորական փոխադրումների աղյուսակ
- movement to contact – մոտեցում հակառակորդին
- moving – տեղափոխում
- moving map display – շարժական քարտեզով ցուցասարք
- moving mine – ինքնաշարժ ական
- MP – 1. see *military policeman*, 2. see *Member of Parliament*
- MPC – see *mobile command post*
- MPH (mph) – see *miles per hour*
- MRL – see *multiple rocket launcher*
- MSF – see *Médecins Sans Frontières*
- mudflow – ցեխահեղեղ
- mudslide – 1. see *mudflow*, 2. սողանք
- muffler – see *silencer*
- mujahideen – մոջահեդ
- multiagent munition – բազմազդանյութ զինամթերք
- Multilateral Affairs Section – բազմակողմանի հարցերով բաժանմունք
- multilateral compromise – բազմակողմ փոխզիջում
- multilateral treaty – բազմակողմ պայմանագիր
- multinational – բազմազգ
- multinational brigade – բազմազգ բրիգադ
- multinational doctrine – բազմազգ դոկտրին
- multinational exercise – բազմազգ զորավարժություն
- multinational force – բազմազգ ուժեր
- multinational force commander – բազմազգ ուժերի հրամանատար
- multinational formation – բազմազգ կազմավորում
- Multinational Integrated Logistics Unit – թիկունքային ապահովման բազմազգ ինտեգրված ստորաբաժանում
- Multinational Integrated Medical Unit – բազմազգ ինտեգրված բուժսանիտարական ստորաբաժանում
- Multinational Joint Logistic Center – թիկունքային ապահովման բազմազգ միացյալ կենտրոն
- multinational logistics – see *combined logistic support*
- multinational operation – see *combined operation 2*
- multinational staff – բազմազգ կազմ
- multiparty treaty – see *multilateral treaty*
- multiphase contract – բազմափուլ պայմանագիր
- multiple damage – համակցված խոցում
- multiple independently targetable reentry vehicle – անհատական ուղղորդմամբ մարտազլխիկների տրոհվող գլխամաս
- multiple integrated laser engagement system – «Մայլս» համակարգ
- multiple launch rocket system – համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, ՀԿՌՀ
- multiple reentry vehicle – միջնայրցամաքային հրթիռ տրոհվող գլխամասով
- multiple rocket launcher – ռեակտիվ հրետանային կայանք



multipolar world model – աշխարհի բազմաբևեռ մոդել

multipurpose – 1. բազմանպատակային, բազմանպատակ, 2. համապիտանի

multipurpose submarine – բազմանպատակային սուզանավ

multirole – բազմաֆունկցիոնալ

multispectral imagery – բազմատիրույթ պատկեր

multi stage rocket – բազմաստիճան հրթիռ

multivector policy – բազմավեկտոր քաղաքականություն

munition – 1. see *ammunition*, 2. (*pl.*) see *weaponry* 2, 3. (*pl.*) see *weapon*

munition depot – see *arsenal*

munitions – 1. see *munition*, 2. see *military equipment*

munitions effectiveness assessment – զինամթերքի արդյունավետության գնահատում

munitions factory – զինագործարան

murder – սպանություն

mushroom cloud – սնկաձև ամպ

musket – մուշկետ, հրացան

mustard gas – see *Levenstein Mustard*

muster – 1. անձնակազմի հավաք, 2. see *review* 4, 3. բանակի շարքերն ընդունել

muster-roll – անձնակազմի ցուցակ, նավային դերացուցակ

mutilation – 1. խեղում, անդամախեղում, 2. այլանդակում, փչացում, 3. աղավաղում

mutineer – խռովարար, ըմբոստ

mutiny – խռովություն

mutual agreement – ընդհանուր համաձայնություն

mutual aid – փոխադարձ օգնություն, փոխօգնություն

mutual democratic pacifism – see *democratic peace theory*

mutual fire support – կրակային փոխգործություն, փոխադարձ կրակային աջակցություն

mutual security – փոխադարձ անվտանգություն

mutual support – 1. փոխադարձ աջակցություն, 2. փոխադարձ ապահովում

muzzle – փողաբերան

muzzle brake – փողային արգելակ

muzzle velocity – սկզբնական արագություն

## N

nadir – ստորնակետ

NAIAD – see *nerve agent immobilized enzyme alarm and detector*

nakhararutyun – see *principality*

named area of interest – սպառնալիքի նշված գոտի

name tag – անվանական մետաղանիշ

napalm – հրկիզանյութ

nap-of-the-earth flight – see *terrain flight*

NAPS – see *nerve agent pretreatment set*

narcoterrorism – թմրաահաբեկչություն

nation – 1. ազգ, 2. see *state* 1

national – 1. ազգային, 2. պետական

National Air Mobility System – օդային տեղափոխումների համապետական համակարգ

national anthem – see *hymn*

national border defense – պետական սահմանի ծածկապաշտպանություն

national command – ազգային գործեր

national commander – ազգային հրամանատար

National Communications System – ազգային հաղորդակցական համակարգ

national component – ազգային բաղադրատարր	national liberation movement of Kharabakh Armenians – Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական շարժում
national contributing (to a peacekeeping force) – խաղաղապահական ուժերի ազգային թվակազմ	national liberation war – ազգային-ազատագրական պատերազմ
national critical infrastructure and key assets – կենսականորեն կարևոր ազգային ենթակառուցվածք ու միջոցներ	national logistic support – ազգային թիկունքային ապահովում
national defense – ազգային պաշտպանություն	national military authority – ազգային զինվորական ղեկավարություն
national defense capability – պետության պաշտպանունակություն	National Military Command System – պետության զինված ուժերի կառավարման համակարգ
national defense strategy – ազգային պաշտպանության ռազմավարություն	national military formation – ազգային զինվորական կազմավորում
National Disaster Medical System – տարերային աղետների ժամանակ բժշկական ապահովման ազգային համակարգ	National Military Strategy – ազգային պատերազմական ռազմավարություն, ազգային ռազմական ռազմավարություն
national emergency – 1. see <i>state of emergency</i> , 2. ազգային մասշտաբի արտակարգ իրավիճակ	National Missile Defense – ազգային հակահրթիռային պաշտպանություն
